208(09)
Q-18

2004

208(09)
Ա-18
1433-ՀԿ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻՆՉ ԳՐՈՑ

Բացաքննեալ Եր կասիրութիւն տեն տեն Պետրոսի Վարդապետի Գոնց՝ Եպիսկոպոսի, և Ընդհանրական Աբբայի Մխիթարեանց։

Եւ ապագրեալ յառաջնորդութիւն նորա՝ Թիւնայոժար ծախիւք աշխ. և բարեպաշտ կարնեցի Գէորգ Աղայի Յակոբեան։

ՀԱՏՈՐ Գ.

ԳԻՐՔ Գ. ԵՒ Դ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ.

3962
33342

ԴՎԼԻՆԼՍՏԻԿ
ԴՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ԴԱՆԻԷԼԻ
1819. ՌՄԿԹ.

Հանրային գրադարան
Ուսումնասիրաց տեղ
ՀՊՄՀ-ՍՊՀ
Ա. Մաստոցեանի անվան

221

1486

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԻՆՔՐՈՒՆՁ ՍՐԲՈՅ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ.

ԳԼ. Ա.

Սողոմոն արքայ յաջորդէ յաղեռս հօր իւրոյ դաւթի։ Մահ ադոնիայ, յովաբայ և սէմեայ. և պարագրութիւն աբիաթարայ 'ի քահանայապետութենէ։

Յետ մեռանելոյ արքային դաւթի, իբրև սկսաւ սողոմոն որդի նորա վարել զթագաւորութիւն, ադոնիա անդրէն վառեցաւ 'ի ձեռս բերել զայն իշխանութիւն այսպիսի ինն հնարիւք։ Դաւիթ 'ի վերջին ժամանակս կենաց իւրոց տկարացեալ էր յոյժ, մինչ գրեթէ շինչանիլ բնական ջերմութիւն աբեան նորա. զոր թէպէտ ծածկէին հանդերձիւք, այլ ոչինչ օգնէին նմա, զի նա ոչ ջերանոյր։ Ապա այնորիկ խորհեցան իշխանք նորա ընդ բժիշկս, և հաստատեցին ածել նմա աղջիկ մի կոյս կալ առ նմա 'ի սպասու, միանգամայն և ննջել ընդ նմա, զի բնական ջերմութիւն մարմնոյ

ջեռուսցէ զնա։ Եւ խնդրեալ յամենայն սահմանս
իսրայէլի՝ գտին զաբիսակ սունամացի աղջիկ գեղե-
ցիկ, քաջառողջ, կայտառ, համեստ և պարկեշ-
տակրօն։ ամ զնա արքայ կնութիւն, որ ենդէր ընդ
նմա, և ջեռուցանէր զնա։ բայց արքայ ոչ գիտաց
զնա։ և 'ի մեռանել արքայի՝ մնաց նա այրի, և
կոյս։

Զ. Դոնիա խորհելով մեծ ինչ առնել 'ի յաջո-
ղումն խորհրդոյն իւրոյ, եթէ կարիցէ առնուլ 'ի
կնութիւն զաբիսակ զկին հօր իւրոյ, կալաւ միջնորդ
առ այն զբերսաբեէ, ակնունելով թէ սողոմոն
արքայ ոչ մերժեսցէ զխնդիր մօր իւրոյ։ Ուստի
և մատուցեալ առ նա, երկիր երագ նմա։ և
անմտութիւն յայտ արարեալ նմա զխորհուրդ իւր,
ասէ։ դու ինքնին գիտես, զի իմ'էր թագաւորու-
թիւս այս։ զի ես եմ երեց յորդիս դաւթի։ և յիմ
վերայ եդ ամենայն իսրայէլ զերեսս 'ի թագաւոր-
այլ յետոյ դարձաւ թագաւորութիւն, և եղև եղ-
բօր իմում։ զի այնպէս տնօրինեցաւ 'ի տէռ։ Եւ
արդ եթէ եղբայր իմ ժառանգեաց զթագաւորու-
թիւն, իրաւունք են՝ զի և ես ժառանգեցից ինչ 'ի
հօրէ իմմէ։ արդ խնդիր մի խնդրեմ 'ի քէն, մի
դարձուցաներ զերեսս քո յինէն։ ասէ բերսաբեէ,
խօսեաց։ ասէ ադոնիա։ ասասցես ցսողոմոն արքայ՝
տալ ինձ զաբիսակ սունամացի կնութիւն։ Բերսաբեէ
կամ առ պարզմտութեան ոչ իմացաւ զխորհուրդ
սրտի նորա, և կամ խորհրդով իմն կեղծեաց չէ-
մանալ, առ 'ի չմտանել ընդ նմա 'ի վէճ։ շատ հա-
մարեցաւ տալ նմա անորոշ պատասխանի։ բարւոք
է ասէ, ես խօսեցայց վասն քո ընդ արքայի։
Եմուտ ապա բերսաբեէ առ արքայ։ և նա թագաւոր
թագաւոր՝ բայց պահելով զորդիական մեծարանս
առ մայրն՝ յոտն եկաց ընդ առաջ նորա։ և խոնարհ-
հեալ համբուրեաց զնա, և եդ դնել նմա աթոռ,
և նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ։ Յայնժամ առաջ-
ի արար բերսաբեէ արքայի զխնդիր։ ադոնիայ՝ ըստ
սովորական ոճոյ թեթեւացուցանելով, խնդիր մի
ասէ փոքր խնդրեմ ես 'ի քէն, մի դարձուցանիցես

զերեսս քո յինէն. ասէ արքայ. խնդրեա՛ մայր իմ, զի ոչ դարձուցից զերեսս իմ՛ի քէն։

Բայց իբրև լուաւ արքայ, զի ադոնիա զաբիսակ խնդրէ կնութիւն, առ Ժամայն ծանեաւ զխորհուրդ անզգամութեան նորա. վասն որոյ ասէ ցմայրն, ընդէ՞ր խնդրիցես զաբիսակ ադոնիայի, այլ խնդրեա՛ նմա զթագաւորութիւն, զի նա երէց եղբայր է քան զիս. և նորա հաճախոհ էն աբիաթար քահանայ, և յովաբ որդի շարուհեայ սպարապետ զօրաց. եթէ տացի նմա և աբիսակ՝ որով զօրասցի կողմն նորա, հարկ է այնուհետև տալ նմա և զթագաւորութիւն։ Յայնժամ երդուաւ արքայ, և ասէ. կենդանի է՝ տէր՝ որ արար զիս, և եդ յաթոռս դաւթի հօր իմոյ, եթէ ոչ այսօր իսկ մեռցի ադոնիա. և զոր ասաց՝ կատարեաց. զի առաքեաց զբանեա զորդի յովիդեայ, և սպան զնա։ Եւ մեռաւ ադոնիա յաւուր յայնմիկ. որ կարօղ էր ապրիլ փառօք իբրև եղբայր թագաւորի. այլ յառաւելն ձկտիլ՝ անկաւ վաղաժամ՝ի գուբ մթին զերեզմանի։ Իմանք՝ի մեկնչաց իշխեցին ստգտանել յայսմ զսղոմոն իբր անգութ և գահավէժ՝ի վերիս մահու, առանց քննութեան ըստ օրինաց սովորական արդարութեան։ Բայց թագաւորք՝ի դատաստանի իւրեանց երբ ստուգ էն ամենայնիւ զիրաց այլով մասամբ, ոչ միշտ կարեն ճշտիւ զհետ երթալ ամենայն մանր խուզարկութեանց ատենական նաց. զի խոհեմութիւն, և բարին հասարակաց բաղում անգամ պահանջէն զերդգոնութիւն վարիլ արտաքոյ սովորական կարգի, առ՝ի զառաջս առնուլ մեծամեծ չարեաց։ Պայծառ քան զլոյս յայտնի էր մինդիլ ադոնիայ զհետ թագաւորութեան. յոր և կանխաւ ձեռնամուխ իսկ եղև, մինչև տալ թագաւոր ողջունել զանձն ընդդէմ կամաց դաւթի հօր իւրոյ՝ խնդրելով յափշտակել զթագաւորութիւն՝ի սղոմոնէ, որում՝ի՞նչ խոստացեալ էր։ Վասն որոյ և այժմ խնդրելով զաբիսակ՝ յայտնի երևեցոյց, եթէ տակաւին՝ի նմին խորհրդեան է։ և զոր յայնժամ առ կենդանութիւն հօր իւրոյ ոչ

կարաց, այժմ սովին Ճանապարհաւ հնարի 'ի ձեռս բերել, նոր ապստամբութիւն յարուցանելով. յայր սակս և վտանգ մեծ կայր առաջի, զորոյ հարկ էր փութով ունել զառաջս։

Ինդ աբիաթարայ քահանայապետի ոչ նոյն օրինակ խստութիւն վարեցաւ սողոմոն. միայն կոչեաց զնա զառաջեաւ, և կշտամբեաց՝ այր արժանի մահու կոչելով զնա, սակս գործակից լինելոյ նորա յապստամբութիւնն ադոնիայ. հնարհեաց նմա զկեանս 'ի մեծարանս ՅԾային մեծվայելչութիւն, զի կրեաց զտապանակ ուխտի նորա. և 'ի սեր հօր իւրոյ դաւթի, զի յամենայն վիշտս և 'ի տառապանս նորա եղև նմա վշտակից ամենայն ուրեք անմեկնելի 'ի նմանէ։ Այլ հանեալ զնա 'ի քահանայագործութիւն, առ 'ի կատարելոյ ասէ գիրն՝ բանին տան, զոր խօսեցաւ 'ի վերայ տանն հեղեայ 'ի սելոյ, տարագրեաց զնա յանաթովթ յագարակ իւր. որ էր փոքր հնարհ աբիաթարայ՝ զհայրենիս իւր ունել տեղն աքսորանաց։

Այլ ոչ այսպէս վարեցաւ ընդ յովաբայ։ Լուեալ յովաբայ զանցս ադոնիայ, և աբիաթարայ, ընդ որս և ինքն էր համախոհ, և որպէս կարծեն ոմանք՝ խորհրդատու ադոնիայ ինդրել զաբիսակ. միանգամայն և յուշ ածեալ զոր միանգամ գործեաց ընդդէմ դաւթի, և զոր արար երկուց զօրապետաց աբեննեերեայ, և ամեսայեայ, զարհուրեցաւ յերեսաց սողոմոնի. և ՅՃապարեալ փախեաւ ապաւինեցաւ 'ի խորանն, որ էր 'ի գաբաւոն, և կալաւ զեղջերաց սեղանոյն, ակնումնելով 'ի պատիւ տեղւոյն՝ ասելով։ Արդեւ ազդ եղև սողոմոնի փախուստ նորա 'ի խորանն տան, առաքեաց զբանեա զորդի յովիդայեայ կամ յովիդայեայ ասա. նանել զնա. այլ յոչ կամիլ յովաբայ ելանել 'ի դուրս, ընտրելով 'ի խորանի անդ մեռանել, 'ի կախ եթող բանեա զգործադրութիւն դատակնքոյն, և դարձաւ առ արքայ՝ հարցանել թէ զինչ արասցէ։ Այլ ընկալաւ 'ի նմանէ պատասխանի, թէ սեղանն ոչ է պաշտպան աւազակաց, և ոչ եղեռնա-

գործ դաւաճանողաց. եթէ չկամի ասէ Էլանել 'ի խորանէն, անդ սպանջիր զնա, և բարձցես այսօր զարիւնն զուր, զոր եհեղ յովաբ, յինէն և 'ի տանէ հօր իմոյ։ Բարբ բանեա ըստ բանին արքայի. սպան զնա 'ի խորանի անդ. և Թաղեաց 'ի տան նորա յանապատին։ Օ այս օրինակ վճարեաց յովաբ զկեանս իւր. եղև նա արի և քաջ զօրական, բայց մարդ չար և նենգամիտ։ Եւ եմուտ 'ի մարտ, որում ոչ յաղթեաց. և ոչ գտաւ քաղաք՝ զոր պաշարեաց, և ոչ նուաճեաց։ Մինչ և հանապազ հաւատարիմ դաւթի. բայց և հանապազորդ վինչ նմա։ Յաղթութիւնք նորա լաւագոյն պսակի արժանաւոր էին. այլ անօրէնութիւնք նորա վաղագոյն մահու էին արժանի։ Ոչ 'ի մահուն իւրում նշան ինչ ապաշաւանաց, և ոչ խոնարհութիւն ինչ երևեցոյց՝ ունելով զմահ աչաց առաջի։ Մինչուառական գտաւ յատենին սողոմոնի, այլ թշուառագոյն յատենի ոչ, ուր ոչ գոյ ակնառութիւն սպարապետի. մեռաւ իբրև չարագործ, և ոչ իբրև քաջ սպարապետ 'ի պատերազմի։

Մնայր դատաստանն սեմեայ. կոչեաց զնա սողոմոն յատեան իւր. և ոչ կամելով դատապարտել զնա 'ի մահ, ըստ խոստմանն դաւթի առ նա, բայց և ոչ արձակել կամելով 'ի մահապարտութիւն դատաստանէ, որպէս յանձնեալ էր նմա դաւիթ, կալաւ զմիջին ինն ճանապարհ, զի անձամբ արասցէ զսնձն մահապարտ։ Այս նմա բանտ արգելանաց զբոլոր երուսաղէմ քաղաք, պատուիրելով նմա երդմամբ չելանել ընդ դրունս նորա, և չանցանել երբեք յինչ և իցէ պատճառս ընդ հեղեղատն կեդրոնի. ապա թէ ոչ՝ գիտասցէ հաւաստեաւ զի մահու մեռանի։ Օ այս պատուէր կամ պատիժ՝ ընկալաւ սեմէի իբր մեծ ինն հնորհ. բարի է ասել՝ բանդ, զոր խօսեցար որ իմ արքայ, այնպէս արասցէ ծառայ քո։ Այսաւ սեմէի յերուսաղէմ հանդարտեալ ամս երիս. յետ այնորիկ փախեան երկու 'ի ծառայից նորա. և ազդ եղև նմա թէ ծառայք նորա են 'ի գէթ առ անքուս արքայ.

իսկ նա փութացեալ հանդերձեաց զ'էշ իւր, և ելեալ յերուսաղէմէ՝ չոգաւ 'ի գէթ, և ած զծառայս իւր։ Դուցէ կարծէր, թէ զկնի այնչափ ժամանակաց մուսացեալ իցէ զնա արքայ, և ոչ ևս յիշեսցէ. և 'ի մէջ այնչափ բաղմագիմի զբաղանաց թագաւորութենն ոչ միտ դնիցէ մանուանց իւրոց, թէ ո՞վ ելանէ, և ո՞վ մնանէ 'ի քաղաքն։ Այլ մեծահանճար թագաւորք ըստ համեմատութեան ընդարձակութեան մտաց՝ ունին և յիշողութիւն. և կամեցեալ զի վէճիւք իւրեանց լինիցին յարգոյ, ունին և արթնութիւն թէ պահին արդեօք, և զիարդ։ Այլ աչք պաշտօնեից են աչք թագաւորին. առ բարւոք տեսանել՝ շատ է նմա լսել. զի ուր ոչ ժամանեն աչք, ժամանեն լսելիք. որով գտանի յամենայն կողմանս թագաւորութեան՝ առանց ելանելոյ յարքունեաց։ Պատմեցան վաղվաղակի արքայի իրք սեմեայ. կոչեաց զնա արքայ առաջի իւր, և յիշեցուցեալ նմա զվէճիւն, և զչարիս նորա զոր արար ընդ դաւթի հօր իւրոյ, հրաման ետ բանեայ սպանանել զնա. որ և առ ժամայն կատարեցաւ. և մեռաւ սեմէի։

Ինչ մի արժան է ասատ նկատել. զի սողոմոն 'ի տալ զայսոսիկ վէճիւս մնչու, միշտ յաւելու բարեդուշակութեան անձին և թագաւորութեան իւրոյ, և բանս զսնմեղութեան հօրն։ Այլ կարի յիրաւունս. քանզի տարտպայման քաղցրութեան և գթութեան առ յանցաւորս՝ ընու յանցաւորաց զերկիրն։ Այլ իշխանն որ ոչ պատժէ, յանցաւոր է յատենին ոչ, և յատենի մարդկան։ Պարծադրութեան արդարութեան պահէ զժողովուրդն 'ի խաղաղութեան, և զիշխանն յերջանկութեան։ Այուսերք սոսկականաց շաղախին արեամբ անմեղաց, եթէ սուր իշխանին ոչ լուսացի յարիւն չարագործաց։ Կախաղանք կանգնեալք 'ի պատիժ յանցաւորաց 'ի պատրաստ և 'ի ոչ արդարութեան, կանգնին 'ի բարին հասարակաց համբերին ժողովրդեան՝ 'ի գորովալիր հայրական գթութենէ։

Գ.Լ. Բ.

Այրեաւ ժամանակս ընտաւորեաց սողոմոն առ Էնդառ նուռնբ դառնել։ Վասնի՞ ասաց էր՝ յորժամ ակսաւ ընտաւոր բել։ Այս յորմամ հասանի ծնաւ զանդրանիկ էր զրդի։

Գոյստամբութիւնն աբեսողոմայ՝ ըստ կարգինոսի, եղև յերեսնեերորդ եօթնեերորդ ամի թագաւորութեան դաւթի։ Այն ապստամբութիւն ոչ ձգեցաւ ընդ երկար ժամանակս. եթէ տացուք ամիսս երիս փախստեան դաւթի յերուսաղէմ, և դարձի նորա. տամք ժամանակ բաւական ամենայնի, որ ինչ գործեցաւ յայնմ խռովութեան։ Առ՝ի ժամանել՝ի քառասուն և՝ի կէս ամն՝ որչափ թագաւորեաց դաւթի, միան երեք ամք և երեք ամիսք։ Պարտ է տալ ժամանակ և այնմ միջոցի, յորում առդոնիա արար զոր արար՝ ՝ի ցուցանել զանձն ժառանգ թագաւորութեան։ Օ՛ի՝ ի մեռանել աբեսողոմայ՝ միալով նորա երկց՝ ի մէջ եղբարց իւրոց, վաղվաղակի ակսաւ երևել բազում շքով առ յինքն ձգելոց զաչս ժողովրդեան. արար իւր կառս, և սուրհանդակս՝ ՝ի նախագրելոցս յուսով թագաւորելոց։ Առդ առ այն ամենայն գործողութի և՝ի պատրաստութի նոր ապստամբութի յարուցանելոյ, որպէս հարկ երևի տալ ամ՝ մի, նոյնպէս և չէք ինչ հարկ տալ աւելի. վասն զի անխոհեմ և անընդունայ երիտասարդն ետ հրատարակել զանձն թագաւոր յառաջ քան զձգել յիւր կողմն կուսակիցս բաւականս։ Ի՝ նմին աւուր խռովութեն ադոնիայ՝ սողոմոն հրատարակեցաւ թագաւոր. ուստի և յայնմ հետէ ոչ միացին դաւթի՝ բայց քսան և եօթն ամիսք կենաց. ապա սողոմոն ոչ կարաց թագաւորել ընդ դաւթի աւելի քան թէ ամիս իբրև քսան և եօթն։

Սողոմոն զկնի մահու հօրն թագաւորեաց ամս քառասուն. և յաջորդեաց զաթոռն նորա ռոբովամ անդրանիկ որդի նորա 'ի հասակի քառասուն և մի ամաց։ Ապա ռոբովամ ծնաւ միով ամաւ յառաջ քան զմեռանել դաւթի. ուստի յայտ է թէ սողոմոն էառ կին իբր երկու ամաւք յառաջ քան զմահ դաւթի։ Ցացուք ժամանակ ինչ և հարսնախօսութեան և պատրաստուն հարսանեաց, և ահա ունիմք ամիսս իբրև քսան և վեց։ Դաւթեան ետ կին սողոմոնի զկնի թագաւորեցուցանելոյ զնա. ապա սողոմոն թագաւորեաց 'ի միասին ընդ դաւթի փոքր ինչ յաւէտ կամ նուազ քան զամիսս քսան և վեց, և քսան և եօթն։

Ասիցէ ոք թերևս. չի՞ք բնաւ յիշատակութիւն ինչ ոչ 'ի գիրս թագաւորաց, և ոչ մնացորդաց վասն ամուսնութեան սողոմոնի առ կենդանութիւն դաւթի։ Իսկ 'ի հասակէ ռոբովամայ քաղի, թէ ծնաւ նա յառաջ քան զլինել սողոմոնի թագաւոր. զի սողոմոն թագաւորեաց ամս քառասուն. և ռոբովամ էր քառասուն և մի ամաց՝ յորժամ մեռաւ սողոմոն հայր նորա։

Ասա այս ասեմք ընդ սմանս 'ի մեկնչաց. քաջայայտ է ամենեցուն՝ որք ունին գէթ չափաւոր իմն տեղեկութիւն գրոց, թէ սրպէս բազում դիպուածք ոչ պատմին յիւրեանց բնական տեղիս. բայց յետոյ գտանին յայլ գիրս, կամ յայլ տեղեաց քաղին։ Ամուսնութիւն սողոմոնի ընդ նատայ ամենացեղոյ ոչ յիշատակի 'ի պատմութեան դաւթի, այլ քաղի Ճշգրիտ տրամաբանութիւն 'ի հասակէ որդւոյ նորա։ Օ՛ի յասել գրոյն՝ թէ սողոմոն թագաւորեաց ամս քառասուն, խօսի զժամանակէ թագաւորելոյ նորա յետ մահու հօրն. վասն զի երկու ամքն թուեալ են 'ի քառասուն ամս դաւթի. և հանդերձեալ եմք տեսանել յընթացս պատմութեան թագաւորութեաց, թէ այս ժամանակագրական եղանակ թուելոյ՝ սովորական է 'ի նոր գիրս, ուր բանք լինին վասն յաջորդութեան թագաւորաց։

Իսկ թէ սողոմոն էր թագաւոր հրատարակեալ

առ կենդանութիւն հօրն՝ յորժամ ամուսնացաւ ընդ նաամայ ամենացուոյ, պաշտպանք այսր կարծեաց առնուն զայս 'ի Խ. սաղմոսի. որ թէպէտ ասեն՝ խորհրդաբար հայի 'ի Քս, և յեկեղեցի, այլ ըստ ճառին հայի 'ի սողոմոն և 'ի հարսն նորա. զի արա-բաւ 'ի պատճառս այնր հարսանեաց. զոր ցուցանէ և մակագիր այնր սաղմոսի, որ է * Սաղմոս օրհնութեան վասն սիրելւոյն ||. իմա՛ երգ ասացեալ 'ի գաւթի վասն որդւոյ իւրոյ սիրելւոյն ՝՝. քանզի սողոմոն կոչեցաւ և յեդեդի, այսինքն սիրելի ՝՝. և զսաղմոսն զայն ողջոյն յարմարեն սողոմոնի իբրև թագաւորի, և հարսին նորա իբրև թագուհւոյ։ Օ՛ի համաբնական իմն է ասեն, թէ գաւիթ որ խորհէր զամենայն հնարս առ 'ի գրաւել զժողովուրդն 'ի հնազանդութիւն սողոմոնի, վաղվաղակի զմնի հրատարակելոյ զնա թագաւոր՝ խորհեալ իցէ տալ նմա կին. քաջ գիտելով թէ բազում նպաստ 'ի պահել զժողովուրդն 'ի հնազանդութիւն, տեսաւ նեղն նոցա յարքունիս զայծորդութիւն։ Լաւ այսպէս իբր հաւաստի դատին, թէ սողոմոն թագաւորեաց ընդ գաւթի հօր իւրոյ ամիսս իբրև իմ։

Լայլ առաւել դժուարին է հաստատել, թէ քանի ամաց էր սողոմոն՝ յորժամ հրատարակեցաւ թագաւոր։ Բազում և մեծամեծ վարդապետք, մնանանդ թէ առաւելագոյն մասն նոցա յայն միտս են՝ լինել նմա երկոտասան ամաց, յորժամ ամբարձաւ յաթոռ թագաւորութեան յետ մահու հօրն. ուստի հաղիւ տասնամեան առ կենդանութիւն նորա։ Լայսպէս դնի յայտնապէս 'ի հին օրինակս եօթանասնից. որպէս և 'ի մերումն. (Գ. Խագ. Բ. 12.) * Լաւ սողոմոն նստաւ յաթոռ գաւթի հօր իւրոյ՝ ամաց երկոտասանից ||։ Այնպէս խօսին և ՝՝ն իգնատիոս ՝՝ծազգեաց, հերոնիմոս, որպէս և այլք 'ի ՝՝ոց հարց։ Ուր ոմանք յարգի մեկնչաց իշխեցին ասել, թէ հարք այդպէս խօսեալ իցեն, յաւէտ առ 'ի յարմարութիւն յառաջադիր քանի ՝՝առի իւրեանց, քան թէ 'ի Ճշգրիտ մեկնութիւն գրոյն. զոր օրինակ ասեն՝ և քարոզիչք բազում անգամ տան ՝՝ծային

գրոյն մեկնութիւն յարմարականս, յորժամ ծառայէ այն 'ի պարզել զշնմարտութիւն քանից իւրեանց. կամ առ լաւ ևս տպանալոյ 'ի միտս ունկնդրաց, ոչ ձշտիւ քննելով զնմանստ գրոյն։ Այլ սոքիմիք ոչ ինչ սանանեն ընթերցուածոյ մերում և քանից հարց. զի այլ է խնդրել 'ի գիրս զյատուկ գրաւոր իմաստ, և զընթերցուած հնագոյն. և այլ խնդրել զյարմարականն, կամ զարդոյականն. յորս զանազանուլն մեծ է։ Այնպէս ունիմք ասել, թէ արդարև այս կարծիք դժուարութիւն մեծ բերէ 'ի կամիլն միաբանել և նախանշանակեալ կարծեաց. զի բռնադատէ ասել՝ թէ սողոմոն տանանման սկսեալ իցէ ծնանել զորդի։ Յայտ է և այն, զի 'ի մահուն սողոմոնի ռոբովամ էր ամաց քառասուն և միոյ. ապա եթէ սողոմոն մեռաւ ամաց յիսուն և երկուց, ռոբովամ մետասան ամաք և եթէ փոքր էր քան զհայր իւր։

Ոչ մարթ ժխտել՝ թէ չիցեն երբեք այլ ամին նման դիպուածք երևեալ յաշխարհի. բայց նախ՝ առանց ծանր պատճառաց չէ մարթ ասել, թէ դաւթեթ կամեցեալ իցէ տալ կին որդւոյ իւրում յայնպիսում խակ և թերի հասակի։ Երկրորդ՝ չէ մարթ հաստատել առանց բացայայտ բռնադատիչ հիման, թէ յայնպիսի տղայական հասակի ծնեալ իցէ որդի։ Արդ այս կարծիք բաց 'ի վկայութիւն եօթանասնից և հարց՝ ունի և այլ երկու հիմունս։ Այն է՝ զի սողոմոն քաղում ուրեք 'ի նոր գիրս կոչի Մանուէ, և Մանուէ ֆոյբ, և այլ այսպիսի անուամբք. որք յայտ է թէ զմնատաղ հասակ ցուցանեն։ Այլ յայդմանէ ոչ հետևի, թէ չիցէ նա անցեալ զերկուտասանամենիւք. որովհետև յայտնի է՝ զի այսպիսի ձևք քանից 'ի գէպ յարմարին նաև վերջատսան, և ուղղութատանման իսկ պատանեկի, մանաւանդ յորժամ բան լինի կարգել զնա 'ի մատակարարութիւն թագաւորութեան։ Այլ ևս հիմն է, թէ նոր գիրն անմիջապէս զկնի ծնանդեան սողոմոնի, և պատերազմին ընդդէմ ամենայնոց, պատմէ զբռնաբարութիւն թամարայ. յորմէ մինչև ցթագաւորել սողոմոնի

անցին ամք երկոտասան. որպէս կանխաւ ասացաք։ Այլ արժան է միտ դնել, զի բռնաբարութիւն թամարայ պատմի անմիջապէս, բայց ոչ ասի՝ թէ եղև անմիջապէս զկնի։ Այլ զիրն անդ Բ. Խագ. ԺԳ. ասէ. «Այլ եղև յետ այսորիկ». արդ յետ այսորիկն ասել հնմարտի՝ թէ եղեալ իցէ այն 'ի յաջորդ ամի, և թէ եղեալ իցէ զկնի ամաց ինչ։

Զայսօրինակ լուծեալ յետին մեկնչաց զայս երկու ընդդիմութիւնս՝ հաստատեն, թէ սողոմոն յորժամ օծաւ թագաւոր 'ի գեհոն հրամանաւ հօր իւրոյ դաւթի, էր 'ի վերջասանամենից և 'ի վայր. և ըստ այսմ 'ի մէջ ծննդեան սողոմոնի և բռնաբարութեան թամարայ՝ անցին ամք իբրև չորք. յորս ըստ մասին եղև պատերազմ ընդդէմ ամմնացւոց, և ըստ մասին չեղև ինչ արժանի պատմելոյ։ Որքա զայս կարծիս իւրեանց հիմնեն 'ի վերայ զանազան բանից գրոյն։ Զ նմին աւուր՝ յորում սողոմոն հրաւարակեցաւ թագաւոր, աղոնիա արար արտաքոյ երուսաղէմի խրախութիւն մեծ. և հրաւիրեաց զեղբարս իւր. և զոմանս յիշխանաց և 'ի քահանայից, և 'ի զօրավարաց։ Զ. ռ խմացուցանել դաւթի, թէ աղոնիա նովին խրախութիւնս ինդրէ թագաւորել, եդաւ առաջի նորա իբրև անշուշտ ապացոյց այս՝ թէ զսողոմոն ոչ հրաւիրեաց։ Զ. պա սողոմոն էր յայնպիսում հասակի, որում 'ի ձահ էր երթալ բազմել ընդ իշխանս, ընդ զօրավարս, և ընդ արս կատարեալս. ապա թէ ոչ՝ անդէպ էր պնդել զայն առաջի դաւթի իբր հաւաստի նշան ապստամբութեան աղոնիայ, իբր զի զտանանմեան մանուկ՝ գլխովին անհամեմատ հասակաւ այլոց բազմականաց՝ ոչ հրաւիրեաց։ Զ. պա սողոմոն ոչ կարէր լինել յայնժամ փոքրագոյն քան զվերջասանամեան։ Զ. ոչ բազմք առաւել քան զուեթուտասն. ապա թէ ոչ՝ ոչ 'ի դէպ գայլոն նմա անուանքն ոչ միանգամ, և ոչ այլաբանութիւն, այլ իրօք և հաստատութիւն տուեալք նմա 'ի սկիզբն թագաւորութեան նորա, մանուկ, և մանուկ ֆոքր կոչելով զնա. և այլն։ Զայսոսիկ անուանս չէր մարթ տալ նմա, որպէս տուան երբ

բեան դաւթի և բենիամինի վասն լինելոյ նոցա վերջին 'ի ծնունդս եղբարց. քանզի զկնի սղոմոնի եղեն և այլ որդիք բերասբէի։ Այնպէս չէ մարթ ասել զնա մանուկ, յայն միտս՝ զի նշանակիցէ պատանի անկին. զի 'ի թագաւորել նորա՝ վաղվաղակի տուաւ նմա կին։ Այս հարկ է ասել՝ թէ տակաւին էր մատաղ հասակաւ. ապա չէր անցեալ բազմաք զվեշտասանամենեաք. որ ոչ է հասակ խակ և տհաս՝ մասնաւորապէս յայնմ, որ ունի իրաւացի պատճառ փութացուցանելոյ զայնորդութիւն։ Այս այսպէս գոլով եօթնեւտասն ամաց՝ եղեալ էր հայր. և ութուտասնամեան թագաւոր ինքնակալ յետ մահու հօրն։ Յուեալ նմա ամս երիս ընդ խոտորումն 'ի ներսն և ընդ սպաշխարուն (զորմէ զկնի,) սկիզբն խոտորման նորա լինէր 'ի հասակի 55. ամաց. որ ըստ միաբան հաւանութեան բժշկաց՝ ասի սուաջին ծերութիւն, ևս առաւել ըստ սովորական խօսելոյ մարդկան, որոց տեսեալ զայր յինամեան բերիլ 'ի սէր կանանց, լիաբերան ասեն զնմանէ, թէ 'ի ծերութիւն սկսեալ է զառածանիլ։

Ընդիմք և այլ վկայութիւն նշանաւոր 'ի հաստատել թէ սղոմոն իցէ վախճանեալ զկեանս իւր ոչ յոյժ ծերացեալ. և է այս. զի 'ի խնդրել նորա յայ զիմաստութիւն՝ հաճեալ այ ընդ խնդիր նորա, ետ պատասխանի. * Փոխանակ զի խնդրեցեր յինէն զանդ զայդ, և ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս. և ոչ խնդրեցեր քեզ մեծուն, և այլն, ահա արարի ըստ բանիդ քում . . . Այլ զոր ոչ ևս խնդրեցեր, ետու քեզ։ Որ խոստանայ նմա արձակաբար զմեծութիւն և զփառս. բայց ոչ նոյնպէս արձակաբար և զերկարաւուն կենաց, կամ զաւուրս բազումս. զի ասա յաւել պայման. * Այլ թէ գնասցես ասէ 'ի ճանապարհս իմ, պահել զհրամանս իմ և զպատուիրանս իմ, բազմացուցից զաւուրս քո։ Գ. Խագ. Գ. 14։ Իսկ նա ոչ լցոյց զպայմանն, զի անց զպատուիրանաքն այ. և ՝ուծ չետ նմա երկարութիւն կենաց։ Այլ թէ մեռաւ յառաջին ծերութիւն, 42 ամաք յառաջ սկսանելով թագաւորել, յայտ է թէ 'ի կարի

դալար հասակի սկսեալ է թագաւորել։ Բ. յսոքիկ այսքան. դարձցուք 'ի կարգ պատմութեան որ գրոց։

Գ.Լ. Գ.

Սողոմոն խնամուրէ առնէ ընդ փարաւոնի արքայի Եգիպտացւոց։ Խնդրէ և ընդունի յայ, զԵղեզաքն գիւղուրնին։ Բնակչէն հանդէս իմաստուն դպրասարանի նորա յերկուս պատուիրանէ հանայս դպրաքաջս. և 'ի գնդեսական կարգ դան իարոյ, և 'ի գէրս իւր։

Յապահովել սողոմոնի զթագաւորութիւն իւր՝ մահուամբ ադոնիայ, և յովաբայ 'ի նեղբին խռովութեաց և յապստամբութեաց, զոր կարէին նոքա յարուցանել, խորհեցաւ և արտաքուստ ապահովել. առ որ կարևոր էր յոյժ բարեկամութիւն ընդ արքային Եգիպտացւոց։ Այսն զի սկսեալ 'ի սէրը լերանց 'ի հիւսիսոյ՝ մինչև ցերկիրն գեսեմ, և ցծովն կարմիր 'ի հարաւոյ՝ էին բնակեալ ամաղեկացիք, իսմայելացիք, և այն մասն մաղխանացւոց, զորս որ գիրն կոչէ եթովպացիս։ Սոքա ամենեքին անհաշտ թշնամիք էին ժողովրդեան երբայեցւոց. և չէր մարթ երբեք վստահանալ ընդ խաղաղութիւն նոցա, վասն զի սովորական գործ նոցա գողով ասպաւ տակութիւն՝ միշտ կազմ և պատրաստ էին 'ի մարտ։ Այսն որոյ 'ի յաջողել սողոմոնի ունել իւր բարեկամ զարքայն եգիպտացւոց, սոքա 'ի մէջ երկուց հզօր թագաւորութեց իբրև 'ի մէջ երկուց սայրաս սուր սուսերաց անկեալ, յառաջոյ ունելով զերբայեցիս, և 'ի թիկանց զեգիպտացիս, ոչ երբէք իշխէին խլրտել և յառնել ընդդէմ միոյն կամ միւսոյն։ Յետ ելանելոյ որդւոյ իսրայէլի յեգիպտոսէ, չեղև երբէք հաստատել երբայեցւոյ խաղաղութիւն

ընդ Եգիպտացիս. սողոմոն եղև յայսմ առաջին, առնելով խնամուն ընդ արքայի նոցա. զի խընդրեաց և ընկալաւ զդուստր նորա յիւր կնութիւն. և ած զնա 'ի սիոն 'ի քաղաք դաւթի հօր իւրոյ. մինչև շինեսցէ նմա տուն առանձինն. զոր և շինեաց զկնի կատարելոյ զշինուածս տաճարի տն, և նորակերտ տանն արքայի, և զպարիսպս երուսաղէմ քաղաքի։

Խնդիր է առ մեկնիչս, եթէ մեղաւ արդեօք սողոմոն ասա, զի էառ կին այլազգի։ Ասացուցանեն՝ նա գրեթէ ամենեքին անբասիր առնեն զնա այս անգամ 'ի մեղաց. 'Լսա՝ զի նը գիրն 'ի սկզբան թագաւորութիւն նորա գովութիւն խօսի զնմանէ. և ած իսկ երևի հաւան և հաճեալ ընդ սողոմոն. զի նոր ամուսնացեալ էր, յորժամ երևեալ նմա՝ կատարեաց զխնդիր նորա բազմապատիկ առաւելութիւն զոր խնդրեաց։ Դրկրորդ՝ զի ազգ Եգիպտացւոց ոչ էր փակեալ 'ի նոսա, յորոց հրաժարեցոյց ած զժողովուրդ իւր չառնել խնամութիւն ընդ նոսա, որք էին ամենահոգիք, քանանացիք, քետացիք, փերեզացիք, խևացիք, գերգեսացիք, և յեբուսացիք. Եկ. Գ. 11։ Ասկ յայլոց ազգաց ոչ այնչափ խստիւ զգուշացուցանէ. կամ զի այլք չէին այնչափ մոլի և կատաղի առ կուռս, ուստի և ոչ այնպէս հրապուրիչք և գրգռիչք 'ի ձգել զարս իւրեանց 'ի կռապաշտութիւն. և կամ զի գոլով հեռի 'ի հայրենի երկրէ և 'ի կռոց նոցա, յանցանել ժամանակաց՝ օտարանային 'ի կռոց, որով և յուսալի էր գալ նոցա 'ի պաշտօն Աշխարհին։ Ասացուցանեն այսն միտս են վասն դատեր փարաւոնի, թէ 'ի սկզբան անդ 'ի գալ իւրում յերուսաղէմ՝ ընկալեալ ինչ զՀշխարհիս կրօնս եբրայեցւոց. այլ յետոյ 'ի շինել սողոմոնի նմա տուն առանձինն, անդրէն ինչ դարձեալ յառաջին հայրենի կռապաշտութիւն. և 'ի նոյն ձգեալ և զսողոմոն ընդ բազմութիւն օտարոտի կանանց։ Ամին երի 'ի գիրս երրորդ թագաւորաց գլ. ԺԱ. ուր ստգտանեն գիրք զսողոմոն յաղագս բազմացուցանելոյ իւր կանայս այլազգիս, որք խո-

տորեցուցին զսիրտ նորա յայ, յիշատակեն և զգուստս փարաւոնի։

Լոյնգունակ անբասիր առանեն զսողոմոն 'ի մեղաց՝ սակս 'ի սկզբան թագաւորութեանն իւրոյ զոհս մատուցանելոյ նմա 'ի վերայ բարձանց և 'ի վերայ զանազան տեղանոց։ Վասնզի թէպէտև յայտնի արդելեալ էր զայն ՅԱԾ, յասէին. * Զ ԿՈՒՐԼԵՐ ԱՌՆՁԻՆ ՔՈՒՄ, ԳՈՒՑԷ ՄԱՏՈՒՑԱՆԻՑԵՍ ԶՈՂՋԱԿԷԶՍ ՔՈ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԵՂԵՈՂ ԶՐՐ ՏԵՍԱՆԻՑԵՍ ‖. Ելք. օրէն. ԺԷ. 13. բայց ամենայն մեկնիչք զայս պատուէր իմանան միայն յայն ժամանակս պարտաւորել, մինչ խորանն վկայութեան կայր ուրեք հաստատուն, և այն 'ի գիպուածս սովորականս. այլ ոչ նոյնպէս յանսովոր գիպուածս, և ոչ 'ի ժամանակի մինչ տապանակ հոն թափառական էր երբեմն ասա և երբեմն անդ։ Որպէս ահա սամուէլ և դաւիթ բազում անգամ 'ի զանազան տեղիս մատուցին ՅՈՒՐ զոհս և ողջակէզս. զորօրինակ 'ի գաղգաղա, 'ի սելով, 'ի գաբաա, 'ի քեբրոն, 'ի կարիաթարիմ, 'ի կալն ուռնեայ, և այլն. և ոչ ուրեք ստգտանին նոքա վասն այնորիկ 'ի գրոյն, իբր թէ ընդդէմ պատուիրանի հոն գործեալ իցեն։ Վասնզի այն պատուէր հայէր 'ի ժամանակն որ զկնի շինութեանն տաճարին. որպէս բացայայտ ցուցանէ գիրն 'ի նախագրեալ բանին. ուր յաւելու. * Լ. ՅԼ 'Ի ՏԵՂԵՈՂՆ ԶՈՐ ԸՆՏՐԵՍՑԷ ՀՈՐ ՅԱԾ ՔՈ՝ ԻՒՐ, 'Ի ՄԻՈՒՄ 'Ի ՔԱՂԱՔԱՑ ՔՈՅ, ԱՆԴ ՄԱՏՈՒՑԱՆԻՑԵՍ ԶՈՂՋԱԿԷԶՍ ՔՈ. և անդ արասցես զամենայն զոր ես պատուիրեմ քեզ այսօր ‖։ Վասն զի այնուհետև ոչ ևս կային օրինաւոր պատճառք ընդհելոյ արտաքոյ տաճարին։ Վասն այնորիկ փութացաւ սողոմոն շինել զտաճարն, զի մի ևս ժողովուրդն զոհեսցէ հոն 'ի վերայ բարձանց, և 'ի վերայ այլև այլ տեղանոյ։ Լ. ՅՆ զի յայտնի ասէ գիրն, թէ սիրեաց սողոմոն զՏԷՐ, գնալ ըստ հրամանաց դաւթի հօր իւրոյ. ապա ոչ մեղաւ յայնժամ։ Լ. ՒԼ յասել գրոյն վասն սողոմոնի, * Հայց 'ի բարձունս և նա զոհէր, և արկանէր խունկս ‖, է լոկ պատմական. որպէս թէ ասել, ցորչափ չև էր շինեալ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄԱՍՆԱԿՈՅԱՆ

տուն են, ժողովուրդն արկանէր խունկս 'ի վերայ բարձանց. նոյնպէս և սողոմոն 'ի բարձունս զոհէր։

Յամենայն բարձունսն յայնոսիկ, ուր ընդ այն ժամանակս զոհէին, և ուր յաձախէր ժողովուրդն, առաւել բարձրագոյն մեծ և 'ի յարգի էր գաբաւոն. զի անդ էր սեղանն ողջակիզաց, և խորանն են, որ առ մովսիսիս շինեցան յանապատին։ Անդ գնաց սողոմոն մեծահանդէս արքայական շքով, ուներով իւր ուղեկից զիշխանս, և զզօրավարս, և զթիկնապահ զօրս իւր. և 'ի վերայ սեղանոյն այնորիկ եհան հազար ողջակէզս են։ Ի գիշերին յայնմիկ եկաց արքայ անդ 'ի գաբաւոն. գիշեր երջանիկ վասն նորա։ Վասնզի երևեցաւ նմա ած սպասաւորութիւն հրեշտակի 'ի քուն գիշերոյ զուարթադին տեսլեամբ. և ասէ ցնա, խնդրեա՛ դու քեզ խնդիր ինչ՝ զի տացքեզ։ Սողոմոն 'ի սկզբանէ թագաւորելոյ իւրոյ ոչինչ խիզ այնպէս ցանկացող էր, որպէս խմաստութիւն՝ առ բարւոք կառավարութիւն հպատակաց իւրոց. յորս հայէր իբրև 'ի սեպհական ժողովուրդ են։ Վասնաչէր զանբաւականութիւն հասակին, զանհամար բազմութի ժողովրդեան, զդիւժարութիւն 'ի գլուխ տանելոյ զծանրութիւն պաշտամանն իւրոյ։ Վասնաչէր և զոհ պարգևատու ամենայն բարեաց. վասն այնորիկ մի միայն զխմաստութի խնդրեաց՝ խելամուտ լինել 'ի մէջ բարւոյ և չարի. երիս պատճառս 'ի մէջ բերելով առ ստացումն խնդրոյն։ Ի կողմանէ ոչ՝ զողորմութի և զգթութի նորա արարեալ դաւթի և նմա, բարձրացուցանելով զնա յաթոռս հօր իւրոյ. որ խմաստութիւն պահպանի։ Ի կողմանէ իւրմէ զթերութի հասակին, և զանբաւականութի 'ի տնտեսութի թագաւորութեան. * Այս եմ ասէ մանուկ փոքր, և ոչ գիտեմ զել և մուտ իմ։ ասա տացես ծառայի քումմ սիրտ լսելոյ, և դատելոյ զժողովուրդ քո արդարութիւն։ Ի կողմանէ ժողովրդեան՝ զանթիւ բազմութի նոցա, և զարժանաւորութի իբրև ընտրեալ սեպհական ժողովուրդ են։ * Զառայ քո

'ի մէջ ժողովրդեան քո է, զոր ընտրեցեր ժողովուրդ քո՝։

Հաճոյ թուեցաւ առաջի նոցն խնդիր սողոմոնի. զի խնդրեաց զիմաստութիւն, և ոչ երկայնութիւն կենաց, կամ հարստութիւն, և կամ յաղթութիւն թշնամեաց։ Այսն այնորիկ եւ նմա իմաստութիւն և հանճար այնչափ, զի ոչ ոք իբրև զնա եղև յառաջ քան զնա, և ոչ ոք յետ նորա եղիցի նմանօղ նորա։ Այլ 'ի վերայ այնորիկ յաւել և եւ նմա զմեծութիւն ընչից, և զփառս, որպէս ոչ ոք 'ի թագաւորաց երկրի մինչև ցայսն օր գտաւ հաւասար նմա. միայն զերկարութիւն կենաց խոստացաւ նմա ընդ պայմանաւ. * Այնթէ գնասցես ասէ 'ի ճանապարհս իմ պահել զհրամանս իմ և զպատուիրանս իմ, որպէս և գնաց դաւիթ հայր քո, բազմացուցից զաւուրս քո՝։ Գ. Թագ. Գ. 14։ Այս ասացեալ՝ եղև աներևոյթ տեսիլն. և զարթուցեալ սողոմոնի՝ ծանեաւ, զի այն ամենայն բանք ընդ նմ եղեն յերազի. բայց և զայն գիտաց՝ եթէ չեն երազայոյզ ցնորք երևակայութեան, այլ իրականք և ճշմարիտք։ Զանազի մինչ զգայարանք իւր ընկղմեալք 'ի քուն՝ անգործ կային, հոգին օրով և միտք և կամք նորա յառանձին պարգևաց նոցն արթուն և սթափ էին. վասն զի որպէս տայ ոճ անջատեալ հոգւոց իմանալ և կամիլ անկախ յերևակայութէ և 'ի զգայարանաց, նմանապէս կարող է տալ զնոյն և հոգւոյն՝ մինչ 'ի մարմնի է։ Այս յայն դիպուածս թէպետ երևակայութիւն թմրեալ և ընկղմեալ է 'ի քուն, և ամենայն զգայարանք դադարեալ յիւրեանց գործողութէ. բայց բանական հոգին է 'ի վիճակի, յորում կարող է խորհել, ընտրել, և կամիլ ազատօրէն. որպէս էին և մարդաբէք յորժամ խօսէր ոճ ընդ նոսա։ Այլ թէ եւ ոճ յայնժամ սողոմոնի այսպէս իմանալ և կամիլ, յայտ է 'ի բանից գրոյն։ Այլ ոճ խօսեցաւ ընդ նմա. ապա կացոյց զնա յայն վիճակ, զի կարող էր տալ պատասխանի մարդկօրէն։ Այլ ասաց նմա խնդրել զոր կամէր. * Խնդրեա զինչ տաց քեզ՝։ ապա կացոյց զնա

ազատ յընտրել և 'ի կամիլ։ Զուցէ այս արթնութեան հոգւոյն սողոմոնի իցէ պատճառ, զի յերկրորդ գիրս մեացորդաց. գլ. ա. ուր պատմի այս երևումն, ոչ ասի վասն սողոմոնի թէ 'ի քուն էր։ Այսպէս և պատասխանի սողոմոնի ցուցանէ, թէ խօսեցաւ նա կատարեալ խորհրդածութիւն և կատարեալ արթնութիւն հոգւոյն, երիս պատճառս յառաջ բերելով առ ստացումն խնդրոյն՝ որպէս ասացաք. որով և արժանացաւ առաւել քան զինդրեալն ընդունել 'ի տնէ։ Այս այնպէս լի երկնապարգև իմաստութիւն, և ցնծութիւն դարձաւ սողոմոն յերուսաղէմ. և մատոյց յանդիման տապանակի տնն 'ի սիոն ողջակէզս և զոհս խաղաղականս 'ի զոհութիւն ոյ. և տրար խրախութիւն մեծ՝ իւր, և ամենայն ծառայից իւրոց։

Յայնմ աւուր մեծի խրախութիւնն մատուցաւ նմա պատճառ յայտնել աշխարհի զիմաստութիւնն նորոգ ընկալեալ 'ի տնէ։ Վասնզի երկու կանայք պոռնիկք եկին 'ի դատաստան առաջի արքայի, խնդրելով արդարութիւն ընդդէմ միմեանց։ Օրանոր էր և ձանձրալի սողոմոնի յայնմ աւուր լսել զդատախազութիւն երկուց անարգ և անամօթ կանանց. սակայն և այնպէս նստաւ լսել զփաստս նոցա. բայց փաստ և ոչ մի գոյր, այլ լոկ պատմութիւն։ Վեհն էր 'ի վերայ մատաղ մանկան միոյ, զոր ուներին ընդ իւրեանս. և երկաքանչիւրն պնդէր լինել մայր նորա, և կամէր զնա առնուլ որպէս զիւր հարազատ ծնունդ։ Ասկսաւ խօսել մինն 'ի կանանց, որ յայտ առնէր զանձնէ լինել մայր կենդանի մանկանն, և ասէ. *Յիս տր իմ. ես և կինս այս էաք 'ի միումբ տան. և ծնայ 'ի տանն. և յաւուր երրորդի ծնաւ և կինս այս. և մեք առանձինն էաք, և ոչ գոյր ոք ընդ մեզ 'ի տանն, բաց 'ի մէնջ երկոցունց։ Այս մեռաւ որդի սորա 'ի գիշերի, քանզի ննջեաց 'ի վերայ նորա. և յարեաւ 'ի հասարակ գիշերի, և առ զմանուկն իմ 'ի գրկաց իմոց, և աղախին քո 'ի քուն էր, և ննջեցոյց զնա 'ի ծոց իւրում. և զորդին իւր զմեռեալ ննջեցոյց 'ի ծոց

իմում։ Լաւ յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զբրդին իմ, և նա էր մեռեալ. և հայեցայ ընդ այգուընն, և ահա չէր որդին իմ զոր ծնայ։ Լաւ ասէ միւս կինն, ոչ. այլ որդի քո է մեռեալն, և որդի իմ կենդանին։ Լրկոքին ևս զնոյն պնդէին ամենայն սաստկութիւն, առանց նշան ինչ, կամ գէթ ստուերք ինն յառաջ բերելոյ, յորմէ հնար իցէ գուշակել ինչ։ Մի միայն Ճանապարհ գոյր յայս դիպուած 'ի լոյս հանելոյ զնշմարտութիւն. այն է երգումն. այլ ո՞ կարէր հաւատալ երդման նոցա. զի որք ոչ սոսկացան անասնօրէն մատնել զմարմնս իւրեանց 'ի մեղս, զի՞արդ սոսկայցէն 'ի ստերգմունութիւն։ Վասն որոյ ամենեքեան որք անդն կային՝ բաւղում հետազօտութիւն մայրն տեսանել, թէ զի՞արդ լուծանիցէ, նորահասակ արքայն զայն կնձիոն անլուծանելի կարծեցեալ։

Սողոմոն յետ թոյլ տալոյ նոցա հարուստ մի վիճել ընդ միմեանս, ապա ասէ ցնոսա. մինդ պնդէ թէ որդի իմ է կենդանի մանուկդ, և որդի նորա մեռեալն. իսկ միւսդ՝ թէ իմ է կենդանին, և նորա մեռեալն. երկոքինդ պնդէք անպատճառ, որով և երկոցունցդ փաստ է հաւասար. հապա ասէ, բերէք առ իս զսուր. իբրև բերին, այն ինչ ունէր զնա 'ի ձեռին իւրում, ասէ. զի մի՛ լիցի զրկանք ոչ միոյն և ոչ միւսոյն, կտրեցէ՛ք զմանուկդ ստնդիաց զկենդանին յերկուս. և տո՛ւք զկէսն նորա դմա, և զկէսն նորա նմա, զի տարցին 'ի տունս իւրեանց։ Բազումք՝ որք անդն կային, թերևս լուեալ զայս վճիռ՝ տաղտկացան 'ի սիրտս իւրեանց, իբր տղայական անխորհուրդ և անագորոյն համարելով զանմեղ մանուկն սպանանել վայրապար. բայց յորժամ տեսին զկատարածն, յապուշ կրթեցան։ Բանզի հարազատ մայրն 'ի լսել անդ զվճիռ արքայի ընդ մէջ հատանել զմանուկն առաջի աչաց իւրոց, 'ի չժուժելոյ աղեաց մայրենի գթոյն՝ ասնապարեաց անկաւ առաջի աթոռոյն արքայի, և ասէ. ո՛ հոր իմ լուր ինձ, տո՛ւք նմա զմանուկն կենդանի, ևս հրաժարիմ յիմոց իրաւանց. յետս կոչեմ զոր

ինչ խօսեցայ. նորա լեցի մանուկն, միայն մնհու մի սպանանէք զնա։ Մինչ նա առ կսկծանաց սրբոտին այսպէս կողկողէր, միւսն զՀակառակն սնդէր, թէ կատարեսցի վՃիռ արքայի. կտրեցէք ասէր ընդ մէջ, մի իմ լեցի և մի դորա։ Սողոմոն եթող զի սնդեսցին երկոքին զանս իւրեանց, մին 'ի խնդրել զկեանս մանկան, իսկ միւսն՝ զի մեռցի։ Լ.սպիսի գերահանճար հնարիւք 'ի յայտ բերեալ արքայի զՀարազատ մայր մանկանն՝ ասաց. տուք զմանուկդ կենդանի նմա, որ խնդրեացն զկեանս զաւակի իւրոյ, և մահու մի սպանանէք զդա. նա է մայր դորա։

Յայնժամ հիացան ամենեքեան, և հնչեցաւ ընդ ամենայն հրէաստան դատաստանն՝ զոր դատեցաւ նորահասակ արքայն. և զահի հարան յերեսաց նորա, զի տեսին եթէ իմաստութիւն ՚ոյ է ընդ նմա առնել իրաւունս։ Լ.սատ արժան է 'ի միտ առնուլ և զայլ իմն իմաստուն զգուշաւորութիւն սողոմոնի 'ի տալ զվՃիռն. զի յասել նորա կտրել ընդ մէջ զմանուկն, 'ի ձեռին իւրում ունէր զսուրն. զոր բազում խոհեմութիւն արար. վասն զի եթէ յայնժամ սուրն էր 'ի ձեռս պաշտօնէին, վտանգ էր, թէ 'ի վՃռել նորա կեղծեօք, նոյն հետայն կատարեր նա իրօք զվՃիռն. և արագութիւն պաշտօնէին կանխէր քան զկամն դատաւորին. և այնպէս վեր 'ի վայր շրջէր զխորհուրդ արքայի։ Լ.յս ունի լինել խրատ դատաւորաց. զի բազում անգամ յորժամ վՃիռ կամ պատուէր նոցա է օրինաւոր և արդար, ոչ դնի 'ի գործ առ չարութիւն գործադրիչ պաշտօնէից. ընդ որս սովորաբար բարեկամութիւն են չարագործք։ Լ,ւ ընդհակառակն՝ յորժամ պատուէրն է անիրաւ՝ գահավէժ 'ի յանկարծական բորբոքմանէ արարեալ, իբր 'ի բազումն արագ կատարի յապիրատ պաշտօնէից. վասն որոյ եթէ կամք իշխանին է միայն առ 'ի երկեցուցանել, և ոչ 'ի պատժել իրօք, կարևոր է նմա զգուշանել սողոմոնեան. զի մի ըստ կամս իւրոց 'ի գործ դիցի պատուէրն, և չկարիցէ այնուհետև դարմանել ինաւուն։

Այցոյց սողոմոն զիւր վերնապարդև խնամութիւն և 'ի կարգել զպաշտօնատարս, և 'ի տնտեսութիւնս զանազան իրաց՝ իւրոց արքունեաց։ 'Ի կարգս ներքին իշխանաց իւրոց կացոյց զազարիա որդի սադովկայ քահանայի, և զերկու որդիս սիսայ զելիսարեփ, և զաբիա։ Օքանեա զորդի յոսիդեայ արար սպարապետ 'ի վերայ զօրաց փոխանակ յովաբայ. այլ յաղագս քաջ զօրապետին աբեսսայ, որ 'ի ժամանակս դաւթի էր երկրորդ զէնի եղբօր իւրոյ յովաբայ, արժանի լինելոյ և առաջին՝ ոչինչ ընթեռնումք. գուցէ ոչ վստահացաւ սողոմոն 'ի հաւատարմութիւն նորա կացուցանել զնա 'ի վերայ գործոյ՝ վասն մահու եղբօր նորա, զոր սպան նա ինքն սողոմոն։ Վասն որոյ երևի թէ խոյս ետ աբեսսա ուրեք 'ի կալուածս իւր, կատարել 'ի խաղաղութիւն զաւուրս իւր։ Սադովկ և աբիաթար էին քահանայապետք. յորմէ յայտ է թէ 'ի տարաբերել աբիաթարայ յանաթովթ յաղարակ իւր, ոչ բարձաւ 'ի նմանէ քահանայապետութիւն, այլ միայն գործածութիւն պաշտամանն. զոր սադովկ միայն կատարէր. ընդ նմին և զեկամուտ նորա ամբողջ ինքն միայն վայելէր։ Ազարիա որդի նաթանայ մարգարէի կարգեցաւ սենեկապետ արքայի. զսուրբ երկրորդ որդի նաթանայ քահանայ՝ ներքին պալատական պաշտօնեայ բարեկամ՝ արքայի։ Աբիսար կացուցաւ մնտես հրամանատար 'ի վերայ այլոց պաշտօնէից. և ադոնիրամ՝ հարկապետ։ Այս ևս կացոյց սողոմոն երկոտասան գաւառական ատեանս, կարգեալ նոցա գաւառապետս զընտիր ընտիրս յիշխանաց իւրոց. ընդ որս էին որդին ամինադաբայ, և աբիմաս. երկոքին ևս երևելիք. զորս յետոյ փեսայացոյց սողոմոն. առաջնոյն տուեալ 'ի կնուէ զտափատ, և երկրորդին զմնսեփաթդոստերս իւր։

Գործ այսոցիկ երկոտասան գաւառապետաց էր առաքել յերուսաղէմ՝ զսովորական ռոճիկս սեղանոյ արքայի։ Մի մի 'ի նոցանէ ունէր սահմանեալ զիւր ամիս. 'ի մետասան ամիսս առնէր

զպատրաստութիւն, և 'ի հասանել իւրոյ ամենան՝ առաքէր յերուսաղէմ զպատրաստեալն։ Հանապազորդ ուռնիկ սեղանոյ սողոմոնի էր երեսուն քոռ նաշխոյ. և քառասուն (կամ ըստ վուլկատային՝ վաթսուն) քոռ ալեր գերմանկոյ, որ ստորին էր քան զնաշխի։ Մի քոռն ըստ ստուգագոյն հաշուի կշռեր ութհարիւր լիտր հռոմայ. և այսպէս երեսուն քոռ նաշխոյ առնէ քսան և չորս հազար լտերս. և վաթսուն քոռ գերմանկոյ առնէ քառասուն և ութ հազար լտերս. զոր քաշելով երկու լիտր առ մարդ 'ի միում աւուր, զկետ գայ թէ սողոմոն սովորաբար կերակրէր յարքունիս իւր երեսուն և վեց հազար ոգիս։ Ըստ ալեր՝ էր և միսն. յամենայն աւուր տասն եզն ընտիր ոչ մտեալ ընդ լծով. քսան կով արօտական. հարիւր ոչխար յարգաւանդ գաշտս և 'ի հովիտս դարմանեալ. թռչուն զորթս դիեցիկս, և զընտիր ընտիրս հաւուց պտարաբելոց, և զվայրենի որսս զեղջերու, և զայծեամն։ Այսչափ անպայման ծախս արքունեաց՝ ոչ մտանէր գոլութիւն պաշտօնէից։ Այսն զի զամենայն ինչ հշտիւ 'ի հաշիւ արկանէին հաւատարիմ համարակալք, որք ըստ գրոյն՝ ոչ սխալէին բան մի։

Այն սողոմոնի հազար և չորեքհարիւր կառք. Բ. հնոյ. Ա. 14. և քառասուն հազար մատակ ձիոց 'ի պէտս կառաց. և երկոտասան հազար երիվարք հեծելոց. զորս ըստ մասին պահէին յերուսաղէմ, և ըստ մասին յայլ քաղաքս, որք յայն սակս կոչին քաղաք կառաց, և քաղաք հեծելոց։ Դարձեալ և յարդն 'ի պէտս այնչափ երիվարաց գայր 'ի գաւառաց, զոր անխափան առաքէին գաւառապետքն ըստ իւրաքանչիւր սակի իւրում։ Այս երիվարք էին ընտիրք յերկրէն արաբացւոց և յեգիպտոսէ. գնէին և յայլոց ազգաց, որպէս 'ի Թագաւորաց ասորեաց, և 'ի Թագաւորացն նեքտացւոց. վճարելով ընդհանրապէս առ մի երիվար հարիւր և յիսուն սիկղ արծաթոյ. որ առնէ իբր 50 ոսկի վենետկեան. ուստի գին արքունի երիվարացն հասանէր 'ի միլիոն մի և կէս. զոր ամենայն հաւա-

տարմութիւն անթերի վնասէին։ Զանգի յաւուրս սողոմոնի այնչափ յաճախութիւն էր ոսկւոյ յերուսաղէմ, մինչ զի իբր առ ոչինչ համարեալ էր առ նովաւ արծաթ։ Զայս ծախք բովանդակ ոչ ծանրանային լոկ 'ի վերայ իսրայէլացւոց բնիկ ժողովրդեան սողոմոնի. քանզի բաց 'ի հրէաստանէ՝ այնչափ ազգք էին ընդ նովաւ, կէս մի 'ի դաւթայ բռնի նուաճեալք, և կէս մի ինքնակամ անձնատուրք սողոմոնի յահէ երեսաց նորա, զի առ համեմատութիւն նոցա փոքր ինչ էր հրէաստան։ Զմենայն թագաւորք ասորւոց, մովաբացւոց, ամմոնացւոց, փղշտացւոց, մադիանացւոց, ամաղեկացւոց, եթովպացւոց, 'ի թափայ քաղաքէ, որ առ եփրատաւ, մինչև ցգազա քաղաք. և 'ի գետոյն փղշտացւոց, որ ելանէ 'ի սիւրիք լերանց, և երթեալ մտանէ 'ի ծովն, և բաժանէ զփղշտացիս յամաղեկացւոց, մինչև ցսահմանս եգիպտոսի, ամենեքեան հարկս հարկանէին սողոմոնի ամենայն հպատակութիւն. զի ոչ ոք իշխեր խլրտիլ կամ գլուխս ամբառնալ. "Զոր սողոմոն՝ ասէ գիրն, իշխան ամենայն թագաւորացն 'ի գետոյն եփրատայ մինչև յերկիրն այլազգեաց, և մինչև 'ի սահմանս եգիպտոսի ‖. Ի. հատ. Ռաք. 26։

'Ի տնտեսական զբաղմունս՝ յաւել սողոմոն և զգրաւորական երկասիրութիւս. արար զանազան գիրս պիտանիս և կարևորս ժողովրդեան։ Գրեաց երիս հազար առակս հրահանգիչս բարոյական իմաստասիրութիւն, և հինգ հազար օրհնութիւնս կամ բանաստեղծական տաղաչափութիւս։ Զարար և բնական իմաստասիրութիւն, կամ տնկաբանութիւն, գրելով զյատկութիւնս և զազդեցութիւնս ամենայն բուսոց, և տնկոց, և ծառոց, սկսեալ 'ի փայտից եղևնափայտի որ 'ի լիբանան՝ որպէս ասէ գիրն, մինչև ցզոպայն որ յորմն ելանէ։ Գրեաց և 'ի վերայ հնչաւորաց ցամաքայնոց, ջրականաց, և օդայնոց, խօսելով զբնութիւն և զյատկութիւնս նոցին. այլ այս երկու գրուածք նորա ոչ ևս երևին։ Զոր ասեն՝ թէ զգիրս տնկաբանութիւն եղեկիա

արքայ անհետ արարեալ լցէ, տեսեալ՝ զի ժողովուրդն տարապայման ապաւինեալ 'ի գերս, զոր անդ ուսուցանէր սողոմոն։ Խազում և այլ զանազան մատեանք յածէին 'ի հնումն, գուցէ և այժմ առ հրեայս, և առ այլ աւելորդապաշտ ազգս յանուն սողոմոնի. զոր մոգք և կախարդք եդին, առ 'ի յարգի ընծայեցուցանելոյ զայնպիսի դժոխային գրուածս։ Սողոմոն անուանի էր ընդ ամենայն տեղիս, և յամենայն աշխարհէ գային առ նա լսել զիմաստութիւն նորա։ Այլ թագաւորք արտաքինք առաքէին առ նա հրեշտակս և դեսպանս ուսանել 'ի նմանէ, և բերել ճաշակս ինչ յիմաստութենէ նորա յերկիր իւրեանց։ Այսուն զի ըստ գրոյն՝ ետուր իմաստութիւն սողոմոնի և հանճար բազում՝ յոյժ, և զեղումն սրտի իբրև զաւազ ծովու. և բազմացաւ իմաստութիւն նորա յոյժ՝ քան զհանճար ամենայն նախնեաց մարդկան, և քան զամենայն իմաստնոց եգիպտոսի։

ԳԼ. Դ.

Հիմնարկումն, և շինումն, և սիրաբերումն գերբահանակ դասարին 'ի սողոմոնէ կառուցելոյ։

Յամենակ հիմնարկութենէ տաճարին է գլխաւոր թուական բացայայտ նշանակեալ 'ի Տէր գիրս. զոր ընթեռնումք 'ի վերջերորդ գլուխն երրորդ թագաւորութեց սյսպէս. * Այս եղև յամին չորեքհարիւրորդի և քառասներորդի (ըստ լատ. ութսներորդի) ելանելոյ որդւոց իսրայէլի յեգիպտոսէ, յամին չորրորդի յամենայն երկրորդի թագաւորելոյ արքայի սողոմոնի 'ի վերայ իսրայէլի,

շինէր զտունն ՝ն ։ Բ.ըդ՝ ինդիր է թէ ուստի՞ պարտ իցէ առնուլ զայս ելս որդւոց իսրայէլի. կէսար կաղինոս զհետ երթեալ յայսմ պէտաւիոսի, սերբաբինոսի, տուրնէմինայ, և այլոց ոմանց երևելի վարդապետաց, ասէ թէ պարտ է առնուլ յանցանելոյ նոցա ընդ յորդանան, և ոչ ընդ ծովն կարմիր։

Յայտնի է ասէ՝ յաճախ կոչել ՝ն ծայրին գրոյն անուամբ ելից որդւոց իսրայէլի յեգիպտոսէ՝ զայն ամենայն քառասուն ամն, յորս եղէն նոքա յանապատի անդ։ Լաստի այն ելք սկսաւ յանցանելոյ նոցա ընդ ծովն կարմիր, և կատարեցաւ անցանելով ընդ յորդանան. ըստ այնմ, * Յելանէին իսրայէլի յեգիպտոսէ . . . . ծով հատեալ և փախեալ. և յորդանան անդրէն դարձաւ ։. սաղմ. ՃԺԴ. 1. 3։ Բ.հա երկու ծագք կամ եզերք ելիցն. ծով փախուցեալ, և յորդանան յետս դարձեալ։ Բ.ա և ա. * Յիշեցէք զոր ինչ արար ՝ն ծ քո ընդ մարիամ ՝ի Ճանապարհի ելանելոյն ձերոյ յեգիպտոսէ ։. Բ. օրէնք. իբ. 9։ Լեր բանն է ՝ի վերայ բորոտու. թէ մարիամու քեռ մովսիսի. որ եղև յետ չորեքտասան ի՛ՁևանաՀց զկնի անցանելոյ իսրայէլի զծովն կարմիր ։ * Յուշ լեցի քեզ զոր արարն քեզ ամաղէկ ՝ի Ճանապարհի ելանելոյն քո յեգիպտոսէ ։. Բ. օրէնք. իբ. 17։ Բ.այս եղև մինչ ժողովուրդն Ճանապարհորդեր ընդ անապատն։ * Բ.այս են վկայութիւնք և իրաւունք . . . զոր խօսեցաւ մովսէս ընդ որդիսն իսրայէլի յելանել նոցա յերկրէն եգիպտացւոց ։. Բ. օրէնք. Գ. 45։ Բ.ըդ՝ յայտ է թէ այն եղև ՝ի քառասներորդ ամի. ապա և ՝ի քառասներորդ ամի խօսի վասն այնր ելից, որպէս թէ տակաւին շարունակէր։ Խօսելով վասն տօնի տաղաւարաՀաբաց, ասէ. * Օ՛ի գիտացէն ամենայն ազգք ձեր, թէ ՝ի տաղաւարս բնակեցուցի զորդիսդ իսրայէլի ՝ի Հանել ինձ զնոսա յերկրէն եգիպտացւոց ։. ղեւ. իգ. 43։ Բ.յլ նոքա զայն ամենայն քառասուն ամն ՝ի տաղաւարս բնակեցան։ Բ.պա Հանել զորդիս իսրայէլի յեգիպտոսէ ըստ լեզուի ՝ն ծայրին գրոյն՝

ձգեցաւ ընդ այն ամենայն քառասուն ամն, յորս նոքա յանապատի անդ թափառեցան։

Օ այս եղեալ՝ 'ի նշանակել գրոյն զգումար ամաց ելից որդւոց իսրայէլի յեգիպտոսէ մինչև 'ի շինուածն տաճարին, քաջ իմանի թէ ամբ այնր ելից ոչ փակին յայն գումար։ Այսէ սովորական և բնական եղանակ թուելոյ, 'ի բաց թողուլ զեզրն յոբ. ուստի ասէամք 'ի տասն մինչև 'ի հնգետասանն։ Հինգ, 'ի բաց թողեալ զտասն՝ յորմէ սկսանի։ Այսն որոյ ասէ կաղինոս, բնական և պարզ մեկնութիւն յառաջագրեալ բանի գրոյն ըստ եբրայականերն այս է. "Յամին չորեքհարիւրորդի ութսնեքորդի յետ կատարելոյ ելից որդւոց իսրայէլի յեգիպտոսէ՝ անցանելով զյորդանան, սկսաւ շինութիւն տաճարին"։ Այս այսպէս 'ի բաց հանեալ զայն քառասուն ամն, մնայ անշուշտ գումարն նշանակեալ. զոր կաղինոս մի առ մի խուզարկութիւն բաշխէ 'ի վերայ ամաց ըստ հաշուի լատին թարգմանութեանն և առանձին ժամանակագրութիւն իւրոյ։ Այլով օրինակաւ չափեն այլք 'ի հին և 'ի նոր մատենագրաց ընդ եւսեբեայ։ Այլ մեք 'ի պատմութիւն շինութիւն տաճարին եկեսցուք։

Սողոմոն 'ի սկզբանէ թագաւորութիւն իւրոյ եռայր հոգւով շինել տաճար մեծագործ և հոյակապ ոյ բարձրելոյ, ըստ յանձնելոյ նմա դաւթի հօր իւրոյ։ Այլ յայպաղեաց ձեռնամուխ լինել 'ի հիմնարկութիւն. քանզի կամեցաւ նախ հաւաքել և պատրաստել նիւթ բաւական, զի մի յետոյ առ պակասութիւն նիւթոյ դադարումն լիցի 'ի գործոյն։ Հիմն տաճարին հրաշակերտ շինուածոյն հանդերձեալ էր լինել 'ի մեծամեծ որձաքար վիմաց. և որմունք նորա 'ի հիմանց մինչև ցաւարտումն հատմանակ վիմատաշ։ Այս թէպէտ 'ի ժամանակաց անտի դաւթի հաղարաւոր քարհատք աշխատէին 'ի լերինս հատանել քարինս, բայց առ համմատութիւն մեծի շինուածոյն՝ սակաւ ինչ էր, զոր արարին։ Սողոմոն, որպէս պատմի Ա. Թագ. Ա. 17. ժողովեաց յամենայն հրէաստանէ զամենայն արս պան-

դուխտս յերուսաղէմ. և հանգիս արարեալ նոցա՝ եգիտ հարիւր յիսուն և երեք հազար և վեց հարիւր. և արար 'ի նոցանէ ութսուն հազար քարտաշս, հատանել քար 'ի լերանց. և եօթանասուն հազար բեռնակիրս, բառնալ և բերել զքարինս. և երեք հազար վեց հարիւր վերակացու 'ի վերայ նոցա, առ անխափան յառաջ վարել զգործն, և չտալ գործաւորաց ժամանակ դատարկութեան։ Սակայն և այնպէս ոչ փութացաւ սողոմոն դնել զառաջին վէմն հիման. քանզի և առ պատրաստութիւն բազմակոյտ փայտից ժամանակ պիտէր։ Այլ կացոյց սողոմոն 'ի ժողովրդենէ իւրմէ արս երեսուն հազար՝ փայտահատս, բաժանեալ զնոսա յերիս դասս. և առաքէր 'ի նոցանէ առ մի նուազ տասն հազար յամսեան փոխանակաւ, որք գործէին ամիս մի 'ի լիբանան, և զերկուս ամիսս հանգիստ առնուին 'ի տունս իւրեանց. և այնպէս տասն հազար միշտ կային յանտառն, և գործէին զնոսրոր գործս. զորս օրինակ հատանել, տաշել, և յղկել զփայտս. և ադոնիրամ գործավար 'ի վերայ նոցա. իսկ Ճարտարապետք, և գլխաւոր գործաւորք փայտից՝ էին ութսունչիք ժողովուրդ քիրամայ արքայի սիդոնացւոց։ Այն այս քիրամ արքայ թէպէտև հեթանոս էր, այլ ոչ խորշէր 'ի կրօնից երբայեցւոց. վասն որոյ և 'ի խօսելն գրով և դեսպանօք ընդ սողոմոնի օրհնէ զՏէր Ճշ խորայէլի յաղագս նստուցանելոյ զսողոմոն յաջորդ դաւթի. Օրհնեալ է ասէ Տէր Ճշ խորայէլի որ արար զերկինս և զերկիր. որ ետ դաւթի արքայի որդի իմաստուն 'ի վերայ բազում ժողովրդեանն այնորիկ։ Այսուհետև յայլ բանից գրոյն՝ երևի թէ քիրամ ունէր գէթ զանկատար ծանօթութիւն ինչ զայ Ճշմարտէ։ Այր նա այր բարեբարոյ՝ խաղաղասէր, դրացի դաւթի, և հաւատարիմ բարեկամ նորա. և զնոյն մտերմութիւն կալաւ և պահեաց և ընդ սողոմոնի. որպէս և դաշնադիր եղև օգնել նմա յամենայնի՝ յոր ինչ կարօղ էր 'ի գործ մեծի շինուածոյն։

Սողոմոն առաւելապէս կարօտ էր Ճարտար հիւ-

սանց փայտից. յորում անուանի Էին սիդոնացիք. և վասն այսորիկ զնոսա խնդրեաց 'ի քիրամայ. * Հրամայն տուր ասէ (ծառայից քոց), և հարցեն ինձ փայտ 'ի Լիբանանէ. և ահա ծառայք իմ եղիցին ընդ ծառայս քո. և զվարձս ծառայութեան քո տաց քեզ, ըստ ամենայնի զոր և ասասցես. զի դու ինքնին գիտես, զի ոչ գոյ մեր այր, որ գիտէ հարկանել փայտ՝ իբրև զսիդոնացիս ॥. Գ. Թագ. Է. 6։ Ամենք զայս բան այնպէս իմանան, որպէս այն թէ խնդրել սողոմոնի 'ի քիրամայ ոչ միայն գործաւորս, այլ և փայտ 'ի Լիբանանէ, զոր համարին լեալ յայնժամ ընդ նոսա հրուանդ։ Բայց յետ հարկանելոյ դաւթի զաղբաղար արքայ ասորեաց. Բ. Թագ. Ը. 18. երևի թէ Լիբանան այնուհետև մնաց 'ի ձեռս թագաւորացն յուդայ. թէպէտ զի արդէն էր 'ի վիճակի ժառանգութեան իսրայէլացւոց. զի Լեառն Լիբանան ամբարձեալ կայ 'ի մէջ սահմանաց իսրայէլի 'ի հիւսիսակողմն. և 'ի ժամանակս սողոմոնի միշտ եղև ընդ հրուանդ նոցա. ուր ամրոցս ևս շինեաց. Գ. Թագ. Թ. 19. և Բ. Դաշ. Ը. 6։ Այսպէս է և յեղանակ բանից սողոմոնի, որ տիրապարապ կարգաւորէ զփայտից իբրև զիւրոց իրաց, հաստատեալ անխտիր՝ զոր ընտրելագոյն համարիցին. և ոչ խոստանայ վճարել զգին փայտից, այլ զվարձս աշխատաւորաց։ Այս թէպէտ անդ 'ի համար 10. ասի. * Այս տայր քիրամ սողոմոնի եղևնափայտ և մայրս ॥. բայց և այս իմանալի է ոչ ըստ նիւթոյն, այլ ըստ գործոյն և պատրաստութեանն. զոր և քիրամ այնպէս իմացաւ, և մտադիր խոստացաւ տալ արանց իւրոց ոչ միայն հատանել մայրս, և սարդոյս, և թեղջս, և պատրաստել ըստ ամենայնի ըստ կամաց սողոմոնի, այլև իջուցանել զնոսա 'ի Լիբանանէ ցեզը ծովու. և արարեալ զնոսա լաստս 'ի ծովու, տանել և հասուցանել 'ի յոպպէ նաւահանգիստս. որ առաւել մօտ է յերուսաղէմ քան զայլ նաւահանգիստս ծովու. և անտի սողոմոն հասուցանէր յերուսաղէմ։ Այ վճար արհեստաւորացն սիդոնացւոց տայր սողոմոն քիրամայ ամի

ամի քսան հազար քոռ ցորենոց, և քսան հազար սափոր մաքուր և աղնիւ ձիթոց. յոր երբեմն յա-ւելցոյր և քսան հազար քոռ գարւոց, և քսան հա-զար ջուր գինւոց. բայց ոչ յամենայն տարւոջ։

Այս 'ի սկիզբն ամին չորրորդի թագաւորու-թեանն իւրոյ յետ մահուան դաւթի՝ յամենայն զիս, որ էր երկրորդ ամիս եկեղեցական տարւոյ երբայեց-ւոց, և յայնժամ համեմատէր տարիւն հռոմայեց-ւոց, արդ սողոմոն հիմն տաճարն։ Այնուհետ կամ կէդրոն նորա էր շինուածն, որ տիրապէս կոչէր նորա, և գոնն։ երկայնութիւն նորա 'ի ներքին կողմն էր վաթսուն կանգուն. լայնութիւն քսան. և ներքին բարձրութիւն նորա նոյնպէս քսան կան-գուն։ Այլ այս ներքին բարձրութիւն այնպէս էր, զի զկնի քսան կանգնաչափ բարձրութեան որմոց՝ գայր շրջանակ կամ պսակ դեղեցկակերտ. յորոյ վերայ և ևս բարձրանայր որմն իբր տասն կան-գուն, այլ այն ոչ երևէր 'ի ստորև։ Այսն այսորիկ լատին թարգմանն զներքին բարձրութիւնն դնէ երեսուն կանգուն, 'ի մէջ առեալ և զտասն կան-գուն բարձրութիւն, որ 'ի վերայ շրջապատ պսակին։ 'Ի վաթսուն կանգնաչափ երկայնութենէ անտի, երրորդ մասն մի էր հատեալ, և ձևացուցեալ իբրև քառակուսի մատուռն. ուր եդաւ տապանակ նոն. և կոչէր Սրբոցն սրբոց. իսկ այլ երկու քա-ռակուսի մասունք անբաժանք՝ ձևացուցանէին շի-նուած երկայնաձև ամենայն իրօք համեմատ. և կոչէր Սրբոցն, կամ սուրբն։ 'Ի ձախատ կամ 'ի զլուխ նորա էր սեղանն խնկոց. ուր և մատուցա-նէին բուրմունս անուշից, և ոչ զոհս և պատա-րագս արիւնաւորս։

Այս բովանդակ շինուած էր պատեալ շուրջա-նակի կրկին պատուարօք, և տախտակամած որ-մովք. և 'ի մէջ երկուց պատուարաց էին երեք յարկք. լայնութի առաջնոյն էր հինգ կանգուն. երկրորդին կամ միջնոյն վեց կանգուն. իսկ եր-րորդին եօթն կանգուն՝ ընդ լայնելով յարկացն 'ի ստորև 'ի վեր համեմատութեամբ, ըստ այնմ և

թանձրութիւն որմոյն 'ի վերին կողմն նուազելով։ Այս տախտակամածք ձևացուցանէին երեքկարգեան յարկս կամ սենեակս. և ընդ շրջանակաւոր սանդուխս լինէր երանել 'ի միջին յարկն, և 'ի միջնոյն յերրորդն։ Այրեսս տաճարին հայէր ընդ արևելս. և առաջի նորա 'գաւիթ երկայն ըստ լայնութեան բովանդակ տաճարին, և լայն 'ի տասն կանգնոյ. և անտի ըստ նմանութեամբ երկուց թևոց ձգեալ տարածանէին երկու ընդարձակ սրահք. առ որովք էին երկու նախագրեալ շրջանակաւոր սանդուխքն, որք հանէին 'ի վերին յարկն։ Արձրու

նակի կայնն քանդակեալ բերովքէք և այլ պէսպէս դրօշուածք. և զանազան նկարք քաջարուեստք, ձևացուցեալ ստուերօք՝ ուրեք իբր խորագոյն, և ուրեք իբր արտաքս ցցուեալ, մինչև այնպէս երևել աչաց՝ որպէս թէ 'ի բաց կորզել 'ի տախտակամած որմոյ անտի. որք թէ լինէին ոսկիապատ, թէպէտ հարստութիւն գերազանցէին. այլ ոչ գեղեցկութիւն. սակայն չէին անմասն և յոսկւոյ. քանզի և անդուրեք ուրեք երևէին ոսկի թիթղունք թռուցեալք, ուր վայելչութիւն յօրինուածոյն բերէր 'ի յաւելումն զարդուց. իսկ յատակ այսր մասին էր յաղնիւ գունագոյն մարմարիոն քարանց, վայելուչ յօրինուածով դասաւորեալ։

Եւ դրան տաճարին՝ որ հանէր 'ի գաւիթ կամ 'ի սրահ անդր աշտարակին, կային կառուցեալ աստի և անտի երկու մեծամեծ սիւնք պղնձիք, ութ և տասն կանգուն բարձրութիւն իւրաքանչիւրոց. գ. Խագ. է. 15. բայց ոչ կատարեալ. զի որպէս ընթեռնումք է. Թագ. գ. 15. բարձրութիւն երկոցունց մեանգամայն՝ էր յերեսուն և 'ի հինգ կանգնոյ. իսկ թանձրութիւն կամ շրջապատ իւրաքանչիւր սեան չորեքտասան կանգուն։ Եւ խոյակք կամ վերնախարիսխք նոցա հինգ կանգուն բարձր, ձոյլ պղնձիք. որպէս և պատուանդանք նոցա, կամ ստորնախարիսք էին 'ի պղնձոյ։ Եւ զի այս երկու սիւնք էին կառուցեալ լոկ առ 'ի զարդ, չկայր այլ ինչ 'ի գլուխ նոցա, բայց միայն գունտ մի պղնձի չորս կանգուն բարձրութիւն՝ գործ շուշանագործ, այսինքն 'ի ձև շուշան ծաղկի յօրինեալ։ Հանդէպ երկուց սեանց այնոցիկ գոյր հրապարակ ընդարձակ. զոր ընդ մէջ հատանէին երկու կամարակապ սիւնազարդ շինուածք բաժանեալք յերկու վայրագաւիթս կամ սրահս անյարկս. և երկոքին էին մասունք տաճարին։ Եւ ոչ հուսալ էր և գրեթէ կիսց 'ի գաւիթ անդր տաճարին՝ յորոյ վերայ էր աշտարակն, կոչէր գաւիթ կամ սրահ քահանայից. ուր յանդիման դրան տաճարին էր մեծ սեղանն զոհից 'ի պղնձոյ՝ քառակուսի, 'ի քսան կանգնոյ ամե-

նայն կողմանք նորա. և 'ի տասն կանգնոյ բարձ-
բութիւն։ Ի միում կողմն այնր գաւթի էր աւա-
զանն մեծ, որ կոչէր ծով պղնձի. թանձրութիւն նո-
րա թգաչափ, 'ի ձև բոլորշի. տրամագիծ նորա 'ի
շրթանէ 'ի շուրթն տասն կանգուն, և խորութիւն
հինգ կանգուն. որ տասնիր երկու հազար մարս
ջրոյ, զոր պահէին անդ յամենայն պէտս քահանայա-
կան պաշտամանց։ Իսկ 'ի միւս կողմն էր Մոյսէ
Շ աբեռոնական Զոյլ հանգամանն կոչեցեալ շինուածն.
որ 'ի իբրև ծածուկ սենեակ վանդակապատ շուր-
ջանակի, և 'ի վերայ նորա խորան մեծագին. ուր
առանձնանայր արքայ, յորժամ 'ի շաբաթս, կամ
յայլ տօնս կամէր առաջնակայ գտանիլ զոհից և պա-
տարագաց։ Իրկրորդ վայրագաւթին կոչէր սրահ
ժողովրդեան. զի ամ և իցէ՝ որ չունէր օրինական
արդելս, կարէր մտանել անդ։

Այս ամենայն շինուած ցայս վայր վեր 'ի վե-
րոյ ինն ստորագրեալ՝ առ փոքր ինչ ծանօթութի
վերծանողաց, կայր կառուցեալ ընդ մէջ ընդար-
ձակ մեծաշէն հոյակապ շինուածոյ. որ և այն կո-
չէր տաճար. զի էր շուրջ զտաճարաւն, և առ այն
պատկանեալ իբր մասն նորա. և էր կատարեալ
քառակուսի. երկայնութիւն իւրաքանչիւր կողմն
հարիւր և քսան և հինգ ճող. մի ճողն էր երկոտա-
սան ոտնաչափ հռովմայեցւոց. վասն որոյ բոլորը
շրջապատ այնր շինուածոյ՝ էր ոտնաչափ վեց հա-
զար, քառասնիւ չափ պակաս։

Օ տամենայն կահս և զանօթս կարևորս 'ի բազ-
մադիմի պէտս տաճարի ներն, արար սողոմոն բա-
զում մեծագործութիւն։ Ի սրբոնէ եդ աշտանակս
'ի զուտ ոսկւոյ տասն. հինգ ընդ աջմէ, և հինգ
ընդ ձախմէ. և տասն սեղանս ոսկիս, նոյնպէս ընդ
աջմէ, և ընդ ձախմէ. և միանգամայն ասել՝ ամե-
նայն անօթք, որք էին կարգեալ 'ի մատոյ 'ի պաշ-
տօն փառաց ներն ոչ, որպէս շուշանաձև բազմա-
կալք, ճրագունք, յարդարիչք ճրագաց, ափսեայք,
սկաւառակք, բուրվառք, խնկամանք, տուփք, և
այլն, բովանդակ էին 'ի մաքուր ոսկւոյ. մինչ նաև

դուրք սրբութեան սրբութեանցն 'ի ներքոյ, և ծղինիք նոցա, և բևեռք էին 'ի ձոյլ ոսկւոյ. կշիռ միոյ միոյ բևեռի քսան և հինգ ունկի։

Լոկ անօթք առ այլ զանազան պէտս էին 'ի պղնձոյ. որոյ վասն ած սողոմոն 'ի տիւրոսէ զայր մի կոչեցեալ քիրամ՝ անհամեմատ ճարտարապետ պղնձոյ. և նա զամենայն զգործ պղնձագործ արար. բայց աշխատութեամբ և ծախք անբաւ եղեն առ 'ի փոխադրել զայնոսիկ յերուսաղէմ։ Զանգի պղինձն որպէս և այլ ամենայն հրահալելիք 'ի սկզբանն մարարարեցան յերուսաղէմ, այլ հող երկրին երուսաղեմի ոչ էր 'ի դէպ ձուլել անդ ձուլածոյս։ Զայն որոյ 'ի գտանել հող կաւուտ 'ի ձևացուցանել զգաղափարս, և 'ի թանձրութեամբ մածուցիկ հողոյ ձուլել, հարկ եղև երթալ մինչև 'ի գաղաադ. և անդ 'ի մէջ սոքովթայ և սիրարարթամայ, որ կոչի և սադաթա, հեռի յերուսաղէմ իբրև ութսուն մղոնաւ՝ գործել։ Զանդ բերաւ պղինձն. և ձուլեցան սիւնք և խոյակք. և ստորնախարիսք, և նռնաձևք, և աւազանք, և տաշտք. և քերոբք, և առիւծք. և երկոտասան եղիւք՝ որք բառնային զծովն պղնձի. և երկու մեծամեծ սիւնքն սրահին, զորս կոչեաց սողոմոն Յաքուտ, և Բոոզ. որք 'ի Է. հատ. Է. 16. կոչին ուղղութեամբ, և զօրութեամբ՝ թարգմանաբար. և նոյն իսկ ծովն պղնձի. թող զկաթսայս, և զսանս և զայլ պէտսն անօթս 'ի նուաստագոյն պէտս խոհանոցին։ Զայս ամենայն ձուլածոյ գործածս, և մանաւանդ զերկու սիւնս, և զծովն պղնձի, և զերկնս ընդ ութսուն մղոնաչափ ճանապարհ տանել, ընդ լերինս, և ընդ ձորս անցուցանելով, սողոմոնեան իմաստութեամբ պէտք էին։ Զի սակայն արարին զամենայն, և գործն մեծ հրաշալի ըստ ամս եօթն և իբր յամիս ութ կատարեցաւ։

Յամի աշխարհի ըստ հաշուին կաղենոսի 3159. յամսեանն երկրորդի արկաւ հիմն նորա. և յամին 3166. յամսեանն ութերորդի բովանդակեցաւ ըստ ամենայն բանի, և ըստ ամենայն յօրինուածոյն իւրոյ։ Զայլ մեծագոյն զարմանք այն է. զի այնչափ

ստպառաժ քարինք, այնչափ փայտք, և այնչափ ոսկի զարդք 'ի գործ արկան յայսմ մասին տաճարին, որ կոչէր տուն տն, առանց բնաւ լսելի լինելոյ հնչմանն մրճոյ, կամ կռանի, կամ այլ ինչ երկաթի գործեաց. Գ. Թագ. Ը. 7։ Վասն զի ամենայն նիւթք այնպէս տաշեալ և յղկեալ, և ճշտիւ չափեալ և յարմարեալ էին, զի առ 'ի գործ դնել զնոսա՝ չպիտէր այլ ինչ, բայց միայն զետեղել յիւրաքանչիւր տեղիս. մինչ նաև բևեռք՝ առ որս հարկ էր կռանահարութիւն, ոչ էին սրածայր. այլ գործեալ իբրև պտուտակ (այն է՝ պուռմա.) զոր աքցանիւ պտոյտքեալ մխէին 'ի տեղին անձայն. որպէս թէ առ 'ի յարգուն սրբութեան տեղւոյն՝ և անզգայ իրաց պահել զլռութիւն։

Զ. Ուստի կատարումն այսչափ արարք, և 'ի բոլոր մասունս լրացեալ մեծի գործոյս, եթէ օրէն իցէ ասել՝ երեք իշխանք կամ վերակացուք եղեն գործակիցք։ Զսա՝ իշխանն իշխանաց ՅԾ, որպէս առ գործ՝ բռնանդակապէս կարգեալ 'ի փառս իւր։ Զերկրորդ իշխան՝ սողոմոն, որ գիտելով զկարողութիւն ՅԾ, և զայն և զ թէ ըստ հասարակ նախախնամութեան ՅԾ ոչ գործել ինքն առանձին, փոյթ կալաւ ամենայն ոգւով 'ի գործն։ Զերրորդ իշխան՝ արհեստն անմիջական Ճարտարաց. զի առանց նոցա առ ոչինչ զօրէր իշխանութիւն սողոմոնի։ Սողոմոն գոլով լի իմաստութիւն համարեցաւ յանկաւոր իւրում իմաստութիւն ոչ գործել իբրև թագաւոր, իբրև արհեստաւոր, և իբրև գործաւոր. այլ ընտրել այսպիսի արհեստաւորս, և այսպիսի գործաւորս, զի յընտրութեան նոցա երևեսցի ինքն թագաւոր իմաստուն։ Ոչ ընտրեաց սուտ մտաւորութիւն զթերաւարժս սակս խնայելոյ 'ի վարձս, այլ զքաջավարժս և զչմտագոյնս, առ ոչինչ գրեալ զառաւելութիւն վարձուց։ Ոչ մերժեաց զօտարս, զի իւրքն շահեսցին, այլ ընտրեաց զգերազանցս Ճարտարաց կրկնապատիկ օգտութիւն. մի՝ զի գործն լիցի լրացեալ և կատարեալ ամենայն մասամբք. և երկրորդ զի իւրքն հմտութիւն և օրինակաւ օտարաց, ուսցին

և կատարեսցին յարհեստս։ Հաճութիւն՝ զոր եցոյց Տէր սողոմոնի մինչ շինէր զտաճարն, յաւել 'ի նա փոյթ բազում և եռանդն առ բարիոք կատարումն։ Օ՛ի յընթացս գործոյն խօսեցաւ նմա Տէր, և խոստացաւ ընդունել զտունն զայն իբրև սեպհական բնակարան. և ոչ թողուլ զժողովուրդ իւր զիսրայէլ։ Լրթէ դու գնասցես ասէ ըստ հրամանաց իմոց, և պահեսցես զամենայն պատուիրանս իմ, հաստատեցից զբանն իմ, զոր խօսեցայ ընդ դաւթի հօր քոյ վասն քո։

ԳԼ. Լ.

Լ՚մպ ըանէր 'ի Դշան փառաց Տն ընտ պրաճարն։ Հուր հրաշական իջեալ յերկնից՝ ծախէ զողջակէզս։ Լ՚յլ շէնուածոյ սողոմոնի։

Իբրև կատարեցաւ շինուած տաճարին ամենայն մասամբք, տարաւ սողոմոն անդ զամենայն զկահն, և զսպասս և զամենայն զգանձն զարծաթ և զոսկի, զոր դաւիթ նուիրեալ էր Տն։ Լ՚սպա հրաման արձակեաց առ ամենայն ծերսն իսրայէլի, և առ ամենայն իշխանս ցեղից, և առ առաջնորդս տոհմից որդւոց իսրայէլի՝ գալ Ժողովիլ յերուսաղէմ, մեծահանդէս հռչակաւ հանել զտապանակ ուխտին Տն 'ի սիոնէ քաղաքէ դաւթի, և տանել 'ի տունն 'ի տեղին պատրաստեալ վասն նորա։ Լ՚ տապանակի անդ ոչ գոյր ինչ յայնժամ, բայց միայն երկու քարեղէն տախտակքն ուխտի Տն, զորս եդանդ մովսէս յանապատին 'ի քորեբ. զի սափորն ոսկի մանանային, և գաւազանն ահարոնի սքանչելեօք ծաղկեալ, որք թուի թէ 'ի սկզբան անդ եդան 'ի տապանակ անդր առ յիշատակէ, 'ի փոխադրութեանն նորա 'ի տաճարն՝ Տնան, և եդան 'ի գանձս տա-

ձարին 'ի պահեստ։ Ընդ տապանակին հանին և զխորանն վկայութեանն զոր շինեաց Մովսէս յանապատին, և զամենայն սպասս սրբութեան, որք 'ի խորանի անդ էին։ Մեծ եղև և շքեղ յոյժ հանդէս փոխադրութեան. զի արքայն սողոմոն, և ամենայն ժողովուրդն իսրայելի գումարեալք առ նա, երթային առաջի տապանակին. և զենուին արջառս և ոչխարս, որոց ոչ գոյր թիւ և ոչ համար։ Եւ քահանայք բարձեալ տանէին զտապանակն, և զևտայիք սաղմոսանուագք երեք խումբք ըստ երից գլխաւոր սաղմոսասաց երգողաց աստիպ, եմմանայ, և իդիթովմայ՝ ամենեքեան զգեցեալ պատմուճանս բեհեզեղէնս, տաւղաք, և քնարաք, սրնգաք և ծնծղայիւք. և ընդ նոսա հարիւր և քսան քահանայք փողահարք. որք միանգամայն ամբարձեալ զձայնս իւրեանց երգէին միաբան փողովք և իւրաքանչիւր նուագարանաք զսաղմոսն, «Լոսատովան եղերուք տէն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա». և այն՝ սքանչելի արուեստիւ, զի ոչ ձայնք երգողաց, և ոչ հնչմունք նուագարանաց և փողոց, բառնային կամ խափանէին զգեղեցիկ ներդաշնակութիւնն։

Մինչդեռ երգէին զսաղմոսս զայս, երևեցոյց տէր զգալի նշանաւ զհաճութիւն իւր ընդ տունն և ընդ այն ամենայն հանդէս, զի յեղակարծ ինն լցաւ տունն Թանձր ամպով 'ի նշան իւրոց հաճային փառաց յայտնելոյ անդ։ Յայնժամ ել սողոմոն 'ի վերայ պղնձի խարսխի, զոր եր շինել 'ի մէջ սրահի ժողովրդեան հանդէպ սեղանոյ տէն. երկայնութիւն նորա 'ի հինգ կանգնոյ, նոյնչափ և լայնութիւնն. իսկ բարձրութիւն յերից կանգնոց։ Այն խարիսխս եկաց անդ միշտ, և եղև իբրև աթոռ քարոզութեան առ ժողովուրդն, ուր յետոյ քարոզեցին մարգարէք։ Այլ առաջին քարոզիչ յաթոռոյ անտի եղև սողոմոն արքայ. որ մեկնեաց բազմութեան ժողովրդեան իսրայելի, որք ախորժ ունկնդրութիւն լսէին նմա՝ զխորհուրդ փառաց տէն երևեալ յամին։ Պռովութիւն բարձրացոյց զբարութիւն և զողորմութիւն

ՅՍ 'ի վերայ ժողովրդեան, և 'ի վերայ տանն դաւ-
թի, և 'ի վերայ անձին իւրոյ, որում ետ ապացոյց
դշխնուածն զայն տաճարին. և ուսոյց նոցա զծայ-
բագոյն զիջումն անսահման մարդասիրութեն ՅՍ.
զի կամեցաւ իրօք ցուցանել՝ թէ ընդունի զտեղին
զայն իբրև տուն իւր սեպհական. որում երկինք և
երկնից երկինք ոչ են բաւական։ Լսելա 'ի գուշն
անկեալ 'ի վերայ ծնգաց իւրոց առաջի ամենայն
ժողովրդեան, և ամբարձեալ զձեռս իւր յերկինս,
արար աղերս առ մեր բարձր ձայնիւ 'ի լուր ամենե-
ցուն՝ լի հաւատով, յուսով, և սիրով վասն բարեյա-
ջողութեանն և երջանկութեան ժողովրդեան իւրոյ.
վասն կատարելոյ զինդրուածս նոցա և օտարաց,
որք հաւատով գայցեն 'ի տաճար անդր կալ յա-
ղօթս. և վասն քաւելոյ զմեղս, որոց եկեալ անդ
զղջմամբ և բեկեալ սրտիւ աղաչեսցեն. և վասն
լսելի լինելոյ ամենայն աղօթից, և ամենայն խնդ-
րուածոց ամենայն մարդոյ, որ միանգամ որպէս և
զնարդ գիտիցէ զանտս սրտի իւրոյ, և աղաչեսցէ
անդ զերեսս ՏՆՆ։ Օ այս աղերս կամ զաղօթս, որ
լնագոյն գրեալ կայ 'ի գիրս Գ. Խագ. Ը. Եւ Ի. Գաց.
Ը. այնպիսի խանդաղակաթ գորովանօք և ջերմու-
թիւն արար սողոմոն, զի անհնարին թուի, թէ 'ի
տեսանել և 'ի լսել բազմութեանն ժողովոյն զայն խո-
նարհ սպաղատանս 'ի թագաւորէ, և յայնպիսի ծաղ-
կահասակ թագաւորէ, որ չև ևս էր ամաց երեսնից, չիցեն փղձկեալ և լուծեալ 'ի յորդահոս արտասուս։

Իբրև կատարեաց սողոմոն զաղօթսն, դարձեալ յոտն եկաց. և յորդոր բանիւ խրախուսեալ զժողովուրդն 'ի սէր ՅՍ, և 'ի հաւատարիմ պահպանութեան ամենայն հրամանաց նորա և պատուիրանաց, օրհնեաց զնոսա։ Լսելիս թէ կատարեաց սողոմոն զաղօթս և զօրհնութիւն ժողովրդեան, ահա էջ հուր հրաշական յերկնից, և ծախեաց զողջակէզս և զզոհս։ Օ այն հուր տեսեալ բազմութեան ժողովոյն, նոր հիացմամբ և ցնծութիւն առլցեալ՝ անկան ամենեքեան առ հասարակ 'ի վե-

բայ երեսայ յերկիր 'ի քարայատակ տեղւոջն, և երկիր պագին և օրհնեցին զնոր. և ոչ կարէին մեկնել 'ի նոր տեղւոջէ անտի, ուր համբարձին զանձինս լինել իբրև յերկնաւոր դրախտի։ Յայն նաւակատիս եղէն սողոմոն զուարակս քսան և երկու հազարս, և ոչխարս արօտականս հարիւր քսան հազարս. և զի սեղանն պղնձի առ համեմատութիւն այնչափ բազմութեան զոհից և ողջակիզաց և պատարագաց փոքր էր, և ոչ կարէր ընդունել զամենայն. ետ սողոմոն սրբել զմիջին վայր սրահի քահանայից, և անդ կանգնեաց շարժական սեղան վասն պատարագաց, զորս ոչ կարէր տանել սեղանն պղնձի։

Լաբար սողոմոն զնաւակատիս տաճարին եօթն օր. և զի էր յայնժամ և ոմանք տաղաւարահարաց, որ նոյնօրինակ եօթնօրեայ կատարէր, վասն այնորիկ տօնախմբութիւնս այս երկարեցաւ աւուրս չորեքտասան։ Լու յաւուրս ութերորդի՝ երկրորդ եօթնօրիից, որ անկաւ 'ի 22. ամսեանն եօթներորդի, արձակեաց սողոմոն զանթիւ զանհամար բազմութիւն ժողովրդեան գնալ յիրաքանչիւր տեղիս իւրեանց. որք եկեալ դումարեալ էին ոչ միայն 'ի դանայ մինչև ցբերսաբէէ, որք էին վերջին սահմանք հրէաստանի, այլև յերկրէն եմաթայ 'ի մէջ գետոյն աբանայ և փարփարայ՝ որ յասորիս դամասկոսի, մինչև ցհեղեղատն կամ ցգետն եգիպտացւոց. որ այսպէս կոչեցաւ, զի բաժանէ զառաջին սահման եգիպտոսի՝ որ յերկիրն գեսեմ, 'ի յանապատէն իսմայէլացւոց և այլոց այլազգեաց, որք էին ընդ մէջ եգիպտոսի և հրէաստանի։ Լանզի յայս ամենայն հեռաւոր սահմանաց՝ համբաւն հրաշակերտ շինուածոյ տաճարին, և ակնկալութիւնն չքնաղ հանդիսի՝ ձգեալ էր յերուսաղեմ զանթիւ բազմութիւն մարդկան։

Յետ կատարելոյ սողոմոնի զտուն նոն՝ ձեռն էարկ 'ի շինութիւն իւրոց նորակերտ արքունեաց։ Զի յայտ պատճառն, թէ առ ինչ չհաճեցաւ որդին ընդ հոյակապ ապարանսն, զոր այնչափ մեծաւ

գործութիւն շինեաց դաւիթ հայր նորա յամրոց անդր սիոնի։ Զոր չունիմք զայլ ինչ ասել, բայց զի շինել շինուածս սովորաբար է բուռն ախորժակ կամ մտրութիւն. յորմէ՝ որ միանգամ առնու զնա-շակ, ոչ կարէ հրաժարիլ։ Զայս յայտնի է, զի սո-ղոմոն յօժարութիւն մեծ ունէր ի շինուածս. և ոչ պակասէին պատճառք շինելոյ, զի ոչ պակասէին նմա դրամք։ Զոմ կառոյց զիւր արքունիս ի հա-բաւակողմն տաճարին՝ ձգեալ յարևելեան կողմն քաղաքին։ Զայս շինեաց առանձին ապարանս և վասն կնոջ իւրոյ դստեր փարաւոնի, զոր հանեալ ի քաղաքէ դաւիթի՝ ընակեցոյց զնա անդ, անպա-տեհ համարելով թողուլ զնա ի քաղաքի դաւիթի՝ յետ մտանելոյ տապանակի ներս անդ։ Յաւել և պարիսպս և աշտարակս յերուսաղէմ. շինեաց և ապարանս զբօսանաց և զուարճութիւն մեծ յերու-սաղէմ քաղաք յարևելեան կողմն նորա՝ ի ջրաբքի տեղւոջ. ուր արար և պարտէզս և բուրաստանս, և անտառս, և ամենայն փափկութիւս։ և ի մայրի ծառոց, զոր ետ անկել անդ, կոչեաց զտեղին լի-բանան. և զպարտէզս իւր կոչեաց անտառ լիբա-նանու։

Զայլ մեծագործութիւն առաւել քան զայսոսիկ բազմաշխատ և բազմածախ՝ եղև շինել զբարձրա-ւանդակն՝ կոչեցեալ յերբայականն միւս. այսինքն է ընուլ և խնուլ զմեծ ծորժորն կամ զվիհն, որ էր ի մէջ լերին սիոնի, և յերբուսայ հին երուսաղէմ. զոր սկսեալ էր դաւիթ, և սողոմոն կատարեաց, ի ձորոյն կեդրոնի մինչև ցլեառն սիոն հարթ հա-ւասար դաշտ կազմեալ. ուր շինեաց ապարանս և այլ զանազան շինուածս։ Զրևի թէ ի շինել սո-ղոմոնի զմելոն, նոր մարդահարկ եղեալ իցէ ի վերայ ժողովրդեան. և այն եղև պատճառ ապրս-տամբութեան յերոբովամայ որդւոյ նաբատայ. որպէս ցուցանէ գիրն յասելն. «Զայս այն իրք էին՝ զի վե-րացոյց յերոբովամ զձեռն իւր յարքայ սողոմոն, զի արքայ սողոմոն շինեաց զբարձրաւանդակն. և եխից զխրամ քաղաքին դաւիթի հօր իւրոյ»։ Յայտ-

նագոյն և լատին թարգմանն. * Լոյս այս է պատ-
ճառ ապաստանութեան (յերոթովամայ) ընդդէմ նը-
բա. զի սողոմոն չինեաց զվերն, և հաւասարեաց
զխրամ քաղաքին դաւթի հօր իւրոյ ॥. Գ. Թագ.
ԺԲ. 27։

Շինեաց և զանազան քաղաքս յայլ և այլ տե-
ղիս, զմանս նորոգելով, և զմանս ամրացուցա-
նելով. որպէս զեսեր, զմակեդովն, զգազեր, զոր
փարաւոն արքայ եգիպտացւոց առեալ 'ի քանա-
նացւոց, զբնակիչսն կոտորեալ, և զքաղաքն հրձիգ
արարեալ, տուեալ էր զնա պարգևատակն դստեր
իւրում կնոջ սողոմոնի. զոր յետոյ շինեաց սողո-
մոն. որպէս և զբեթորոն վերին, և զբեթորոն
ներքին։ Շինեաց և երկու մեծամեծ ամրոցս յա-
նապատին ասորւոց կոչեցեալ եմաթ սովբայ յայն-
կոյս լերանց ամանայ 'ի գլուխ սահմանաց իւրոց,
ընդդէմ քաղդէացւոց, ասորեստանեայց, պարսից,
և մարաց. և զմին կոչեաց բաղաթ. իսկ զմիւսն
թերմեթ կամ թատմոր. զոր լատին թարգմանն
կոչէ բալմիրա. որ 'ի հնումն էր քաղաք հռչակա-
ւոր մեծ և հոյակապ. յիշատակեալ և 'ի պլինիո-
սէ. գէրթ. Ե. գլ. 25. զոր ապա կործանեաց աւրե-
ղիանոս կայսրն։ Լոյս և այս պատեաց սողոմոն պարս-
պօք և ամրացոյց դրամբք և նգաբ յամենայն թա-
գաւորութեանն իւրում զամենայն արձակաքաղաքս, և
զաւանս 'ի սահմանագլուխս երկրի իւրոյ, և 'ի լե-
բանան. և զքաղաքս կառաց, և զքաղաքս երիվա-
րաց, զբեթ մարքաբովթ, կամ բեթ-համ-մարքե-
բա. այն է՝ տուն կառաց. բեթսուսիմ, տուն ձիոց.
ասեր սուսիմ կամ ասարսուսիմ, այսինքն գաւթի
երիվարաց. որք գտանին յիշատակեալ 'ի գիրս յե-
սուայ. ԺԹ. 5։ Լոյս միանգամայն ասել, կատարեաց
սողոմոն և 'ի կարգի շինուածոց զամենայն ցան-
կութիւն սրտի իւրոյ. զի արար զամենայն, որ ինչ
անկաւ 'ի սիրտ նորա. և անկան 'ի սիրտ նորա՝
ըստ ումեմն ասելոյ՝ իբք կարևորք և մեծամեծք,
ցորվայրք կանայք ոչ խոտորեցուցին զսիրտ նորա
առ կուռս։ Այլ պարտ է խոստովան լինել, թէ

'ի ծերութենն հուսալեցաւ յիմաստութէ, քանզի յերիտասարդութենէ եղև կարի իգասէր. և դժուարին է պահել զիմաստութենն ընդ երկար՝ այնմ որ խորտակէ զանձ պարկեշտութէ։

ԳԼ. Զ.

Լոր երանութն այ սողոմոնի։ Հասարակութիւն բարեխառնեալ նորա ընդ արդարոյն պիտրոսի։ Հարստութիւն նորա և պարեղան եկամուտս։ Գալուստս պիտնոյն սաքայ յերուսաղէմ։

Յետ կատարելոյ սողոմոնի զշինութէ տաճարին, և տան իւրոյ և պարտիզաց, երևեցաւ նմա ՝ի գաբաւոն յորժամ պարգևեաց նմա իմաստութէ և հանճար։ Լսեսցեալ ընդ նմա և այլ անգամ մինչ շիներ զտաճարն, բայց ոչ յայտնութէ և երևմամբ, որպէս յայս երկու նուագս։ Լու ասաց ցնա յայտնի, թէ լուաւ պաղատանաց նորա, և արար նմա ըստ ամենայն աղօթից նորա. սրբելով զտուընն զայն դնել զանուն իւր անդ յաւիտեան։ Լու եթէ գնայցէ առաջի նորա սրբութէ սրտիւ և ուղղութէ, որպէս գնաց դաւիթ հայր նորա, պահելով զպատուիրանս նորա ինքն և որդիք նորա, հաստատեսցէ ՝ի նմանէ՝ ինքն և որդիք նորա և ժողովուրդն, և ծառայիցեն աստուածոց օտարաց, սպառնայ ցրուել զժողովուրդն յերկրէն զոր ետ նոցա. և զտաճարն, զոր այնչափ խնամով ետ շինել՝ ընկենուլ յերեսաց՝ գնալ յապականութէ։ Լ. Ծային սքանչելահրաշ և միշտ օրհնաբանելի մարդասիրութէն առանձին խնամք ընդ ժամանակս

ժամանակս զարթուցանէր և խրատէր զսողոմոն իբրև գորովական հայր զորդի՝ խոստմամբ և սպառնալեաւք, յուսով և ահարկութեամբ՝ կալ 'ի բարեպաշտութեան, և չխոտորիլ չեւանել արտաքս յուղիղ ճանապարհէ՝ նոն նոյ իւրոյ՝ յորմէ ունէր զամենայն բարի։ Այլ մեղմ և համբոյր բարք սողոմոնի, հարստութիւնք և փափկութիւնք նորա, սիրելութիւնք նորա թէպէտ համեստացեալք 'ի ձեռն կապոյ ամուսնութեան, և մեղկութիւն 'ի փաղաքշանս և 'ի կանացի գգուանս, միշտ 'ի մեծի վտանգի ունէին զնա տպերախտիլ յաւուր միում այսչափ բարերարութեաց նոն նոյ իւրոյ։ Սակայն գտնէ ընդ ամն ինչ պահեաց զանձն յիրական կռապաշտութենէ։

Ընդ քիրամայ արքայի սիդոնի և տիւրոսի կաւլաւ հաստատուն միշտ զխաղաղութիւն և զբարեկամութիւն. և թէպէտ արար սողոմոն իրս ինչ անհաճոյ քիրամայ. բայց նա կամ առ խաղաղասէր բարոյից իւրոց, և կամ առ քաղաքական նկատման, միշտ անխախտելի պահեաց զբարեկամութիւն իւր ընդ այնպիսի մեծի թագաւորութեան, որ և դրացի խսկ էր նմա։ Որ իրամ արքայ՝ որպէս տեսաք ցայս վայր 'ի սկզբանէ հիմնարկութեան տաճարին, մինչև ցկատարեալ սողոմոնի զնա, և զտուն իւր, և զտուն դստերն փարաւոնի, և զպարսպս իւր, և զայլ ամենայն շինուածս յերուսաղէմ ընդ ամն քսան, միշտ ձեռնտու եղև նմա ամենայն յօժարութիւն. տուեալ գործաւորս հատանել եղևնափայտս, և մայր փայտս 'ի լիբանանէ, և տանիլ զայնոսիկ մինչև ցյոպպէ։ Այլ և արհեստաւորս ճարտարս, ոչ միայն հիւսունս փայտից, այլև 'ի գործս հրահաւելեցեալ՝ ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ, և բաց յայնցանէ եւ սողոմոնի և հարիւր և քսան տաւզանդս ոսկւոյ։ Սակ սողոմոն փոխանակ այնր ամենայնի, թէպէտ առաքեր ամի ամի քիրամայ ուռճիկ, ցորեան, ձէթ ընտիր, գինի և գարի՝ բաւզում առատութիւն, որպէս պատմեցաւ յառաջագոյն. սակայն այնոքիկ երևի թէ չէին բաւական

փոխարէն այնչափ գործոց սիդոնացւոց, և այնչափ ոսկւոյ. մնաւանդ զի 'ի վերայ այնր ամենայնի՝ տուեալ էր քիրամ սողոմոնի երկու քաղաքս և յերկրին փիւնիկեցւոց՝ զեմնթ և զսովբա. զորս ամրացոյց սողոմոն ընդդէմ ասորւոց, և բնակեցոյց 'ի նոսա զորդիս իսրայէլի։

Վասն որոյ առ լնագոյն վճարումն ամենայնի, եւ սողոմոն քիրամայ քաղաքս և աւանս ընդ ամենայն քսան. 'ի ստորին գալիլեա, 'ի մէջ ելևթերոս՝ այսինքն ազատ գեղոյ, և երանցն տիւրոսի։ Գտնաց քիրամ 'ի գալիլեա տեսանել զքաղաքսն, այլ ոչ հաճեցեալ ընդ նոսա, ասէ՝ խօսելով առնա, որ ոչ լսէր նմա, զի չէր անդ սողոմոն. զինչ էն քաղաքքս այսոքիկ զոր տուեր ինձ եղբայր. եղբայր կոչէ զսողոմոն վասն ընտանութեան ըստ սովորութեան ժամանակին. այլ զքաղաքսն իբր յարհամարհանս՝ կոչեաց երիր կապուալ։ 'Ի վերայ նշանակութեան երբայական բառիդ կապուալ կամ կէպուալ, զանազան էն կարծիք մեկնչաց. ոմանք խմանան երկիր փշաբեր. ոմանք երկիր անջրդի աւազուտ և անբեր. կէաք երկիր ճախճախուտ մոլախոտեալ. իսկ եօթանասունք, յորմէ և մերքս ըստ բնիկ նշանակութեան երբայական բառին դնեն սահմանս. իբր թէ առ այլ ինչ ոչ էն պիտանացու, բայց յորոշումն սահմանաց որպէս երկիր լեռնային առանց այլ ինչ շահեկանութեան։ Այսպէս և վասն դրից կամ կողմանց քաղաքացն այնոցիկ զանազան էն կարծիք մեկնչաց, քանզի եթէ երկիրն կապուալ, է այն տեղի որ 'ի գիրս յեսուայ. ԺԵ. 27. կոչի քաբոլզ, մնա է պտղոմայիդայ, ուստի 'ի հարաւակողմ տիւրոսի։ Այլ զիարդ և իցէ. քիրամ ոչ ընկալաւ զնոսա. բայց ոչ վասն այնորիկ քակեցաւ բարեկամութիւնն և միաբանութիւնն երկուց թագաւորութեանց։ յայտ է թէ այլ իրօք հաճեցոյց զնա սողոմոն. որպէս և նա զսողոմոն։

Զանզի յետ այնորիկ կամք եղեն սողոմոնի ունել և 'ի ծովու հորութիւն. այլ զի հրէայք ընդ այն ժամանակս անվարժ էին՝ որպէս 'ի շինութիւն

նաւուց, նոյնպէս և 'ի նաւորդութիւն. իսկ տիրաց-ցիք և սիդոնացիք յերկոսին ևս քաջահմուտք և հռչակաւորք, ընկալաւ սողոմոն 'ի քիրամայ արքայէ ոչ միայն արհեստաւորս ճարտարս 'ի նաւաշինութիւն, այլև նաւորդս հմուտս 'ի նաւարկութիւն ընդ ծով. ընդ որս միացուցեալ սողոմոնի և յաւրանց իւրոց 'ի գործ նաւաշինութիւն, և 'ի նաւարկութիւն 'ի ծովու, զի առաջնորդութիւն նոցա, և իւրքն վարժեսցին յերկոսին, եւ շինել նաւս 'ի դասխոնդաբերս, որ էր նաւահանդիստ 'ի կարմիր ծովու՝ մերձ յեզեաթ, և եղեալ 'ի նոսա ընդ արսն քիրամայ և յիւրոց արանց՝ առաքեաց 'ի սովփերա։ Եւ եղեւ յոր կողմն աշխարհի իցէ սովփերա կամ սովփերա, չէ յայտ. զի սէր գիրն քաց յանուանէն՝ այլ ոչինչ նշանակէ։ Ամենք համարին թէ իցէ հատարակ անուն քովուց ոսկւոյ. ոմանք թէ իցէ մալաքա կղզին. այլք թէ մի 'ի նաւահանդստիցն քերուայ. կէսք թէ սպանիա՝, որոյ ոսկեհանք ա-նուանի էին 'ի հնումն, և ոմանք թէ երկիրն ծո-փաց 'ի հայս, կամ եւիլատայ՝ նշանակեալն 'ի ՅՆ. Ը. 11։ Բայց ամենեքեան ընդ կարծեաց, առանց հաւաստի նշանս ինչ յառաջ բերելոյ. այս և եթ հաւաստի է, զի գոյին անդ ոսկեհանք, զի բերին անտի արքայի սողոմոնի ոսկի չորեքհարիւր և յի-սուն տաղանդ. որպէս ունիմք 'ի գիրս երկրորդ մնացորդաց. Ը. 18։ Յորմէ երեսուն տաղանդ ոսկ-ւոյ ծախեցաւ 'ի զանազան պէտս նաւուց, և 'ի թոշակ նաւորդաց, և մնաց արքայի զուտ ոսկի տաղանդ չորեքհարիւր և քսան. և այսպէս գիրն երրորդ թագաւորաց. Թ. 28. միաբանի ընդ գրոց մնացորդաց։

Եւ բար սողոմոն միաբանութիւն քիրամայ տիրացուց արքայի և այլ նաւատորմիզ 'ի ծովն միջերկրական, 'ի նաւահանդիստն տիւրոսի, որ էր թայր 'ի թարշիս. այլ որպէս սովփերա, նոյնպէս և թարշիս կամ թարսիս է տեղի անծանօթ։ Ամենք դոլին անուամբ իմանան ընդհանրապէս զամենայն կղզիս, և զամենայն նաւահանդիստս ծովու. մա-

նաւանդ թէ և զնոյն խակ զծումն. ուստի յասել գրոյն, «Յերեսամ գայր արքայի նաւ 'ի Թարսիս». և որպէս թէ ասել, գայր 'ի ծովէ։ Այլ եդեալ թէ մարթ իցէ երբեմն փոխաբերութիւն յայն հանրական միտս առնուլ, սակայն աստ սէր գիրն յայտնի դնել զնա իբր եղը որոշեալ։ Մանաւ նոյնացուցանեն զնա ընդ սովփերայ. վասն որոյ և զերկու նաւատորմիղս մի համարին. զոր յայտնապէս զանաւ զնել գիրն. զմին զնել ելանել 'ի նաւահանգստէն գասիոնգաբերայ, որ է 'ի կարմիր ծովու. իսկ զմիւսն 'ի նաւահանգստէն տիւրոսի, որ 'ի միջերկրականին։

Այն ևս, որք անուամբդ Թարշիս իմանան զհիւսիսային ծովեղերս ափրիկոյ. յորս 'ի հնումն ծաղկեալ էր յոյժ վաճառաշահութիւն ընդ եգիպտոս քաղաքի 'ի ձեռն նեղոս գետոյն, և անտի ընդ աղեքսանդրիոյ և ընդ համարէն եգիպտոսի և ընդ բարբարոսաց աշխարհի։ Որքա յայս կարծիս միտեցին, մի՝ զի ասէն՝ տեսանեմք 'ի զանազան տեղիս սէր գրոց, մանաւանդ 'ի մարգարէականս, ուր լատին Թարգմանն ընթեռնու Թարշիս, եօթանասունք ունին կարքեդոն, նաւահանգիստ ափրիկոյ բազմավաճառ։ Այլ երկրորդ՝ զի յափրիկէ գտանի ոսկի, արծաթ, և ժանիք փղաց, կապիկ, սիրամարգ, և ակունք պատուականք. որք էին սովորական բեռն, զոր նաւք Թարշայ բերէին սողոմոնի։ Այլ չէ ինչ ընդդէմ ասէն այն՝ զի նաւք Թարշայ ամն երիս ծախէին յելից 'ի նաւահանգստէն տիւրոսի, մինչև ցգարձ իւրեանց. որովհետև երևի թէ հեռագոյն յոյժ ուրեք երթային, և ոչ թէ լոկ 'ի մերձակայ ծովեղերեայս ափրիկոյ։ Զանազի ասեն՝ այն նաւք երթային վաճառաշահութիւն աղագաւ յերկիր օտար ՅՈՒՐՈՒԹՆՑ. ուստի ոչ երթային գատարկ, այլ բարձեալ տանէին վաճառս յարդեանց երկրի իւրեանց, և արհեստակերտս, և այլ զանազան իրս, որոց գիտէին թէ կարօտ են նոքա առ որս երթային. զայս թէպէտ չունիմք 'ի գրոց, բայց ունիմք 'ի բնութիւն տուրևառիկ շա-

հավանառութեան։ Բ. պա պարտ է ասեն տալ ժա-
մանակ 'ի վանառումն իրաց զոր տանէին, և 'ի
փոխանակումն ընդ այլ վանառս երկրին. տալ ժա-
մանակ և 'ի նորոգումն նաւուց. և սպասել յաջող
և յարմար ժամանակի նաւարկութեան։ Զեսանեմք
ասեն և առ մեօք թէ որչափ երկար մնան նաւք
կառեալք անշարժ 'ի նաւահանգիստս՝ սպասելով
գտանել բերումս, միանգամայն և դիպող ժամանակ
ելից։ Այլ այս պատճառք չեն բաւական 'ի
հաստատութեան կարծեաց նոցա։

Հարստութիւն՝ որ ամի ամի գայր սողոմոնի 'ի
նաւարկութեանց աստի, և 'ի հարկաց շրջակայ այլ-
ազգեաց, որք հարկատու էին նմա 'ի գետոյն Եփ-
բատայ, մինչև ցսահմանս եգիպտոսի, էր վեց
հարիւր վաթսուն և վեց տաղանդ ոսկւոյ։ Բ. յս
էր սովորական եկամուտ, որ գայր արտաքուստ.
թող զազգմահարուստ ընծայս յամենայն թագա-
ւորութեանց արաբացւոց, և այլոց երևելի երևելի իշ-
խանաց, առ որս հասեալ էր համբաւ իմաստութեանն
նոր, որք ցանկային տեսանել զնա, և լսել զիմաստուն
նորա. և պարծանս իմն վարկանէին անձանց առա-
քել կամ բերել նմա անձամբ ընծայս ծանրագինս՝
անօթս արծաթեղէնս և ոսկեղէնս, հանդերձս,
և ստաշին, և խունկս, և ձիս և ջորիս։

Իսկ թէ որչափ ինչ էր, որ գայր նմա յերկրէ
թագաւորութեան իւրոյ, չէ յայտ. բայց յայտնի
է զի էր բազում յոյժ յոյժ. քանզի գիտեմք 'ի
գրոյն՝ եթէ ընդ ծանրաբեռն հարկօք հեծէր ժո-
ղովուրդն։ Ա. սոն որոյ կամեցեալ գրոյն զմեծութիւն
հարստութեան սողոմոնի յայտ առնել, ասէ.* Ոչ էր
համարեալ արծաթ յաւուրս սողոմոնի, թէ իցէ
ինչ. . . . Յտ արքայ զարծաթ և զոսկի յերուսա-
ղէմ իբրև զքարինս, և զեղևնափայտ՝ իբրև զմե-
լանթզենիս 'ի դաշտի բազմութեամբ. Գ. Թագ. Ժ.
21. 27։

Բ. բար սողոմոն իւր տաճառ մեծագործ 'ի ժա-
նեաց փղաց, վեց աստիճանաւ բարձր. և 'ի վերայ
աստիճանաց վեց առիւծ աստի, և վեց անտի. և

երկու թեւք աթոռոյն երկուց կողմանց յենարանք ձեռաց նստելոյն՝ երկու առիւծք, ընդ ամենայն չորեքտասան առիւծք։ Այս ամենայն կազմած այս-ինքն աթոռն և առիւծք և աստիճանք՝ բոլանդակ էին սպատեալ թիթեղամբք մաքուր ոսկւոյ. որոյ նման ոչ երբէք երևեցաւ յամենայն թագաւորութիւն ուրուք։ Ամենայն կահ և ամենայն սպասք նորա և աւազանք էին յընտիր ոսկւոյ ոչ միայն յարքունիս երուսաղէմի, այլև 'ի տան մեծաւորք գեղջ իւրումն անտառին լիբանանու։ Ընդ արար և զնարան նորանշան վասն վեց հարիւր թիկնապահ զինուորաց, որք յելանել նորա հանդիսիւ 'ի տաճարն, կամ յայլ տեղի՝ երթային ընդ նմա։ Օ էնքն էին երեք հարիւր նիզակ ոսկի կռածոյ, և երեք հարիւր վահան ոսկի կուռ։ Որ յերբայական բրնագրի՝ երկրորդ բառն գրի ՊԷՆ, որպէս թէ Պենդ. իսկ առաջին բառն գրի ՅԷՆ, իբր ՂԷՆ՝ անուն ընդհանուր. որ և ըստ տեղւոյն անխտիր թարգմանի զէն, զրահ, վահան, նիզակ, սաղաւարտ, և այլն։

Ի թագաւորաց արաբացւոց և յայլոց իշխանաց արտաքնոց, զորոց ասէ գիրն՝ թէ ինդրէին տեսանել զսողոմոն, և լսել զիմաստութիւն նորա, որք ընծայս բազումս և մեծամեծս բերէին նմա, հնչակաւոր է տիկինն սաբայ. զոր ոմանք Ազնեդա կոչեն, այլք բազումք զկնի յոսեպոսի՝ Լիկոզա. ոմանք ևս Կանդակա. բայց ոչինչ անստոյգ քան զայս. զի ոչ ասա 'ի գիրս թագաւորաց, կամ մնացորդաց, և ոչ յաւետարանի, ուր ներն մեր յառաջ բերէ զիմաստասէր տիկինս զայս 'ի յանդիմանութիւն ազգութիւնն հրէից, յիշատակի անուն նորա։ Ոստ նմին օրինակի անստոյգ է ասել զնա թագուհի եթովպիոյ, այն է՝ հապէշի կամ խաբէշկաց, որպէս համարեցան ոմանք. զորոց ասէ կալմէթ, * Հոմանք նուռնդ եթովպիոյ զբազումս յարդի մեկնչաց վրիպեցոյց. որոց ընթերցեալ վասն սորա լինել թագուհի եթովպիոյ, իմացան զենիկ եթովպիայն. ուր իմանալ պարտ էր զեթովպիայն, որ է յարաբիա, 'ի

կողմն հարաւային ծովեզերեայց կարմիր ծովուն։ Յիտեմք զի հապէշք զնդէն զաւանդութեն իւրեանց սաստկութեաբ. որ թերեւս տանելի լինէր, եթէ չյօգնէին և աղտեղի առասպելս զմեծահամբաւ տիկնոջէն, առ 'ի զծագումն իւրեանց ինքնակալաց առնուլ 'ի սողոմոնէ միջնորդութեամբ սորա, զոր իւրեանց թագուհի համարին. առասպել՝ ասէ կալմէթ, արդարև արժանի հապէշեան տգիտութեան և անամօթ մտապարծութեան։

Հասարակաց կարծիք մեկնչաց զթագաւորութեն տիկնոջս դնէ յարաբիա. որոյ մասն մի կոչեր սաբա և եթովպիա։ Յախ՝ զի քո կոչէ զնա դշխոյ հարաւոյ. Մատթ. ԺԲ. 42. արդ յայտ է թէ արաբիա ձգի 'ի հարաւակողմն հրէաստանի. և յաւելու թէ եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն սողոմոնի. զոր իմանալ պարտ է յաղագս երջանիկ արաբիոյ, որ ձգի ցավկիմանոս կամ ցծովն հնդկաց. զի անտի և անդր չերևի այլևս ցամաք։ Յրկրորդ՝ զի պարդևք զոր տիկինս այս եբեր սողոմոնի, զոր օրինակ ոսկի, կնդրուկ և զանազան ազգք խնկոց, և ակունք պատուականք, են սովորական բերք արաբիոյ։ Տես զայսցանէ և յաշխարհագրութեն մերում 'ի Ք. մասին ափրիկոյ։

Զդ տիկինս այս լուեալ զհամբաւ իմաստութեն և մեծամեծ և աքանչելի գործոց սողոմոնի՝ որ պատմէին ընդ ամենայն տեղիս. և ոչ կարելով հաւատալ, զի առաւել քան զկար մարդոյ թուէին պատմելքն, կամք եղեն նմա աչք տեսանել, և անձամբ ստուգել զամենայն։ Զան որոյ ելեալ յերկրէ իւրմէ զօրու ծանու, և բազմութեբ ծառայից և ուղտուց, որք բարձեալ բերէին զանձ բազում 'ի պարգև, եկն Երուսաղեմ նովին արքայական մեծապատրաստ շքեղ հանդերձանօք։ Զնկալաւ զնա սողոմոն մեծաւ պատուասիրութեբ, որպէս վայել էր իւրում մեծութեբ, և տիկնոջն արժանաւորութեբ։ Զոչ ասա 'ի լինել պատեհութեբ, եմուտ առ սողոմոն՝ խօսել ընդ նմա, և փորձել զիմաստութեբն նորա. արկ նմա առաջի զանազան ա-

ուսկս խորհինս, և խնդիրս դժուարինս, զոր յառաջագոյն ունէր պատրաստեալ 'ի մտի ոչ միայն զընաւկան իրաց, այլև որպէս համարին բազումք՝ զիրաց ՀՆմարիտ կրօնի և զխորհրդոց հաւատոյ և զպաշտամանց։ Այլ սողոմոն ելոյծ և մեկնեաց զամենայն առակս և զամենայն խնդիրս նորա. և որչափ նա յաճախէր զհարցուածս, այնչափ և սողոմոն արագարագ առնէր պատասխանի անվթար ամենայնի զոր ցանկայր ուսանել. նա՝ առաւել քան զայն, մինչ դրեթէ զծածկեալսն 'ի սրտի յայտնել նմա. և ոչ վրիպեաց բան մի, զոր ոչ պատմեաց. մինչև զարմանալ տիկնոջն։ Այլ յաւելաւ զարմանք նորա, յորժամ ետես զմեծագործ հրաշակառոյց տաճարն, զշքեղութիւն և զբազմազանձ հարստութիւն նորա, և զբանչելարուեստս գործածս որ 'ի նմա։ Այլ ևս զարքունի ապարանս սողոմոնի, և զտուն պարտիզին լիբանանու, ուր մայր փայտ, և ոսկի, և փղոսկր և անթիւ ՀՈՒՏութիւն փայլէին յամենայնի, յոր կողմն և դարձուցանէր զաչս։ Այսպիսի իրք, զարօրինակ մեծագործ հոյակապ շինուածք, և զարդք, և փարթամութիւք էն լոկ 'ի զարմանս, և 'ի խստղանս աչաց. իսկ որ առաւել կարևոր էն, որոց և կարծեմ առաւելապէս ուշ եդեալ տիկնոջն, էին արքայական սեղանն սողոմոնի, աթոռ իշխանաց նորա 'ի սեղանի, կարգ և աստիճան պաշտօնեից նորա. զգեստ և զորձ իւրաքանչիւր նոցա. միանգամայն և խմաստուն կարգաւորութիւն տնտեսական կառավարութեան. այս ընթերցուածք էն խմաստութեան, յորմէ լինի ուսանել քաջ կառավարութեան հարկաւոր ամենայն թագաւորաց։

Օ այս ամենայն տեսեալ խոհական տիկնոջն՝ ասէր ցաւ 'ի միտս իւր. խոստովան եղև, թէ բազմապատիկ առաւել ետես՝ քան զոր ակնունէր տեսանել. և թէպէտ բազում և մեծամեծք էին 'ի լոյս պատմեալքն զնմանէ, սակայն և այնպէս 'ի կէս չէին ասէ այնց՝ զոր աչօք տեսի։ Այլ յառաւելութիւն հանուութեան սրտին օրհնեաց զնծն ժողովրդեան իսրայէլի, որ այնպիսի խմաստուն թագաւոր

կացոյց նոցա վասն սիրելոյ զնոսա, առնել իրաւունս և արդարութիւն յատեանս նոցա։ Զատ սողոմոնի հարիւր և քսան տաղանդ ոսկւոյ. և խունկս բազումս յոյժ, ընտիրս և գերազանցս, որպիսի խունկք բազումք և անուշունք ոչ էին եկեալ յԵրուսաղէմ, այլև ականս պատուականս։ Զոյնպէս և սողոմոն 'ի փոխարէն ետ տիկնոջն սաբայ զամենայն զոր ինչ կամեցաւ և զոր խնդրեաց. ընդ որս որպէս կարծի 'ի բազմաց՝ ետ նմա և զմեծագոյնն և զկարևորագոյնն քան զամենայն ինչ, այն է ըզծանօթութիւն Աշմարտին ՅԻ իսրայէլի։ Զոր դարձաւ տիկինն և ամենայն ծառայք նորա ընդ նմա յերկիր իւր, թէ ոչ կատարեալ հաւատացեալ, բայց ստուգապէս գէթ ՅԱԾԱԾանօթ։ Զհա այսպէս ամենասպարգև ՅԱՐն հաւատարիմ 'ի խոստմունս՝ պահեաց զբան իւր առ սողոմոն. ելից 'ի ծոց նորա այսչափ գանձ, 'ի վարձ վասն ոչ խնդրելոյ նորա զհարստութիւն, և արար զնա իշխան՝ առանց զինաշարժութեան, 'ի գետոյն Եփրատայ մինչև 'ի սահմանս Եգիպտոսի. փոխանակ զի ոչ խնդրեաց զյաղթութիւն թշնամեաց, այլ միայն զիմաստութիւն. և թէպէտ խոստացաւ նմա ՅԱԾ և զաւուրս կենաց նորա բազմացուցանել, զոր ոչ խնդրեաց նա. բայց որպէս ասացաք, այդ էր հանդերձ պայմանաւ, եթէ զհրամանս և զպատուիրանս նորա պահեսցէ. այլ սողոմոն յայսմ անհաւատարիմ գտաւ, վասն այնորիկ և խոստումն ՅԻ ոչ կատարեցաւ 'ի նմա։

ԳԼ. Լ.

Մեղմ սողոմոնի. և վիշտ որ չեղոյ հասին նմա։

Լսեմ մարթ էր զպատմութիւն կենաց սողոմունի կնքել այնու, որ ինչ ցայս վայր պատմեցաւ զնմանել, և ոչ անցանել յառաջ, սողոմոն լինէր դերասանած քան զամենայն ինքնակալս, որք 'ի հին և 'ի նոր պատմութիւս յիշատակին։ Լ.յլ հաւատարմութիւն պատմութեան ստիպէ փոխել այսուհետև զոհ բանին. քանզի և ինքն փոխեաց զշնայս իւր, խոտորեալ յուղիղ և յարահետ ճանապարհէ նոն 'ի թիւրն և 'ի մոլարն։ Ցն ասեմ, որ անդստին յարգանտէ մերն մայրօրինակ գորովանօք խնամ կալաւ նմա, զգուեալ և փայփայեալ իբրև զորդի սիրելի՝ մեծացոյց զնա իմաստութիւ, և համբերին ճոխութիւ հոգեկանօք և մարմնականօք, քան զամենայն իմաստունս և զնոխս երկրի. արար զնա ահաւոր և պատկառելի թագաւորաց. աքանչելի ամենայն ազգաց, յաղթող խաղաղական առանց զինուց, և իշխան իշխանաց. բայց նա յայսր ամենայնի վերայ ապաշնորհ դատաւ առ բարերարն իւր, և այն 'ի ծերութիւն։

Լղեն ոմանք աւելանդիրք՝ որք առաւել քան զարժանն խատութիւ խօսեցան զնմանէ. մինչև 'ի մեզս գրել նմա ծանուցեալ զդրօշուածս եղանց, զոր եդ 'ի ներքոյ պղնձաձոյլ մեծի աւազանին. և զաւրիւծս ոսկիս իւրաքանչիւր աթոռոյ. որպէս թէ ընդդէմ պատուիրանի նոն գործեալ, որ արգելու սատիկ զամենայն դրօշեալս։ Լ.յլ տարաբայման է նոցայն խղճմտութի. քանզի այն պատուէր ոչ 'ի հին օրէնս՝ էր զայնպիսի դրօշելոց, որք կերպարանօք, և դրիւք տեղւոյն ուր կանգնեին զնոսա, լինէին 'ի վտանգ կռապաշտութեան։ Լսակ եղինք և առիւծք ոչ ըստ կերպարանաց, և ոչ

բստ դրից կարէին լինել ու�եք 'ի վտանգ. զի լոկ 'ի տեսանել զնոսա պատուանդան աւազանին, և արքայական աթոռոյ, առ ժամայն ունէին 'ի միտ առնուլ, թէ չեն նոքա կուռք կանգնեալ 'ի պաշտօն, այլ միայն 'ի վայելչութիւն և 'ի զարդ։ Օ՛ի՞նչ ունին ասել սոքա յաղագս ոսկի քրովբէից, զոր ՝ուծ ինքնին ասաց ցմովսէս առնել, և ուստոյց և ս թէ ո՛րպէս գնիցէ զնոսա 'ի վերայ տապանակին. Ելից. Է. 20. Թո՛ղ զքերոբս, և զայլ զանազան գրուագս՝ զոր եռ սողոմոն գրուագել և քանդակել յոսկիասպատ որմունս սրբութիւն սրբութեանց. յայտ է թէ վասն զի էին 'ի զարդ և 'ի մեծարանս տապանակի ՝ան, և տեղւոյն սքզ. միանգամայն և խորհրդաւորք, 'ի յայտնութիւն փառաց բարձրելոյն, որ նստի 'ի քրովբէս։

Լ.ՅԼՔ մեղմագոյն և անաչառ խօսելով զսողոմոնէ, յառիթս մեղայ համարին նմա զբազմութիւն երիվարաց՝ զոր պահէր հանապազ վաթսուն և երկու հազար, որպէս ասացաք յառաջագոյն. և զանչափ և զանկշիռ յաճախութիւն ոսկւոյ և արծաթոյ, և առաւել զբազմութիւն կանանց. ընդդէմ յայտնի հրամանի ՝ան, որ 'ի տալ օրէնս վասն հանդերձեալ թագաւորաց ժողովրդեան իւրոյ, ասէ. * Ա՝ի յաճախեսցէ իւր երիվարս. և մի դարձուսցէ զժողովուրդն յեգիպտոս.... և մի յաճախեսցէ իւր կանայս, զի մի խոտորեսցի սիրտ նորա. և արծաթ և ոսկի մի կարի յաճախեսցէ իւր։ Բ. օրէն. ԺԷ. 16։ Յաղագս երիվարաց յայտնի է 'ի բնագրէն, թէ յոյր սակս արգելու ՝ուծ չյաճախել. զի մի վստահացեալ 'ի բազմութիւն հեծելազօրուն՝ ելցէ առնուլ զեգիպտոս, և զժողովուրդն անդ դարձուսցէ. զի յառաջագոյն պատուիրեալ էր նոցա՝ մի և ս դառնալ ընդ նոյն ճանապարհ։ Ա՝ռանձի կամէր ՝ուծ չլինել եբրայեցւոց ասպաշնորհ երախտեացն՝ զոր ընկալան յեգիպտացւոց 'ի սկիզբն պանդխտութեան իւրեանց առ նոսա։ Լ՝ու և ս արգելու զբազմութիւն երիվարաց, զի մի զոյսն զոր պարտ էր դնել յ՝ուծ, գնիցեն 'ի բազմութիւն հեծելոց։ Ա՝ակայն զմնառ

ածեալ զընդարձակութիւն տերութեան սողոմոնի, զազգութիւն արանց՝ որք հանապազ էին յարքունիս ցերեսուն և վեց հազար, և զանբաւ գործողացն ներքինս և արտաքինս, թիւ երիսարաց նորա չելեալ աւելորդ առ այնչափ պէտս տերութեան։

Օնոյն է ասել և վասն յաճախութեան ոսկւոյ և արծաթոյ՝ զոր ՝ուծ ետ նմա. և կամէր՝ զի ծանիցէ զայն պարգև առ ՝ի նմանէ ընկալեալ։ Ել արգել ՝ուծ թագաւորաց հաւաքել արծաթ և ոսկի, և հանել և սիրել զայն ՝ի պէտս հասարակաց, և ՝ի շուք վայելչական իւրեանց արքայական փառաց։ Ա.յլ կամեցաւ սանձ դնել ընչաքաղց ագահութեան թագաւորաց, չկերդեալ զժողովուրդն առ ՝ի յաճախել իւրեանց գանձս, և չպահել զայն թաղեալ անգործ. այլ որպէս գիտէն ժողովել, գիտասցեն և ՝ի գործ արկանել. զի յայնժամ ձեռաց ՝ի ձեռս անցանելով դրամոց՝ ծանրութեամբ հարկաց թեթևանայ յայլս ժողովրդեան. տեսեալ՝ զի զոր տան ՝ի վճարումն հարկաց, դառնայ անդրէն ՝ի ձեռս իւրեանց։ Ա.րդարև սողոմոն ոչ թաղեաց և ոչ եթող անգործ զՈՒծապարգև հարստութիւն իւր. զի թէ յաճախեր ժողովել առատութիւն, յաճախեր և ծախել նոյնչափ առատութիւն. որով ոչ միայն իւր ժողովուրդ, այլև օտարքն բաժանորդ լինէին նորին հարստութեան։ Ա.յսմն իրի ոչ գտանեմք ՝ի գիրս ստգտանել զսողոմոն իբրև մեղուցեալ ՝ի յաճախել երիսարս, և արծաթ և ոսկի։

Ա.յլ մեղաւ նա և մեծապէս մեղաւ, զի զսէրն ՝ույ զոր ՝ի մանկութիւն անշէջ պահեաց ՝ի սրտի, ՝ի ծերութիւն իւրում դարձոյց ՝ի կանայս. և եղև մի յայնցանէ, զորոց խօսի առաքեալն ՝ի գաղ. գ. 3. որք հոգւով սկսեալ՝ մարմնով վախճանին։ Ակիզեն մեղաց նորա եղև բազմացուցանել իւր կանայս. և այն՝ յազգաց օտարոտւոց, ընդ որս ոչ մի կամ երկու, այլ բազում անգամ պատուիրեաց ՝ուծ որդւոց իսրայէլի չառնել բնաւ խնամութիւն, զի մի խոտորեցուցանիցեն զսիրտս նոցա զէնի կռոց իւրեանց։ Ապայն սողոմոն ՝ի նոսա յարեցաւ սիրել,

և մա՛ռ իւր կանայս մովաբացիս, ամմնացիս, եդոմացիս, ասորիս, քեռացիս, ամովրհացիս, և յայլոց այլազգեաց՝ ցհաղար. յորոց եօթն հարիւր տիկնայք էին. և երեք հարիւր հարէմ, կամ երկրորդական կանայք։ Դուցէ վստահացաւ յիմաստութեի իւր, և 'ի կատարելութեի հասակին, յորում ախտ տռփական սիրոյ շիջանի, կամ գէթ թուլանայ, ոչ երբէք ըմբռնիլ 'ի թակարդ նոցա. հեռաւոր վտանգ համարելով անձին, զոր ոչ ե՛ցոյց լինել մերձաւոր, և հաւատի վտանգ կործանման. զորոյ աւաղելի փորձ մա՛ռ ինքնին սողոմոն։ Օ՛ի կանայք տիրելով սրտի նորա՝ տիրեցին և հոգւոյն. և փաղաքուշ կանացի հրապուրանօք իւր տռամբ կապեալ զիմաստունն զայն և զքաջն էլինն աշխարհի, խոտորեցուցին 'ի ճանէ՝ այ իւրմէ, և ձգեցին զհետ կոյր և յիմար ամպարշտութեի իւրեանց։ Դատուն նմա նովին ձեռամբ, որով կանգնեաց սեղան և տաճար փառաց բարձրելոյն, շինել սեղան քամնվսայ կռոցն մովաբու 'ի լերինն ձիթենեաց հանդէպ երուսաղէմի. և մեղքոմայ կռոց ամմնացւոց. և աստարտայ գարշելոյ սիդոնացւոց. և այնպէս արար ամենայն կանանց։ Դրա պաշտելին անցնիւր զիւր ՀԱԾ. իսկ սողոմոն խուսկս արկանէր ամենեցուն. ոչ իբր համարելով ՀԱԾԵՂԷՆ ԻՄ լինել 'ի նոսա, զի չէ հաւանելի թէ յայն վիճ յիմարութեի իցէ խորասուզեալ. այլ պաշտէր առ երեսս լոկ արտաքին գործով, 'ի հաձել զկամս կանանց և հարձից իւրոց, որք գերեալ ունէին զնա։

Բ. ՍԼ թէ օրչափ ժամանակ եկաց մնաց սողոմոն յայն աշխարհելի կուրութեի ամպարշտութեան, չէ յայտ. սակայն երևի թէ ոչ կարի երկար։ Դանզի ՀԱԾ թէպէտ բարկացաւ նմա յոյժ վասն մեծի ապերախտութեի նորա, սակայն և այնպէս ըստ իւրումն անսահման մարդասիրութեի, 'ի բարկութեի յիշելով և զողորմութեի, և կամեցեալ կոչել զնա յապաշխարութեի, խօսեցաւ առ նա 'ի ձեռն աբիայ սիլոնացւոյ, կամ այլոյ մարգարէի. թերևս և 'ի ձեռն հրեշտակի, և ասէ. փոխանակ զի ոչ պահե-

ցեր զՀրամանս իմ և զպատուիրանս՝ զոր պատուիրեցի քեզ, և խորտակեցեր զդաշն՝ զոր եդի ընդ քեզ, և անպատուեցեր զանուն իմ, և զայթակղեցուցեր զժողովուրդ իմ, և ես պատառեցից զԹագաւորութիւդ 'ի ձեռանէ քումմէ. և տաց զդա ծառայի քում։ Բայց ամենայնիւ թողութիւն քո արժան էր իսկ և իսկ առնել զայս, այլ վասն դաւթի հօր քոյ յապաղեցից ցօր մահուն քո, և 'ի ձեռանէ որդւոյ քոյ առից զդա։ Սակայն զամենայն թագաւորութիւդ ոչ առից 'ի շնորհս դաւթի ծառայի իմոյ. և զի ընտրեցի զերուսաղէմ աթոռ փառաց իմոց, և կամիմ զի կացցէ նա և ես ընդ տէրութիւն այլոց յաջորդաց, վասն այնորիկ գաւազան մի տաց որդւոյ քում։ Բայց զի մի պատիժ հօրն բռնանդակ 'ի վերայ որդւոյն անկցի, կամք եղէն ոչ և զՀայրն խոշտանկել 'ի վերջին ժամանակս կենաց նորա. տալով նմա պատճառս խոնարհութեան և համբերութեան, զի ծանիցեն և գիտասցեն ամենեքին՝ եթէ զոչ միայնոյ կախեալ կայ և ժամանակեան երջանկութիւն մարդկան։

Յարոյց ոչ ընդդէմ սողոմոնի երիս խռովարարս. զադեր, զռազոն, և զերոբովամ. որք թէպէտ առ նորին կենդանութիւն մեծ ինչ չար ոչ արարին, վասն այնորիկ և նոր գիրն համառօտիւ անցանէ՝ հազիւ նեամ իմն ծանօթութիւն տալով զիրացս. բայց հայելով յանձն սողոմոնի, որ էր սովորեալ տեսանել զիւրմէ ակնարկութիւն կախեալ զամենայն թագաւորութիւնս շուրջանակի, վիշտ մեծ հասուցին՝ լոկ գլուխ ամբառնալով, և 'ի վտանդ ապստամբութիւն արկանելով զամենայն երկիր իւր։ Բդ ժամ է ասել փոքր 'ի շատէ, թէ ո՞ էր ադեր։

Սա էր որդի կամ թոռն թագաւորին եդովմայեցւոց, որ կորեաւ 'ի կոտորել դաւթի 'ի ձեռն աբեսսայ զօրավարի իւրոյ ուրեմն հազար արանց յեդովմայեցւոց անտի. Ա. Հայ. ԺԲ. 12։ Բայց այնպէս նուաճեալ դաւթի զեդովմ, և իւր հարկատու արարեալ զնա, չինեաց անդ 'ի հովմին ամրոց. և կացոյց 'ի նմա պահակասպանս պահել զժո-

զովուրդն 'ի հպատակութիւն։ Լ.յսպիսի պահակք զառաջինն բազում արթնութիւն և զգուշութեամբ գնան, այլ ապա տեսեալ զժողովուրդն ընկնեալ՝ առ սակաւ սակաւ ստանան վստահութիւն ինն և յանձնապաստանութի վտանգաւոր. և կան յանհոգս, ոչինչ միտ դնելով պահպանութիւն. որ ըստ զինուորական օրինաց՝ միշտ հարկաւոր է, թէպէտ և չկայցէ ուստեք կասկած երկիւղի։ Լ.պաքէն ժողովուրդ բռնութիւն նուաճեալ յօտար թագաւորէ, եթէ ցուցանէ հպատակութի, է լոկ առ երեսս. այլ 'ի սրտի միշտ պահէ զթշնամութի. կայ հանդարտ, ցորչափ ոչ լինի յառաջամատոյց դիպող ժամանակ գլուխ ամբառնալոյ. այլ եթէ գտցէ առիթ աներկեւան ապստամբութի, յայնժամ յեղակարծումն առնու 'ի ձեռս զզէնն թշնամութի։ Լ.յսպէս արարին եդովմայեցիք ընդ պահապանս դաւթի. զի գտեալ դէպ ժամանակ՝ զամենեսին ի սուր հանին, և զդիակունս նոցա ընկեցին անթաղ։ Օ.այն լուեալ դաւթի, ածապարեաց մինչև իցէն զօրացեալ օգնականութիւն այլոց՝ առաքել զյովաբ զօրու ծանու՝ թաղել զմեռեալսն, և 'ի սայր սուսերի կոտորել զամենայն արու եդովմայեցւոց։ Լ.ստաւ անդ յովաբ ամիսս վեց, և կատարեաց 'ի գլուխ զպատուէր ճն իւրոյ արքայի՝ յանխնայ կոտորելով զամենեսին, որք ըստ ժամանակին ոչ ապրեցուցին զանձինս փախստեամբ։ Լ.դեր էր յայնժամ մանուկ փոքր. որ փախեաւ ընդ ծառայս թագաւորի հօր իւրոյ. որոց անցեալ ընդ երկիրն մագիամու՝ եկին 'ի փարան, և առեալ անտի արս՝ որք թերևս էին յեդովմայեցւոց փախստականաց 'ի կողմանս յայնոսիկ, եկին յեգիպտոս առ փարաւոն արքայ եգիպտացւոց։ Լսակ թագաւորն շարժեալ 'ի քնաքոյս գթոյ առ մանուկ թագաւորաղն գաղթականն 'ի հայրենի երկրէ, և դիմեալ առ ոտս իւր, ընկալաւ զնա քաղցրութիւն ընդ իւրով ինամակութիւն. ետ նմա ապարանս 'ի թագաւորական քաղաքի իւրում, և կարգեաց նմա սեղան վայելուչ. և զի մի լցցի արքայորդւոյն դիմել առ արքայ,

կամ առ ոք 'ի պաշտօնատարաց խնդրել նպաստ 'ի պէտս հարկաւորութեաց որք օր ըստ օրէ 'ի վերբ է բևին, եւ նմա գետին ընդարձակ յեկամուտ։

Զդեր մանուկ աժխոյժ, արթուն և յաջողակ՝ իւրով հանձարեղ գնացիւք այնպէս յինքն գրաւեաց բովանդակ զսիրտ փարաւոնի, մինչ զի 'ի հասանել նորա յարբունս՝ եւ նմա փարաւոն կին զերեց քոյր Թեկեմինայ կնոջ իւրոյ. յորմէ ստացաւ ադեր որդի. և կոչեաց նմա անուն գանեքաւթ. զոր մնոյց Թեկեմինա դշխոյն մերաքոյր մանկանն ընդ որդիս փարաւոնի իբրև հարազատ եղբայր նոցին՝ յարքունիս անդր Թագաւորին։ Լուսոյ չունէր ադեր խիք ցանկալ յեդիպտոս. բայց որ ծնեալն է 'ի Թագաւորութեի, չառնու ձաշակ քաղցրութեան 'ի սոսկական կենաց։ Զմենայն փափկութիւնք եգիպտոսի, ամենայն փայփայմունք և սէր փարաւոնի չէին ինչ յաչս ադերայ, երբ տեսանէր զերկիր Թագաւորութեան իւրոյ 'ի ձեռս օտարի։ Զայն որոյ իբրև լուաւ՝ եԹէ դաւիԹ, որ նուաճեաց զերկիր իւր հայրենի, ենջեաց ընդ հարս իւր, և յուլաբ սպարապետ նորա՝ յորոյ զենուց զերծեալ էր ինքն փախստականաբար՝ մեռաւ, խնդրեաց 'ի փարաւոնէ արձակել զնա դառնալ յերկիր իւր։ Փարաւոն զի սիրէր զնա, զառաջինն ոչ կամէր արձակել. զի՞նչ պակաս է քեզ ասէր, զի խնդրես երԹալ. այլ 'ի պնդել նորա՝ հուսկ ուրեմն զնջաւ։ Լսէ դարձաւ ադեր յերկիր եգովմայ. և Թագաւորեաց անդ, որպէս կարծի՝ 'ի ձեռն փարաւոնի արքայի, որ եղև միջնորդ հաշտութեան ընդ ադեր և ընդ սողոմոն փեսայն իւր՝ Թագաւորել ադերայ յեդովմ, բայց հարկատու սողոմոնի։ Զնդ հարուստ մի ժամանակ եկաց ադեր խաղաղութիւն ընդ իսրայելի, անվրէպ ըստ ժամանակին վճարելով զհարկս, և յամենայնի հպատակ կալով սողոմոնի. բայց առ երեսս և էԹ, զի 'ի սրտի անհաշտ թշնամութիւն էր ընդ նմա. և մնայր գիպողութեան երևեցուցանելոյ զթշնամութեան իւր։

Զպա իբրև կռապաշտել սկսաւ սողոմոն, յայտ է ԹԷ կորոյս զյաջդ անձին, և անկաւ յաչաց ժողովր-

դեան. և զօրք նորա յերեսուն և վեց ամաց հեռեալ խաղաղուն ցայս վայր անցելոց ընարմացեալ և թուլացեալ կային. թող զի յոլովք 'ի քաջ և 'ի փորձ զօրավարաց՝ որք առ ժամանակաւ դաւթի 'ի քաղաքամ պատերազմունս մտին, մեռեալ էին. և ինքն սողոմոն թափեալ յուժոյ՝ ոչ այնչափ առ ծերութեն հասակին, քանզի հաղիւ յիսունեւութամեան էր, քան թէ 'ի ծախելոյ և 'ի սպառելոյ ոգւոցն յայնչափ մեղկութէ իգութեն, երևէր խորշիլ 'ի պատերազմէ։ Յայնժամ ադերայ դիպողութիւն գաւեալ՝ եղև առաջին 'ի թօթափել զլուծ սողոմոնի, ոչ ևս հարկանելով նմա հարկս. յոր յաւել միւս ևս չարութեն. զի առ զօրացուցանելոյ զապստամբութեն իւր, 'ի նոյն գրգռեաց և դաւազն զորդի եղիդայ. և այնպէս մինչ ինքն 'ի հարաւակողմն վտարանչէր 'ի սողոմոնէ, դաւազն աշխատութեն հասուցանէր նմա 'ի հիւսիսոյ։

Այսն այս դաւազն էր ասորի 'ի սուբայ՝ ծառայ ադրաազարայ արքայի սուբայ։ Լու եղև 'ի հարկանել դաւթի զադրաազար, և 'ի խորտակել զբանակ նորա, որպէս պատմի Բ. Թագ. Ը. 3. դաւազն ապրեալ 'ի կոտորածէ անտի՝ փախեաւ 'ի մոնէ իւրմէ. և եղեալ գլուխ ազանց սրիկայից և փախստականաց 'ի տեարց իւրեանց, զառաջինն եւ զանձն յասպատակութեն. և օր ըստ օրէ բազմուքք սիկաբեանց զօրացեալ, գնաց նոքօք և նստաւ 'ի դամասկոս. և թագաւորեաց անդ, լեալ հարկատու դաւթի։ Զի երևի թէ չեղև ինչ փոյթ դաւթի թագաւորել նորա 'ի դամասկոս, շատ համարելով ունել զնա իւր հարկատու, և առ ապահովութիւն իւր կարգել անդ ստուար գունդ պահակաց յիսրայէլացւոց. որ և դաւազնի չէր ինչ ընդդէմ. զի առ ժամն և ինքն լինէր աներկեան ոչ միայն 'ի դաւթէ, որ դողացոյց զասորիս, այլև 'ի թագաւորաց շուրջանակի. զի թէ իշխէր որք յառնել ընդդէմ նորա, դաւիթ պաշտպանէր նմա։ Լու այնպէս՝ եղև հաւատարիմ հարկատու դաւթի, և յետ նորա սողոմոնի ընդ բազում՝ ամն, մինչև

ցապստամբիլ նորա 'ի տեառնէ։ Յայնժամ ապա և ասացին, թէպէտ ծեր ուրեմնամեայ՝ դուցէ և առաւել, զզրուեալ յազերայ՝ 'ի բաց ընկէց զլուծ սողոմոնի, և ոչ ևս տայր նմա հարկս, և միշտ հաւկառակ եկաց իսրայէլի զամենայն աւուրս սողոմոնի։ * Լսէ՝ ասէ գիրն, յարուսի ադեբայ, և ծանրացաւսումն եղև իսրայէլի։ Գ. Թագ. ԺԲ. 25։

Յայս երկուս ապստամբութիս արտաքինս, յաւելաւ և երրորդն յարագոյն, այս է ներքին, 'ի ձեռն յերոբովամայ՝ որ էր 'ի սարիրայ քաղաքէ որդի նաբատայ 'ի ցեղէն եփրեմի. անուն մօր նորա սարուա կին այրի։ Այս դեռևս պատանի եմուտ յարքունիս 'ի ծառայութիւն. զոր տեսեալ սողոմոնի՝ զի էր այր գործոյ, սթափ, ձարտարամիտ, ժիր և յաջողաձեռն, կացոյց զնա վերակացու 'ի վերայ գործաւորաց, որք շինէին զաբարձրաւանդակն մելոմայ. այսինքն ընուին զիրաման կամ զձորն մեծ, որ անջըրպետէր զսիոն քաղաք դաւթի յերուսաղեմ քաղաքէ. միանգամայն արար զնա և հարկապահանջ 'ի վերայ տանն յովսեփայ, այսինքն եփրեմի և մանասէի։ Զայս հարկ թուի թէ արկ սողոմոն 'ի պէտս ծախուց այնր ձորոյ։ Որդիք եփրեմի հեստք և անհամբոյրք՝ էին դառնացեալ յոյժ ընդդէմ արքայի սակս ծանրակիր հարկաց, և դժնդակ գործոյն՝ զոր ակամայ և բռնի գործէին. բայց այլ ինչ չէին ձեռնհաս առնել, եթէ ոչ լոկ տրանջել չաբաչար։ Ամենք այսմ դառնութիւն եփրեմանց զայլ պատճառ տան. զի ասեն թէ 'ի ընուլ սողոմոնի զձորն զայն, իբրև եղև վայր հարթայատակ, եւ շինել անդ տունս բազումս 'ի բնակութիւն. մինչև լինել տեղւոյն իբրև երկրորդ քաղաք հաւասար գրեթէ սիոնի քաղաքի դաւթի, ուստի և կոչիլ բարձրաւանդակ։ Ընդ շինեաց սողոմոն և զտունս դստեր փարաւոնի կնոջ իւրոյ. որպէս երևի գիրն ակնարկել. Գ. Թագ. Թ. 24։ Յաւ ապա հանեալ զբնակիչս այլոյ մելոմայ կամ մելոն քաղաքի, որ առ մեզ գրի մնաղոն. դպ. Թ. 20. քաղաք որդւոց եփրեմի, մերձ 'ի սիկիմ, բնակեցոյց 'ի նոր քաղա-

քի անդ իւրում. որ կոչեցաւ այնուհետև մեղմն յանուն առաջնոյն։ Եւ դարձեալ ասէ նոցա հաստատեալ տուն եփրեմի. զի մեծ եղև նոցա այնչափ ժողովուրդ միանգամայն կորուսանել։ Օ խարդ և իցե, որպէս տեսանէր զայս ամենայն յերոքոմամ դժկամակ սրտիւ, նոյնպէս և լսէր զբրթինջիւն իւրոց եփրեմեանց. այլ կամ առ ոչինչ գրէր, և կամ լռէր՝ դիպող ժամանակի միալով. և ինքն գէթ առ երեսս խնամով յառաջ վարէր զգործն, մինչև կատարեցաւ։

Այս 'ի վերջին ժամանակս կենաց սողոմոնի, յորժամ զկնի մեղայ իւրոց ոչ ևս էր նա յաչս ժողովրդեան իւրոյ առաջինն ահարկու և պատկառելի ինքնակալ՝ որոյ առաջի դողային, յերոքոմամ յաւուր միում ելեալ գնայր արտաքոյ երուսաղէմ քաղաքի սթափութեամբ կամ գործոյ ինչ աղագաւ. և ահա պատահեաց նմա աքիա սիլոնացի մարգարէ, և մեկուսացուցեալ զնա 'ի ճանապարհէ 'ի դաշտ անդր, զի մի ոք տեսցէ զոր ինչ ունէր առնել, կամ լսիցէ զոր ունէր խօսիլ. և բուռն հաբեալ զնոր վերարկուէն՝ զոր զգեցեալն էր, պատառեաց զնա յերկոտասան կապերտս, և տուեալ 'ի ձեռս յերոքոմամայ զտասն կապերտս՝ ասէ ցնա։ Այսպէս պատառեսցէ Տէր ածէ իսրայէլի զթագաւորութիւն սողոմոնի 'ի ձեռաց նորա յերկոտասան դաւազանս. զտասն քեզ տացէ, և զերկուս թողուցու նմա և որդւոյ նորա 'ի հնարս դաւթի հաւատարիմ ծառայի իւրոյ, վասն մեղայ Հրագի նորա զամենայն աւուրս առաջի այ յերուսաղէմ, զոր ընտրեաց զնեալ զանուն իւր անդ։ Եւ զայս արասցէ սողոմոնի, փոխանակ զի եթող նա զՏէր ածէ իւր, և երկիրս եպագ կուց զարշելեաց. և ոչ գնաց 'ի Հնարապարհս Տեառն իւրոյ։ Եւ ապա դարձուցեալ զքանն իւր առ յերոքոմամ՝ ասէ. և դու եթէ լինիցես հաւատարիմ առ Տէր ածէ քո՝ պահել զպատուիրանս նորա, և առնել ուղղութիւնս առաջի նորա, որպէս արար դաւիթ, լիցի քեզ օգնական, և զօրացուսցէ զքեզ 'ի թագաւորութիւն քում։

Օ այս մարգարէութիւն առեալ յերոբովամայ՝ արծարծեցաւ յոգի իւր. և զոր արգէն երկներ 'ի սրտի, ոչ ժուժեաց յերկարել՝ մնալով ժամանակին նշանակելոյ 'ի մարգարէէն, այլ իսկ և իսկ զհետ եղև բանալ իւր ձանապարհ 'ի թագաւորութիւն. սկսաւ ծածուկ և յայտնի հրապուրել և գրգռել զժողովուրդն յապստամբութիւն. և որպէս թուի՝ առաւելապէս զտունն Եփրեմի, որ միշտ պատրաստ էր 'ի խռովութիւն, յիշեցուցանելով նոցա զհին արտունջն. և այնչափ արար, մինչև հասին իրքն յականջս սողոմոնի։ Ա՝ ասն այնորիկ խնդրեր սողոմոն ունել զնա և սպանանել առ կարձելոյ զվերաբերեալ ապստամբութենն. այլ նա ըստ ժամանակին իրաղդաց լեալ վտանգին, ապրեցոյց զանձն փախուցեալ յեգիպտոս առ սաւսակիմ արքայ եգիպտացւոց. որ և ընկալաւ զնա, զի չէր ուղիղ սիրտ նորա առ սողոմոն։ Յայսպիսի տառապանս կնքեաց սողոմոն զխաղաղական թագաւորութիւն և զկեանս իւր. սրբութիւնք սկսեալ, երջանիկ յաջողութիւնք յաճաջացուցեալ, 'ի ծերութիւն սեղանակապուտ պղծութիւն աղտեղեալ. բայց 'ի վախճանի՝ որպէս ա խորժելի է ասել, և որպէս յոլովք համարին, դործով ճշմարիտ ապաշխարութիւն սրբեալ և մաքրեալ, ենջեաց ընդ հարս իւր յիսուն և ութ, կամ վեթասուն ամաց. յամի աշխարհի ՅՁ կաղինոսի 3195. ըստ կալմէթի 3029. ըստ այլոց 3030. և թագեցին զնա 'ի քաղաքի դաւթի հօր իւրոյ. թագաւորեալ յերուսաղէմ 'ի վերայ ամենայն իսրայէլի ամն քառասուն։

ԳԼ. Բ.

Լինելիք վասն ապաշխարութեանն սողոմանի։

Իմաստունն սողոմոն որպէս առ կենդանութեան իւրով, նոյնպէս և զկնի մահուան յառակս եղև աշխարհի։ Զոր վայր ածապաշտութեանն և առաքինագործութեանն հպատակեաց, ոչինչ քան զնա լուսապայծ, գերապանծ, և 'ի բոլոր մասունս կատարեալ։ Իսկ յորժամ անձնատուր եղև յախտակիր մոլութիւնս, 'ի վիհ յետին ապիրատութեան խորասոյզ արար զանձն։ Սակայն և այնպէս եթէ գործք նորա բարիք և չարք 'ի կշիռ արդար մատուցցին, չէ մտրթ հաւատի ինչ վճռել զնմանէ։ Մեծամեծ գովութիւնս գտանեմք զնմանէ 'ի ծգ գիրս, զոյգ ընդ խոստմանն ՅԱ առ դաւիթ հայր նորա, ոչ երբեք զողորմութեան իւր մերժել 'ի նմանէ. որպէս մերժեաց յորոց մերժեացն. Բ. Թագ. Բ. 15. որ երևի խոստումն քացարձակ և աննահանջելի։ Իսկ յայլ տեղիս հակառակաբար ընթեռնումք սպառնալս խիստս, և յանդիմանութիւնս սաստիկս անօրէնութեանն նորա։ Մինչ զի և գիրն Կ զի երկնաչափ բարձրացուցանէ զնա վասն իմաստութեան և ածապաշտութեան, և Կ զի մինչ 'ի դժոխս իջուցանէ վասն կռապաշտութեան և ապերախտութեան առ ՅԱ։ Սողոմոն 'ի սկիզբն թագաւորութեան իւրոյ մեծապէս սիրելի ՅԱ. նա ինքն 'ի վերջին ժամանակս կենաց իւրոց 'ի բաց դառնայ 'ի ՅԱ՝ որ մեծացոյց զնա քան զամենայն թագաւորս երկրի։ և առ ոտն կոխէ զուիստ նորա։ Զհա այսոքիկ են որ աշխատարարին և առնեն ցայսօր զիմաստունս, առ որս յածի խնդիր դժուարալոյծ յաղագս վիճակի հոգւոյ նորա յետ ելից յաստեւայս։

Ռազումք 'ի կողմն դատապարտութեան նորա յաւէտ միտեալ երևին։ Զի գիրն ասեն՝ յայտնի պատ-

մէ զմեղս նորա. իսկ վասն ապաշխարութեան յայտնի նշան ինչ ոչ ցուցանէ։ Դիտեսջիք, արժանի գտաւ՝ զի լքցէ զնա ած և հեռասցի 'ի նմանէ. այլ թէ ինքն արժանի գործոյ ապաշխարութեան դարձեալ իցէ անդրէն 'ի շնորհս ած՝ ոչ դիտեմք։ Լ՝այն զոր ասէն, թէ զգիրս առակաց և ժողովողի զկնի մեղանչելոյն գրեալ իցէ իբր յաւերժական յիշատակ ապաշխարութեան, նախ՝ չէ հաւաստի. և երկրորդ զի բանք որ 'ի գրոց անտի յառաջ բերին իբր 'ի վկայութեան ապաշխարուէ նորա, կարի ընդհանուր են. թող զանհամաձայնութեան թարգմանութեանց, որք այլ և այլ օտար միտս ընծայեցուցանեն. յորս ոչինչ նշան ապաշխարութեան սողոմոնի երևի։ Լ՝ա՝ զի սիրաք Խէ. 21. 22. խօսելով զփոստաւորութեանց սողոմոնի, զթագաւորութեանն նորա, և զիմաստուն, և զդրոց նորա, առանց բնաւ յիշատակելոյ ինչ վասն ապաշխարութեան, յանդիմանէ ստատիկ զանսանձ սէր նորա առ կանայս, և զկերտ անժուժկալութենն՝ որ անջնջելի տպացեալ և հնացեալ է յանուն նորա. յոյր սակս ասէ և ած բարկացաւ 'ի նա և յորդի նորա. և զթագաւորութենն խոստացելի բաժանեաց և երկփեղկեաց. և եթէ չէր ակն առեալ դառնութի, որում խոստացեալ էր պահել զթագաւորութիւն 'ի յաւիտեան 'ի զաւակս նորա, խստաջնջեալ էր արդեաք 'ի միջոյ զսերունդ նորա։ Լ՝այս զի՞նչ նշան կայցէ ասէն՝ Ճշմարիտ ապաշխարութեան սողոմոնի. միթէ այն՝ զի պահեաց յոտին զտուն, և զարձանս և զանտառ կուռց գարշելեաց զիւրն դաստակերտ 'ի վերայ լերին յանդիմանն երուսաղեմի 'ի գայթակղուի ժողովրդեան. զոր ուր ուրեմն բազում՝ ամբք զկնի պղծեաց և անհետ արար յոմանս բարեպաշտ աքայ յուղայ. Գ. Թագ. Իգ. 13։

Լ՝այլ յայսր ամենայնի վերայ՝ բազումք են և պաշտպանք Ճշմարիտ դարձի և ապաշխարութեան, ուստի և փրկուէ սողոմոնի, զոր նա ինքն գոգցես կարծի պատմել 'ի գիրս առակաց. Գլ. Իգ. 30. 32. թէ յանցանել իւրում երբեմն ընդ անդաստան մի խոպանացեալ և մոլախոտեալ ամենևին, և հար ած

զսիրտ նորա, և դարձաւ մոռախոհ եղև յանձն իւր, և ծանեաւ յայն անդաստանն զպատկեր հոգւոյ իւրոյ և զդաստացաւ. * Օ՛ որ իբրև տեսի (ասէ, ըստ լատին թարգմանութեանն) եդի 'ի սրտի իմում, և օրինակաւ ուսայ զխրատս։ Յայտնագոյն ևս թարգմանութիւնն յունական. * Յետոյ ես զղջացայ, (կամ ապաշխարեցի), հայեցայ ընտրել զխրատս։ Իւր թէպէտև 'ի մեր օրինակի դնի, * Յետոյ ասիցէ, թէ զղջացայ ես։ բայց ոչ օտարանայ իմաստն. վասն զի զոր խօսէր սողոմոն զայլմէ, ոչ անգիտանայր իմանալ և զանձնէ։ Լ՚ապա յորժամ այսպէս ստրջացեալ էր սողոմոն, երևի նմա ՅԾ. Ի. Խագ. ԺԲ. 11. յանդիման հարկանէ նմա զանցեալ մեղս նորա, և ոչ զառաջիկայ վիճակ զղջացեալ հոգւոյն. աղդառնէ պատառեալ զթագաւորութիւն 'ի ձեռաց նորա. բայց նոյնհետայն մեղմէ զդատակնիքն ասէլով, թէ ոչ արասցէ զայն յաւուրս նորա. և թէ նաև զկնի մահուան նորա գաւազան մի թողուցու որդւոյ նորա։ Լ՚ասպէս կշտամբէ ՅԾ զսողոմոն առառաւել ջերմագոյն ապաշխարութիւն զարթուցանելոյ զնա։ Իսկ թէ սողոմոն զիարդ արար պատասխանի այսպիսի կշտամբանաց ՅՈ՝, ոչ այլ ուստեք, քան թէ 'ի նմանէ կարեմք ուսանել. որ յերեսնեբորդ գլուխ գրոց առակաց, զոր ենթադրեմք գրբեալ զկնի մեղայ իւրոյ՝ խօսի այսպէս ըստ լատին թարգմանութեան. * Ցեսիլ զոր խօսեցաւ այր, ընդ որում է ՅԾ. և որ զՅԾ ընդ իւր ունելով, զօրացեալ ասէ. Լ՚նմանագոյն եմ քան զմարդիկ. և իմաստութիւն մարդկան ոչ գոյ յիս. ոչ ուսայ զիմաստութիւն. և ոչ ծանեայ զգիտութիւն ՅՍրց ... Լ՚ոչ ինչս ինդրեցի 'ի քէն. մի զլասցիս ինձ մինչև մեռեալ իցեմ։ Օ՛ունայնութիւն և զրան սուտ հեռի արա յինէն. զտնանկութիւն և զմեծութիւն մի տացես ինձ. տուր միայն զկարևորս կենաց իմոց. զի մի յագեալ հրապուրեցայց ուրանալ, և ասիցեմ՝ ով է ՅՍ՝. կամ՝ 'ի կարօտուել վարեալ գողացայց, և սուտ երդուայց յանուն ՅՍ՝ իմոյ։ Լ՚այն իմաստ է և 'ի մերումն և յայլ թարգմանութիւնս։

Լ.այս պատասխանի յարմարեալ առ խրատիչն սո-
ղոմոնի յոյ՝ լի է այնպիսի զդջական ներգործուԹիւն,
որք յայտ առնեն ոչ լոկ ապաշխարուԹիւն, այլ գե-
բազանց ապաշխարուԹիւն, խոնարհուԹիւն խորագոյն՝
ցոր վայր հնար է մարդոյ իջանել, որ իցէ զարհու-
բեալ 'ի մեծուԹենէ մեղայ։ Լ.սէ զանձնէ լեալ
անմտագոյն քան զամենայն մարդ. գործեալ անաս-
նական խմաստուԹիւն և ոչ մարդկայնով. ոչինչ շա-
հեալ 'ի հրահանգուԹենէ ճաճանչոց, և ոչ ուսեալ
զիմաստուԹիւն, և ոչ զգիտուԹիւն շահեկան, որ է
գիտուԹիւն սՀց։ Լ.ոնէ կրկնապատիկ ներգործու-
Թիւնս կենդանի հաւատոյ. դաւանելով զմեծուԹիւն,
զկարողուԹիւն, և զնախախնամուԹիւնն ոյ։ Գտատ-
պարտ անուամբ ունայնուԹիւն և ստուԹիւն զկա-
պաշտուԹիւն իւր. և դողալով զի մի անդրէն 'ի մեղս
անկցի, խնդրէ 'ի ճոնէ լինել նմա առընԹեր։
Լ.ծ սպառնոյ նմա բառնալ զտատն ցեղս 'ի ձեռա-
նէ, նորա. և նա ոչ աղաչէ ներել նմա զայն պա-
տիժ. այլ զմի ինչ միայն խնդրէ, զի մի միւսանգամ
անկցի 'ի մեղս։ Լ.ծ ասէ տալ որդւոց նորա գաւա-
զան մի. և ԹԷ յաւուրս նորա Թողու զնա Թագաւո-
րել 'ի վերայ ամենայն իսրայէլի։ Լսկ նա ցուցանէ
զանձն յօժարամիտ պատրաստական կորուսանել
զմին և զմիւսն. խնդրելով լոկ զՀարկաւորն կենաց
իւրոց. և խնդրէ իրօք զի բարձցէ ճած 'ի նմանէ,
զաւելորդն, զի մի լինիցի պատճառ առ 'ի բարկա-
ցուցանել զնա։ Լ.այս ներգործուԹիւք ցուցանեն գե-
բազանց սէր առ ճած. զոր ոչ վայրապար և ոչ մնա-
պարծուԹիւն աղագաւ պատմէ. այլ ողորմուԹիւն և
մարդասէր գԹուԹիւն ոյ ընծայէ։

Յայտնի ևս երևի արդարացուցանել զսողոմոն
զիրք ժողովողի գրեալ 'ի նմանէ 'ի ծերուԹիւն իւ-
րում, որպէս ակներև ցուցանեն բանքն որ 'ի նմա.
ուր խօսի զանձնէ իբրև զԹագաւորի. պատմէ
զզանազան արարս իւր. և բաղում անգամ ունայ-
նուԹիւն ունայնուԹեանց կոչէ զամենայն զանցեալ
փառս, և զվայելս և զզուարճուԹիւնս. և զկին կոչէ
դառն քան զմահ։ Լ.յսպիսի և սոցին նման բանք

ենն առն՝ որ անցեալ զՀասակաւ երիտասարդութեանն և հասեալ 'ի ծերութիւն՝ այլ աչքք հայի յանցեալ զուարճութիւնս և 'ի մոլութիւս իւր։ Զայս եդեալ՝ ոչ արդեօք անպատճառ յարէ սիրաք 'ի նախադրեալ գլուխս էջ. յետ յիշատակելոյ զյանցուածս սողոմնի, "Լաւ վախճան կալաւ սողոմոն ընդ հարս իւր։ Որպէս թէ ասել. թէպէտև առ ժամանակ մի 'ի ծերութիւն իւրում խոտորեցաւ 'ի Տէր շաւղայ նախնեաց իւրոց, այլ ապա դարձաւ անդրէն 'ի շաւիղ նոցա. և վախճանեցաւ որպէս նոքա վախճանեցան սրբութիւն։ Գիտեմ զի մարթ է զայս յայլ բնական միտս առնուլ. որպէս թէ այլ ինչ ոչ կամի ասել, քան թէ մեռաւ. բայց որ խնամով քննեսցէ զայն գլուխս բոլորնդակ, տեսանէ՝ զի ոչ պատմութիւն, այլ գովեստս հիւսէ անդ գիրն գերեւելի արանց. և ոչ զուրուք զմահ յիշէ. բայց միայն զսողոմոնն. յայտ է թէ զի մասնաւոր իմն գիտէ 'ի նշանակել անդ զվախճանիլ նորա ընդ հարս իւր։

Յայտնագոյն ևս վկայութիւն ունիմք առ այս յերկրորդ գիրս մնացորդաց. Գ. 17. ուր ասի. "Լաւ հզօրացաւ ռոբովամ որդի սողոմոնի զերիս ամս. վասն զի գնաց 'ի ճանապարհս դաւթի և սողոմոնի զերիս ամս։ Լաւթէ 'ի մեղս կռապաշտութիւնն մեռեալ էր սողոմոն, զայս ոչ ասէր գիրն. այլ զհակառակն, թէ զերիս ամս գնաց 'ի ճանապարհս դաւթի. և ապա խոտորեցաւ յամպարշտութիւն սողոմոնի հօր իւրոյ։ Լաւ չէ մարթ ասել, թէ քան սՔ գրոց անդանօր հայի 'ի վիճակ առաջին կենաց սողոմոնի. քանզի որպէս յասել՝ թէ գնաց զճանապարհ դաւթի, իմանի վերջին կեանք նորա՝ յորում մեռաւ, և ոչ առաջինն. նոյնպէս և զսողոմոնն իմանալի է. զի ոչ ուրեք ընթեռնումք բերել գրոյն օրինակ լաւութիւն զոք, որ 'ի սկզբան և եթ ածպաշտութիւն կեցեալ իցէ, և ապա յամպարշտանէ մեռեալ. որպէս ահա վասն ամենայ որդւոյ մնասելի ասէ. "Լաւ ոչ խոնարհեցաւ առաջին ոն, որպէս խոնարհեցաւ մնասել հայր նորա. այլ որդի նորա ամն յաճախեաց 'ի մեղս։ Է. հատ.

ԼԵ. 23։ Որ ահա գովի մանասէ, զի զղջացաւ. գովելի լինէր և որդին, եթէ զնոյն առնէր, թէև 'ի սկզբան թագաւորութեան զՀետ չքաւ ամենարարութեան հօր իւրոյ։

Զի ինչ նշան վախճանական անզղջութեան սողոմոնի մնալ կուգոյն կանդնելոյ 'ի նմանէ, ցժամանակս յովսիայ բարեպաշտ արքայի, զոր նա խորտակեաց և անՀետ արար։ Այնպէս թէ գիրն ոչ ասէ յայտնի թէ մնացին անկործան. և ոչ իսկ բարոյապէս Հնար էր մնալ նոցա անդ յերուսաղէմ ընդ այնչափ ժամանակս զկնի զանազան թագաւորաց. և մանաւանդ զկնի եզեկիայ բարեպաշտ արքայի, որ սպասաւորեաց երբարձ ոչ միայն յերուսաղէմ, այլև յամենայն հրէաստանէ զամենայն հետս կռապաշտութեան։ Այսպէս ոչ գտանելով մեր 'ի թէ գիրս՝ թէ մի ինչ բարձեալ զնոսա, և գտանելով զդարձ սողոմոնի առ ՀԱՇ, ունիմք հիմն հաստատելոյ՝ թէ նա ինքն սողոմոն կործանեաց։ Այլ զայսմանէ լիագոյն հանդերձեալ եմք ասել զկնի՝ 'ի խօսել մեր վասն յովսիայ արքայի։

Բայց 'ի վկայութեանց սՀ գրոց՝ զոր յայտնեալք համառօտիւ նշանակեցաք երկուստեք, կան և ՀԱՐՔ նպաստաւորք ապաշխարութեան սողոմոնի. ՀԱ երանոս, ՀԱ կիւրեղ երուսաղէմի հայրապետ, ՀԱ հիլարիոս, ՀԱ հերոնիմոս, և այլք. յայս միտս է և մերս սՀ գրիգոր նարեկացի, այլովքն հանդերձ։ Բայց կան և 'ի հակառակ կողմն. որպէս սՀ կիպրիանոս ընդ վարդապետի իւրում աւերտուղիանոսի, սՀ օգոստինոս, սՀ գրիգոր մեծն. իսկ միտք սՀց ոսկեբերանին չէ յայտ. քանզի ուրեք իբրև հաւաստի ինչ ցուցանէ զապաշխարութիւն և զփրկութիւն սողոմոնի, և ուրեք երևի զՀակառակն ակնարկել։ Թէպէտ զնոր վարդապետս, որք կան յերկոսին կողմանս. բայց առաւել է թիւ, և զօրագոյն պատճառք նպաստաւորացն՝ քան հակառակաց։ Այլ ահա այս ամենայն վկայութիւք են, յոր սակս այս խնդիր, որ յաղագս դարձի և փրկութեան սողոմոնի՝ կայ մնայ անլոյծ յեկեղեցւոջն քրիստոսի։ Այսպէս լաւ է ս

է և յապահովագոյն՝ ընդ բազմաց ուղղախոհ խմաստուն վարդապետաց լռութիւն պատուել զխորին դատաստան նոցն, քան 'ի քննութիւն մտանել վիճակի սողոմոնի 'ի հանդերձեալ յաւիտենին. զոր նոքա ինքեանք միայնոյ կամեցաւ պահել. և օրինակաւ անկման նորա 'ի միտ առնուլ մեզ զյետին տկարութիւն մեր, և զմեծ կարօտութիւն զոր ունիմք օգնականութիւն հնարհացն ոյ՝ առ 'ի գնալ յարդարութիւն ճանապարհ, և անխոտոր կալ և մնալ 'ի նմա իսպառ։

ԳԼ. ԼԹ.

Ռոբովամ Ռաքաւորէ 'ի վերայ յուդայ. և Յերոբովամ 'ի վերայ Իսրայէլի։

Իբրև մեռաւ սողոմոն, թագաւորեաց ռոբովամ անդրանիկ և գուցէ միամօր որդի նորա քառասուն և մի ամաց, ծնեալ առ կենդանութիւն դաւթի. անուն մօր նորա նաամա կամ նոոմա ամմնացի, որ կարծի լինել դուստր անանայ որդւոյ նաասայ արքայի որդւոց ամմնայ բարեկամի դաւթի։ Իբրև կատարեաց ռոբովամ արքայական շքով զհանդէս յուղարկաւորութիւն սողոմոնի հօր իւրոյ, ելգաւ 'ի սիկիմ, ուր գումարեալ էր ամենայն իսրայէլ թագաւորեցուցանել, կամ մանաւանդ ճանաչել զնա իւրեանց թագաւոր. զի հաչակեալ էր առ նոսա խոստումն ոյ առ դաւիթ՝ տան նորա սեպհականել զյաջորդութիւն թագաւորութիւն իսրայէլի։ Ոչ ասն այնորիկ ոչ ոք իշխեաց բանալ անգամ զբերանն և ճիկ հանել, զի այլ ոք յայլմէ ցեղէ ընտրեսցի թագաւոր։ Իբրեւ թէ խորհրդով հաւաքեցաւ ժողովուրդն 'ի սիկիմ, և ոչ յերուսաղէմ

թագաւորական քաղաք կամ 'ի գաղդաղա, և կամ 'ի մասեփաթ, ուր սովորաբար լինէին այսպիսի համախմբութիւնք։ Այսն զի սիկիմ էր քաղաք 'ի մասին որդւոց Եփրեմի. և զի որպէս ասացաք յառաջագոյն, արդէն անկեալ էր տրտունջ յոյժ 'ի ժողովրդեան, և առաւելապէս 'ի մէջ երկուց ցեղից որդւոց Եփրեմի և մանասէի, գրգռեալ 'ի յերոբովամայ 'ի պատճառս ծանրաբեռն լծոյ՝ զոր եդեալ էր 'ի վերայ նոցա սողոմոն, համարեցան թէ անդ համարձակագոյն կարէին առաջի առնել զինդիր իւրեանց՝ զոր խորհէին 'ի մէջ իւրեանց վասն թեթևացուցանելոյ զծանրութիւն, և դիւրաւ ևս ընդունել զկատարումն անդ քան յերուսաղէմ, ուր էր զօրութիւն ռոբովամայ, և կամ այլուր։

Այլ մինչ այս պատրաստութիւնք լինէին 'ի սիկիմ, կուսակիցք յերոբովամայ առաքեցին յեգիպտոս, ուր գաղթական էր նա, և զգացուցեալ նմա զմահ սողոմոնի, կոչեցին զնա գալ վաղվաղակի. ակն ունելով 'ի ձեռն նորա ելն աղագս գտանել խնդրոյ իւրեանց, կամ նորայն կամաց կատարման, այսինքն թագաւորելոյ, զորմէ արդէն իրազեկ էին, եթէ ոչ յաջողեսցի խնդիր իւրեանց։ Այլ նա յեգիպտոսէ գաղտաբար՝ սոսակիմայ արքայի եգիպտացւոց և եթէ իմացուցեալ զբուել իւր, որպէս ընթեռնուաք 'ի թարգմանութեանէ եօթանասնից. և եկեալ յանծանօթս 'ի հրէաստան, եմուտ ծպտեալ և խառնեցաւ 'ի մէջ ժողովրդեան գումարելոյ 'ի սիկիմ։ Այնդ յառաջ քան զթագաւորեցուցանել զռոբովամ, մտանեն առ նա իշխանք ժողովրդեան, ընդ որս և յերոբովամ, և խնդրեցին թեթևացուցանել զբեռն 'ի նոցանէ. Հայր քո ասէն ելից մեծագործ շինուածովք զամենայն թագաւորութիւն իւր. այլ զոյգ ընդ նմին ծանրացոյց զանուր ժողովրդեան՝ մինչև լինել անբառնալի. առ այժմ չունի պէտս հասարակութիւն նոր շինուածոց, և ոչ քաղաքք նոր ամրութեց. բայց ժողովուրդն կարօտ է փոքր մի ոգի առնուլ. հապա դու թեթևացո

'ի ծանր անբոյ հօր քո, զոր եդ 'ի վերայ մեր։ և ծառայեսցուք քեզ։

Իսրայելամ 'ի մանկութենէ ականատես վկայ կոչը հպատակութեան ժողովրդեան 'ի ժամանակս հօր իւրոյ, զարմացաւ յոյժ 'ի միտս իւր ընդ այն պահանջումն նոցա։ որով թուեցաւ թէ կամին օրէնս դնել նմա, և ամիսոփել զՀնազանդութիւն իւրեանց։ Լ.յլ առ ժամն ծածկեաց զնեբքին կիրս իւր։ և վերհանձնութիւն իմն սրաբ պատասխանի։ քննեցէք ասէ զդանդատ ձեր։ երթայք առ այժմ, և յետ երից աւուրց դարձիկք առ իս առնուլ պատասխանի։ Գնացին նոքա, և յերոբոամ՝ որպէս թուի ամենարիկ ընթերցուած եօթանասնից, խոյս եւ 'ի սարիրա, այն է՝ թերսա, զոր ամրացոյց սողոմոն վերակացու կարգելով գործոյն զնա ինքն զյերոբոամ։ որպէս տեսաք 'ի վեր անդր։ Իբրև գնացին նոքա, կոչեաց ռոբոամ զծերս՝ որք էին խորհրդականք սողոմոնի հօր նորա, բազմաժամանակեայ փոքնք և ծերացեալք 'ի տնտեսութեան երուութեան։ և պատմեալ նոցա զպահանջումն ժողովրդեան՝ ասէ։ զիա՞րդ թուի ձեզ, և զի՞նչ խորհիք պատասխանի առնել նոցա։ Լ.սեն։ ժամն վտանգաւոր է։ յորում խոհեմութիւն ուսուցանէ մեղմել առ փոքր մի զիշխանական խստութիւն, զի մի վտանգեսցի բոլոր իշխանութիւն։ ժողովուրդն եռանդնոտ է և ջերմ յառաջին յարձակման իւրում։ եթէ խստութիւն վարեսցիս ընդ նոսա, կասկածելի է մեծամեծ չարեաց զհետ գալ։ Լ.յլ եթէ այժմ 'ի սկզբան քաղցրութիւն ցուցցես, և հաճեսցես զմիտս նոցա՝ թուլացուցանելով առ սակաւ մի զերասանակ նոցա, գերեսս առ քեզ զսիրտ բոլորեցուն, և ամենեքեան 'ի մի բարբառ աղաղակեսցեն, կեցցէ՛ արքայ ռոբոամ, և եղիցին քեզ ծառայք յաւիտեան։ և այնուհետև դիւրին ինչ է տարածել զձեռս 'ի վերայ նոցա, և կառավարել ըստ կամաց քոց։

Վրաջ էր և խնամատուն խորհուրդս, և մի միայն գոյցես, որում արժան էր անսալ առ խափանումն վերահաս վտանգին։ Լ.յլ ռոբոամ թերևս նուա-

գութի համարելով զայն իբրեւ իշխանութեան, ոչ հաճեցաւ ընդ խորհուրդ ծերոց. կոչեաց զիւր հաստակից իշխանազունս, որք ընդ նմա էին մնալ յարքունիս 'ի փափկութիս, և առ խոհական ծերոլքն էին մանկունք անխոհեմք, անխորհք գործոց անտեսութեան, և անտեղեակք թէ արքայի իցէ բընութիւն բազմութեան զայրացեալոց, և արքայի համարձակութեան բազմութեան յուսահատելոց։ Լուրդ իբրև առաջի արար նոցա ուրուք զբան ժողովրդեան, նոքա ըստ իւրեանց ջերմ և եռանդնոտ բարուց՝ անպիտ խորհրդով գահավիժ արարին զնա յորոշումն անխոհեմ ամենայն մասամբք։ Լսեն. նուաստութեան մեծ է թագաւորական պատուոյ՝ անսալ յանգուգն խնդրուածոց. պարտ է կրթել զհպատակն, և իբրև յանցանս համարել զտրտունջ ընդդեմ ծանրութեան եղելոյ յարքայէ. եթէ սովորեսցին այսպիսի աղերսս առնել, թէպէտև զառաջինն հաստատութիւն 'ի ձեւ աղաչաւորի առնեն, այլ յանցանել ժամանակի 'ի բաց եղեալ զպատկառանս՝ մատիցեն լրբենի համարձակութիւն հանդերձ սպառնալեօք։ Լաղմութիւն զչենու յանդգնութեան մեծ, յորժամ զգայցէ՝ թէ երկնչի իշխանն 'ի նոցանէ. զիջանիլ 'ի միասն արքունի գանձուն՝ միշտ համարեսցի գործ մանկական երկչոտութեան, և ոչ արքայական գթասիրութեան։ Լարձրացո՛ ասեն զբարբառ քո, և նոցա ձայն լռեսցէ. ասա՛ նոցա, թէ ոչ միայն չունիս թեթևացուցանել զբեռն՝ զոր եդ հայր քո, այլ ունիս յաւելուլ յայն և ևս ծանրագոյնս. յորմէ զանգիտեալ՝ մնադիւր յանձն առնուցուն, եթէ շատ համարիցիս զառաջինն ևեթ ծանրութիւն։

Հաւուր երրորդի ըստ ժամադրութեան եկին ժողովուրդն և յանդիմանն եղև ուրուքամայ՝ առնուլ պատասխանի. և նա խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդեան մանկտուոյն իւրոց մնդակցաց դառն և երբ գիծանողական տյլաբանութիւն. Ծկոյթ իմ ասէ ստուար է քան զմէջ հօր իմոյ. և արդ հայր իմ եդ 'ի վերայ ձեր անուր ծանր, և ես յաւելից յա-

նուրն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ դաւաժամանաք, և ես խրատեցից զձեզ խոցոտիլ քրքովք։ Օրմանս իմն բերէ յոյժ, թէ ռոբովամ մնեալ և հրամանգեալ առ սողոմոնիւ, և 'ի ժամուս ոչ մնանուկ, այլ այր կատարեալ քառասուն և մի ամաց, զիաքդ յերկուց խորհրդոց ընտրեաց զյայտնի վտանգաւորն և զանմտագոյնն։ Այլ չէ ինչ նորատեսիլ յաչխարհի՝ չանցանել յորդիս ընդ ժառանգութեամբ՝ և խոհեմութեամբ հարց։ Զոր զի այս անհեթեթութիւն չեղև առանց մտածութեան վերնոյն, որ թոյլ տայր ռոբովամայ ըստ իւրում ընդաբերոյս անխոհեմութեամբ յայն յետին անմտութեան բերիլ 'ի պատիժ կռապաշտութեան հօր իւրոյ, զի հաստատեսցէ ուր զբան իւր, զոր խօսեցաւ 'ի ձեռն աքիայ սիլոնեցւոյ վասն յերոբովամայ որդւոյ Նաբատայ։

Զ 'Ի խիստ և 'ի տմարդի պատասխանւոյ ասասի ջեռեալ ժողովրդեան, և հատեալ զլոյս 'ի ռոբովամայ, ասեն զայրացմամբ. արդ երևեսցի թէ ովքեր ընտագոյն իցէ, մնդեաց իսրայէլ 'ի բնակութիւնս քո. և ցոբովամ ասեն, չէս դու տակաւին մերթագաւոր, և ոչ եղիցիս յաւիտեան. չիք մեր բաժին ընդ դաւթի, և ոչ ժառանգութիւն ընդ որդւոյն յեսսեայ. կաց ինա դու 'ի տեղի քո, և արաձեա զտունն դաւթի։ Զ Եւ այսպէս տասն ցեղք յայտնի ապստամբեալք, գնացին 'ի բնակութիւնս իւրեանց. մի միայն ցեղն յուդայ մնաց հաւատարիմ ռոբովամայ, առ 'ի կատարելոյ բանի տն առ սողոմոն թողուլ դաւազան մի որդւոյ նորա։ Ցեղն բենիամինի գոլով փոքր՝ և երկուցեալ յերկոցունց կողմանց, յայնմ առաջնում ապստամբութեան ոչ յարեցաւ ոչ 'ի մի և ոչ 'ի միւս կողմն. այլ սուղ ինչ զկնի միացաւ ընդ տանն յուդայ. և եղև միշտ հաւատարիմ թագաւորութեանն յուդայ։ Զ Սակ ցեղն զևեալ չունելով ուրեք սեպհական կալուած երկրի, այլ իւրաքանչիւր եկաց մնաց 'ի քաղաքս, ուր ունէր զընակութիւն իւր։ Զ Այլ քանզի 'ի պատճառս տաճարին բազմութիւնն քահանայից և զևատացւոց ընակէր յերուսաղէմ և շուրջ յերկիրն յուդայ

և բենիամինի, նմին իրի առաւել մասն նոցա մնաց ընդ ռոբովամայ։ Արկպառակութիւն էր այնպիսի, որում չիցէ հնար գարմանն գտանել, եթէ ռոբովամ նախամեծար առնելով զբարին հաստարակաց քան զպատիւ և զշահասիրութիւն անձին, փութացեալ էր պատշաճական սպեղանի դնել 'ի վերայ խոցուածոյն։ Ունէր նա յիւր արքունիս պաշտօնեայս ճարտարս և հանճարեղս, յորոց եթէ զմի 'ի վար արկեալ էր, եթէ հաճոյական ինն մեկնութեամբ զբանս իւր քաղցրացուցեալ էր, եթէ զխստութիւն ծանրութեամբ առ սակաւ մի մեղմացուցեալ էր, սակաւ ինչ կորուսանէր. բայց ամենայն պահէր զթագաւորութիւն։ Իսկ նա զչկառաւին գործեաց. զի փոխանակ խաղաղարար հրեշտակուն՝ յայնմ գրժպատեհ ժամու առաքեաց առ նոսա զադոնիրամ հարկապետ՝ զսովորական հարկն պահանջել. թերևս ըստ մանկամիտ խորհրդոց իւրոց մնդակցաց. որք եղեալ էին 'ի մտի, թէ ժողովուրդն թէպէտ և աղմկեալ՝ ոչ երբեք ժխտէ, նա՝ արագագոյն կատարել զհրամանս, և հատուցանէ զհատուցանելին՝ յորժամ տեսանէ զբարքունի իշխանութիւն զինեալ գալ 'ի վերայ։ Այլ էն որք ասեն, թէ ադոնիրամ ոչ 'ի պահանջումն հարկին առաքեցաւ, այլ 'ի խաղաղել զապստամբեալս, և 'ի հնազանդութիւն համոզել զնոսա։ Սակայն թէպէտ և իբրև միջնորդ խաղաղութիւն էր առաքեալ, այլ գոլով նա ատելի ամենեցուն 'ի պատճառս ատելի պաշտաման իւրոյ՝ չէր 'ի դէպ առ այն գործ. որպէս և տեսաւ արդեամբք. զի հաղիւ հասեալ էր նորա, և ահա բռնալիր քարամբք հարին և սպանին զնա։ Օ այն գոյժ մահու իբրև լուաւ ռոբովամ 'ի սիկիմ, գիտաց, զի բանք ժողովրդեան չէին ամենրոպք վայրապարք, վասն որոյ աճապարեաց էլ 'ի կառս իւր. և փախեաւ պատսպարիլ յԵրուսաղէմ 'ի քաղաք իւր հաւատարիմ։ Այլ զօրաժողով եղև 'ի յուդայէ, և 'ի բենիամինէ հարիւր ութսուն հազար երիտասարդաց. ամենեքեան արք զօրաւորք և քաջ պատերազմականք։

Այն ինչ առջեւամ գունդ կազմէր յերուսա-
ղէմ բանի նուաձել զապստամբեալսն, նոքա հա-
մախմբեալ 'ի սիկիմ, խորհուրդ առնէին ամրա-
ցուցանել և հաստատել զկողմն իւրեանց՝ նոր թա-
գաւոր կացուցանելով։ Վիտելին զերեսովամ որ-
դի նաբատայ 'ի ցեղէ Եփրեմի՝ այր աչալուրջ,
սեթափ, կիրթ 'ի զինուորութիւն, և յամենայնի յա-
ջողակ, զոր երեւեցոյց 'ի ժամանակս սողոմոնի՝ 'ի
կարգել նորա զնա հարկապետ տանն յովսեփայ
Եփրեմի և մանասէի, և վերակացու մեծի գործոյն
մելոնի, և այլոց շինուածոց, որպէս 'ի վեր անդր
ասացաք։ քանզի յայնմ ամենայնի այնպիսի ճար-
տարութիւն և խոհական խորհրդով վարեցաւ, մինչև
յինքն ձգել զսիրտ ժողովրդեան՝ առ 'ի հորդել
անձին ճանապարհ 'ի թագաւորութիւն, ըստ բանի
աքիայ սիլոնեացւոյ։ Զայսն որոյ առաքեցին 'ի սա-
մարիա, ուր խոյս տուեալ էր նա զկնի առաջարկե-
լոյ ժողովրդեան զնդիր իւրեանց. և կոչեցին 'ի
սիկիմ, և սնդ հասարակաց հաճութիւն ամենայն
ժողովրդեան՝ թագաւորեցուցին զնա 'ի վերայ
տանն ցեղից իսրայէլի։ Զոր այսպէս 'ի միոյ թա-
գաւորութիւն եղեն երկու. մին կոչեցաւ թագաւո-
րութիւն իսրայէլի՝ սակս տասն ցեղից միացելոց 'ի
նա. իսկ երկրորդն թագաւորուն յուդայ. յորում
թէպէտ և ցեղն բենիամինի էր միացեալ, այլ
մեծն և երևելին էր յուդայ. վասն այնորիկ 'ի նմա
նէ կալաւ զանուն. որ և միշտ նախապատիւ և զо-
բաւոր եղև՝ հանդերձ ճշմարտութիւն, քան զթա-
գաւորութիւն տասն ցեղից իսրայէլի։

Իսկ ռոբովամ առ կարձելոյ 'ի նոցանէ զամե-
նայն դիպողութիւն զօրանալոյ համախմբութիւն բաղ-
մութիւն յամենայն ցեղից, և օրինաւոր բանակ կազ-
մելոյ 'ի պաշտպանութիւն անձանց, ճշմարտեաց
հասանել 'ի վերայ նոցա յանպատրաստից հարիւր
և ութսուն հազարաք՝ կամ 'ի հնազանդութիւն
նուաձել, և կամ ջնջել զնոսա յերկրէ։ Զայլ այն
ինչ յառաջ խաղայր ամէն գունդն յուդայեան,
եւ ընդ առաջ սամէա մարգարէ, խօսեցաւ առ ռո-

բովամ և առ ամենայն զօրավարս տանն յուդայ, պատուիրելով 'ի դիմաց նոցա՝ չտալ պատերազմ ընդ Եղբարս իւրեանց ընդ որդիս Իսրայելի. այլ լուծանել զանակն, և իւրաքանչիւրոյ դառնալ 'ի տուն իւր. զի բաժանումն այն ասէ Թագաւորութիւն 'ի ինէ եղև, և այն է կամք նորա։ Եւ Յայսմիսի պատուէր ապաքէն դառն է այնմ, որ վստահ իցէ 'ի ձեռին ունել զյաղթութիւնն. խաղաղութիւնն միշտ ծանր է և խիստ այնմ, որ կորոյս ինչ երևելի յիւրմէ, յորժամ դաշնադրութիւնն յայն վճարի՝ զի իւրաքանչիւր շատասցի այնու, որ մնաց 'ի ձեռին. այլ ծանրագոյն ևս է, յորժամ որ կորուսանի՝ համարի ունել զօրութի բաւական անդրէն 'ի ձեռս բերելոյ զօրութիւն զինուց զկորուսեալն։

Եւ զի քանզի լուաւ Ռոբովամ ձայնի մարգարէին, զովին նուէր մեծ արար կամաւոր, քան զոր մեծագոյն չէր կարող առնել այր Թագաւոր. զի ցրուեաց նոյն հետայն զբանակ իւր. տարաւ խաղաղական ոգւով զկորուստ տանն մնասանց Թագաւորութիւն իւրոյ վասն լի և կատարեալ հպատակութիւն հնազանդելոյ ձայնի նոն։ Զանեաւ զայս Հնմարտութիւն, թէ ոչ ունի զոր ունի ոչ 'ի վերայ Թագաւորաց, յանչափս առաւել է, քան զոչ ունելն, զոր ունին Թագաւորք 'ի վերայ իւրեանց հնազանդելոց։ Զանեաւ թէ անօգուտ է բազմութիւն, և քաջութի սպառազինելոց, յորժամ ոչ զօրութեց մարտնչիցի ընդդէմ նոցա. որպէս յայս դիպուած ունէր զչափ առնուլ, գիտելով զկամն ոչ վասն Թագաւորելոյ յերոբովամայ 'ի վերայ Իսրայելի։ Վասն որոյ իմաստութիւն ընտրեաց՝ յոժարամիտ հնազանդութիւն արդիւնս ունել առաջի ոչ, քան ընդդէմ կամաց նորա փորձ փորձել 'ի կործանումն իւր։

Հիերոսոլամ քանփնն երկուս երինջս ոսկիս 'ի պաշտօն, 'Ի զհինել նորա զհին երինջն՝ պատառս սեղանն զհինդ էանիս մարգարէի ՝ն։ Իսկ մարգարէն խաբեալ 'ի էլիենլայի ծերոյն՝ անցանէ զպատուիրանսս ՝ն, և սպանանի յառիւծոյ։

Յայնմ վայրի պարապ գտեալ յերոբոամայ՝ ձեռն էարկ զնել 'ի կարգի զնոր թագաւորութիւն. ամբացոյց զսիկիմ, և անդ հաստատեաց զաթոռ իւր։ Լ՚ելս զմնաս ածեալ, թէ 'ի վտանգաւորիլ իւրում յիմիք պատերազմի, ուր 'ի գէպ իցէ խոյս տալ յապահովագոյն տեղի թագաւորութիւն իւրոյ, ոչ եգիպտյանկագոյն առ այն քան զգաղատագ՝ յայն կոյս յորդանանու և ծովուն տիբերեայ. ուր և էին բաղում ամրոցք հզօրք։ Վասն որոյ գնաց անդ, և ամրացոյց և ևս զամրոցն՝ փանուէլի. որ էր ընդ մէջ մանայիմայ և անտառին Եփրեմայ, առաջին ամրոց յայնմ կողմանէ ընդդէմ թագաւորացն յուդայ։ Այնպէս խելացեալ հոգայը, թէ յերթալ ժողովրդեան իւրոյ յերուսաղէմ, որպէս պատուէր ունէին ամենեքին ամի ամի երիցս երանել յերուսաղէմ զոհել զոհս 'ի տան ՝ն, զի արտաքոյ նորա չէր օրէն ուրեք զոհս մատուցանել ՝ոյ, դուցէ առ սակաւ սակաւ ընդելացեալ ընդ որդիս յուդայ, և ջերմացեալ առ ՝ն, և առ ՝որ իւրեանց ռոբովամ արքայ յուդայ, դարձուցանիցէն զթագաւորութիւն յառաջին վիճակ անդր 'ի մի ինքնակալութիւն։ Օ՚այս ամպարիշտ խորհուրդ յղացեալ նորա, ոչ միայն տարադիր արար յիւրմէ թագաւորութէ զամենայն զեւտացիս և զամենայն քահանայս ՝ն՝ոյ, այլև արար երկուս երինջս ոսկիս, և եդ զմին 'ի դան, և զմիւսն 'ի բեթել՝ յերկոսին ծագս իւրոյ թագաւորութէ։ Այցոյց և քուրմն 'ի խառ-

նաղանդ՝ ժողովրդենէ արս պիղծս և անօրէնս յանէ կաւորս այնպիսի անկենդան և անբան ածոց. և պատուիրեաց ժողովրդեան իւրում մի՛ ևս ելանել յերուսաղէմ և ոչ մի ինչ պատմառաւ, և ոչ իսկ զոհելոյ աղագաւ ՅԻ իւրեանց. * Հա՛տ լիցի ձեզ ասէ ելանել յերուսաղէմ. ահա՛ ածք քո ի սրայել, որ հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց ||։ Լո՛ւ կանգնեաց ատ անդ 'ի վերայ բլրոյ բարձանց սեղանս և մեհեանս այլ և այլ դից, պաշտել իւրաքանչիւրոյ զնածս ընդ որ և հաճեսցին, բաց յՅՍ ձնմարտէ։

Լ.ՅԼԹԷ քանի՛ անմտացաւ և մոլորեցաւ յայսմ ոչ միայն ընդդէմ ածպաշտութեան, այլև ընդդէմ քաղաքական տնտեսութեան, հանդերձեալ եմք տեսանել 'ի կարգի պատմութեան, ուր ըստ բերելոյ նիւթոյն պատմեսցին դաւաճանութիւնք, մատնութիւնք, խողխողմունք թագաւորաց, և սպառ սպուռ. կործանումն տանն նորին յերոբովամայ սպանմամբ որդւոյ նորա։ Յայսմ ամենայնի քաջայայտ է, թէ որ խորհի ընդդէմ ՅՍ, խորհի միշտ 'ի կորուստ անձին։ Յորժամ ժողովուրդն սովորի արհամարհել զՍՍ այլոց, պատրաստի գերծուլ և զմարդկային իշխանութեան։ Յամենայնի և միշտ օգուտ մեծ է իշխանին, զի ժողովուրդ իւր պատկառ կացցէ օրէնսայ ՅՍ. քանզի ոչ կարէ լինել անհաւատարիմ իւրոյ թագաւորի, որ երկնչի յՍՍ. զի նա պատուիրէ հպատակաց հաւատարիմ և հնազանդ լինել իւրեանց թագաւորաց. և ապստամբաց և դաւաղաց սպառնայ պատիժ անեղական։ Լ.սպա եթէ ունիցի ժողովուրդն զերկիւղ ՍՍ 'ի սիրտս իւրեանց, չունին թագաւորք այնուհետև երկնչել 'ի դաւաճանութէ նոցա։ Այսն որոյ ամենայն փոյթ և արթնութիւն թագաւորաց 'ի հաստատութիւն ՍՍրութէ իւրեանց, և 'ի խաղաղութէ երկրին, յայսմ պարտ էր լինել՝ զօրացուցանել զՀաւատ, զպաշտօն, և զսէր ՅՍ 'ի ժողովրդեան իւրեանց։ Այլ թողից զայն, զի եթէ թագաւորք ինքնին հաւատարիմ լինիցին առ ՅՍ, նա պահէ անսասան

զՏրութիւն նոցա. և երկոքումբք տայ նոցա թագաւորել ասա և 'ի հանդերձելումն։

Իսկ յերրորդում զհակառակն դոքծեաց, զի առ չկորուսանելոյ զթագաւորութիւն իւր, տարագիր արար յերկրէ իւրմէ զՀնմարիտ կրօնն։ Լ.յլ որով կարծէր հաստատել զթագաւորութիւն իւր, նովին եբաց դուռն սպառ սպուռ կորստեան. և իսկ և իսկ սկսաւ զչափ առնուլ մեծի ՀՏասու անօրէն խորհրդոյն։ Վ.անգի բովանդակ կարգ զեւտական և քահանայական անց ընդ դրօշիւ արքային յուդայ. և որք յայլ ամենայն ցեղից եւտուն զսիրտս իւրեանց խնդրել զՏար ՀՏծ իսրայէլի, մտին յերկիրն յուդայ զօրացուցանել զթագաւորութիւն ռոբովամայ։ Լ.ւ այսպէս՝ ուր զառաջինն միայն տուն յուդայ և բենիամինի էին ընդ ռոբովամայ, յետոյ համօրէն ցեղն զլեւայ յարգոյ և երևելի յամենայն ցեղս իսրայէլի Ճոխ և հարուստ բազմութիւն հանձրեղ խորհրդականաց, և քաջագօտի զինակրաց յարեցան 'ի նա. և ոչ ՀՏաց ցեղ՝ յորմէ ոչ էանց բազմութիւն 'ի զօրացուցանել զարքայ յուդայ ընդդէմ արքային իսրայէլի։ Ա.յ ՀՏաց առ ընթեր յերրորդումն ոչ իմաստուն խորհրդական, և ոչ մարգարէ՝ հարցանել 'ի Տնէ. սակայն կուրացեալ թագաւորն առ ոչինչ գրեալ զայս ամենայն կորուստ, առ ևևս ամրացուցանելոյ զկռապաշտութիւնն՝ կարգեաց տօնս հեթանոսականս դէմ ընդդէմ տօնից՝ զոր առնէին յերուսաղէմ յերկրին յուդայ 'ի պատիւ ՀՏյ Ճշմարտի։ Լ.սեա զի մասնաւոր տօնախմբութիւնք ժողովրդականք մեծապէս օգուտ էին 'ի պահել զբազմութիւն խառնաղանդ ժողովրդեան 'ի հանդարտութիւն, սահմանեաց հանդիսաւոր տօն յամսեանն ութերորդի յաւուր հնգետասաներորդի նորին ամսոյ։ Լ.ւ առ պանծագոյն ևս շքեղացուցանելոյ զտօնն, ինքնին անձամբ եկն 'ի բեթել։ Ա.երանօր սրչափ անօրէն արքայն առաւել երևեցոյց զամնարշտութիւն իւր, Տծ ևս քան զևս եցոյց զանչափ ողորմութիւն իւր չորիւք աքանչելեօք 'ի հաստատութիւն։

Բանզի այն ինչ կայր յերոբոամ՝ի մէջ բազմամբոխ քրմաց իւրոց առ սեղանով՝ի բեթէլ զոհել զոհս երենջոց, և ահա այր մարգարէ եհաս անդր ի կիւսէ յերկրէն յուդայ. և ամբարձեալ անէր կիւզ զձայն իւր, ասէ. սեղան սեղան՝ ահա դայցէ օր, զի որդի ծնցի՝ի զաւակէ դաւթի՝ Յովսիա անուն նորա, նա զոհեսցէ՝ի վերայ քո զքուրմսն, որք ասա ծխեն զծուխս պղծութեան. ասա՝ ուր այսօր այրին ողջակէզք անբանից, այրեսցին ոսկերք մարդկան սպանելոց։ Բ. յսպէս եղեցի, զի այսպէս խօսեցաւ տէր. և՝ի նշան թէ տուն խօսեցաւ, ահա ասէ սեղանդ պատառեսցի, և հեղցի՝ի գետին պարարտութիդ որ՝ի վերայ դորա։ Բ. ու այս բան մարգարէին ցասուցեալ արքայի՝ ձգեաց զձեռն իւր՝ի սեղանոյ անտի, և հրամայեաց ունել զմարգարէն։ Բ. ստ եղև առաջին սքանչելիք, զի ձեռն ձգեալ՝ առ ժամայն դօսացաւ. և ոչ կարաց արքայ դարձուցանել կամ շարժել զնա։ Բ. և այս էր նշանն հզօր, թէ այն տուն՝ որ եբարձ զսազուկ նորա, կարօղ է բառնալ և զթագն՝ի գլխոյ նորա. ՝ի նմին ժամու պատառեցաւ և սեղանն, և հեղաւ պարարտութիւնն՝ի գետին։ Բ. յս եղև երկրորդ սքանչելիք և նշանն մեծաձայն, թէ զիարդ կարօղ իցէ կուռքն պաշտպանել թագաւորութիւն, որ ոչ կարաց ընդդէմ՝ոյ ձշմարտի պահել անկործան զիւրն սեղան։ Ցեսութիւ գօսացեալ ձեռաց արքայի՝ այնպէս զարհուրեցոյց զամենեսին՝ որ անդն կային, զի ոչ ոք՝ի բազմութէ անտի իշխեաց ձգել ձեռն՝ի մարգարէն. և պատառումն սեղանոյն սասանեցոյց զսիրտս, և մթացոյց զաչս ամենեցուն. բայց առաւել քան զամենեսին նա ինքն արքայ մնաց ապշեալ. այլք տեսանէին զքանչելիս, բայց նա յանձն իւր կրէր զներգործութիւնն։ Ի՝ ցաւս ծառնեաւ, եթէ ոչ է ժամանակ գործադրուն սպառնալեաց. և թէպէտ թագաւոր է տուն ցեղից, այլ հարկ է խոնարհիլ առն սոսկականի, բայց սպառազինելոյ հրամանաւ բարձրելոյն։

Յայսր ամենայնի վերայ ոչինչ զգաստացաւ՝ի

զերջ և յապաշաւ, այլ միայն խոնարհեցաւ առ շա-
հու անձին, յայտ արարեալ՝ թէ և թագաւորաց
ամբարտաւանից հարկ է գալ 'ի խոնարհութիւն,
յորժամ ոչ գտանեն այլ Ճանապարհ ազատութե-
'ի ինասուէ։ Լ.ղաչեաց զմարգարէն ողորմ առ-
նել առ ՝ած, զի դարձցի ձեռն նորա յինքն, և աստ
ետես զերրորդ սքանչելիս. զի յաղաչել առն ՝ոյ
առաջի ՝ոն՝ դարձաւ ձեռն արքայի առ նա։ Լ.ս-
այս եղև ազգումն՝ 'ի միտ առնուլ, թէ քանի՞ մեծ
ինաս եղև նմա մեկնիլ 'ի նմանէ ամենայն արանց
բարեպաշտից. և թէ հարկ 'ի վերայ կայ առ նո-
սա դիմել՝ 'ի գտանել շնորհս 'ի ՝ոնէ։ Լբրև ողջա-
ցաւ բազուկ արքայի, հրաւիրեաց զայրն ՝ոյ 'ի տուն
իւր՝ Ճաշել ընդ նմա, խոստանալով պարգևս տալ
նմա. այլ նա բացէ 'ի բաց հրաժարեաց յամենայնէ,
ասելով՝ թէ այսպէս պատուէր ունի 'ի ՝ոնէ՝ ոչ
ուտել հաց, և ոչ ըմպել ջուր 'ի տեղւոջն յայնմիկ,
և ոչ դառնալ ընդ նոյն Ճանապարհ՝ ընդ որ եկն.
և այնպէս գնաց այրն ՝ոյ 'ի բեթելայ. և 'ի Ճա-
նապարհի եղև չորրորդ սքանչելիք յանձին նորին
առն ՝ոյ։

Լր այր մի ծեր բնակեալ 'ի բեթել՝ եկեալ 'ի
սամարեայ. Բ. Խագ. 23. 18. զոր ՝աք գիրն մար-
գարէ կոչէ, բայց ցուցանէ զնա 'ի գործոց անտի
նորա լինել 'ի սուտ մարգարէից անտի, որք իբրև
արուեստ առնէին զմարգարէութիւն՝ կամ չուսնելով
իրօք զՀոգի մարգարէութեան 'ի ՝ոնէ, և կամ չարա-
չար 'ի կիր արկանելով զպաշտօն մարգարէական։
Գալ նորա 'ի սամարեայ, և բնակել 'ի բեթել, որ
էր 'ի ժամանակին կեղծրոն կռապաշտութեան, և
լուռ կալ անդ առանց բողոքելոյ ընդդէմ անօրէն
կռապաշտութեան յերոբովամայ, է նշան որ ցուցանէ
զչարութիւն սրտի նորա. որպէս և կեղծել սուտ
յայտնութիւն առաջի Ճշմարիտ մարգարէին 'ի խա-
բել զնա՝ յայտ առնէ, թէ և առաւել սովոր էր
կեղծել այնպիսի ստուէս առաջի ռամիկ և տգէտ
խուժանին։ Լրդիք նորա, որք գտան անդ, ուր
գործեցան երեք նախագրեալ սքանչելիք, եկեալ

'ի տունն պատմեցին հօր իւրեանց զամենայն գործ-
սըն՝ զոր արար այրն ոչ, և զանան՝ զոր խօսեցաւ
ընդ արքայի. և թէ 'ի հրաւիրել զնա արքայի 'ի
տուն ճաշել ընդ նմա՝ հրաժարեցաւ, ասելով՝ թէ
ոչ կարէ առնել զայն, զի պատուէր ունի 'ի ներսէ
չուառել հաց 'ի կողմանսն յայնոսիկ։ Յայնժամ նիւ-
թեաց նա խորհուրդ չարակամ ընդդէմ առն ոչ.
և այս՝ կամ 'ի գրգռելոյ լոկ բաղձանաց տեսանե-
լոյ և փորձելոյ զայրն հրաշագործ, կամ 'ի հաւա-
տարմացուցանել առաջի իւրոց քաղաքակցաց զմար-
գարէութիւն իւր, 'ի տեսանել նոցա թէ այնպիսի
այր սքանչելի հաւատաց նմա և ճաշէ ընդ նմա, և
կամ որպէս համարին բազումք՝ առ չարութիւն, առ
'ի տալ առն ոչ անցանել զպատուիրանաւ նոն, զի
յետոյ 'ի լուծանել նորա զպատիժ իւրոյ անհնա-
զանդութիւն, (զի անտարակոյս համարէր թէ ոչ
թողցի անպատիժ) առնուցու անտի պատճառս ցու-
ցանել զնա առաջի յերոբովամայ որպէս խաբեբայ,
վասն որոյ և պատուհասեալ յերկնից. և ունայ-
նացուցանել զքանչելիս նորա, զամենայնն բնական
պատճառաց տալով. և այնպէս եթէ երկուցեալ
յերոբովամայ 'ի սպառնալեաց նորա՝ խորհեսցի 'ի
բաց դառնալ 'ի կռապաշտութիւն, անդրէն 'ի նոյն
ամենաբշտութիւն հաստատեսցէ զնա։

Ա. յլ թէ այս, և թէ այն, և կամ այլ ինչ էին
միտք ծերոյն, չունիմք հաւաստութիւն ինչ. բայց
այս յայտնի է, զի իբրև խմացաւ յորդւոց իւրոց
զնանապարհ ընդ որ գնաց այրն ոչ, հրամանն եւ
վաղվաղակի կազմել զէշ իւր, և նստեալ 'ի նա՝
սնդեցաւ զհետ նորա. և իբրև եգիտ զնա նստեալ
ընդ կաղնւոյն, բռնադատէր զնա դառնալ ընդ
նմա 'ի տուն իւր, և ուտել և ըմպել և կաղդու-
բել զանձն, և ապա երթալ զնանապարհ իւր. և
որպէս զի հաւանեցուսցէ զնա, ստեաց նմա՝ թէ
այսպէս հրամանն ընկալայ 'ի հրեշտակէ ոն. քանզի
և ես ասէ, մարգարէ եմ իբրև զքեզ։ Հաւաստի
գիտէր այրն ոչ զպատուէր ոն երդեալ առ նա. չէր
պարտ նմա դիւրահաւան լինել առն անծանօթի,

որ ոչինչ նշան տայր զանձնէ առաքելոյ 'ի հրեշտակէ ին. սակայն և այնպէս առանց այլ ինչ հարցաքննութեան հաւատաց նմա պարզմտութեամբ. և դարձաւ 'ի տուն նորա, և եկեր և արբ ընդ նմա։ Այլ մինչ տակաւին նստէին 'ի սեղանն, եղև յայնժամ Հնմարտապէս հոգի ին 'ի վերայ ծերոյն. որ փոխեաց զերեսս և զչեզուս իւր, և դարձեալ առ այրն ին ասէ. փոխանակ զի ոչ պահեցեր զպատուէրն, զոր պատուիրեաց քեզ ին ած քո, և դարձար և կերար հաց 'ի տեղւոջդ յայդմիկ՝ մի մոցէ մարմին քո 'ի գերեզման հարց քոց։

Այլ յետ ուտելոյն՝ կազմեաց ծերն զէշ իւր, և նստուցեալ զայրն ին 'ի վերայ նորա առ արագադոյն վնարելոյ զնանապարհ իւր, արձակեաց զնա։ Այլ այն ինչ էր կարի հեռացեալ 'ի քաղաքէն, եկ ընդառաջ նորա 'ի նանապարհի առիւծ, և սպան զնա։ Այլ զի յայտնի երևեսցի, թէ յայն գործ եղև առիւծն լոկ գործադիր կամաց ին, ոչ պատառեաց և ոչ կերաւ զնա։ մնանանդ թէ՝ եղև և պահապան մարմնոյ սպանելոյն, և գրաստուն կենդանւոյ։ Այս արկած վաղվաղակի ազդ եղև 'ի քաղաքն յանցաւորաց նանապարհի՝ որք տեսին զսքանչելիսն. զոր լուեալ ծերոյն՝ որ խաբեացն զնա, ասէ. այն այրն ին է, որ դառնացոյց զբան ին. և եթ զնա ին առիւծու և սպան զնա. և նոյն հետայն հեծեալ յէշ, գնաց անդր. և գտեալ զմարմին նորա անմնաս, և զառիւծն՝ զի կայր հեզիկ, և թուէր մնալ հասանելոյ նորա առ 'ի յանձնել նմա զմարմինն, առ և եդ զնա 'ի վերայ իշոյն, և բերեալ 'ի բեթել թաղեաց 'ի գերեզմանի իւրում։ Այլ եթ պատուէր որդւոց իւրոց, զի 'ի մեռանիլ իւրում թաղեսցեն և զնա 'ի նոյն գերեզման առ ոսկերքսն առն ին. զի յորժամ յոլսիաս այրեսցէ զոսկերս բեթելացւոց՝ ըստ մարգարէութեան առն ին, անձեռամերձ մնասցեն և իւր ոսկերքն 'ի պատիւ ոսկերաց նորա՝ ոչ կարելով որոշել զնոսա 'ի միմեանց։

Ո՞վ էր արդեօք այս այր ին, չէ յայտ. զի և յա-

մենայն թարգմանութիւն ոչ գտանեմք զանուն նո-
բա նշանակեալ. թէպէտ են որք համարին, թէ սա
իցէ Լ.դդովղ (կամ ըստ այլոց Յաղդովղ, կամ՝
յովել) յիշատակեալ 'ի գիրս Բ. ճառ. Ե. 29. ուր
ասի՝ թէ մնացորդք գործոցն սողոմոնի գրեալ են,
* 'ի տեսին Լ.դդովայ տեսանողի, վասն (կամ ըստ
լատ. ընդդէմ) յերոբովամայ որդւոյ նաբատայ ॥։
Լ.յլ երբ մարթացաւ սա գրել զմարգարէութիւն
իւր ընդդէմ յերոբովամայ. որովհետև սպանաւ՝
մինչև էր դարձ արարեալ 'ի տուն իւր։ Մերս
նարեկացի կոչէ զնա Յովաս. այլք Վեմոս կամ
Վամաս. բայց ամենայնն անյայտ։ Իսկ յանցումն
նորա եթէ թեթև իցէ, որպէս գրեթէ առհասա-
րակ համարին հարք և մեկնիչք. և եթէ ծանր
ըստ ոմանց, զի առանց ինչ հարցաքննութեան հաւա-
տաց առն անծանօթի՝ ընդդէմ յայտնի հրամանին
նոն եղելոյ առ նա, քաւեցաւ 'ի ձեռն պատժոյն.
որով և Ճշմարտապէս 'ի կարգս նոցց դասեցաւ.
յոյր սակս և յովսիա արքայ յուդայ պատուեաց
զգերեզման նորա իբրև նոր մարգարէի, ոչ տալով
թոյլ մերձենալ 'ի նա. որով և ոսկերք ծերոյն բե-
թելացւոյ զերծան 'ի հրոյ՝ ուր այրեցան ոսկերք
սուտ մարգարէից։ Իսկ վասն ծերոյս այսորիկ,
եթէ արդեօք յետ տեսանելոյ զքանչելիսն և զպա-
տիժ առն ոյ՝ սակս թեթև յանցանաց, որում ինքն
ետ պատճառս, զդատապարտեալ իցէ և ապաշաւեալ,
չունիմք ինչ՝ ոչ 'ի նոր գրոց, և ոչ 'ի հարց։ Զոպէս
և ընդ հակառակն, թէ սա իցէ գրգռեալ զերո-
բովամ յետ այնքան սքանչելեաց՝ դառնալ 'ի չա-
բեաց իւրոց որպէս համարեցան ոմանք, ոչինչ ու-
նիմք հաստատել։ Զոմն զի ամենարիշտ արքայն չու-
նէր պէտս արտաքին հրապուրանաց. շատ էր ընդ-
աբոյս չարութիւն սրտի նորա պնդել զնա յիւրում
անօրէնութիւնն, որում ինքնին եղև գտակ։ Մա՝
առն ոյ ազգու քարոզ էր նմա, դառնալ 'ի միտս և
խորհել, թէ քանի մեծամեծ պատուհասք կան
մնան նմա յոյ վասն այնքանեաց մեղաց նորա և
գայթակղութեց, որ զտասն ցեղս աստամբեցոյց

'ի ՝ոնէ ՝ոյ իւրեանց, տեսանելով զայրն ՝ոյ այնպէս խստիւ պատժեալ, լուկ վասն անփոյթ լինելոյն քրնեալ զխաբէութիւն ծերոյն։ Բայց նա թերևս 'ի դիպուածոյ ասսի պատՃառս կալաւ և ևս ամպարշտեալ, որպէս սովորաբար առնեն անօրէնք, որոց կամք հաստատեալ է 'ի չարիս։ Վոխանակ մտախոհ ուշիւ հայելոյ 'ի յայտնի նշանս, որովք ցուցանէ ՝ած՝ թէ ինքն է որ խօսի, զհակառակն խորհին գլխովին, զամենայն՝ բնական դիպուածոց ընծայելով. որով և հաստատին 'ի կամաւոր մոլորուն իւրեանց։ Վուցէ և սա զայն ամենայն սքանչելագործութիւս ետ բնական պատՃառաց. զգօսանալ ձեռաց, և զարագ ողջանալ՝ պատահական դիպուածոց յաշխատութիւն յաՃախութիւն զոհից, զոր արար իւրով ձեռամբ. զպատառումն սեղանոյն՝ բռնութիւն հլոյն և ծանրութիւն զոհից կուտելոց 'ի վերայ նորա. զչուտել առիւծուն զմարմին առն ՝ոյ, և զչբեկանել զեշն՝ նորին մեծասրտութիւն, և կամ՝ զի յագէր։ Այլ զիարդ և իցէ, այս յայտնի է, զի եդեալ ևս՝ թէ 'ի ժամուն հաւատաց յերուսաղեմ, զի ՝ոչ 'ի դիպուածոյ, այլ յ՝ոյ եղեն այն ամենայն, յետ պահու արհամարհեաց յետին չարութիւն զխրատն ՝ոն՝ որ տուաւ նմա 'ի ձեռն այսքանեաց բացայայտ և անժխտելի սքանչելեաց, և առաւել չարացաւ 'ի կորուստ հոգւոյն, և 'ի կործանումն տան իւրոյ։ * Այս եղև (ասէ ՝ոբ գիրն) բանն այն 'ի մեզս տանն յերոբաղամայ, և 'ի սատակումն և յապականութիւն յերեսաց երկրի ॥. Գ. Նագ. ԺԳ. 34։

ԳԼ. ԺԸ.

Մահ աբիայ անդրանիկ որդւոյ յերոբովամայ։ Շինուէր Ռոբովամայ աբիայի յուրդայ։ Պարսուէր նորա 'ի առասանիմայ եփիպատցւոյ աբիայէ. և մահ նորա։

Այլոյն հետայն յետ բանիցս այսոցիկ սկիզբն եղև կործանման տանն յերոբովամու, զի հիւանդացաւ աբիա անդրանիկ որդի նորա։ Յայնժամ ետես այէր, և շշոչափեաց ձեռամբ զինաս տարագրութեան հմարիտ կրօնի յիւրմէ. զի ոչ էր գտանել 'ի համարէն թագաւորութեան իւրում մարգարէ նոն, յորմէ կարիցէ գիտել ինչ վասն որդւոյ իւրոյ ախտացելոյ։ Հարկ էր խնդրել յերկրի յուդայ. բայց գործ էր գտանել զյեղանակ հասանելոյ վախճանին։ Ալբայն անձամբ երթալ յերկիր թշնամւոյ իւրոյ թեպկտ և ծպտեալ՝ ոչ կարէր. առաքել գաղտաբար զոք յիւրոց նեբբին պաշտօնեից՝ կասկածէր թէ 'ի լսել մարգարէին զանուն իւր, որ ատելի էր ամենայն մարգարէից, ոչ տայր պատասխանի, գուցէ և 'ի բաց մերժէր զհարցանօղն. և այն զի՝ առ ընդունելոյ ստոյգ պատասխանի՝ հարկ էր յայտնել զանձն, ոյր վասն հարցանէ, որով և հայր մանկանն ախտացելոյ 'ի յայտ գայր։ Ալպա կարևոր էր այնպիսի հնարս գտանել հարցանելոյ, զի մի ընաւ յիշէսցի անուն հօր մանկանն. առ որ զայս հնարս եգիտ յերոբովամ. զի կին իւր մայր մանկանն զգեցեալ հնդերձս գծուծս իբրև զմի յաղքատ կանանց, և առեալ 'ի ձեռին պարգևս աղքատինս՝ հաց, և չամիչ և ստոմանն մի մեղու, համեմատ իւրում նուաստ վիճակի, և այնպէս գլխովին այլակերպեալ՝ զի մի ոք գիտասցէ թէ կին նորա իցէ, երթիցէ յերկիր յուդայ առ մարգարէն աբիա սիլոնացի, յորմէ ակն ունէր բարւոյ գուշակութեան. զի նա էր որ ամէն բազմոց յառաջ

զուշակեաց նմա զԹագաւորել 'ի վերայ տասն ցե-
ղից իսրայէլի։

Մարգարէն բնակէր 'ի սելով քաղաք, որ Թէ-
պէտ էր 'ի մասին որդւոց Եփրեմայ, բայց յայնժամ
ընդ ՏԻՐՈՒԹԵՆ արքային յուղայ. և էր նա ծանրա-
ցեալ ծերութեամբ, և ոչ կարէր տեսանել, զի աչք
նորա էին վատեալ 'ի ծերութենէն. վասն որոյ ոչ
կարէր մարգարէն 'ի կասկած ինչ անկանիլ 'ի տե-
սութենէ փափկասուն դիմաց Թագուհւոյն, և 'ի
յաղնուական ձևոյ վարելոյ նորա. զոր տիկնայք
մեծուհիք ոչ երբեք կարեն 'ի բաց Թողուլ, Թէև
կամիցին ծածկել զանձինս. և ոչ իսկ 'ի ձայնէն
կարէր կասկածիլ. զի էր երբեք խօսեալ ընդ նմա։
Այս հնարքս քաջ հանճարով սկզբնաւորեցաւ. բայց
ՇԱԾ խսպառ ունայնացոյց զնաբէութենն, յայտնելով
մարգարէին՝ զանձն որ գայր առ նա, և զպատճառն
վասն որոյ գայ, և զպատասխանին զոր ունէր տալ
նմա։ Զանգի իբրև արար կինն զամենայն ըստ կար-
գելոյ յերոբովամայ, և եկն 'ի սելով, այն ինչ
մնա էր մնանել առ մարգարէն, ասէ ցնա ՇԱՐ,
ահա կինն յերոբովամայ գայ հարցանել բան 'ի
քէն վասն որդւոյ իւրոյ, զի հիւանդ է՝ և դու
զայս ինչ և զայս ասասցես նմա։

Այն բան լուաւ մարգարէն զձայն ոտից կնոջն
առ դրանն. ձայնեաց առ նա, և ասէ, մուտ կին
յերոբովամու, ընդէր յանծանօթս լինիս. դու զիս
խնդրես, և ես եմ առաքեալ առ քեզ խստութեամբ։
Գնա՛ Թէ և ասա՛ ցյերոբովամ ցայր քո յանուն ՏԻՐ. փո-
խանակ այնքան երախտեաց՝ զոր արարի քեզ, դու
չարացար քան զամենեսին որ Թագաւորեցին յա-
ռաջ քան զքեզ. և գնացեր և արարեր քեզ աս-
տուածս օտարոտիս և ձուլածոյս բարկացուցանել
զիս. և ընկեցեր զիս յետս 'ի Թիկանց քոց։ Զասն
այսորիկ ածցէ ՇԱԾ զամենայն չարիս 'ի վերայ տանն
յերոբովամայ. սատակեսցէ զամենայն սերունդ նո-
րա, և զդիակունս նոցա արկցէ 'ի գիշատու�չանց
և Թռչնոց երկնից՝ մինչև սպառեսցին։ Այս մա-
նուկն՝ յոյր սակս եկիր հարցանել, 'ի կոխել ոտից

քոց 'ի քաղաքն Եղեկ 'ի կենաց, և 'ի մոռանել քո 'ի տուն՝ գտցես զնա մեռեալ. նա միայն 'ի տանէն յերոբովամայ մոցէ պատուով 'ի գերեզմանն, զի 'ի նմա և եթէ գտաւ խորհուրդ բարի վասն նոցա ոչ իսկ բայելի, ոչ խոտորելով զկնի ամենաշնորհութեան հօր իւրոյ։ Իսկ վասն այլոց՝ զիր նշան աւուրս այսմիկ՝ թէ քանի է ամենայն, և ժամուս՝ յորում խօսիմն առ քեզ. ահա արդէն ընտրեալ է այլ թագաւոր. որ զկնի ամենայ ինչ 'ի սոյն աւուր, և 'ի սոյն ժամու ընդ սուր անցուսցէ զամենայն զտունն յերոբովամայ։ Այլ եկեսցէ ժամանակ, զի և ժողովուրդ նորա 'ի նոյն աղէտս անկցի, յոր թագաւոր նոցա. և այն ամենայն չարեաց պարտաւոր լեցի այր քո յերոբովամ որ մեղաւ, և մեղոյց զիսրայել։ Զինն սատանեալ 'ի բանից մարգարէին՝ կորոյս զաւարաւ քերանոյն, և ոչ գիտաց ասել բան մի. զի յառաջ քան զհարցանել իւր՝ արար մարգարէն նմա պատասխանի։ Այլ այնպէս կինն ցաւագին եալ յերեսաց մարգարէին, և գնաց 'ի սարիրա, կամ ըստ այլոց 'ի Թերսա. զի անդ էր յայնժամ աթոռ յերոբովամայ. և 'ի մոռանել նորա 'ի տուն՝ եղիտ զորդի իւր մեռեալ, և կոծեցան զնա և թաղեցին պատուով ամենայն իսրայել։ Եթէ զորդի արքայի, որդի խօսեցաւ մարգարէն։ Այլ յերոբովամ ոչ կասեցաւ 'ի չարեաց։

Մեքարշութենն յերոբովամայ, և ժողովրդեան իսրայելի զառաջինն նզովելի էին յաչս թագաւորութենն յուդայ. բայց զկնի ոչ բազում ժամանակաց, և նորա ըստ մասին 'ի նոյն ամենաշնորհութեան խոտորեցան։ Երոբովամ ընդ որում և ժողովուրդ նորա ջերմ էր յանծպաշտութեան. զի զնայր ընդ ճանապարհ, զոր ուսոյց դաւիթ և սողոմոն հայր նորա աւանդեալ 'ի դիրս ժողովոցն, 'ի ժամանակս ապաշխարութեան իւրոյ. և ընդ այն ժամանակս բազումք յանծապաշտ իսրայելացւոց անցին առ նա, և զօրացուցին զթագաւորութեան նորա։ Այլ քանզի 'ի պատճառս երկփեղկելոյ իսրայելի՝ սահմանք թագաւորութեան իւրոյ փոփոխեցան, ձեռն էարկ զօրա-

ցուցանել զայլ սահմանագլուխ քաղաքս։ Լրուսա-
ղէմ էր քաջ ամրացեալ պարսպօք և աշտարակօք.
այլ առ կարի ընդարձակութեամբ՝ կարօտ էր
բազմութեամբ զօրաց 'ի պահպանութեան. զի գոլով
կառուցեալ 'ի վերայ երկուց լերանց, ունելով և
ձոր լայնարձակ, դիւրին էր յոյժ պաշարել զնա.
քանզի 'ի փակել թշնամւոյն զքանի մի անցս ձա-
նապարհաց, ոչ ևս մնայր տեղի մուծանելոյ կերա-
կուր 'ի քաղաքն։ Զսոն այնորիկ 'ի դարմանս այս-
պիսի վտանգաց՝ ամրացոյց զմեծակայ քաղաքս և
զամրոցս. որք թէպէտ իբր անառիկ էին 'ի սակս
բնական դրիոց իւրեանց, այլ կամեցաւ և արհեստիւ
ամրացուցանել յառաւել յապահովութեան, առ չու-
նելոյ պէտս բազմութեամբ զօրաց 'ի պահպանութեան։
Զմին իրի շինեաց զուեթսոր, և զբեթզէհէմ. (որ
'ի մերումն ըստ օրինակաց ինչ եօթանասնից գրի
բեթսէհէմ)։

Զոչ առ պաշտպանելոյ զնոսա 'ի հարաւոյ, ընդ-
որ մարթ էր յարձակել եգիպտացւոց, արաբաց-
ւոց, մադիանացւոց, եթիոպացւոց, և եգիպտաց-
ւոց, ամրացոյց զոդոզամ, զթեկուէ, զզիփ, և զե-
տանսի. որպէս զի 'ի գալ յայնմ կողմանէ թշնամ-
ւոյն, հարկ լիցի նմա կամ թողուլ 'ի թիկանց
զայսոսիկ ամրոցս հանդերձ վտանգաւ կորուսանե-
լոյ զհաղորդութեան ընդունելոյ օգնականս, և խու-
սելոյ յետ կոյս. և կամ վաստակիլ և տկարանալ
'ի դժուարին պաշարմունս նոցա յառաջ քան զհա-
սանել յերուսաղէմ։ Զբար և պատսեղ հզօր յարև-
մուտս երուսաղէմի, ամրացուցեալ զսոկքով, զմա-
րիսան, զազեկա, զայեաղոն, զզաբիս, և զգէթ.
որով բաց յամրացուցանելոյ զսահմանս իւր ընդդէմ
իսրայելացւոց 'ի հիւսիսոյ՝ ապահովացոյց և զհա-
ղորդութեան վաճառականուն ընդ միջերկրական ծո-
վու. յաւել ևևս ամրացուցանել նաև զբեբրոն, և
զսարաա։

Զու զի գիտէր՝ եթէ ամրացուցանել զքաղաքս
և զամրոցս ընդ վայր կորուստ էր դրամոց, յոր-
ժամ պակասիցին 'ի նոսա պահակապանք հարկա-

ւորք, և պաշարք կերակրոց և զինուց կարևորաց, վասն այնորիկ եդ 'ի նոսա պահապանս ժիրաժիրս, և իշխանս զօրաց քաջակորովս. արար 'ի նոսա և զինարանս ամենայն հարկաւոր զինուց. լցոյց և զշտեմարանս համբարօք կերակրոց. և այնպէս աւ պահովացոյց զնոսա ամենայն իրօք, որ հարկաւոր էր 'ի պահպանութիւն սահմանաց իւրոյ ճորուն յԵ-ռեսաց յերոբոամայ։ Յասպատամբել իսրայելի, գտանեմք զի յոլովք 'ի քաղաքաց նոցա մնացին 'ի ձեռս ռոբոամայ արքային յուդայ. որպէս զաբիս, այեաղոն, և այլ ամրոցք ցեղից Եփրեմի, շմաւոնի, և դանայ. որք որպէս տեսաք՝ էին իբր գօտի և պատնէշ ձգեալ յերուսաղէմ մինչև 'ի Ծով. զորս ռոբոամամ կամ արդէն ունէր 'ի ձեռին, և կամ հատանել և բաժանել կամէր 'ի մնացեալ երկրէն իսրայելի։ Լուս տես սովին ծանօթութիւն գիւրաւ իմանամք, թէ զի՛արդ հանապազորդ պատերազմ էր 'ի մէջ ռոբոամայ, և 'ի մէջ յերոբոամայ զա-մենայն աւուրս իւրեանց. որպէս ասէ գիրն. Գ. Թագ. ԺԴ. 30։ Յայտ է թէ այն պատերազմունք ոչ եղեն վասն միացուցանելոյ զԹագաւորութիւն, զի յայտնի գիտէին երկոքին թագաւորք՝ եթէ բա-ժանումն այն 'ի ճոնէ եղև, և այնպէս էին կամք նորա, որպէս տեսաք 'ի վերս անդր. այլ եղեն 'ի պատճառս քաղաքաց և ամրոցաց, որք իրօք անկա-նէին 'ի մասն բաժնի իսրայելի. այլ ռոբոամամ կա-մէր պահել, կամ առնուլ զնոսա ընդ իւրով իշխա-նութիւն իբրև սահմանակից և պատհանեալ երկրին յուդայ։

Յուսակիմ արքայ Եգիպտոսի (որ և ասի սօ-սաք, կամ սիսակ) թէպէտ յառաջնմէ իսկ կրեր թշնամութիւն 'ի սրտի ընդդէմ արքային յուդայ, բայց յայս առաջին ամս ոչ էլ 'ի վերայ նորա. գու-ցէ խորհէր թոյլ տալ առ ժամանակ մի երկուց թա-գաւորաց եբրայեցւոց պատերազմել ընդ միմեան և տկարանալ. զի յայնժամ ապա անեղկեան յարիւ-ցէ 'ի վերայ ռոբոամայ։ Սակայն խորհուրդ նորա՝ եթէ արդարև այնպէս խորհէր, 'ի ճոնէ էր, որում

կապեաց զնա ՝ի ծծ իբրև շուն կատաղի, զի ըստ ժամանակին արձակեսցէ զնա ՝ի վերայ նորա, զոր արժան իցէ խրատել։ Ռոբովամ յառաջին երիս ամս թագաւորութեան իւրոյ հնազանդ էր և բարեկամ ՝ոյ. վասն որոյ և ՝ի ծծ պաշտպանելով նմա՝ անշարժ կալաւ զարքայն Եգիպտոսի։ Իսկ ՝ի չորրորդումամի յորժամ հետես վերկիր իւր քաջ ամրացուցեալ յամենայն կողմանց, հստակելով այնուհետև չուներել պետս օգնականութեան ՝ոյ, խոտորեցաւ ՝ի նմանէ, թերևս ըստ ամպարիշտ խորհրդոյ մոր իւրոյ նատամայ ամենացեղոյ. և նորին օրինակ ձգեաց զբազումս ՝ի ժողովրդենէ նորա ՝ի նոյն խոտորումն. շինեցին նոքա սեղանս ՝ի վերայ բլրոց բարձանց, և ՝ի ներքոյ ամենայն վարսաւոր ծառոց, և նուիրեին ՝ի նոսա նուէրս։ Բայց ՝ոչ ուսոյց նմա թէ ամենայն ամրութիւնք առ ոչինչ զորեն, և ամենայն սպառազինութիւնք անօգուտ են, եթէ ոչ ՝ի ծ. բացուսցէ զնոսա։ Յայնժամ արձակեաց ՝ոչ զգազանն Եգիպտոսի, զոր ցայնմայր շղթայակապ ուներ. և ահա ՝ի հինգերորդ ամի թագաւորութեան ռոբովամայ՝ եկ սուսակիմ ՝ի վերայ նորա հազար երկերիւր կառաք, և վաթսուն հազար երիվարաք. ունելով ընդ իւր բաց յիւրոց Եգիպտացւոց՝ զլիբիացիս, զտրոգլոդացիս, և զեթիոպացիս, որոց ոչ գոյր թիւ։ Եւ ՝ի սակաւ ժամանակս տիրեալ ամուր ամուր քաղաքաց և ամրոցաց յուդայ, եկն և յերդակարծուն երևեցաւ յերուսաղէմ. որում տիրէր անտարակոյս, եթէ ռոբովամ և ժողովուրդ նորա մնասնեալք բուռն զօրութեամբ յաղթանակողին վասն մեղաց իւրեանց՝ էին առեալ յօգնութիւն իւրեանց զապաշխարութիւնն։

Արդարեն սամկաս եկն եմուտ յանկարծակի ՝ի ժողովատեղին, ուր էին ժողովեալ ռոբովամ և իշխանք նորա խորհիլ յաղագս վերահաս վտանգին. և ասէ ցնոսա. * Այսպէս ասէ ՝որ. դուք թողիք զիս, և ես թողից զձեզ ՝ի ձեռս սուսակիմայ։ Կարճառօտ եղև քարոզն, այլ ներգործութեամբ նորա մեծազգոյ. զի ռոբովամ և ընդ նմա ամենայն

իշխանք 'ի զեղջ եկեալ՝ խոստովան եղեն, եթէ արդար է Տէր, և իրաւամբ և արդարութիւն պատժէ զնոսա. ծանեան զանօրէնութիւնս իւրեանց, պատկառեցին, և խոնարհութիւն արկին զանձինս ընդ մտեռութիւն ճծային արդարութեան։ Զ. Եւ այս խոնարհ խոստովանութիւն նոցա և ճծ՝ որոյ զթութիւնն չիք սահման, մեղմեաց զպատիժն. ասաց ցսամէսն մնրդարէ. պատկառեցին, տաց դոցա սակաւ մի օդնութիւն. և ոչ թափեցից զսրտմտութիւն իմ խսպառ 'ի վերայ երուսաղէմ. բայց արարից զնոսա հարկատու արքային եգիպտոսի. զի ծանիցեն՝ թէ քանի՞ քաղցր է և բարի ծառայութիւն իմ, քան ըզծառայութիւն թագաւորութեան երկրի։ Խօսեցան 'ի հաշտութիւն, և սուսակիմ շատացաւ առնուլ զամենայն զգանձս տաճարին, և զամենայն գանձս տանն արքայի. ընդ որս և զվահանս և զայլ զէնս ոսկիս, զոր արար սողոմոն. և դարձաւ համբէն բանակաւ իւրով յեգիպտոս. թողեալ զամենայն քաղաքս և զամրոցս զոր առեալ էր յերկրին յուդայ։

Ցետ այնորիկ ռոբովամ դարձեալ զօրացաւ և հաստատեցաւ 'ի թագաւորութեան իւրում. բայց ոչ նոյնպէս և յանծպաշտութեան, զի թէպէտ և ոչ եթող 'ի բաց զնշմարիտ կրօնն, այլ էր թուլասիրտ. միայն ընդ ժամանակս ժամանակս էլանէր արքայաշուք հանդիսիւ 'ի տաճար Տէն, ունելով առաջի և զմի սուրհանդակս զթիկնապահս իւր զմենեալ պղնձի զինուք, զոր արար ռոբովամ փոխանակ ոսկի զինուց։ Զ. Սատէն յոյն օրինակն սիքստոսի ասէ, թէ իշխանք սուրհանդակացն պահապանք այնր զենարանի պղնձի զինուց՝ կարգեցան 'ի սուսակիմայ. յորմէ մեր այսպէս ընթեռնու. * Զ. Եւ կացոյց 'ի վերայ նոցա (այսինքն զինուց) սուսակիմ իշխանս սուրհանդակացն ‖։ Զայլ ընագիր երբայեցւոց, և այլ ամենայն թարգմանութիւք, որպէս և յոյն օրինակն կոմպլոտեան զհակառակն ընթեռնուն այսպէս. * Զ. բար ռոբովամ վահանս պղնձիս փոխանակ նոցա. և աւանդեաց զնոսա իշխանաց սուրհանդակացն, որք պահէին զդուռն արքայի ‖. Ի. ԹԱԳ. ԺԲ. 10։

Մեռաւ ռոբովամ, թագաւորեալ յերուսաղէմ ամն եօթնուտասն ցմուտս ուղթուտասներորդ ամի. ուստի մահ նորա եղև յուղթուտասներորդ ամի թագաւորութեանն յերոբովամայ. և թաղեցաւ ընդ հարս իւր 'ի քաղաքի դաւթի։ Անուն կնայոց ուղթուտասն, և հարձս կամ երկրորդական կանայս վաթսուն. որք ծնան նմա ուստերս քսան և ութ, և դստերս վաթսուն։ Ոչ եղև այնչափ ինչ երջանիկ կեանք նորա, և ոչ յիշատակ նորա՝ գովութեան արժանի։ Որինակ անձին նորա 'ի մանկութեն հետ՝ ջստագովութեան մեծ է բազմաց հանձարեղ և խնամոտ հարց, որք թէպէտև մեծաքան խնամով աշխատին 'ի բարիոք դաստիարակութիւն որդւոց, այլ սնամոստակ ելանեն. զի որդիքն յետոյ ոչ բերեն զնմանութեն հօր՝ որ ծնաւն զնոսա և սնոյց։ Սողոմոնի չեղեն պարծանք ունել որդի զռոբովամ. իսկ ռոբովամայ եղիցի յաւեժական նախատինք այն՝ որ կարծի պարծանք մեծ, լինել որդի սողոմոնի։ Գովութիւնք հարց ոչ են 'ի գովեստ որդւոց, այլ յամոթ, յորժամ չունիցին այլ ինչ գովելի, բայց միայն գովելի հարս։

ԳԼ. ԺՐ.

Աբիա թագաւոր յուդայ։ Յաղթուութիւն նորա ընդդէմ յերոբովամայ արքայի իսրայէլի. և մահ նորա։ Ասա բարեպաշտ արքայ յուդայ։

Իբրև մեռաւ ռոբովամ, թագաւորեաց փոխանակ նորա աբիա որդի նորա. զոր ծնաւ նմա մնասքա կամ միքայա դուստր աբեսողոմայ՝ ուրիշել կոչեցելոյ՝ 'ի քաղաքէն գաբաայ. որպէս է տեսանել 'ի բնագրի երբ". Եօթանասանից, և լատ. և այլոց. Է. Թագ. ԺԵ. 2. յորմէ յայտ է թէ ոչ է սա աբե-

ռողմ որդի դաւթի, այլ՝ այլ ոմն համանուն 'ի ցեղէն եփրեմի։ Վերէր ռոբովամ զմնաքա քան զամենայն կանայս իւր. և յորդիս նորա առաւել սիրելի էր նմա աբիա, թերևս 'ի սէր մօրն. և կացոյց զնա իշխան 'ի վերայ եղբարց իւրոց. վասն զի խորհէր թագաւորեցուցանել զնա։ Օրացաւ աբիա և հաճոյ եղև ժողովրդեան յամենայն սահմանս յուդայ և բենիամինի, և 'ի քաղաքսն ամուրս, առաւել քան զամենայն որդիս նորա. որոց ռոբովամ հայր նոցա կարգեաց հասոյթս առատս ըստ արժանեաց որդւոց արքայի. և ետ իւրաքանչիւր նոցա կանայս բազումս ընտրեալ յերևելի երևելի տոհմից թագաւորութեան իւրոյ։ Իւր յերբայակաւ նէն եղանէ այս իմաստ. կացոյց զաբիա իշխան 'ի մէջ եղբարց իւրոց. իսկ զայլ ամենայն որդիս սփռեաց յամենայն ամուր քաղաքս երկրին յուդայ և բենիամինի. և զաբիա կալաւ առ իւր յերուսաղէմ կրթել 'ի թագաւորութիւն։

Լուրդ յետ մահու հօր իւրոյ՝ թագաւորեաց նա ինքն աբիա, և ոչ ոք յեղբարց նորա ընդդէմ եկաց նմա։ Այլ համառօտ եղև թագաւորութիւն նորա. զի և ոչ ընդ երիս ամս ամբողջ երկարեցաւ, 'ի պատիժ վատթարութեան իւրոյ՝ յորում զանցոյց ըզհայր իւր։ Սակայն յայնմ՝ համառօտ ժամանակի եգիտ յաջողութիւն 'ի ճոնէ, թերևս 'ի վարձ հրապարակական ինչ գործոյ ճծպաշտութեան. և զի զյաջողութիւն իւր բովանդակ յոյս միայնոյ յուսացաւ ընդունել։ Վասնզի յերոբովամ արքայ իսրայէլի եղեալ 'ի մոի 'ի միում աւուր կլանել զնա՝ էլ 'ի վերայ նորա բազմաձեռն ահարկու զնդաւ ութհարիւր հազար արանց ոչ 'ի հաւաքածոյ սինլիքորաց, այլ յընտիր զօրաւոր պատերազմականաց։ Իսկ աբիա 'ի գլուխս կացեալ չորեքհարիւր հազարաց, որք չէին ինչ ընդհատ քաջութիւն և պատերազմական կրթութիւն 'ի զօրաց անտի արքային իսրայէլի, յառաջ խաղաց և կալաւ զերեսն սոմերոնայ՝ որ 'ի լերինն եփրեմի, և անդ 'ի գլուխս լերին ձակատեցաւ ընդդէմ թշնամեաց՝ որք կային 'ի դիւ-

բի այնչափ մերձ, զի լսէլն լինէր բարբառ նորա յառաջադաս բանակին Իսրայէլի։ Յօսեցաւ առ նոսա յանդիման հարկանելով նոցա, զի թողին զՀնմարիսն ՝ուծ, և պաշտեցին զանկեղծան երինջս ձուլածոյս, և ապստամբեալ ՝ի տանէ դաւթի, ուր էր անծանօթ ՝ի նոցանէ, եթէ ՝ուր ՝ուծ Իսրայէլի ետ նմա և որդւոց նորա զթագաւորութիւնն Իսրայէլի յաւիտեանական։ ՝Ի դէմս ածէր նոցա և զչունել Հնմարիսի քահանայս և զեւատայիս, և ոչ պատարագս, այլ փոխանակ նոցա քուրմս անօրէնս ՝ի խաժամուժ ժողովրդենէ, և զոմն դարձելիս։ Այլ ասա խրատ տայ նոցա չպատերազմել ընդ ՝ուն այ. զի ահաւասիկ ընդ մեզ է ասէ իշխան՝ ՝ուր ՝ուծ հարց մերոց. և ոչ ևս յաջողեսցի ձեզ, թէպէտ և բազում էք դուք յոյժ։

Մինչ աբիա արքայ յուդայ խօսէր իբրև քարոզիչ, յերոբովամ գործէր իբրև սպարապետ զօրաց։ Տեսեալ՝ զի աբիա խօսէր առ առաջին դասակարգութիւնն, ինքն մեզմով իմն եհատ գունդ մի ստուար ՝ի բանակէ իւրմէ, և խաղացոյց զնոսա յետ կոյս լերինն. և այնպէս բանակն յուդայ ետես՝ զի էր պաշարեալ ՝ի թշնամեաց յառաջոյ և ՝ի թիկանց։ Յայնժամ աղաղակեաց աբիա առ ՝ուր զօրութեաց՝ խնդրելով զամենազօր օգնութիւն նորա. և քահանայք հարին զփող նշանակաց, միանգամայն և ամենայն զօրք յուդայ գոչեցին առ ՝ուր։ Լսեաւ ՝ուծ ձայնի աղաղակի նոցա. և ոչ մնաց զի Հնմարիսն ընդ հարցին ընդ միմեանս, այլ ինքնին արկ ՝ի զօրս Իսրայէլի արհաւիրս և սատանումն մեծ. յայնժամ զօրքն յուդայ անխորտակելի արութիւն յարձակեալ ՝ի նոսա՝ հարին զնոսա հարուածս մեծամեծս. զոր էր մարթ ասել պատերազմ, այլ յաւէտ կոտորած մահու. զի առաւել եղև թիւ մեռելոցն Իսրայէլի՝ քան զթիւ պատերազմողացն յուդայ. զի ՝ի յուրթ հարիւր հազարաց Իսրայէլացւոց՝ հինգ հարիւր հազարն մնաց մեռեալ ՝ի դաշտի յայնմ նշանաւոր աւուր։

Լոստ մերս թարգմանութիւն որպէս և ասորին

ընթեռնուն հինգ հազար. այլ բնագիր եբրայեցւոց, ընդ նմա և եօթանասունք, և լատինն և աբաբային ունին որպէս եդաք. այսինքն հինգ հարիւր հազար. որ առաւել համաձայն է գրոյն. զի ասէ թէ նկուն եղէն որդիքն իսրայէլի, և հալածեաց աբիսա զՄերոբովամ. և ա՛ռ 'ի նմանէ զբեթէլ, զնա, և զԵփրոն 'ի ցեղին Եփրեմի, և զամենայն արուարձանս և զգեօղս նոցա. զի ոչ ևս գոյր զօրութիւն յերոբովամայ զամենայն աւուրս աբիայ. ուր եթէ հինգ հազար և եթ անկեալ էին 'ի զօրաց նորա, ապաքէն կային դեռևս նորա յոտին եօթն հարիւր ինն սուն և հինգ հազար, բազմաք առաւել քան զողջոյն գունդն յուդայեան։ Զկնի այսր մեծի յաղթութեան եկաց աբիսա յանդորր խաղաղութեան, բայց առ սուղ ժամանակ. զի որպէս ասացաք ամենայն աւուրքն թագաւորութեան նորա ոչ ժամանեցին 'ի լրումն երից ամաց. թէպէտ 'ի ժամանակաւորութեան դնին արձակաբար երեք ամք. զի թագաւորեաց յութուտասներորդ ամի թագաւորութեանն յերոբովամայ. և 'ի վախճան քսաներորդ ամի նորա մեռաւ. և թաղեցաւ 'ի քաղաքի դաւթի։ Եղեն նորա կանայք չորեքտասան. յորոց ծնան ուստերք քսան և երկու, և դստերք վեշտասան։

Զկնի աբիայ թագաւորեաց ասա որդի նորա յամի քսաներորդի յերոբովամայ արքայի իսրայէլի։ Այր նորա կռամոլ՝ դուստր էր աբեսողոմայ ուրումն, կոչեցեալ մաաքա՝ համանուն սկեսեր իւրում կնոջ ռոբովամայ, որ կոչեցաւ և միքայա. որպէս տեսաք 'ի վերս անդր. թերևս յորոշումն յանուանէ նուոյ իւրոյ։ Զսա թագաւոր բարեպաշտօն, բարեկրօն, և նախանձախնդիր փառաց տան նոյ իսրայէլի, իբրև կալաւ զթագաւորութիւն, իսկ և իսկ փայլեցոյց զկրօնասիրութիւն, և զդովելի նախանձ իւր վասն տան նոյ իւրոյ։ Հրաման յերկրի իւրմէ ըզգաբշութիւս և զպղծութիւս, և զկուռս. և ոչինչ փոյթ ունելով զայրացուցանել զմայրն՝ ջնջեաց զանտառ նորա, և կործանեաց զամրոցս, կամ լաւ

եւ ասել՝ զորՏս գաղտնածածուկս Ժողովոյն զաղ-
բատրծ իգացելոյ որք կոչէին նուիրեալք ՏՀածոյն
պղծութեաց։ Օ այն կուռս խորտակեաց ասա, և
այրեաց հրով՝ ի Հեղեղատին կեդրոնի. զի՝ ի յոր-
դել ջուրցն հեղեղաց՝ ի բաց տարցեն զմոխիրս առ
Հմնալոց և Հետոց նորա. և զմայրն՝ ի բաց արար՝ ի
տիկնութեէ բարձեալ՝ ի նմանէ զամենայն արտաքին
թագաւորական շուք և զփառս, վասն պաշտօն
տանելոյ նորա իբրև քրմուհի այնմ Հածոյն։ Ցա-
բաղիր արար յամենայն թագաւորութենէ իւրմէ
զկռապաշտութիւն. խորտակեաց զամենայն զկուռսն,
քակեաց զսեղանս և զտունս գարշելեաց, մինչև
Հմնալ այլ ինչ գայթակղութիւն, բաց՝ ի քանի մի
սեղանոց՝ ի վերայ լերանց բարձանց, ուր զոՀէր
Ժողովուրդն ոչ կռոց, այլ՝ այ Ճշմարտի. բայց ընդ-
դէմ պատուիրանաց նորա, որպէս պատուիրեաց
չզոՀել ուրեք քնաւ՝ բայց միայն՝ ի տաճարին երու-
սաղէմի։

Օ այս անարժան պաշտօն ոչ երարձ ասա. իբր
զի կամ գալով կարգեալ՝ ի պատիւ՝ այ՝ Համարեցաւ
տանելի գէթ առ Ժամանակ մի, և կամ զի թա-
գաւորք ոչ միշտ կարեն առնել զամենայն զոր կա-
մին։ Այլ թէ վասն այսր, կամ վասն այլ ինչ
պատճառի թոյլ տուեալ իցէ այսմ պատուիրանա-
զանցութեէ, Հաւատի է՝ զի սիրտ նորա միշտ միա-
ցեալ էր ընդ այ։ Այլ՝ բայց ոչ նոյն օրինակ թոյլ էտ
այնց բարձանց, որք էին նուիրեալ՝ ի պաշտօն կը-
ռոց։ Հաղագս առաջնոց բարձանց ասէ գիրն. Գ.
Թագ. ԺԵ. 14. * Բակայն զբարձունսն ոչ երարձ.
այլ սիրտ նորա կատարեալ էր ընդ Տն զամենայն
աւուրս իւր։ Իսկ յաղագս երկրորդ բարձանց ա-
սէ. Բ. Թագ. ԺԳ. 3. * Եւ բաց արար զսեղանս օտա-
րացն և զբարձունսն, և խորտակեաց զարձանսն.
և այրեաց զանտառսն։

Այս արքայ զկնի այսպէս գովանի նախանձա-
խնդրութիւն վճարելոյ զգործս Տն՝ խորհեցաւ և
ըստ քաղաքական մասին բարեկարգել և յապահո-
վացուցանել զերկիր թագաւորութեէ իւրոյ։ Այ.

բացոյց զբաղումՔ քաղաքս և զամրոցս պարսպօք, աշտարակօք, դրամքք, և նգաք՝ անխափան 'ի շրջա-կայ թշնամեաց. որոց մարթի էր զանազան կասկածս առնուլ 'ի գործոց անտի, և մարտիւ ընդդէմ ելա-նել առ 'ի խափանումն գործոյն. բայց ՝ՍՀ՝ զորոյ զփառսն այնպիսի ջերմ սրտիւ խնդրէր ասա, պաշտ-պանելով նմա, սանձ արկանէր ամենայն իշխանաց օտարաց հեռաւորաց և մերձաւորաց. և պարգևէր նմա զկատարեալ խաղաղութիւն ընդ ամն տասն. զի * Ա՛յլ գոյր (ասէ գիրն) ուստեք նմա պատե-բաղմ. վասն զի հանգոյց զնա ՝Տր՝։ Ի. Նեռ. ԺՊ. 6։

ԳԼ. ԺԳ.

Մահ յերոբովամայ։ Լաբան, և Լասա Ռեփաւորդ Իսրայէլի։ Լասա արքայ յուդայ Խորտաքէ զբերովղայիս, և զբասա՝ որ ելն մարդիւ 'ի վերայ նորա։ Մահ ասայի։ Լեռ-փաւորդ Իսրայէլի, Լաչա, Օմբրի, Լմրի, Լեռանի։

Մինչդեռ յայսպիսի երջանիկ յաջողութեան էին իրք թագաւորութեան յուդայ, յերկրորդ ամի ասայի՝ մեռաւ յերոբովամ թագաւոր Իսրայէլի յան-պարշտութիւն իւրում, թողեալ զթագաւորութիւնն զայն 'ի կռապաշտութիւն, որում ինքն եղև գտակ. Օ՛կնի յերոբովամայ թագաւորեաց նաբատ որդի նորա. այլ կարի համառօտ եղև թագաւորութիւն նորա. զի ձգեցաւ ընդ ամն երկուս, որոց ոչ ա-ռաջինն, և ոչ երկրորդն եղեն ամբողջ. զի որ-պէս նստաւ յերկրորդ ամի ասայի, նոյնպէս և յեր-րորդ ամի նորա քարձաւ 'ի կենաց։ Լ՛ռ սու

ըս-կիզբն կալան աղէտք թշուառութեաց, որք յետոյ յաձախեցին 'ի թագաւորութիւն Իսրայէլի. զի և սորա գնացք չեղեն ինչ ընդհատ յամպարիշտ գնա-ցից հօր իւրոյ. * Գնաց (ասէ գիրն) զճանապարհս

հօր իւրոյ, և 'ի մեղս իւր՝ որովք յանցոյց զԻսրայէլ։ Գ. Թագ. ԺԵ. 26։

Իսկ նաբատ հզօր գնդաւ առ պարսպօք քաղաքին Դաբսեթոնի, որում տիրեալ էին փղշտացիք, վասն որոյ և պաշարեալ էր առնուլ զայն. և ահա անդ 'ի պաշարման՝ բասս որդի աբիայ 'ի տանէն իսաքարու, դարան գործեալ ընդդէմ նաբատայ՝ սպան զնա. և անդէն և անդ ետ զօրուին կոչել զանձն Թագաւոր իսրայէլի։ Իսկ ամենայն ձեռնարկ նորա եղև 'ի սուր և 'ի հուր ջնջել սպառսպուռ ըզհամօրէն տունն յերոբովամայ, մինչև չԹողուլ 'ի սերնդոց նորա և ոչ մի ասրեալ, ըստ մարգարէութեանն աբիայ սիլովնայուոյ։ Իսկ այլ և ինքն բասս չէր առաւել արժանի լուսոյ կենաց քան զնոսա՝ զորս եբարձ 'ի կենաց աստի. զի ոչ միայն էր մարդասպանչոչ բռնակալ, այլև օտար ամենայնիւ յանծպաշտութեանէ, և մոլեալ զհետ կռապարիշտ մոլորութեանէ յերոբովամայ և նաբատայ։ Այլ սակս յեռս մարդասրէ որդի անանիայի սպառնացաւ նմա 'ի դիմաց ՆՅ զպատիժ տանն յերոբովամայ, ասելով. * Վասնզի զի ետուս զքեզ առաջնորդ 'ի վերայ ժողովրդեան իմոյ իսրայէլի, և գնացեր զճանապարհն յերոբովամայ, և յանցուցեր զժողովուրդ իմ զԻսրայէլ... տաց զտունն քո իբրև զտունն յերոբովամայ որդւոյ նաբատայ. որ մեռանիցի բասայ 'ի քաղաքի, շունք կերիցեն. և որ մեռանիցի նորա 'ի դաշտի, կերիցեն զնա թռչունք երկնից։ Գ. Թագ. ԺԶ. 2. 3։

Սա սկսաւ Թագաւորել յամին երրորդի ասայի արքայի յուդայ. և նոյն հետայն կամէր արդեօք յարուցանել ընդդէմ նորա պատերազմ սաստիկ, եԹէ էր վստահացեալ 'ի գլուխ հանել զիրսն ըստ ցանկութեանէ սրտին։ Այլ լուեաց առ ժամն, զի դեռ ևս անկազմագոյն զպատրաստութիւն զօրուն իւրոյ տեսանէր. և գաղտաբար զհետ եղև առնել դաշնադրութեան ընդ օտար տերութեանց. մինչև զկնի ամաց յաջողեցաւ նմա յինքն ձգել զորդի ադերայ Թագաւոր ասորւոց, և զզարեհ արքայ եԹովպացւոց։ Իսպա ապաւինեալ 'ի նոցայն դաշնակցութեան,

յամ Եօթնեբորդի թագաւորութեն իւրոյ՝ այն ամ մեռասանեբորդ էր ասայի արքայի յուդայ, եւ մարտիւ 'ի վերայ նորա. բայց ըստ կարգաւորութեն ոչ՝ 'ի սկզբան անդ արքայն ասորւոց չետ նմա ձեռն օգնականութեն, և արքայն Եթովպացւոց յամենայն զգալուստ իւր. ուստի 'ի ժամուն բաւս կորոյս յիւրմէ զբաղում քաղաքս 'ի սահմանս Եփրեմի, որոց տիրեաց ասա արքայ յուդայ։ Լու անուղան ուրեմն զարեհ արքայ Եթովպացւոց հատեալ Ասա նասարհ անբաւ, և անցեալ զերիենս սիլիրայ զօրութիւն հազար հազարօք. այսինքն միլիոն մի զօրօք յԵթովպացւոց և 'ի լիբէացւոց, և երեք հարիւր կառօք, եկաս 'ի մարիսա քաղաք. և տարածեաց զանտակ իւր 'ի ձորն կոչեցեալ սեփաթա, 'ի հիւսիսոյ մարիսայ քաղաքի, որ է ընդ մէջ լերանցն Եփրոնի, և հանդիպակայ լերանց, որք առասական անուամբ կոչին լերինք յուդայ։ Օ օրք ասայի էին երեք հարիւր հազար 'ի յուդայէ, և 'ի բենիամինէ երկերիւր և ութսուն հազար՝ անհամեմատ պակաս քան զթիւ զօրաց թշնամւոյն. այլ արիութիւն և քաջութիւն սրտի զօրացն՝ առաւելեալ։ Լինչ զի ոչ 'ի դէպ համարեցաւ ասա մեալ հասանելոյ թշնամւոյն 'ի վերայ իւր, և պաշարելոյ զերուսաղէմ, զմտաւ ածեալ թէ զօրք փակեալք 'ի քաղաքի. իբր 'ի բազումս կիսով չափ են կորուսեալ. եւ առաւել՝ զի գիտէր թէ զիւրին է նոյ սպրեցուցանել սակաւուք որպէս բազմաք։ Լ ասն օրոյ ապաւինեալ յամենազօր բազուկ նոն, խաղաց ընդ առաջ թշնամւոյն. և այն ինչ կամէր ձեռն 'ի գործ արկանել, գոչեաց առաձ ասելով. զօրացո՛ զմեզ նոր նաձ մեր. վասն զի 'ի քեզ յուսացաք, և անուամբ քով եկաք 'ի վերայ բազմութեան այսորիկ. նոր նաձ մեր մի յաղթահաւրեսցի քեզ մարդ։

Լուաւ նաձ աղաչանաց նորա, և օրհնեալ զանդրդուեալի յոյս նորա, արկ երկիւղ մեծ 'ի սիրտս Եթովպացւոց. մինչ զի առանց դէթ առ վայր մի դիմագրաւ լինելոյ յարձակման զօրացն ասայի, լի ահիւ առ հատարակ 'ի փախուստ դիմեցին. և զի մի

'ի կորուստ գնացեն յամսոյ լերինս, ուղղեցան 'ի կողմն գեղջոյ, այն է՝ գերարա։ Իսկ զօրքն յուդայեան զհետ փախստականացն սկսեալ՝ հարին կոտորեցին 'ի նոցանէ յայնմ աւուր, որչափ զօրեցին բազուկք նոցա. բայց և այլք ոչ զերծան ողջանդամ 'ի սրոյ նոցա։ Յանգի ասա Եհան 'ի վերայ նոցա յամենայն քաղաքս, ուր և ապաւինեցան, և տիրեալ նոցա՝ 'ի սայր սուսերի կոտորեաց զամենասին՝ մինչև՝ 'ի միլիոն մի զօրաց Եթովպացւոց հազիւ մնաց, եթէ արդարև իցէ մնացեալ որ՝ տանել զգոյժ մահու ընկերացն յԵթովպիա։ Յայնժամ արքայն յուդայ տիրեաց բազում քաղաքաց 'ի սահմանս ցեղին դանայ, և փղշտացւոց. և առ աւար զամենայն զքաղաքսն, Եհար և զաւանս և զդեղս շուրջ զգեղուրաւ. վասն զի եղեն արհաւիրք 'ի նոսա 'ի վերայ նոցա. առին և զվրանս անասնագարմանն արաքացւոց, և խաշինս բազումս և ուղտս, և այնպէս փառաւոր յաղթանակաւ, և բազմահարուստ տարաւ դարձաւ ասա յԵրուսաղէմ։

Յասա 'ի դէպ է ասել՝ թէ մայրաքաղաքն այն ողջոյն ինքնայորդոր եւ ընդառաջ բերիկրալից ցնծութիւն յաղթական արքայի. այլ 'ի մէջ այնր անհամար բազմութիւն առաւել ախորժական և ուրախարար եղև ասայի ընդառաջ հանդիպումն ազարիայ մարգարէի որդւոյ ադադայ։ Այս զկնի սիրապատար և ցնծալից խնդակցութիւնն ընդ արքայի, և ընդ զօրաւին յուդայ և բենիամինի, յաւել մարգարէանալ զհանդերձեալ թշուառութեց իսրայելի՝ որք թռղին զտոր ոճ իւրեանց, և զյաջողութեց յուդայի յարելոյ 'ի տոր. և ապա խրախուսեալ յորդորեաց զամենեսին կալ մնալ միշտ անդրդուելի 'ի հաւատարիմ ծառայութիւն տոն, որ այսպիսի և այսչափ առատութիւն վարձահատոյց լինի հաւատարմութիւն նոցա։ Ի մխիթար և 'ի քաջալերս բանից ասայի մարգարէին ևս քան զևս վառեալ ասայի 'ի սէր և 'ի նախանձ փառաց տոն տոյ, եւ յուզախնդիր լինել յամենայն տեղիս, և անհետ առնել զկուռսն ոչ միայն յամենայն քաղաքաց յուդայ և բենիամինի,

զոր գուցէ գաղտ մուծեալ իցեն ուրեք զկնի բառ-
նալոյ նորա զնոսա, այլև յայն ամենայն քաղաքաց՝
զորս յետոյ կալաւ 'ի լերինն Եփրեմի։ Լու ժողո-
վեալ յերուսաղէմ զամենայն ծերակոյտ ժողովր-
դեան՝ խրախոյս եւ նոցա ջերմ լինել և տևական
յուսաստուրեան. յայնժամ ամենեքեան միա-
բան միաձայնք ընդ արքայի երդուան նոն մեծա-
ձայն և հնչմամբ եղջերս փողոց մշանջենաւոր հա-
ւատարմութեան։ Լու արար արքայ նաւակատիս սե-
զանոյ նոն, որ էր առաջի սրահի տաճարին. եղեն
յաւուր յայնմիկ յաւարացն՝ զոր ածին, զուա-
րակս եօթն հարիւր, և ոչխարս եօթն հազար։
Յայս ջբնաղ հանդէս տօնախմբութեանն եկին բա-
զումք յիսրայելէ, մանաւանդ յԵփրեմայ, 'ի մանա-
սէ, և 'ի շմաւոնէ, և յարեցան 'ի յուդա՝ 'ի տե-
սանելն թէ նոր ածն նոցա ընդ նոսա է. զորս արքայ
ժողովեաց ընդ յուդայի, և ընդ բենիամինի իւ-
րում հաւատարիմ ժողովրդեան։ Ա՝ատոյց արքայ
և նուէրս մեծագնիս 'ի տաճար նոն արծաթս և ոս-
կի և անօթս, և սիւնս յանուն իւր և յանուն հօր
իւրոյ դաւթի, կամ ըստ ոմանց՝ աբիայ. և զամե-
նայն տարաւ 'ի նեբրս 'ի տուն նոն։ Լ՝այս եղև 'ի
հնգետասաներորդ ամի թագաւորելոյ ասայի։

Օ՝կնի այսր նշանաւոր յաղթութիւն ոչ եղև պա-
տերազմ յերկրին յուդայ, մինչև յերեսներորդ
հինգերորդ ամ թագաւորութենն ասայի։ Լ՝պա
յերեսներորդ ութերորդ, կամ ըստ այլոց՝ յերես-
ներորդ վեցերորդ ամի թագաւորութեանն ասայի, եկ
բասս արքայ իսրայէլի 'ի վերայ յուդայ։ Լեր ար-
ժան է գիտել զի թէ ոք հարևանցի տեսցէ զայս բան
ժամանակագրական, համարի լինել յայտնի վրի-
պական. վասն զի բասս թագաւորեաց՝ միայն ամ
քսան և չորս, սկսեալ յերրորդ ամէ ասայի աբ-
քայի յուդայ. որպէս ունիմք 'ի գիրս երրորդ
թագաւորաց. ԺԵ. 33. զոր համեմատեալ ընդ
ութ համարոյ ԺՇ. գլխոյ նոյն գրոց. զհետ գայ՝
թէ բասս որ մեռաւ յամի քսաներորդի և վեցե-
րորդի ասայի, ոչ կարէր տասն ամաք զկնի մահ-

ուան իւրոյ յառնել 'ի վերայ նորա, այսինքն յամի
երեսներորդի վեցերորդի, որպէս ունիմք Է.
հաց. ԺԷ. 1։ Լ.յլ սակայն նոյն իսկ բառք գրոյն
քաջ կշռեալք՝ լուծանեն զդժուարութիւնն։ Լ.սան
զի յառաջ քան զթագաւորել ասայի՝ էին անցեալ
ամք քսան, զինի սկիզբն լինելոյ թագաւորութեանն
յուղայ առ ռոբովամայ 'ի բաժանիլ 'ի նմանէ
տասն ցեղից իսրայէլի, և 'ի կացուցանել նոր թա-
գաւորութիւն։ Լ.մինայն թագաւորութիւն միշտ հնար-
գոյն է քան զթագաւոր իւր, եթէ թագաւորն չի-
ցէ առաջին սկզբնաւորիչ այնր թագաւորութեան։
Լ.պա թուեալ յառաջնոյ ամէ ռոբովամայ մինչև
ցտասներորդ վեցերորդ ամ ասայի, գտանեմք ամն
երեսուն և վեց։ Լ.ւ քննեալ զբառս գրոյն՝ տեսա-
նեմք, զի թուէ զամն ոչ 'ի սկզբնաւորութէ թա-
գաւորելոյ ասայի, այլ 'ի սկզբանէ անտի թագա-
ւորուէն յուդայի. * Լ.ւ պատերազմ ոչ գոյր նմա
(ասէ, այսինքն ասայի) մինչև յերեսներորդ և
հինգերորդ ամ թագաւորութենն ասայի ։. և յե-
րեսներորդ վեցերորդ ամի թագաւորութէ ասայի
եւ բաաս ։. և այլն. այսպէս դնի 'ի գիրս Է. մեա-
ցորդաց։ Լ.ւ ընդ հակառակն՝ յասէ 'ի գիրս Ի.
թագաւորաց, թէ բաաս արքայ թագաւորեաց
յերրորդ ամի ասայի. ոչ ասէ, *յամի երրորդի թա-
գաւորութէ նորա ։. այլ՝ յամին երրորդի ասայի
արքայի յուդայ. այն ամ քսանեներորդ էր թագաւո-
րութէ նորա։ Լ.ւ յասէն թէ 'ի մեռանել բաա-
սայ թագաւորեաց ընդ նորա ելա յամի քսանեներոր-
դի և վեցերորդի, ասէ. * յամի քսանեներորդի և վեց-
երորդի ասայի արքայի յուդայ ։. և ոչ ասէ *թա-
գաւորութէ նորա ։։ Յայսմանէ յայտ է, թէ մին
սկսանի թուել 'ի ժամանակէ հիմնարկութէ թա-
գաւորուէ յուդայի. իսկ միւսն 'ի թագաւորելոյն
ասայի։ Ա.սան որոյ հարազատ և ճշմարիտ տեսուի
գրոյն տայ մեզ իմանալ, թէ մինչև ցլրումն այնր
հնգետասաներորդ ամի ասայի արքայի ոչ եղև
նմա պատերազմ. այլ 'ի յաջորդ վեշտասաներորդ
ամի ելբաաս ամրացուցանել զհրամանս։

Հռամա էր աւան յարևելեան հարաւային կողմն Երուսաղէմի՝ հեռի 'ի նմանէ իբրև եօթն աշխարհագրական մղոնաւ։ Դիրք նորա նախանձելի, զի բառնայր զհաղորդութիւն ընդ դաբաստ գլխաւոր քաղաքին բենիամինի. և տիրէր բովանդակ ձորոյն, ընդ որ գայր կերակուր յերուսաղէմ. որով ըստ մասին մնայր Երուսաղէմ պաշարեալ։ Կատաս արքայ իսրայէլի կալաւ զայն տեղի, և կամէր կառուցանել անդ բերդ հզօր՝ առ 'ի խափանել ընդ այն զերթևեկ թագաւորութիւն ասայի. * զի մի լիցի (որպէս ասէ գիրն) մեռանել և ելանել ասայի արքայի յուդայ ‖. Գ. Բաք. ԺԵ. 17։ Ապա այնուրիկ բաաս Ժողովեալ կուտեաց անդ քար և փայտ և այլ նիւթս այնչափ յաձախութիւն, զի ըստ որում տեսցուք ստորև, բաւական եղեն ամրացուցանել զերկուս քաղաքս։ Ասա ոչ կարէր տանել, որպէս և էր իսկ իրաւունք, զի բաաս շինեսցէ ամրոց 'ի սահմանս յուդայ, որով այնչափ վնաս ունէր հասուցանել նմա։ Զոր յաղթութիւն նորա ընդդէմ եթովպացւոց ունէր խրախուսել զնա ընդդէմ բաասայ 'ի վանել զնա. այլ կամ այն յաղթութիւն որ մեծ էր՝ մեծապէս վաստակեցոյց զնա և զզօրս նորա. և կամ զի խորհէր՝ թէ այլ ինչ է պատերազմել ընդդէմ բուռն զօրուն իսրայէլացւոց և ասորւոց, և այլ ինչ ընդդէմ խառնաղանձին եթովպացւոց և լիբէացւոց։ Զմին իբի ոչ իշխեաց, կամ՝ ոչ կամեցաւ իւրով զինուք խափանել զբաաս 'ի ձեռնարկուէ անտի։ Զդ 'ի մտի հասանել իւրում վախճանի, եթէ յաջողեսցի նմա քակել զարքայն ասորւոց 'ի դաշնակցութէ բաասայ, և ձգել զնա յիւր դաշնակցութի։

Դիտէր ասա, զի միաբանութէք թագաւորաց սովորաբար չեն 'ի սակս բարեկամութէ, այլ վասն շահասիրութէ. 'ի փոփոխիլ շահուց՝ փոփոխին և խորհուրդք. այսօր թշնամի է, որ երեկ դաշնակից էր. այսօր դաշնակից, որ երեկ թշնամի։ Ապա ասորիկ առ ասա 'ի դանձուց տաճարի տն, և 'ի դանձուց տան թագաւորին արծաթ և ոսկի, և

նովին հրապուրիչ ընծայիւք՝ որք սովոր են յաղթա-
նակել 'ի խորհրդարանս. առաքեաց առ որդին ա-
գերայ արքայ ասորւոց, որ նստեր 'ի դամասկոս,
զհրեշտակս իւր. պատուէր տուեալ նոցա խօսել
այսպէս. Ի մէջ հօր ասայի արքայի յուդայ և 'ի
մէջ հօր քո եղև միշտ սէր և միաբանութիւն անբակ
զամենայն աւուրս իւրեանց։ Զորդ ցանկայ ասա
արքայ յուդայ նորոգել զայն միաբանութիւն 'ի մէջ
որդւոյ և որդւոյ. որ և ահաւասիկ մնասուցանէ քեզ
պատարագ ոսկի և արծաթ, ընդ նոսին և զիւր հա-
ւատարիմ դաշնակցութիւն։ Զասաս արքայ իսրայէլի
շինել ամրոց առ դրունս երուսաղէմի. ինդրէ ասա,
զի լուծցես զուխտ քո որ ընդ նմա. և եկեալ վա-
նեսցես զնա, զի 'ի բաց դնասցէ 'ի նմանէ։

Զորհուրդ ասայի յաջողութիւն եղ 'ի գլուխ. որ-
դին ագերայ ոչ ակնուներ այնչափ ինչ ստանալ 'ի
դաշնակցութէ ընդ արքային իսրայէլի՝ որչափ էին
պարգևք արքային յուդայ։ Զ ասն որոյ ոչ 'ի դեպ
դատեցաւ կալ թշնամութիւն ընդ թագաւորութեան՝
որ կարող եղև յաղթել միլիոն մի թշնամեաց 'ի
միումբ աւուր։ Զտես զի գիւրին էր տիրել ամրո-
ցաց եղելոց 'ի սահմանագլուխս երկրին իսրայէ-
լի, զի էին անպատսպար 'ի պահպանութեանց, ժրա-
տեաց ուխտին՝ որ ընդ բաասայ, և միաբանեցուս
ընդ ասայի. եհաս յեղակարծումն, և եհար զաւան,
այն է ային քաղաք, զդան, և զաբեղմային, և զա-
մենայն պարսպաւոր քաղաքս նեփթաղիմայ։ Զոյ
բան անակնկալ՝ զարհուրեցոյց զբաաս, և առ չկո-
րուսանելոյ զբոլոր երկիր իւր՝ ձեռնթափ եղև 'ի
շինելոյ ևևս զհատան. և դադարեաց գործն, և
ինքն դարձաւ 'ի թերսա 'ի թագաւորական քաղաք
իւր՝ ելանել ամենայն զօրութէ ընդդէմ ասորւոց։
Յայնժամ արքայ ասա 'ի համարէն յուդայէ առա-
քեաց քանդիչս՝ քակել զշինեալն բաասայ, և զբա-
բինս և զիայտս և զայլ ամենայն նիւթս շինուա-
ծոց առեալ՝ շինեաց նոքօք զբերդն բենիամինի, այն
է՝ դաբասա զլեռաւոր քաղաք բենիամինի, և զմա-
սեփաթ։

Ուրախ էր սաս յանձն իւր. զ՝ թագաւորը միշտ առաւել հաճեալ են վճարել յաջողութիւն գործս իւրեանց 'ի խորհրդարանի 'ի ձեռն հնարից, քան 'ի պատերազմի 'ի ձեռն զօրաց. յետինս այս է գործ ձեռաց, որ վճարի բազում արեան ճապաղեաք ժողովրդեան. իսկ այն՝ գործ մտաց հանճարոյ, որ վճարի 'ի ձեռն հանճարոյ խորհրդականաց։ Այն ինչ մնայր սաս լսել գոհութիւն և խնդակցութիւն վասն առանց խռովութեան երկրին 'ի գլուխ հանելոյ զիրսն, ահա ընդդէմ ամենայն ակնկալութեան իւրոյ՝ եկն եկաց առաջի նորա անանիա մարգարէ, և սկսաւ տխուր և զայրագին գիմաք յանդիմանել զնա 'ի գիմաց ՝ոյ, զի յուսացաւ յարքայն ասորւոց, և ոչ 'ի ՝որ ՝ած իւր. և այն՝ զինի ակն յանդիմանն տեսանելոյ, և ձեռաք շշափելոյ զՏՀՏՐ օգնութիւն նորա ընդդէմ անհամար բազմաւն զօրաց եթովպացւոց արքայի։ Այս առ առաւել զիծեցուցանելոյ զնա, ասէ. եթէ ապաւինեալ էր քո յ՝ած, չէին տարեալ 'ի ձեռաց քոց ոչ իսրայէլացիք և ոչ ասորիք. վասն զի ՝ած հայի յամենայն յերկիր՝ զօրացուցանել, զորս կատարեալ սրտիւ ապաւինին 'ի նա։ Այս արդ ապիտացար յայդմիկ. (կամ ըստ եբրայեականին՝ անմտութիւն գործեցեր յայդմիկ.) և ուր ՝ած ունէր հանգուցանել զքեզ, յայսմ հետէ եղիցի քեզ պատերազմ։

Ընդ այս յանկարծադէպ կշտամբանս սրտմտեցաւ արքայ. և կիրք բարկութեն մռուացոյց զարբեպաշտութիւն նորա. մինչև ետ դնել 'ի բանտի զմարգարէն. և զի բազումք 'ի ժողովրդենէ գայթակղեալ պա խարակէին զանգթութիւն նորա ընդդէմ ծառային ՝ոյ, ժանտացաւ և 'ի ժողովուրդն. և սպանութիւն բազմաց 'ի նոցանէ կամեցաւ ահ արկանել այլոց առ 'ի սանձել զլեզուս՝ չլուսաւ ընդդէմ արքայի։ Այս յանցումն ցաւալի՝ խորոց եղև բարեկրօն վարուց բարեպաշտ արքայի։ Սակայն երևի թէ ոչ ընդ երկար ձգեցաւ սրտմտութիւն նորա, այլ արագ եկն 'ի զգաստութիւն. վասն զի մնեալն 'ի բարեպաշտուն՝ եթէ երբէք մարդ կօրէն տկարութիւն գայթակղեա-

ցի, Ճանապէ զյանցումն իւր, և փութով յառաջին կարգ իւր դառնայ։ Լ.պաքէն վկայէ որ գիրն, թէ * Միրտ նորա կատարեալ էր ընդ Տն զամենայն աւուրս իւր ॥. ա. Խոփ. ԺԷ. 14. կամ ըստ ա. ծնոյ ԺԷ. 19. * Միրտն ասայի եղև լի զամենայն աւուրս կենաց իւրոց ॥։ Լ.պա այնչափ համառօտ եղև ժամանակ մեղայ նորա, զի քարոյապէս և ըստ մարդկան սովորութեան խօսելով մարթի է ասել զնա բարեպաշտ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Որ թողից զայն, զի յսվսափատ որդի նորա գովի, զի գնաց զՃանապարհ, ընդ որ գնաց ասա Հայր նորա. * Լ.ս գնաց ասէ՝ յամենայն Ճանապարհս ա ասայի հօր իւրոյ. և ոչ խոտորեցաւ 'ի նմանէ՝ առնել ուղղութիւն առաջի Տն ॥. Է. Խոփ. ԷԲ. 43։ Լ.յս գովեսա որդւոյն է քաջայայտ վկայութիւն, թէ թէպէտ Հայր նորա առ սուղ ինչ ժամանակ խոտորեցաւ 'ի Ճանապարհէ ուղղութեան. սակայն փոյթ ընդ փոյթ դարձաւ ապաշաւեաց, և որպէս յառաջ, նոյնպէս և զկնի միշտ ուղղութիւն գնաց։ Հայց և այս Ճշմարիտ է, զի յետ այս մեղայ չարեալ 'ի նմա այն սուաջին միամիտ և ջերմ ապաւինութիւն յԾ. զի 'ի ծանր հիւանդութիւն իւրում ցաւով ոտից, փոխանակ առ Ծ դիմելոյ վասն առողջուն, 'ի բժիշկս ապաւինեցաւ։ Սակայն Ծ պատժեաց զնա յերկրի ատ, տանջելով ցաւագին ոտնառութիւն 'ի վերջին երիս ամս կենաց իւրոց, որով սրբեաց զնա և 'ի յանցանաց ատի։ Լ.սա թագաւորեաց ամս քառասուն և մի, ոչ ամբողջ. զի մեռաւ 'ի քառասներորդ առաջներորդ ամի թագաւորութեան իւրոյ. ուստի ասի նաև թագաւորել ամս քառասուն։ Լ.ս թագեցին զնա մեծահանդէս յուղարկաւորութիւն 'ի հոյակապ շիրմի, զոր ինքն արար վասն իւր 'ի քաղաքի դաւթի, ընկղմանեցուցեալ 'ի գահոյս. և լցին խնկօք և ազգի ազգի իւղովք իւղեփեցեաց։

Ռազմաք յառաջ քան զասա արքայ յուդայ՝ էր մեռեալ բասա արքայ իսրայէլի, որ թագաւորեաց ամս քսան և չորս ամբողջ. և մեռաւ 'ի Թերսա,

որ 'ի ժամանակին յայնմիկ էր արքայանիստ քաղաք Իսրայէլի, յամի քսաներորդի և վեցերորդի ասայի արքայի։ Եւ յաջորդեաց զաթոռ Նորա և զամ-սարշտութիւն՝ Էլա որդի Նորա. այլ առ սակաւ ժամանակ. զի սկսաւ թագաւորել յամի քսաներորդի և վեցերորդի ասայի, և ոչ ժամանեաց 'ի լրումն երկուց ամաց։ Քանզի 'ի քսաներորդ և եօթներորդ ամի ասայի՝ զամբրի կամ զամրի ծառայ Նորուն Էլայի՝ զօրավար կիսոյ գնդին սպառազէն հեծելազօրաց, սպան զնա 'ի Թերսա. ուր կայր յայնժամ Էլա սակաւաթիւ թիկնապահօք. զի ամենայն զինուորական զօրութիւն Նորա էր 'ի պաշարումն գաբաթոնի. որ թուի լինել գաբէ ամրոց հզօր 'ի սահմանս փղշտացւոց։ Քանզի անդէն յաւուրս միւսմ մինչդեռ Էլա արքայ ուտէր և ըմպէր ուրախութիւն անկասկած յամենայն չար արկածից 'ի տան արսայ հանդերձապետի, և էր արբեալ, եմուտ յեղակարծումն զամբրի իւրովք խորհրդակից սրիկայիւք, եհար և անդէն խողխողեաց զնա։ Եպա դարձուցեալ զսուրն 'ի վերայ մերձաւորաց և բարեկամաց Նորա, և 'ի վերայ ամենայն տանն բաասայ, ջնջեաց խսպառ զաւուն Նորա, մինչև չթողուլ զոք կենդանի 'ի սերնդոց Նորա, ըստ բանի տէն զոր խօսեցաւ 'ի վերայ տանն բաասայ 'ի ձեռն յեհուայ մարգարէի՝ վասն ամենայն մեղացն բաասայ, և Էլայ որդւոյ Նորա։

Եւ ինքն զամբրի բռնակալեաց զթագաւորութիւն Իսրայէլի՝ աւուրս եօթն և եթ. զի արդարև գիտաց բանալ իւր Ճանապարհ 'ի թագաւորութիւն, այլ ոչ նոյնպէս 'ի պահպանութիւն թագաւորութեան իւրոյ։ Եբրև լու եղև զոյժ մահու արքային 'ի բանակ անդր 'ի գաբաթոն, ոչ կամեցաւ զօրն Ճանապարել իւրեանց թագաւոր զտիրասպանն. այլ անդէն 'ի բանակին թագաւորեցուցին զսպարապետ զօրուն Իսրայէլի, որում անուն էր ամրի։ Այս առ 'ի չտալ ապստամբելոցն ժամանակ ամրացուցանելոյ զիւր կողմն, նոյն հետայն 'ի բաց թողեալ զպաշարումն գաբաթոնի՝ դարձոյց զամենայն զզօրն 'ի

Թերսա, և պաշարեաց զնա։ Իսկ զամբրի տեսեալ՝ զի չուտի բաւական զօրութիւն պաշտպանելոյ անձին, և թէկ մերձ են առնուլ զքաղաքն, առ կարի վաղանմանն՝ զի մի խայտառակութիւն անկցի յաթոռոյ, եմուտ յարքունի ապարանսն, և այրեաց զնա 'ի վերայ իւր և մեռաւ. ընդ նմին և ընտանիք նորա եղեն ճարակ հրոյ. և այս վասն մեղայ նորա, զի գնաց յամենայն ճանապարհս կռապաշտութիւնն յերոբովամայ որդւոյ Նաբատայ։

Բայց և ամրեայ չյաջողեցաւ անդիմադարձ թագաւորել իսրայէլի. քանզի ժողովուրդն ոչ հաճեցաւ ընդ այն ընտրուի զօրուն. և թագաւորեցոյց հակառակ ամրեայ զթամնի որդի գոմրաթայ. և այնպէս եղեն երկու՝ որք միանգամայն կրէին զանուն թագաւորի. որով և ժողովուրդն իսրայէլեան հերձեալ յերկուս բաժանեցաւ. կէս ժողովրդեանն եղև զհետ թամնեայ, և կէս նոցա զկնի ամրեայ։ Այս երկպառակութիւն դժնդակ՝ ձգեցաւ ընդ ամն իբրև չորս. զի 'ի չորրորդումն ամի զօրացեալ կողմն ամրեայ՝ յաղթեաց հակառակ կողմանն. ուր 'ի նոյն աւուրս մեռաւ և թամնի, եթէ քնանկան և եթէ բռնական մահուամբ. և ժողովուրդ նորա տաղտկացեալ 'ի թշուառութենց հանապազորդ նեղչին պատերազմաց՝ դարձաւ և յարեցաւ 'ի կողմն ամրեայ։ Բայց ժամ հաւասար հաւանութիւն ամենեցուն թագաւորեաց ամրի 'ի վերայ իսրայէլի՝ յամին երեսնեերորդի առաջնեերորդի ասայի արքայի յուդայ. և թագաւորութիւն նորա ձգեցաւ ընդ ամն երկոտասան։ Յառաջին վեց ամն նստաւ 'ի Թերսա. ուր յերոբովամ 'ի սիկիմայ փոխադրեալ էր զաթոռ թագաւորութեան իսրայէլի. ապա ցանկացեալ ամրեայ այլևս մի Թերսա պատեհագոյն տեղւոյ, ստացաւ երկուց տաղանդաց արծաթոյ զլեռնն սամերան 'ի սամերայ տեառն լերինն. և շինեաց անդ քաղաք, զոր կոչեաց սամիրան, կամ սամարիա՝ յանուն սամերայ տեառն լերինն. և անդ հաստատեաց զաթոռ իւր. որ յետ այնորիկ եղև քաղաք արքայանիստ թագաւորութեան իսրայէլի։ Մե-

ռաւ ամրի երկու ամօք զկնիկ մահուն ասայի արքայի յուդայ, յերկրորդում ամի յովսափատայ արքայի յուդայ։ Եհա այսպէս ամենեքին սոքա եղկելի և թշուառական գտան. վասն զի ամենեքին քաղաքական իմն յետասմիտ խորհրդով ջան 'ի մոի եդին զՇէմարիտ կրօն ճանաչութիւն հեռի առնել յերկրէ տէրութիւն իւրեանց. թերևս անցնիւրն կամելով այնու հաստատել զթագաւորութիւն իւր. այլ զհակառակն տեսին աչօք, և շօշափեցին ձեռօք։

ԳԼ. ԺԴ.

Յովսափատ արքայ յուդայ։ Եհաւաբ արքայ իսրայէլի,
և էին նորա յեղբիէլ։ Եղէա մարգարէ.

Երբոն անցեալ ամք իբրև տասն, յորմէ հետէ յովսաֆատ էր կարգեալ և ծանուցեալ թագաւոր յուդայ առ կենդանութիւնք ասայի հօր իւրոյ թերևս տկարացելոյ հիւանդութեամբ։ Եյս բան յայտնի ոչ պատմի 'ի նոր գիրս. բայց յայտնի իմանի 'ի կարգէ պատմութենն։ Ընթեռնումք 'ի գիրս երրորդ թագաւորաց. էբ. կշ. թէ յովսափատ էր երեսուն և հինգ ամաց 'ի թագաւորել իւրում. և քսան և հինգ ամ թագաւորեաց զկնիկ մահու հօր իւրոյ։ Եյրդ՝ եթէ սկսեալ էր միայնակ թագաւորել յետ մահու հօրն, հինգ երորդ ամն թագաւորութիւն իւրոյ լեալ էր քառասներորդ ամ կենաց իւրոց։ Եյս սակայն ունիմք տեսանել ստորև, թէ յովսամ որդի նորա էր յայնժամ 'ի հասակ երեսուն և երկու ամաց. ուստի և զհետ գայր՝ թէ յովսափատ էր ուշամեայ մինչ ծնաւ յովրամ որդի նորա։ Եպա յայտ է թէ բազմօք յառաջ քան զմահ ասայի հօր իւրոյ սկսաւ յովսափատ թա-

գաւօրել. ապա սկսաւ 'ի հասակի երեսուն և հինգ ամաց առ հարբ խօսիլ. և թագաւորեալ ընդ հօրն առ նորին կենդանութիւն ամն տասն, էր քառասուն և հինգ ամաց, յորժամ պէտք մահու հօրն, մնաց թագաւոր ինքնիշխան և անկախ. և էր յիսուն ամաց 'ի հինգերորդ ամի թագաւորելոյ իւրոյ զկնի հօրն. և ըստ այսմ հաշուի յովսափատ էր ութուտասն ամաց, յորժամ ծնաւ նմա որդի յովրամ։ Այս վարդապետութիւն կեսարիոսի կաղկեդոնի, է հիմնեալ 'ի ՝ՍԳ գիրս, և ընկալեալ յամենայն մատենագրաց. որում և մեք աստի և անդր ունիմք զհետ երթալ առանց վերստին կրկնելոյ զայս բան։

Այդ՝ յովսափատ մի 'ի բարեպաշտ թագաւորացն յուդայ, փոյթեռանդն յաստուածպաշտութիւն՝, և մտադիր 'ի զօրութիւն զինուորական, և յամենայն քաղաքական կենցաղագուտ բարեկարգուն՝ զհետ եղև ամենայն զօրութիւն ջնջել անհետ առնել յերկրէ թագաւորութիւն իւրոյ 'ի հուր և 'ի սուր զամենայն մնացուածս հեթանոսութիւն։ Այսպա հայր նորա թէպէտ ջանահնար եղև ամենայն իրօք հետակորոյս առնել զկատաղի եղեռն անառակուեց՝ որ գործէին ըստ հեթանոսական գարշութեանց, սակայն յայսպիսի իրս ոչ երբէք անթերի 'ի գլուխ եւանեն կամք արդարակորով իշխանաց. բազումք 'ի մծղնէից անտի ապրեցան, ոմանք փախստեամբ, ոմանք կաշառանօք պաշտօնէից, այլք պաշտպանութիւն մեծամեծաց, կէսք թագստեամբ յանյայտ տեղիս։ Այսպա մինչ դադարեցոյց ասա զգովելի նախանձու իւրոյ զվրէժխնդրութիւն ընդդէմ այսպիսի անօրինաց, համարելով թէ երկիր իւր իցէ խսպառ սրբեալ 'ի պղծագործաց անտի, դարձեալ սկսաւ գաղտաբար անդրէն 'ի ներքս սողոսկիլ։ Յովսափատ հետայոյզ եղև և տեղեկացաւ, և ետ կոտրել յանխնայ առ հասարակ զորս մարթացաւ 'ի ձեռս բերել. որպէս և զանտառսն՝ զորս կոտրեցաց ասա հայր նորա, այլ յանցանել ամաց, էին անդրէն աճեցեալ, ետ դարձեալ հատանել, և զկուռս և զսեղանս խորտակել։ Այց զսեղանս

բարձանց, յորս զոհէր ժողովուրդն ՝ի Ճշմարտի, ոչ երբարձ. զի կամ կասկածէր ՝ի յառնելոյ խռովութեան ՝ի ժողովրդեան. և կամ որ առաւել հաւանելի թուի, երկնչէր թէ գուցէ ժողովուրդն որ սովորեալ էր յայնչափ ամաց հետէ ՝ի վերայ նոցա զոհել ՝ի, ՝ի ջնջել նորա զայնոսիկ, գնասցէն յերկիրն իսրայէլի զոհել կռոց գարշելեաց. վասն այնորիկ թոյլ ետ կամ իբր յանդգնս եղև այնմ օրինազանցութեանն՝ առ խափանումն մեծապունին։

Եղերորդ ամի թագաւորութեան իւրոյ առաքեաց զչորեսին իշխանս իւր զանուանեալս բենղայիլ՝ այն է որդիք զօրութեաց, որպէս ընթեռնումք ՝ի մեջումն. զսբդիաս, զզաբարիաս, զնաթանայէլ, և զմիքայաս. և ընդ նոսա ութ զեւտացիս, և երկու քահանայս՝ զէղիսամա, և զյովրամ՝, զոյդ ընդ դպիրս օրինացն տան՝ երթալ յամենայն քաղաքս թագաւորութեան իւրոյ, ուսուցանել զժողովուրդն, և հաստատել զսիրտս նոցա ՝ի պահպանութեան օրինացն այ։ Եւ յս ջերմ կրօնասիրութիւք յովսափատայ մեծապէս հռչակեցեն զնա յամենայն արտաքին թագաւորութիւս որ շուրջ զՀրէաստանաւ։ Եւ քանզի ամենայն արտաքին թագաւորք յերկար փորձոյ տեղեկացեալ գիտէին, զի յորժամ թագաւորք յուդայ նախանձախնդիր էին փառացն այ, յայնժամ և մեծ պաշտպաներ նոցա, և անյաղթելի և փառաւոր առնէր զնոսա, ոչ ոք իշխէր յառնել ընդդէմ նորա. զի երկնչէին ՝ի նմանէ. այս է զոր ասէ գիրն. * Եւ եղէն արհաւիրք ՝ի տնէ ՝ի վերայ թագաւորաց երկրին, որ շուրջ զյուդայիւ. և ոչ պատերազմէին ընդ յովսափատայ ‖. Բ. Հաց. ԺԵ. 10։ Եւ առ պահելոյ զնա ՝ի բարեկամութեան իւրեանց՝ ընծայաբեր լինէին նմա և հարկատու. փղշտացիք տային ոսկի և արծաթ. եդովմայեցիք առանց թագաւորի ՝ի ժամանակաց անտի դաւթի՝ հարկատու էին նմա, և հպատակ հրամանաց նորա. նաև աբաբացիք թէպէտ հեռաւորք՝ ածէին նմա ամի ամի խոյս յոչխարաց եօթն հազար, և երեքհարիւր, և նոխազս եօթն հազար և եօթն հարիւր։

Այլ եւս ոչ սակաւ նպաստեր նմա 'ի սանձել եւ 'ի պահել զամենեսին 'ի խաղաղութիւն՝ ունել միշտ յոտին զբազմութիւն սպառազէն զօրաց։ Զամենայն յոյս եւ ապաւինութիւն նորա էր յԱծ հաստատեալ. բայց քաջ գիտէր, զի կամք ոչ այն է՝ առնել մարդոյ զոր ինչ անկ է նմա՝ խմաստութիւն 'ի վար արկեալ զմիջնորդս համեմատս վախճանին, առ որ դիմէ, զի մի դատարկացի գործ խմաստութեան՝ ըստ խմաստնոյն առածի։ Հինեաց քաղաքս ամուրս եւ առնս եւ այլ զանազան դասակերտս. եւ կայցոյց յամենայն քաղաքս եւ յամրոցս պահակապանս զօրաւորս։ Ունէր առ ընթեր իւր յերուսաղէմ հինգ զօրավարս զօրաց. առաջինն՝ եղնաս, ընդ որով էին երեքհարիւր հազար զինուորք՝ ամենեքին զօրաւոր պատերազմողք. երկրորդն՝ յոնիսն, եւ ընդ նովաւ երկերիւր ութսուն հազար. երրորդն մասկաս, ընդ նմա երկերիւր հազար զօրաւորք ուժով. չորրորդն եզիսդա, ընդ որով էին ութսուն հազար զինաւորք եւ պարսաւորք երկերիւր հազար. հինգերորդն յովսաբատ՝ հարիւր ութսուն հազարաւոր։ Ընդ ամենայն միլիոն մի եւ հարիւր վեթասուն հազար. որք այնպէս բաշխեալ կային յերուսաղէմ, եւ շուրջ զնովաւ, զի միշտ առ ձեռն պատրաստ ունէր զնոսա. առ որոց գումարումն երբ եւ իցէ՝ շատ էր հրամանն մի եւ եթ արքայի։ Իսկ եթէ յայսոսիկ գունդս սպառազինելոց յաւելցին եւ պահակապանք քաղաքաց եւ ամրոցաց, մարթի է ասել թէ ունէր միշտ պատրաստական միլիոն մի եւ հինգ հարիւր հազար զինուորս քաջակիրթս 'ի մարտ։

Զինպէս կայր միշտ զինեալ, որպէս թէ 'ի բազմութիւն զօրաց էր ապաստան. բայց եւ զամենայն յոյս եւ զապաւինութիւն իւր այնպէս խարսխեալ էր յԱծ, որպէս թէ չունէր բնաւ զինուոր եւ ոչ մի. քաջ խելամուտ ելով մեծի ճշմարտութեան՝ ամենայն բազմութիւն քաջակիրթ զօրաց լինել իբրև հօտ մի անզօր ոչխարաց, եթէ 'ի ոնեկ զօրութենէ ոչ խրատ խուսեսցին։ Այլ այնպէս զինեալ կայր, որպէս թէ կամիլ տիրել ողջոյն աշխարհի. այլ ներքին յօժա-

բութեն սրտի նորա միշտ և ամենայն երգ 'ի խաղաղութեն էր հակամէտ։ Ընդ Թագաւորս իսրայէլի, ընդ որս ոչ որ 'ի Թագաւորացն յուդայ արար խաղաղութեն, նա միշտ խաղաղութեն գնաց։ Ինչդեռ ճշմարտութենն այսպէս օր քան զօր ծաղկեալ բարգաւաճէր 'ի Թագաւորութեն յուդայ, ամենարարութենն կռապաշտութեն չարաչար զայրանայր յերկրին իսրայէլի։

Յետ մահու ամրեայ արքայի իսրայէլի՝ յաջորդեալ էր զաթոռ նորա աքաաբ որդի նորա. որ հինգ ամաւք յառաջ քան զմահ հօրն՝ էր ընկալեալ և ծանուցեալ 'ի ժողովրդենէ առ հաւէ՝ Թագաւոր իսրայէլի։ Յովսափատ սկսեալ էր Թագաւորել ինչ մահու հօրն 'ի չորրորդ ամի աքաաբու Թագաւորելոյ առ հաւէ. և սա ինքն աքաաբ եկաց Թագաւոր ինքնիշխան և անկախ ինչ մահու հօրն՝ յամին երկրորդի յովսափատու Թագաւորելոյ նոյնպէս ինչ հօրն։ Աքաաբ որդի ամրեայ ամենարիշտ գտեալ քան զամենայն Թագաւորս իսրայէլի՝ որ յառաջ քան զնա, ոչ շատացաւ զնալ յամենայնի ըստ մեղացն յերոբովամայ որդւոյ Նաբատայ, այլ յաւել 'ի վերայ այնր առնուլ կին զյեզաբել դուստր յովքազայ, կամ Եթբաաղայ սիդոնացւոց արքայի. ընդ որում ածէ 'ի սամարիա 'ի Թագաւորեալ քաղաք իւր և նոր չէած զբահաղ հռչակաւոր դիս սիդոնացւոց. կուռայց նմա մեհեան, կանգնեաց և սեղան, երկիր եպազ անկենդան դրօշելոյն, և եդ զնա 'ի պաշտօն ժողովրդեան իւրոյ իսրայէլի։

Ընդ այն ժամանակս էր յերկրին իսրայէլի եղիա մարգարէն՝ ծնեալ 'ի Թեզբի քաղաք յերկրին գաղաադու յայնկոյս յորդանանու։ Սա վառեալ ճշմարտին նախանձու ընդդէմ անօրէն սեղանաղերծ կռապաշտութեն երկրին իսրայէլի, և կամեցեալ սկսերև ցուցանել զընդունայնութեն կռոց, և զամենակարող զօրութեն ոչ ճշմարտի, եդ հրապարակաւ զաչն ընդ աքաաբու արքայի իսրայէլի, առ որոյ զարձուն եկեալ էր 'ի սամարիա, եթէ ոչ ինչցէ անձրև կամ ցօղ յերկնից, մինչև ինքն խնդ-

բեսցէ յայ իւրմէ. խնդրեսցէ աքսաք որչափ և կամիցի, խնդրեսցեն և ամենայն քուրմք բահաղու, բայց ոչ տեսցեն և ոչ շիթ մի անձրևոյ։ Լ.յսպէս խոստացաւ եղիա, և այսպէս եղև. և ինքն ըստ հրամանի նոցն գնաց և թագեաւ յայրի միում առ հեղեղատաւ քուռաթու. որ ըստ որում ցուցանեն երկրագրութեի մենոքիոսի, որ առաւել քան զայլս համեմատ է պատմութեաց աբ գրոց, իքանէ 'ի լերանց եփրոնի, և գնայ զեղու 'ի յորդանան ոչ կարի բացագոյն 'ի գաղգաղայ։ Հեղեղատն այն մնա տակարարէր ջուր եղիայի. և ածէ պատրաստէր նմա հաշ և ընթրիս, առաքելով 'ի ձեռն ագռաւուց ընդ առաւօտս և ընդ երեկս հաց և միս. այլ թէ ուստի և զիարդ, ոչինչ է հետաքննելի. զի ածէ 'ի հրամայել նոցա պատրաստել կերակուր մարդա բէին, եցոյց և զհացանոցն, և զկրպակ մնալա հառաց, ուսոյց և զյեղանակ յափշտակելոյ՝ առ կա տարու

ասաց առնել անտի փոքրիկ նկանակ մի նախ ինքեան, և ապա արասցես ասէ քեզ և մանկանդ. զի այսպէս ասէ Տէր Աստծ Իսրայէլի, սափոր ալերն մի պակասեսցի, և կամիսակ իւղոյն մի նուազեսցէ, մինչև յօր տալոյ Տէն անձրև 'ի վերայ երեսաց երկրի։ Հաւատաց կինն, և տարեալ 'ի տունն իւր զմարգարէն, արար ըստ բանի նորա. և կերաւ սա և նա, և այլ ոք որ կայր 'ի տան նորա. և այնուհետև ոչ ալիւրն և ոչ իւղն պակասեցաւ։

Լնդ նստաւ եղեալ առ ժամանակ մի. այլ ուրախութիւն տանն փութով փոխեցաւ 'ի տրտմութիւն. քանզի որդի կնոջ տանն հիւանդացաւ, և ինքն էր այրի. և 'ի զօրանալ ախտին՝ մեռաւ մանուկն։ Յաւագին մայրն 'ի սուգ ըմբռնեալ՝ ոչ կարէր մխիթարել զանձն, զմահ որդւոյն համարելով պատիժ մեղաց իւրոց, որպէս թէ ծանրութիւն նոցա յայտնեցաւ առ սրբութիւն առն Աստ. վասն այնորիկ ասաց, մտեր առ իս այրդ Աստ յիշատակել զանօրէնութիւս իմ. իբր ասել, թուէր թէ Աստ անտես արարեալ իցէ զանօրէնութիւս իմ. այլ առ սրբութեամբ քով յիշեցաւ ծանրութիւն նոցա. նմին իրի և պատիժն եհաս 'ի վերայ իմ։ Լ.Յլ տրտմութիւնն դարձեալ արագ փոխեցաւ յուրախութիւն. զի առեալ մարգարէին զդի մանկանն 'ի գրկաց վշտահար մօրն, և հանեալ գնա 'ի վերնատունն, ուր ինքն նստեր, եդ 'ի վերայ մահճաց իւրոյ. և փչեալ երիցս 'ի մանուկն՝ խնդրեաց յՏէ դարձուցանել 'ի նա զշունչ նորա. և առժամայն յարեաւ մանուկն. և դարձոյց գնա կենդանի առ մայր նորա։ Յայնժամ կինն ի ցնծութիւն ասէ. * Լ.հա արդ գիտացի, եթէ այր Աստ ես դու. և բան Տէն ճշմարիտ է 'ի բերան քո ॥։ Լստաւ եղեալ 'ի տան անդ՝ մինչև գրեթէ ցվերջ երրորդ ամի սովուն։

Լ.քաաբու չէր այնչափ ինչ փոյթ վասն պակասութիւն կերակրոյ ժողովրդեան. քանզի սեղանք իշխանաց սովորաբար ոչ առնուն զչափ չքաւորութիւն՝ յորմէ տառապի ժողովուրդն։ Լ.Յլ փոյթ մեծ էր նմա յաղագս երիվարաց և ջորւոց իւրոց։ Կայր

յանհոգս ընդ սովալլուկ լինել ժողովրդեան, այլ հոգայր և տագնապեր մեծապէս գտանել բուռ իւրոց երիվարաց։ Եւ կարէր հաւատալ թէ ամենայն մարդք և ջրարբիք իցեն խսպառ չորացեալ, և ամենայն գետք և հեղեղատք այնպէս ցամաքեալ, մինչև չգտանիլ ուրեք դէթ յեղեբս նոցա գալար խոտոյ։ Համարէր խաբէութիւն պաշտօնէից կուրացելոց կաշառանօք 'ի տեարց տեղեացն՝ զհամբաւն, զոր բերէին նմա՝ թէ չիք ուրեք դեղ գալար։ Եւնէր աքսաբ առ իւր իբրև հաղարապետ արքունեաց զայր մի կոչեցեալ աբդիու, նմա միայն հաւատայր. և արդարև կարէր հաւատալ անեբկեան, զի որպէս հաւատարիմ էր նա առ ոճ իւր, հաւատարիմ էր և առ թագաւորն թէպէտ ամենեցի և անհաւատ. զի այս երկու հաւատարմութիւնքն անանջատ են 'ի միմեանց։ Զասն որոյ առեալ աբաւքու ընդ իւր զաբդիու, եւ անձամբ շրջել ընդ երկիր թագաւորութեան իւրոյ առ ամենայն աղբերքք ջրոց, և առ հեղեղատաք. թերևս ասէ գտցուք խոտ, և ապրեցուսցուք զձիս և զջորիս. և արձակեաց զաբդիու միայն երթալ 'ի մի կողմն, և ինքն միայն գնաց յայլ կողմն։ Զոյն ինչ երթայր աբդիու զճանապարհ իւր, ահա արտաքոյ ամենայն ակնկալութեան՝ եւ ընդառաջ նորա եղիս. ճանապարեաց աբդիու անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, և ասէ, եթէ դո՞ւ իցես տէր իմ եղիա. ասէ եղիա, ես եմ։ Զոր պատուիրեաց նմա երթալ ազդ առնել աբքայի տէն իւրոյ, թէ ահաւասիկ յայտնեցաւ եղիա, և կամի խօսել ընդ քեզ։ Զոր ճանաչէր աբդիու զեղիա, բայց այս հրամանն նորա խուսափեցոյց յոյժ զսիրտ նորա. վասն որոյ ասէ զի՞նչ մեղայ, զի մատնես զծառայ քո 'ի ձեռս աքսաբու սպանանել զիս։ Զհա ոչ երթոց նա տեղն ոչ միայն յերկրի իւրում, այլև յօտար թագաւորութիւս, ուր ոչ առաքեաց խնդրել զքեզ. և յասել յամենայն տեղիս թէ ոչ է աստ, այրեաց (կամ ըստ վուլկադային, ասորւոյն, և արաբացւոյն՝ համեմատ եբրայականին՝ երդմնեցոյց) զթագաւորութիւս և

զաշխարհս՝ ասել զՀնմարիան։ Եւ արդ դու կա-
միս, զի ես տարայց զայս լուր ՝ն իմում՝ թէ ահա-
ւասիկ ասա է եղիա. և հոգի ՝ն առնուցու զքեզ
և փոխեսցէ այլուր. և ՝ի չգտանելդ նորա զքեզ,
ես սուտ գտայց առաջի նորա. և զամենայն ցա-
ւումն զոր ունի առ քեզ, ՝ի գլուխ իմ թափեսցէ։

Զկնի արդիւ այր, որոյ կենդանի սակս թեթև
ինչ իրաց արկցի ՝ի վտանգ մահու. քանզի թէպէտ
առ դժբախտութիւն իւրում ծնաւ ՝ի կռապարիչտ
թագաւորութիւն, ուր յամենայն քայլս տարց լինէր
պատահել կռոց, բայց նա ոչ երբէք և ոչ ուրեք
կրկնեաց ծունր՝ ոչ բահաղու և ոչ այլոց կռոց իւ-
րոց հայրենեաց, ՝ի մանկութիւն կրելով միշտ զեր-
կիւղ ՝ն ՝ի սրտի։ Եմուտ յարքունիս ամենարիչտ
արքայի. յարգոյ և պատուական եղև նաև յաչս
անօրինաց վասն անստգտանելի բարեբաղութեան
վարուց իւրոց, և անկեղծութիւն սրտի։ Օրերևելի
մասն թագաւորին զոր ունէր յարքունեստս, և իւրոց
սեպհական ընչից, ծախէր ՝ի ժամանակս այնր
սաստիկ սովոյ ՝ի կերակրել հարիւր այր ՝ի մարգա-
րէից անտի ՝ն. զորս թաքոյց յերկուս քարանձաւս
յիսուն յիսուն յերկաքանչիւր անձաւի, զերծու-
ցեալ զնոսա ՝ի ձեռաց յեզաբելայ ՝ի կոտորել նո-
րա զմարգարէս ՝ն, առ իսպառ անհետ առնելոյ
յերկրէն Իսրայէլի զՀնմարիտ կրօն ՝ն ծածպաշտութիւն,
որում էին նոքա նեցուկ հաստատուն յերկրի անդ
անհաւատութիւն։ Եւ այսչափ ողորմած, և այս-
պիսի ՝ն ծածպաշտ՝ արժան էր զի պահեսցի և կեցցէ
անվնաս. վասն այնորիկ և եղիա ոչ կամեցաւ ար-
կանել զնա ՝ի վտանգ կենաց։ Զնա՝ ասէ և պատ-
մեա աքաաբու զոր ինչ ասացի քեզ. զի կենդանի է
՝ն զօրութեամբ, որոյ կացի առաջի նորա, այսօր
երևեցայց նմա։

Եւ գթացեալ ՝ի ժողովուրդ երկրին վասն իւ-
րոց ծառայից, որք գտանէին ՝ի ծածուկ ՝ի բաղ-
մութիւն անդ անօրինաց, կամէր տալ անձրև և աբ-
գասաւորութիւն երկրի. բայց կամէր՝ զի աքաաբ ծա-
նիցէ զայն՝ լինել պատուղ աղօթից եղիայի. և տես-

ցէ աչօք յամօթ և 'ի նախատինս ամենայն սուտ մարդարէից իւրոց, զի պահէ զխոստումն իւրոյ ծառայի։ Զայն այսորիկ 'ի վախճան ամին երրորդի երաշտութեան պատուիրեաց եղիսյի, զի ելեալ 'ի սարեբթայ՝ երթիցէ երևեսցի աքաաբու 'ի սամարիա։ Զարձաւ սրդիու, և գնացեալ պատմեաց աքաբայի, իսկ աքաբայ ընթացաւ և գնաց վաղվաղակի ընդառաջ եղիսյի, ուր 'ի պատուել գնա, այլ յանժուժութեի և 'ի կատաղութեի սրտին տեսանելոյ գնա. որում ընդ այնչափ ժամանակս, և յայնչափ տեղիս յուզանդիր եղև, և ոչ եդիտ. միանգամայն և 'ի հարկաւորութեի ստիպեալ խօսել ընդ նմա, զի վերջ լիցի միանգամ անվերջանալի պատուհասին։ Զոչ զոր եւտուն 'ի հանդիպումն միմեանց, նորանշան ինն եղև։ Զբայն նախ խօսեցաւ դառնացեալ դիմաք և լի նախատանաք, և ասէ ցեղնա եթէ դու իցես խանգարիչն, որ լցեր խռովութք զիսրայէլ։ Զոտ պատասխանի եղիա աներկիւղ հանդգնակութեք. ես ոչ խանգարեմ զիսրայէլ, այլ դու սեղանագերծ աքաբայդ և տուն հօր քո ածէք զվերջին կործանումն 'ի վերայ իսրայէլի. դուք թողեալ զօրէնս տեն ՝ոյ ձերոյ՝ գնացիք զհետ բահաղիմայց. ահա այս է Ճշմարիտ պատճառն խռովութեի և ամենայն թշուառութեի իսրայէլի։ Զու արդ՝ առաքեա և ժողովեա առ իս զամենայն իսրայէլ 'ի լեառն կարմելոս. գումարեսցին անդ և չորեքհարիւր և յիսուն մարգարէք ամօթոյ, որք 'ի սամարիա ծառայեն բահաղու. և այլ չորեքհարիւր պատուեալք յեզեբելայ՝ որ ուտեն զսեղանն նորա, և կան 'ի լերինս և յանտառս 'ի պաշտոն նորին անկենդան բահաղու. և յայնժամ խօսեսցուք վասն խնդրելոյ անձրև յերկնից։ Զայս ասաց եղիա, և խոյս եւտ 'ի լեառն կարմելոս։

Զու այս բան եղիայի գժգոհեցաւ աքաաբ. զի կարի ծանր է առն թագաւորի առնուլ օրէնս 'ի հպատակէ իւրմէ. և մանաւանդ շարժել զամենայն երկիրն և առնել հանրական ժողով արտաքոյ սովորութեի, վասն զի այնպէս կամի այր մի տառապեալ։

Իսկ սահմանել նորա և զտեղի ժողովոյն, և պնդել զի գումարեսցին անդ և մարգարէքն պաշտպանեալք 'ի թագուհւոյն, այս անբերելի թուէր։ Լ.յսպիսի խորհուրդք յամեցուցին զաքաւք 'ի կատարել զաւաջարկութի մարգարէին, որով և երաշտութիւն և սովն որ ունէր վնարիլ յերրորդ ամի, որպէս ունիմք 'ի գիրս երրորդ թագաւորաց ԺՇ. 1. "Լ.ՒԲան ոմն եղև առ եղիա յամին երրորդի, և ասէ երթ երևեաց աքաաբու. և տաց անձրև 'ի վերայ երեսաց երկրի". երկարեաց այլևս ամիսս վեց ցկէս չորրորդ ամին, և զայս ունիմք 'ի ծրյն յակոբայ առաքելոյ. Ե. 17. զի ասէ. "Լ.Ի յաղօթս եկաց (եղիա), և ոչ տեղայ յերկիր զերիս ամն և զվեց ամիս"։ Լ.Յլ ստիպողական կարօտութիւնք բազում անգամ խոնարհեցուցանէն զգոյշութիւն ևս և մեծամեծաց. հարկ է զի հնազանդեսցին 'ի դիպուածս, յորս ոչինչ զօրէ իշխանութի և հրաման իւրեանց 'ի փրկուի անձանց. մի միայն ամենակալին է՝ ոչինչ երբէք բռնութի կրել, չունելով 'ի վերայ իւր զօրութի բարձրագոյն։

Լ.քաաբ իբրև ետես՝ զի ոչ վերանայ պատուհասն յերկրէ իւրմէ, մինչև ոչ կատարեսցին կամք եղիայի, զիջաւ խոնարհեցաւ, և առաքեաց պատուէր ընդ ամենայն իսրայէլ. և ժողովեաց զամենայն աւագանի երկրին, ընդ նոսին և զամենայն բահաղապաշտ սուտ մարգարէս 'ի լեառնն կարմելոս։ Լ.Ընդ խօսեցաւ եղիա ազգու բանիւք՝ 'ի դարձուցանել զամենեսին 'ի պաշտօն ճշմարտի, մինչև ցերբ ասէ կաղայք յերկուս հետս. եթէ տէր է ած, երթայք զհետ նորա. և եթէ բահաղն իցէ, երթայք զհետ նորա։ Լ.Յլ տեսեալ, զի անպատասխանի մնացին, և բանք իւր անպտուղ երևէին, արար նոցա առաջարկութի հարկեցուցիչ. յորմէ ունիցին աչօք տեսանել՝ թէ ո՞ իցէ պաշտելի. բահաղ, եթէ ած հարցն իւրեանց։ Լ.Հա ասէ ես մնացեալ եմ միայն մարգարէ տն. իսկ մարգարէք բահաղու ութհարիւր և յիսուն. տացին մեզ երկու եզինք. ընտրեսցեն նոքա զմին, և յօշեսցեն և դի-

ցեն 'ի սեղանն բահաղու 'ի վերայ փայտից. և հուր մի մատուսցեն. և ես նոյնպէս արարից զմիւս եղն։ Լոյս խնդրեացուք ես և նոքա հուր յերկնից. եթէ բահաղ լուեալ աղաչանաց պաշտօնեից իւրոց, առաքեսցէ բոց հրոյ, պաշտեսցիք զնա, և ծանիցիք կարող կատարել զխնդրուածս ձեր. իսկ եթէ ոչն իմ տացէ հուր, և յանձիւն դարձուսցէ զողջակէզն իմ, զնա ծանիցիք ճշմարիտ ոչ իսրայէլի։ Հաճեցաւ ժողովն ընդ առաջարկութիւն. և բահաղնմայց վիճակեցաւ ըստ բանի եղիայ՝ առնել յառաջագոյն, զի նոքա բազում էին։

Յայնժամ մարգարէքն ամենայն յանդիման առմենայն ժողովրդեան զենին զեզն, զոր ինքեանք ընտրեցին. յօշեցին զնա և հանին 'ի սեղան 'ի վերայ փայտից, և սկսան կարդալ զանուն բահաղու։ Ի մենայն ժողովուրդն կայր յակնիռս, ոմանք 'ի վեր հայեին տեսանել զիջուն հրոյն. այլք 'ի խոնարհ, սկսուսնելով թէ գուցէ յերկրէ 'ի վեր ցոլանայցէ բոցն. բայց ոչ յերկնից և ոչ յերկրէ երևէր ցայտումն հրոյ։ Իսկ յիմարեալ մարգարէքն յայգուն մինչև ցօր հասարակ աստ անդ ընթանային շուրջ զսեղանովն. ընդոստնուին 'ի վեր և 'ի վայր, գոչէին մեծաձայն կարդալով զանուն բահաղու. լուր մեղ բահաղ, լուր մեզ. այլ բահաղ ոչ տայր պատասխանի։ Ի պա 'ի հասանել միջօրէի, սկսաւ եղիա այպանել զնոսա. բարձրացուցէք ասէ զբարբառ ձեր, զի ա՞ղ է, թերևս զբաղեալ իցէ 'ի կենակցութիւն ընդ ոմանց. կամ երթեալ իցէ ուրեք 'ի գիներբուս, կամ 'ի ճանապարհի իցէ, և կամ 'ի քուն, և յառնիցէ։ Կերկերեալ էին կսկորդք եղկելեւայն առ անդադար աղաղակելոյ, սակայն և այնպէս բուռն առնէին անձանց 'ի սատակացուցանել ըղձայնս. և առ 'ի գթութիւն շարժելոյ զանշարժելին բահաղ, ցտէին սրով և գեղարդեամբ զմարմինս իւրեանց, հոսէր արիւնն, բայց ոչ գոյր ձայն և ոչ հուր երևէր։ Ի նց միջօրէն, մերձեցաւ երեկոյն. և նոքա խոնջք և վաստակաբեկք յայնչափ աղաղակելոյ, և լուծեալ լքեալ յինքնահարուած խոշ-

տանկանաց. և Ժողովուրդն տաղտկացեալ յերկարաժամ սպասելոյ վայրապար, առհասարակ դարձուցին զաչս առ Եղիա՝ տեսանել զկատարած գործոյ նորա։ Յայնժամ յառաջ մատուցեալ Եղիայի՝ 'ի բաց մերժեաց զմարգարէին զարշելեաց. կուչեաց առ ինքն զամենայն Ժողովուրդն, կանգնեաց զսեղանն որ զկործանեալն յառաջագոյն՝ երկոտասան քարամբք ըստ թուոյ ցեղիցն Իսրայելի. և ետ հատանել շուրջ զսեղանոյն խրամ՝ ակօսաձև. և զչերտս փայտից եդ 'ի վերայ սեղանոյն, և զոզաջակէզն 'ի վերայ նոցա. և ասաց հեղուլ չորս սափոր ջրոց 'ի վերայ ողջակիզին, և 'ի վերայ շերտից փայտին. զոր ետ կրկնել երիցս, մինչև զհեղուլ ջրոյն 'ի սեղանոյ անտի, և լնուլ զշրջապատ փոսն. որպէս զի յայտնի լիցի՝ թէ ոչինչ ջերմութիւն հրոյ կայ անդ, այլ բոլորովին խնամուն, և այսպէս քաջայայտ լինիցի նշանն՝ զոր առնելոց էր տերամբ։

Յայնժամ մերձեցեալ Եղիայի 'ի սեղան անդր, և հայեցեալ յերկինս, ասաց 'ի ձայն բարձր. Տէր Աստուած Աբրահամու Իսահակայ և Իսրայելի՝ ցոյց այսօր, եթէ դու ես Աստուածն Իսրայելի. և թէ ես ծառայ քո արարի զգործս զայսոսիկ ըստ քումդ հրամանի։ Լուր ինձ Տէր, լուր ինձ հրով, զի ծանիցէ Ժողովուրդս՝ եթէ դու ես Տէր Աստուածն. և այս Եղիայի նոր աքանչելիք՝ զոր արասցես դարձեալ 'ի դարձուցանել զսիրտս Ժողովրդեանս։ Ապա հարկ կրկնել Եղիայի զինդրուածս. զի ահա նոյնհետայն էջ հուր բորբոքեալ յերկնից, և եկեր և սպառեաց ոչ միայն զողջակէզն և զփայտս, այլև զքարինս իսկ սեղանոյն 'ի մէջիր դաշտոյդ, և զմէջիրն և զջուրն որ 'ի փոս անդր՝ լափեաց հուրն։ Օ այս հրաշալի աքանչելիս Իբրև ետես ամենայն Ժողովուրդն, անկան 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր, աղաղակելով, * արդարև Տէր նա է Աստուած. Տէր նա է Աստուած։ Յայս նոր եռանդն Ժողովրդեան վստահացեալ Եղիայի 'ի պատուհասել զԹշնամիս Տէրն, հրամայեաց ուռնել զամենայն սուտ մարգարէսն բահաղու, և չթողուլ 'ի ձեռաց և ոչ զմի 'ի

նոցանէ՝ զի փախիցէ. և դատաւորական իշխանութիւն, զոր յայս գործ ունէր առ յոյ, հրաման էտ իջուցանել զնոսա 'ի մերձակայ հեղեղատն կիսոսի. և անդ կոտորել զամենեսին։ Կատարեցաւ դատաստանքն նոցա, զոր կամէր ոմն յառաջ քան զտալ անձրև 'ի վերայ երկրի։ Եւ ասաց Եղիա ցաքսաբ՝ փութանակի դառնալ 'ի խորանն իւր ուտել և ըմպել զի մնա 'ի վերայ կայ անձրև յորդահոս։ Եմուտ աքսաբ 'ի խորան իւր. իսկ Եղիա ել 'ի գլուխ կարմելայ, և ծունր եդեալ, և 'ի խոր խոնարհեալ՝ մինչև զերեսս իւր դնել 'ի մէջ ծնգաց իւրոց, խնդրէր 'ի Տէրնէ անձրև. Եօթն անգամ կրկնեաց զաղօթսն. զի Եօթն անդամ ասաց ցպատանեակն իւր Ելանել Հայել յերկիրս 'ի ծովակողմն. և միշտ առնոյր պատասխանի, թէ չտեսանէ բնաւ նշան ինչ ամպոյ։ Իսկ յԵօթնեորդումն նուազի ասաց պատանին թէ տեսանէ Ելանել 'ի ծովէ ամպ մի փոքրիկ՝ երևեալ ասաց ոչինչ մեծագոյն քան զԹաթ ձեռին մարդոյ։ Յայնժամ ստիպաւ առաքեաց Եղիա զպատանեակն՝ փութացուցանել զաքսաբ լծել վաղվաղակի զկառս և երթալ, զի մի ըմբռնեսցի յանձրևոյ։ Վասն պատգամաւորն, և ինքն Եղիա նոյնժամայն անկաւ 'ի ձանապարհ հետի՝ նոր զօրուն ընկալեալ 'ի ձեռն։ Զինչ այս մինչ այն՝ ուր լինէր աքսաբու պատրաստել զերիվարս, և լծել, և նստել 'ի կառս, երկինք մթացան ամպովք, և եղ հողմն. և այն ինչ երթայր թագաւորն՝ արձակերասան թողեալ զերիվարս, ամպ 'ի յամպ յաւելեալ և թանձրացեալ զօրանայր. հաղիւ հասս յեզրայել, և ահա տարափ յորդահեղեղ. այլ Եղիա յառաջ քան զնա հասեալ էր անդ՝ թէպէտ հետիոտս ընթանալով, զի որ զբացոյց զնա։

Երևէր թէ զկնի այսչափ աքանչելեաց ունէր Եղիա տիրել 'ի վերայ սրտին աքսաբու, կամ գէթ 'ի մեծի պատուի լինել առաջի նորա. այլ այս ոչ յաջողեցաւ։ Վասնզի յեզաբէլ կին նորա իմացեալ 'ի նմանէ զամենայն զոր արար Եղիա, և որպէս սատրեաց զմարգարէս բահաղու 'ի հեղեղատին կի-

սնի, կատաղեցաւ 'ի սատիկ սրտմտութենէն. և իսկ և իսկ առաքեաց պատգամաւոր առ Եղիա՝ ասել ցնա 'ի դիմաց իւրոց. Եթէ դու Եղիա իցես՝ և ես յերազաբեալ օն և ես արասցեն ինձ աստուածքն՝ և ես և ես յաւելցեն, Եթէ ոչ վաղիւ 'ի սոյն ժամու եդից զանձն քո իբրև զանձն միոյ 'ի նոցանէ։ Եւ Թուի հաւանելի, Թէ 'ի ժամուն յերազաբեալ ճշմարտութիւն կամեցեալ իցէ սպանանել զեղիա. սակայն Թէ ոչ՝ փոխանակ կանխաւ ազդ առնելոյ նմա զչար կամն իւր, և այնու տալոյ նմա դիպողութիւն խոյս տալոյ 'ի ձեռաց նորա, դահիճն առաքեալ էր անդէն սպանանել զնա, կամ 'ի կալանս դնել։ Յ՚յո՝ Թէնամի էր նա Եղիայի, և կամէր զնի մեռցի. այլ չէր 'ի դէպ իւրոց կամաց կատարման ժամանակն. յորում զկնի երկուց նոր մեծամեծ սքանչելեաց, զառաւել մասն ժողովրդեան յիւր կոչին ուներ Եղիա. ուստի և վասնզ մեծ էր նմա նոր ապստամբութիւն տեսանել 'ի սամարիա. և զժողովրդն 'ի զէն վառեալ ընդդէմ անձին իւրոյ։ Յ՚ու ժամն շատ էր նմա զի հեռասցի Եղիա, առ 'ի չյաւելուլ և ես զկոչին իւր, և առ չշահելոյ խոպառ զսիրտ արքայի, որ յետ տեսանելոյ զսքանչելագործութիւնս նորա՝ սկսեալ էր կակղանալ և յոժարիլ առ նա։ Եւ ահա այս յաջողեցաւ յերազաբելոյ. քանզի Թոյլ ետ ՝ուծ իւրումն քաջասիրտ ծառայի, որ ոչինչ էր. կեաւ յերեսաց ցասուցեալ արքայի, զարհուրիլ 'ի սպառնալեաց կնոջ, և անկանել փախստական ուր և դիպէսցի։

Եւ Եղիա յերկրէն խրայելի, և անցեալ ընդ ամենայն երկիրն յուդայ՝ եկաս 'ի ծագ սահմանաց նորա 'ի բերսաբեէ։ Յ՚ոդ՝ արձակեալ յիւրմէ զպատանեակն իւր, ինքն գնաց միայն ընդ օր մի ողջոյն յանապատն ուր խոնջ և վաստակ և տրտմութիւն պաշարեալ, նստաւ ընդ բեւեկնեաւ. և տաղտկացեալ 'ի կենաց՝ խնդրեաց 'ի ՝ուծ առնուլ զոգի նորա. և յաշխատութիւնէ միանգամայն և 'ի տրտմութենէ սրտին եմուտ 'ի քուն, և ննջեաց ընդ ծառով։ Յ՚յՀ՝ուծ կամէր և ես 'ի կիր առնուլ զծառայն իւր

հաւատարիմ առ այլ ևս գործս կարևորս. վասն որոյ առաքեաց զՀրեշտակ իւր, որպէս եկեալ խնդեաց զնա յառնել և առնուլ կերակուր. զարթեաւ Եղիա, և ետես 'ի մնարից իւրոց նկսնակ հաձարոյ, և կուժ ջրոյ, զոր հրեշտակն երեր նմա. յարեաւ եկեր և արբ. այլ վաստակեալ էր յոյժ, և նեղսրտութիւն նորա մեծ, յաղթեցաւ 'ի քնոյ և դարձեալ ննջեաց։ Այսպա երկրորդ անգամ երևեալ հրեշտակն զարթոյց զնա, և քաջալերեաց ուտել և զօրանալ, զի դեռևս առաջի կայ քեզ ասէ բազում ճանապարհ հատանել. եկեր և արբ, և գնաց զօրութեամբ հրաշակաւն կերակրոյն այնորիկ՝ ընդ այն անապատ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. մինչև եհաս 'ի լեառն Յ 'ի քորեբ. և դտեալ անդ քարանձաւ մի՝ արար զայն իւր տուն. և նստաւ անդ։

ԳԼ. ԺԵ.

Այսաբ Երիէցս հարիանէ զասորիս 'ի հարուածս սասրէս։ Այդրեցուցանէ զորդին ադերայ ընդդէմ հրամանին աց, որ պուսաա նմա 'ի յԵռն մարգարէին։

Զայսու ժամանակաւ կայր աքաաբ 'ի սամարիա 'ի մեծի անձկութեան։ Այանզի որդին ադերայ արքայ ասորւոց՝ գիտելով, զի յետ երեքամեան սովոյ ոչ կարէր սամարիա քաղաք ունել համբար կերակրոյ բաւական առ երկար ժամանակ, վասն այսորիկ զայն դիպօղ ժամանակ վարկաւ պաշարել զնա և առնուլ։ Այնաց՝ զի զկնի անձրևաց դալաբասցին դաշտագետինք. և յորժամ ետես զի դաշտք էին բաւական տալ զկարևոր բուսս իւրոց երիվարաց, եհան զբանակ իւր։ Այյլ նախ առաքեաց

հրեշտակս առ աբբասբ՝ ասել ցնա 'ի դիմաց իւրոց. արծաթի քո և ոսկի քո իմ է. և կանայք քո և որդիք քո գերեցիք իմ են։ Աբբասբ համարելով զբան նորա մեծաբանութիւն ինն 'ի կորզել 'ի նմանէ հարուստ պարգևս ինչ՝ քան թէ առնել պատերազմ, արար նմա պատասխանի ցածութիւն. ասելով՝ որպէս խօսեցար տէր իմ աբբայ, քո եմ ես, և ամենայն ինչք իմ են ընդ քոյին հրամանատրութեամբ։

Աբբայ յետոյ ծանեալ՝ զի ճշմարտութիւն ասէր. քանզի դարձեալ հրեշտակաց 'ի բանակէն՝ ասացին նմա 'ի դիմաց որդւոյն ադերայ ասորւոց աբբայի, 'ի վաղիւ 'ի սոյն ժամու առաքեցից զծառայս իմ, և յուզեսցեն զտուն քո և զտունս ծառայից քոց, և զամենայն զոր ինչ գտցեն և հաճեսցին, առնուցուն։ Աբբայ մանրմտելով պահանջմանն անդիմադարձ հաւանիլ՝ ոչ այլ ինչ էր, քան թէ յառաջ քան զսկիզբն մարտի՝ ինքնին բանալ զդուռն քաղաքին, և մատնել զնա յաւար թշնամւոյն։ Կոչեաց աբբայ զամենայն ծերակոյտ երիցին, և առաջի աբար նոցա զպահանջողութիւն աբբային ասորւոց. առ որ ամենեքեան ընդ մի բերան ասացին չլսել և չառնուլ յանձն զայն խայտառակ պայմանագրութիւն առանց պատերազմի։ Այս ընտրեցին այնու խօրհրդով, զի թէև նկուն լինիցին առաջի թշնամեաց, որոց բազում էր զօրութիւն յոյժ, և ոչ կարասցեն տալրեցուցանել զինչս, սակայն գէթ զանուն և զպատիւ իւրեանց մարթասցին պահել առաջի ժողովրդեան, և առաջի արտաքին թագաւորաց։ Աբբայ ըստ այսմ խորհրդոյ՝ դարձոյց զհրեշտակս համեստ պատասխանեալ՝ ասելով, եթէ տէր ձեր աբբայ կամիցի շատանալ չափաւոր լմն արքայ ոսկւոյ և արծաթոյ, և զբանակ իւր հեռացուցանել, պատրաստ է և արքայն խորհելի կատարել զպատուէր նորա։ Այս եթէ առաւել ինչ խնդրի՝ մնասցէ առնուլ զայն, յորժամ պատառեսցէ զպատուար քաղաքիս, և ասորիք լինիցին 'ի վերայ պարսպաց նորա։

Որդին ադերայ հաւաստի էր, թէ սամարիա առ նուազութիւն համբարաց, ոչ կարէր երկար տուկալ պաշարման. գիտէր և զայն թէ բազումք յիսրայէլացւոց անցին յերկիրն յուդայ յաղագս կրօնի ճշմարտութիւն. շատք ևս սիռեցան յայլ և այլ օտար թագաւորութիւնս յերեքամեան սովուն՝ գտանել կերակուր. ուստի և ոչ կարէր աբսաբ գունդ կազմել բաւական 'ի պաշտպանութիւն սամարիայ քաղաքին ընդդէմ ահեղ զօրութիւն իւրոյ։ Այսն որոյ ակնունելով առանց պատերազմի աւար առնուլ զքաղաքն, առաքեաց երրորդ անգամ հրեշտակս՝ պատուիրելով նոցա բարձրացուցանել զբարբառ սպառնալեաց. զի գիտասցէ և ծանիցէ արքայն իսրայէլի, թէ այնչափ են զօրք արքային ասորւոց, զի թէ կամիցի հողակոյտ պատուար կանգնել զսամարեաւ, ոչ բաւեսցէ հող նորա, թէ և իւրաքանչիւր 'ի զօրաց նորա լոկ հետևակաց՝ բռամբ չափ առնուցու։ Կամ այսպէս ասել՝ ոչ բաւեսցէ հող երկրին սամարիայ տանել լոկ զգունդս հետևակաց նորա, թող զհեծեալս և զջաղմութիւն կառաց։

Լ. քաւաբ դժուարեալ ընդ այսպիսի տարապայմանն մեծաբանութիւն որդւոյն ադերայ, արձակեաց զհրեշտակսն արհամարհանօք շատ է արդ՝ ասէ. մի պարծեսցի կորն իբրև զուղիղն. իբր ասել՝ չունին ինչ պարծել ոչ հղօրն և ոչ տկարն, մինչև իցեն մոեալ 'ի փորձ. պարտ է նախ մարտնչել, և ապա երգել զյաղթանակ։ Այ պատմէ գիրն զթիւ զօրուն ասորւոց. այլ յայտ է թէ բազում էր յոյժ. թող զզօրս երեսուն և երկու թագաւորաց միաբանելոց ընդ նոսա. որք անձամբ առաջնորդէին անցնիւր զնդի իւրում։ Որքա թէպէտ թագաւորք կոչին, այլ իրօք ոչ այլ ինչ էին, քան թէ մի մի ինքնագլուխ իշխանք փոքրիկ գաւառաց, ունելով մի, կամ երկու և երիս քաղաքս հանդերձ շրջակայ գիւղօրէիւք. և ամենեքեան էին կարգեալ 'ի զինուորութիւն, և թագաւորն զօրագլուխ նոցա։ Իբրև լուաւ արքայն ասորւոց զվերջին պատասխանն արքային իսրայէլի, և էր ինքն յայնժամ 'ի գինւոջ ընդ

դաշնակից Թագաւորն յարքունի խորանս իւր, Հրաման ետ վաղվաղակի յառաջ խաղալ զօրաց իւրոց, և շինել պատնէշ շուրջ զքաղաքաւն։

Այսմ անձկութեամբ պահու՝ ետես աքաաբ զարդիւնս գործոց ինչ բարեպաշտութեանն, որով սուղ ինչ յառաջ փառաւորեաց զնոսա 'ի կարմելս լերին, տալով հաւանութեան եղիայի կոտորել զամենարիշտ քուրմս բահաղու, և բազմաց 'ի ժողովրդենէ իւրմէ դառնալ առ Աշմարիտն ճշմարիտ հարց իւրեանց։ Բանզի այն ինչ կայր արքայն 'ի բարձր զիտանոցի, և հայեցեալ տեսանէր լի դողութեամբ զանհամար զօրս թշնամւոյն 'ի գունդս գունդս սփռիլ շուրջ զքաղաքաւն, և կանգնել պատնէշ աներկիւղ հաւատարակութեամբ. (զի չունէր ինքն զօրս բաւական առ 'ի զդէմ ունել նոցա, և խոփանել 'ի գործոյն.) ահա յանկարծակի եկն եկաց առաջի նորա մարգարէ ոմն ոմն, և ասէ ցնա. տեսանես զայն ամբոխս մեծ և ահարկու. բայց մի ինչ երկնչիցիս, զի այսպէս ասէ տէր. ահա ես մատնեցից զնոսա այսօր 'ի ձեռս քո, զի գիտասցես թէ ես եմ տէր զօրութեանց և թագաւորութեանց։ Ասէ արքայ. ի՞նչ կամ 'ի ձեռն որոց. ասէ մարգարէն. 'ի ձեռն ծառայից գաւառակալ իշխանաց՝ որք գտանին 'ի քաղաքիս յայսմիկ. ասէ արքայ. և ո՞նախ գրգռեսցէ զպատերազմն. ասէ մարգարէն. դու, անձամբ առաջնորդելով նոցա։

Հրաման ետ արքայ հանդէս առնել ծառայից իշխանաց գաւառացն. և գտան երկերիւր և երեսուն. և հանդէս արարեալ և զօրաց՝ եգիտ զի էին իբրև եօթն հազար։ Ապա զմիջօրեայ ելին նախ ծառայք իշխանացն. զորս տեսեալ ասորւոց՝ ազդարարին արքայի իւրեանց որդւոյն ադերայ. և զի ընդ գինի մնեալ էր և արբեալ՝ ինքն և երեսուն և երկու թագաւորքն օգնականք նորա, պարզաբար հրաման ետ, զի եթէ ելանիցեն խօսել 'ի խաղաղութեամբ և եթէ 'ի պատերազմել, ըմբռնեսցեն զնոսա կենդանիս, և ածցեն 'ի խորանն առաջի իւր։ Բայց ծառայք աքաաբու քանզի ոչ կամէին լինել

անձնատուը 'ի գերութիւն և 'ի շղթայս օտարաց, պատերազմեցան անխորտակելի արութիւն, մինչ զի զամենայն որք միանգամ իշխեցին ընդդէմ կալ նոցա՝ տապաստ արկին 'ի գետին առ ոտիւք իւրեանց։ Իսկ աբաւաբ անձամբ յարձակեցաւ 'ի վերայ հեծելազօրուն, և վերբ 'ի վայր արար զամենայն քառնակ նոցա. և եօթն հազար զօրաւորք խորայելի զհետ մտեալ փախստականաց՝ հարկանելով և կոտորելով՝ լցին զամենայն վայրս դիակամբք թշնամեաց։ Այնչափ մեծ եղև կոտորած ասորւոց, զի ոչ արկան 'ի թիւ դիակունք մեռելոց նոցա. այսչափ ինչ և եթէ ասէ դիրն. * Եւ եհար (աբաւաբ) յասորւոց հարուածս մեծամեծս։ Իսկ որդւոյն աղերայ ըստ բախտի յաջողեցաւ գտանել դիպողութիւն հեծանել յերիվար և տալրեալ մաղապուրծ հանդերձ երիւք ոմանքիւ հեծելովք։ Ըստ նմին օրինակի և դաշնակիցք թագաւորքն փախստականքն տալրեցուցին զանձինս. և զերիվարս և զկառս և զամենայն կահս և զկարասիս բանակի նոցա ժառանգեցին խորայելայիք։ Համարէն սամարիա տան ցնծութիւն կատարէր ընդ այս աբանչելի յաղթութիւն. և մարգարէն՝ որ գուշակեաց զայն, Եկեալ 'ի խնդակցութիւն արքայի, ասէ ցնա. զօրացիր, բայց պատրաստ լեր, զի որդին աղերայ խորշի անդրէն կազմել բանակ, և 'ի դաշտի տարուցս այսորիկ տեսցես զնա վերստին եկեալ 'ի վերայ քո։

Յետ մեծի պարտութեանն նախագրելոյ՝ միաբանեցան ասորւոց դուժարեցան 'ի դամասկոս. և աբար անդ որդին աղերայ ժողով վասն պատերազմի. ուր երեք ինչ հաստատեցան։ Այսր՝ ոչ էս տալ պատերազմ ընդ խորայելացիս 'ի լեռնային վայրս, այլ 'ի դաշտս. զի ոչ խորայելի զօրաւոր է ասէն 'ի լերինս, քանզի ոչ լերանց է, և ոչ է ոչ դաշտաց, և այնպէս յաղթեմք նոցա 'ի դիւրի։ Այս հայհոյութիւն, զոր հաստատեցին իբրև առաջին սկիզբն խորհրդոյ իւրեանց, եղև նոցա 'ի չարագոյն կործանումն քան զառաջինն. զի կամեցաւ ոչ ցուցանել թէ ամենակարող է յամենայն տե-

ղիս. և վասն այսորիկ մարգարէն խոստացաւ ա-
քսաբու յանուն ՝ի և զերկրորդ յաղթութիւնն։
Երկրորդ սկիզբն՝ զոր հաստատեցին ՝ի խորհրդեան
անդ, եղև՝ փութով զօրաժողով լինել փոխանակ
անկելոց ՝ի պատերազմին յայնմիկ, և կազմել բա-
նակ հաւասար առաջնոյն. և այնպէս լրումն զօրուն
յայնչափ սուղ ժամանակի ոչ սակաւ ահ արկանի-
ցէ թշնամւոյն։ Իսկ երրորդ սկիզբն եղև՝ ՝ի բաց
հանել ՝ի բանակէ զամենայն դաշնակից թագաւորս,
զի բազմութիւն հրամայողաց խանգարիչ է կարգի
զօրուն։ Այն զի դաշնակցայ առաւել փոյթ այնէ,
պահել անվնաս զզօրս իւրեանց՝ քան առնել յաղ-
թութիւն վասն օտարին։ Ոչ ցանկան նոքա անկեղ-
ծութիւնք սրտի զօրանալ թագաւորի կարողագունին
քան զինքեանս, որ մնա ի նոցա, զի կարէ յա-
ւուր միում դառնալ ՝ի թշնամութիւն։ Վասն որոյ
թէպէտ և նիզակակից իցեն, սակայն ոչ այնչափ
ինչ տրտմին ընդ պարտութիւն դաշնակցին. զի որ-
չափ խնայարհեալ իցէ նա, նոյնչափ ապահովութիւն
նոցա զօրանայ։ Սմին իրն ասէն, թէ՝ զ տայցեն թա-
գաւորք զօրս, և ինքեանք նստիցին ՝ի քաղաքս իւր-
եանց. և փոխանակ նոցա կարգեսցին ՝ի վերայ զօ-
բայ նոցա քաջ և փորձ զօրագլուխք, որք զանհար-
կութիւն քումն սրբոյ կախեալ կայցեն։ Այս
ինքեցաւ բան խորհրդոյ նոցա։

Այս ՝ի դառնալ տարւոյն՝ ասէ գիրն, հանդէս
արար որդին ադերայ՝ ասորւոց, և եղ յափեկայ ՝ի
պատերազմ ընդ իսրայելի։ Այսմանէ երևի թէ
զօրքն օգնականք չև էին հասեալ. թերևս յամեցին
տեսանել, թէ զիարդ և ուր ունին ասորիք ուղղել
զբանակ իւրեանց՝ յառաջ քան զժամանել նոցա։
Զայս թուի ակնարկել և կալ մնալն ասորւոց
զեօթն օր յանդիման ճակատուն իսրայելի առանց
՝ի մարտ ձեռնարկելոյ, զի գուցէ մնային հասանե-
լոյ օգնականացն։ Այլ զիարդ և իցէ, այս յայտ-
նի է, զի որդին ադերայ ունէր ընդ իւր հարիւր
և քսան և եօթն հազար և փոքր ինչ աւելի մարտ-
կաց՝ ընդ հեռաւոր, և ընդ հեծեալ. որք անհամե-

մնտ առաւելուն բազում էին քան զզօրս իսրայէլացւոց։ Այս զկնի աւուրց եօթանց կալոյ անշարժ երկուց ձակատուց հանդէպ իրեարաց՝ իբր երկու երամակս այծից, յաւուր ուրեքորդի եկն այրն ոչ, և ասէ ցաքսաբ. այսպէս ասէ ոչ. փոխանակ զի ասացին ասորիքն, թէ ոչ ինչ լերանց է որ ոչ իսրայէլի, և ոչ ոչ դաշտաց, նա տացէ զզօրն զայն մեծ 'ի ձեռս քո. և գիտասցեն թէ ես եմ ոչ։ Այսմանէ խրախուսեալ զօրաց իսրայէլի՝ բաժանեցան յերկուս առաջս. և յարձակեալ գաղանաբար՝ մեռեցան 'ի զօրսն ասորւոց. և յաջ և յահեակ կոտորեալ՝ տապաստ արկին յաւուր յայնմիկ 'ի դաշտի անդ հարիւր հազար հետեւակաց. իսկ այլք փախուցեալ մտին ամրանալ 'ի յափեկս քաղաք իւրեանց. բայց և անդ ոչ զերծան 'ի ձեռանէ ոչ զոր հայհոյեցին. զի անկաւ պարիսպ քաղաքին, և ծածկեաց ընդ աւերակօք քսան և եօթն հազար արանց փախուցելոց 'ի պատերազմէն։ Ժուարին է մեկնել թէ զիարդ մարթ էր լոկ պարսպաց կործանմամբ՝ այնչափ հազարաւոր զինուորաց կորնչիլ ընդ փլատակօք. եթէ ոչ՝ ասասցուք ըստ ոմանց, թէ փախուցեալ նոցա 'ի քաղաք անդր, 'ի գունդս գունդս բաժանեցան ըստ զինուորական օրինաց 'ի յարկածածուկ ձանապարհս գործեալս զստորոտով պարսպաց առ ափամբք շրջապատ խրամոյ, թերեւս առ 'ի պաշտպանել անտի զքաղաքն. և ոչ սքանչելեօք կործանեաց 'ի վերայ նոցա զպարիսպն։

Յափեկս էր քաղաք ամուր 'ի ծագ սահմանաց մանասէի 'ի ցեղին իսաքարու հուպ յընդարձակ դաշտավայրս յեզրայէլի՝ ուր հարան ասորիք. յառաջն էր 'ի ձեռս իսրայէլացւոց. այլ յետոյ առին զնա ասորիք՝ թերեւս յաւուրս բռասայ իսրայէլացւոց արքայի. և որդին ադերայ արար զնա քաղաք զինուց։ Ընդ եղև ապաստան և նա ինքն որդին ադերայ՝ մաղապուրծ փախուցեալ 'ի սրոյ իսրայէլացւոց. բայց և անդ ոչ վստահացեալ կալ յայտնի, լի ամենով և դողուելոք եմուտ թաքեաւ յանյայտ խորշ մի տան իւրոյ։ Խորհուրդ կալաւ ընդ

սակաւուց ոմանց յիշխանաց իւրոց, որք էին մի-
ւսեալ 'ի պատերազմ, թէ զիարդ մարթասցին ելս
ինչ գտանել այնմ յետին անձկութեան։ Լուան նո-
քա խորհուրդ և ասեն. մի միայն հնար այս է,
հայցել զողորմութիւն. զի թագաւորք տանն իսրայ-
ելի ողորմած են և յոժարամիտ 'ի գթութիւն առ օտար
ազգս. այլ հարկ է առնել զայս խնդրուած ամե-
նայն ցածութիւն և նուաստութիւն։ Լու նոյն ժամայն
գլխաւորք 'ի նոցանէ զգեցան քուրձս զմիջով, և
արկին չուանս զպարանոցս. և այնպէս 'ի ձև մե-
ղապարտ զղջաւորաց մատեան իբրև աղաչաւորք 'ի
դիմաց արքայի իւրեանց առ աքսաք, և խնդրեցին
շնորհել նմա զկեանս։ Լուքսաք որ համարէր թէ մե-
ռեալ իցէ նա, ուրախ եղև 'ի լսել զկենդանութիւն
նորա՝ հանդերձ առատամիտ խոստմամբ. եթէ տա-
կաւին կենդանի իցէ ասէ, եղբայր իմ է. զոր
արքն գուշակ բարեյաջող համարեալ՝ առին զրանն
'ի բերանոյ նորա, զայն՝ զոր ասաց, թէ եղբայր
իմ է. և զնոյն կրկնեցին խսկայն ասելով, եղբայր
քո որդի ադերայ ասէ. և առժամայն ըստ հրա-
մանի նորա ածին զնա։ Լու աքսաք առաւել քան
զարժանն գերեալ թագաւորի՝ առ ընկալաւ զնա
պատուով 'ի կառս իւր յանդիման յաղթական զո-
րուն իւրոյ։ Յայնժամ որդին ադերայ ուխտ խա-
զաղութեան հաստատեաց ընդ աքսաքու վասն ազա-
ատութեան իւրոյ, զոր և ընկալաւ հանդերձ երիւք
սպայմանօք։ Լախ՝ զի դարձուսցէ առ աքսաք զա-
մենայն քաղաքս, և զաւանս, և զամիոցս՝ զորս հայր
նորա առաջին որդին ադերայ էառ 'ի թագաւորաց
իսրայելի առ բաստաւ արքայիւ, որպէս յառաջա-
գոյն պատմեցաք։ Լրկրորդ՝ զի ոչ ևս առնուցու-
զէն ընդդէմ իսրայելի, այլ կայցէ միշտ խաղաղու-
թիւն ընդ նմա։ Լու երրորդ՝ զի տայցէ վաճառակա-
նաց իսրայ'լացւոց ազատութիւն շահավաճառ լինել
'ի դամասկոս, սահմանեալ նոցա անդ հրապարակ
կամ վաճառատեղի, ուր ուներցին կրպակս և շահ-
մարանս սեպհականս վասն աղխամաղխից իւրեանց.
զոր օրինակ առ հարք իւրով ունէին սասրիք 'ի տա-

մարիա։ Ընդ այսպիսի խոստմամբք, զոր երդմամբ հաստատեաց որդւոյն ազգերոյ, քայց ոչ պահեաց, որպէս տեսցուք ստորև, արձակեաց զնա աքսաբ խաղաղութեամբ։

Այլ ասէ ոչ հաճեցաւ ընդ այն, զի կենդանի արձակեցաւ այրն մահապարտ յաղագս սարսափելի հայհոյութեան իւրոյ առ ասէ։ Այս նեղողամտութիւն աքսաբու էր 'ի պակասութիւն արդարութեան նորա, և 'ի չունելոյ 'ի սրտի իւրում զնախանձ փառաց ամենայն ազգի։ Կամեցաւ աքսաբ պահել զանխորհուրդ խոստումն իւր. և ասէ կամեցաւ ուսուցանել իշխանաց, թէ ուր լինի զանցումն արդարութեան, չէ պարտ պահել զխոստումն անխորհրդաբար արարեալ. չունին ինչ ամաչել իշխանք խոստովան լինել՝ եթէ մարդիկ են սխալական. փառք նոցա այն է, ցուցանել զանձինս արդարադատս և իրաւասէրս, երդմանելով զխոստումն անխոհեմ, յորժամ հարկաւոր է վասն պահելոյ զիրաւունս, և զփառս ոչ այլ, և զարին ժողովրդեան։ Ամենայն սրտի վաղվաղակի առաքեաց ասէ աքսաբու կշտամբանս խիստս 'ի ձեռն մարգարէին իւրոյ։ Ա՝ ըստ հրամանի ձեռն, ասաց ցընկեր իւր. հար զիս. իսկ նա ոչ գիտելով զխորհուրդ մարգարէին յայն օտար հրամանն, ոչ անսաց նմա, և ոչ եհար. յայնժամ ասաց ցնա մարգարէն, փոխանակ զի ոչ լուար ձայնի ձեռն, ահա իբրև գնասցես յինէն, սպանցէ զքեզ առիւծ. որ և վաղվաղակի կատարեցաւ ըստ բանի մարգարէին։ Այս եգիտ այլ այր, և զնոյն հրամայեաց նմա. իսկ նա ուսեալ յօրինակէ առաջնոյն՝ ձգեաց համարձակ զձեռն, եհար զնա ուժգին և վիրաւորեաց։ Զոր կատեալ մարգարէին պատանաւ զայս իւր. կամ ըստ այլ թարգմանութեց արկեալ փոշի յոյժ յաչս և յերեսս, առ 'ի չլինել ծանուցեալ 'ի սկզբանն, չոգաւ ընդ առաջ աքսաբու 'ի ձանապարհին, մինչ դառնայր 'ի սամարիա. և կեղծեալ զանձն իբրև զի 'ի զինուորաց՝ աղաղակեաց առ արքայ, և ասէ. ահա ոմն ած առ իս զայր ոք և ասէ, պահեա զայրդ զայդ. ասա թէ զերծանե-

լով զերծցի, եղիցի անձն քո ընդ անձին դորա, կամ տաղանդ մի արծաթոյ կշռեսցես. և եղև մինչ ծառայ քո այսր անդր հայէր, և նա չէր ուրեք։ Եվ արքայն խրայելի ցնա. տհա և այդ լինէն կողմանէ դաւէ. սպաներ ուրեմն. այս է՝ ըստ այլ թարգմանութեաց, տհա զդատակնիք քո դու եւուր առաջի իմ. իբր ասել՝ քո է ինչան, զոր քեզէն խոստովան լինիս, ապա անձն քո եղիցի փոխանակ անձին փախուցելոյ։ Եվ ըստ արար մարգարէն ըստ օրինակի նաթանայ առ դաւիթ, կամեցեալ 'ի բերանոյ նորին աքաւբու առնուլ զդատակնիքն։ Յայնժամ 'ի բաց առեալ մարգարէին զպատանս յաչաց, (որով ծանեաւ զնա արքայ՝ եթէ 'ի մարգարէից է,) և բարձրացուցեալ զաբրբառ իւր՝ ասէ. Մէ անձն իմ արքայ, ո՛չ, այլ քոյդ անձն եղիցի փոխանակ անձին որդւոյն ագերայ. զի արձակեցեր զայրն ինասապարտ 'ի ձեռաց քոց։ Մէ սպանաւ նա 'ի քէն, դու սպանցիս փոխանակ նորա. ո՛չ գիտացեր քաղել զպտուղ յաղթութեդ մեծի ընդդէմ ժողովրդեան նորա. ժողովուրդ նորա եղիցի հարուած ժողովրդեան քո։ Եվ արքայն՝ որ ակն ունէր խնդակցութեամբ և ոչ կշտամբանաց, խռովեցաւ. և ոչ ևս կամեցեալ ուտկին դնել, եթող զնա անդ, և գնաց տխրեալ և լքեալ 'ի տուն իւր 'ի սամարիա։

ԳԼ. ԺԸ.

Մահ Նաբովղեայ. և յոգեպատմութիւն այգեաց Նորա։ Լդիա. և Լդիոնէ։

Այսչափ խրատք և սպառնալիք մարդարէից, այսչափ հրաշալի յաղթութիւնք ընդդէմ ասորւոց պարգևեալք ի նոսա աքաաբու, շատ էին արդեօք ի զգաստութիւն ածել զնա։ Այլ եթէ դէպ լինէր նմա երբեմն բարի ինչ խորհուրդ յղանալ, և ի դարձ առ նոր ածէ իւր յօժարամտել, շատ էր մի կամ երկու անգամ խօսել ընդ յեզաբելայ կնոջ իւրում, առ ի նոյնհետեւոյն յառաջին մոլորութիւն անդը դարձ առնել։ Պարտ է խոստովան լինել, թէ աքաաբ ըստ իւրումն բուսոյ բարուց յաւէտ ի բարի էր յօժարեալ. այլ արար զնա չար յեզաբէլ կին արիւնարուշտ, անգութ, և կամակ. որ առ տարապայման մեղկութիւն աքաբայի առն իւրոյ՝ տիրապետեալ էր ի վերայ Նորա, և վարէր զնա իբրև արծաթաղին գերի յամենայն ապիրատութիւս։* Ի զուր՝ (ասէ գիրն) մեծամտեաց աքաաբ առնել չար առաջի տն, որպէս յիմարեցոյց զնա յեզաբէլ կին Նորա։ Գ. Թագ. Է. 25։ Իւր ի վուլկադայն ասի։* Իսկ զի այլ ոք այնպիսի՝ որպէս զաքաաբ, որ վաճառեցաւ, զի արասցէ չար առաջի տն. զի գրգռեաց զնա յեզաբէլ կին Նորա։ Այսպիսի մեղկութիւն տանուտէրն յառանձին տունս ինչս մեծ քեռի ընչից և որդւոց. իսկ ի թագաւորութիւս խոշ մեծ է արդարութիւն, և ժողովրդեան։ Նմանեալ դատապարտին, և անարժանք վերառեալ լինին ի պատիւ, յորժամ արդարութի և անիրաւութիւն՝ վարձք և պատիժ աքաբայական թողեալ է ի կամն կնոջ։ Նոսի և այսպէս է, թէ աքաաբ բնութիւն չէր անողորմ, իբր զի այնչափ խիստ կշտամբանս. և

սպառնալիս լուեալ 'ի մարգարէից, թէպէտ բարկանայր, թէպէտ ատեայր զնոսա, բայց սանձէր զայրագնութիւն ցասման և ատելութիւն, զի ոչ երբէք ետ հրաման մահու մարգարէի ումեք. առ որ միշտ ինքնաշարժ էր յեղաբեկլ։ Վնթոտ բնաւորութիւն աքսորու, և դաղանամիտ բարք յեղաբեկլոյ յայտնատեսիլ երևեցաւ 'ի մահուն նաբովթայ։

Զ. քսաւ յետ հաստատելոյ խաղաղութիւն ընդ ասորւոց, ետ զանձն 'ի զարդարել և 'ի վայելչացուցանել զգեօղն իւր, որ էր 'ի ձորն յեզրայելի. դիրք տեղւոյն վայելուչ էր և զուարճալի. ունելով 'ի մի կողմն բլուրս դալարագեղս. իսկ 'ի միւս կողմն դիւր դաշտավայր արդաւանդաշող։ Կառուցեալ էր անդ աքսաբ մեծաշէն տուն 'ի պէտս զրօսանաց, ուր էր նորա ագարակ և կալ. և զի 'ի մի կողմն էր նորա մնկեալ պարտէզ ծաղկանց, կամէր և 'ի միւս կողմն առնել պարտէզ բանջարոյ. այլ անդ մերձ 'ի կալն, կամ 'ի տունն արքայի, էր այգի մի նաբովթայ առն յեզրայելացւոյ. յորմէ կամեցաւ աքսաբ առնուլ զտեղին, տալով նմա փոխանակ զայլ այգի մեծ և լաւ քան զնա. և կամ արծաթ 'ի գին այգւոյն, եթէ այնպէս հաճոյ եցէ նմա։ Զ. այլ նաբովթ յուշ ածեալ զհրաման նոն, զոր պատուիրեաց 'ի ձեռն մովսիսի չվաճառել զերկիր 'ի մշտնջենաւորս. զԼԿ. ԺԵ. 23. և չունելով յայնժամ նաբովթայ կարիս ինչ, յոյր սակս և եթէ մարթի էր ըստ օրինաց վաճառել, բայց և այն՝ մինչև ցամն յոբելեան. յորում ամի պարտ էր երկրին անդրէն յառաջին տէր իւր դառնալ. և գիտելով նաբովթայ՝ զի թէ այգին իւր միանգամ անկցի 'ի ձեռս արքայի, այնուհետև ոչ ևս ունի դառնալ առ նա և ոչ իսկ 'ի յոբելեան ամի. վասն այնորիկ բացէ 'ի բաց հրաժարեցաւ տալ զայգի իւր՝ 'ոչ փոխանակաւ և ոչ գնոց արծաթոյ։ * Զ. աւ լիցի ինձ ասէ յոյ իմմէ՝ տալ քեզ զժառանգութիւն հարց իմոց ||։

Ընդ այս համարձակ յուսակտուր պատասխանի՝ այնպէս խռովեցաւ սքաաբ, մինչ զի առ դառնու-

թէ սրտին՝ եկեալ 'ի տուն անկաւ 'ի մահիճս ան-
կերակուր՝ հիւանդացեալ լոկ 'ի բարկութենէն. այլ
բարկութի նորա առնէր չար անձին իւրոյ և եթ,
զի նա ոչ խորհէր առնուլ վրէժ 'ի նաբովթայ վասն
այնր համարձակ պատասխանւոյ. և եթէ չէր խմա-
ցեալ յերզաբելայ զդիպուածն, անարիւն վճարէր
ամենայն ինչ։ Ի. յլ մտեալ նորա առ աբսաբ, և
խմացեալ 'ի նմանէ զդիպուածն՝ զի պատմեաց նմա
զսոմենայն, բարձրացոյց կինն ապարասան զբարբառ-
իւր, և ասէ. այդպիսի՞ իշխանութի՞ վարիցես ըզ-
թագաւորութիդ 'ի վերայ իսրայելի. արի կեր հաց
և սթափեաց, և ես տաց քեզ զայդին նաբովթայ։
Ոչ-ուրեաց վաղվաղակի հրովարտակ յանուն աբսա-
բու, և կնքեալ մատանեաւ նորա՝ առաքեաց առ
ոմանս 'ի գլխաւորաց քաղաքին յերզրայելի, զորս
ինքն քաջ գիտէր թէ ոչք ոմանք իցեն։ Ի. ու բան
հրովարտակին այս էր, կարդեցէ՛ք պահս, և նը-
տուցէք զնաբովթ 'ի գլուխ ժողովրդեան. և ըստ
զենուորական օրինի քննութի արարէ՛ք վասն յան-
ցաւորութի նորա, որպէս թէ հայհոյեալ իցէ նը-
րա զլա՞ծ և զարքայ. և նստուցէ՛ք հանդէպ նորա
երկուս արս որդիս անօրինաց, որք ոչինչ խղճիցեն
սուտ երդնուլ 'ի դատաստանի, և վկայել վասն
հայհոյութենն նաբովթայ. և հանեալ զնա արտաքոյ
քաղաքին՝ քարկոծ արասցէ զնա ժողովուրդն, և
մեռցի։ Ի. բարին նոքա ըստ ամենայն բանի հրո-
վարտակին. և ծանուցին յեզաբելայ, թէ մեռաւ
նաբովթ և ընդ նմա ամենայն որդիք նորա. Գ.
Թագ. Ա. 26. իբրև հայհոյիչ ՝՝՝ և ապստամբ յար-
քայէ. և այգին մնաց անտերունչ։ Յայնժամ
ասաց յեզաբելայ ցաբսաբ, արդ արի և ժառանգեա՛
զայդին նաբովթայ յեզրայելացւոյ. զի ոչ ևս է նա
կենդանի։ Իբրև լուաւ աբսաբ թէ մեռաւ նա-
բովթ, մտացեալ զիւրն դառնութի, պատառեաց
զհանդերձս իւր, և քուրձ զգեցաւ. և յետ այնո-
րիկ յարեաւ և էջ յայդին նաբովթայ ժառանգել
զնա։ Ի. յս պատառումն հանդերձից, և քուրձ
զգենուլ աբսաբու 'ի լուր մահուն նաբովթայ չէք

յայժմեւ բնագրի երբայեցւոց, և ոչ յայլ թարգմանութիւն՝ բաց յեօթանասնից։

Պ՝ինչդեռ այսոքիկ իրագործէին յերկրին խաբայելի, մնրգարէն եղիա նստէր 'ի լեառն քորեբայ՝ առանձնացեալ յայրի յահէն յեզաբելայ։ Եւ ահա ձայն ՏԵՐՈՅ եղև առ նա և ասէ, զի՞ ես աստ դու Էղիա. իբր ասել, ընդէր նստիս դու աստ անդործ։ Եւ պատասխանի եղիա թախծադին, և ասէ, նախանձ քո վարեաց զիս առ չժուժելոյ իմ տեսանել զուխտ քո առ ոտս Հարեալ, զսեղանս քո կործանեալ, և զժողովուրդ քո զիսրայել յամենայն ամսարշտութիւնս ընկղմեալ. և զմարգարէս քո կոտորեալ, մինչև չմնալ ուրուք 'ի նոցանէ բաց յինէն միայնոյ. իսկ այժմ և զիս ինդրեն սպանանել։ Եւ կամեցեալ ՏՆՈՅ միխիթարել զծառայն իւր վշտահար՝ յայտնութիւն փառաց ՏԾՈՒԹԻՆ իւրոյ, որպէս երբեմն յայտնեցաւ մովսիսի 'ի նմին լերին, միանգամայն և խորհրդաւոր նշանաւ տալ նմա զկարևոր ուսումն ինչ, թէ զիարդ ունի վարիլ 'ի գործս ՏՆՈՅ, ասաց ցնա՝ 'ի վաղիւ ելանել և կալ 'ի լերին անդ, զի հանդերձեալ է ցուցանել նմա զփառս իւր։ Եւ ահա յեղակարծումն եղ հողմ ուժգին բաւական զլերինս քակելոյ և զվէմս խորտակելոյ իբր յառաջընթաց կարգաւորս ՏՆՈՅ. այլ ՏՐ ոչ էր 'ի հողմն. և յետ հողմոյն եղև շարժումն երկրի սաստիկ, և ոչ 'ի շարժմանն ՏՐ. և յետ շարժմանն հուր բորբոքեալ, բայց և ոչ 'ի հուրն ՏՐ. հուսկ յետոյ եղև ձայն մեղմոյ օդոյ. զոր իբրև լուաւ եղիա՝ յահէ փառաց մեծվայելչութեան ՏՆՈՅ պատկառեալ, ծածկեաց զերեսս իւր մաշկեկաւն, և ել եկաց 'ի դուրս այրին, զի գիտաց թէ անդէ ՏՐ։

Սովին հրաշալի տեսլեամբ բաց 'ի միխիթարելոյ ՏՆՈՅ զծառայն իւր, ուսոյց նմա մեղմել և բարեխառնել զկարի յարձակումն նախանձուն իւրոյ. ցուցեալ՝ թէ զոր օրինակ ինքն ՏՐ գոլով ամենայն տարերց՝ կարող է 'ի քթթել ական քակել խորտակել և շանթահար կորուսանել զամենայն մե-

զաւորս, այլ երկայնամիտ լինի առ նոսա, մնալով ապաշխարութեան նոցա. նոյնգունակ արասցէ և նա. զոչեսցէ, զողացուսցէ, այրեսցէ բանիւ. այլ յետ այնորիկ մխիթարեսցէ քաղցրութիւն, մինչև ածիցէ յուղղութիւն։ Լ.այս տեսիլ ցուցանէ և զխաչը որ 'ի մէջ մոլխսեան և աւետարանական օրինաց. զառաջինն օրինակեալ 'ի հողմ, 'ի շարժումն և 'ի հուր. իսկ զերկրորդն 'ի յոգ մեղմ քաղցրասիգ։ Ունի և այլ խորհուրդս խորինս, զոր ոչ ներէ տեղիս յառաջ բերել։

Օ.Մինի տեսլեանս երկրորդ անգամ եղև բարբառ առ եղիա, զի՞ ես ատ դու Ելիա. իսկ նա կրկնեաց զառաջին գանգատ իւր։ Լ.Ու ածէ կամեցեալ մխիթարել զնա, զի մի կարծիցէ թէ ինքն միայն մնացեալ է հաւատարիմ առ նա, ունիմ ասէ յիսրայէլի եօթն հազար այր, որք ոչ պաշտեցին ոչ զբահաղ, և ոչ զսկեղէնն որթս յերոբոամայ։ Ամենք զայս թիւ իմմանն փոխանակ անորոշ բազմութեան. այլք ՃՀտիւ առնուն, իբր թէ յայն անթիւ անհամար բազմութեանէ խորայէլացւոց հազիւ եօթն հազարք գտանէին ՃՀմարիտ ՃՀապաշաք։ Լ.պա ետ ՃՀ եղիայի 'ի լերինն անդ երիս պատուէրս. յորոց զմին ինքն անձամբ կատարելոց էր, և զերկուսն 'ի ձեռն եղիսէի։ Լ.յն զոր ինքնին ուներ կատարել, էր օծանել 'ի մարգարէ զեղիսէ որդի սափատայ յաբէլմաուլայ քաղաքէ, ոչ կարի ինչ հեռի 'ի յորդանանէ յայսմակողմն նորա 'ի ցեղին մանասէի։ Լ.ոդ էջ եղիա 'ի լեռնէ անտի, և ՃՀ նապարհ արարեալ ընդ անապատն՝ գնաց յաբէլմաուլս. և եգիտ անդ զեղիսէ, զի վարէր զերկիր երկոտասան եզամբք։ Ուր կարծի ցուցանել գիրն՝ թէ ինքն միայն էր յայն գործ. որ գժուարին էր և՝ առն միոյ արօրադրել վեց զոյգ եզամբք առանց եզողի. թէպէտ են որք ասեն թէ այնպէս քաջ կրթեալ էր նա զեղինսն, զի ըստ ՃՀայնի նորա էր թային, և զտեղն առնուին, և դառնային ընդ որ կոյս կամէր՝ առանց վարողի և առանց խթանի. որով 'ի գործ այնր նուաստ վիճակի իւրոյ երևէ.

ցուցանէր հանճար մեծ և խոհականութիւն արժանի բարձրագոյն վիճակի։

Այս մերձեցեալ եղեալի առ նա, ընկէց զմաշկեակն իւր 'ի վերայ նորա. յորմէ իմացեալ եղեսէի՝ եթէ ոչ ծածկէ զնա ոչ ևս 'ի մշակութիւն երկրի, այլ սրոյց մարդկան, եթող առաջամայն զեղինս և զարօր, և ընթացաւ զհետ եղեալի. զայս միայն խնդրեաց՝ թոյլ տալ նմա երթալ հրաժարել 'ի հօրէ և 'ի մարէ իւրմէ՝ տալով նոցա զվերջին համբոյր հրաժարական. և եղեալ եթող առնել զոր խնդրէր։ Իսկ նա 'ի նշան յօժարամիտ հրաժարելոյ 'ի հայրենի տանէ իւրմէ՝ եզեն երկու եզինս և փոխանակ փայտի՝ կոտորեալ զարօր և զայլ գործիս եզանցն, զի ցուցցէ թէ ոչ ևս կամի արկանել զձեռն զմանոմ, խոլովեաց զգեղելին, և արար սեղան ազգականաց և բարեկամաց իւրոց, և թողեալ զնոսա՝ գնաց զհետ եղեալի. և եկաց առ նմա իբրև աշակերտ, իբրև ընկեր, և իբրև սպասաւոր։ Իսկ այլ երկու պատուերքն՝ զոր ասացաք թէ ետ որ եղեալի, էին օծանել զաղայէլ 'ի թագաւոր ասորւոց. և զյէհու որդի ամեսսեայ 'ի թագաւոր 'ի վերայ իսրայէլի։ Այլ զայսոսիկ եղեսէէ հանդերձեալ էր կատարել. որպէս ուներմք պատմել յիւրում տեղւոջ։ Արդ դարձցուք 'ի կարգ պատմութիւնն աքսաբու։

Այդպիս ժամանակաւ ինչ յառաջ քան զանիրաւ քարկոծումն նաբովթայ՝ եկեալ էր յերկիրն իսրայէլի. և էր յայնժամ կամ 'ի կարմէլոս, կամ յայլ ինչ տեղի, ոչ կարի 'ի բացեայ 'ի սամարիայ. ուր խօսեցաւ որ ընդ նմա, առաքելով զնա ընդ առաջ աքսաբու՝ մինչ երթայր մնանել յանիրաւ ժառանգութիւն այգւոյն նաբովթայ, դնելով միանգամայն 'ի բերան նորա թէ զինչ խօսիցի առ նա։ Արդ՝ եկն եղիա և եկաց առաջի կառացն աքսաբու. և փոխանակ ողջոյն տալոյ նմա որպէս թագաւորի՝ խօսի առ նա խստութիւն, և ասէ. ա՛ռքայ անիրաւութիւն սպաներ, և անիրաւութիւն երթաս ժառանգել։ Արդ ծանիր և 'ի միտ առ, զի 'ի տեղւոջ

ուր լափեցին զունք և խոզք զարիւն նաբովթայ, անդ լափեսցեն զարիւն քո։ Լ.քաւաբ զահի հարաւ 'ի մարգարէէն. վասն զի որք որք առ ձեռն ունին զՀրաշագործութիս, ահաւոր են և թագաւորաց. վասն այնորիկ թեթև դժկամակութք ասաց, եթէ գտեր զիս թշնամիդ իմ. (այսպէս է և յերբայանն. այլ ըստ վուլկատային ասի. եթէ գտեր զիս թշնամի քեզ։) Լ.սէ եղիա, գտի. զի 'ի զուր հալարտացար (կամ ըստ այլոց, վաճառեցար կամ վաճառեցեր զանձն քո) գործել չար առաջի տն առ 'ի բարկացուցանելոյ զնա. բայց ՝ծ զոր բարկացուցեր, ասէ քեզ բերանով իմով, թէ սատակեսցէ և եղծանիցէ խսպառ զսերունդ քո, մինչ չթողուլ և. ոչ մի. և արասցէ զտուն քո իբրև զտունն յերոբովամու որդւոյ նաբատայ. և իբրև զտունն բաասայ որդւոյ աբիայ, վասն բարկութեանն՝ որով բարկացուցին զնա։ Լ.ու ոչ յեղաբէլ ասլբեսցի 'ի բարկութէ տն, զի և նա կին յանդուգն, ամպարիշտ և արեանարբու՝ եղիցի կերակուր շանց առ պարսպին յեզրայելի։ Պպառնալիք եղիայի այս անգամ ազդեցին 'ի սիրտ ոբաարու. ստրջացաւ և ակնկորեաց յերեսաց տն, և երթայր լալով. պատառեաց զպատմուճան իւր, զգեցաւ քուրձ 'ի վերայ մարմնոյ իւրոյ, պահեաց և խոնարհեցաւ, և գնայր կորակոր առաջի ժողովրդեան։ Լ.յս դարձ և ասպաշաւ թէպէտ կարճատև գտաւ, բայց ոչ անգործ. վասն այնորիկ գթացեալ 'ի նա ՝ծ՝ յամենայոյց և մեղմեաց զպատիժն, փոխադրելով 'ի գլուխս ամպարիշտ որդւոյն զմեծագոյն մասն սպառնալեաց, որք հանդերձեալ էին անկանիլ 'ի վերայ գլխոյ ամպարիշտ հօրն. * Տեսէ՞ (ասէ տր ցեղիա), զի ստրջացաւ աբաարբ յերեսաց իմոց. փոխանակ զի ակնկորեաց յերեսաց իմոց, ոչ ածից չարիս յաւուրս նորա. այլ յաւուրս որդւոյ նորա ածից չարիս 'ի վերայ տան նորա։

ԳԼ. ԺԷ.

Լ.ԿԱՍԷ առեալ էր յօգնութիւն զՅովսափատ արքայ յոտ-
քայ՝ յաբչէն 'ի մարդ ընդդէմ ասորւոց. ուր մեռանէր ահաւոր.
և յովսափատ մաղադրեաց զերծանի։

Յետ այսորիկ իբր զսմն երիս նստաւ աքսաբ հանդարտեալ, չունելով պատերազմ ընդ ասորիս, թէպէտ և ունէր պատճառս։ Վասնզի որդին ադերայ ստեաց դաշնադրութեն, զոր արար ընդ աքսաբու վասն ազատութեան իւրոյ. որպէս տեսաք վերագոյն. զի մին 'ի գլխաւոր քաղաքաց խորայէլի, զոր հայր նորա առեալ էր 'ի ձեռաց խորայէլացւոց. և զոր ըստ դաշինն պարտական էր դարձուցանել անդրէն՝ էր ռամոթ յերկրին գաղաադ. քաղաք ամուր՝ նախապարիսպ խորայէլի յայնկոյս յորդանանու ընդդէմ ամոնացւոց, բայց նա ոչ դարձոյց։ Յայն երիս ամն բազում անդամ խաղաղական պատգամաւորութիւն սահմանեաց զնա աքսաբ 'ի կատարումն դաշնադրութենն. այլ հուսկ յետոյ իբրև ետես՝ զի ընդունայն եղեն ամենայն պատգամաւորութիւնք նոր, հարկեցաւ եղծանել զխաղաղութիւն որ ընդ նմա, և պատերազմաւ ելանել 'ի վերայ նորա՝ մինչև իցէ լցուցեալ զպակասութիւն առաջին հարուածոց և զօրացեալ։ Թէպէտ զի ակնուներ աքսաբ հեշտեաւ ձգել յիւր օգնութիւն և զյովսափատ արքայ յուդայ. որ բազում ամաւք յառաջ էր խաղաղութիւն ընդ Թագաւորս խորայէլի. որ և առ ևևս հաստատելոյ զպարեկամութենն, արար խնամութիւն ընդ աքսաբու՝ առեալ զգոթողիա զդուստր նորա 'ի կնութիւն յովրամայ որդւոյ իւրոյ, որ յաջորդելոց էր զԹագաւորութիւն նորա։ Լ.այս խնամուն, և մանաւանդ բարութիւն յովսափատայ պահեաց խաղաղական միաբանութիւնն 'ի մէջ երկուց Թագաւորու-

թեց, թէպէտ վարուք և կրօնիւ ծայրագոյն հակառակ էին միմեանց։

Արդ՝ մինչ յայսմ խորհրդեան էր աքսաբ, դէպ եղև յովսափատայ ուղղկցութիւն չափաւոր զոբաց ըստ պատշաճի իւրոյ մեծութենն՝ իջանել 'ի սամարիա յայցելութիւն աքսաբու։ Ընկալաւ զնա աքսաբ մեծասպայծառ փառօք, ըստ որում վայել էր երկուց թագաւորաց բարեկամաց և աղգակցաց. եղեն ոչխարս և զուարակս բազումս նմա, և զօրուն որ ընդ նմա։ Այն ժամ պատեհ վարկուցեալ աքսաբու՝ առաջարկել յովսափատու լինել նմա նիզակակից յառաջիկայ պատերազմին ռամվթայ, ասէ. գաս ընդ իս յռամվթ գաղաադացւոց։ Այս առաջարկութիւն ծանր էր և դժպատեհ յովսափատու, ոչ միայն յաղագս անհաստատ եղեալ պատերազմին, այլև վասն այլոց խիթալի դիպուածոց։ Ռաւել կասկածելի պարտ էր լինել նմա զբանալ թագաւորին իսրայէլի, քան զզօրանալ ասորւոց, թէպէտ և թշնամի իցեն. զի իսրայէլ սահմանակից էր ինքեան. և թէպէտ 'ի ժամուն բարեկամ՝, բայց յայտնի էր խորհուրդ թագաւորութիւն իսրայէլացւոց ընդարձակելոյ զնորուն իւրեանց նուաճութիւն թագաւորացն յուդայ։ Վասն որոյ չէր պարտ նմա այնպէս յառել զաչս յայն ներկայ բարեկամութիւնն, մինչև չդարձուցանել և 'ի հակառակ կողմն, թէ մարթ էր զկնի ժամանակաց բարեկամութենն փոխիլ 'ի թշնամութիւն. զոր դիւրին էր նմա 'ի միտ ածել՝ ունելով օրինակ առաջի աչաց զնախնեաց թագաւորս իսրայէլի, որք միշտ թշնամութիւն եղեն ընդ թագաւորս յուդայ։ Իսկ թագաւորութեան ասորւոց հեռի էր 'ի նմանէ, անջրպետ 'ի միջի ունելով զբովանդակ թագաւորութենն իսրայէլի. ուստի ոչ գոյր կասկած թշնամութեաց, որք սովոր են ծագիլ 'ի պատճառս սահմանակցութեանց։

Այց 'ի ժամուն դժուարին էր յովսափատու գտանել պատճառանս առ 'ի խուսել պատուով 'ի ձեռնտուութենէ բարեկամին իւրոյ յայնմ արդար

պատերազմի։ Ունէր յովսափատ՝ որպէս տեսաք 'ի վերս անդր՝ յոտին միլիոն մի և հինգ հարիւր հազար զօրականս, չէր հարկ նմա նորոգ զօրաժողով լինել. շատ էր մի միայն հրամանն՝ հանել բանակ ահաւոր։ Ոչ ասն այնորիկ խոյս տալն կարէր երևիլ երկչոտութեան, կամ գէթ անպատճառ հրաժեշտ, յորմէ ծագէր գժգոհութեան և թշնամութեան։ Չէ կամ ասելի է, թէ 'ի պահուն յայնմիկ ոչ անկաւ 'ի միտս նորա պատեհ իմն պատճառ, նմին իրի յօժարամիտ ընկալաւ զառաջարկութիւնն բազմառատ խոստմամբ՝ ասելով. Որպէս ես, նոյնպէս և դու. և որպէս զօրք քո, զօրք իմ. և որպէս երիվարք քո, երիվարք իմ ընդ քեզ 'ի պատերազմի։ Այլ տեսեալ՝ զի գործ ծանր առ յանձն, յաւել պայման մի, որով ակն ունէր բանալ ինքեան ճանապարհ խուսափելոյ իրաւամբ 'ի վտանգաւոր գործոյ անտի։ Չէ պայմանն այս էր, յառաջ քան զձեռնարկել 'ի մարտ՝ հարցանել զնոր, և լսել պատասխանւոյ նորա։ Քաջաւք վաղվաղակի ժողովեաց զամենայն մարգարէս իւր արս իբրև չորեքհարիւր՝ ամենեքին մարգարէք բահաղու, որք ստախօսք և մարգահաճոյք, որք միաբան 'ի մի բերան խրախուսեցին զաքաաք ելանել անեղկեան, զի տալով տացեն զթշնամին 'ի ձեռս նորա. և մի ոմն յանդգնաբոյն՝ կոչեցեալ սեդեկիա որդի քանանու, առ առաւել վստահացուցանելոյ զաքաայ, արար երկու մեծամեծ եղջիւրս երկաթիս, և նոքաք մրցելով ընդ օդս, ասէր. այսպէս ասէ տէր. սոքաք խեթեկեսցես զասորիս՝ մինչև սպառեսցին. իբր ասել, այսպէս անդիմադարձ հարցես զասորիս, որպէս ես սոքաք բաղիեմ զօդս։ Այլ յանդգնութեան նոցա և անպատկառ համարձակութեան օտար գլխովին 'ի հաստատութեան ճշմարիտ մարգարէից տն, ետուն յովսափատայ քաջ ճանաչել զնոսա թէ ոչք ոմանք էին. վասն որոյ առ ոչինչ համարեալ զսնոտի բաղադանս նոցա, ասաց ցաքաաք՝ խնդրել զքաջ 'ի մարգարէից տն, և նոքաւ հարցանել զնոր։ Այն յիսրայէլի Ճշմարիտ մարգարէք տուեալ նոցա յայ 'ի լուսաւորել

զժողովուրդն զայն մոլորեալ՝ի խաւարի, քայց՝ի ծառուկ կային յահէն յեղաբեալ. մի միայն մարգարէն միքիա որդի յելեալ կայր համարձակ՝ի սա մարիա. այլ աբաաբ ոչ հանդուրժէր տեսանել զնա. վասն զի ասէր, նա միշտ չարիս մարգարէա նայ ինձ, և ոչ երբէք բարի. վասն որոյ և ես ա տեցի զնա։ Լ.այլ՝ի ստիպել յովսափատու՝ առա քեաց աբաաբ ներքինի մի ածել զնա վաղվաղակի. և զՀանապարհայն մինչ գայրն՝ յորդորեաց զնա ներքինին խօսել ըստ հաճոյից աբքային. զի ասէ, ահա ամենայն մարգարէք ընդ մի բերան զյաղթութիւն գուշակեն նմա. ապա և դու խօսեսցիս համաձայն բանից նոցա։

Լ.այլ միքիա ոչ էր այր մարդապաշտ՝ ստել, զի գայ՝ շնորհն առաջի արքայի. երդուաւ՝ի ՅՀՐ, զայն միայն խօսել առաջի երկուց թագաւորաց, զոր ինչ ՅՀՐ ասասցէ նմա։ Լ.երկու թագաւորքն աբաաբ և յովսափատ նստէին իւրաքանչիւր յաթոռիւր արքայական ձևով յընդարձակ հրապարակի առ դրանն սամարիայ, և ունկն դնէին բանից մարգարէիցն։ Լ.երբև եկն միքիա, երհարց ցնա աբաաբ, և ասէ. միքիա երթիցս յոռամովթ գաղաադու՝ի պատերազմ, թէ դադարեցայց։ Լ.ետ պատասխանի մարգարէն. զինչ կամիս զի ասացից քեզ. որովհետև ասելն եմ ես առաջի քո, զի զՅՀՐ խօսիմ քեզ, որպէս թէ հասանիցէ քեզ չարիք վասն մարգարէանալոյն իմոյ. ուր ընդ հակառակն՝ կանխաւ ազդ առնեմ քեզ, զի զգուշասցիս, և հեռացուսցես՝ի քէն զչարիս։ Լ.այլ զի ոչ կամիս լսել՝ի բերանոյ իմմէ զՅՀՐմարտութիւն, ապա էլ, զի ամենայն ինչ յաջողութիւն վիճարեսցի, և յաղթեսցես թշնամւոյն քո։ Յեղանակէ աստի խօսելոյ՝ ծանեաւ աբաաբ թէ զինչ կամէր մարգարէն իմացուցանել նմա, այլ ինքնին բերանով ոչ իշխէր յայտնել։ Վասն որոյ երդմնեցոյց զնա աբաաբ չթագուցանել ինչ՝ի նմանէ, այլ յայտնել զամենայն զոր գիտէր ՅՀՐմարտութիւն յանուն նորա։ Յայնժամ ասաց միքիա. եթէ կամիս լսել զՅՀՐմարտիան, զիտասջիր.

զի տեսի ես զամենայն իսրայէլ ցրուեալ ընդ լե-
ռինս իբրև զխօտ՝ որոյ ոչ գոյցէ հովիւ. և ասաց
ցիս Տէր, ոչ գոն դոցա տեարք, դարձցին իւրաքան-
չիւր 'ի տուն իւր խաղաղութիւն։ Լ.յս բաւք յայտ-
նի իմացուցանէին՝ թէ մեռցի արքայն, և ոչ առցի
ռամովթ՝ որ վասն էր այն պատերազմ. ուստի
դարձեալ աբաւք առ յովսափատ՝ ասէ. տեսեալ զի
արդար ասացի, թէ ոչ մարդարէանայ դա վասն իմ
բարիս, այլ միշտ չարութիւն։ Լ.տ պատասխանի մի-
քիա. ա՛յ այդպէս, ես ոչ ասեմ ինչ յինէն. այլ
լուարուք զբան Տեսի նստեալ զՏէր յաթոռս իւ-
րում, և ամենայն զօրք երկնից կային շուրջ զնո-
վաւ յաջմէ և յահեկէ. և լուայ հարցանել, ո՞ պատ-
բեսցէ զաբաւք արքայ իսրայէլի, զի ելցէ և անկցի
առ ռամովթ քաղաքաւ. և մինչ ոմն այսպէս և ոմն
այնպէս ասէր, տեսի զի յառաջ մատեաւ ոգի, և
ասէ. ես խաբեցից զնա, զի ելցէ ոգի սուտ 'ի շրբ-
թունս ամենայն մարգարէից նորա։ Լ.ւ լուայ, զի
այս եղև պատասխանի 'ի նոսա. ել և արա այդպէս,
խաբեսցես և զօրասցիս։ Լ.հա ա՛ռքայ՝ այն ոգի սուտ
է 'ի բերան ամենայն մարգարէիցդ քոց այդոցիկ։

Լ.յս տեսիլ ոչ եղև այնպէս, որպէս թէ ասէ
այսպիսի ինչ ատեան կազմեալ ելցէ յերկինս. այլ
եղև լոկ տպաւորուն յառաջնորդական միտս մար-
գարէին. որով ասէ յարմարելով զնորհուրդ իւր
մարդկային իմացողութիւն, ետ նմա իմանալ ճշմար-
տութիւն թէ այն ամենայն չորեքհարիւր մարգարէք
ստախօս էին. և թէ ստատնայ ոգին ստուէ խօսէր
բերանով նոցա. և թէ՝ թոյլ տայ Տէր, զի աբաւք
առաւել հաւատացէ որոց ընթերն նմա և խաբեն,
քան նոցա որք լուսաւորեն և ուսուցանեն նմա
զճշմարտութիւն։ Լ.ի խօսեալ այսպէս միքիայի զսուտ
մարգարէից, սեղեկիա որդի քանանու՝ յանդգնա-
գոյն 'ի նոսա ըստ նախագրելոցս, մատուցեալ յա-
հուր ժողովութիւն եհան նմա ատամակ 'ի ծնօտն.
թերևս կարծելով օրէն այնպիսի մարգարէից կա-
տաղել և յատենի թագաւորաց. և ասաց ծաղրե-
լով, որովհետև անց ոգի նոն զինև, և խо-

սեցաւ ընդ քեզ։ Մինչիա համեստութիւն ինն եւ նմա պատասխանի քաջագէպ. զայդ քո քաջութիւն ասէ պահեա՛ վասն այնր աւուր, յորում՝ ի լուր մահուն խուճապեսցիս ինդրել քեզ թաքուստ սենեակ՝ ի սենեկի ծակամուտ լինելով։ Լակ աբաաբ փոխանակ զժպիրն զայն ըստ արժանեաց յանդգնութիւնն պատժելոյ, հրամայէ զմիքիա զարդարն պահել՝ ի տուն բանտին, և տալ նմա հաց նեղութիւն, և ջուր նեղութիւն, մինչև դառնայցէ ինքն խաղաղութիւն և յաղթանակաւ՝ ի պատերազմէն։ Յայն ժամ ասէ միքիա՝ բարձրացուցանելով զձայն իւր՝ ի լուր ամենեցուն. եթէ դու ա՛ռքայ դառնալով դարձցիս ողջ՝ ի պատերազմէդ, ապա ես սուտ խօսեցայ, և ո՞ր ոչ խօսեցաւ ընդ իս. լուարո՛ւք զօրքդ ամենեքեան, և ժողովուրդ առհասարակ։

Յովսափատ յայս ամենայն անցս լուա կայր, և մտախոհ լինեալ վասն անձին, թէ զի՞նչ արասցէ։ Լսեա՝ զի մարգարէութիւնք միքիայ որում հաւատայր, հայէին միայն յանձն աքաաբու, և ցրուելոյ զօրուն իսրայէլի. ուստի՝ ի մտանել նորա՝ ի պատերազմ ընդ աքաաբու, այլ ինչ միտս չունեալ կրելոյ, բայց միայն նուաստուելի ինն պատուոյ, ի պարտիլ իսրայէլի՝ փախչիլ և ինքեան իբր պարտեալ։ Լսէլ մեծագոյն անպատուութիւն և տմարդութիւն համարեալ անձին ստել խոստմանն հրաժարելով՝ ի պատերազմէն։ Լսանաւոր հայելով՝ ի ՝ոբ գիրս, ոչ գտանեմք յիշատակ ինչ զյուդայեան զօրուն՝ ո՛չ՝ ի մարգարէութիւնն և ո՛չ՝ ի պատերազմի յառաջ կամ զկնի. յորմէ երևի թէ յովսափատ գնաց ընդ զօրս իսրայէլի, ունելով ընդ ինքեան յիւրոց անտի միայն զթիկնապահս, զոր ած ընդ իւր՝ ի սամարիա։ Լաբելի է թէ՝ ի սկզբան անդ առաքեալ էր զպատուէր՝ ի յուդա գալ զօրուն իւրոյ. այլ ապա՝ ի լսել զմարգարէութիւն միքիայ՝ հակառակ հրամանաւ յամեցուցեալ էր զգալուստ նոցա, անտարակոյս գոլով զպարտութիւն իսրայէլի ըստ հաւատի մարգարէութիւնն։ Ասն որոյ երևի թէ եդ՝ ի մտի երթալ, որպէս որք երթան լոկ՝ ի տեսանել, քան

թէ՝ ի պաշարել զքաղաքս։ Իսկ աքսաբ առ՝ ի դերև հանելոյ զծայնն պատգամն՝ զայս հնարս խորհեցաւ. զի զիւր թագաւորական զգեստս զգեցոյց յոմանսատաս. և ինքն սլլակերպեալ իբրև զսոսկական ոք, և նստեալ՝ ի կառս, գնաց խառնեցաւ՝ ի խումբս հասարակ զինուորաց, և եմուտ՝ ի պատերազմ։ Օ՛ի թերևս իմացեալ իսկ իցէ՝ ի լրտեսաց իւրոց զպատուէր որդւոյն ադերայ, զոր ետ երեսուն և երկու կառապետացս իւրոց (որպէս գնի յԵբրայականն և յայլ օրինակս) ուշադիր լինել ամենայն արթնութիւն աբքային խորայելի, զնա միայն զառամբ ածել կենդանի կամ մեռեալ. որով կամէր բառնալ զնախատինս անձին իւրոյ, և դարձուցանել զպատիւ իւր՝ ունելով ընդ իւրով իշխանութիւն զթագաւորն, յորմէ երեք ամաւք յառաջ հարկեցաւ խոնարհ պաղատանաւք խնդրել՝ ի պարգև զկեանս իւր։

Բ.յլ հնարք աքսաբու առ սուղ ինչ նպաստեցին նմա. զի տեսեալ կառապետացս ասորւոց զյոմսատատ, և կարծելով թէ նա իցէ աբքայն խորայելի, դիմեցին՝ ի վերայ նորա. յայնժամ յոմսատատ յայն յետին վտանգ հասեալ, ՝ի ձայն մեծ գոչեաց առ ՝ծած խնդրելով օգնութիւն. ճանեան իշխանք կառացն եթէ սխալեցան, թերևս՝ ի ձայնէն, կամ յասելոյ նորա թէ՝ ՝ավ իցէ. և այսպէս ապրեցոյց զնա ՝ծած վասն հաւատարմութեան նորա առ նա։ Օ՛ի կառապետացն ասորւոց պատուէր ունելով վասն աբքային խորայելի և ոչ վասն աբքային յուդայ, թողին զնա, և դարձան յայլ կողմն խնդրել զաբքայն խորայելի. բայց ոչ գտին. սակայն եղիտ ՝ծած։ Բ.անզի նետ մի արձակեալ բուռն սատակութիւն՝ ի միոյ՝ ի զօրաց ասորւոց՝ ի մէջ բազմութեան յանդրոշ, ՝ծած ուղղեաց զնա՝ ի նպատակ անդր յաբքայն խորայելի. որ եհար զնա ընդ զբահն և միեցաւ՝ ի թոքառաջն և՝ ի ստամքն։ Բ.քաաբ թէպէտ վիրաւորեալ, բայց և այնպէս ոչ եթող զլխովին զանակ իւր, այլ ասաց ցկառապետ իւր դարձուցանել զկառս յետս կոյս՝ ի վերջապահ դաս իւրոց

զօրաց. և պատերազմն երկարեցաւ յայնմ աւուր մինչև ցընդերեկս։ Իսկ աբսաք կայր 'ի վերայ կառացն. և արիւնն հոսէր 'ի խոցուածոց անտի և ընդոր զծոց կառացն, ապա 'ի մտանել արեգակն՝ եկ ոգի նորա։ Զոր ժամայն եկաց քարոզ զօրուն 'ի բանակին՝ եթէ մեռաւ արքայ. և զօրն ամենայն ցրուեցաւ իւրաքանչիւր 'ի քաղաք իւր, և յամենայն դարձաւ յերուսաղէմ. իսկ զմարմին աքսաքու բերեալ թաղեցին 'ի սամարիա։ Եւ զկառան, որոյ ծոց ողջոյն էր յարիւն թանձաւեալ, որպէս և փոկք սանձի երիվարաց (որպէս ուստի լատինն,) և զենք և անօթք զինուց նորա, (ըստ որում ընթեռնու ասորին և քաղդէացին), լուացին 'ի հրապարակ սնդր յաւազանն սամարիայ. և շունք լիզեցին զարիւն նորա՝ ըստ մարգարէութեանն Եղիայի, որ սկսաւ կատարիլ 'ի սամարիա 'ի վերայ հօրն, և հանդերձեալ էր լցանալ յորդին՝ 'ի դաշտին յեզրայելի։ Եւ ոստ եօթանասունք յաւելուն. "Եւ բոզք լուացան յարեան". ուր երբայեցին վարք զբաւդ Օնամ, որ է պոռնիկ. այլ մարգարէ նշանակել ասէն ոմանք և Օնամ՝ այն է գօտի, այլև փոկ. իբր ասել, 'ի լուանալ անդ զկառս՝ լուացան և փոկք սանձից երիվարաց։ Իսկ այն՝ զոր ասեն ոմանք, թէ 'ի ծոց անդր կային նկարեալ կամ քանդակեալ նմանութիւնք անհամեստ կանանց կամ կռոց՝ որք լուացան 'ի լուանալ զկառան, անհին ինչ երևի մեզ։

Գ.Լ. ԺԲ.

Հրաշալի յաղթութիւն յովսափատ 'ի վերայ բազմամբոխ այլազգեաց։ Լայրապատումն Նաւուց՝ զոր արար ընկերակցութիւնք ոչոչէայ արքայի Եսրայէլի։

Իբրև դարձաւ յովսափատ յԵրուսաղէմ՝ փախուցեալ ամենայն 'ի ձախող պատերազմէ անտի ռամովթայ, առաջին ողջոյն զոր ընկալաւ 'ի թագաւորեալ քաղաքի անդ իւրում, եղեն յանդիմանութիւք առ նա 'ի կողմանէ ոչ։ Վասնզի ելեալ ընդառաջ նորա Յեհուայ մարգարէի որդւոյ անանիայ, ասէ ցնա. Եթէ մեղաւորին դուս օգնես, կամ ատելոցն 'ի տնէ բարեկամ լինիս և միաբանիս ընդ նմա. վասն այդորիկ արժանի էիր խստագոյն պատժոյ. այլ զի ոչ առաւել 'ի բարեմտութիւդ հայի քան 'ի գործդ յայդ, վասն բարեաց քոց՝ զի բարձեր զանտառսն յերկրէն յուդայ, և ուղղեցեր զսիրտ քո խնդրել զՏէր, ապրեցոյց զքեզ, անտես առնելով զվիրապակդ միաբանելոյ 'ի զէն ընդ ամպարշտին։ Յովսափատ յոժարամիտ ընկալաւ զյանդիմանութիւն. և յաւել 'ի տգ նսխանձ իւր. միանգամ էլ անձամբ յայց ժողովրդեան և երկրի իւրոյ 'ի բերսաբէէ մինչև 'ի լեառնն Եփրեմի՝ 'ի ծագէ 'ի ծագ թագաւորութիւնն իւրոյ. եբարձ որչափ ինչ զօրեաց՝ զբազում չար սովորութիւս, կորոյս 'ի միջոյ զկուռսն, զոր յանցանել ամենց ստտ անդ սկսեալ էին վերստին մուծանել։ Այլ կացոյց դատաւորս արդարակրօրէն յամենայն քաղաքսն և յամուրս յուդայ, պատուիրելով նոցա արդարութիւն և երկիւղիւ Տէրն վարել զգործս իւրեանց. վասն զի ասէ ոչ զմարդկան իրս դատիք դուք, այլ զՏէրն. և ըստ գործոց ձերոց ընկալջիք զհատուցումն։ զի ոչ գոյ Տէրն ոչ մերոյ անիրաւութիւն, և ոչ երեսաց աչառել, և ոչ առնուլ կաշառս։

Այլ և այս անգամ ոչ յաջողեցաւ նմա բառ-

նալ զսէրսնս բարձանց, յորս զոհէր ժողովուրդն՝ ՅՈՒ, այլ ընդդէմ օրինաց ՅՈՒ. սակայն այն թոյլտուութի ոչ էր նորա մեղ, այլ ժողովրդեան, որք վասն զի որպէս թէ իբր բռնի 'ի բաց դարձեալք էին 'ի կռապաշտութէ, չէղև հնար խսպառ արգելուլ զնոսա 'ի զոհելոյ 'ի սէրսնս բարձանց յառաջնմէ շինեալս 'ի պատիւ ՅՇՄԱՐՏԻ, գոլով սովորեալք զոհել 'ի նոսա։ Այլ ոչ ՅԺ վասն այնորիկ բարկացաւ 'ի վերայ յովսափատայ. նա՝ յայտնի իսկ երևեցոյց զհրաշալի նախախնամութի իւր 'ի վերայ նորա ընդդէմ անհամար զօրուն, որ զայսու ժամանակաւ էին հեղեղաբար ծածկել զամենայն երկիրն յուդայ։ Զանգի մովաբացիք և ամմնացիք, ընդ նոսա և բաղումք 'ի վինեցւոց անտի՝ որք էին եղովմայեցիք հնազանդեալք ընդ ձեռամբ թագաւորացն յուդայ, և առ չերևելոյ սպասամբք՝ զգեցեալ էին ըստ տարազու ամմնացւոց և էին խառնեալք 'ի գունդս նոցա, անցեալ զյորդանան, յառաջ խաղային յարձակել յերկիրն յուդայ՝ յայնմ կողմանէ ուր տկարագոյն էր։ Զի էր ինչ անկարող և յովսափատ առ 'ի դիմադրաւ լինել նոցա, ունելով յոտին միլիոն մի և հինգ հարիւր հազար արանց քաջակիրթ պատերազմիկանաց. սակայն և այնպէս 'ի լսել զհասանել բազմամբոխ թշնամւոյն՝ զոհի հարաւ։

Յովսափատ թէպէտ միշտ զինեալ, այլ միշտ երկչոտ. բայց երկիւղ իւր ոչ էր 'ի վատասրտութէ, այլ էր երկիւղ՝ որ և գովելի՝ ծագեալ 'ի քաջ խելամուտ լինելոյ նորա այսմ ՅՇՄԱՐՏՈՒԹԻՆ, թէ 'ի նմանիր են ամենայն մարդկային զօրութիք, եթէ առ յՅՈՒ ոչ զօրասցին. ամենայն ամբակուռ ամբոցք ինչ ոչ զօրեն ընդդէմ թշնամեաց, եթէ ՅՈՒ զօրութենց ոչ մարանցիցի վասն նոցա։ Վասն որոյ երկիւղ յովսափատու ոչ էր 'ի մարդոյ, այլ յՅՈՒ. երկնչէր 'ի մարդկանէ ոչ իբրև 'ի մարդոյ, այլ իբրև 'ի սպասաւորաց ՅՈՒ. որ ոչ տայր նմա վհատիլ, այլ դարձուցանելով զսիրտն բոլոր հայցել զօգնութի նորա, տայր նմա արիանալ։ Այսպէս

յամենայն գիպուածս գտանեմք զյովսափատ երկչոտ, այլ տեսանեմք զնա միշտ սրի՝ ոչ փախչել 'ի վտանգաց, այլ քաջութիւն 'ի գլուխ զօրուն արձանացեալ առաջին լինել 'ի Հակատ ընդդէմ թշնամեաց։ Զ՚այս է գործ երկիւղի սիրոյ. որ տիրապէս ասի երկիւղածութիւն, և առնել զմտրդ զգուշաւոր, այլ միանգամայն և արիասիրտ։ Զ՚ասն որոյ 'ի լուր ահեղ զօրութիւն թշնամւոյն հասելոյ՝ քարոզեաց պահս յամենայն թագաւորութիւն իւրում. և ինքն դիմեաց 'ի տաճար ՏՐՆ, ուր 'ի մէջ բազմութիւն զօրաւարաց և ժողովրդեան յանդիման սրահին նստրոյ՝ յաղերս անկեալ առաջի ՏՐՆ, խոնարհ, ցաւագին և ջերմ պաղատանօք խնդրեաց զօգնութիւն նոցա, յիշեցուցանելով զմեծամեծ ողորմութիւնս զոր արար ազգի իւրում՝, և զխոստմունս զոր խոստացաւ նոցա՝ յորժամ 'ի նեղութիւն իւրեանց դառնայցեն և յամենայն սրտէ կարդայցեն առ նա։

Զուաւ ՏՐՆ աղօթից յովսափատայ. զի ողիկել որդի զաքարիայ մի 'ի զևտացւոց անտի՝ որք անդն կային յաղօթս ընդ արքայի, ընկալեալ 'ի ՏՐՆէ զՀոգի մարգարէութիւն՝ ամբարձ զձայն իւր 'ի մէջ այնր բազմութիւն, և ասէ. լուարուք ամենայն յուդա և բնակիչք երուսաղէմի, և արքայ յովսափատ. այսպէս ասէ ՏՐՆ ցձեզ. մի երկնչիք և մի զարհուրիք յերեսաց բազում ամբոխին այնորիկ, վասն զի ոչ է ձեր պատերազմդ, այլ ՏՐՆ։ Զ՚ելիք ընդառաջ նոցա, և վաղիւ տեսջիք զնոսա ելանել ընդ զառ 'ի վայր բլրոյն ասէր յանապատն Յերիէլի. ուր ոչ եղիցի ձեզ հարկ սուր հանել. զի առանց պատերազմելոյ ձեր ընդ նոսա՝ վայելեսջիք զարդիւնս կատարեալ յաղթութիւն. զի ՏՐՆ է ընդ ձեզ։

Զ՚ու եղև այնպէս. զի կանխեցին ընդ առաւօտն զօրք յուդայ և յովսափատ 'ի գլուխ նոցա, և երթային նուագելով սաղմոսս և օրհնութիւնս առ ՏՐՆ բարձրեալն ՏՐՐ, որք երևէին յաւէտ իբրև զդասս սաղմոսանուագ զևտացւոց, քան թէ գունդս զի նուրոց։ Զ՚սկ թշնամիք, որք զտեղի առեալ էին յենդադդի, որ կոչի և ասասանթամար՝ ոչ կարի

ինչ հեռի 'ի մեռեալ ծովէն, իբրև Ծանեան 'ի լըռեսաց իւրեանց, եթէ յովսափատ յառաջ խառղայ ընդ դաշան Թեկուայ, ելին և նոքա ուսել զբլուրն ասեր, և դարանիլ անդ զնդին յուդայի։ Լ.այլ ասա կամ 'ի պատնառս կռուոյ իմիք ծագելոյ 'ի մէջ ամենացոց և մանաքացւոց, և 'ի մէջ եդոմմայեցւոց լեռնականաց լերինն սէյիրայ խառնելոց 'ի գունդս ամենացւոց. կամ զի կասկած ինչ առեալ էր նոցա զմիմեանց, և կամ որ և է օրինակաւ այլ ինչ չփոթումն անկեալ 'ի նոսա 'ի ներսն, մինեցան 'ի մարտ ընդ միմեանս. զառաջինն հարան կոտորեցան եդոմմայեցիք. ապա ամենացիք և մանաքացիք ջեռեալք՝ դարձուցին զսուր իւրեանց 'ի վերայ միմեանց անհնարին կատաղութիւն, մինչև իսպառ կոտորել զիրեարս, և չմնալ 'ի նոցանէ ապրեալ և ոչ մի։ Հասեալ բանակին յովսափատու 'ի բարձրադիտակ վայր, ուստի երևէր տեղին, տեսին զլայնարձակ դաշտավայրն ծածկեալ դիակամբք. որ սուղ ինչ յառաջ էր գրաւեալ 'ի բազմամբոխ պատերազմիկանաց անտի։ Լ.սա զմնացեալսն պարագայ ինչ նշանակէ՝ զի գիրն, թէ մարտ և կոտորած թշնամեաց սկսաւ 'ի նմին ժամու, յորում 'ի բանակին յովսափատու սկսան երգել զօրհնութիւնս ներն և զխոստովանութիւնս նորա. Ք. Ներ. Է. 22. որպէս զի թագաւորքն մի համարեսցին բերանս պարարտարդս զմիանձնութեան զայնոսիկ, որք չունին այլ ինչ գործ յաշխարհի, բայց միայն երգել զօրհնութիւն ներն նոյ. և հաւատասցեն թէ բազում անգամ յաղթութիւք գործին 'ի պատերազմունս սուաւել 'ի ջերմ սաղմոսերգութեաց 'ի դասի, քան 'ի զօրաց պատերազմողաց 'ի դաշտի։

Լ.պա էջ յովսափատ և ամենայն զօրն ընդ նմա 'ի կողոսպուտս աւարի նոցա, որ այնչափ բազում էր և հարուստ, զի չեղին բաւական աւարքն երեք ժողովել զնոսա։ Լ.ւ յաւուր չորրորդի ժողովեալ համարին զօրուն 'ի հովիտն՝ երգեցին միաբան գոհացողական օրհնութիւնս ներն. յորմէ և զտեղին կոչեցին հովիտ օրհնութեան։ Լ.ւ դարձաւ յովսափատ

և ամենայն յուդա յերուսաղէմ ուրախութիւն մեծաւ. քանզի ուրախ արար զնոսա նոր 'ի թշնամեաց իւրեանց, և մնին քնարօք և տաւղօք 'ի տուն նոր։ Այլ եղեն՝ ասէ գիր, արհաւիրք 'ի նոսա 'ի վերայ ամենայն թագաւորութեաց երկրի, 'ի լսելն նոցա՝ եթէ որ եւ պատերազմ ընդ հակառակորդս խրայելի։ Այսպէս ոչ առնէ ահարկու զերկչոտս, յորժամ որ է երկիւղ նոցա. և ընդ ոտիւք նոցա նուաձէ զյանդգնական արիութիւս, մինչ ծանուցեալ զտկարութիւն իւրեանց՝ զինուորին աներկմիտ յուսով ամենակարողութիւն ոյ։ Այլ միայն մնաս ծանր պատահեաց յովսափատայ 'ի ծովու. բայց և այն 'ի նոսա եղև. զի կամեցաւ որ երկրորդ անգամ ուսուցանել նմա չմիաբանիլ ընդ անհաւատ թագաւորի։

Իբրև մեռաւ աքաաբ արքայ իսրայելի, թագաւորեաց ոքոզիա որդի նորա։ Այս եօթն ամաւք յառաջ քան զմեռանել հօր իւրոյ, յամին եօթնուտասներորդի թագաւորելոյ յովսափատու 'ի վերայ յուդայ, ընկալեալ էր 'ի ժողովրդենէ և 'ի հօրէն զիրաւունս յաջորդութեան աթոռոյ հօրն. ուստի և ընդ այն եօթն ամն թագաւորեաց առ հարբ։ Յառաջնումամի ինքնիշխան թագաւորելոյ իւրոյ՝ կամեցաւ շահավաճառութիւն առնել 'ի կարմիր ծովու. այլ զի ծովն այն հեռի էր յերկրէ թագաւորութիւն իւրոյ, աղաչեաց զյովսափատ՝ որ խաղաղութիւն էր ընդ նմա, որպէս եղև ընդ հօր նորա, շինել նաւս անդ 'ի կարմիր ծովու՝ երթալ 'ի Թարսիս ծախիւք երկոցուն. որպէս զի և շահեկանութիւն նաւարկութեանն լիցի և ինքն բաժանորդ ըստ համեմատութեան գլխոյ իւրոց դրամոց։ Այս ակնարկիր վուլկատայն, ուր ասի. " Այլ բաժանորդ եղև. (ոքոզիա), զի արասցեն նաւս՝ որք երթիցեն 'ի Թարշիս. և արարին նաւատորմիղ 'ի գասիոնգաբեր ॥. Է. հատ. Է. 36։ Յովսափատ զայս ընկերութիւն ընդ անհաւատ թագաւորի ոչ համարեցաւ անհաճոյ լինել ոյ. իբր զի յայս գործ ոչ որ յարմնց ոքոզիայ ունէր մնանել. ուստի և ոչ գոյր վատնոգ

իւրոց ծառայից միասիւ 'ի նոցանէ 'ի հաւատս և 'ի վարս. վասն որոյ յանձն առ 'ի կատարել 'ի գլուխ զերսն։ Այլ թէպէտ թագաւորութիւն յուդայի ոչ տարածէր անդր քան զերիսն սէյիրայ, բայց ար. քայն յուդայ ընդ այն ժամանակս տիրէր 'ի վերայ համարին ընդարձակութիւն որ 'ի լերանց անտի ձգէր մինչև 'ի ծովն կարմիր։ Վասնզի եդովմ, զոր դաւիթ հարկատու արար ինքեան, չունելով յայնժամ թագաւոր յազգէ իւրմէ, էր ամենայնիւ ընդ հնազանդութիւն արքային յուդայ իբրև սեպ. հական թագաւորի իւրոյ։ Վասն որոյ ընտրեաց յովսափատ զնաւահանգիստն գասիոնգաբերայ 'ի շինել անդ նաւս. որպէս և շինեաց և պատրաստեաց ամենայն կարասեաց։ այլ հազիւ թէ առաջ գաստեցան նաւքն, խորտակեցան առհասարակ, կէսք առ նաւահանգստիւ, և կէսք 'ի նաւահան. գստի անդ։ Այս մինչև էր հասեալ սուրհանդակի յերուսաղէմ քերել զլուր արկածիցս, եղիսաղբ մարդարէ որդի դոդովայ կամ դոդգիայ 'ի մարեսայ՝ մնասեաւ առ յովսափատ, և ասէ ցնա. վասն զի միաբանեցար 'ի ծովու ընդ ոքոզիայ, արդ դիտասցես զի կորեաւ գործն քո. քանզի խորտակեաց ՏԵՐ զնաւս քո՝ ոչ ևս երթալ 'ի թարսիս։ Յովսափատ կատարեալ հնազանդութիւն ճաշային կամաց յօժարամիտ ընկալաւ զհարուած պատժոյն։

Յետ այսորիկ դարձեալ բազումս յորդոր եղև նմա ոքոզիա անդրէն նոր նաւատորմիղ կազմել. և զի նա անհմտութիւն և անվարժութիւն նաւավարաց տայր զպատահարն, խոստանայր առաքել նմա յիւրոց արանց արհեստաւորս հմուտս, նաւապետս և նաւաստիս փորձս և քաջավարժս. յորոց և արք յովսափատու ուսցին զարհեստս նաւարկութեան։ Զայս ևս նշանակէ վուլկատայն այսպէս. "Եսե ոքոզիա ցյովսափատ, երթիցեն ծառայք իմ ընդ ծառայս քո 'ի նաւս ॥. Գ. Թագ. ԻԲ. 50։ Բայլ ոչ եւիք հաւանեցաւ յովսափատ, ուստեալ 'ի մարգարէն՝ եթէ այն միաբանութիւն ոչ է հաճոյ ՏՈՒ. Թագ զի և ոքոզիա ոչ յերկարեաց 'ի կեանս։

ԳԻՐՔ ՄԵՏՄԱՍՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ։

ԳԼ. Ա.

Պապգամ եղէայ մարգարէէ առ ոչոզէա արքայ իսրայէլի։ Էրեցու

եղէայի։ որոմ յաջորդէ եղիսէ մարգարէ։

Յետ երկուց ամաց մնհու հօր իւրոյ աքսաբու՝ մեռաւ ոքոզիա արքայ իսրայէլի, ամ կեալ 'ի վանդակապատէ վերնատանն իւրոյ՝ որ 'ի սամարիա. զի թէպէտև ոչ նոյնժամայն ընդ անկանիլն Եհան զոգի, բայց խօթացաւ մինչև 'ի մահ, զի և ինքնին 'ի միտ էառ՝ եթէ 'ի վտանգի է։ Սակայն և այնու ոչինչ զգաստացեալ, փոխանակ առ մարգարէս նոն դիմելոյ՝ առաքեաց յակկարոն քաղաք փղշտացւոց հարցանել զբէեղզեբուղ, որ և բահաղ զերբուղ, այս է տէր ճանճից, կամ ճանճիկ աստուածն, զոր պաշտէին ակկարոնացիք, եթէ ապրիցի՞ յախտէ անտի։ Այնչ երթային հրեշտակքն ոքոզիայ, հրեշտակ նոն առաքեաց զերղիա թէզբացի ընդառաջ նոցա զնանապարհայն. որ և ասէ ցնոսա խստութիւն, դարձջի՛ք և ասացէ՛ք ցոտ տէր, առ 'ի չգոյէ՞ ոչ 'ի մէջ իսրայէլի, երթայք դուք հարցանել 'ի բահաղ զճանճիկ աստուածն ակկարոնի. արդ՝ գիտասցէ, զի վասն այդր արհամարհուեա՛ զոր արար նա ոչ, ոչ ևս իջցէ 'ի մահճայն յոր անկաւ. այլ 'ի նմին մեռցի։ Հրեշ-

տակը ոքոզիայ ոչ ճանաչէին զեզիա. քայց յեղանակ խօսելոյ նորա, և յայտնելոյ զպատճառ երթալոյ նոցա՝ զոր մարդկօրէն չէր կարող գիտել, ոչ ինչ երկուացեալ՝ թէ ճշմարիտ մարդ արէ՞ այ նա, հաւատացին բանիկ նորա. և դարձան պատմեցին ոքոզիայ վասն առն՝ որ եկ ընդառաջ նոցա, և զբան նորա զոր խօսեցաւ։

Եւ նշանաց անտի թաւ մօրուացն և մազկեղէն գօտւոյ, զոր հագուն հրեշտակքն, ծանեաւ ոքոզիա՝ եթէ եղիա է նա, որ խօսեցաւ նոցա. և զի գիտէր՝ թէ եղիա նստի ՝ի գլուխ կարմելոս լերին, առաքեաց առ նա վաղվաղակի յիսնապետ մի հանդերձ յիսուն զօրականաւք նորա՝ ունել զնա, և ածել առաջի իւր։ Եւ տեսեալ՝ զի յամէ դարձ նոցա, առաքեաց այլ յիսնապետ և զյիսունս նորա ընդ նմա. քայց իբրև և ոչ դարձ նոցա երևէր, յաւել առաքել և երրորդ անգամ նոյնչափ զօրս հանդերձ իւրեանց յիսնապետիւ։ Բ.յլ առաջին և երկրորդ յիսունքն ոչ ևս էին կենդանի. քանզի յիսնապետաւք նոցա կամեցեալ խրոխտ և անվեհեր երևիլ ըստ զինուորական սովորութեան, թէպետև գիտէին թէ այրն առ որ առաքեցան՝ էր Ծառայ ՝ի, կարծեցին թէ կարող իցեն և ընդ նմա արհամարհանաւք վարիլ ըստ կամաց ամենակալ թագաւորի իւրեանց։ Բ.ռաջին յիսնապետն հրամայեաց նմա իշխանաբար իմն՝ ասելով, այրդ ՝ի՞՝ արքայ կոչեաց զքեզ, էջ այտի. երկրորդն յանդգնագոյն ևս, այրդ ՝ի՞՝ այսպէս ասէ արքայ, էջ այտի վաղվաղակի։ Իսկ մարդարէն կամեցեալ ուսուցանել նոցա և ամենայն երկրին, որ կարօտ էր այսպիսի ուսմանն, ՝ի յարգի ունել զնոսա զոր ճշմարտութիւն են Ծառայք ՝ի՞՝, ետ պատասխանի երկուցումնց, և ասէ. եթէ այր ՝ի՞՝ իցեմ ես, իջցէ հուր յերկնից, և կերիցէ զքեզ և զյիսունդ քո. և ահա զայդ ընդ բանին էջ բոց հրաշական, և յաճուն դարձոյց զառաջին և զերկրորդ յիսնապետս և զյիսունս նոցա։ Իսկ երրորդ յիսնապետն զդիմացեալ յերկուց օրինակաց ասի, եկն ոչ խրոխտանաւք,

այլ բազում խոնարհութիւն, և անկեալ 'ի վերայ ծնգաց իւրոց առաջի եղիսայի՝ աղաչեաց զնա խնայել 'ի նա և 'ի յիսունս իւր. լուաւ եղիա հայցուածոց նորա։ Յայնժամ հրեշտակ տէր ասաց ցեղիա՝ իջանել 'ի լեռնէ անտի, և երթալ աներկիւղ առաջքայ ընդ այնպիսի ակնածու և խոնարհամիտ զօրապետի։ Վասնզի եղիա, այլ խօսակցուին ընդ ոքզիայ կարի համառօտ եղև, զի նա զնոյն կրկնեաց և ասդ, զոր ինչ ասաց յառաջ դհրեշտակս նորա. իսկ ոքոզիա սուղ ինչ յետոյ եկ 'ի կենաց ըստ բանի մարգարէին, յերկրորդ ամի ոչ լսացելոյ՝ թագաւորութիւն իւրոյ։

Յետ սակաւուց զրկեցաւ խորայէլ 'ի մեծէն եղիայէ. քանզի եհան զնա տէր 'ի միջոյ մարդկան, և վերացոյց կենդանւոյն հրեղէն կառաք՝ կեալ յայլ լաւագոյն տեղւոջ։ Այդիսէ գիտելով 'ի յայանուէ տէն զմնալուստ յափշտակումն քաղցր վարդապետին իւրոյ՝ կամէր 'ի ժամուն յայնմիկ առ նմա գտանիլ. իսկ եղիա պէսպէս պատճառանաքս հնարեր մեկուսանալ 'ի նմանէ. բայց չեղև հնար. քանզի եղիսէէ երդմամբ հաստատեաց ոչ թողուլ զնա։ Այդ եկ մարգարէն եղիա 'ի գաղգաղայի՝ երթալ 'ի բեթէլ, ասելով թէ այնպէս հրամանն ունի 'ի տէնէ. անտի գնաց յերիքով, և անտի 'ի յորդանան. այլ յայս ամենայն ճանապարհորդութիս միշտ անմեկնելի 'ի նմանէ ուղեկից եղև նմա եղիսէէ։ Իբրև եկին 'ի բեթէլ, որդիք մարգարէից աշակերտեալք եղեսայի և եղիսէի, որք էին անդ 'ի բեթէլ, ընկալեալ և նոցա յայտնութիւն 'ի տէնէ վասն ընդհուպ վերանալոյ եղիայի, մատեան տագնապաւ առ եղիսէէ իբր անակնկալ լուր ինչ պատմել նմա, և ասեն. եթէ գիտիցես, զի այսօր առնու տէր զտէրդ 'ի գլխոյ քումմէ. իսկ եղիսէէ սաստեաց նոցա լռել, երկուցն ալ թէ յիմանալ եղիայի՝ եթէ հրատարակեցան իրքն, յանկարծակի անեբևոյթ լինցի յամենեցունց, և ինքն զրկեսցի 'ի տեսանելոյ զնա 'ի փոխիլ նորա յերկրէ։ Զնոյն ասելին և որդիք մարգարէից որ յերիքով. որոց նոյն

պէս պատուիրեաց լռել. զի գիտեմ և ես ասէ։ Եւ յորժամ եղեալ և եղիսէէ երկնի յերկրաւոր երթալ 'ի յորդանան, յիսուսն այր յորդւոց մարգարէիցն երկրաւոր իբր ծածկաբար ելանն երթային զկնի նոցա 'ի բացուստ՝ ցանկացեալ տեսանել զփոխումն եղեալի։ Եւ զեան յորդանանու եհատ զձանապարհ գնացից նոցա. բայց ոչ նոյնպէս եղեալի և եղիսէի. վասն զի եղեալ առեալ զմաշկեակն իւր և ծալեալ՝ եհար զջուրն, և նոյն հետայն բաժանեալ ջուրցն յայսկոյս և յայնկոյս՝ բացին նոցա ցամաք ճանապարհ. ընդ որ իբրև անցին նոքա, անդրէն միացան ջուրքն. և նոքա մնացին յայնկոյս 'ի հանդիպոջ 'ի բացեայ։

Եւ պա եղիսէէ հրաման ընկալեալ յեղիայէ՝ խնդրել ինչ 'ի նմանէ մինչև իցէ վերացեալ. խնդրեաց զի կրկին ձիրք զոր ՝ուծ շնորհեաց եղիայի, եկեսցեն 'ի նա. այսինքն ոգի մարգարէութեան և ոգի աքանչելագործութեան։ Ոչ խնդրեաց զայն վայրապար. այլ զի յերկրէն ուր առ ամենայն քայլ ոտից կուռք ընդառաջ լինէին, այս երկու պարգևք կարևոր էին 'ի փառաւորութիւն անուան ՝ուծ Ճշմարտի։ Եւ պատասխանի եղիա, թէ դժուարին է խնդիրդ. սակայն ասէ՝ եթէ տեսանիցես զիս յամբառնալն իմում, եղիցի նշան հաւաստի, թէ լուաւ ՝ուծ հայցուածոց քոց։ Եւ մինչդեռ երթային խօսելով ընդ միմեանս, ահա յերգակարծու�ն կառք և երիվարք 'ի լուսափայլ ամպոյ հրակերպ ձևացեալք՝ շարժմամբ մեծաւ հասեալ անջրպետեցին զերկուսն 'ի միմեանց, և զերգիա յարիշտակեալ կենդանւոյն վերացուցին յօդս, և 'ի թևս հողմոյ առան՝ ուր առաջնորդեցին հրեշտակք։ Եւ զտեղին, և զվիճակ կենաց նորա հանդոյն ենովքայ նահապետի, թէ զիարդ կեայ այժմ, և թէ արդեօք կերակրի՞, և զի՞նչ գործէ, ծածկեաց 'ի մէնջ ՝ուծ. և որ ինչ ասի յառաջնոց կամ՞ 'ի յետնոց անմիաբանաբար, է լոկ կարծիք, չուենելով ինչ հիմն 'ի ՝ոբ գրոց, ոչ և ոչ 'ի հաստատուն ինչ վարդապետութիւն եկեղեցւոյ. այս միայն է հաւաստի,

զի ունի մնալ կենդանի մեծ 'ի կատարած աշխարհի, և գալ նահատակիլ յայնժամ ընդ ենովքայ, որպէս յայտ է 'ի յայտնութենն յովհաննու։ Լ.յլ մեք 'ի կարգ առաջիկայ պատմութեան դարձցուք։

Լդիսէոս ոչ զօրեալով վերաթևեալ մսրմնով ընդ օդս զկնի նորա, հայեցիւք աչաց և ձայնիւ յուղարկաւոր լիներ նմա՝ աղաղակելով, հոյր հայր, դու էիր կառք որով յառաջադէմ լիներ երջանկութեան խորայելի. դու էիր առաջնորդ 'ի շաւիղ ուղղութեան հանել զիսրայէլ։ Կամ այսպէս, դու էիր ամենայն զօրութեան. դու միայն հաւասար էիր ողջոյն բանաւակի զօրաց։ Լյ. իբրև անեղեւոյն Եղև ցանկալին յաչաց տեսութեան, բուռն հարեալ զհանդերձից իւրոց՝ պատառեաց յերկուս ծուէնս. և առեալ զմանչկեակն, զոր եղեա 'ի վերանալ իւրում ընկեց 'ի վերայ նորա, զոր և կալաւ նա իբրև ժառանգումն անգին, դարձաւ յերիքով։ Իբրև եկն յերիքով յորդանանու, վաղվաղակի ետես անդ զզօրութեան մանչկեակին. զի եհար նովաւ միանգամ զջուրսն. ուր վուլկադայն յաւելու, * և ոչ բաժանեցան ||. և ասէ. ուր ես տէր աստ եղիայի ապիսով. և եհար անդրէն զջուրսն, և բաժանեցան յայսկոյս և յայնկոյս. յորմէ երևի թէ երկիցս եհար, և յերկրորդումն յետ կարգալոյ զնոյն եղիայի՝ բաժանեցան ջուրք. և անց եղիսէէ ցամաքաւ ընդ յորդանան։ Իբրև տեսին զքանչելիսն որդիք մարգարէիցն որ յերիքով 'ի հանդիպոյն, ծանեան եթէ ոգին եղիայի հանգեաւ 'ի վերայ եղիսէի. և ընթացեալ ընդառաջ նորա՝ երկիր պագին նմա 'ի վերայ երկրի։ Լյ. իմացեալ զվերանալ եղիայի՝ կամեցան ելանել 'ի խնդիր նորա, ակնունելով գտանել զնա 'ի վերայ միոյ ուրուք 'ի լերանց, կամ 'ի բլրոց, և կամ 'ի ձոր ուրեք։ Լդիսէէ զառաջինն ընդդէմ եկաց նոցա, այլ 'ի բազում թախանձանաց նոցա բանաւ դատեալ՝ թոյլ ետ երթալ. թէպէտ և գիտէր թէ ընդվայր ունին յածիլ։ Իսկ նոքա ընտրեալ 'ի խմբէ իւրեանց արս յիսուն զօրաւորս՝ առաքեցին ընդ այլև այլ ճանապարհ. և յետ երից աւուրց յու-

զախնդիր լինելոյ ընդ ամենայն տեղիս, ուր կաք ծէլին գտանել, դարձան առ Եղիսէէ. որ և ասաց ցնոսա, «Չ ասայի ձեզ՝ թէ մի երթայք։

Եղիսէէ իբրև նստեր յերիքովի, մատեան առ նա աբք քաղաքին աղաչելով զնա 'ի լաւութիւն փոխել զջուր երկրին։ Եհաւասիկ ասէն՝ բնակութիւն քաղաքիս բարի է ըստ վայելուչ դրից, և ըստ օդոյն քաղցրութիւն, որպէս և ՝ոգի իսկ տեսանէ, այլ ջուրքս յոռի, որ ոչ միայն զերկիրն զոր ոռոգանէ ամուլ և անբեր առնէ, այլև մարդկան և անասնոց վնասէ։ Եհասց Եղիսէէ բերել նմա կուժ մի նոր, և աղ 'ի նմա. և զայս յայն սակս, զի տեսեալ նոցա զաղ 'ի կիր արկանել 'ի բժշկութիւն ջրոյն, որ եղծանէ և զբարի ջուրն, թողլ թէ զյոռինն բժշկեսցէ, 'ի յայտնի աքանչելեաց անտի ծանիցեն ամենեքեան զգթութիւն և զամենակարողութիւն նոյ։ Եհանց Եղիսէէ յակամս ջուրցն և ժողովուրդ ընդ նմա. ա՛րկ անդր աղ. և դարձեալ առ նոսա՝ ասէ. ուրախ լերուք, զի այսպէս ասէ ՝ոգի, բժշկեմ զջուրդդ զայդոսիկ, և մի ևս լիցի այտի մահ և անպտղակութիւն և անպտղութիւն։ Եու ահա այն ամենայն աղբիւրք իսկ և իսկ փոխեցին զյոռի որակութիւն իւրեանց. և եղեն այնուհետև միշտ բարի, առողջարար և արգասաւոր։

Եյլ զի ժողովուրդն խորայլեան առաւել արհաւրօք քան թէ բարութեամբ սովոր էր գալ 'ի զգաստութիւն, կամեցաւ ՝ոգի և ահարկու պատիժ ցուցանել նոցա 'ի ձեռն Եղիսէի՝ առ առաւել յարգոյ ընծայեցուցանել զնա յաչս նոցա։ Եանզի զկնի բժշկելոյ նորա զջուրսն երիքովի՝ այն ինչ Եելեալ անտի երթայր 'ի բեթել, բազմութիւն լիրք և ստահակ մանկանց Եելեալ 'ի քաղաքէն՝ ընթանային զկնի նորա, և աղաղակէին կատակելով, Եէլ կնատակ, Եէլ կնատակ։ Եղիսէէ լուեաց առ ժամանակ մի, այլ ապա տեսեալ՝ զի յանդուգն լրբութիւն նոցա անցան նէր քան զչափ, կարձեաց զնեղկատակ զուարճութիւն նոցա. դարձաւ 'ի թիկունս իւր, և հայեցեալ 'ի նոսա՝ անէծ զնոսա յանուն ՝ոն։ Եստ մերս յա-

ւելու առել եղիսէի. * որդիք յանցանաց և դատաբ-
կութեան ։ որ պակասի առ այլս ։ Լոյս նոյն ժամայն
ելին երկու արջք յանտառէն, և պատառեցին քա-
ռասուն և երկու 'ի սատակ մանկանց անտի ։ Սա-
վաւ էտ ասծ ծնողաց ուսումն կարևոր, թէ մնու-
ցանել աշխոյժս և զուարթագինս զմանկուսնս՝ պարբ-
տի լինել հանդերձ համեստութիւն և ակնածութիւն՝
որք զարդարեն զմանկական ոգի զուարթութեան
առանց տալոյ նոցա կարի համարձակութիւն, զի մի
զուարթութիւն 'ի լրբութիւն փոխեսցի. յորմէ
դժուարաւ լինի նոցա յուղղութիւն դալ ։

ԳԼ. Բ.

Հոովրամ Նաֆաւոր Խրայէլի, Ա Նէրգաֆէրդ Նորա յովնա-
ֆաբ արչայ յուդայ, Ա արչայն Եդոմայ հարքանէն զմովաբ,
Ա աւերէն զերիրիր Նորա ։

Իբրև մեռաւ ոքողիա, մնաց ինքնիշխան և
անկախ Թագաւոր իսրայէլի յովրամ եղբայրն Նորա ։
Վասնզի աքսաբ հայրն Նորա տեսեալ՝ զի ոչ գոյր
որդի ոքողիայ, և ոչ իսկ յոյս լինելոյ, և կամեցեալ
հաստատել զյաջորդութիւն յորդիս իւր, և զի մի
հակառակութիւն ծագեսցի 'ի մէջ այլոց եղբարց,
միով ամաւ յետոյ զկնի անուանելոյ զոքոզիա Թա-
գաւոր՝ զնոյն անուն Թագաւորի ետ և յովրամայ.
բայց ընդ իւրև, և ընդ եղբարբ ։ Լոյս այնպէս
սկսաւ յովրամ փարել զանուն Թագաւորի ընդ հարբ
և ընդ եղբարբ՝ յամի ութուտասանեքորդի յովսա-
փատայ արքայի յուդայ. և Թագաւորեալ ամն հինգ
ընդ եղբարբ և ընդ հարբ, ապա ամն երկուս ոչ
ամբողջ՝ ընդ եղբարբ միայն, 'ի մեռանել Նորա՝
ինքն եկաց Թագաւոր ինքնիշխան ։ Զեղև նա բաւ-

բեպաշտ , բայց և ոչ այնպէս ամպարիշտ որպէս զՀայը և զեղբայր իւր , ոչ տարաւ պաշտօն բահանդուս , զի ոչ հաւատայր 'ի կուռս , այլ սակայն պահեաց զերկու ոսկեղէն որթս՝ զոր կանգնեաց յեբրովամ , եդեալ 'ի մտի 'ի ձեռն նոցին պաշտաման պահել զժողովուրդն ընդ իւրով հնազանդութեամբ ։

Ա.ռաջին խորհուրդ նորա 'ի թագաւորել իւրում՝ եղև կազմել բանակ զօրաւոր 'ի բռնադատել զմովսա արքայ մովաբայ հարկանել նմա հարկս , որպէս առաջինքն քան զնա արարին ընդ ամն իբրև հարիւր ։ Ա.յլ ասա գիտել արժան է , զի յորժամ ժողովուրդ իսրայէլի բաժանեցաւ առ ռոբովամաւ և յերոբովամաւ յերկուս թագաւորութիս , ընդ նոսին բաժանեցան և ազգք նուաճեալք 'ի դաւթայ , և ընդ լծով կալեալք 'ի սողոմոնէ . և ոչ դտեալ դիպողութիւն թօթափելոյ զլուծ նոցա՝ բռնադատեցան 'ի մի կամ 'ի միւս կողմն յարիլ ։ Ա.սորիք բռնադոյն գոլով՝ յառաջագոյն թօթափեցին . եդովմայեցիք և փղշտացիք սահմանակից յուդայի՝ 'ի նա յարեցան . ամոնացիք և մովաբացիք՝ որք առաւել մատ էին ցեղից իսրայէլի որ յայնկոյս յորդանանու , եղէն հարկատու թագաւորաց իսրայէլի ։ Այ քանզի առաւել թեթև է ժողովրդեան հատուցանել զՀարկս յիրաց անտի՝ որք յաջախս են և առատ յերկրի իւրեանց , քան առձեռն դրամաք , մովաբացիք դիւրաւ տային մատն 'ի հօտից . քանզի ունէին պօտաս յուռթիս , և հօտս խաշանց անհամար , յորմէ և մովսա թագաւոր նոցա կուռեցաւ նէկէտ , որպէս թէ տեսուչ կամ հովուապետ . նմին իրի հարկն եդեալ 'ի դաւթայ , և յետ այնորիկ յաջորդութեամբ առեալ 'ի մովաբացւոց թագաւորաց իսրայէլի՝ էր հարիւր հազար մաքեաց , և հարիւր հազար խոյոց գեղմնաւորաց ։ Ա'ոմսա որ առ յոլովամաւ թագաւորեր 'ի մովաբ , յետ մեռանելոյ աբաաբու նշկահեաց զարքայն իսրայէլի . և ոչ ևս հատուցաներ զսովորական հարկն ։ Ա.զողիա չեգիա պարապ զօրաժողով լինել ընդ-

դէմ նորա, զի սուղ եղև թագաւորութիւն նորա. այլ յովհամ եղբայր նորա տարաւ 'ի գլուխ։ Եւ նա 'ի սամարեայ և հանդէս արար ամենայն իսրայէլի. կոչեաց իւր նիզակակից և զյովսափատ, որ սիրով և խաղաղութիւն էր ընդ նմա, որպէս եղև ընդ հօր և ընդ եղբօր նորա զրոզիպ։ Եւ հարց յովհամ զյովսափատ, թէ ընդ ո՞ր ճանապարհ ելանիցեն 'ի վերայ մովաբայ. նա ետ խորհուրդ ելանել ընդ ճանապարհ անապատին եդովմայ։ Եւ այս խորհուրդ ետ յովսափատ, մի՝ զի կամէր առնուլ ընդ իւր և զեդովմայեցիս անցանելով ընդ անապատ նոցա. և երկրորդ՝ զի ոչ կամէր թէ կարի ինն ծանրասցին երկրին այնչափ բազմութիւն զօրաց. որպէս լինէր՝ եթէ զայլ ճանապարհ կալեալ էին՝ որ դիւրին ևս էր, զօրօրինակ խորհէլ զճանապարհ ձախակողման յորդանանու յարևելից մեռեալ ծովուն, և յուղայ զճանապարհ լերանց սէյիրայ. և ապա 'ի բերան անապատին եդովմայ միանալ երեցուն։ Եւայց բարեմիտ արքայն ոչ ած յայնժամ զմտաւ զանբերելի դժուարութիւնն, զայնչափ բազմութիւն զօրաց անցուցանել ընդ անապատ անբեր և անջրդի։ Այլ զիարդ և իցէ, եկին միացան երեք բանակք 'ի մուտս անապատին եդովմայ։ Այսր 'ոգ դիրն զզօրավարն եդովմայեցւոց թագաւոր կոչէ, իմն իշխան կարգեալ 'ի ներքոյ ձեռին յուդայ. քանզի որպէս ասացաւ 'ի վերս անդր՝ ընդ այն ժամանակս ոչ գոյր թագաւոր յեդովմ, զի եդովմայեցիք էին ընդ անմիջական հնազանդութիւն թագաւորաց յուդայ, և սոքա կացուցանէին 'ի վերայ նոցա իշխան յազգէ նոցա՝ իբրև փոխանորդ իւրեանց. զոր մարթի է ասել այժմու խօսիլ տիրապէս կոչել փոխարքայ։

Այդ ելին երեքին սոքա՝ արքայ իսրայէլի, և արքայ յուդայ, և արքայ կամ փոխարքայ եդովմայ՝ իւրաքանչիւր ատուար գնդաւ իւրով յամայի անապատ անդր. և զեօթն օր ճանապարհ արարեալ 'ի նմա, ոչ ևս գտանէին ուրեք ջուր ոչ վասն զօրուն, և՝ ոչ վասն բազմութեան բեռնաբարձ գրաստ-

ուց։ Լ.բքայն իսրայէլի ըստ սովորութեան իւրոց յետ սամիտ նախնեաց՝ սկսաւ տրտնջել զնոյն, ո՛չ ո՛չ ասէ՝ գումարեաց զմեզ ՝ի՜ր զերիս թագաւորս միանգամայն մատնել ՝ի ձեռս մովաբայ։ Յոսափատ էգիտ գարման թշուառութեն ըստ իւրումն բարեպաշտութե՝ առ ՝ի՜ն որ կարօղն է ամենայնի՝ դիմելով. ո՞չ գուցէ ասէ ասա մարգարէ՝ ՝ոն, զի հարցցուք (կամ ըստ այլ թարգմանութեան, աղաչեսցուք) նովաւ զ՝ի՜ր։ Եղիսէէ արտաքոյ իւրոյ սովորութե՝ գտաւ յայնժամ՝ ՝ի բանակն իսրայէլի։ Ա՝ ասն որոյ մի ոմն ՝ի զօրուէն իսրայէլի էտ պատասխանի, և ասէ. է ասա Եղիսէէ որդի սափատայ սպասաւոր Եղիայի, որ արկանէր ջուր ՝ի լուանալ նորա ըզձեռս։ Իսկ և իսկ ծանեաւ յոսափատ զնա լինել ճշմարիտ մարգարէ՝ ՝ոն. գոյ ասէ՝ բան ՝ի՜նմա։ Լ՝ս յարուցեալ գնաց առ նա՝ առեալ ընդ իւր և զարքայն իսրայէլի, և զարքայն Եդովմայ։ Լ՝յապէս և մեծամեծք աշխարհի ՝ի կարօտութե իւրեանց խոնարհէին ծառայից՝՝՝ այ. ոչ անպատեհ վարկանելով մեծուե իւրեանց՝ զաղքատին, բայց զ՝որ խոշիկս նոցա անձամբ պատուել։

Լ՝բրև ետես Եղիսէէ զարքայն իսրայէլի, ամբոխեցաւ, զի ոչինչ փոյթ ցուցանէր գարձի և հաշտութե ընդ ՝՝՝ այ և ոչ իսկ յայնմ ժամու, մինչ ինդրէր օգնել նմա սքանչելեօք, և ասէ ցնա, զի՞նչ ուներս դու ընդ իս. ընդէ՞ր ոչ երթաս առ մարգարէս հօր քո և առ մարգարէս մօր քո։ Լ՝ս մեծարելով ըստ արժանւոյն զյոսափատ՝ ասէ կենդանի է ՝՝՝ր զօրութեց, որոյ կացի առաջի նորա, եթե չէր առեալ ակն յոսափատայ արքայի յուդայ, թէ բնաւ հայէի իսկ ՝ի քեզ, և տեսանէի զքեզ։ Լ՝ս զի խռովեալ էին ոգիք մարգարէին, և ոչ կարէր ընդունել զաղդումն հոգւոյն՝՝՝ այ, որ սիրտ խաղաղ և անդորր խնդրէ, ասաց ածել առ նա սաղմոսասաց, որ նուագէսցէ ՝՝՝ր և ՝՝՝ծային եղանակս, զի խաղաղասցին ոգիք նորա։ Ընդեղ ինչ գժուարին հաձել զմարգարէն. զի ըստ սովորութեան իսրայէլացւոց միշտ գտանէին ՝ի բանակի նոցա քահանայք և

զևտացիք, որոց մի 'ի գլխաւոր գործոց էր պէս-
պէս նուագարանաց եղանակել սաղմոսաց 'ի տաճարի
տն։ Այն ինչ նուագէր սաղմոսացն՝ եկն 'ի նա
հոգի տն. և դարձեալ առ Թագաւորսն՝ ասէ.
Այսպէս ասէ տր, քրեցէք 'ի ցամաք հեղեղատիդ
յայդմիկ գուբս բաղումս, ոչ ընդեսցէ հողմ, ոչ
տեսանիցէք անձրև. և հեղեղատդ լցցի և հեղե-
ղեսցի ջրով. և արբջիք դուք և անասունք ձեր և
դրաստք ձեր և յաւելցի։ Այլ այդ Թեթև ինչ է
յաչս տն. արասցէ ձեզ և զայն որ մեծ ևս է. զի
տացէ ձեզ և զլիակատար յաղթուն 'ի վերայ մովա-
բայ. և հարջիք և հիմնայատակ արասջիք զամուրս
նոցա. տիրեսջիք ընտիր ընտիր քաղաքաց նոցա.
սնայացուսջիք զդաշտս նոցա. կոտորեսջիք զամե-
նայն ծառ պտղաբեր աղնիւ. խցջիք զաղբիւրս ջրոց,
և զամենայն անդաստանս բարիս լցջիք քարամբք և
անպիտանացուսջիք։ Այս ասաց մարգարէն. և
ահա յառաւօտու ընդ արշալոյսն գային 'ի կողմանց
եդովմայ ջուրք ուղղօրէն, և լցաւ ամենայն հեղե-
ղատն ծագէ 'ի ծագ։

Աստ դիպաւ և 'ի մովաբացիս վրիպակ մի զին-
ուորական. յորմէ ունին ուսանել ուսումն կարևոր
զօրավարք, չլինել կարի դիւրահաւան այնմ զոր
բաղձան Թէ իցէ Աշմնրիտ, Թէպէտ և աչօք տե-
սանիցեն՝ բայց 'ի հեռուստ. և չառնել զանց զկա-
նոնաւք պատերազմի առ 'ի ունել 'ի ձեռին յառաջ
քան զժամանակն զհաւաստի յաղթութիւն։ Մով-
բացիք քանզի լուեալ էին, եթէ ելին Թագաւորք
պատերազմել ընդ նոսա, և Թէ հասեալ կան մերձ
'ի սահմանս իւրեանց, աձապարեցին և նոքա՝
գունդ կազմեցին 'ի պատանեկաց՝ որք կարօղ էին
գօտի ածել մինչև ցծերս. և կանխեալ ընդ առա-
ւօտն կացին 'ի վերայ բլրոյ առ սահմանաւ իւր-
եանց։ Երբև փոքր մի բարձրացաւ արեգակն 'ի
վեր քան զեզերս երկրի, 'ի մէջ շառագոյն գոլոր-
շեաց՝ ջուրք հեղեղատին, առ որով էին բանակք
միաբանեալ Թագաւորաց, յանդրադարձ ցոլացմա-
նէ շառաւիղաց՝ 'ի հեռուստ կարմրագոյն երևէին.

զոր նոքա անտարակոյս արիւն կարծեցին։ Վասն զի յայնժամ ամենայն հեղեղատք ցամաք էին, վասն որոյ ոչ կարելով բնաւ զմնաւ ածել թէ երևեալն այն իցէ ջուր, հաստատեցան 'ի վերին կոյս յառերևոյթ կարմիր գունոյ կերպացելոյ յանդրադարձ ցոլացմանէ։ Կենդանի էր 'ի միտս նոցա և յիշատակ կոտորածի եղելոյ սակաւ ամաց յառաջ, յորժամ յոգնախուռճ զօրք նոցին մովաբացւոց միաբանելոյ ընդ զօրս ամենայ՝ 'ի բանակի անդ իւրեանց զմիմեանս կոտորեցին խպտա, մինչև չմնալ և ոչ միոյ կենդանի։ Այսն օրինակ կատաղութիւն լինել կարծեցին և այժմ 'ի բանակն անդ թշնամեաց, մինչև կոտորել զմիմեանս. արիւնն այն ասեն սրոյ է, կռուեցան ընդ միմեանս թագաւորքն, և հարին այր զընկեր իւր. և արդ հապա յաւար մոլաբ։

Օ այս ասացեալ դրոհ ետուն խուռնընթաց 'ի բանակ անդր իսրայէլն. այլ իբրև մերձ եղեն, տեսին՝ բայց անտգան՝ զի ընդ կենդանիս ունին մաքառիլ, և ոչ զկողոպուտ մեռելոց աւարել։ Վասն որոյ որպէս խառնիխուռն եկին, նոյն օրինակ խառնիխուռն 'ի փախուստ դարձան. և իսրայէլացւոց զհետ մտեալ նոցա՝ զամենեսեան առ հասարակ 'ի սայր սուսերի կոտորեցին։ Այլ մտեալ յերկիրն մովաբայ՝ կատարեցին զամենայն զոր ինչ պատուիրեաց նոցա մարգարէն, զքաղաքսն կործանելով, զաղբիւրսն խցանելով, զանդաստանս լաւագոյնս քարամբք անպիտան առնելով. և ապա եկին պատեցին զթագաւորական քաղաքն։ Տեսեալ արքային մովաբայ՝ զի սաստկացաւ 'ի վերայ նորա պատերազմ, փորձ մի կամեցաւ փորձել. առեալ ընդ իւր հօթն հարիւր արս զօրաւորս սուսերամերկս՝ եկ 'ի քաղաքէն դիմել 'ի վերայ արքային եդոմացոյ. այլ անդրէն յետս ընկրկեցաւ 'ի թշնամեաց։ Ապա 'ի յետին յուսահատութենէ ըմբռնեալ, առ զորդին իւր զանդրանիկ՝ զոր անուանեալ էր թագաւոր փոխանակ իւր, և եղեն զնա 'ի վերայ պարսպին, և անդ յանդիման աչաց իսրայէլեան զնդին՝ այ-

բեաց զնա ողջոյն։ Ոչ յայտ թէ առ ի՞նչ գործեաց զայն գազանային անգթութիւն. գուցէ կարծէր նոր վին ողջակիզաւ հաշտեցուցանել զարիւնուշտ դիս իւր, և գտանել օգնութիւն 'ի նոցանէ։ Կամ թերեւս կամէր ահ արկանել թշնամւոյն լռելեայն ինն յայտարարութիւն՝ թէ ունի վերջին յուսահատութիւն մարանչել ընդ նոսա, և զնոյն առնել նոցա, զոր արար որդւոյ իւրում։ Այլ կամ որ առաւել համեմատ երևի գրոյն՝ առ 'ի շարժել զնոսա 'ի գութ և յողորմութիւն, առաջի աչաց նոցա խողխողելով զթագաւորեալ որդին. զի ասէ գիրն. * Այլ եղև զիրք մեծ 'ի վերայ խաչելի ։. իբր ասէ՝ ցաւեցան յոյժ, զի յայն յեռին յուսահատութիւն հասուցին զաշխարհելի հայրն. վասն որոյ վաղվաղակի 'ի բաց մեկնեցան 'ի պաշարմանէ, և դարձան յերկիր իւրեանց։

ԳԼ. Գ.

Յոլիամ որդի յովսափատայ՝ ինքնիշխան յուդայ։
Ամսոյշրջումն և չարախոսաւոր մահ նորա։

Իբրև մեռաւ յովսափատ, մնաց թագաւոր ինքնիշխան և անկախ յովրամ որդի նորա։ Սա քան ամաք յառաջ՝ գոլով յայնժամ երեսուն և երկուց ամաց՝ անուանեցաւ 'ի յովսափատայ հօրէն իւրմէ թագաւոր յուդայ. այն ամ հինգ երորդ էր յովսափատայ ինքնիշխան թագաւորութեն զկնի մահու առայի հօր իւրոյ։ Արդարամիտն յովսափատ ընտրեաց զյովրամ կացուցանել թագաւոր՝ ոչ զի լաւագոյն էր քան զայլ որդիս իւր, այլ զի անդրանիկ էր 'ի մէջ եղբարց իւրոց. և Ճանաչելով զխորհուրդս և գազանային ոգի նորա, երկեաւ թէ խռովութիւն մեծ յարուցանիցէ, եթէ այլ ոք յեղբարց

նորա թագաւորեսցէ։ Այլ յետ ուղղութեան ամաց՝ նորոգ հանդիսիւ հաստատեաց զնա 'ի թագաւորութիւն, տալով նմա փոքր ինչ առաւել իշխանութիւն. և այս ամ էր հինգերորդ միւս յովրամայ՝ անուանելոյ թագաւոր իսրայելի առ հարքն և առ եղբարքն 'ի սամարիա։ Զայս արար յովսափատ՝ ոչ որպէս թէ կարօտ ինչ էր օգնականութեան որդւոյն, այլ առ 'ի պահել զնա խաղաղ և հանդարտեալ. զի գոլով նորա հասեալ 'ի հասակ յիսնամեան, ծանր էր նմա ծերանալ լոկով անուամբ թագաւորի, առանց և ոչ մի ինչ գործոյ կառավարութեան։

Այսպէս յետ թագաւորելոյ յովրամայ ամն ութուտասն ընդ հարը, և ամն երկուս ընդ հօր. 'ի հասակի յիսուն և երկուց ամաց 'ի մեռանել յովսափատայ, սկսաւ թագաւորել փոխանակ հօրն. և ամն ութ թագաւորեաց ինքնիշխան։ Ընդ ամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ և ոչ մի ինչ գործ գովութեան արժանի երևեցոյց. այլ ընդհակառակն՝ ելից զթագաւորութիւնն յուդայ էաբեաք։ Վաղվաղակի 'ի թագաւորել իւրում ինքնագլուխ, եմոյծ յերկիրն յուդայ զկուռս իսրայելի. վասն զի դուստր աքաաբու քոյր միւս յովրամայ ամուսնաշնչ արքայի իսրայելի՝ էր նորա կին։ Այլ իբրև ետես զանձն բաւականապէս զօրացեալ՝ ժամանացաւ յեղբարս իւր կրտսերս քան զնա։ Յոմսապատ կանխաւ ունելով կասկած 'ի սրտի, գուցէ սա ըստ անագորոյն բարուց իւրոց մեռցէ երբէք զձեռս յարիւն եղբարցն, կանխեաց յապահովացուցանել զնոսա։ Այս իւրաքանչիւր նոցա յերկրին յուդայ քաղաքս ամուրս պարսպաւորս հանդերձ վիճակօք իւրեանց յեկամուտս, զի մի իւիք ունիցին կախումն ինչ զեղբօրէն իւրեանց երիցուէ. և ևս՝ ամրացոյց զնոսա ոսկւով և արծաթով և զինու։ Այլ ինքն առ կենդանութեան իւրով եմոյծ զնոսա 'ի ժառանգութիւն քաղաքացն, ոչ վստահացեալ յանդրանիկն առնել ապաստան զկատարումն իւրոց կամաց։ Այլ այսպէս ակնուներ յովսափատ պահել շատացեալ զամէն անդրանիկն՝ կացուցանելով

զնա Թագաւոր 'ի վերայ յուդայ. և զվեց եղբարս նորա կրսերս անէրկեւան 'ի նմանէ, տալով անցնիւր նոցա մի մի փոքրիկ ՝որութիւն՝ պատսպարիլ 'ի նոսա խաղաղութիւն։

Այլ գաղանուէ որդւոյն վեր 'ի վայր կործանեաց զիմաստուն մտաբերութիւն հօրն. վասն զի 'ի ձեռն գաւազանօղ սրիկայից դարան գործեալ նոցա, ընդ սուր անցոյց զամենեսեան զնոսա։ Այլոյն օրինակ կոտորեաց և զոմանս յիշխանացն իսրայէլի, որք ինքնակամ եկեալ մտեալ էին ընդ հնազանդութիւն արքային յուդայ։ Այլ 'ի յաջտակել նորա այսպիսի գաղանային անգթութիւն զսակաւ քաղաքս և զկալուածս իւրոց եղբարց, կորոյս Թագաւորութի մի ողջոյն՝ օրինօք ժառանգեալ։ Այսանզի յաւուրսն յայնոսիկ ապստամբեցան 'ի նմանէ եդոմայեցիք. և Թէպէտ հարան միանգամ 'ի նմանէ՝ որ էլ 'ի վերայ նոցա կառաք և երիվարաք, բայց անդրէն գլուխ ամբարձեալ նոցա՝ կացուցին իւրեանց Թագաւոր ազգային, և այնուհետև 'ի բաց կացին 'ի ձեռանէ յուդայի։ Այս այսու կորոյս յոլովամ միանգամայն զայն լայնարձակ երկիր, որ 'ի սկիզբ լերանց ՝գի մինչև 'ի ծովն կարմիր. ընդ նմին կորոյս և զգիւրութիւն հանելոյ երբեք նաւս 'ի ծով անդր, և զանանապարհ բազմաշահ վաճառաշահութիւն ընդ եգիպտոսի։ Նմին ժամանակի ապստամբեաց 'ի ձեռանէ նորա և զոչնա քաղաք 'ի մեծագոյն ՝նաս Թագաւորութիւն իւրոյ. զի էր մի 'ի հզօր քաղաքաց անտի կառուցելոց առ ՝ամանապարհաւ՝ որ յերուսաղէմ հանէր 'ի ծովն միջերկրական. նաև էր ահարկու նախապարիսպ ընդդէմ Թագաւորաց իսրայէլի։ Իսկ այլ ժողովուրդք նորա կային հանդարտեալ ընդ նովաւ առ ահի, այլ ոչ 'ի սրտէ. զի որ ամենաբիշ է առ ՝ոծ, և անգութ առ մարդիկ, չունի ինչ ակնունել անկեղծ հաւատարմութիւն 'ի ժողովրդենէ։

Այրեք ամէք յառաջ քան զմահ իւր եհաս նմա գիր յեղեալ մարգարէէ. այլ Թէ երբ և ո՞ր գրեցաւ, չէ յայտ. գուցէ յառաջ քան զվերանալ իւր

գրեաց, և յանձն արար եղիսէի, զի ըստ Ժամանակին առաքեսցէ նմա. և կամ զկնի վերանալոյ՝ սպասաւորութիւն հրեշտակի հասցոյց նմա. զիարդ և իցէ, այս հաւատի է թէ զիրն այն եհաս 'ի ձեռս յովրամայ. իսկ բան գրոյն այս էր։ Եթէ ՅԾ ամ դաւթի հօր քո խօսի առ քեզ, և ասէ ցքեզ. փոխանակ զի ոչ գնացեր դու 'ի Ճանապարհս յոլսապատու հօր քո, և ոչ 'ի Ճանապարհս հաւուն քո ասայի արքայի յուդայ՝ այլ գնացեր 'ի Ճանապարհս թագաւորին իսրայէլի. արարեր կուռս և ետուր պաշտել յուդայի և բնակչաց քումդ թագաւորեալ քաղաքի երուսաղէմի, զՏէտ երթեալ պղծութեց տանն աքաաբու. և զեղբարս քո զորդիս հօր քոյ զլաւագոյնսն քան զքեզ սպաներ. վասն այսր ամենայնի հարցէ զքեզ Տէր ՅԾ հարուածովք մեծամեծօք, և զժողովուրդ քո, և զորդիս քո, և զկանայս քո, և զամենայն ստացուածս քո. և դու չար հիւանդութիւն ախտիւ որովայնի հաշէսցիս, մինչև ելցէ որովայն քո։

Օ՛ի՞նչ նեղգործութիւն արար այս գիր յարքայն՝ ոչ գիտեմք, զի չունիմք ինչ 'ի գրոյն. բայց զայս գիտեմք զի ըստ ամենայն բանից անվրէպ Աստուծոյն։ Օ՛ի սուղ ինչ յետոյ ելին փղշտացիք 'ի միոյ կողմանէ, և արաբացիք 'ի միւս կողմանէ որք հարկատու էին յուդայի, և սփռեալ յասպատակութիւն՝ հարստահարէին զամենայն թագաւորութիւն. հասին և յերուսաղէմ, մտին և աւար հարին զարքունիս. առին զամենայն զոր գտին 'ի տան արքայի, և կոտորեցին զորդիս նորա, և զդստերս և զկանայս նորա, յորոց գոգոլիա և եթ ապրեցաւ, իսկ յորդւոցն՝ միայն որոշիաս կրսերագոյն յորդիս նորա։ Օ՛ի ոչ կամեցաւ Տէր խսպառ ջնջել զտունն դաւթի՝ վասն ուխտին զոր եդ ընդ նմա, և որպէս ասաց ցնա տալ նմա Ճրագ, և որդւոց նորա զամենայն աւուրս։ Իսկ ասպատակաւորացն շատացեալ բազմահարուստ առարքն՝ թողին զերուսաղէմ և դարձան 'ի տեղիս իւրեանց։

Զ՛այն ինչ ակնուներ աշխարելի թագաւորն փոքր

մի ոգի առնուլ 'ի տառապանաց ասպատակողացն արաբացւոց, եհաս 'ի նա չար հիւանդութիւն գուշակեալ յերկնայէ. զի հարաւ անբուժելի ախտիւ որովայնի. որով ընդ ամն երկուս յաւուրց ցաւուրս հաշեալ և մնշեալ եղին 'ի մարմնոյ նորա փտեալ և նեխեալ փորոտիք նորա. և մեռաւ 'ի չար հիւանդութենն յայնմիկ, ատելի ՝ոյ և ժողովրդեան իւրոյ. և ոչ արարին նմա յուղարկաւորութիւն՝ որպէս սովորութիւն էր առնել թագաւորաց. և ոչ արժան դատեցան թաղել զնա 'ի գերեզմանս թագաւորացն։ Այս՝ որպէս ասացաք, էր երեսուն և երկու ամաց՝ յորժամ սկսաւ թագաւորել յամին հինգերորդի յոլսափատու հօր իւրոյ. թագաւորեաց ամն ութ զկնի մնչու հօրն. որպէս ունիմք 'ի գիրս Բ. հաց. Խ. 20. և ըստ այսմ՝ լինի վախճան նորա 'ի վաթսներորդ, կամ՝ 'ի վաթսներորդ առաջնեւորդ ամի կենաց իւրոց։ Այն՝ որոյ ասէ կաղինոս, թէ ամենևին անպատճառ ոմանք 'ի բաց թողեալ զամն քսան՝ յորմէ հետէ սկսաւ կրել զանուն թագաւորի առ կենդանութիւն հօրն, բառնան 'ի կենաց նորա ամն քսան, դնելով զնա մեռանել ամաց քառասնից։ Իւր արժան է 'ի միտ առնուլ, զի տուաւ յոլրամայ բաւական ժամանակ. տուաւ դիպողութիւն. տուաւ և շարժիչ 'ի զգաստութիւն և յապաշխարութիւն. բայց և ոչ մի ինչ նշան գտանեմք զգաստանալոյ և ապաշխարելոյ. նա՝ զհակառակն ընթեռնումք 'ի գիրս Բ. հաց. ՝Լ։ մեռաւ ասէ՝ ոչ գովութիւն։

Գ.Լ. Գ.

Յանդիմանիչ զոր արար ամ 'ի յեռան եղիսեի մարգարէի յերէքին խոսքելի առ ծամանակօք յովրամայ արքայի Իսրայելի։

Յովրամ արքայ Իսրայելի յետ գառնալոյ յաղթանակաւ 'ի պատերազմէն Մովաբայ, 'ի յարգի ուներ զեղիսեոս 'ի սրտի իւրում Աշմարիտ մարգարէ ին. զի տեսեալ էր իւրով իսկ աչօք զմեծաւ հրաշ աքանչելիս՝ զոր արար ամ 'ի ձեռն նորա յանջրդի անապատի անդ եդովմայ, ջուր յորդառատ տալով յայսմ յետին անձկութեանէ երից թագաւորաց։ Այսպէս շնորհ մեծ եղև նմա 'ի ամենայն պիսի այր ազ ունել առ իւրով ժամանակաւ յիւրում թագաւորութեանէ. բայց ոչ գիտաց ըստ արժանւոյն վայելել զշնորհն։ Այ քաղաքական մասին վայելեաց լինով. զի յամենայն կարիս թագաւորութեանէ իւրոյ ունէր զնա իւր զօրավիգն և օգնական և իբրև պարիսպ անվանելի. որով և յամենայն վնասանգս գտանէր էլս բարեյաջող աքանչելագործութեամբ նորա։ Այլ ըստ հոգւոյ մասին՝ զուրկ գտաւ յամենայն հոգեկան բարեաց. և այն զի՝ վասն այնորիկ շնորհեաց ամ զծառայն իւր նմա և թագաւորութեանէ նորա՝ ընկղմելոյ յանամ կռապաշտութեանէ։ Վասն զի յովրամ յամենայն աքանչելիս հայերլոկ մարմնոյ աչքք՝ զժամանակեան և ոչ թէ յաջողութեանէ խնդրելով. իսկ զհոգւոյն աչս կափուցեալ ուներ՝ հայել և տեսանել զհոգեկան կարօտութիս և զվտանգս։ Վասն այնորիկ միշտ 'ի խաւարի մնաց հոգւով, 'ի կռապաշտութեանէ ապրեցաւ, և 'ի նմին կորեաւ։ Սակայն եթէ արքայ յայսմ մասին ինչ ոչ շահեցաւ 'ի մարգարէէն, արար ամ՝ զի գէթ 'ի ժողովրդենէ նորա բազումք շահեսցին ոչ միայն ըստ հոգւոյ, այլև 'ի մարմնական կարիս. զի

մի վաստակք ծառային իւրոյ գլխովին ունայնասցին յայնմ բազմութեան ժողովրդեան։

Հռչակեալ էր համբաւ եղիսէի 'ի համօրէն երկրին իսրայէլի. մի՝ զի յաձախ շրջէր նա աստ և անդ, առաւելապէս վասն այց առնելոյ ժողովոյ կամ միսբանութեան պատանեկաց առ 'ի նմանել դասս տիարակելոց 'ի զանազան տեղիս. որք և յայն սակս կոչէին որդիք մարգարէից, այն է աշակերտք, և կայրն 'ի խաղաղութեան. զի յորմամ 'ի պատիւ երեսաց եղիսէի բարձեալ էր զամենայն իշխանութեան յեղաբեալոյ մօր իւրոյ. և ոչ ևս կարող էր հալածել զմարգարէս ոչ, որպէս առնէր առ կենդանութեան աբաաբու հօր իւրոյ։ Երկրորդ պատճառ և առաւել գլխաւոր հռչակելոյ անուան եղիսէի էին աքանչելագործութիք, որով ՝ուծ վառաւորէր զծառայն իւր յայնմ կուսապարիշտ ժողովրդեան։

Առաջինն որ վայելեաց 'ի շնորհս աքանչելագործութեան եղիսէի՝ զկնի դառնալոյ յորմամէ 'ի պատերազմէն Մովաբայ, եղև կին մի այրի 'ի սաւմարիա. որոյ այրն՝ որ էր յորդւոյ մարգարէից, այր երկիւղած յոյ, և ոչ անծանօթ եղիսէի, մեռաւ յաւուրսն յայնոսիկ, և եթող պարտս 'ի վերայ տառապեալ կնոջն. և նա քանզի չունէր ինչ բնաւ 'ի հատուցանել՝ բաց յերկուց մանկահասակ որդւոց, պարտատէրն անգութն զնոսա կամէր առնուլ 'ի ծառայութեան իւր փոխանակ պարտուցն։ Կինն տառապեալ չունելով ուստեք օգնութիւն, դիմեաց առ եղիսէէ՝ որ էր յայնժամ 'ի սամարիա, և առաջի արար նմա զթշուառութեան իւր. և առաւաւել շարժելոյ զնա 'ի կարեկցութիւն, յիշէ զՀՀծպաշտութեան առնն իւրոյ. զոր դու ինքնին գիտես ասէ։ Նա պատասխանի եղիսէէ ցաւակցելով, զինչ ինչ արդեօք կարող եմ առնել քեզ. պատմեա՛ ինձ զինչ կայ 'ի տան քում. ասէ կինն. ոչ գոյ 'ի տան աղախնոյ քոյ և ոչինչ, բայց միայն սաւկաւ մի իւղ առ օծանիլ. այն էր իւղ ազնիւ՝ յորիւնեալ զանազան իրօք 'ի պէտս օծութեան ըստ սովորութեան երկրին։ Ասէ ցնա եղիսէէ. Երթ խնդրեա՛

քեզ ամենս ունայնս յամենայն գրացեաց քոց՝ որ չափ կարես բազումս, և մոռալ դու և որդիք քո ընդ քեզ 'ի տունն՝ փակեսցես զդրունսն ընդդէմ ձեզ. և արկցես զիւղն յամենայն ամենսն մինչև լցցին։ Լրար կինն ըստ բանին Եղիսէի. և փոքրիկ անօթն այն թուէր աղբիւր ինն՝ յորմէ ոչ դադարեաց 'ի հոսելոյ իւղն այն ազնիւ, մինչև լցան ամենայն ամանքն. որդիքն մատուցանէին զամանս, և նա ընդոյր միշտ. յայնժամ և եթէ եկաց իւղն, մինչ ասացին նոքա՝ թէ ոչ գոյ այլևս ամանն։ Լ.յն իւղ հրաշալեան բաւական եղև ոչ միայն 'ի հատուցումն պարտուց առնն, յորմէ զմամն ինչ վաճառեաց ըստ բանին Եղիսէի, այլև 'ի դարման կնոջն և որդւոց նորա։

Յետ այնորիկ եղեն և այլ սքանչելիք 'ի սովինա։ Սոլոր էր Եղիսէ՝ որպէս ասացաք, ստէպ երանել յայցելութեն որդւոց մարգարէից բնակելոց 'ի զանազան տեղիս, և մնաւանդ 'ի կարմելոս լերին։ Վասն այնորիկ բազում անգամ դէպ լինէր նմա անցանել ընդ սովինա քաղաք՝ որ 'ի վերայ Ճանապարհի կարմելոս լերին։ Լր անդ այր մի ճոճապաշտ երևելի 'ի քաղաքին. և կին նորա առաւելեալ քան զայրն ազնուատոհմութիւն և բարեպաշտութիւն։ Սա բռնադատեաց զայրն ոյ, զի յանցանել նորա ընդ այն՝ մի այլ ուրեք, այլ միշտ 'ի տան իւրում իջևանս արասցէ։ Լ.զիսէէ զարմացեալ ընդ հաւատ նորա և ընդ այնպիսի հիւրասիրութիւն, զիջաւ 'ի խնդիր նորա, և այնպէս առնէր միշտ։ Իսկ կինն բարեպաշտ բազում խնամով պաշտէր զնա, պարգև մեծ համարելով անձին՝ այնպիսում առն ոչ սպաս հարկանել։ Լ.պա զմտաւ ածեալ խոհական կնոջն և առն նորա, թէ դուցէ նեղութի ինչ ունիցի այրն ոյ յընտանեաց տան, կամ թէ առ առաւել յօժարեցուցանելոյ զնա մնանել առ նոսա, շինեցին նմա վերնատուն մի փոքրիկ առանձինն, պատրաստեալ ամենայն կարևոր կարասեօք վասն միոյ իջաւորի, եդեալ 'ի նմա մահիճս, և աթոռ, և աշտանակ։

Լ.պա յառաջնում Ճանապարհորդութեան՝ զոր արար ընդ այն մարգարէն, գտեալ զվերնատունն պատրաստեալ՝ եմուտ և հանգեաւ անդ։ Լ.ե կամեցեալ ընդ այնչափ և այնպիսի առատամիտ ասպնջականութիւն սոմնացի կնոջն բարի ինչ առնել նմա, կոչեաց զնա 'ի ձեռն գեհեզեայ պատանեկին իւրոյ. և նորա եկեալ եկաց առ դուրսն առաջի եղիսէի, առ մեծի համեստութիւն իւրոյ ոչ իշխեցով մտանել 'ի ներքս 'ի սենեակ անդր։ Լ.սաց ցնա մարգարէն միջնորդութիւն գեհեզեայ. ահա կալմեցեր մեզ զայս ամենայն կալմամբ, արդ զի՞նչ հատուցումն հատուցից քեզ, եթէ ունիցիս ինչ կարիս առ արքայ, կամ առ իշխան զօրուն. ասէ կինն. խաղաղական կենօք բնակեալ եմ 'ի տան իմում, և 'ի մէջ ազգականաց իմոց, չունիմ խիզ կարօտութիւն առ 'ի հատուցանել յունկն արքայի։ Յայնժամ եհարց եղիսէէ ցգեհազի, թէ զի՞նչ պարտ իցէ առնել նմա. և նա ասէ. կարի իսկ քաջ ասաց կինն՝ թէ չունի ինչ պակաս խիզ յարքայէ. այլ յամենայն բարօրութիւն իւրում մի ինչ պակաս է նմա, զի ոչ գոյ նորա որդի. և այր իւր ծեր է։ Լ.սպէս ունին եօթանասունք, և ասորին, և արաբացին, և քաղդէացին, համանձայն երբայականին. իսկ մերս որ ասէ. "Լ.ե այրն իւր չէ ինչ ծեր"։ Թուի յայլ օրինակէ եօթանասնից առեալ. (զի դիւրաւ խառնի յօդս՝, ընդ բացասականդ՝)։ Լ.սէ ցնա եղիսէէ. կոչեա դարձեալ զնա, զի ես ինքնին ասացից զոր արժան է ասել առ նա. իբրև եկն կինն իւրով սովորական համեստութիւն՝ ասէ ցնա եղիսէէ. 'ի յաջորդ ամի 'ի սոյն աւուրս ունիցիս 'ի գիրկս մանուկ. ասէ կինն պատկառանօք. մի՞ որ այրդ՞ այ, մի խաբեր զաղախին քո. մի ուրախացուցաներ սուտ միխիթարութիւն։ Լռեաց մարգարէն, այլ բանք նորա արդիւնք եղեն. զի յղացաւ կինն, և ըստ ժամանակին գուշակելոյ մարգարէին ծնաւ որդի և լցաւ տունն սոմնացւոյն ուրախութիւն։

Լ.ե իբրև հաստատեցաւ մանուկն, յաւուր միում եկ 'ի դաշտ անդր առ հայր իւր տեսանել զհնձն

ձօղան. ուր հարեալ 'ի տապոյ արեգական՝ սկսաւ աղաղակել, գլուխս իմ, գլուխս իմ. և հայրն վաղվաղակի 'ի ձեռն միոյ 'ի ծառայից յղեաց զնա 'ի տուն առ մայր իւր. և նոքա մանուկն 'ի վերայ ծնգաց մորն մինչև ցմիջօրեայ. և մեռաւ անդ 'ի գիրկս մորն։ Իսկ մայրն թէպէտ լցաւ անբերելի ցաւով, այլ ոչ շփոթեցաւ. հաւատաց թէ որպէս աղօթիւք առն ոչ տուաւ մանուկն արտաքոյ յուսոյն իւրոյ, նոյնպէս նորին աղօթիւք անդրէն դարձուսցի նմա։ Ի ման այնորիկ հանեալ զմեռեալ մարմին նորա 'ի վերնատուն անդր՝ կոչմնեցոյց 'ի մահճին առն ոչ, և փակեալ զդուռն 'ի վերայ նորա՝ կոչեաց փութանակի զայր իւր, և ասաց առաքել նմա զմի 'ի ծառայից, և եչ՝ զի սնդեցայց ասէ 'ի կարմելոս առ այրն ոչ, և դարձայց։ Օ արմանցեալ առն ընդ ապաժամ երթ նորա, ասէ. զի՞ երթաս դու այսօր առ նա, զի ոչ ամսամուտ է, և ոչ շաբաթ. ասէ կինն, խաղաղութի է. և ոչ էհան 'ի վերս նմա զմահ մանկանն. և ինքն փութացուցեալ զծառայն հանդերձել զէշն նստաւ 'ի վերայ նորա և գնաց։ Այն ինչ մերձեցաւ 'ի լեառն, ծանեաւ զնա Եղիսէէ. և ասէ ցդեեզի, ահա այն սոմնացին է. ընթա՛ ընդառաջ նորա, և հարցցես զողջունս նորա, և առնն, և մանկանն, և կինն ոչ կամելով յայտնել նմա զցաւս սրտի իւրոյ՝ ետ պատասխանի, ողջոյն է։ Այս եկեալ 'ի լեառն առ Եղիսէէ, անկաւ առաջի նորա՝ բռուն հարեալ զոտից նորա. մատեաւ գեեզի հեռացուցանել զնա, զիսեալով զմեծ զգուշաւորութի մարգարէին յայսպիսս. ասէ ցնա Եղիսէէ, թո՛յլ տուր դմա, զի անձն նորա ցաւագին է. և ոչ թաքոյց յինէն և ոչ պատմեաց ինձ։ Յայնժամ կինն սկսաւ ասել արտասուալից հեկեկանօք, միթէ խնդրեա՞ր ես խնդրեալ որդի 'ի տնէդ իմմէ. և 'ի խոստանալ քո ինձ, ոչ ասացի թէ մի խաբեր զիս։

Ապանեաւ Եղիսէէ 'ի քանից նորա Եթէ մեռաւ մանուկն, և 'ի յայտնութի տն ուսաւ և զդարման նորա. վասն որոյ նոյն հեռայն տուեալ 'ի ձեռս

գեղեցայ զխորհրդաւոր ցուսն իւր, առաքեաց զնա երթալ փութանակի, և դնել զցուսն 'ի վերայ երեսաց մանկանն. և առ չյամենայ ուրեք 'ի Ճանապարհի 'ի պատճառս ողջունից՝ յորմէ և այլ զոյգք 'ի մէջ մնասնեն, պատուիրեաց նմա մի՛ զոք ողջունել զՃանապարհայն, և եթէ յումեքէ ողջունեսցի՝ մի՛ տալ նմա պատասխանի։ Գնաց գեղեղի եդ զգաւազանն 'ի վերայ երեսաց մանկանն. այլ ոչինչ նշան կենդանութեան երևեցաւ 'ի նա։ Մանկը ասացաւոր համարին, թէ ոչ արար ՏԾ յայնժամ սքանչելիս 'ի պատիժ գեղեղայ։ Ապան զի վքացեալ նորա 'ի սրտի իւրում ընդ այն գործ մեծ որ յանձնեցաւ նմա, ամենեցուն օրք հանդիպէին նմա 'ի Ճանապարհի, և տեսեալ զշուաթփոյթ գնացս նորա՝ հարցանէին, թէ յո՞ երթայ, տայր պատասխանի ընդդէմ հրամանին զոր ունէր 'ի մարգարէէն՝ ասելով, մի՛ յամեցուսջիք զիս 'ի Ճանապարհէս, և մի՛ մնասջիք ողջոյնս ընդունել յինէն, զի փութամ երթալ 'ի յարուցանել մանուկ մի մեռեալ։ Ապէք թերահաւատութեամբ կնոջն ընծայեն զայն, ոչ հաւատալով նորա թէ ցուսն կարիցէ հրաշագործել զյարուցն մանկանն, այլ զամենայն յոյս իւր ունէր 'ի մարգարէն. բայց նոյնպէս 'ի գէպ է ասել, թէ առ ջերմ հաւատացն և ջերմ սիրոյն կամէր, զի անձամբ գայցէ. վասն այնորիկ երդուաւ 'ի ՏԾ և յանձն նորա՝ ոչ թողուլ զնա։ Գնաց եղիսէէ ըստ յուսապատարագ խնդրոյ կնոջն. և 'ի Ճանապարհի եկ ընդառաջ նորա գեղեղի տրտմագին 'ի դարձի իւրում, և պատմեաց նմա, թէ ոչ յարեաւ մանուկն։ Այն եղիսէէ, և մտեալ 'ի վերնատուն իւր՝ եռես զմանուկն մեռեալ և կոչմանեցուցեալ 'ի մահիճն նորա. փակեաց զդուռն, և եդ զբերան իւր 'ի վերայ բերանոյ նորա, և զաչս իւր 'ի վերայ աչաց նորա, և զձեռն իւր 'ի վերայ ձեռաց նորա, և կծկեցաւ 'ի վերայ նորա, և փոքրիկացաւ այնպէս՝ զի ամենայն անդամք մարմնոյ նորա համեմատեսցին փոքրիկ անդամոց մարմնոյ մանկանն, որ և այնու սկսաւ ջերմանալ։ Այս ամենայն կարգեալ

լինելոյ յօրինակ մեծի և անհասանելի խորհրդոյ մարդեղութեանն բանին։ Եւ դարձաւ շրջեցաւ Եղիսէ 'ի տանն յայսկոյս և յայնկոյս աղօթս առնելով, և ապա ել և դարձեալ կծկեցաւ 'ի վերայ մանկանն մինչև ցեօթն անգամ. և երայ մանուկն զաչս իւր՝ կենդանացեալ։ Յայնժամ կոչեաց Եղիսէ 'ի ձեռն գեհազայ զմայրն մանկանն, և ասէ ցնա՝ առ զորդիդ քո. իսկ նորա մտեալ 'ի տունն և տեսեալ զորդին կենդանի կացեալ առ Եղիսէիւ, անկաւ առ ոտս նորա, և երկիր երպագ նմա յերկիր։ և լի ուրախութիւն առեալ զորդին՝ ել յերեսաց առն։

Յետ այսորիկ պատմէ սէր գիրն և զայլ սքանչելագործութիւնս Եղիսէի միմեանց զկնի՝ առանց պահելոյ զկարգ ժամանակին. զոր մեք վերածգուք ըստ կարի յանցնիւր ժամանակս։ Զկնի յարուցանելոյ զորդի սոնեացւոյն՝ խորհուրդ ետ նմա այրն այր երանեալ յերկրէն իսրայէլի ամենայն ընտանեաւք, և երթալ պանդխտութիւն յայլ տեղի. զի սոփն որ արդէն սկսեալ էր յերկրին իսրայէլի 'ի պատիժ մեղաց կռապաշտութեան, հանդերձեալ էր յերկարելոյսն եօթն։ Լսեալ կինն ըստ բանին Եղիսէի. գնաց ինքն և ամենայն տուն իւր, և պանդխտեցաւ յերկրին փղշտացւոց։ Եւ ապա յետ կատարելոյ ամացն եօթանց սովուն, դարձաւ անդրէն յերկիր իւր հայրենի. և գտեալ զտուն և զանդս իւր գրաւեալ յայլոց զկնի մեկնելոյ նորա անտի, էին բոլորք հարկանեալ առ յովրամ արքայ վասն տան և վասն անդոյ իւրոց։ Ի նմին ժամու գեհազի ծառայ Եղիսէի պատմէր արքայի, թէ որպէս կենդանացոյց Եղիսէ զորդին զմեռեալ՝ կնոջն սոնեացւոյ. ուստի 'ի մտանել կնոջն ընդ որդւոյն յարուցելոյ առ արքայ, ասէ գեհազի. ա՛ր արքայ՝ ահա այս կինն է, և այս որդի դորա, զորմէ պատմէի թէ կենդանացոյց Եղիսէ։ Եւ լուեալ արքայի զիրաւունս կնոջն, պատուիրեաց դարձուցանել նմա ոչ միայն զտուն և զանդս, այլև զամենայն արդիւնսն զոր քաղեալ էին ընդ ամենայն ժամանակս, յորս 'ի բա-

ցեայ եղև կինն. և առ անյապաղ գործադրութիւն արքունի հրամանին՝ առաքեաց արքայ ընդ նմա զմի 'ի պաշտօնէից իւրոց։ Այս պատմէ նոր զիրն յութերորդ գլուխ չորրորդ թագաւորաց, յետ անցանելոյ սովուն, և յետ պատմելոյ զբժշկութիւն Նէեմանայ, և զբորոտութիւն գեհազեայ։ Ի հաւանելն թէ գեհազի ծառայ և բորոտ այնչափ հնորհս գտեալ իցէ առ արքայ, մինչև տալ նմա մուտս 'ի տուն իւր, և զբանիւք անկանիլ ընդ նմա, յաղագս մեծամեծ գործոցն եղեալսի. զի ըստ հրէական օրինաց բորոտք ոչ միայն 'ի տանց, այլև 'ի քաղաքաց մերժեալ էին. թէպէտ զի յետ բորոտելոյն գեհազայ ոչ ևս կալաւ զնա եղեսէ առ իւր։ Այսպէս յայտ է թէ այս անցք սովինացւոյն յառաջ քան զբժշկութիւն Նէեմանայ եղև. իսկ սրբազան գրիչն կամեցեալ պատմել զդարձ նորա, որ եկև յետ սովոյն, սկսանի 'ի գլխոյ զպատմութիւնն, և անընդհատ պատմէ ցկատարած ըստ սովորութեան նոր գրոց։

Եղիսէէ յետ յարուցանելոյ զորդի սովինացւոյն գնացեալ էր 'ի դաշտաղաս առ որդիս մարգարէից խնամել զպէտս նոցա 'ի սովուն։ Յաւուր միում ասաց ցսպասաւորն պատրաստել կերակուր ժողովրդեան. եկ նա յանդն քաղել վայրի դալարիս ինչ, առ 'ի չգոյէ բանջարաց 'ի պարտէզս սակս երաշտին. և գտեալ 'ի դաշտին որթ վայրենի, և զի ոչ ճանաչէր թէ զինչ բոյս իցէ, քաղեաց 'ի նմանէ սղոխ. որ ըստ մեկնչաց ոչ է յատկապէս ազոխ տհաս խաղողոյ, այլ պտուղ ինչ վայրենի անուտելի՝ գնտակաձև, (նման ☵ խիզ փոքրիկ և բոլորակ գդմոյ. կամ պտղոյն՝ զոր խաղացիք ոսկի խնձոր կոչեն, այն է՝ ֆիւէնկ փաթլիճանի.) նեբբին գոյացութիւն նորա սպիտակ է, և համն սաստիկ դառն և ժանտ և թիւնաւոր. ուստի և կոչի լեղի գետնոյ, կամ գետնալեղի։ Այսոյս նորա և տերև բերեն զնմանութիւն բուսոյ վարնգոյ. արձակէ բաւ զուկս երկայնս և թաւս ճապաղեալ զերկրաւ։ Այդ՝ 'ի ժանտ պտղոյ անտի, գուցէ և 'ի տերևոյ, քաղեալ սպասաւորին լի շալակաւ իւրով, եբեր և

Եփեսաց 'ի սան մի մեծ, և եդ առաջի ժողովրդեան ուսել։ Իբրև առին նոքա զձաշակն, աղաղակեցին և ասեն, մահ է 'ի սանի սոսա՝ այրդ ոչ։ Յայնժամ Եղիսէ դարձուցանել զեփոցն 'ի սան անդր՝ և արկանել 'ի նմա փոքր ինչ ալիւր. և ահա բարձաւ ամենայն դառնութիւն և ժանտութիւն կերակրոյն՝ ոչ 'ի դուշնաբեայ ալերէ անտի, այլ աբանչելեաք նոն. և կերան արքն ախորժանօք՝ առանց և ոչ մի ինչ վնասու։ Ի նմին ժամանակի եկն այր մի 'ի բեթսարիսայ, և բերեր եղիսէի յառաջնոց արմտեաց նկանակս գարեղէնս քսան. և նորի, այս է՝ նորոգ հասեալ արմտիս՝ պարկիւ միով. ասաց Եղիսէ բաշխել ժողովրդեանն, զի կերիցեն։ Ի՞սկ սպասաւորն. ուր տաց զայս քսան նկանակ 'ի հարիւրոց արանցդ. ասէ Եղիսէ, տուր և կերիցեն. զի այսպէս ասէ Տէր, կերիցեն և յաւելուցուն. և եղև այնպէս։

ԳԼ. Ե.

Սով սաստիկ։ Հրաշափորձութիւն Եղիսէի։ Պարտութիւն որդւոցն Արեայ արքայի Ասորւոց սպանչելիօք նն։

Յետ այսր ամենայնի՝ գնաց Եղիսէ 'ի գաղ. գաղայէ յերիքով. և եգիտ զի արդիք մարդարէից բնակեալք յերիքով խնդրէին ընդարձակել զբնակութիւն իւրեանց. զի նեղ էր և անբաւական բազմութիւն նոցա։ Հաւանեալ Եղիսէի ընդ խորհուրդ նոցա՝ գնաց ընդ նոսա. չոգան 'ի յորդանան հատանել փայտ յանտառէն 'ի պէտս շինուածոյ. և 'ի հատանելն նոցա զծառս՝ տապար միոյն 'ի նոցանէ ելեալ 'ի մեղեխէ, անկաւ 'ի գետ անդր։ Կորուսան ինքնին փոքր ինչ էր, այլ աղքատ գործաւորին մեծ էր. զի ամենայն ինչք նորա չէին բաւական 'ի վճա-

թուն. զոր յանօթ առեալ էր. վասն այնորիկ աղա-
ղակեաց ցաւագին, ահ ահ որ։ Գ.թացեալ 'ի նա
եղիսէի, և տեղեկացեալ 'ի նմանէ զտեղին՝ ուր
անկաւ երկաթն, ձեղքեաց փայտ և ընկէց անդր.
և այն փայտ իբրև զօրաւոր մագնիս ձգեաց զեր-
կաթն 'ի խորոց անտի 'ի վեր. որ զօրէն Թեթև
փեսրոյ ծածանեալ յերեսս ջրոյն՝ եկն 'ի գե-
տափն. և ասաց եղիսէի ցայրն, արդ դու քեզէն
վերացո՛ զտապարն. և արար այնպէս։

Եղիսէ նստեալ յերիքով 'ի խնամել զորդիս
մարգարէից, և ուշադիր լինել շինուածոյ նոցա,
ոչ անփոյթ առնէր զարքայէն և զիրաց Թագաւո-
րութեն։ Որդին ագերայ արքայ ասորւոց Թէպէտ
չունէր յայնժամ յայտնի պատերազմ ընդ յսրա-
մայ արքայի իսրայէլի, բայց Թոյլ տայր ժողովը-
դեան իւրում գումարտակ կազմել արանց սպառա-
զինելոց և ասպատակել յերկիրն իսրայէլի՝ յափշ-
տակելով և աւարելով որչափ ինչ մարդասացին 'ի
ձեռս բերել. որով ոչ սակաւ վիշտս և փնաս հասու-
ցանէին իսրայէլացւոց։ Բ.մենք իսկ ոչ շատացեալ
որդւոյն ագերայ՝ դարաներ և զնա ինքն զարքայն
զբռամբ ածել։ Վ.անզի յորմէ հետէ անկաւ 'ի ձեռս
արքային իսրայէլի կալանաւոր, ոչ կարէր հանդար-
տել, մինչև ոչ ունիցի և ինքն 'ի ձեռին զոր 'ի
Թագաւորաց իսրայէլի, 'ի բառնալ զնախատինս
անձին և ազգին։ Կարգեալ էր լրտեսս՝ դիտել
զամենայն շարժմունս յսրամայ. և խորհրդով իւ-
րոց իշխանաց դնել 'ի դարանի զունդս զօրաց զինե-
լոց 'ի զանազան տեղիս, ուր ուրեք իմանայր 'ի լը-
տեսաց Թէ ունի երթալ յսրամայ, զի յայլակարծուց
'ի վրէ հասեալ ըմբռնեսցէն զնա. այլ միշտ 'ի դերև
էլանէին հնարագործութիւնք նորա։ Վ.անզի եղիսէ
մարգարէն 'ի ձեռն հրեշտակութեան զգուշացուցա-
նէր զարքայ չանցանել ընդ այն ինչ տեղի, զի ասո-
րիք ասէ Թաքուցեալ անդ դարան գործեն քեզ. և
արքային առաքէր լրտեսս զնեալ զտեղիսն. և այն-
պէս զգուշանայր անտի։ Բ.ռաջին և երկրորդ ան-
գամ՝ դիպուածոյ տայր զայն որդին ագերայ. բայց

տեսեալ, զի միշտ յամենայն տեղիս և յամենայն ժամանակի նմանութիւնքն խորհուրդք նորա, կասկած կալաւ, թէ ոք յիւրոց անտի խորհրդակից է արքային իսրայէլի, և նա յայտնէ նմա զծածուկ խորհուրդ իւր։

Վասն որոյ զայրացեալ կոչեաց զզօրապետս իւր, և ասէ ցնոսա. ո՞չ պատմէք ինձ, թէ ո՞մատնէ զիս արքային իսրայէլի. յայնժամ յառաջ մատուցեալ մի ոմն 'ի զինուորաց՝ ասէ. ոչ ոք 'ի մէնջ ո՛ր իմ արքայ, այլ Եղիսէ մարգարէ իսրայէլի պատմէ արքայի իսրայէլի զամենայն զբանս քո, զոր խօսիցիս 'ի սենեկի քնոյ քոյ։ Յայնժամ դարձոյց որդին ադերայ զխորհուրդ իւր 'ի վերայ Եղիսէի՝ զնա ըմբռնել. և իմացեալ յիւրոց արանց, եթէ դնաց նա 'ի դովթայիմ քաղաք անպատսպար՝ ոչ կարի 'ի բացեալ 'ի սիկիմայ, նոյն հետայն առաքեաց անդր հատուած մի զօրաց հետեւակաց, և ընդ նոսին կառս և երիվարս. զոր գիւրին էր նմա հանել 'ի ռամոթայ և 'ի մերձակայ քաղաքաց՝ զորս առեալ էր 'ի գաղատացւոց։

Հասին զօրքն ասորւոց գիշերի, և պատեցին զքաղաքն, զի մի՛ կարիցէ փախչել մարգարէն։ Ընդ սրշալոյսն կանխեաց յառնել պաշտօնեայն Եղիսէի։ (Այսպէս ունին ամենայն թարգմանութիւնքն համաձայն երբայականին. ուր մերս ըստ հոմանձայնութեան յունին զպաշտօնեայն կամ զպաշտօնն իմանայ 'ի վերայ անձին Եղիսէի). և ելեալ ետես, զի զօր պատեալ էր զքաղաքաւն և դուշակելով զպատճառն՝ ընթացաւ և պատմեաց երկիւղածին Եղիսէի, ասելով. ահ ո՞ր զի՞ դործեսցուք. իսկ նա ասէ. մի՛ երկնչիր, զի ընդ մեզ բազմա՛ն են քան ընդ նոսա։ Լուսաց յաղօթս Եղիսէի ինդրելով 'ի տէրն բանալ զաչս պատանեկին. և ետես՝ զի լի էր լեառնն ձիովք և հրեղէն կառօք շուրջ զեղիսէիւ. այն էին նշանակք երկնային զինուորութեանց հրեշտակաց առաքելոց 'ի տէրն 'ի պահպանութիւն ծառային իւրոյ ընդդէմ ասորւոց։ Իբրև առաւօտն լուսացաւ, իջին ասորիքն մտանել

'ի քաղաքն. այլ Եղիսէ կամեցաւ խաղալ ընդ նոսա. և ասէ արար զկամս ծառային իւրոյ նաև 'ի խաղս, զի ըստ աղաչանացն Եղիսէի՝ այնպէս չիսթեաց զՀաստատակ զգայութիւն զօրացն ասորւոց, մինչ զի նորատեսակ իմն շլացութիւն, կամ ապշութիւն ոչ ճանաչէին զայն զոր աչօք բացօք տեսանէին։ Լրթուն էին, և տեսանէին զամենայն՝ զքաղաք, զմարդ, զդաշտ. քայց ոչ որոշէին, թէ այս՝ այն ինչ քաղաք իցէ, սա՝ այն ինչ մարդ, և այն՝ այս ինչ դաշտ։ Յայնժամ Եղիսէ՝ որում զՏէտ մերեալ էին, ինքնին եւ ընդառաջ նոցա. և 'ի հաքցանել նոցա ցնա վասն Եղիսէի՝ թէ ո՞ւր իցէ, ետ պատասխանի. վրիպեալ է ձեր, զի ոչ այս ճանապարհ է, և ոչ այս քաղաք գտանել զնա. Եկայք զկնի իմ, և տարայց զձեզ առ այրն, զոր խնդրէք։ Դրքա ոչինչ կասկած կալան զառնէն, զի գոլով 'ի ձեռս իւրեանց՝ զիւրին էր սպանանել զնա, Եթէ մատնութիւն ինչ խորհեսցի առնել նոցա. վասն որոյ գնացին անդրկեան զկնի նորա. և նա տարաւ զնոսա ուղիղ 'ի սամարիա թագաւորեալ քաղաք Իսրայէլի։

Գ. Ուցէ զարմասցի ոք ասա թէ ո՞րպէս թոյլ տայր յովրամ սոսկալիսն առն միոյ հանդերձ բազմութիւն զինեալ զօրաց թշնամեաց մտանել 'ի քաղաք անդր։ Լ. Յայտ է յընթացից պատմութենն թէ Եղիսէ կանխեալ զեկուցեալ էր 'ի ձեռն հրեշտակութեան՝ յովրամայ արքայի զամենայն զիրսն, և զԽորհուրդ իւր վասն որոյ կամի ածել զնոսա անդ։ Իսկ արքայն 'ի յարգի մեծի ունելով զայրն ոյ, և հաւատի ամենայն իրօք զՀաւատարմութիւն և զՀնազանդութիւն նորա, անկասկած ամենեին հաւատայ նմա։ Գիտեր զի պահպանութեան սամարեայ հզօր է, և պահակք նորա բազում և զինեալ, զորս յայնժամ՝ ևս առաւել արար վառիլ 'ի զէն. ուստի չունէր ինչ երկիւղ 'ի գնդէ անտի թշնամեաց, Եթէ փորձ ինչ յանդգնեսցին փորձել 'ի քաղաքի անդ, յայր սակս պատուէր առաքեաց պահապանաց դրանցն թոյլ տալ մտանել ասորւոց, զորս ածէր Եղիսէ։

Վասն որոյ իբրև հասին նոքա 'ի մեծ հրապարակ անդր քաղաքին, ուր աղօթիւք եղիսէի բացան աչք նոցա, և տեսին զի են 'ի մէջ սամարեայ, ետարց արքայն իսրայէլի ցեղիսէէ և ասէ՝ Եթէ հարիցս զդեսա հայր։ Վասն այսր է թէ կանխաւ տեղեակ էր արքայն զիրացն. ուստի ոչ յանկարծադէպ ինչ թուեցաւ նմա. և թէ զինեալ կազմ և պատրաստ ունէր զզօրս իւր անդէն և անդ կոտորել զնոսա։ Բայց եղիսէէ ոչ եթող առնել նոցա չար. զի չէին գերեալք 'ի պատերազմի, այլ ածեալք 'ի ոստէ աքանչելեաք. նա մանաւանդ ասաց իբրև հիւրս կերակրել զնոսա, և այնպէս արձակել խաղաղութիւն։ Բարի արքայն ըստ խրատու եղիսէի. զի պատրաստեաց այն ամենայն բազմութիւն սեղան մեծահայց բազմախորտիկ. կերան և արբին. և արձակեաց զնոսա խաղաղութիւն երթալ առ տէր իւրեանց։ (Որ վերոյգրեալ գրչաց երևի գրեալ 'ի մերումն, "Չէ արկ առաջի նոցա խուսս տակաւ մեծաւ, և կերան և արբին". Բ. Խագ. Ը. 23. փոխանակ գրելոյ թերևս "սեղան կամ պատրաստուն խորտկաւ մեծաւ". որպէս յայտ է 'ի համեմատութիւն այլոց թարգմանութեանց)։

Որդին ադերայ արքայն ասորւոց զայս ամենայն համարեցաւ յայտնի թշնամանս, և անբերելի նախատինս անձին և թագաւորութեան իւրոյ. վասն որոյ հաստատեաց 'ի մտի հանել զվրէժ նախատանացն. բայց ոչ առժամայն, և ոչ անընտրող շտապմամբ, այլ 'ի բերել յաջող դիպողութեան։ Որ ժամն տեսեալ զի անօգուտ ինչ էր իւրոց մեկնակազմեանց ասպատակել յերկիրն իսրայէլի. միանգամայն և կամեցեալ յանհոգութիւն 'ի քուն պահել զթշնամին, արգել զնոսա մի ևս արշաւել յերկիրն իսրայէլի, և այնու ստիպել զնոսա զի միշտ զինեալ կացցեն։ Դիպողութիւն՝ որում մնայր որդին ադերայ, ոչ յամեաց. զի իբրև սաստկացաւ սովն և համարեցաւ թէ նուազեալ իցեն շտեմարանք սամարեայ, առ զամենայն բանակ իւր, և եկեալ նստաւ առ նոսին և պաշարեաց զնա։ Այր ինչ փոյթ նմա թէ զօրք

իւր չկարիցէն ունել պաշար յերկրէն իսրայէլի. զի ունելով մերձ յաջմէ բանակին իւրոյ զծոմն. և յաՀեկէ զծովակն գենեսարեթայ և գյորդանան, զիւրին էր նմա բերել պաշար բանակին իւրոյ ընդ ջուր՝ առատապէս յամենայն կողմանց. զի որպէս երևի 'ի նախագրեալ պատմութէ սոմնացւոյն, սոմն էր միայն յերկրին իսրայէլի 'ի պատիժ անհաճ կուսակալութէ նոցա։

Յոմրամ արքայ չունելով ոչ զօրութէ բաւական, և ոչ պաշար կերակրոյ առ 'ի բանակ կալմել և ելանել 'ի Ճակատ ընդդէմ Թէհնամնոյն, բռնադատեցաւ մնալ 'ի քաղաքի անդ փակեալ։ Ամենակալութի քաղաքացւոյ օր քան զոր սաստկանայր մինչև միս ձիոյ, և իշոյ և այլոց մանր զաղիր կենդանեաց, յորոց բնութէն ինքնին զզուի՝ լիներ նոցա Համեղ կերակուր. վասն զի սոմն բառնայր զամենայն տաղտկութէ. որ և յայն եՀաս, մինչև գլուխ իշոյ եղև յիսուն սկեղ արծաթոյ. և չորիր մասն կապտի աղբոյ աղաւնեաց՝ Հինգ սկեղ արծաթոյ. (մերս ունի յիսուն և Հինգ յայտնի կրկնութ յիսուն բառիդ նախագրելոյ)։ Ամենայն որ սոսկալին է, ստիպեցան ուտել և միս մարդոյ. գտան անդ մարք՝ որք ձեռաք իւրեանց զենին զմտատաղ մանկունս իւրեանց և կերան. մին յորդէսպան կանանց անտի յայն կատաղի լրբութէ եՀաս, մինչև հրապարակաւ ձգել 'ի դատաստան առ արքայ զայլ կին մի՝ թերևս դրացի նորա, խնդրելով առնել նմա իրաւունս վասն որդէսպանութէ իւրոյ՝ իբրև վասն արդար ինչ գործոյ։ Մինչ շրջէր արքայ ընդ ոմանց զօրապետաց իւրոց 'ի վերայ պարսպի քաղաքին զննել զնա, կինն այն աղաղակեաց առ նա և ասէ, ապրեցո՛ զիս Ո՞ր արքայ. իսկ արքայն 'ի տագնապս անբերելիս գոլով, ասէ ցնա 'ի դառնութէ սրտին, մի՞ ապրեցուցցէ զքեզ Ո՞ր. ուստի՞ ապրեցուցցէ զքեզ, 'ի կալը՞ թէ 'ի հնձանէ։ Ամենայն փոքր մի հանդարտեալ, եՀարց ցնա, թէ զի՞նչ խնդրէ. և նա ասէ. կինս այս ասաց ցիս, տուր զորդիդ քո, և կերիցուք զդա այսօր, և զորդիս

զնմ կերիցուք առ վաղիւ. և եփեցուք զորդին իմ և կերաք զնա. և ասեմ ցսա յաւուրն երկրորդի, տուր զորդիդ քո, և կերիցուք զդա. և Թաքոյց զորդին իւր։

Իբրև լուաւ արքայ զբանս կնոջն, սոսկումն անհնարին պաշարեաց զնա. և այնչափ զարհուրեցաւ, մինչև պատառել զհանդերձս 'ի կրծոց. յայն մնալ երևեցաւ ծածուկ ապաշխարութիւն արքայի յայնմ յետին նեղութեան. զի 'ի պատառել նորա զհանդերձս, և 'ի շրջել 'ի վերայ պարսպին, ետես ժողովուրդն զքուրձս, զոր 'ի ներքոյ հանդերձից զգեցեալ էր 'ի վերայ մերկ մարմնոյ։ Այլ վՀուռն՝ զոր վՀռեաց յայնժամ, չէր համեմատ ապաշխարութեան նորա։ Կնոջն չէտ պատասխանի. զի թէ կամեցեալ էր առնել արդարութիւն, պարտ էր զգլուխս երկոցունցն հատանել։ Այլ 'ի դիպուածոց անտի կանանցն այնչափ վառեցաւ ցասումն բարկութեան նորա ընդդէմ եղիսէի, զի երդմամբ վՀռեաց 'ի նմին իսկ աւուր առնուլ զգլուխս նորա։ Յաւ նոյն ժամայն առաքեաց զենուոր մի կատարել զդատաւկնիքն։ Պատճառ ցասման նորա 'ի վերայ եղիսէի այս էր, զի եդեալ էր 'ի մտի թէ երկարել կամ կարՃել սովոյն կախեալ կայր զաղօթից եղիսէի. որպէս առ ժամանակաւ աքսաքու հօր իւրոյ անաւդանել կամ կանխել անձրևոյն 'ի բարձումն սովոյ՝ զաղօթից եղիսէի։ Լուստի եթէ կամեցեալ էր նա (ասէր) աղաչել զՏՀՏ, վաղու և արդեաք դադարեալ էր սովն, կամ բարձեալ էր պաշարումն։

Այսուհետ եղիսէ 'ի տան իւրում 'ի սամարիա, և ոմանք 'ի ծերոց երկիւղածաց նստէին ընդ նմա. ծանեաւ եղիսէ 'ի յայտնութիւն ՏՀՏ զդատակնիք արքայի զոր ուրար վասն նորա. ասէ ցծերսն. եթէ գխոյցէք, զի առաքեաց որդի սպանողին առնուլ զգլուխս իմ. (Որդի սպանողն կոչէ զյովրամ, զի աքսաքս հայր նորա սպան յանիրաւի զնաբովթ, և յեզաբէլ մայր նորա զմարգարէս ՏՀՏ). արդ՝ իբրև գայցէ, կալջիք զնա ասէ առ դրօքն, և մի թողջիք մտանել. քանզի ՏՀՏ նորա արքայ վաղ-

վաղակի ստրջասցի ընդ դատակնիքն՝ զոր եւ վասն իմ, և ինքն անձամբ ընդ փոյթ հասանիցէ զկնի նորա 'ի խափանել զդարձարդութիւն։ Որ՝ինչ խօսէր զայս եղիսէ առ Ծերսն, եկն զինուորն. և 'ի բաղխել նորա զդուռնն, եհաս և արքայն զկնի նորա՝ խօսելով ցայնվայր ընդ զօրապետս ուղղիկիսս իւր զթշուառութիւն սովոյն, և զանցից որդէսպան կանանց. ահա ասէ այս ամենայն չարիք 'ի ճանէ հասին 'ի վերայ իմ. և զի՞նչ ևս բարի մնայ ինձ այսուհետև ակն ունել 'ի նմանէ. նոյն բան էր և 'ի բերան զինուորին եկելոյ 'ի դիմաց նորա։

Լուաւ եղիսէ 'ի ներքուստ զխօսել արքայի. և եկեալ առ պատուհանն՝ կամ առ դուրս, ասէ. ոչ այդպէս, այլ լուր զբան ճոն. այսպէս ասէ տէր. վաղիւ յայսմ ժամու այնչափ առատութիւն լիցի 'ի դրունս սամարեայ, զի գրիւ մի նաշխոյ սկեղ միոյ վաճառեսցի, և երկու գրիւք գարւոյ սկեղ միոյ։ Որ՝ ոմն 'ի զօրապետաց, որ էր զինակիր արքայի, յորոյ 'ի ձեռս յենոյր արքայ, ծաղրելով ասէ. եթէ զսահանս երկնից բացցէ տէր, և նաշխէ դարի անձրևեսցէ, տակաւին ոչ լինիցի բանդ այդ։ Նա պատասխանի եղիսէ փոքր մի խօսիւ. ահա տեսցես դու աչօք քովք, և անտի մի կերիցես։ Յամանակն պայմանադրեալ սուղ էր. և չէր մարթ բնաւ ընդ միտս մարդոյ անցանել, թէ արպէս 'ի միջոցի քսան և չորից ժամուց յետին չքաւորութիւնն փոխեսցի 'ի վերջին առատութիւն։ Ոչ գոյր ակնկալութիւն ուստեք հասանելոյ նպարակաց, և ոչ կարողութիւն ելանելոյ 'ի դուրս 'ի պատերազմ ընդդէմ թշնամւոյն։ Այլ ոճ տեսանէ զանտեսանելիս 'ի մարդոյ. և յորժամ խոստանայ, չունի պէտս թէ որ ուսուցցէ նմա զեղանակ և զհնարս պահելոյ զխոստումն։ Որ՝սոլորութիւն մեծ է չհաւատալ զայն՝ որ յոյժ յայտնեալ է, սակս մարդկային տկար և ապուշ հաստողութիւնն չկարելոյ իմանալ զեղանակ և զներքին հանգամանս յայտնեալ իրացն։

Այլ չորք բորոտք նստէին առ միով 'ի դրանց սամարեայ արտաքոյ քաղաքին, չունելով ինչ նե-

դութեն յասորոց. որք ոչ մերձենային 'ի պարիսպս, կամեցեալ առանց կորուսանելոյ զրք 'ի քանակի իւրեանց՝ տիրել քաղաքին 'ի ձեռն սովոյ, և ոչ դիմնմատուութիւն և արեան Ճապաղեօք։ Այս ջրքք եղկելիք 'ի նմին աւուր խորհուրդ արարին, և ասեն այր ցընկեր իւր, ասա նստելով մեր մեռանիմք. զի ոչ ելս որ նպաստամատոյց լինի մեզ. և եթէ խնդրիցեմք մտանել 'ի քաղաքն, թէ և ընկալցին զմեզ 'ի նեերքս, սակայն և անդ մեռանիմք 'ի սովէ։ Այսպա լաւ ելս լինիցի մեզ փորձ մի փորձել, դիմել 'ի բանակն ասորւոց. եթէ ընդունին զմեզ ողորմեալ յետին թշուառութեամբ մերում, ահա այն լաւ լինի մեզ, զի ապրիմք. իսկ եթէ սպանցեն, և այն՝ չէ հեռի 'ի մէնջ. զի թէ ասա նստիցիմք, և թէ 'ի քաղաքն մտանիցեմք, հարկ է մեռանել։ Օ այս այսպէս հաստատեալ, յարեան գիշերայն դիմել 'ի բանակն. 'ի Ճանապարհի չտեսին պահապանս. հասեալ 'ի պատնէշ նոցա՝ և ոչ անդ գտին գիշերապահս ըստ սովորութեան։ Այսպա յառաջ մատուցեալ՝ եկին 'ի մտան մի բանակին. և չտեսանելով անդ մարդ, կամ շարժուն ինչ մարդոյ, համարձակեցան մտին 'ի վրան մի, և գտեալ անդ ընթրիս պատրաստեալ, նստան կերան և արբին ցյաղ. զի սովեալ էին. ապա տեսեալ զի ընդ այն չափ ժամանակ ոչ մարդ ուրեք երևեցաւ, և ոչ ձայն ինչ եղև լսելի, ելս առաւել վստահացեալ, ձեռն արկին յաւար։ Այլ զի որպէս երևի վրանն այն էր հարուստ զօրապետի, գտին անդ արծաթ և ոսկի և հանդերձս բազումս, առին զամենայն, և չգան թաքուցին. և այնու ոչ շտապացեալ՝ գարձան անդ ի՛նն և մտին յայլ վրան, առին և անտի աւար ոչ սակաւ. զայն ելս թաքուցին 'ի հաւատարիմ տեղւոջ։ Արեբախտութեամբ մեծ թուէր նոցա այն պատահութեամբ անդ իմանդ արձ կուտելոյ հարստութեամբ որ չափ և յոժարին։ Այլ ապա լաւ ելս խորհեալ, երկեան՝ թէ 'ի լուսանալ աւուր յայտնեսցին իրքն, և ինքեանք իրրև գողս ընդ պատժով անկցին. զի այն աւար անկանէր արքայի և քաղաքացւոց. թմղ

զի չէր օրէն միայնակ վայելել յառաջութեան, և թաքուցանել յայլոց կարօտելոց։

Օ այս խորհելով՝ ասէն ցմիմեանս. օրս այս օր աւետեաց է, երթիցուք պատմեսցուք զայս արքայի. և եկեալ աղաղակեցին առ դրան քաղաքին. և պատմեցին բարապանաց զկրսն։ Ա՝տաք ասէն 'ի բանակն ասորւոց, և ոչ գոյր անդ այր, և ոչ ձայն մարդոյ. վրանք նոցա նոյնպէս կան. երիվարք և գրաստք նոցա կապեալ 'ի տեղիս իւրեանց բոստ կարգի. և ամենայն վրանք նոցա լի բարեօք։ Այլ ժամայն զօրապետ մի 'ի դրանէ անտի ասաց պարեալ ընթացաւ յարքունիս. ետ զարթուցանել զարքայ, և մտեալ 'ի ներքս 'ի սենեակ անդր արքայի՝ պատմեաց նմա զամենայն։ Յորմէ յարուցեալ վաղվաղակի յանկողնոյ, կոչեաց զժողովն պատերազմի. և ասացաց թէ այսպիսի յանկարծ և հանդարտակն խուսափումն թշնամւոյն, առանց կարելոյ մեր իմանալ զպատճառն, ոչ տայ աւետիս, այլ կասկած։ Դիտեն ասէ նոքա, թէ քաղաքս կայ 'ի յետին թշուառութեան 'ի սովոյ. թողին զբանակն կազմ ամենայն իրօք, և ինքեանք թաքեան ուրեք 'ի բացի. որպէս զի ժողովուրդն սոխպեալ 'ի քաղցոյ ելցէ 'ի քաղաքէն դիմել 'ի բանակն գտանել կերակուր. և մինչ համարիցին թէ ամենայն քաղաքն ելեալ իցէ, յայնժամ հասեալ նոցա 'ի վերայ՝ ըմբռնեսցեն զնոսա կենդանւոյն. և ապա առատաբար մտցեն 'ի քաղաքն և ելցեն և տիրեսցեն նմա։ Զովեցաւ կատկած արքայի, բայց առաջի աբարին նմա, թէ չէ արժան վասն ձախողակ ինչ կասկածի բոլորովին անփոյթ առնել զայնպիսի բարեբախտութիւն։ Ի բանակս զօրաց յոլով են դիպուածք. որք անհաւատալի թուին որոց ոչ գիտեն զպատճառն. գուցէ ծանր և անհրաժեշտ իրք ինչ հասեալ իցեն արքային ասորւոց, յորմէ սոխպեալ յետս դարձուցեալ իցէ շտապաւ զզօրս իւր։ Զ՚ԴՐ որովհետև 'ի բազմութեէ ձիոց քաղաքիս մեացին գեռևս հինգ կենդանի, լաւ երևի ասէն զայս փոքրիկ գունդ առաքել 'ի զննել զձանապարհս, և

դարանայոյզ առնել զամենայն թաքստեան տեղիս, յորս գուցէ կարծիք՝ թէ իսկն նոքա դարանեալ. և այսպէս շարժիլ մեզ ըստ ծանօթութեան զոր առնուցումք 'ի նոցանէ։

Այս էր լուսագոյն խորհուրդ. այլ արկանել 'ի վտանգ զհինգ երիվարս յորս բովանդակէր համարէն հեծելազունդ թագաւորեալ քաղաքին՝ ծանր էր. ընտրէին յաւէտ պահել զնոսա 'ի սպանդ 'ի կերակուր՝ քան առաքել ընդդէմ թշնամեաց։ Այլ և այն վտանգաւոր էր՝ կոյր զկուրայն ելանել 'ի դուրս առանց ունելոյ յառաջագոյն ծանօթութիւն ինչ զթշնամեաց. իսկ հետևակս առաքել 'ի զընանութի երկրին՝ կարի երկարէր։ Վասն որոյ զմիջինն կալան Ճանապարհ. զի առեալ՝ երկուս հեծեալս 'ի ձիոց՝ առաքեցին զնոսա, մնալով յայնմ պահու մինչև ցդարձ հրեշտակացն՝ աղքայի և ժողովրդեան 'ի ծուփս յուսոյ և երկիւղի։ Խոհեմութիւն մարդկային զայս ուսուցանէր. ապա թէ ոչ՝ եթէ յոյժ յուսացեալ էին, իրագէտ լինէին յայսնի սքանչելեաց նորա. և կարող էին ամենեքեան նոյնհետայն անկասկած եղանել 'ի քաղաքէն՝ առանց բնաւ տեսանելոյ ուրեք զոք յասուրց։ Վասն զի ՝ն՝ որ բիւր օրինակաք տայ Ճանաչել զինքն ՝ն՝ զօրութեց, և ընդ ժամանակս ժամանակս ցուցանէ զամենակարողութիւն և զիմաստութիւն իւր 'ի պատերազմունս, ասա մարտեաւ ընդ ասորիս նոր օրինակաւ, զոր չարար երբեք ընդ այլս։ Խոռվեաց զզգայարանս զօրապետացն և զօրաց առհասարակ. զի թուէր նոցա լսել 'ի հեռուստ ոտնաձայն բազմամբոխ հետևակաց և հեծելոց, և շաչիւն կառաց բազմաց. և սուտ բարբառ ինչ իբր ասել, թէ արքայն Իսրայէլի 'ի վարձու կալաւ զթագաւորս քեռատացւոց, և զթագաւորս եգիպտացւոց, երկոքին ևս զօրաւորք. որոց միաբանեալ ընդ Իսրայէլեան գնդին՝ գան 'ի վերայ նոցա։ Այս սուտ ոտնաձայն և բարբառ անձայն՝ այնչափ երկիւղ և արհաւիրս արկ զնոքաք, զի առ անհնարին չքոթութիւնն ոչ ժամանեցին ոչ զվրանս բառնալ, և ոչ գէթ

զերիվարս Թամբել, այլ ընդ մուԹն յարուցեալ այր իւրաքանչիւր՝ որպէս և գտաւ հետի, 'ի փախուստ ՀԵսպեայ մարդապուր 'ի կողմն դամասկոսի. մեծ ին՝ շահավաճառ համարելով անձանց զկոբուստ համբրէն ընչից զոր Թողին, ԵԹԷ մնացաւ ծին Թշնամին 'ի կողոպուտ աւարացն պատաղեալ՝ ոչ հատանիցէ 'ի Թիկանց։

Իսկ երկու լրտեսք առաքեալք 'ի սամարեայ շրջեցան մինչև ցյորդանան. և տեսին զի ահա ամենայն Հանապարհն լի էր հանդերձիւ, և զինու, զոր ընկեցին փախստեայք 'ի Թիկանց և 'ի ձեռաց 'ի խուճապել իւրեանց առ 'ի ԹԵԹևանալ 'ի ծանրութեանց։ Դարձան ուրախարար աւետեաք և պատմեցին արքայի. յայնժամ՝ ամենայն սամարիա եալ յաւար ասորւոց. ուր այնչափ յորդառատ պարէնս գտին 'ի բանակ անդր. զի գրիւ նաՀՀոյ եղև սկեզ մոյ արծաԹոյ, և երկու գրիւ գաբւոյ՝ սկեզ, ըստ բանին եղիսեէ։ Իսկ արքայ՝ զի մի լինիցի չխոԹութեան 'ի դրանն որ հանէր 'ի բանակ անդր, կացոյց զինուորս 'ի զգուշութեան, և 'ի վերայ նոցա հրամանատար զգինակիր իւր, զայն՝ որ 'ի նախընԹաց աւուր 'ի խօսել արքայի ընդ մարգարէին՝ ձեռն տայր նմա. և ահա սա ինքն ետես աչօք իւրովք զկատարումն բանի նոն։ Իսկ տես զառատութիւն, զոր երիվարօք և իշովք և կառօք ասորւոց մուծանէին 'ի քաղաք անդր. բայց այնչափ էր խռնութեան երիվարաց և գրաստուց և ժողովրդեան առդրանն, մինչև առ չզօրելոյ զինուորաց 'ի կարգի դնել զայն խուռն բազմութեան, առաՀարեալ կոխեցին զգինակիրն, որ կայր 'ի մուտս դրանն. և անդ մեռաւ։ Իսկ այսպէս կատարեցաւ մարգարէութիւն եղիսեէ 'ի վերայ նորա. զի ետես աչօք զառատութիւն, բայց ինքն ոչ կերաւ անտի։

Իսկ տես և արքայ զվտուղ ապաշխարութիւն իւրոյ, որ քրՀանգեաց խոնարհեցաւ առաջի նոն։ Իսկ ԹԷպէտ այս գործ խոնարհութիւն և ապաշխարութիւն նորա մեռեալ էր մահուչափ մեղաք, զի ունէր միշտ 'ի սրտի պահել զպաշտօն երնջոցն յերոբովա-

մայ 'ի թագաւորութիւնէ իւրում, սակայն և այնպէս ընկալաւ յասպիս զվարձս լիուլի. զազատումն 'ի խիստ պաշարմանէ, և զազատագեղ լիութիւն կերակրոյ, և այլ ամենայն տիտղոսից. զոր ողորմութիւն ոն սուաքեաց նմա և համբերն քաղաքին 'ի բանակէ անտի թշնամւոյն։ Այլ զոյգ ընդ նմին լրացան յայնմ ամի գուշակեալ եօթն ամք սովոյն։

ԳԼ. Զ.

Ինձչիւրոնէ նեղեմանայ 'ի բորոտութենէ՝ լուացմամբ 'ի յորդանան ըստ բանին Եղիսէի։ Ինորոտութենէ փեղեղայ։

Յետ այսորիկ աղատեալ երկրին խորայէլի 'ի տառապանաց եօթնամեան սովոյ, և անդորրացեալ 'ի պատերազմաց, այն ինչ 'ի մեծի խաղաղութիւն խնդամիտ վայելէր յովրամ արքայ, եհաս առ նա նեեմանն իշխան զօրուն ասորւոց. և եւ 'ի ձեռս նորա զիր մի յղեալ յորդւոյն ադերայ արքայէ ասորւոց. որ ելից խառվութիւն զարքայն խորայէլի և զամենայն խորհրդակցաւն նորա։ Նեեմանն էր այր մեծ առաջի տն իւրոյ՝ զերազոյն սպարապետ զօրուն նորա, հզօր և պատուեալ յամենեցունց. ուրում արքայն ասորւոց պարտապան էր յոյժ վասն բազմապատիկ երախտեաց նորա։ Բանզի յետ կրկին հարուածոց զոր ընկալաւ յիսրայէլեան զօրաց 'ի ժամանակս աքասբու, յորում դրեթէ սպառսպուռ հարան զօրք նորա. և ինքն արքայ հնարիւք մարդապուր ապրեցաւ, սա անդրէն նորոգեաց զբանակ զօրու նորա. և առ զանազան քաղաքս յիսրայէլ, գուցէ և յայլոց սահմանակից տերութեանց. և կանգնեաց յոտին և զօրացոյց զերերեալ և զվըստանգեալ թագաւորութիւն ազգին իւրոյ։ Այս է զոր ասէ, զիրն. * Օր նովաւ ետ տէր փրկութիւն

ասորւոց։ Բ. Բ. Ե. 1։ Այս՝ որպէս կարծեն ոմանք, 'ի բազում պատերազմական աշխատութենէ 'ի ցրտոյ և 'ի տօթոյ և յայլ վշտակրութենէ՝ էր բորոտեալ։ Այլ ըստ ծածկոյն մտաբերութեան, մեկնակազմեալ ասորւոց որք արշաւէին յասպատակութիւն Իսրայէլի, (որպէս տեսաք 'ի վերոյ,) զերեալ փոքրիկ աղջիկ մի Եբրայեցի՝ պարգևեցին, կամ վաճառեցին կնոջն Նեեմանայ։ Ցեսեալ աղջկանն զհանապազորդ նեղութիւն ոն իւրոյ 'ի տգեղ պատակրութենէ մտոի, յաւուր միում ասաց ցտիկին իւր, ով թէ Երթայր տէրդ իմ առ մարգարէն որ՝ որ 'ի սամարիա, զի նա անդէն ապաքինէր զդա 'ի բորոտութենէ այսր։ Այնուհետև տիկինն և պատմեաց առն իւրում զրան աղջկանն։ և Նեեման պատմեաց արքայի։ իսկ արքայ որ յամենայն սրտէ ցանկայր ողջութենէ առնն, զի նա էր աջ բազուկ Նորա յամենայնի, և մանաւանդ 'ի գործս պատերազմի, ասաց ցնա Երթալ անյապաղ։ և Էս տայ քեզ ասէ զիրս յանձնարարութենէ առ արքայն Իսրայէլի։

Զնաց Նեեման, բայց կամեցեալ պահել զպայծառութենէ ազգին, և զփառս իւրոյ իշխանութենէ 'ի ձեռն առատաձիր պարգևաց, առանց որոյ իշխանք օտարազգիք չէին այնչափ հաճելի օտարաց, եւ բազում շքով և մեծաւ պատրաստութեամբ՝ կառօք և երիվարօք և բազմութեամբ ծառայից։ առնէալ ընդ իւր տասն տաղանդ արծաթոյ։ այսինքն 250. լիտր արծաթ, և վեց հազար դահեկան՝ ըստ ոսկի, և տասն պատմուճան հանդերձեալ, այն է՝ փոխանակաւ (որ ռամկօրէն ասի, տասն ձեռք հագուստ)։ Այսպիսի հանդերձանօք եմուտ Նեեման 'ի սամարիա։ և ինքնին մատոյց ցարքայն Իսրայէլի զգիր թագաւորին իւրոյ։ Ան գրոյն համառօտ է։ այլ ոչ՝ գրուածոյն ամբարտաւան՝ ոչինչ անուշակ քաղաքականութենէ քաղցրացուցեալ։ յուցանէր 'ի նմա քաջ Ճանաչել զիւրոյ թագաւորութենէ զգերՙի վերոյ վիճակ, և զնուաճութենէ զօրութենէ արքային սամարեայ։ վասն որոյ և գիրն թուէր գրեալ 'ի թագաւորէ առ իւր ստրուկ, քան թէ 'ի թագա-

ւորէ առ Թագաւոր յանձն առնել զկարօտ պաշտաւ.
նեայն իւր. ՝Ի՛ դէ իրրև հասցէ (ասէ) առ քեզ
հրովարտակդ այդ, ահա առաքեցի առ քեզ զնեե.
ման զծառայ իմ, և առաքեսցես զդա 'ի բորոտաւ.
թենէդ իւրմէ։

Իրրև ընթերցաւ արքայն խորայէլի զհրովար.
տակն, յորում 'ի վերայ արհամարհութեան՝ յաւելոյր
և հրաման 'ի վերջ քան զկար մարդոյ, եդ 'ի մտի
էթէ առ յարութիւն սրտին գրեաց զայն, 'ի դաս.
նել պատճառս նոր պատերազմ յարուցանելոյ։ Զ՚ս
որոյ 'ի դառնութենէ սրտին պատառեաց զհանդերձս
իւր. և մտախոհ լինէր 'ի սրտի իւրում, թէ զի՞նչ
ունիցի առնել։ Այսոյր զհրովարտակն և խորհրդա.
կանաց իւրոց, և ասէ. տեսէք թէ զի՞նչ պահան.
ջել յինէն որդին ադերայ. մինթէ՝ ա՞ծ իցեմ ես սպա.
նանել կամ կեցուցանել, զի առաքեաց առ իս ա.
ւաքել զայրդ 'ի բորոտութենէ իւրմէ. որ միայն ա՞յ
է։ Խորհրդականք ոչ գիտէլով 'ի ժամուն ասել
ինչ, կալան ժամանակ՝ զի կարիցեն խորհիլ հը.
նարս։ Ա՛յլ Եղիսէի լուեալ զիրսն, երբաշ վաղ.
վաղակի 'ի սրտէ արքային զամենայն տագնապ. ա.
ռաքեաց առ նա, և ասէ. ընդէ՞ր պատառեցեր ըզ.
հանդերձս քո՝ եկեսցէ առ իս նեեման. և գիտաս.
ցէ թէ գոյ մարգարէ յիսրայէլի պաշտօնեայ ա՞յ
Աշմարտի։ Հանգեաւ սիրտ արքայի 'ի բանից Եղի.
սէի. այլ ընդունայն ինն գժդաութենէ նեեմանայ
փոքր միւս ևս 'ի դէրև հանէր զկատարուածն ի.
բացն։ Ա՛նզի նա ըստ բանի արքային խորայէլի՝
եկն իւրով իշխանական փառաք երիվարաք և կա.
ռաք և ամենայն բաղմութիւն ծառայից իւրոց, խոր.
հելով 'ի մտի թէ ելցէ Եղիսէի ընդառաջ նորա
պատուով ըստ արժանեաց իւրոյ մեծութեանն, և
կացցէ յաղօթս, և կարդասցէ զանուն տէր ա՞յ ի.
րոյ, և դիցէ զձեռն իւր 'ի վերայ սխտացեալ
մարմնոյն, և սրբեսցէ զբորոտութիւնն։ Ա՛յլ եթէ՝
զի վրիպեցաւ 'ի խորհրդոյն. քանզի Եղիսէի ոչ
միայն չէր ընդառաջ նորա, այլ՝ և ոչ իսկ զանձն
երևեցոյց նմա, պատգամ ևեթ յղելով առ նա 'ի

ձեռն սպասաւորի՝ երթալ եօթն անգամ լուանալ
'ի յորդանան, և այնպէս սրբեսցի ասէ մարմին նո-
րա։ Օրսյս պատգամ առեալ նեեմանայ՝ բարկա-
ցար, և ասէ. եթէ լուացմամբ լինիցի ինձ սրբիլ
'ի բորոտութենէ, ապա զի՞ պիտէր ինձ այսչափ ձա-
նապարհ հատանել վայրապար. ոչ լաւ իցէն նաբաս-
նա, և փարփարա գետքն դամասկոսի քան զամե-
նայն ջուրս իսրայէլի. և ընդէր ոչ երթայց և լը-
ւացայց 'ի նոսա, և սրբեցայց. և այնպէս սրտմ-
ուութիւն դարձաւ գնաց յիջևանն իւր, հաստատեալ
'ի մտի վաղվաղակի դարձ առնել յերկիրն իւր, զա-
մօթն ևեթ այսչն լինելոյ տանելով ընդ ինքեան։

Այլ արքն որ ընդ նմա՝ խօսեցան առ նա, և
ասէն. հայր, եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ
քեզ մարգարէին, ոչ ապաքէն պարտ էր առնել.
թո՞ղ թէ զի ասաց լոկ, լուացիր և սրբեսցիս. չու-
նիս ինչ մեծագոյն և քեզ կարևոր քան զառողջու-
թիւնն, զորով վասն այդչափ թեթև բանի չէ ար-
ժան զանց առնել. և այնպէս հաւանեցուցին զնա։
Ապաքա նեեմանն 'ի յորդանան, և լուացաւ 'ի նմա
եօթն անգամ ըստ բանին եղիսէի, և առ ժամայն
սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւն. և դարձաւ մար-
մին նորա գեղեցիկ կայտառ և փափուկ իբրև ըզ-
մարմին մանկան մատաղոյ։ Այլ փորձ ծանեաւ
զձեռն տէր. հաւատաց յամենակալն՝ յորմէ միայ-
նոյ, և ոչ 'ի ջրոյն 'ի վայրկենի պարգևեցաւ նմա
կատարեալ առողջութիւն։

Այլ այնպէս սրբեալ մարմնով, և առաւելապէս
հոգւով, դարձաւ 'ի սամարիա առ եղիսէի ինքն
և ամենայն բանակ իւր՝ կատարել զպատշաճական
պարտաւորութիւն իւր. միանգամայն և խօսել ընդ
մարգարէին զիրաց ինչ հարկաւորաց։ Իբրև յան-
գիման եղև եղիսէի, ասէ. ահա գիտացի՝ թէ ոչ
դոյ ՚ուծ յամենայն երկրի, բայց միայն 'ի մէջ իս-
բայէլի։ Այսպա քաղցր ինն և ողջակէզ ստիպմամբ
բռնադատէր զայրն՝ այ ընդունել 'ի նմանէ ու-
ղերձս. այլ մարգարէն բացէ 'ի բաց հրաժարեալ՝
ասէ, կենդանի է տէր՝ որոյ կացի առաջի նորա,

եթէ առից ինչ։ Յայնժամ դարձեալ նեեման ըն-
դան իւր յայլ ինչ կարևորագոյն, և ասէ. որով-
հետև ոչ կամիս առնուլ ինչ յինէն, ես աղաչեմ
զի շնորհեսցես ինձ ծառայի քումդ առնուլ բեռինս
երկուց ջորւոց 'ի հողոյ երկրիս, ուր զայ ծանու-
թութիւն ոչ ճշմարտի, և տանել 'ի դամասկոս՝
կանգնել անդ սեղան նոցն. զի ոչ ևս արասցէ ծա-
ռայ քո ողջակէզս և զոհս աստուածոց օտարաց,
բայց միայն նոցն։ Ի հողոյ երկրին խնդրէ. զի գու-
ցէ համարէր թէ պաշտօն ոչ իսրայէլի այնպէս կա-
պեալ է ընդ հող երկրին իսրայէլի, զի արտաքոյ
նորա ողջակէզք և զոհք մատուցեալք չէն ընդու-
նելի ոչ. և զի անմարթ էր նմա թողուլ զՏայրե-
նիս և զիշխանութիւն իւր, և երթալ բնակել 'ի
հրէաստան, խորհէր թէ միապէս կարօղ էր զոհս
և ողջակէզս մատուցանել Հաճոյականս և յատո-
րիս, եթէ սեղանն լիցի 'ի վերայ հողոյ երկրին
հրէաստանի։ Կամ՝ ըստ ոմանց, որ առաւել հա-
ւանելի թուի, արար զայն լոկ 'ի յիշատակ երախ-
տեաց տեղւոյն, ուր ընդ մարմնոյ առողջութեան՝
շնորհեցաւ նմա 'ի ներսէ և զերաշխարհին պարգև
լոյս հոգւոյ՝ ճանաչել և հաւատալ զՃշմարիտ ածն
իսրայէլի, և կատարեալ սրտիւ յարիլ 'ի նա։ Հա-
ւանեցաւ եղիսէէ ընդ խնդիր նորա, այլ ոչ պարտաւորեաց զնա 'ի թլփատութիւն, կամ 'ի պահպանութիւն այլոց ծիսական օրինաց։ Այսն զի այն
օրէնք միայն վասն ազգին իսրայէլի տուան. վասն
որոյ օտարազգիք կարօղ էին պաշտել զնա զոհիւք
և ողջակիզօք և պատարագօք ուրև իցէ, և զիարդ
և կամիցին. շատ էր զի անկեղծ սրտիւ և կենդանի հաւատով արասցեն առ ընդունելի լինել ոչ,
առանց խառնելոյ ինչ 'ի հեթանոսական սնոտի
պաշտամանց. նմին իրի և նեեման ոչ խնդրեաց
ուսանել զծէսս երրայեցւոց 'ի մատուցմանս զոհից։ Այլ՝ 'ի միայն խնդրէ՝ մնաց 'ի սրտի նորա յետ ճանաչելոյ զՃշմարիտն ածն, զնորա լուծումն խնդրեաց
առնուլ 'ի մարգարէէն։

Նեեման էր իշխան նախասպատիւ յարքունիս ա-

սորուց. ուր պաշտօն նորա էր տալ ձեռն արքայի յենուլ 'ի նա յելանել նորա ուրեք հանդիսիւ։ Լ՚ըդ՝ ըստ այսմ պաշտամանն, հարկ էր նմա երթալ ընդ արքայի նաև 'ի տաճար ռեմմանայ կռոց. և 'ի պագանելն արքայի երկիր անդ 'ի տան ռեմմանայ, տալ նմա ձեռն յենուլ 'ի նա, որով հարկ լինէր և նմա կորանալ մարմնով առաջի ռեմմանայ՝ 'ի միասին ընդ արքայի, 'ի կատարել նորա դիւրաւ զերկրպագութիւն իւր։ Օ այս սպասաւորութիւն խնդրէ նեեման ներել նմա՝ զի արասցէ արքայի։ Կամ՝ ըստ ասորի և արաբացի թարգմանութեց, որք հարցական ձևացուցանեն զբանն, հարցանէ մի թէ ներեսցէ՞ նմա տէր առնել զայս սպասաւորութիւն։ Լ՚զիսէէ ետ նմա պատասխանի. երթ խաղաղութեամբ. որով ցուցանէ զինքեանիւ խնդրոյ նորա։

'Ի վերայ այսորիկ խնդիր մեծ յուզի առ մեկնիչս և առ ոճաբանս։ Զմանիք տարապայման նախանձայոյզք 'ի վերին երեսս ընթերցեալ զդիրն, դատապարտեն զգործ նեեմանայ, ընդ նմին և զպատասխանի մարգարէին, իբրև կեղծաւորութի 'ի հաւատոյս, 'ի ներքուստ մտաւորապէս զոճ պաշտել. իսկ արտաքուստ յաչս մարդկան ձևանալ կռապաշտիշտ։ Լ՚սլէ՝ կամեցեալ զերկոսին ազատել 'ի բամբասանաց, յանցեալն ձգէն զբանն. որպէս թէ աղաչել նեեմանայ զմարգարէն աղօթս առնել. զի քաւեսցէ տէր զնա վասն անցեալ կռապաշտութեն։ Կամ՝ գէթ զի բառնայցէ 'ի նմանէ զչար սովորութիւնն, յոր սովորեալ էր երկիրպագանել 'ի տան ռեմմանայ ընդ արքայի իւրում. ուստի և զբնագիրն ընթեռնուն օրինակ զայս. * 'Ի մոռանել տուն իմում արքայի 'ի տուն ռեմմանայ երկիրպագանել, և 'ի յենուլ նորա 'ի վերայ ձեռին իմոյ, ես երկիրպագի 'ի տան ռեմմանայ։ Լ՚ըդ՝ որովհետև ես երկիրպագի 'ի նմին տեղւոջ, քաւեսցէ տէր զծառայքս վասն այսր բանի։ Լ՚յլ այս ընթերցումն օտար է ոչ միայն յերբայականն, այլև յամենայն թարգմանութեց. որք միօրինակ ապառնի ընթեռնուն.

՝ Ի մոանել ՝ն իմոյ ՝ի տուն ռեմանայ երկիրպա-
գանել նմա , յորժամ յենուցու ՝ի ձեռս իմ , և եր-
կիրպագանիցեմ ՝ի տան ռեմանայ ՝ի պագանելն նո-
ցա երկիր ՝ի տան ռեմանայ ևն ։

Լ.պա ասելի է ընդ մեծագոյն մասին ողջամիտ
մեկնչաց և ՝ոճաբանից՝ թէ բան նեռեմանայ ոչ էր
վասն անցեալ կռապաշտութե՛ն իւրոյ . և ոչ խընդ-
րել հրաման առ երեսս երկիրպագանելոյ ՝ի տան
ռեմանայ , և ոչ իսկ եղիսկէ թոյլ ետ զայն նմա ։
Լ.յլ էր լոկ երթալ ընդ արքայի ՝ի տուն ռեմա-
նայ , և ՝ի պագանել արքայի անդ յերկիր՝ ձեռն
տալ նմա . որով հարկ լինէր և նմա խոնարհիլ ։
Լ.յս գործողութե՛ն նեռեմանայ էր պարզ արտաքին
քաղաքական սպասաւորութե՛ն , զոր ըստ պաշտա-
մանն իւրոյ առնէր արքայի ոչ միայն անդ ՝ի տան
ռեմանայ , այլև յամենայն տեղիս ուր և երթայր
արքայ , որ ընդ այն ժամանակս էր իշխանութիւն
մեծ ։ Լ.յն զի նա լիով յայտնեաց զմիտս իւր՝ յոր-
ժամ խոստովան եղև առաջի եղիսկէի ոչ ՝ի ծա-
ծուկ , այլ հրապարակաւ ՝ի լուր ամենայն արանց
ասորւոց որք գտան անդ ընդ նմա , թէ ծանեաւ
ՃՀմարտապէս՝ եթէ ոչ գոյ ՝ոճ յամենայն երկրի ,
բայց միայն ՝ի մէջ իսրայէլի ։ Լ.ւ թէ ոչ էաւ արաս-
ցէ ողջակէզս և զոհս աստուածոց օտարաց , բայց
միայն ՝ն . յոյր սակս խնդրեաց և հող յերկրէն իս-
րայէլի տանել ՝ի դամասկոս , և անդ կանգնել ա-
ռանձին սեղան ՝ն պաշտել զնա հրապարակաւ ։
Լ.ըդ՝ այս յայտնի մերժումն աստուածոց օտարաց ,
և հրապարակաւ պաշտօն մատուցանել ՝ոյ իսրայէ-
լի , բաւական էր և առաւել քան զբաւականն բան-
նալ անհետ առնել զամենայն գայթակղութե՛ն , և
զամենայն կարծիս կեղծաւորութեան ՝ի հաւատս ,
տալով աշխարհի ՝ի միտ առնուլ եթէ այն գործո-
ղութե՛ն էր միայն քաղաքական սպասաւորութե՛ն ար-
քայի առ ՝ի պատիւ՝ ըստ սովորութեան երկրին ։
Ի այս՝ և առաւել քան զայս գիտելով եղիսկէ , որ
լի էր ՝ոճային հոգւով , թոյլ ետ նեռեմանայ ոչ
մարդկօրէն կարծեօք , այլ երկնաւոր լուսով , մնալ

յիւրում իշխանութեանն առանց վնասու ճշմարտութեան նորա։

Եւ այսպէս յաջողութիւն վճարեցան իրք նեղեմանայ, և հրաժարեալ նորա 'ի մարգարէին՝ դարձաւ ուրախութիւն յերկիր իւր։ Մինչև էր կարի հեռացեալ, գեղջ ծառայ եղիսէի հարաւ յախտակ արծաթասիրութեանն՝ ծանրասրտեալ ընդ վերհանմանութեանն ոմն իւրոյ, որում բացէ 'ի բաց մերժեաց զամենայն ընծայս զոր իշխանն առատամիտ մատոյց նմա. իսկ թէ ինքն առեալ էր ձեռամիջս ինչ՝ թէ ոչ՝ չէ յայտ, բայց և այնպէս առաւելագունի ցանկացեալ, ասէ 'ի մտի, եթէ ողջ իմ խնայեաց յաստուծոյ ջառնուլ ինչ 'ի ձեռանէ նորա, ես առից, վասն որոյ աճապարեաց զնդեցաւ զհետ նորա։ Իսկ իշխանն պատուական տեսեալ զնա 'ի բացուստ՝ զի ընթանայր, զաւելի առ, և իջեալ 'ի կառաց՝ գնաց ընդ առաջ նորա, ասել 'ի նմանէ զպատճառ դալստեան նորա։ Ցառայն խարուսիկ ձեւացոյց ստութիւն, որպէս թէ 'ի ոմանէ իւրմէ յղեալ էր զի առաքեալ. զի եկին ասէ առ նա երկուս պատանեակք 'ի լեռնէն Եփրեմի յորդւոցն մարգարէից, վասն նոցա խնդրէ 'ի քէն տաղանդ մի արծաթոյ, և երկուս պատմուճանս հանդերձեալս։ Պաքէն սովին բանիւ պատիւ մարգարէին մեծապէս աղօտանայր. նեղութիւն իշխանին արձակել զբերելոն 'ի Ասնապարէի՝ ծանրանայր. գողութիւնն զոր խաբէութիւն առնէր՝ ծանրագոյն էր. բայց ծառայն մշտաքաղց ագահութիւն յիմարեալ՝ ոչ ինչ զայսցանէ խորհէցաւ։ Այս վնաս յաձախ է յաշխարհի՝ նսեմանալ պատուոյ և անուան տեարց 'ի ձեռն անյագ շահասիրութեան ծառայից։ Եւ նեմանն ըստ իշխանավայել առատաձեռնութեան եւ նմա առաւել քան զոր խնդրեացն. զի եւ երկուս (կամ ըստ մերումն՝ երիս) տաղանդս արծաթոյ, և երկուս պատմուճանս հանդերձեալս։ Եւ զի ծանր էին առաւել քան զկար առն մոյ՝ բաժանեաց զարծաթն յերկուս պարկս, նոյնպէս զհանդերձս յերկուս ծրարս, և եւ յերկուս 'ի ծառայից իւրոց՝ բառ-

նալ և տանել, ուր առաջնորդեսցէ նոցա զեռզի. իսկ նա յապաղեցոյց զնոսա 'ի ճանապարհի՝ մինչ ցնսեմանալ երեկոյի. և այնպէս 'ի մթանն՝ զի մի ոք տեսցէ, տարեալ 'ի տուն իւր, առ 'ի ձեռաց նոցա, և արձակեաց զսրան։ Եւ ինքն 'ի չքմեղս եղեալ՝ որպէս թէ չէր ինչ բնաւ գործեալ, եմուտ առ ՀՐ իւր, և կայր որպէս յառաջն։

Զմեծ ոչ ելթող անպատիժ զանգգնութիւն զայն մեծ, զոր ամենայն մասամբ յայտնեալ էր ելիսկի. և մարգարէն համառօտ հարցուածով քրնեալ զծառայն ընչաքաղց, մինչ զամենայն ուրատա լինէր չարագործն՝ ած յերեսս նորա մանրամասն զամենայն զոր գործեաց մինչև ցոտնփոխ նորա, և մինչև ցնեբբին խարհուրդս մտաց նորա. ոչ սիրտ իմ ասէ գնաց անդ, յորժամ դարձաւ այրն 'ի կառաց անտի ընդ առաջ քո. և արդ առեր զարծաթն և զհանդերձսն 'ի նեեմանայ, զի գնեսցես քեզ ձիթենիս, և այգիս, և արջառս և ոչխարս, և ծառայս և աղախնայս։ Եւ արդ՝ փոխանակ զի ցանկացար առնուլ զարծաթն նեեմանայ, առցես այսուհետև և զբորոտութիւն նորա. որ յարեսցի 'ի քեզ. և 'ի քէն անցանիցէ ժառանգութիւն յորդիս քո, և յամենայն սերունդս նոցա։ Եւ գնեաց յերեսաց մարգարէին բորոտեալ իբրև զձիւն։ Խսան զաղբատեսիլ հրապարակեալ ընդ աշխարհ՝ դարձոյց արդեաք և զպատիւ մարգարէին առաջի նեեմանայ։

ԳԼ. Լ.

Մահ Ամոնէից արքայի յոտքոյ, և Յովրամայ արքայի Իսրայէլ, և Յեղեմբէլայ. ղրկեաց ասեն Յեհու Խափաւոր Իսրայէլ։

Յետ մահուն յովրամայ արքայի յուդայ՝ թագաւորեաց ոքոզիա որդի Նորա, յամի երկոտասան ներորդի յովրամայ որդւոյ աքաաբու արքայի Իսրայէլի քեռւոյ իւրոյ։ Լաւ էր քսանեւերկու ամաց 'ի թագաւորել իւրում, կրտսերագոյն գոլով յորդիսն յովրամայ. վասն զի զերիցագոյնսն զամենասեան կոտորեաց հէնն արաբացւոց յարձակեալ յերուսաղէմ. որպէս պատմեցաւ 'ի վերս անդր։ Եւ զիւն այնպէս իմն խօսի զրքոզիայ, որպէս թէ ըստ բուսոյ բարուոյ բարի էր, և 'ի բարին յօժարեալ. այլ մայր Նորա գոդոզիա դուստր աքաաբու թոռն ամրէայ, և չար խորհրդակիցք Նորա եղեն նմա սատարք անօրէնութեան, վարելով զնա 'ի Ճանապարհս տանն աքաաբու՝ առնել չար առաջի տն 'ի կորուստ անձին։ Եւ ժամանակք յովրամայ հօր Նորա լցաւ երկիրն յուդայ կռովք. և ժողովուրդն ընդելացեալ և վարժեալ 'ի կռապաշտութեան՝ ոչ յուցանէր պատրաստական կամն ընդունել թագաւոր ճշմարտաշատ թշնամի կռոց։ Եւ քոզիա ունէր իրաւունս 'ի թագաւորութեան, և անուանեալ իսկ էր 'ի հօրէ իւրմէ թագաւոր. և ըստ ոմանց նաև 'ի յովսափատայ հաւոյ իւրմէ. բայց ժողովուրդն անհաւատարիմ առ ճշ՝ ոչինչ խղճէր առ ոտս կոխել զերդումն հաւատարմութեան առ իւր թագաւոր։ Եւ պաքէն ըստ ակնարկութեան գրոյն՝ տեսանէմք, զի 'ի սկզբան անդ ոչ ամենայն ժողովուրդ յուդայ, այլ միայն բնակիչք երուսաղէմի ծանեան զնա թագաւոր. ապա թէ բևս մայր Նորա և անօրէն խորհրդակիցք զրզռեցին և գահավէժ արարին զնա

յանօրէնութիւնս կռապաշտութիւն. որպէս զի այնու հաճոյացեալ ժողովրդեան զակատելոյ զՀետ կռոց՝ հաստատեսցի թագաւորութիւն նորա միաբան հաւանութիւք ամենեցուն։ Եւ ասն որոյ և ոքոզնա առ ժամայն ընդ նստիլ յաթոռ թագաւորութիւն երևեցոյց զանձն ջերմ նախանձախնդիր 'ի պաշտօն կռոց. միաբանեցաւ ընդ յոլովամայ ամպարիշտ արքայի խրայելի. նոր խնամութիւն յաւել հաստատել զազգակցութիւնն՝ առեալ իւր կնութիւն զդուստր նորա։ Այլ այն ինչ ոտնհարութիւն կրօնի խնդրէր հաստատել զթագաւորութիւն իւր, 'ի միջոցի միոյ ամի կորոյս զկրօնն, զթագաւորութիւնն, և զկեանս։

Այսու ժամանակաւ, կամ փոքր մի յառաջ հիւանդացաւ առ 'ի մահ որդին աղերսայ արքայ ասորւոյ՝ Թերևս 'ի դառնութէ սրտին, յաղագս ամենապարտ ինքնահաճած փախստեան զօրուն իւրոյ 'ի պաշարմանէ սամարեայ։ Յայնմ վայրի լուաւ Եղիսէ զայ 'ի դամասկոս. յորմէ վասն բաղմապատիկ սքանչելագործութեանց նորա՝ զորոց զփորձ առեալ էր և ինքն, երկնչէր և 'ի յարդի ունէր զնա. և խորհելով թէ այր այսչափ զօրաւոր առաջի նոյ՝ կարող էր տալ նմա և մահ և կեանս, առ հանելոյ զսիրտ նորա և յինքն յանկուցանելոյ՝ առաքեաց ընդառաջ նորա զազատել զմի յարքունի պաշտօնէից անտի իւրոց. և ընդ նմա ընծայս բազումս յոյժ բեռնեալս ուղարկեաց քառասնից յամենայն քաղութեանց դամասկոսի. պատուէր տուեալ նմա, զի 'ի մատուցանել զընծայսն, հարցանիցէ ցնա, թէ ապաքինեսցի՞ արքայ և կեցցէ 'ի հիւանդութէ անտի իւրմէ։ Ասէ ինչ դիրն, թէ ընկալեալ իցէ արդեաք կամ մերժեալ մարգարէն զընծայսն զայսոսիկ. ուստի գուշակի ըստ ոմանց՝ թէ ընկալաւ. ապա թէ ոչ՝ ոչ արդեաք զանց առնէր ասէն գիրն յիշատակել զմերժումն այնչափ պարգևաց. որպէս յիշէ զնեեմանայն։ Այլ թէ ընկալաւ, յայտ է ոչ վասն անձին, այլ 'ի ծախել 'ի պէտս աղքատաց, և մանաւանդ որդւոց մարգարէից, որք միաբան բնակէին, և անպտացուած կեանս վարէին։ Եւ

որք դաւանին զաղքատութիւն, երբեմն ոչ ընդունին պարգևս առ սէր կամաւոր աղքատութեան. և երբեմն ընդունին առ սէր այլոց տառապեալ աղքատաց, յանձն առեալ զամենի վասն յօգնութեան հաստատելոյ կարօտութեան նոցա։ Պատասխանին եղեսիոյ առ հրեշտակն եղև այս. * Լ՝ երթ և ասա ցնա, կենդանի կեցցես. և եցոյց ինձ ոտս՝ զի մահու մեռանիցի։ Գ. Թագ. Ը. 10։ Լ՝ այլ առ իմմանալ զայս պատասխանի՝ գիտել պարտ է. զի սովորական է 'ի սրբ գիրս, և ոչ սեղական երբայական լեզուի 'ի կիր արկանել զհրամայականն փոխանակ ապառնւոյ. ուստի յասել ասա՝ * Լ՝ երթ և ասա ցնա։, այնպէս է որպէս թէ ասէր, * Դու երթայցես և ասացես ցնա։։ Յայս պատասխանի երկու մարգարէութիւք էն. մի՝ թէ արքայն հաւաստեաւ մեռցի. երկրորդ՝ թէ հրեշտակն հանդերձեալ է ստելասելով ցհիւանդն թէ առողջասցի և կեցցէ։ Դիտեմ ասէ եղիսէէ, զի դու 'ի քո կողմանէ երթայցես և ասացես ցորդին աղերայ, մի ինչ երկիցէ արքայ, զի ասաց ցիս եղիսէէ թէ կելով կեցցէ։ Լ՝ այլ ես ահա յայտ առնեմ քեզ, թէ մեռցի նա անվրէպ։

Լ՝ պա առ զնա եղիսէէ մեկուսի, և եկաց առվայր մի առաջի նորա խռովեալ թախծագին երեսօք, և արտօսրալից աչօք. և յասել ցնա ազայելի, ընդէր լաս դու իմ, ասէ եղիսէէ. դու ես պատճառ լալոյ իմոյ. գիտեմ զհարուածն, զոր գործելոց ես ընդ որդիսն իսրայելի. զամենայն ամենայն քաղաքս նոցա հրձիգ արասցես, զընտիրս երիտասարդաց նոցա սրով կոտորեսցես և զտղայս նոցա զանմեղս սատակեսցես և զդղիս նոցա հերձցես։ Լ՝ զայել հիացմամբ ինն ունկն դնէր բանից մարգարէին. և ոչ կարէր 'ի միտ առնուլ, թէ զիարդ հնար իցէ նմա սոսկական պաշտօնէի այնչափ զօրանալ, մինչև կարող լինել զայն ամենայն գործել։ Ոչ է ասել ծառայ քո շուն մի, թէ առնիցէ զբանդ զայդ։ Լ՝ այս զարմացումն ցուցանէ, թէ եղիա մարգարէ զօծումն ազայելի 'ի թագաւոր ասորւոց՝ պահեալ

էր, զի լինիցի ձեռամբ եղիսէի. որում յայտնեալ իսկ էր զպատուէր նոն, և զժամանակ գործադրութեան։ Ասդ ծծ զնա եղիսէէ, և ասէ. արդ գնա, զի եցոյց ինձ Թագաւորէ քեզ'ի վերայ ասորւոց։ Դարձաւ ազայէլ առ արքայ. և լցոյց զառաջին մարգարէութիւն եղիսէի՝ ասելով. զի 'ի հարցանել ցնա արքայի, Թէ զի՞նչ ասայ մարգարէն. եւ պատասխանի, աւետիս է, զի ասաց ցիս Թէ կեալով կեցցէ։ Այլ ինքն զայն օր և զդիշերն ամենայն գաղտաբար զհետ եղև որսալ իւր կուսակիցս. և 'ի վաղիւ անդր առ պաստառակալ, և Թացեալ 'ի ջուր՝ արկ զերեսաց նորա, որով խափանեցաւ ազատ տուր և առ ընչայ հիւանդին. և այնպէս լռելեայն և անշշունչ հեղձամահ արար զնա։ Այլ կուսակիցք նորա առժամայն Թագաւորեցուցին զնա, և ժողովուրդն ամենայն ընկալան զնա, կեցցէ՛ արքայ ազայէլ՝ ասելով։

Իբրև լու եղև 'ի սամարիա մահ որդւոյն ադեբայ, յովրամ արքայ իսրայէլի ժամ դիպոյ վարկաւ փարձ փորձել անդրէն յինքն դարձուցանել զառամեալ գաղաադ. առ որ տկարացաւ աքսաբ հայր նորա։ Վասնզի համարէր Թէ ազայէլ 'ի սկզբան ամենայն հակառակութիւն բաղում կրեսցէ, զի գոլով մի 'ի հասարակ արքունի պաշտօնէից ամենի՝ յանկարծ ինն ել նստաւ յաթոռ Թագաւորութեան. վասն որոյ ոչ իշխեսցէ հանել զչարս իւր արտաքոյ երկրի իւրոյ, զի յրմնոստանալ ժողովրդեանն՝ նեքօք 'ի հնազանդութիւն նուաճեսցէ, զնոսա։ Զայս խորհելով յովրամ արքայ իսրայէլի, եւ վաղվաղակի պաշարել զառամեալ գաղաադ, ուստեղով նիզակակից զիեսայս իւր զքոջիա նորապատակ արքայ յուդայ։ Այլ 'ի դերև եւ խորհուրդ մտաց յովրամայ. քանզի ազայէլ փութացաւ և եհաս յօգնութիւն ռամաթայ. և եղև անդ պատերազմ սաստիկ. ուր Թէպէտ յաղթեցին իսրայէլացիք, և առին զքաղաքն, այլ յովրամ արքայ ընկալաւ վերս բազումս 'ի մարմնի, Թէպէտև ոչ մահացուս։ Այլ առ վաղագոյն և լաւս դարմանս դտանելոյ 'ի բժշկաց՝ դարձաւ յեզ-

բայէ, թողեալ զհրամանատարութիւն զօրուն 'ի ձեռս յեսուայ իւրումն սպարապետի։ Այս և ոքոզնա աբքայ յուդայ՝ որ ինդրէր հնարիւք ինն խոյս տալ 'ի տեղւոյն, եթող զկօրն, և չոքաւ յեզբայէլ գեղեցիկ պատրուակաւ իբրև յայցելութիւն և 'ի մխիթարութիւն աներոյ իւրոյ 'ի հիւանդութիւն նորա. և ոչ կարծէր թէ երթայ ընդառաջ օրհասի իւրոյ. * Այ տեսէ եղև ասէ զիրն կործանումն ոքոզնայ յերթալն առ յովրամ ॥. Բ. Թագ. ԺԲ. 7։

Մինչ յովրամ քաջալիր յեզրայէլ, և ոքոզնա կայր անդ առ նմա զօրապետք իսրայէլացւոց յետ սիրելոյ ռամոթայ՝ յաւուր միում Ժողովեալ անդ 'ի տան միում 'ի միասին ընդ յեսուայ սպարապետի իւրեանց՝ նստէին 'ի զրոյցս։ Այս ահա պատանեակ մի անծանօթ յանկարծակի եմուտ 'ի ներքս. և հայեցեալ, առ յեսու՝ ասէ բան ինչ է ինձ ընդ քեզ իշխանդ. ասէ յեսու. առ ո՞ յամենեցունց 'ի մէնք. և նա ասէ. առ քեզ իշխանդ։ Այլ վաղվաղակի յեսու, և եմուտ յայլ սենեակ լսել զբան պատանեկին, որ և նա 'ի մարդարէից անտի էր։ Այլ անսվայել վարկաւ անձին ունէն մատուցանել անծանօթի և նուաստատեսիլ պատանեկի, գիտելով զի բազում անգամ յայսպիսեսայ կարևոր ծառնօթութիւնք եղանէն. և զի լաւագոյն և սրատես ոչք իշխանաց էն ականջք նոցա։ Յամառօտ եղև առանձնախօսութիւն, որչափ ինչ բաւական էր 'ի գլուխ տանելոյ զպատուէր նոն առ եղիա մարգարէ հաղորդել զայն եղիսէի. որպէս զի նա 'ի գործ դիցէ անձամբ կամ 'ի ձեռն այլոց։ Այնման պատանեակն զսրուակ իւղոյն, և արկեալ զիւղն 'ի գլուխ նորա՝ ասէ ցնա. այսպէս ասէ Տէր ած իսրայէլի, օծի զքեզ թագաւոր 'ի վերայ Ժողովրդեան տեն. և դու արասցես արդարութիւն ընդդէմ տանն աքաաբու տեն քո. և փոխանակ այնչափ անպարտ արեանց ծառայից իմոց մարգարէից՝ զոր եհեղ ատպարիշտ աբքայն, սատակեսցես զամենայն սերունդս նորա. և զյեզաբէլ թէպէտ թագուհի՝ կերիցեն շունք 'ի վիճակին յեզրայէլի։

Օ այս ասացեալ՝ եբաց պատանեակին զդուռն, և փախեաւ վաղվաղակի, ըստ պատուիրեալոյ նմա եղիսէի մինչ առաքեացն զնա։ Այն հապճեալ փախուստ նորա թուեցաւ այլոց զօրապետաց նշան մոլեգնութեան. վասն որոյ իբրև եկ յերկիր առ նոսա, հարցին ցնա և ասեն. զի՞ եկն առ քեզ մոլին այն։ Յետ զուարճանն ոչ կամեցով յայտնել նոցա, ասէ՝ դուք ինքնին տեսիք զյիմսը շարժմունս նորա, յորմէ կարէք իմանալ և զբաղադանս նորա. այլ 'ի ստիպելն նոցա՝ պատմեաց զիրսն ճշմարտութիւն։ Այնժամ իբրև լուան զոր խօսեցաւ և զոր ինչ արար առ 'ի նոցանէ մոլի կարծեցեալն, փոխեցին զմիտսն. և փութացեալ առին իւրաքանչիւր զզինուորական վերարկու իւր, և եդեալ 'ի վերայ առաջին աստիճանի ուր նստէին, որ և ձեւացաւ իբրև աթոռ առեալի, նստուցին զյէու 'ի վերայ նորա և թագաւորեցուցին։ Կամէին առժամայն 'ի ձայն եղջեր փողոյ հրատարակել զնա թագաւոր. այլ նա խուհական խորհրդով կամեցաւ՝ զի նախ փակեսցին դրունք քաղաքին, և մի թողցի թէ ոք ելցէ արտաքս։ Վասն տեսանէր թէ 'ի մէջ այնչափ բազմութեան զինուորաց և բնակչաց քաղաքին գտցի ոք բարեկամ յովսամայ, և անճապարեալ զդ արասցէ զիրսն 'ի յեղբայրէ. և յովսամ խոյս տացէ 'ի սամարիա քաղաք ամրսկուռ՝ բաւական առ աշխատառնել ընդ երկար զն և իցէ զօրաւոր բանակ։ Դիւրին ևս էր յեղակարծումն 'ի վերայ հասանել նորա յեղբայրէ՝ քաղաքագեօղ պարսպաւոր, այլ անզօր և անպատասպար։

Այսպէս փակեցան դրունք ռամաթ գաղատադու, և յայնժամ հարին զփողս եղջերեայս 'ի հրապարակս և 'ի փողոցս քաղաքին, և ասեն, թագաւոր եկաց յէու։ Այս իբրև ամենայն զօրն 'ի նա յարեցաւ, ետ վաղվաղակի լծել զկառս իւր, և ելեալ փութացաւ յանկարծ հասանել 'ի յեղբայրէ։ Այս այն ինչ յառաջ խաղայրը տագնապաւ, ետես զէսն յաշտարակէն յեզբայրէի փոշի յոյժ. ազգարար յովսամայ, և ասէ. փոշի տեսանեմ ես։ Յորմէ գու-

չակեաց յովքամ թէ գունդ զօրու իցէ. և ոչ գիտելով թէ բարեկամ իցեն, եթէ թշնամի, արձակեաց հեծեալ մի յարանց իւրոց հրեշտակ ընդառաջ նոցա, պատուէր տուեալ նմա ողջունել խաղաղութիւն զզօրագլուխն նոցա ո՛ոք և իցէ. և ապա վարելով որպէս զնարդ ուսուցանիցէ խոհեմութիւն՝ իմանալ զխորհուրդ նոցա, և փութանակի քերել նմա զրոյց։ Պնաց հրեշտակն, այլ ոչ դարձաւ. զի յողջունել նորա և 'ի հարցանել՝ եթէ խաղաղութի՞ գայցեն զօրքն, ասէ յէու. զի՞ պիտի քեզ գիտել զնաղաղութէ կամ զպատերազմ. դարձիր զկնի իմ, և մնաս 'ի հեծելագունդդ։ Պատմեաց դէտն, և ասէ. Եհաս հրեշտակն, այլ ոչ դարձաւ. արձակեաց յովքամ երկրորդ հեծեալ մի ձիոյ նովին պատգամաւ. բայց և զնա կալաւ յէու առ իւր՝ որպէս զառաջինն։ Լսեաս և զայս դէտն յաշտարակէն. միանգամայն և յառաւել մերձենալ հեծելագունդ զօրուն, ետես զի գային տագնապաւ։ Լու զի յամենայն զօրասպետաց միջի՝ յէուայ ևեթ էր սովորութիւն այնպէս բուռն ընթանալ, ազդ արար դէտն՝ թէ տակաւին որոշել զնոսա ոչ կարէ, բայց 'ի գահավէժ ընթացից, զուշակէ թէ իցէ յէու որդի ամենասայ։

Տեսեալ յովքամայ զզօրս իւր շարժեալ առանց իւրոյ հրամանի, և զի մերձենան առանց արձակելոյ յառաջագոյն հրեշտակ առ նա՝ զեկուցանել նմա զպատճառս գալոյ նոցա, և ևս զի երկու հրեշտակք նորա միմեանց զկնի առաքեալք ոչ դարձան, կասկած մեծ անկաւ 'ի սիրտ նորա. այլ առ 'ի չգոյէ ժամանակի յերկար խորհելոյ՝ ձեռն էարկ 'ի փորձ վտանգաւոր, անձամբ ելանել ընդառաջ զօրաւն իւրոյ։ Ելերևս խորհէր, զի թէ իւրքն գան խաղաղութեամբ, ընկալցին զնա մեծարանօք իբրև զթագաւոր իւրեանց. իսկ եթէ ապստամբութի՞ գոյցէ տեսեալ զնա՝ պատկառեսցին յերեսաց նորա։ Զի մնալ անդ 'ի յեղբայրել քաղաքաքաղեօղ անզօր՝ չէր յապահովի, եթէ գայցեն ապստամբութի՞. իսկ փախչել անտի՝ չէր 'ի դէպ,

զի ոչ գոյր ժամանակ բաւական առ զերծանելոյ պատուով 'ի ձեռաց նոցա։ Լոր արդէն բժշկեալ 'ի խոցուածոց անտի՝ զոր ընկալաւ 'ի պատերազմին ռամաթայ, ուստի կարօղ էր ելանել 'ի տանէ. հրամանն էտ լծել կառս երկուս. և ինքն նստաւ յառաջնումն. իսկ զբոզիա փեսայ նորա արքայ յուդայ յերկրորդումն, և չոքան ընդ առաջ՝ ոչ գիտելով տիրապէս, թէ որոց։ Մինչ այս մինչ այն՝ հեծելազունդն այնչափ յառաջեաց, զի երկու թագաւորք հանդիպեցան նոցա 'ի Ճանապարհին առ վիճակաւ ագարակին Նաբովթայ յերզրայելացւոյ մերձ 'ի դուռն քաղաքին։ Իբրև ետես յովրամ զյեհու զսպարապետ իւր, ասէ. ողջո՞յն է յեհու. իբր ասել՝ յողջո՞յն արդեաք խաղաղութե՞ դաս։ Նա պատասխանի յեհու. զի՞նչ խաղաղութի՞ եցէ, տա կաւին պղծութի՞ յեզաբելայ մօր քո, և կախարդութի՞ նորա յաճախեն շաղախել զերկիրս։

Ի պատասխանւոյ աստի իմացաւ յովրամ, եթէ մատնեալ է 'ի ժանիս թշնամեաց. դարձոյց առ ժամայն զկառս իւր, և ասէ ցոքոզիա, դա՛ւ է ո՛քոզիա, կորեաք. և այլ ինչ ոչ կարաց ասել. վասն զի 'ի նմին ժամու յեհու արձակեաւ 'ի նա նետ մի՝ եհար զնա կշռակի ընդ միջ թիկանց, և ել նետն ընդ սիրտ նորա. և կծկեցաւ 'ի վերայ ծնգաց իւրոց և մեռաւ։ Ետ զտեղն կալաւ յեհու. մինչև բառնալ զդի յովրամայ 'ի կառաց. զոր տարաց ցբաղեկար սպառազէնն իւր ընկենուլ յագարակ անդր, ուր հրամանաւ յեզաբելայ, և նեբելով աքառաբուամբք յառաջ քարկոծեցաւ նաբովթ յեզրայելացի։ Յորժամ եղեալ մարդարէացաւ զայս 'ի լուր աքառաբու, թէ շունք լիզեսցեն զարիւնն յագարակին յայնմիկ, ուր լիզեցին զարիւն նաբովթայ եղեռնական անիրաւութի՛ք քարկոծելոյ, յեհու և բադեկար անդ գտան յերկրորդ կառս երթեալ զկնի աքառաբու։ Զայն յիշեաց ասէ յեհու ասելով ցբաղեկար. այս է օրն, յորում էլ 'ի գլուխ մարգարէութեան. յոր յաւել և այլ ինչ, որ չիք գրեալ անդ 'ի մարգարէութենն եղիայի, թէ բաց յաբ-

նէ նաբովթայ՝ հեղան յայնժամ և արիւնք որդ-
ւոյ նորա։

Զինչ ասա յապաղէր լիցու, ոքոզիա դարձոյց
զկառս իւր, և փախեաւ ընդ Ճանապարհ բեթա-
նագայ, որ հանէր 'ի պարտէզն արքունի։ Այս
աղմուկ շփոթի լեսին յուսահատութեան՝ ոքոզիա
որպէս թէ զգաստ գտաւ ընտրել զՃանապարհ
փախստեան առաւել համառօտ՝ ելանել լերկրէն
խրայելի։ Զայլ սակայն լիցու ունէր 'ի մտի կոտո-
րել զամենեսեան՝ յորս կայցէ մասն ինչ յարէնէն
աքաաբու. և զի ոքոզիա էր նորա թոռն, այն բա-
ւական յանցանք էր նմա՝ զվերապարտ առնել զնա։
Զայն որոյ լեսի սպանանելոյ զյուվրամ, և արկա-
նելոյ զգի նորա յադարակն նաբովթայ, այնոքեցաւ
զհետ ոքոզիայ, պատուիրելով զոքաց իւրոց և զնա
սպանանել։ Լիհաս նմա՝ մինչ ելանէր ընդ զառ 'ի
վերն բլրոյն բերբայի մերձ լեզրատամ քաղաք. ուր
թէպէտև զոքք իւր արձակէաք 'ի վերայ փախստա-
կանին բազմութեան նեռից՝ խոցոտեցին զնա, այլ
ոչ առ 'ի մահ. վասն զի նեռք 'ի բացուստ արձա-
կեալք՝ ոչ սակաւ կորուսանէն յուժգնութեանէ իւր-
եանց. նմին իրի ոչ կասեցաւ ոքոզիա լընթացից։
Լրիվարք լիցուայ էին կարի ինն աշխատեալք լեր-
կար և 'ի դահավէժ ընթացից. իսկ երիվարք ոքո-
զիայ նոր էին և անուշխատ. ուստի զոքք լիցուայ
ոչ զոքեցին այլ ևս լերկար պնդել զհետ նորա. և
ոքոզիա եհաս 'ի մանկեդդով։ Այս յայտ առնէն
զիրք յասելն. Բ. Խագ. Ի. 27. "Լիցուպնդեցաւ զհետ
նորա լիցու, և ասէ. հնպա և զդա ևս. և եհար
զնա 'ի կառսն՝ մինչդեռ ելանէր ընդ զառ 'ի վերն
բերբայի որ է լեզրատամ. և փախեաւ 'ի մանկեդ-
դով". և որպէս յարի զկնի, "և անդ մեռաւ". և
թէ որպէս, լուիցուք։

Զիհու ստիպեցաւ զտեղի առնուլ՝ առ 'ի տալ
փոքք մի հանգիստ և բուտ վստահաբեկ երիվա-
բաց. իսկ ոքոզիա նստաւ 'ի մանկեդդով ոչ յայտ-
նի, այլ 'ի ծածուկ. զի որպէս թուի՝ երկեաւ
այլևս Ճանապարհ հատանել, զի մի զայրասցին

վերք նորա, յորոց կամէր անդ բժշկել. ապա թէ ոչ՝ եթէ գէթ երկու կամ երեք մղոնաւ յառաջ դնացեալ էր, ելանէր 'ի սահմանաց թագաւորութեն իսրայէլի, և մտանէր 'ի սահմանս փղշտացւոց։ Եվ վաղիւ անդր յառաջ խաղացեալ լիներ, և գտեալ զիշխանս յուդայ զեղբօրորդիս աբողիայ, որք էին ընդ աբողիայ և պաշտէին զնա, եւ ունէր զնոսա և կոտորել։ Եվ նոքա դարձաւ խնդրել զաբողիա. և գիտացեալ զի դեռևս անդ էր 'ի վիճակին սամարիայ, որոյ մասն էր մակեդդոյ վերջին սահմանն նորա, անդ եւ խնդրել, և գտեալ կալան և ածին զնա առ յէհու. և սպան զնա։ Եվ այս ունիմք յերկրորդ գիրս մնացորդաց. ԻԷ. Ց. ուր ասի. «Եվ եղև իբրև առ յէհու զվրէժ տանն աքաաբու, եգիտ և զիշխանսն յուդայ զեղբարսն (այսինքն զեղբօրորդիս աբողիայ՝ ըստ երբայականին), որք պաշտէին զաբողիաս, և կոտորեաց զնոսա։ Եվ ասաց խնդրել զաբողիաս, և կալան զնա 'ի բժշկէն 'ի սամարիա (իմն 'ի վիճակին սամարեայ՝ 'ի մակեդդոյ), և ածին զնա առ յէհու, և սպան զնա»։ Եվ թագաւոր յէհու 'ի մարմին նորա 'ի շնորհս յովսափատայ հաւուս նորա, որ խնդրեաց զնո՝ 'ի բոլոր սրտի իւրմէ. և եթող զի ծառայք նորա տարցին զնա յերուսաղէմ. և անդ թաղեցաւ 'ի գերեզմանի իւրում ընդ հարս իւր 'ի քաղաքին դաւթի։

Յետ մահուն աբողիայ՝ չոգաւ յէհու յեզրայէլ։ Եվ նոքա եկեալ յապարանսն արքունի պարտիզին, զոր ընդարձակեաց և զարդարեաց աքաաբ 'ի վիճակին նաբովթայ։ Եվ ոստեր ասեմ անդ այրի յառնէն, և անզաւակ յարքայորդւոյն. թէպէտ պառաւեալ, այլ առողջ և ժիր. ուր նա էր առաւել անարժան կենաց իբրև սատարք և պատճառ ամենայն չարեաց տանն աքաաբու, այլ որ պա հեաց զնա ցայն վայր առ խստագոյն պատիժ, տեսանել զսպանումն որդւոյն, և զծառայ նորա նրստել յաթոռ թագաւորութեն նորա. և ապա 'ի ձեռն ծառային խայտառակ մահուամբ կորնչել յերեսաց երկրի, զոր պղծեաց այնչափ անպարտ արբ-

եանց հեղմամբ։ Այս իբրև լուաւ՝ Թէ Ել յեռ 'ի մակեդոնիայ գալ յեզբայրել, ծարբեաց զաչս, և մնգուրեցաւ յերեսս, և 'ի զարդ գլխոյն յօրինեաց խոպոպիս 'ի վարսս. և այնպէս զարդարեցաւ իբրև զնոր զարդ հարսն, ըստ կարծելոյ ոմանց՝ 'ի հրապոյր յեռաց։ Այլ եթէ արդարև այն էր խորհուրդ նորա, անմտութիւն խորհեցաւ. զի ծարիր և մնգոյր կարի անհամեմատ են թառամեալ և խորշոմեալ երեսաց, որք յաւէտ 'ի զգուշութեան շարժեն՝ քան 'ի հաճութիւն։ Կամ ըստ այլոց (որ առաւել ստոյգ երևի,) առ 'ի ցոյց իւրուն արքայական մեծութեան և շքոյ, զի թերևս ակնածիցէ 'ի նմանէ յեռ իբրև 'ի թագուհւոյ։ Եւ այնպէս 'ի մտանել յեռաց գնդաւ իւրով 'ի քաղաքն, հայէր յեզբայրել ընդ պատուհան տան իւրոյ. և ասէ, ողջոյն ինչ զամբի տիրասպան. նմանեցուցեալ զնա զամբեայ որ սպան զնոր իւր զելա արքայ իսրայելի զորդի բասասայ, և թագաւորեաց ընդ նորա. Գ. Թագ. Գ. 10։ Այնարձակ յեռ զաչս 'ի պատուհանն, և ասէ. ոչ ես դու, էջ առ իս. կամ ըստ արաբացւոյն և քաղդէացւոյն. * Ոչ կայ այդր ||։

Յայնժամ երկու ներքինիք որք կային անդ ընդ յեզբաբելայ, յառաջ մատուցեալ՝ հայեցան առ նա 'ի խնարհ. և ասէ ցնոսա յեռ. ընկեցէք զդա 'ի վայր 'ի փողոցի աստ։ Այսոքանօր յայանի տեսանի, թէ որպէս չէ մարթ իշխանաց վստահանալ 'ի հաւատարմութիւն ծառայից իւրեանց որչափ և մտերիմ իցեն, յորժամ շահասիրութիւն նոցա յայլ ինչ ձգեսցէ զնոսա։ Որպէս ահա այս ներքինիք, որք կարի ինն ընտանի և մտերիմ թուին լինել յեզաբելայ, մինչև կալ ընդ նմա առ պատուհանին. սակայն զոյգ ընդ ասել յեռայ՝ ընկեցին զտիկինն իւրեանց. և մինչև էր հասեալ 'ի գետին, հարաւ գլուխն ընդ որմն, և ցայտեցաւ արիւնն զորմով. և 'ի գետին անդ եղև կոխան սմբաւկայ ձիոյ զորուն յեռայ. և 'ի սուղ ժամու սպաւեցաւ 'ի ժանեաց շանցն յեզբայելի։ Իսկ յեռ գնաց ձաշել. այլ մինչև էր բազմեալ 'ի սեղան,

սասայ ցիւրսն. տեսէք զանիծեալն զայն, և թաղեցէք զնա. զի դուստր թագաւորի է. այլ ոչինչ գտին 'ի մարմնոյ նորա, բայց զգանկն և զթաթս ոտից և ձեռայ։ Զարմանալի ինչ է ուտել շանց զգի նորա 'ի լոյս տուընչեանս, 'ի հրապարակի, ուր լի էին հայեցողք. և ոչ ոք շարժեցաւ 'ի գութ՝ պաշտպան լինել դիականն։ Մինեքին կային 'ի զննին, և ապշեալ հայէին ընդ միմեանս, և ասէին. այս է յեզաբելն այն, զոր մեք դիտեաք. այսպիսի՞ օրհասիւ վնասեցաւ դուստր թագաւորի, կին թագաւորի, մայր երկուց թագաւորաց. զոքանչ թագաւորի, և հանի այլոց թագաւորի. և թագաւորի՝ զորս առ հասարակ ետես յաթոռ թագաւորութե։ Այս կատարած եղև նորա յետ մնլորեցուցանելոյ զայրն իւր, յետ խանգարելոյ զերկուս թագաւորունս, յետ հալածելոյ զմարգարէս նոն, և կործանելոյ զՀմարիտ կրօնն։ Եւ այսպիսի կատարած նորա ետ ճանաչել զարդարադատ ձեռն ամենակալին. ընդ որոյ երկայնմտութի զարմանային բարեպաշտաք, և զոր հայհոյիչին ամպարիշտք յաւուրս թագաւորելոյ նորա։ Եւ այսպէս կատարեցաւ 'ի վերայ նորա մարգարէութեն եղիայի, թէ 'ի վիճակին յեզրայելի կերիցեն շունք զմարմնս յեզաբելայ. և եղիցի դի նորա իբրև զաղբ 'ի վերայ երեսաց անդոյ վիճակին յեզրայելի. զի մի լինիցի ասել անցաւորաց՝ թէ այս է յեզաբել։

Զնու յետ այսպիսի չարախտավատ մահուամբ կորուսանելոյ զյեզաբել՝ դարձոյց զսրտմտութի իւր յորդիս և 'ի թոռունս աքաաբու։ Հետեւաւ 'ի գլուխս տարաւ զկամն իւր 'ի վերայ նոցա՝ որք գտան յեզրայել. այլ գործ էր 'ի ձեռս բերել զայնոսիկ՝ որք էին 'ի սամարիա քաղաք թագաւորանիստ ամրապարիսպ. յորմէ դիւրին էր նոցա փախստականաբ ապրեցուցանել զանձինս, կամ զինել 'ի պաշտպանութի քաղաքին. որ թէ միանգամ փակէր զդրունս իւր ընդդէմ նորա՝ կարող էր ընդ երկար ժամանակ կաշկանդել զնա և զզօրս նորա

անդ արտաքոյ պարսպաց անդորձ ցտաղտկանալ. զի սամարիա ուսեալ էր տանել երկար պաշարմանց. վասն որոյ լաւ ևս վարկաւ յԵու նախ փորձել զմիտս գլխաւորաց քաղաքին առանց բռնութեան ինչ առնելոյ նոցա։ Այիտեր՝ զի էին անդ եօթնանասուն որդիք և թոռունք աքսաբու մեծ և փոքր այլ և այլ հասակաւ. գրեաց հրովարտակ առ ա տեանն քաղաքին, և ասէ. իբրև հասանիցէ առ ձեզ հրովարտակդ այդ, ընդ ձեզ են որդիք տն ձերոյ, եթէ հաճոյ իցէ՝ ընտրեսջիք զոք 'ի նոցանէ որ լաւ և յարմար թուիցի, և հաստատեսջիք զնա թագաւոր 'ի վերայ աթոռոյ հօր իւրոյ. բայց միանգամայն վառեսջիք վաղվաղակի 'ի զէն. զի ո՛ ոք և ընտրեսցի թագաւոր 'ի սամարիա, պատերազմաւ եղիցի հանդիպել նմա։ Օ այս հրովարտակ առեալ իշխանացն և ծերոց սամարիայ՝ երկեան յոյժ. ժողովեցան 'ի խորհուրդ գաղտ յարքայորդւոց, խորհեցան և ասեն. ահա երկու թագաւորք, յավրամ արքայ իսրայէլի, և որոզիա արքայ յուդայ՝ ոչ կարացին զդէմ ունիլ նորա, մեք զիարդ իշխիցեմք ընդդէմ եղանել։ Այտուն պատասխանի բազում խոնարհութեամբ ինքնակամ ընծայելով զանձինս 'ի պատրաստական հնազանդութեան ամենայն ակնարկութեաց նորա զինչ և կամիցի հրամայել։

ՅԵու կամեցեալ իմանալ զանկեղծութեան պատասխանւոյ նոցա, խորհեցաւ այնպիսի ինչ պահանջել 'ի նոցանէ, զոր թէ արասցեն, այնու հետև ոչ ևս լիցի նոցա հնար դառնալ երբեք յայլ կողմն. միանգամայն և լիցի այն նմա ջատագովութեան մեծ առաջի ժողովրդեան վասն յառնելոյ նորա 'ի վերայ տն իւրոյ արքայի։ Ասաի գրեաց առ նոսա երկրորդ հրովարտակ, և ասէ. եթէ իմ էք դուք, և հնազանդ հրամանաց իմոց, հատէ՛ք զգլուխս որդւոց տն ձերոյ, և բերէ՛ք առ իս վաղիւ 'ի սոյն ժամու յեզրայէլ։ Ոչ ոքա ըստ խոստման իւրեանց միամտութեամբ հնազանդեալ՝ հատին վաղվաղակի զգլուխս եօթանասուն որդւոց արքայի, և եդեալ 'ի կողովս՝ առաքեցին զիշերայն առ նա յեզրայէլ.

զոր խմացեալ յէուայ 'ի հրեշտակէն՝ որ պատմեաց նմա, ասաց դնել զնոսա յերկուս բրդաձև կոյտս արտաքոյ քաղաքին աստի և անտի դրանն։

Այլ ընդ առաւօտն եկ յէու 'ի դուռն, ուր կային ժողովեալ անհամար բազմութիւն մարդկան յոյն ողորմ տեսիլ. եկաց անդ և խօսեցաւ առ արդարացուցանելոյ զանձն, և ասէ. արդար էք դուք. ահաւասիկ ես յարեայ 'ի վերայ ոչն խմոյ, և սպանի զնա։ Իսկ զսոսա ամենեսին ո՞ կոտորեաց։ Իբր ասել, եթէ արդար էք դուք՝ ուղիղ դատաստան արարէք. մեք ամենեքեան որք զայս կոտորած գործեցաք՝ կամ բոլորեքին արդար եմք, և կամ առ հասարակ անիրաւ. այլ ամենևին անաւելի է համարել թէ իշխանք սամարիայ արք արդարակորովք, և ծերք խոհականք՝ անիրաւութիւն այդպիսի ոճիրս գործեալ իցեն. ապա իրաւունք են և զնոսա և զնոսա յամենայն անիրաւութենէ անպարտ կացուցանել. զի զայդ ամենայն գործեցաք իբրև պաշտօնեայք ոչն 'ի կատարել զՏրաման նորա, զոր ետ 'ի ձեռն ծառայի իւրոյ եղիայի մարգարէին։ Այլ այսպէս յապահովացեալ յէու զհաւատարմութիւն իշխանաց և ծերոց սամարիայ 'ի ձեռն անողորմ գործոյն, այնուհետև ոչ ևս յապաղեաց զմուտ իւր հանդիսիւ 'ի քաղաք անդր Թագաւորութիւն իւրոյ. բայց երթ նորա չար և սգալի եղև Թագաւորական տանն յուդայ. որպէս տեսցուք 'ի յաջորդ գլուխդ։ Այլ այսպէս երկու արքայական տունք կցորդեալք խնամութիւն, և ամուսնութիւն, եղեն կցորդ և 'ի հարուածս, և 'ի կործանումն։

ԳԼ. Ը.

Ինացեալ գործ չէաւայ, և մահ նորա։ Զարէթ, և լարալաբ մահ Գոդողէայ՝ ինոջ յովքամայ արքայի յոտքայ։ Յովքայէ ֆահանայապետ Լեգաւորէցոցանէ զՅովա մա նոմ 'ի վերայ յոտքայ։

Աբիւնն յեղաբելայ ծախեցաւ յեզբայել 'ի շանց. բայց այն արիւն տակաւին կենդանի էր և ջերմ յերակս գոդողիայ գոտեր նորա յերուսա զէմ։ Իբրև ետես նա զդի ոքոզիայ արքայի որդ ւոյ իւրոյ, անդէն և անդ տարագիր արար 'ի մայ բենի սրտէն զամենայն գութ և զգորով. և դար ձոյց զսիրտ իւր 'ի յետին անգթութիւն բռնակալու թիւն։ Որդին մեռեալ ոչինչ տրտմեցոյց զնա, զի այս արձակեալ էր նորա յափշտակել զթագաւորութիւն յուդայ. բայց մի դիպան չէր բաւական՝ լինել նմա աստիճան առ այնչափ բարձրութիւն ելանել։ Օր էին ոքոզիայ որդիք. և ցորչափ կենդանի էին նո քա, միւմ 'ի նոցանէ անկանէր յաջորդել զաթո թագաւորութիւն ֆօրն։ Ինդդէմ նոցա զինեցաւ հանի նոցա գազանային կատաղութիւն. և մինչդեռ յեռ յերկրին խրայելի կոտորէր զիշխանս ամպա ըիշաս տանն աքաաբու, յերկրին յուդայ տեսաւ գազանամիտն գոդողիա կոտորել զանմեղ թոռունս իւր. և ոչ իմանայր յիմարեալն ամբարտաւանութ, թէ այնու ուսուցանէր ժողովրդեան զնոյն առնել և նմա, զոր նա ինքն առնէր այնոցիկ որք իրաւամբք բնութեամբ և արեան ունէին լինել օրինաւոր թա գաւոր նոցա։ Այս կամէր սպառնալուս ջնջել զամե նայն զաւակ թագաւորութիւն յովքամայ, մնդ նմին և տանն յուդայ. այլ ոչ յաջողեցաւ նմա 'ի գլուխ զչար կամն իւր հանել. քանզի մի 'ի թոռանց իւ րոց մնանուկ մատաղ զերծաւ յանդաղորոյն որդեկո

տոր ձեռաց նորա. զոր զկնի վեց ամաց տեսցուք նստուցեալ յաթոռ թագաւորութեան յուդայ։

Ի նմին ժամանակի այլևս աղէտք չարաշուքք Երևեցան առ յասպահովացուցանել զակնկալութիւն գոդողիայ. այն է կոտորումն քառասուն և երկուց իշխանաց եղբօրորդւոց և այլոց մերձաւոր ազգականաց ոբոզիայ։ Զի՛ յայտ՝ թէ՞ որ չարաբաստ օրհաս սէ՞ զամենեսեան զնոսա 'ի սամարիա։ Զոր քա 'ի հարցանել յէուայ՝ ասացին, թէ եկեալ էն յողջոյն արքայի, և որդւոց տիկնոջն։ (Զ՚յսպէս ունին այլ թարգմանք. և 'ի նոյն միտս խմա՛ և զմերս ընթերցուած որդոց ղօրայելայ, զբառդ ղօրաշեալ յիդական սեռի առեալ ըստ յունին, որպէս և մեկն դնի 'ի լուսանցս գրչագիր օրինակաց մերոց՝ աշխարհաբնինոջ, ըստ ակիւղասայ և ըստ այլոց թարգմանութեանց։) Զ՚ևս այն եղև ձշմարիտ պատՀառ գալոյ նոցա 'ի սամարիա, զի էր յայնժամ բարեկամութիւն և ընտանութիւն մեծ 'ի մէջ երկուց թագաւորական տանց իսրայելի և յուդայի յաղագս սերտ խնամութեան. ուստի լուեալ նոցա յերուսաղէմ զգոյժ մահու յովրամայ արքայի իսրայելի՝ եկին 'ի միհթարել և 'ի քաջալերել զորդիս նորա։ Կամ՝ որ ամենց առաւել հաւանելի թուի, տեսեալ նոցա զբռնակալութիւն անագորոյն գոդողիայ՝ որ յիւր թոռունս ոչ խնայեաց, երկեան և փախեան յերուսաղէմ 'ի սամարիա, ապաւինել յորդիս աքսաբու և յովրամայ, ակն ունելով թէ գուցէ հաւատարիմ գտցի առ նոսա քաղաքն սամարիա պաշտպանել զնոսա։ Զ՚այլ եթէ արդարև այնպիսի խորհրդով եկին, անձամբ արկին զանձինս յանզերծ որոգայթ։

Որպէս զիարդ և է՝ սոքա յայնմ պահու հասին 'ի սամարիա, յորժամ այն ինչ յանձն առեալ էր քաղաքն գլեու 'ի թագաւոր իսրայելի հատամամբ գլխոց եօթանասուն որդւոց աքսաբու, զորս եկին մխիթարել։ Զ՚այն իբրև լուան դոքա, խոյս ետուն վաղվաղակի 'ի վայրն կոչեցեալ բեթակադ հովուաց. որ էր տեղի ինչ արտաքոյ սամարիայ, ուր

ժողովին հովիւք կտրել զնաշխնս, որ և էր 'ի վերայ Ճանապարհին։ Լրդ՝ հասեալ անդ յերուայ յերթալ իւրում 'ի սամարիա առնուլ զթագաւորութիւն իսրայէլի և տեսեալ զնոսա անդ, ոչ Ճանաչելով թէ ո՞վք և ուստի՞ իցեն, եհարց և ասէ, ո՞ր էք գուք. ասեն միամտութիւն, եղբարք որոշեայ եմք մեք, և իջաք յողջոյն որդւոց աբքայի։ Օ այս պատասխանի առեալ, հրամայեաց առ ժամն ունել զնոսա կենդանիս. և սուղ ինչ յետոյ ասաց կոտորել զամենեսեան՝ մինչև չմնալոյ 'ի նոցանէ այր. զոր և արարին իսկ վաղվաղակի. և զդիակունս նոցա ընկեցին 'ի հին աւերակ ջրհոր մի, որ էր 'ի տեղւոջն յայնմիկ։ Լրս այսպէս 'ի սակաւ աւուրս 'ի վերայ եհաս ողորմ կոտորած ժառանգացն երկու թագաւորութեանց իսրայէլի և յուդայ. զի առաջնոյն իսպառ ջնջեցաւ տոհմ թագաւորական. իսկ երկրորդին մնաց մի միայն մնացեալ բարունակ յամենայն տոհմէ երկուց թագաւորաց։

Յետու մնեալ 'ի սամարիա՝ 'ի վերջ հասոյց զամենեսեան որք դեռևս էին մնացեալ յազգակցութիւնէ աքաաբու, զիշխանս, զմերձաւորս, և զամենայն ծանօթս, նաև զքուրմս, որք ունէին ինչ հեռաւոր ազգակցութիւն։ Լրս 'ի Ճանապարհին մինչ գայր 'ի սամարիա, գտեալ ընդառաջ զյոնադաբ որդի ռեքաբայ՝ զհին բարեկամն իւր, ողջոյն ետ նմա ընտանութիւն, և ասէ. եթէ իցէ՞ սիրտ քո ուղիղ իբրև զսիրտ իմ ըստ սրտի քում. իբր ասել՝ եթէ կայցե՞ս 'ի նմին անկեղծ բարեկամութիւն ընդիս, որպէս ես եմ առ քեզ. և յասել յոնադաբայ՝ թէ այո՛, ետ յէու նմա ձեռն, և եհան զնա առիւր 'ի կառսն. և պատմեաց նմա զխորհուրդ իւր և զգործս զոր արար, և զոր ունէր առնել վասն նախանձու նոցն։ Կեղծաւորեցաւ առնել զոհ մեծ բահաղու, որպէս ոչ աքաաբ, և ոչ յեղաբել արարեալ իցեն երբեք։ Յողովեաց անդ 'ի սամարիա զամենայն քուրմն բահաղու 'ի համօրէն երկրէն իսրայէլի. և ոչ մնաց այր որ ոչ եկն. և ասէ ցնա-

սա, սաքսաք ծառայեաց բահաղու սակաւ ինչ. յեու ծառայեսցէ նմա բազում։ Եւ մնին ամենեքեան ցնծութիւն 'ի տունն բահաղու, մինչև լի լինել տանն ծայր 'ի ծայր. և ասաց ցհանդերձապետս հանել և տալ զպատմուճանս ամենայն ծառայից բահաղու։ Պա եմուտ և նա ինքն յեու և յուիսադաբ ընդ նմա. և հրամայեաց քրմաց որոնել և զնոսա զի մի ոք 'ի ծառայից նոցն դադարեսցի անդ ընդ նոսա, բաց 'ի քրմաց անտի։ Եմոյծ 'ի տուն անդր ուրեմն սրս սպառազէնս, պատուիրելով նոցա յառաջագոյն ընդ գլխապարտութիւն՝ մի զոք 'ի նոցանէ սպրեցուցանել։ Իբրև կատարեցան զոհք և ողջակէզք, ըստ ակնարկութեան յեուայ՝ առ ժամայն 'ի սայր սուսերի կոտորեցին զնոսա առհասարակ։ Եւ այնպէս արեամբ ծառայիցն բահաղու հնձեցան զոհք և ողջակէզք նորա. զի ոչ ոք 'ի բազմութենէ անտի ապրեցաւ. քանզի բաց յուեթսուն սպառազինաց անտի, կարգեաց յեու և արտաքոյ արս զինեալս 'ի պահպանութիւն (Թուով երեքհարիւր, որ յայլ թարգմանութիւնս չիք նշանակեալ), զի մի 'ի ժամու կոտորածին զերծեալ ուրուք 'ի տաճարէ անտի փախիցէ։ Պա յեու և սպառազէնք նորա դարձուցին զվրէժխնդիր սրտմտութիւն իւրեանց 'ի նա ինքն 'ի բահաղ. հանին զարձան նորա և պրեցին զնա. և զտունն հիմնայատակ արարեալ, զտեղին կարգեցին 'ի հասարակաց լուսլիս և յաղբիւս քաղաքին։ Եւ անտի սուրհանդակք սպառազէնք սիրեալք աստ և անդ, զնոցն արարին յամենայն քաղաքս իսրայէլի, ուր գտան տունք բահաղու. և այսպէս եբարձ յեու յամենայն երկրէ իսրայէլի զպաշտօն բահաղու։

Յորչափ գործեաց յեու սովին գովելի նախանձու, յաջողութեամբ 'ի գլուխ տարաւ զամենայն յոր մխեաց զձեռն. զի գործէր իբրև սպասաւոր ՇԱԾԱՅԻՆ հրամանաց. և ՇԱԾ պաշտպան լինէր իւրումն պաշտօնեի։ Եւ յետոյ թշուառական խորհուրդք աշխարհային և քաղաքական խորագիտութեանց 'ի պահպանութիւն և յամրութիւն ՇՈՐՈՒ-

թեց, որք եղեն ժայռք կորստեան 'ի ծովու աշխարհիս ամենայն թագաւորաց իսրայէլի, նաւաբեկ արարին և զսորայս երջանկութեի։ Կարի նաև խանձախնդիր եղև յեղծանել և անհետ առնել զկուռս և զպաշտօնեայս բահաղու. բայց յորժամ եհաս բառնալ զերկու երինջս ոսկիս զկանգնեալս 'ի յերոբովամայ յորդւոյ Նաբատայ, որք միշտ անկործան պահեցան յերկուս ծագս երկրին իսրայէլի 'ի բեթել և 'ի դան, շինաւ սպառեցաւ ամենայն նախանձ նորա։ Իբր ոչ եթէ եդեալ էր 'ի մտի յանկենդան դրօշեալս յայնոսիկ լինել ճշմարտի իմիք, այլ կամէր 'ի նոցա պաշտօն զբաղեցուցանել զժողովուրդ իւր, զի մի երթալով յերուսաղէմ յերկրպագութի ՅՍ ճշմարտի 'ի տաճարին նորա, առ սակաւ սակաւ յարեսցի սիրտ նոցա 'ի յուդա և 'ի թագաւոր նոցա։ Լ.Ծ վարձահատոյց եղև յէուայ վասն հաճոյական ծառայութեն զոր արար ընդդէմ բահաղու և տանն աքաաբու, խոստանալով նմա պահել յորդիս նորա ցչորրորդ ազգ զգաւազան թագաւորութեի իսրայէլի. * Փոխանակ զի ասէ՝ քաջացար առնել ուղղութեի առաջի իմ, ըստ ամենայնի որ ինչ 'ի սրտի իմում արարեր տանն աքաաբու, որդիք չորրորդք նստիցին քեզ յաթոռ իսրայէլի։ Գ. Թագ. Ժ. 30։ Լ.յս շնորհ յամենայն թագաւորս իսրայէլի սմա միայնոյ արարաւ։ Լ.մև յետոյ ետ նմա ձեռամբ շշափել՝ թէ որչափ թիւր է այն խորագիտութեի աշխարհային, որ ապստամբեցուցանէ յԾՍպաշտուէ։ Լ.Ծ է, և ոչ եթէ խորագիտութեի և հանճար մեծախորհուրդ գլխոց, ոչ զօրութեի բազմաղօր բանակաց, և ոչ կուրութեի ժողովրդեան, որ երջանկացուցանէ՝ և թշուառացուցանէ, որ բժշկէ և հարկանէ։ Փոխեալ ՅԾ սահմանել և կարգել վասն քաղաքաց և վասն ժողովրդոց. և յորժամ կամիցի առնուլ 'ի ձեռին զօրս, ոչ երբէք պակասի նմա զինուոր։

Զիւ ցորչափ էր ՅԾ ապաշտ զօրավար, յաղթեաց ազայէլի ասորւոց արքայի. և 'ի թագաւորել իւրում՝ աշխարհային սկզբամբք հեռացեալ յԾԾ.

պաշտուԹէ, 'ի պարտուԹէ մատնեցաւ առաջին նո-
ին ազգելի, որ յայնժամ սկսաւ կատարել զաղէ-
տալի մարգարէուԹիս եղիսէի 'ի վերայ երկրին
իսրայէլի։ ԼՀար և աւերեաց զամենայն սահմանս
իսրայէլի 'ի յորդանան և ընդ արևելս զամենայն
երկիրն գաղաադու, և գադայ, և ռուբինի, և
կիսոյ ցեղին մանասէի։ Լու այնպէս մինչ յետ
զՀետ էր տիրել ԹագաւորուԹեան յոլորամայ, և
զժառանգուԹի նորա իրաւամբ անձին սեպհական-
նել, ազգելի արքայ ասորւոց զմիւս մեծագոյն հա-
ղուստ և արգաւանդ մասն ԹագաւորուԹեան նո-
րա՝ որ էր յայնկոյս յորդանանու, 'ի հուր և 'ի
սուր մատնեալ ապականեաց։ Յետու Թագաւորեաց
ամս քսան և ութ. այլ առ կենդանուԹիւն իւրոյ
կորոյս զամենայն զփառս, զոր ստացաւ 'ի սկիզբն
Թագաւորելոյն։ Ա՝ետաւ յամի արարչուԹեան աշ-
խարհի ըստ կաղենոսի՝ 3318. և Թաղեցաւ 'ի սա-
մարիա։

Ռասան և երկու ամաւք յառաջ քան զմահ յետուայ
մեռաւ գոդոդիա. որոյ 'ի կոտորել զԹոռունս իւր
զորդիս աքազիայ՝ յոլսաբեթ որ և յոլսաբեթ քոյր
աքազիայ կին յոլիդայեայ քահանայապետի, կամ
ըստ ոմանց նախապատիւ քահանայի 'ի տաճարի էն,
'ի դէպ ժամու 'ի վերայ հասեալ՝ Ճարտար հնա-
բիւք գողացաւ զյոլաս մանուկ մատաղ միամեայ 'ի
միջոց որդւոց արքայի սպանելոցն. և փախոյց զնա
և զդայեակ նորա գաղտաբար 'ի տաճարն. և Թա-
քոյց յիւր առանձնական բնակարանս. և այր նորա
յոլիդայէ քահանայապետ տեղեակ գոլով իրացն՝
պահեաց զմանուկն անդ. և 'ի ծածուկ մնոյց զնա
և դաստիարակեաց ընդ ամս վեց յերկիւղ էն, և
յամենայն կարևոր հրահանգս պատշաճեալս առ-
այն հասակ մանկական կարգեալ 'ի Թագաւորու-
Թիւն։ Լայց յետ այնորիկ գժուարին էր այլևս
ընդ երկար պահել զնա ծածուկ. և չէր իսկ ար-
ժան ներել անօրէն տիկնոջն և ևս քանակալել
զԹագաւորուԹիւն, և զօրինաւոր Թագաւորն արգ-
գելեալ պահել իբրև 'ի բանտի։

Յովհաննէս, որ և Յովհան՝ խմաստուն քահանայապետն մեծարու և պատուեալ 'ի Ժողովրդենէ յաղագս իւրոց բարեբաւութեանց, բազում հանձարով ստացաւ լռելեայն հաւատարիմ խորհրդապահ զօրապետս, և անձայն և անշշունչ պէսպէս պատրուակօք այնչափի զինուորս, որչափ բաւական դատեցաւ առ գործադրութիւն խորհրդոյն իւրոյ։ Յամենայն շաբաթու մնանէին շաբաթամուտք 'ի տաճարն քահանայք և ղևտացիք հարիւրաւորք սպասաւորել 'ի զանազան գործս 'ի տաճարի նոր ընդ եօթնեակն ողջոյն. և 'ի ժամանել յաջորդ շաբաթու՝ ելանէին և երթային 'ի գործս իւրեանց, մինչև ցդառնալ միւսանգամ կարգի նոցա. և այլք մնանէին փոխանակ նոցա։ Այսմ նուագի եթող Յովհաննէս նորոգ է կելոց մնանել 'ի շաբաթաւուն, բայց զելեալսն 'ի շաբաթամտէ ոչ արձակէաց երթալ, այլ կալաւ զնոսա անդ։ Եւ այնպէս բազմացան յերուսաղէմ արք քաջք 'ի զէն, առանց կասկած ինչ տալոյ գոգոցիայ, որում չէր նոր ինչ զայնպիսի ժողովումն բազմութեան տեսանել 'ի շաբաթ աւուրս յերուսաղէմ։

Այսմանեաց Յովհաննէս ամենայն գլխաւորաց զխորհուրդ իւր՝ նստուցանել զյոլաս մանուկ յաթոռ թագաւորութեան յուդայ։ Ի տաճարին գոյր զինարան մեծ, ուր յաւուրց անտի դաւթի կային պահեալ գեղարդք, և սուսերք և վահանք և այլ զանազան տեսակք զինուց, բաւական 'ի յեղակարծ գիպուածս սպառազինեալ ստուար գունդ զօրաց։ Լոքք զինեաց զամենեսեան. և 'ի խումբս խումբս բաժանեալ՝ որոշեաց իւրաքանչիւր զիւր գործ։ Օ մի մանն կացոյց 'ի պահպանութիւն արքունի սպարանից, առ զդէմ ունել սովորական պահակաց դրանն արքայի, եթէ զփորձ ինչ կամիցին փորձել 'ի պաշտպանութիւն գոգոցիայ տիկնոջ իւրեանց։ Օ մի այլ մանն եդ 'ի դուռն արևելեան, որ կոչի դուռն ձանապարհաց կամ օժնդակաց, և ըստ այլ թարգմանութեանց՝ դուռն զբահաւորաց. վասն զի սովորաբար կայր անդ միշտ 'ի պահպանութիւն

խումբ մի ղևտացւոց զինեալ տիգօք և զրահիւք. որք և կոչէին օժնդակք։ Այնպէս և առ հիւսիսային դրամբ որ զինի զրահաւորաց, ընդ որ հանէին արտաքս զաղտեղութիւնս տաճարին։ Այս այնպէս քաջ պաշտպանեցին զերբեսին դրունս, զարևելեանն, և զհարաւայինն, և զհիւսիսայինն. քանզի անփակ կամէին ունել զնոսա, առ 'ի տեսանել ընդ այնս ժողովրդեան զգաչն և զփոքրիկ արքայն նստեալ 'ի վերայ։ Զարևմտեան դուռն ոչ յիշէ՞ որ գիրն, զի գուցէ զայն փակեալ պահէին. քանզի անտի չէր մարթ նայել 'ի գաւիթն, և տեսանել զգաչն արքայի, անջրպետ 'ի միջի ունելով զսրբութիւն սրբութեանցն։

Այսպէս կարդեալ և յարդարեալ զամենայն, պատրաստեցին գահ 'ի վերայ սեանն կամ բեմքի՝ որ կայր 'ի գաւթի յանդիման սեղանոյ ողջակիզաց, զոր մարթ էր համարձակ տեսանել արտաքուստ ընդ նախագրեալ երիս դրունս։ Այս մեծավայելուչ փառօք ածին զյովաս բազմութեամբ թիկնապահ սպառազէն զօրապետաց 'ի գահ անդր արքայական։ Զայն հազարաւոր փողոց հնչեցոյց ընդ ամենայն երուսաղէմ քաղաք, եթէ հանդէս մեծ է 'ի տաճարն. և բազումք յիշխանաց, և այլք որք գիտակ էին գաղտնեաց յովիդայեայ, հրատարակեցին եթէ կենդանի է մի յորդւոցն ոբոզիայ արքայի, և զնա թագաւորեցուցանէն. որ և օծաւ հանդիսիւ 'ի յովիդայեայ։ Զոր այն ցնծալից աւետիս ընթանային յամենայն կողմանց քաղաքին 'ի դրունս տաճարին։ Զոգողիա՝ որ անգէտ էր ամենևին իրացն, լուեալ զձայն ընթանալոյ ժողովրդեանն, ոչ այլ ինչ կարծէր, բայց աղմուկ ինչ խաժամուժ ամբոխին. եվ և ինքն անձամբ և ընթացաւ 'ի տաճար անդր, թերևս 'ի խաղաղել զամբոխն իւրով թագաւորական իշխանութեամբ։ Եթէ զինուորք բարապանք դրանց պահէալ էին զպատուէր, զոր ունէին 'ի յովիդայեայ՝ չթողուլ զոք բնաւ մտանել 'ի տուն նոն, որ չիցէ 'ի կարգէ քահանայից և ղևտացւոց, մինչ զի եթէ ոք բուռն

արասցէ մոռանել՝ սպանցի, գոդողիա ոչ էր մտեալ։ Լ.ՍԼ ուրեմն և իսկ՝ գոդողիա Ճեղքեալ զբազմութիւն ժողովրդեան, եմուտ 'ի տունն նոն, և ետես զմանուկ արքայն նստեալ յաթոռս յարքայական թագ 'ի գլուխն, և մատեան օրինաց 'ի ձեռին. և իշխանք շուրջ զնովաւ. և զօրապետք և զօրք զինաւորք յաջմէ և յահեկէ ընդ տաճարն ողջոյն. և ամենայն ժողովուրդն զուարճացեալ փողոք և աղգի աղգի նուագարանաք երգել երգս, և օրհնել օրհնութիւն։ Ոչայս ամենայն տեսեալ չարաշուքն գոդողիա՝ պատառեաց զհանդերձս, գոչեաց և ասէ. դաւ է, դաւ է։ Լ.ռ այն աղաղակ ընդոստուցեալ դռնապահաց՝ անդէն կամէին սպանանել զնա։ Լայց յովիդայէ արգել զնոսա, պատուիրելով չհեղուլ արիւն 'ի տաճարի նոն, այլ հանել զնա 'ի տաճարէն և յամենայն շրջափակեալ տեղեաց տաճարին. և եթէ ոք 'ի բազմութենէ անտի երթիցէ զկնի նորա, մեռցի ընդ նմա սրով։ Կալան զաշխարհելին, և իբր զանարգ գերի քարշեցին տարան ցդուռն արքունի ախուռոյն, և անդ սպանին զնա։

Լ.պաքէն երջանիկ լինէր տունն յուդայ, եթէ գոդողիա մեռեալ էր 'ի նմին աւուր յորում հարսնացաւ. զի չէր արդեաք մոլորեցուցեալ զերկու թագաւորս, որք հաւասար ընդ նմա չար օրհասիւ մեռան, վասն զի և 'ի վարս հաւասարեցան նմա։ Ա'իշտ արժանի էր մահու, սակայն առ կենդանութիւն առն և որդւոյն թագաւոր 'ի կեանս. նաև զկնի յափշտակելոյ նորա զաթոռ թագաւորութենն յուդայ, տարան և այնմ ընդ ամ վեց. քանզի առ կործանումն նորա կարևոր էր՝ զի նախ սիրաք ժողովրդեան բարւոք յարդարեալ պատրաստեսցին։ Լ.ր ըստ քաւականին պառաւեալ, այլ ժիր և առոյգ. կարէր դեռևս երկար ապրիլ, եթէ փառասիրութենն թագաւորելոյ չէր կանխեցուցեալ յառաջ քան զժամանակ զօրհաս նորա։ Ոչ կնի մեղանեալոյ գոդողիայ՝ ամենայն ժողովուրդն երգուաւ հաւատարմութի նորապսակ թագաւորին. և թա-

դաւորն և Ժողովուրդն միաբան երդուան ՝ի
Լ,ուկաց յովասն արքայ զաւուրս լինչ ՝ի տաճարի
անդ. և յովիդայէ՝ որ էր դաստիարակ և ուղղա-
ւորիչ մանկութեանն արքայի, պահեաց զնա անդ ամե-
նայն զգուշութիւն, կարգեալ նմա քաջ և հաւատա-
րիմ պահապանս։ Ի նոյն աւուրս կործանեցին
զտունս բահաղու, և զմնեթան զքրմապետ նորա
առ ոտս սեղանոյն բահաղու սպանին. և զամենայն
սեղանս նորա զկանգնեալս յերկրին յուդայ քակե-
ցին, և զպատկերս նորա մանր խորտակեցին։ Ա՝ա
տուցեալ ՝ի զայս առաջնապտուղ նորոյ թագաւո-
րութեանն՝ առ յովիդայէ զպետս տոհմիցն, և զիշխանս
Ժողովրդեանն, և զքուրն և զառասիմ, այսինքն՝ զքե-
ռեթի և զփելեթի, որք էին երկու գունդք զո-
բաւորք ՝ի ժամանակաց անտի դաւթի կսրգեալք
թիկնապահ արքայի, և զամենայն Ժողովուրդ երկ-
րին, և այնպէս մեծահանդէս փառօք, և ցնծալից
ուրախութեամբ համբէին Ժողովրդեան՝ հանեալ զորդ-
քայ ՝ի տանէ տեն, իբրև յաղթանակաւ տարեալ
մուծին զնա ՝ի պալատն արքունի. և նստուցին
յաթոռն թագաւորաց։ Ա՝ահ գոգողիայ, և թա-
գաւորել յովասու եղև յամին եօթներորդի զկնի
բառնալոյ տանն աքաաբու, և թագաւորելոյ
յեռաայ ՝ի վերայ իսրայէլի։

Յովսա արքայ յուդայ, և հայր Նորա։

Իբ յովսաս մանուկ եօթն ամաց, յորժամ ընդ դաստիարակութիւն յովիդայեայ նստաւ յաթոռ թագաւորութեան յուդայ. և թագաւորեաց ամս քառասուն։ Յովիդայէ զամենայն աւուրս կենաց իւրոց եղև միշտ առաջին պաշտօնեայ և ուղղաւորիչ յաջբունիս անդր յովսասու։ Եւ Նորա կենդանութիւն երջանիկ էր թագաւորութեան յուդայ. պահեցաւ 'ի նմա անվրդով խաղաղութիւն, արդարութիւն, և ծառայութիւն. առ իւր յովսաս երկուս կանայս՝ ոչ ըստ իւրոց կամաց, այլ ըստ առաջնորդելոյ յովիդայեայ։ Զեռն էարկ յովսաս նորոգել զտունն տեառն. որ 'ի հօրէ Նորա, և 'ի հաւոյն, և յանօրէնն գոդողիայ էր խաթարեալ, և ըստ առաւել մասին կողոպտեալ 'ի զարդուց և 'ի կահից, փոխադրելով 'ի շինուածս և 'ի զարդ տանն կառուցելոյ 'ի պատիւ պիղծ բահաղու։ Հրամայն էտ, զի 'ի պէտս այսր գործոյ ժողովեսցի ողորմութիւն յամենայն քաղաքաց յուդայ, որ անցանէր ընդ ձեռս ղևտացւոց։ Այլ Նորա կամ անփոյթ առնէին ժողովել, և կամ զժողովեալս 'ի պէտս իւրեանց ծախէին. անցին ամք, և նորոգութիւն տան տեն կայր մնայր անգործ։

Օ այն տեսեալ արքայի՝ արգել ղևտացւոց հաւաքել տուրս ողորմութեան առ այն գործ, այլ հրամայեաց դնել երկու արկղս ամրափակս, ունելով ծակ 'ի բերան ըստ չափս դրամոց երկրին. զի 'ի կողմանէ սեղանոյն տեն. այլ զի աշխարհիկք ոչ կարէին մտանել մինչև ցանդ, և ոչ վստահանային տալ զդրամս իւրեանց 'ի ձեռս ղևտացւոց՝ զի արկցեն անդ, ասաց արքայ՝ զերկրորդ արկղ դնել որ-

տաքոյ առ դրան տանն Տեն. ուր օրէն էր մատչել ամենեցուն։ Յերեկոյի՝ յորժամ լի լինէին, տա-նէին զհատացիք զարկեալս յարքունիս, և անդ ա-ռաջի դպրապետին և վերակացուին կարգէլոյ 'ի մեծէ քահանայէն, Թափէին. և նոքա 'ի համար արկանէին զդրամս. իսկ զարկեալս անդրէն դնէին 'ի տեղիս իւրեանց։ Այնպէս առնէին օր ըստ օրէ, որով 'ի սուղ ժամանակի գանձս ժողովեցին. զոր արքայ և յովիդայէ քահանայապետ տային 'ի ձեռս վերակացուաց գործոյն։ Ել առնուին 'ի նո-ցանէ համար, զի էին արք ընտիրք անկասկածք 'ի հաւատարմութեան։ * Ել առնէին (ասէ դիրն) հա-մար արանցն, յորոց ձեռս տային զարծաթն՝ տալ գործաւորաց գործոյն, զի յաւատ գործէին։ Գ. Խգ. ԺԲ. 15։ Շինեցին զբեղեկ տան Տեն, խցին զամենայն խնդրուածս. նորոգեցին զամենայն զարդս և զյօրինուածս. կազմեցին զամենայն կահս և զսպասս. և կանգնեցին զտունն յառաջին կայի իւ-րում և 'ի վայելչութեան։

Այլոյ յորժամ տունն Տեն դարձաւ յիւր նախկին պայծառութի՝ յորում էր առ բարեպաշտ Թագաւո-րաց, ժողովուրդն դարձաւ յամպարշտութի, և եղև որպէս էրն առ ամպարիշտ Թագաւորաց։ Երեսաւ յովիդայէ լի աւուրքն՝ ամաց հարիւր և երեսնից. եկեաց կարի յոյժ երկար քան զայն՝ զոր բերէր հասակ մարդկան այնր ժամանակի. այլ կարի սա-կաւ քան զայն՝ որ հարկաւոր էր առ հաստատմամբ հաստատելոյ զնոծպաշտութիւնն յարքունիս և 'ի ժո-ղովրդեան։ Ամենայն երկիրն յուզայ ելաց զկո-րուստ նորա. և կարի յիրաւունս. զի չի՛ք մեծա-գոյն ինաս Թագաւորութեանէ քան զկորուստ ընտիր պաշտօնեի։ Օ Թագաւորս յաջորդեն Թագաւորաց, զպաշտօնեայս յաջորդեն պաշտօնեայք. բայց ո՛ւր ուրեմն զկնի բարի պաշտօնեի յաջորդէ բարի պաշ-տօնեայ։ * Ամբար յովաս՝ (ասէ դիր) ուղղութիւն առաջի Տեն զամենայն աւուրս զորս լուսաւորեաց զնա յովիդայէ քահանայ։ Գ. Խգ. ԺԲ. 2։ Ի մա-հուն նորա եցոյց յովաս արքայ զերախտապարտու-

թէ իւր առ նա, պատուէրով զմեռեալ մարմին նորա. զի եթ թաղել 'ի քաղաքն դաւթի ընդ թագաւորսն՝ զայն, որ ուսոյց նմա բարւոք թագաւորել։ Զի հաւատի ձշիւ ժամանակ վախճանելոյ նորա, այս ինչ յայտ է՝ զի չեղև յառաջ քան զքսանեարորդ երրորդ ամ թագաւորութեան յովասու։

Լ.ԲԴ՝ կացեալ յովասու զերեսուն ամս կենաց իւրոց ընդ դաստիարակութիւն յովիդայեայ բարի վարդապետի, յուսալի էր այնուհետև լինել և անձին բարի վարդապետ։ Յուսալի էր թէ 'ի շնորհս այնչափ երախտեաց յովիդայեայ, զորդի նորա զաւրիա, կամ (որպէս ընթեռնուն լատինն, առաքին, արաբացին, համանձայն եբրայականին) զդաքարիա՝ կացուցանիցէ 'ի տեղի հօրն. որում և արժանի իսկ էր։ Լ.ՅԼ չետ վախճանելոյն յովիդայեայ՝ համարձակութիւն գտեալ իշխանաց և մեծամեծաց յուդայ, յաձախ մտանէին առ արքայ, և կեղծ և ստապատիր մեծարանօք, և մարդելոյզ շողոմարար շոգմոգութիւն այնչափ արարին, զի որսայսն զսիրտ նորա 'ի չարիս։ Լ.ին նոքա յապակաւ նեալ սերմանց անտի, որք առ կենդանութիւն յովիդայեայ՝ թէպէտ մեկնեալ էին 'ի կռապաշտութիւն, բայց առ ահի. և որպէս զի մի անկցին 'ի ցասումն արքայի՝ ուժապաշտք ձևանային, այլ ոչ ձշմարտութիւն։ Օթիւր զաշխարհային սկիզբն ունէին, թէ առ 'ի պահել զժողովուրդս 'ի խաղաղութիւն՝ չէ պարտ սեղմել զազատութիւն նոցա. ոչինչ փոյթ լսցի թագաւորին թէ պաշտիցեն նոքա զքար, կամ զփայտ և կամ զմի ուժ, յորժամ հաւատարմութիւն հատուցանեն զՀարկս թագաւորի իւրեանց։ Լ.ին ասեմ 'ի նոցա սակի, որք բանդագուշեալ մտաք կարծեն՝ թէ ոչ հայի ուժ յիրս մանուն և չնչինս որ յերկրի աստ, և ոչ նախախնամէ զնոսա, որպէս և ոչ զդիպուածս որք լինին առ մեզ. այլ միայն զերկնայինս զարձուանն, եթէ արդարև հաւատասցեն և զայն, կամ բնաւ իսկ թէ գուցէ ուժ ամենակալ և ամենախնամ։ Հեռի արասցէ ՝ուր յամենայն թագա-

ւորութեՆց զայսպիսի պաշտօնեայս, և յամենայն թագաւորաց զայսպիսի բարեկամս։

Գ.Յոսիպոսի թիւր և մոլար սիղբամբք այնչափ հրապուրեցին, և այնչափ խօսեցան, մինչև հաւանեցուցին զանզգոյշ արքայն՝ տալ յամենայն թագաւորութեՆ իւրում ազատութիւն խղճի մտաց, պաշտել զոր ինչ այր իւրաքանչիւր կամիցի։ Եւ անդէն լցաւ երկիրն կռապաշտութեՆ. զի թողին զտաճարսն, թողին զտիր ՝ուծ հարցն իւրեանց, և չոքան զՀետ կռոց և աստարտայցն։ Գ.զարիաս, կամ որ նոյն ինքն է զաքարիա՝ զգեցեալ զՀոգի ՝ուն, յարեաւ ՝ի մէջ ժողովրդեանն՝ լի ՝ուծային նաև խանձու կշտամբել զՀուծամարտ ամպարշտութեՆ նոցա։ Գ.մէ վարձ քարոզութեՆ նորա ՝ի ժողովրդենէն՝ եղև թագել զնա կենդանւոյն ընդ քարամբք, պատուիրանաւ յոմանս ՝ի սրահի տանն ՝ուն. իսկ առ յոյլ լուսապայծառ պսակ մնջարիրոսութեան։ Եւ նաև իսկ իշխեաց յոմանս հրաման տալ քարկոծ առնել ՝ի տան ՝ուն զորդի յովիդայեայ, որում պարտական էր զկեանս և զթագաւորութիւն իւր. և յորմէ՝ ՝ի տեղւոջ յայնմիկ առեալ էր զթագ և զգաւազան թագաւորութեՆ։ Եայց յորժամ ոք թիկունս դարձուցանէ ՝ոյ, ոչ ևս յիշէ զերախտաւորութեՆ իւր առ երախտաւորն. քանզի եթէ ամենեթ համբարէր լմնել ապաշնորհ, ոչ արդեօք դարձուցանէր թիկունս ՝ոյ։ Այր և առանց քարոզուեՆ անդամ զաքարեայ, աշխարելի մահ հօր յոմանայ, և հաւուն և հանուոյն, և նախահաւուն, և իւրոց քեռեաց և հօրեղբարց՝ շատ էին զարհուրեցուցանել զնա, առ ՝ի չտալ մնաց կռոց ՝ի թագաւորութեՆ իւրում։ Եւ մի միայն պարզ հայեցուած յիւր սահմանակից թագաւորութեՆ իսրայելի՝ բաւական էր պահել զնա անմեկնելի յոյ հարց իւրոց։

Յետ մահուան յեռայ թագաւորեաց ՝ի վերայ իսրայելի յոմաքազ որդի նորա յամի քսանեերորդի երրորդի յոմասու արքայի յուդայ։ Այս թէպէտ ոչ չոքաւ զՀետ բահաղնմայց զոր եբարձ հայր նորա, բայց զերկու երինջս յերսբոմամայ պահեաց ՝ի կայ.

անի իւրեանց, որք ոչ զօրեցին պաշտպանել զնա յերեսաց հինից ասորւոց առաքելոց՝ ոչ այնչափ յա-զայելէ ասորւոց արքայէ, քան թէ առ յոյ. որք և առին բազում քաղաքս, և աւար հարին զամե-նայն երկիրն իսրայէլի։ Այլ թէպէտ յարոյց յովա-քազ ընդդէմ նոցա զօր բազում, այլ 'ի զուր. զի 'ի բազմութէն անտի ոչ մնաց նմա՝ բայց միայն հե-ծեալք յիսուն. և կապք տասն, և տասն հազար հետեւակաց, զի զայլ բազմութիւն կոտորեաց ար-քայն ասորւոց և ոչ եդիտ հանդիստ և օգնութիւն ուստեք, եթէ ոչ մինչ յոդիս ապաստան՝ խոնար-հեցաւ աղաչեաց բեկեալ սրտիւ զերեսս նոցա։ Յայնժամ ամենագութ անլիշաչար նայեցեալ 'ի տառապանս իսրայէլի՝ եւ նոցա նովին սակաւա-թիւ սրտաբեկ զօրօք վանել զասորիս յերկրէ իւր-եանց. և ապա ոգի առին և հանգեան 'ի բնակու-թիւնս իւրեանց որպէս յերեկն և յեռանդն։ Բայց այս եղև զկնի մահուանն նորա, յորժամ եւ ՝ն ՝ն զյա-զան զորդի նորա Թագաւոր և փրկիչ ժողովրդեան այնմիկ։

Որպէս և յովաս արքայ յուդայ ոչինչ զդօնա-ցաւ 'ի թշուառութեց արքային իսրայէլի. վասն այնորիկ առաքեաց ՝ն դարձեալ զզօրս աղայելի ասորւոց արքայի հարկանել զերկիրն նորա։ Նոքին և պաշարեցին զքէթ քաղաք ամուր. և զայն՝ զոր էառ դաւիթ 'ի փղշտացւոց, և Թագաւորք յու-դայ ընդ ժամանակս ժամանակս ամրացուցին, և բազում զգուշութիւն պահէին, 'ի սուղ ժամանակի առին ասորիք. և ընդ այն կողմն բացին ինքեանց ճանապարհ՝ ունիլ հեշտեաւ 'ի ծովէ զամենայն պիտոյս հանդերձից, և պաշար կերակրոյ։ Նոքա ելին 'ի վերայ երուսաղէմ. զճանապարհայն հան-դիպեալ զանազան քաղաքաց՝ կոտորեցին զամենայն իշխանս ժողովրդեան յուդայ, և զզրաւարս և զզօրս, որք ելին ընդդէմ նոցա։ Սովիմբ յայսմանէ երևեցաւ ձեռն ՝ն 'ի խնդրել զվրէժ արեան զա-քարիայ որդւոյ յոյիդայեայ. զի նա 'ի փարձանել իւրում ասաց, * Տեսցէ ՝ն և դատեսցի ||, 'ի ՝ն

ապաստան ապարեալ զդատաստան իւր. և ահա այս արշաւանք եղեն 'ի կատարել տարւոյն յետ մահու նորա. թոռ զի և զօրք ասորւոց սակաւ եին։ Յայլ դիպուածս սակաւ զօրք յուղղայ զմեծամեծ բանակս այլազգեաց խորտակեին. այլ այժմ ինքն ամենազօրն ՝ի մարտնչէր ընդդէմ նոցա, զի ապստամբեցան ՝ի նմանէ։ Յոմանս կայր ՝ի տագնապ յետին անձկութեանէ. այլ ոչ զարթեաւ դալ յապաշխարութիւն, և դառնալ արկանել զանձն ՝ի ձեռս ողորմութեան նոցա։ Յողովեաց զամենայն արծաթ և զոսկի գտեալ ՝ի գանձս տան նոր, և տան թագաւորին, և տուաբեաց ազատելն ասորւոց արքայի ՝ի դամասկոս, զի մի զօրք նորա պաշարեսցեն զերուսաղէմ։ Լաւ ասէ որ կամիր պատժել զժողովուրդ իւր, այլ ոչ կորուսանել, արար շատանալ ասորւոց աւարաւն այնուիկ, և դառնալ յերկիր իւրեանց։ Այլ սակաւ խնդութեան եղև յոմանս ՝ի մեկնելոյ նոցա ՝ի պաշարմանէ թագաւորեալ քաղաքի իւրոյ. քանզի բիւր նախատինս և անարգանս կրեալ յիւրոցն, ըստ ոմանց և յասորւոց, յանբերելի տրտմութենէ և ՝ի դառնութենէ սրտին՝ անկաւ ՝ի մտիցն հիւանդութիւն մերձ ՝ի մահ։ Լաւ անակնկալ դաւաճանութեան ինչ փութացոյց զօրհաս նորա. քանզի զաբդեա որդի սամեթայ ամենացի, և յոմանք ասեն որդի սամարիթայ կնոջ մովաբացւոյ՝ երկոքին ծառայք յոմանս, գաղտաբար յարեան ՝ի վերայ նորա, և սպանին զնա ՝ի գահոյս իւրում յապարանս մանալոնայ կամ մելլոնի բարձու աւանդակին շինեալ ՝ի սողոմոնէ յերուսաղէմ։

Վերաւ յոմանս ամաց քառասուն և եօթնից, թագաւորեալ ամն քառասուն, ՝ի մանկութենէ հաստուն խորհրդով իբրև այր կատարեալ, իսկ ՝ի հասակի առն կատարելոյ խակ խորհրդով իբրև մանուկ խակամիտ, կամ բնաւին անմիտ։ Լաւ այնպէս ուներ ասացեալոյ զմեծամեծ ակնկալութիւնս բարեպաշտից, զոր եւ սքանչելի նախախնամութիւն ՝այ՝ երևեալ ՝ի վերայ նորա ՝ի տղայութենէ և յասառջին ամն գահ վելի մանկութենէ նորա։ Այս է սովորական կաւա-

բոծ պատանեկաց, որք միանգամ յանել հասակաւ 'ի բաց թողուն զբարեպաշտութիւն վարուց, յոր 'ի մանկութիւն սնեալ և դաստիարակեալ էին, և խոտորին զհետ քաղմութիւն մոլեաց։ Ա՛ղօրութիւնն շաւ ցուցանէ զմիտս, և խանգարէ զնորհուրդս մտաց. և խիղճ մտաց տանջեալ յիւրմէ յանցաւորութէ՝ ոչ կարէ գործել խոհական հանձարով։ Ա՛ահ յա վատաւ եղև յամի արարչութիւն աշխարհի 5535. և թագեցաւ 'ի քաղաքին դաւթի, այլ ոչ 'ի գերեզմանի թագաւորաց. ըստ ոմանց սակս կարի ժահաւ հոտութեան դիակն նորա։ Լ՚երկու ամեաք յառաջ մեռեալ էր յովաքազ թագաւոր իսրայէլի. որ թագաւորեաց 'ի սամարիա ամս վեշտասան, այլ ոչ ամբողջ։

ԳԼ. ԺԱ.

Լ՚մասէա արքայ յուդայ։ Յովաս արքայ Իսրայէլի։
Ա՛ահ եղիսէէ մարգարէ։

Յամին երկրորդի յովասայ որդւոյ յովաքազու արքայի իսրայէլի նստաւ յաթոռ թագաւորութիւն յուդայ ամսեայ՝ փոխանակ հօր իւրոյ յովասայ, ամաց քսան և հնգից. և թագաւորեաց ամս քսան և ինն յերուսաղէմ։ Իսկ յովաս արքայ իսրայէլի զկնի մահուն հօր իւրոյ թագաւորեաց 'ի սամարիա ամս վեշտասան։ Լ՚այսպէս ունին եօթանասունք, և լատինն համաձայն եբրայականին. իսկ ասորին և արաբացին ընթեռնուն ամս երեքտասան։ Լ՚ս արար յովաս չար առաջի նոն. այլ ոչ որչափ արարին նախընթաց թագաւորք։ Ալ՚ եմոյծ 'ի սահմանս թագաւորութիւն իւրոյ աստուածս օտարոտիս. բայց ըստ մոլար քաղաքական սկզբանց՝ որ ինաց միշտ տրմատացեալ 'ի թագաւորութեան

Իսրայէլի, պահեաց զերկու երինջս կանգնեալս 'ի յերոբովամայ 'ի պաշտօն խուռնաղանդ ժողովրդեան լոկ վասն քաղաքական վախճանի։ Բ. Նոյնին ժամանակաւ տակաւին կենդանի էր Եղիսէ մարգարէն. զոր սիրէր արքայ և 'ի պատուի ունէր զնա յոյժ. այլ յայնմ մասին երինջոց ոչ վարէր նորին խորհրդով։ Թէպէտ սկիզբն ինչ՝ որ իբրև կանոն և օրէնք իցէ մտեալ և արմատացեալ 'ի թագաւորութիւնն իմիք, ոչ դիւրաւ փոխի. և ոչ իսկ յորժամ յայտնի երևիցի ինչս նորա. վասն զի զամենայն ինչս՝ այլոց պատճառաց վերադրելով, ընտրեն մնալոցիլ ընդ յառաջընթացսն, քան թէ յուղիղ ճանապարհ մտանել, և մուծանել զորս գայցեն զկնի։ Սակայն և այնպէս Եղիսէ իմաստութիւն գնայր ընդ նմա. զի չէ արժան առն Հոգեսիրի 'ի բաց լքանել զմեղաւորն՝ իբր զի ոչ կարէ առնել զնա յամենայնի անբաստգիւտ. այլ շահ մեծ համարել պարտ է, եթէ արասցէ զի մի 'ի չարագոյնն գնասցէ, թէպէտ և յիմիք իցէ թիւրեալ։ Բ. Յլ վասն յոլասու ցաւալի եղև յոյժ, զի փութով բարձաւ 'ի նմանէ սիրելին իւր Եղիսէ՝ զոր հայր իւր կոչէր. զի 'ի սկզբան թագաւորութեան նորա մարգարէն հիւանդացաւ առ 'ի մահ 'ի սամարիա. զոր լուեալ արքայի՝ գնաց անձամբ յայցելութիւն նորա. և նստեալ առ մահճաքն՝ լայր 'ի վերայ նորա, և ասէր ողբալով. հայր հայր կառքդ իսրայէլի, և հեծեալք նորա. իբր ասել՝ դու հայր էիր իսրայէլի, և զօրավիգն և օգնական քան զբազմութիւն կառաց և հեծելոց. որով պայծառ երևեցոյց զանկեղծ սէր և զգութիւն սրտի իւրոյ առ Եղիսէ՝ իբրև գորովական որդի առ հայր իւր սիրելի։

Հաճեցաւ ոմն ընդ խոնարհութիւն արքայի, և ընդ անկեղծ սէր նորա առ ծառայն իւր. վասն որոյ 'ի նմին իսկ սենեկի հիւանդին ասպահովացոյց զնա, թէ ընկալցի 'ի վարձ զերիս կատարեալ յաղթութիւս ընդդէմ ասորւոց, որք բռնակալեալ էին յայնժամ յերկրին իսրայէլի։ Սովորութիւն

էր մարգարէից 'ի կիր արկանել նիւթական և զգալի նշանս, որով լաւ ևս տպացուցանէին 'ի միտս այլոց զպատգամս մարգարէականս։ Լ.սաց եղիսէէ ցարքայն առնուլ զաղէղն և զնետս, և մինչ ունէր արքայն զաղէղն 'ի ձեռին, եդ եղիսէէ զձեռն 'ի վերայ ձեռաց արքայի, առ 'ի տալ նմա 'ի միտ առնուլ, թէ յաղթութիւն իւր ոչ լինիցին լոկ ուժով զօրաց իւրոց, այլ յայ. որ տալոց է նոցա զօրութիւն։ Լ.պա ասաց բանալ զպատուհան սենեկին՝ որ հայէր ընդ արևելս 'ի կողմն յորդանանու, և արձակել ընդ այն նետ մի. զոր իբրև առնէր արքայ, ասէ եղիսէէ. « Ա.ետ փրկուե՜ն, և նետ փրկութեան ընդդէմ ասորւոց ». իբր ասել. այս է նետ փրկութեան, զոր տալոց է ՝ձեր Ժողովրդեան քոյ ընդդէմ ասորւոց. և հարցես զասորիս յաբեկ՝ իսպառ խորտակելով զբանակ նոցա։ Լ.այս արեկ քաղաք թուի լինել այն, զոր եւսեբիոս և Հերոնիմոս նշանակեն 'ի սահմանս ցեղին ռուբենի յերկրին ամովհացւոց մօտ 'ի յորդանան. զի այս քաղաք միայն համեմատութեամբ սամարիայ անկանի յարևելեան հարաւ։ Յետ այնորիկ ասաց եղիսէէ ցարքայն առնուլ 'ի ձեռին նետս, և հարկանել զգետին, առանց ասելոյ՝ թէ քանի անգամ. եհար արքայն երիցս, և եկաց։ Տրտմեցաւ եղիսէէ, և ասէ. եթէ հնգիցս, կամ վեցիցս կամ եօթնիցս հարեալ էիր, յայնժամ սպառսպուռ հարկանէիր զասորիս. և արդ երիցս հարեր զգետին, նոյնչափ հարցես զաղէղն զթշնամիս քո։ Լ.ու դարձաւ արքայ յարքունիս իւր հաձեալ ընդ այցելութիւնն՝ զոր արար։ Մ՝եռաւ եղիսէէ, և թաղեցաւ 'ի շիրմի արտաքոյ քաղաքին։ Լ.ստ նշանակէ ՝ձեր դիրն զնորաքանչ հրաշս ոսկերաց նորա։ Վ.անգն 'ի գալ տարւոյն ելին մեկնակազմքն մովաբու 'ի կողմանսն յայնոսիկ աւար հարկանել և կողոպտել զերկիրն. և եղև զի գաւառականքն մեռեալ մի տանէին 'ի թաղել 'ի գերեզմանատեղին, ուր էր տապան եղիսէի. և տեսեալ բարձողաց մեռելոյն զմեկնակազմնսն՝ երկեան. վասն որոյ առ վաղագոյն վճռ-

բելոյ զգործ թագման, բացին զվէմն տապանին եղիսէի, և ընկեցին անդ զդի մեռելոյն. որ իբրև մերձեցաւ յոսկերսն եղիսէի, առժամայն կենդանացաւ կանգնեցաւ և ել 'ի գերեզմանէն։

Օ այնու ժամանակաւ մեռաւ ազայէլ արքայ ասորւոց։ Սա թէպէտ և հեթանոս ոք էր և ամպարիշտ, բայց և այնպէս 'ի զանազան պատերազմունս յաջողեցան իրք նորա՝ յաղթական լինելով 'ի վերայ իւրոց ընդդիմամարտից. վասն զի ընդ թագաւորի և ընդ ժողովրդեան քան զինքն չարագուն պատերազմէր. զորս կամէր ՝ճծ պատժել նոքին արքանեկութիւն։ Օ ինի ազայէլի թագաւորեաց 'ի վերայ ասորւոց որդի նորա բենադեր, այն է՝ որդի ադերայ. այսպէս անուանեալ յանուն իւրոց հաւուց։ Սմա երիցս յաղթեաց յովաս արքայ իսրայէլի ըստ մարգարէութեն եղիսէի. և ետան 'ի ձեռաց նորա զամենայն քաղաքս, զոր առեալ էր ազայէլ պատերազմաւ 'ի ձեռաց յովաքազու հօր իւրոյ. և այնպէս խաղաղացաւ երկիրն իսրայէլի, 'ի վարձ խոնարհելոյ և դիմելոյ յովաքազու առ ՝ճծ. որպէս պատմեցաք 'ի վերոյ։

Յայնմ ժամանակի հանդեաւ և թագաւորութիւն յուդայ. վասն զի ամասիա արքայ յուդայ 'ի սկզբան թագաւորութեանն իւրոյ գնաց զհետ բարեպաշտութեան, և ոչ ամպարշտութեան իւրոց նախորդաց. դարձոյց անդրէն յերկիր թագաւորութեան իւրոյ զկրօնն ՝ճշմարիտ ՝ճծպաշտութեան. բայց անտես արար զբարձունսն. զի ոչ եբարձ զնոսա. որպէս և ոչ բարեպաշտ թագաւորքն որք յառաջ քան զնա։ Իբրև հաստատեցաւ թագաւորութիւնն 'ի ձեռին նորա, կալաւ զծառայսն որք սպանին զՀայր նորա, և սպան զնոսա. այլ զդատակնիք մահապարտութեան ոչ ձգեաց 'ի վերայ անմեղ որդւոցն նոցա, կամեցեալ պահել զՏրաման ՝ճն, թէ մի մեռցին որդիք վասն մեղայ հարցն։

Յետ այնորիկ հաստատեաց 'ի մտի պատերազմաւ անդրէն ընդ ձեռամբ իւրով նուաճել զեդովմայեցիս, զորս դաւիթ կանխաւ նուաճեալ էր ընդ

իշխանութիւն թագաւորութեան իսրայէլի. և ասա՝ ի բաժանիլ թագաւորութենն յերկուս՝ եղովմայեցիք ճեացին ընդ ձեռամբ թագաւորացն յուդայ մինչև ցժամանակս յովրամայ արքայի որդւոյ յովսափատայ. յորմէ ապստամբեցան, և կացուցին ինքեանց թագաւոր յազգէ իւրեանց։ Հանդէս արար ամենայն արանց իւրոց ի քսանամենից և ի վեր. և գտան երեք հարիւր հազար արք զօրաւորք զինեալք ի նիզակ և յասպար։ Լ.յլ թերևս անբաւական վարկուցեալ զնոսա առ վախճանն՝ զոր ունէր ի մտի, ի վարձու կալաւ ի տրութիւն յովասու արքայի իսրայէլի այլ և՝ հարիւր հազար արս զօրաւորս ուժով՝ հարիւր տաղանդոյ արծաթոյ։ Լոր ինչ էր ի թագաւորութենն յուդայ ի վարձու առնուլ այնպիսի պնդակազմ բանակ յօտար թագաւորէ. և առաւել նոր՝ մանաւանդ թէ անխոհեմութեան՝ մուծանել զնոսա յերկիր իւր. զի հարիւր հազար իսրայէլացիք զինեալք՝ էին նոյնչափ թշնամիք յերկրին յուդայ պատրաստք առ ի զէն վերացուցանել։ Լ.յլ զիարդ և իցէ՝ սակարկութեն եղեալ էր. արծաթն վճարեալ. հարիւր հազար իսրայէլացիք էին անդ կազմ. և այն ինչ կամէր ամենայն հանել զնոսա ի ձանապարհ, ահա այր ոմն ՝այ մարգարէ եկն եկաց առաջի նորա, և ասէ ցնա. մի երթիցէ ընդ քեզ զօրգ իսրայէլի, զի ոչ է ՝որ ընդ նոսա. եթէ ի թիւ և ի զօրութեան նոցա յուսացեալ իցես, ի պարտութեան մատնեսցէ զքեզ ՝որ առաջի թշնամեաց քոց. ի ՝ոնէ ակնկալելն է յաղթութեան. զի ի նմանէ լինի զօրանալ, և ի նմանէ ի պարտութեան մատնիլ։

Լուաւ արքայ միամտութեան բանից առն ՝այ. բայց ծանր թուէր նմա հարիւր տաղանդոյ արծաթոյն գնալ ի կորուստ. վասն որոյ ասէ ցայրն ՝այ. և զի՞նչ լինիցի այնչափ արծաթ։ Լատ պատասխանի մարգարէն, յուսա՝ ի ՝որ, զի դոյ նորա տալ քեզ առաւելագոյն քան զայն։ Լ.մասիա որ դեռևս կայր յիւրում քարեպաշտութեան, ընկալաւ արիաբար զխրատառն ՝այ. և նոյն ժամայն ի բաց որոշ-

եաց զգունդն խսրայելեան, և արձակեաց զնոսա երթալ 'ի տեղիս իւրեանց։ Եվ ելիսեցաւ ասաց ամասիա, զի պարտ էր նախ բաժանել զնոսա 'ի միմեանց զանազան պատրուակաք, և այնպէս առ փոքր փոքր արձակել. այլ նա զամենեսեան միա հաղոյն արձակեաց. և նոցա կատաղեալ՝ ոչ թողին չարիս զոր ոչ գործեցին յերկրին յուդայ 'ի դառնալ իւրեանց. զի 'ի սամարիայ մինչև 'ի բեթորոն՝ յարձակեցան 'ի քաղաքսն, և կոտորեցին 'ի քաղաքաց անտի ոգիս երեք հազար, և առեալ տարան աւար բազում յոյժ։

Իսկ ամասիա՝ յետ արձակելոյ զիսրայելեանսն, սա զզօրն իւր և եկն, և էջ 'ի հովիտս աղտից, որ է առ մեռեալ ծովու. և անդ տասպատ արկեալ տասն հազար յեդոմմայեցւոց, սա և զվէմն քաղաք. որ է. ՆԱՅ. ԷԵ. 12. կոչի քարանձաւ, այլք կոչեն սապառաժ. զի էր շինեալ 'ի քարաժայռ լերին մեծ 'ի հովիտս աղտից 'ի մասին արաբիոյ, որ 'ի քաղաքէ անտի կոչեցաւ սապառաժ արաբիա, առ երի կաղեսայ. ուր յոլովք 'ի տանց էին կռանեալ հատեալ 'ի մէջ միաստանի ժայռից։ Եվ դիմեալ ասպատինեցան այլեւս տասն հազար եդոմմայեցիք. զորս ըմբռնեալ զօրացն յուդայ՝ գահավէժ արարին 'ի գլխոց ժայռից, և այնպէս զամենեսեան սատակեցին, և զերկիր նոցա ընդ իշխանութիւն թագաւորութեան յուդայ դարձուցին. և դարձաւ ամասիա յաղթական փառաք և մեծադանձ աւարաք։ Եվ յաղթութիւն եղև վարձ, զոր ետ ՆԱԾ ամասիայ արքայի՝ յաղագս անդիմադարձ հնազանդութեան նորա բանից առն ՅՈՂ, թողեալ 'ի կորուստ զհարիւր տաղանդ արծաթոյ։ Եվ այդ ինքն յայնմ յաղթութիւն կորոյս գանձ անհրաժեշտ, կորուսանելով զիւր առաջին ՆԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՆ. զի ընդ աւարին եբեր յերկիրն յուդայ և զաստուածս որդւոցն եդոմմայ. և թողեալ զՆԱ՝ որ ետ նմա զայն յաղթութիւն, և որ մեծացոյցն զնա, կացոյց զնոսա իւր յաստուածս, և երկիր պագանէր առաջի նոցա, և զոհէր ինքն նոցա, որք ոչ կարէին օգնել

նմա, որպէս ոչ օգնեցին և եդովմայեցւոց՝ իւրեանց բնիկ պաշտօնատարաց։

Յետ այնորիկ վստահացեալ ամասիայ 'ի զօրութի զօրուն իւրոյ՝ եդ 'ի մտի պատանջել 'ի յովասայ արքայէ իսրայէլի զվրէժ սպանութիւնն երից հազարաց, և այլոց մեծամեծ չարեաց զոր գործեցին յերկրի իւրում զորքն իսրայէլի 'ի դառնալ իւրեանց։ Լուսաբեաց հրեշտակս առ յովաս արքայ, և ասէ. Եկ յանդիման լիցուք միմեանց երեսաք, ազդառնելով թէ կամի 'ի պատերազմ ելանել ընդ նմա։ Յովաս առանց քնաւ խառնելոյ ընդ այն անակնկալ պատգամ, ետ նմա պատասխանի առաւկաւ. Լաքանն ասէ լիբանանու յլեաց առ եղևնափայտն որ 'ի լիբանան, և ասէ. տուր զդուստր քո որդւոյ իմում կնութեան. և անցին գազանք անապատի որ 'ի լիբանան, և կոխեցին զեղբանն։ Զի՞ր մարթ յանկագոյն պատասխանի տալ 'ի խոնարհեցուցանել զհպարտուն ամասիայ, քան զայսուր յաղբանն փուշ զետնամերձ՝ առակի զամասիա, և յեղևնափայտն տունկ բարձրուղէշ զանձն իւր. զոր ապա ինքնին սարզարանէ։ Հարկանելով հաբեր ասէ զեդովմ. մի վասն այնորիկ հպարտացուսցէ զքեզ սիրտ քո. նիստ հանդարտեալ 'ի տան քում, և վայելեա՛ զարդիւնս յաղթութեդ. և մի ելանիցես 'ի խնդիր կորստեան անձինդ և ժողովրդեանդ յուդայ։ Լայց ամասիա, որ 'ի թոգուլ զանր ածէ իւր՝ կորոյս ընդ նմին զմիտս և զհանճար, ոչինչ անսաց իմաստուն խրատու յովասայ. հանդէս արար զօրուն իւրոյ 'ի բեթսամիս քաղաք յուդայ. այլ մինչև եր շարժեալ նորա 'ի տեղւոյն, եհաս 'ի վերայ նորա յովաս բուռն զօրութիւ, եհար, ցրուեաց և փախստական արար զզօրս նորա։ Լու զի 'ի յղել ամասիայ զպատգամ իւր՝ ասաց, թէ ցանկայ երևիլ երեսաք նմա, արդարև երևեցաւ անդ 'ի բեթսամիս. բայց ոչ որպէս կամէր, այլ որպէս դերի շղթայակապ։ Լսկ յովաս կամ՝ զի խորշէր 'ի ծանրութիւնէ պահելոյ զարքայն յուդայ 'ի սամարիա, թէպէտ դերեալ՝ բայց իբրև թագաւ-

ւոր. և կամ զի մեծագոյն շուք և պարծանս վարկանէր անձին այսպէս խոնարհ և նկուն երևեցուցանել զնա յիւրում թագաւորեալ քաղաքի. նմին իրի առեալ տարաւ զնա ընդ իւր կապանօք յերուսաղէմ։ Որ տին երկոքին 'ի քաղաք անդր, այլ 'ի կերպարանս կարի անհամեմատս. օտարն եմուտ իբրև ոչ, իսկ բնիկ ոչ իբրև դերի։ Սակայն յոլովս եցոյց նմա զթասիրութիւն մեծ. զի եթող նմա զևուրն երուսաղէմ և զթագաւորութիւնն յուղայ. շատացեալ առնուլ զամենայն օսկի և զարծաթ, և զամենայն սպաս որ գտաւ 'ի տան տեն, և առ արդեդովմայ գանձապետի, և զգանձս տանն թագաւորին։ Լաւ ետ քակել 'ի պարսպէն երուսաղէմի 'ի հիւսիսակողմն 'ի դրանէն Եփրեմի մինչև 'ի դուռն անկեանն ջրեքհարիւր կանգուն. և դարձաւ 'ի սամարիա, տարեալ ընդ իւր իբր 'ի պատանդս զորդիս խառնակութեցն, այսինքն զամհարաշատ կամ զխառնակ զաւակս արքունի տան և զորդիս յամենց յաւագանւոյն. (որպէս է խմանալ համեմատութիւն այլ և այլ թարգմանութեց.) որպէս զի զգոյշ լինիցի ամասիա՝ չեղծանել միսամգամ զհաշտութեան խաղաղութեան։

Յետ այսորիկ երևի թէ յոլովս արքայ իսրայէլի ոչ եկեաց յերկար, այլ յետ սակաւուց մեռաւ 'ի սամարիա, և անդ թաղեցաւ ընդ թագաւորս իսրայէլի, յամին հնգետասաներորդի ամասիայ արքայի յուդայ. թողեալ իւր յաջորդ 'ի թագաւորութիւն իսրայէլի զյերոբոամ զորդի իւր. որ երեքտասան ամաւք յառաջ ընտրեալ էր և հրատարակեալ թագաւոր իսրայէլի։ Իսկ ամասիա յետ մեռանելոյ յոլովսու եկաց այլ ևս ամն հնգետասան. չունիմք ինչ 'ի գրոց թէ զգաստացեալ իցէ, և փոխեալ 'ի լաւագոյն զգնացս իւր։ Այլ ընդ հակառակն՝ յետ ամաց եկն առնա մարդարէ առաքեալ 'ի տեն. որ ասաց ցնա, ընդէր խնդրեցեր դու զաստուածս ժողովրդեանն այսորիկ, որք ոչ փրկեցին զժողովուրդ իւրեանց 'ի ձեռաց քոց։ Ընդ այն բան ցասուցեալ արքայի, ասէ ցնա, միթէ

խորհրդական Թագաւորի իցես. զգոյշ լեր՝ գուցէ մեռանիցիս։ Լուեաց առ վայր մի մարգարէն. և 'ի մեկնիլ յերեսաց նորա ասէ, դու ինձ մահ սպառնաս, այլ ես քեզ ասեմ յանուն Տն, եթէ սպանցիս, զի արարեր զայդ, և ոչ անսացեր խրատուս իմում։ Այս եղև այնպէս. զի իւրքն դարան գործեցին նմա յերուսաղէմ սպանանել զնա. զոր իմացեալ նորա, աճապարեաց փախեաւ 'ի լաքիս. Թերևս զի անտի անցանիցէ առ իսրայէլացիս, կամ առ փղշտացիս, այլ ոչ ժամանեաց. քանզի միաբանեալքն ընդդէմ նորա առաքեցին փուԹանակի զկնի նորա 'ի լաքիս. և անդ սպանին զնա. այսչափ ինչ զԹուԹի ցուցին նմա. զի բարձեալ զմարմին նորա 'ի վերայ ձիոց, ածին յերուսաղէմ և Թաղեցին զնա ընդ հարս իւր 'ի քաղաքի դաւԹի։ Զայսօրինակ մեռաւ ամասիա 'ի քսանեքորդ ինեքորդ ամի ԹագաւորուԹեան իւրոյ. որ յայնժամ սկսաւ ամպարշտիլ, յորժամ սկսաւ երկրպանականալ. և ընդ ամպարշտիլ իւրում՝ ընդ նմին կորոյս և զերկրպանկուԹին, որպէս և զկեանս զլիսովին չարաչար մահուամբ։

ԳԼ. ԺԱ.

Հերոբոամ երկրորդն՝ արքայ իսրայէլի։ Ոչիա, որ և Ազարիա արքայ յուդայ։ Լսայի մարգարէ։

Իբրև մեռաւ յոլաս արքայ իսրայէլի 'ի հնգետասաներորդ ամի ԹագաւորուԹեան ամասիայ արքայի յուդայ, մնաց 'ի տեղի նորա Թագաւոր իսրայէլի ինքնակալ և անկախ՝ երկրորդն յերոբոամ որդի նորա որպէս ասացաք։ Այս ևս ըստ օրինակի իւրոց նախորդաց՝ պահեաց զերինջս զգայԹակղուԹիս յերոբոամայ առաջնոյ, անշարժ կալեալ զանօրէն

սկիզբն քաղաքական՝ ոչ երբէք բառնալ զկռապաշ-
ութիւնն 'ի թագաւորութէ իւրմէ։ Ի թագաւո-
րել իւրում եգիպտ զերկիրն իսրայէլի 'ի դառն
նեղութէ 'ի հինից ասպատակողաց։ Օր յսվաս
հայր նորա թէպէտ երիցս եհար զասորիս յերեսին
յաջող պատերազմունս, և էառ անդրէն զոր նա-
խորդ նորա կորոյս պատերազմաւ, բայց ոչ եթող
յիսրայէլի այժ և զօրութէն բաւական առ 'ի զգէմ
ունել ամենացուց, մովաբացւոց և այլոց շրջակայ
այլազգեաց. որք միշտ կազմ և պատրաստ կային
զէնն առնուլ, և ասպատակ սփռիլ յերկիրն իսրայէ-
լի, աւար հարկանել, և կողոպտել։ Յայնմանէ
իսրայէլացիք վերստին անկան 'ի յետին թշուա-
ռութէն ազէտաւոր քան զվիճակ գերեալոց և քան-
տարդելոց 'ի թշնամեաց. զի նորա թէպէտ կրէին
զտառապանս քանտի, այլ զերծ էին յարտաքին
հարստահարութեց. իսկ սոցա թողին ապրիլ, զի
հանապազ մուցին, գոլով կողոպտեալ յամենայն
ընչից, մինչև ջնջեալ նոցա այլ ևս ինչ՝ զի յափշ-
տակեսցին. և այսպէս կային թաղեալ լքեալ ան-
յոյս 'ի մարդկային օգնութէն։ Անօրէնութիւնք
յերբոբոամայ մեծագունից թշուառութեց արժա-
նի էին, այլ մարդասէրն ՅԱԾ յոյս անդամ հայե-
ցաւ 'ի դառն տառապանս իսրայէլի առ 'ի ողորմիլ
նոցա, քան թէ յանօրէնութիս ժողովրդեան և
թագաւորի նոցա 'ի կորուսանել զնոսա։ * Ա՛չ խո-
սեցաւ Տէր (սակ գիրն) ջնջել զգլուակ իսրայէլի 'ի
ներքոյ երկնից ||. Թէպէտ և ապստամբ 'ի նմա-
նէ. այլ տակաւին հայէր 'ի նոսա իբր յիւր ժողո-
վուրդ. Թող զի 'ի մէջ յոքնաթիւ ամենաբշտաց
կային և բազմութէն ՅԱԾապաշտից և սրբոց. վասն
որոյ 'ի ՀՈՐՀՆ բարեաց՝ պարգևեաց յաղթութիւն
անօրէն թագաւորին։

Յոմանս մարդարէ որդի ամաթեայ 'ի գեթ-
քորբերայ քաջալերեալ խրախուսեաց զյերոբոամ
'ի պատերազմ. և թէպէտ սակաւ էր նորա զօրու-
թէն, և օգնական ոչ ոք էր նմա, սակայն և այն-
պէս խոստանայ նմա յաղթութէն, զի ծանիցէ 'ի

յաղթութիւն թէ նա է որ զինուց և թագաւորութեաց։ Այլ իրացն ծչգրտեցին զմարգարէութիւն. զի ժողովեալ յերոբոամայ զսակաւ զօրս՝ զոր մարթացաւ 'ի ձեռս բերել, և ոչ ևս հանդուրժելով չարեաց ասպատակողացն, եկ յերկիր իւրմէ, և խաղաց յերկիրն Թշնամեաց. էառ զդամասկոս Թագաւորեալ քաղաք ասորւոց զոր երբեմն առեալ էր դաւիթ, և պահեալ էր սողոմոն յաւուրս իւր, ուստի և էր համարեալ իբրև սեպհական ստացուած իսրայէլի. յինքն ընկրկեաց և զայլ ամենայն տեղիս, զոր կորուսին նախնիք նորա, և տարածեաց զսահմանս իւր յայսկոյս յորդանանու յեմաթայ ընդ լերամքն լիբանանու մինչև 'ի ծովն աբաբայ, և 'ի մասն մի մեռեալ ծովուն յայնկոյս յորդանանու. և դարձոյց զամենայն սահմանս թագաւորութեան իւրոյ։

Յայսմ վայրի առ բառնալոյ զչփոթութիւն ժամանակաց որ 'ի մէջ թագաւորացս այսոցիկ, կարևոր վարկաք 'ի մէջ բերել զբան կաղինոսի, որ զայսօրինակ տրամաբանէ։ Յերոբոամ ասէ՝ առ կենդանութիւն հօր իւրոյ թագաւորեաց ընդ նմա ամս երեքտասան, ոչ ամբողջ. և զկնի հօրն վարեաց զթագաւորութիւն իւր ընդ ամս քառասուն և մի։ Այս բացայայտ ունիմք 'ի նոր գիրս. իսկ զառաջին երեքտասան ամս հաւատաւեմք տրամաբանութիւն։ Ամասիա հայր ազիայ արքայի յուդայ, սպանաւ 'ի լաքիս յամի հնգետասներորդի յերոբոամայ։ Ազիայ ունիմք թէ թագաւորեաց յամին քսաներորդի եօթներորդի նորին յերոբոամայ. Գ. Թագ. ԺԵ. 1։ Այս պարտիմք ասել թէ 'ի մէջ ամասիայ և ազիայ՝ երկիրն յուդայ եղև առանց թագաւորի ընդ ամս իբրև երեքտասան. կամ թէ յերոբոամայ թագաւորեալ էր ամս իբրև երեքտասան յառաջ քան զմեռանել յոսիասու հօր իւրոյ. և թէ ուստի այսինքն 'ի թագաւորելոյ ընդ հօրն՝ սկսանի գիրն թուել զամս քան և եօթն. յորոց 'ի վերջնումն թագաւորեաց ազիա 'ի վերայ յուդայ։ Այսպէս կայ և հիմն լինչ կասկածելոյ՝

թէ յուդա առ ժամանակ մի եղև առանց թագաւորի, տեսանելով զի ամենայն հայրն ոչիայ սպասնաւ 'ի ձեռն միաբանեալ դաշնակցութեան. յորմէ երևի թէ թագաւորութիւն յուդայ աղմկեալ՝ որոշեալ իցէ ոչ եւս ունիլ թագաւոր ինքնակալ։ Լայց կան և բաւական պատճառք՝ որք ցրուեն զայս կասկած։ Լախ՝ զի այն միաբանութիւն ոչ եղև ընդհանուր 'ի համբրէն թագաւորութեան, այլ լոկ 'ի մէջ ոմանց մեծամեծաց երուսաղէմի. զի մեծագոյն մասն ժողովրդեան բնակչաց նորին իսկ երուսաղէմի էր 'ի կողմն մեռեալ թագաւորին. որ յայտ անտի է, զի կամեցան թէ իսկոյն բերցի մարմին նորա յերուսաղէմ և անդ թաղեսցի պատուով։ Լրկրորդ՝ զի տունն յուդայ միշտ և յամենայն ժամանակս կարի նախանձախնդիր եղև վասն տանն դաւթի. և ընտրեաց միշտ տանիլ ամենայնի, քան թէ 'ի բաց կալ 'ի թագաւորէ տանն այնորիկ։ Լրրորդ՝ զի չէր բնաւ 'ի նոր գիրս այլ օրինակ անթագաւոր լինելոյ յուդայի. և ընդ հակառակն՝ յանձին են օրինակք, որք վասն ապահովացուցանելոյ զյաջորդութեան, և վասն այլոց պատճառաց զոր այլուր յիշեցաք՝ թագաւորք իսրայէլի և թագաւորք յուդայ առ կենդանութիւն իւրեանց անուանեցին զմի յորդւոց իւրեանց թագաւոր. և ետուն նոցա զպատիւ թագաւորի։ Լպա ասել պարտ է, թէ յոմանս արքայ իսրայէլի արար ընդ որդւոյ իւրում յերոբոամայ զայն՝ զոր արարին և նախորդք նորա, բազում ամաք յառաջ քան զմնալն իւր հրատարակելով զնա թագաւոր, քան թէ ասել՝ թէ յուդա եղև առանց թագաւորի ընդ այնչափ ամս. նա զի բառքն իսկ գրոյն զայս ցուցանեն՝ յասելն. * Լչ առ ամենայն ժողովուրդ երկրին զոզիաս ... և թագաւորեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ ամասիայ ։ Բ. Նայ. Իզ. 1. որ յայտ առնէ՝ թէ ոչ էանց բազում ժամանակ 'ի մէջ մահու հօրն, և թագաւորելոյ որդւոյն։ Լպա թէ ոչ՝ եթէ զկնի երկոտասան ամաց անիշխանութեան թագաւորեալ էր, յայնժամ ունէր ասել՝ փոխանակ ապստամբաց,

կամ ֆոխանակ վեծանեծաց, և ոչ փոխանակ հօր իւրոյ։ Յայսմանէ հետևեցուցանել կաղկնոս, թէ յերոբոաամ թագաւորեաց ամն իբրև երեքտասան ընդ հօրն. և յետ այնորիկ թագաւորեաց ամն քառասուն և մի ինչ հօրն։ Եւ այսու բառնի ամենայն դժուարութիւն երևեալ 'ի ծը գիրս 'ի վերայ ժամանակաց սոցա։

Այսպէս այսմ տեսութիւն յերոբոաամ երկրորդն մեռաւ յամի արարչութեան աշխարհի 3390. 'ի քսանեբորդ և հինգերորդ ամի թագաւորութենն ոզիայ 'ի վերայ յուդայ։ Եղև յերոբոաամ թագաւոր բաբերբաստիկ, զի զամենայն յաղթութիւնս իւր արար առանց ինչ իւրոյ զօրութեան. այլ առաւել բարեբաստ լինէր՝ մանաւանդ թէ և գերերջանիկ, եթէ 'ի յաղթութեաց անտի ուսեալ էր Ճանաչել և սիրել զնոր ոճ իւր. որ 'ի յաղթութենն անդ էտ Ճանաչել զինքն անչափ սիրելի, բարերար, և ամենոզորմ. բայց 'ի գիրս գտանեմք զնա բարերարեալ, այլ ոչ գտանեմք զնորհակալս։

Յամի քսաներորդի եօթներորդի, յորմէ հետէ յերոբոաամ սկսեալ էր թագաւորել ընդ հօր իւրոյ, և 'ի տասներորդի հինգերորդի թագաւորելոյ նորա զինչ հօր իւրոյ, սպանաւ ամասիա արքայ յուդայ 'ի լաքիս. և հասարակաց հաւանութեամբ համբրէն իշխանացն յուդայ՝ թագաւորեաց ոզիա որդի նորա. որ 'ի գիրս թագաւորաց կոչի ազարիա. յորմէ իմանամք երկու անուանս ունել նմա։ Այս երկրորդ անուն սովորաբար 'ի կիր ածի 'ի մնացորդսն, թերևս առ չշփոթելոյ զնա ընդ ազարիայ, որ 'ի նմին ժամանակի էր քահանայապետ. իսկ այս շփոթութիւն չկարէր լինել 'ի գիրս չորրորդ թագաւորաց, զի անդ չկայ միւսատակ զազարիայ քահանայի։ Զնա 'ի թագաւորել իւրում էր ամաց վեշտասանից։ Յետ մահու ամասիայ հօր իւրոյ առ զեղանթ, որ է այիլաթ քաղաք և նաւահանգիստ կարմիր ծովու, անդստին 'ի ժամանակաց դաւթի և սողոմոնի ընդ ոճրութիւն լեալ թագաւորութեանն իսրայէլի, առեալ 'ի ձեռաց

Եթովպացւոց և մագիանացւոց։ այլ զկնի սոդոմ-
նի՝ անդրէն կալան նորա զքաղաքն. զորմէ յետոյ
յաբարին փոյթ, կամ չէզեն կարող յաջորդ թա-
գաւորք ոչ յուդայ և ոչ իսրայէլի՝ վերստին տի-
րել նմա։ Բ. մասիա յառաջագոյն աչս արձակեալ
էր 'ի նա իբրև 'ի նաւահանգիստ յաջողակ 'ի շա-
հավաճառութիւն ընդ արաբացիս, և ընդ պարսիկս
և ընդ հնդիկս. արդ փորձ ևս կամեցաւ փորձել,
այլ ոչ յաջողեցաւ նմա առնուլ զնա։ Բ. պա զկնի
մնհու նորա ոզիա որդի նորա տարաւ 'ի գլուխ
զկամն հօրն. զի էառ զնա, և դարձոյց անդրէն 'ի
յուդա. շինեաց և ամրացոյց զնա յոյժ ընդդէմ
շրջակայ թշնամեաց առ 'ի տոկալ երկար պա-
շարման։

Ոչինչ եղև մի 'ի բարեպաշտ թագաւորացն յու-
դայ՝ նմանեալ նախկին գնացից հօր իւրոյ յարդա-
րութիւն և յանձնապատութիւն. և յայս միտ ասէ գիրն.
* Բ. բար ուղղութիւն առաջի նոն ըստ ամենայնի զոր
արար ամասիա հայր նորա ‖. Բ. Ներ. Էջ. 4. այս-
ինքն է, մինչև էր ամասիա խոտորեալ 'ի նոնէ ոչ
իւրմէ, և կարծանեալ 'ի պաշտօն աստուածոց օտա-
րոտոց. յորմէ ոզիա որդի նորա անձնապահ եղև
զամենայն աւուրս իւր։ Մեծ նպաստ եղև ոզիայ
արքայի 'ի պատանեկութիւն անդ իւրում ունել առ-
ընթեր խորհրդական և վարդապետ իմաստուն և
երկիւղած զզաբարիա. ոչ զզաբարիա մարգարէ որ-
դի բարաքեայ որդւոյ ադդովայ, զի նա յետոյ է
ժամանակաւ. այլ զայլ ոմն, որ և նա մարգարէ էր.
թէպէտ չունիմք 'ի գիրս զմարգարէութիւն նորա,
որպէս և ոչ զայլոց բազմոց մարգարէից։ Բ. արե-
բաստութիւն մեծ է պատանեկաց ունել իմաստուն
և բարի դաստիարակ և առաջնորդ. բայց մանուկ
թագաւոր, որ յաղագս հաստակին կարօտ է հրա-
հանգութիւն, այլ յաղագս բարձրութիւն աստիճանին
դժուարանայ ընդունել զբնի իւր վարդապետ,
գանձ մեծ գտանէ եթէ գտցէ զայր հանձարեղ,
խոհեմ և բարեպաշտ. որ առանց բռնաբռնութեան՝
կարցի զնա միշտ հակամիտ յարդարութիւն. և առ

ռակաւ սակաւ քաղցրութիւն ի մտացուցեալ 'ի միտս նորա բարի բարի սկզբունս, պահեսցէ զնա հանապազ միացեալ 'ի բարեպաշտութիւն։ Յոյսի եղև զաքարիա առ ողիս. զորմէ ասէ գիրն. * Եւ խնդրեաց (ողիս) զնոր յաւուրս զաքարիայ իմաստնոյ երկիւղիս նոն ॥։ Բ. Հաց. Ի. 5։ Եւ զի իբրև թագաւոր խնդրեաց զփառս նոյ, վասն այնորիկ և ոճ փառաւորեաց զնա իբր թագաւոր՝ տալով նմա յաղթութիւն մեծամեծս։ * Յաւուրս նորա (ասէ գիրն) խնդրեաց նա զնոր. և յաջողեաց նմա նոր ॥։ Եւ ողիս և պատերազմեցաւ ընդ փղշտացիս, քակեաց հարթյատակ արար զպարիսպս և զամենայն ամրութիւնս գեթայ, յարիսայ, ազովտայ, որք 'ի բաց ընկեցեալ զլուծ թագաւորութենն յուդայ՝ ոչ ևս հարկս հարկանէին նոցա. և 'ի վիճակի ազովտայ 'ի պատեհագոյն տեղւոջ շինեաց քաղաք և ամրոց հզօր առ 'ի զուսպ ունել զազգն զայնոսիկ, որք ոչ երբեք գիտէին հանդարտիլ։

Օրացաւ և 'ի վերայ արաբացւոց և ամմնացւոց, և հարկատու կացոյց զնոսա թագաւորութենն յուդայ։ Սրամակարկատ արար զպարիսպս երուսաղէմի, զքակեալն յոյսաս արքայի իսրայէլի 'ի գերել նորա զամասիա զհայրն իւր, և ամրացոյց զներքին պարիսպս ահաւոր աշտարակօք։ Եւ զի առաւել ախորժական և սիրելի էին նմա եկամուտք՝ զոր առնոյր առանց ծանրանալոյ ժողովրդեան յիւրոց արքունի կալուածոց, քան զայն՝ որ գայր նմա 'ի հարկաց և 'ի տրոց ժողովրդեան, վասն այնորիկ 'ի մնտեսել և 'ի խնամել զթագաւորութենն՝ ոչ առնէր զանց՝ խնամ ունել և երկրագործութիւն։ Պահէր և անասուն բազում. և 'ի պէտս նոցա էտ փորել ջրհորս բազումս. շինեաց և աշտարակս 'ի պատսպարութիւն հովուաց և անասնանոց յանշէն անապատի անդ, ուր կային յաբոտս։ Եղեն նորա զօրք յոտին երեք հարիւր եօթն հազար և հինգ հարիւր. և զօրավարք քաջք և ընտիրք երկու հազար վեց հարիւր. զհանդէս

զօրուն առնէին առաջի յեկելի գպրապետի, և մա-
սեայ դատաւորի, և անանխայի փոխանակի աբ-
քայի, որ էր մի 'ի վերակացուաց տանն արքայի.
Երեքին սոքա էին արք զգաստք աչալուրջք և
հաւատարիմք 'ի չխաբել և 'ի չխաբիլ յանմիջական
պաշտօնէից։ Զ.յս ամենայն գունդք զօրաց յար-
քայէ առնուին զամենայն զէնս. գունդք զրահա-
ւորաց՝ զրահս, վահանս, սաղաւարտս, և սուր.
գունդք նիզակաւորաց նիզակս և գեղարդս. գունդք
աղեղնաւորաց՝ աղեղունս և նետս. մինչ նաև պար-
սաւորք 'ի նմանէ ունէին զպարսս 'ի քարանձգու-
թիւն։ Զ.բար յերուսաղէմ մեքենայս ձարտարագործս
ձգէլ 'ի բացեայ քարինս մեծամեծս. և գործիս ար-
ուեստակերտս՝ արձակել միանգամայն նետս բա-
զումս իբրև զտարափ։ Զ.ս զայսոսիկ ոչ պակէր 'ի
գործարանի լոկ առ 'ի ցոյց օտարաց, այլ եդ 'ի
վերայ աշտարակաց. և 'ի վերայ անկեանց պարս-
պաց. որպէս զի երևեսցի թէ երուսաղէմ էր յա-
րաժամ զինեալ կազմ և պատրաստ ընդդէմ յար-
ձակմանց։ Զ.յս ամենայն պատրաստութիւք նորա
և յաջողութիւք 'ի պատերազմունս և յայլ ամենայն
իրս՝ հռչակեցին զանուն նորա ցհեռաւոր տեղիս.
և աբանչելի՝ միանգամայն և ահաւոր էր ամենե-
ցուն, 'ի տեսանել անդ՝ զի ոչ օգնէր նմա, և զ-
բացուցանէր զնա յամենայնի։

Զ.յլ այն յաջողութիւք թէպէտ փառաւորեցին
զնա, բայց և վասն մեծ եղուն նմա. իբր ոչ եթէ
ձգեալ իցէն և զնա, զորօրինակ ձգեցին զհայր
նորա զամասիա յերկրպագութիւն կռոց, կամ յայլ
ամպարշտութիւնս վարուց, այլ բարձրացուցին զսիրտ
նորա, համարիլ թէ ամենայն ինչ օրէն իցէ նմա
իբրև թագաւորի. յորմէ յանդգնեցաւ միտել և 'ի
գործ՝ զոր քահանայից և եթ պահեալ էր ոչ։
Զ.մուտ 'ի սրբութիւնն, ուր չէր օրէն նմա մտա-
նել. և կամէր ծխել խունկս 'ի վերայ սեղանոյ
ողջակիզաց. որ և առաւել արգելեալ էր 'ի նմանէ
ոչ քահանայից։ Զայնժամ մեծ քահանայն ազարիա,
և ընդ նմա քահանայք նոն ութսուն՝ ամենեքեան

արք զօրաւորք և նախանձախնդիրք օրինաց, ելին արիաբար ընդդէմ արքայի, և ցուցին նմա՝ թէ այլ են իրաւունք տանջարին, և այլ թագաւորական իշխանութիւն. * Այլ է քո (ասեն) սղիտաս ծխել խունկս ոմն, եթէ արտաքս 'ի սրբութենէդ։ Արտամղեցաւ արքայ, և ոչ անտաց նոցա։ Այլ ՅԾ որոյ անչափ է ողորմութիւն՝ զթացեալ 'ի նա, կամեցաւ 'ի ձեռն վշտաց դարձուցանել զնա առ ինքն, զոր ուղիղ յաջողութեաց յաջիտակեցին 'ի նմանէ։ Օ ի այն ինչ ունելով 'ի ձեռին զբուրուառն՝ կամէր ծխել խունկս, եհար ՅՈ զորոտութիւն յերեսս նորա. զոր տեսեալ քահանայիցն՝ նոյնժամայն հանին զնա արտաքս 'ի տաճարէն. և նա ոչ ընդդէմ դարձաւ. քանզի և ինքն տեսեալ զՀարուած ձեռին ոմն՝ փութացաւ ելանել։

Այս այնուհետև մեկուսացաւ յառանձին տան որոշեալ 'ի հաղորդութիւն մարդկան՝ ըստ պատուիրելոյ յօրէնսն, զանտեսուի թագաւորութենն թողեալ 'ի ձեռս յովաթամայ որդւոյ իւրոյ. և ինքն նստաւ բորոտեալ մինչև յօր վախճանի իւրոյ ընդ ամն չորս՝ ըստ ձիշտ հաշուի ոմանց. մեռաւ 'ի նմին բորոտութիւն, և թաղեցաւ 'ի դաշտի մերձ 'ի գերեզմանս թագաւորաց, և ոչ 'ի գերեզմանի նոցա յաղագս բորոտութենն. թագաւորեալ ամս յիսուն և երկուս։ Արաւամբք գովեսցի խնամարհութիւն նորա և կամակար հպատակութիւն, որով յանձն էառ և տարաւ նեղութիւն իւրոյ, որ ապաքէն ծանր էր յոյժ առն թագաւորի. զի թէ ընդ ամն ինչ դտաւ ապստամբ 'ի ՅՈՆԵ ՅՈ իւրմէ, ընդ ամն չորս ապաշխարեաց։ Ա ոն որոյ ունիմք իրաւունս քաջայոյս լինել, թէ զորօրինակ թագաւորեաց երջանկութիւն յերկար ժամանակաւ աստ 'ի յերկրի, նոյնպէս այժմ թագաւորէ 'ի յաւէժական երանութիւն յերկինս։ Ա՝ՍՀ նորա եղև յամի արարչութեան աշխարհի 3418։

Զ. ՈՒ ժամանակաւ սորին թագաւորի սկսաւ մարդարէանալ մեծն 'ի տեսանողս Եսայի որդի ամովսայ. ոչ ամովսայ մարդարէի՝ որ ՅԻ էր 'ի փաքք

մարդարէից՝ այր յանուշան տոհմէ, այլ՝ այլու

կործանման մնալաբացուց, ատրուց, եգիպտացուց, եթովպացուց, և տիւրացուց. որք վաղ և անագան կատարեցան անվրէպ յայլ և այլ ժամանակս։ Կուշակէ և զտուէրումն աշխարհի 'ի վերջին դատաստանի։ Զզգ առնէ զինչուառութիւս երբայեցւոց, որք փոխանակ գնելոյ զլոյս իւրեանց յաւծ, և 'ի նա միայն ապաւինելոյ՝ ապաստան եղիցին յեգիպտոս, և անդր անցանիցեն։ Զաջալերէ զեզեկիա ընդդէմ սենեքերիմայ, և օգնական լինի նմա 'ի հիւանդութիւն նորա։ Զփոէ ասա և անդ 'ի բանս մարգարէութիւն իւրոյ ջերմ և եռանդնստ յորդորակս և խրախոյս առ ածՀ։ Լոյէ յանուանէ զեղեզեկիմ քեզեկեայ, և զկիւրոս բազում ժամանակաց յառաջ քան զծնանել նոցա յաշխարհ. և զեկուցանէ զհայրախնամ տնտեսութիւն միոյն, և զյաղթութիւնս երկրորդին. այլ առաւելապէս ընդարձակէ զբան մարգարէութիւնն 'ի վերայ կենաց Քրիստոսն մերոյ, և 'ի վերայ քրիստոնէութիւն նորս եկեղեցւոյ. վասն որոյ իրաւամբ կոչէն զնա 'ոչ հարք մարգարէ և աւետարանիչ, կամ աւետարանագիր մարգարէ։ Զյսչափ ծանօթութիւն զեսայեայ առ ժամս շատ լիցի. քանզի յընթացս պատմութեանց դարձեալ բազում անգամ լինիցի զնմանէ յիշատակութիւն։ Զսա յիշատակեսցուք և զայլս 'ի մարգարէից որք զայսու ժամանակաւ հանդիսացան մարգարէութիւն։

ԳԼ. ԺԲ.

Ովսէէ. Լ. մովս. Յովէլ. յերկոսասան մարգարէից, որք փոքր մարգարէք կոչին՝ յաղագս սակաւութեան մարգարէական գրոց նոցա, առ հաճախմամբք լրիոց մեծ մարգարէից գրառաւորաց։

Ովսէէ յայտնի ասէ 'ի գլուխս մարգարէութեանց իւրոց, թէ եղև բան տեառն առ նա յաւուրս ոզիայ, և յովաթամու, և աքազու, և եզեկիայ թագաւորացն յուդայ. և երկրորդին յերոբովամու որդւոյ յովասու արքայի իսրայէլի։ Այսպէս և ամենայն ասէ. թէ պատգամք իւր եղեն յաւուրս ոզիայ արքայի յուդայ, և յերոբովամու որդւոյ յովասու արքայի իսրայէլի, երկու ամենք յառաջ քան զգետնաշարժն։ Յաղագս յովելեայ չունիմք հաւատի նշան ինչ առ 'ի տալ նմա որոշ ժամանակ։ Այլեւ թէ եկայ նա առ մանասէիւ՝ եթէ հայէ սյուքք 'ի հանդամանս մարգարէութեանց նորա։ Այլոց այս չէ Հշգրիտ ասացոյց. զի մարթ էր նմա բազմաք յառաջ մարգարէանալ զայն, որ եղև ոչ բազմաք յետոյ զկնի մանասէի. սակայն երոնիմոս, օգոստինոս և Եպիփան գնեն զնա 'ի ժամանակս յայսոսիկ։ Իսկ վասն յոշիանու մարգարէի, զոր գտանեմք յիշատակեալ առ յերոբովամու երկրորդիւ Գ. Թագ. ԺԳ. 25. ուրոյն ունիմք ասել 'ի յաջորդ գլուխդ։

Ովսէէ որդի երեայ, կամ բէերեայ 'ի ցեղէն իսաքարայ ընկալաւ հրաման 'ի տեառնէ առնուլ կին հրապարակեալ պոռնիկ. յորմէ ծնցին նմա զաւակք օրինաւոր ամուսնութիւն, բայց վասն վատանուն մօրն՝ համարեսցին իբրև որդիք պոռնկութեան. սովին կամեցաւ ծած օրինակել զհանդերձեալ լինելիս, զոր բերանով ոմսեայ ունէր կանխաւ ազգ առնել։ Այլ՝ առ ովսէէ զկին հաշակաւոր 'ի պոռն-

կութեն՝ կոչեցեալ գոմերը գուստը գարեկայիմայ. զի որպէս ոչ 'ի հրամայելն արար իբրև որ, որ կարող է հրամայել իրս դժուարինս, և ըստ աշխարհի՝ հակառակս պատուոյ. նոյնպէս արար և մարգարէն՝ իբրև ծառայ հնազանդ և հաւատարիմ, մեծ պատիւ վարկանելով անձին հնազանդիլ այ նաև յիրս, որ յաչս մարդկան իբր անպատուելի ինչ երևեսցի։

Յամենայնութենէ անտի ծնաւ նմա որդի անդրանիկ, և ասաց ցնա որ կոչել զանուն նորա յեզրայել. կամեցեալ նովաւ նշանակել, թէ զորօրինակ զտունն աբաբու պատուհասեաց 'ի ձեռն յեհուայ վասն կռապաշտութեանց և այլոց անօրէնութեանց տանն այնորիկ, նմանապէս ընդ փոյթ հանդերձեալ է պատուհասել զկռապաշտութիւնս և զայլ ամպարշտութիւնս որդւոցն յեհուայ։ Երկրորդ զաւակ այնր ամուսնութեան եղև դուստր. որ ըստ հրամանին այ կոչեցաւ լօրաղուսմա, այն է Ողորմեալ. առ 'ի ցոյց թէ ոչ յեհ այնչափ ողորմութեան՝ զոր ողորմեցաւ Ժողովրդեան իսրայէլի, ոչ ևս գնասցէ ընդ նոսա իբրև հայր ողորմած. այլ իբրև արդար և անաչառ դատաւոր։ Հատեալ գոմերայ 'ի տաճէնէ զդուստր, յղացաւ և ծնաւ միւս ևս որդի. և ասաց նոր կոչել զանուն նորա լօամի. այն է՝ Ոչ Ժողովուրդ իմ. 'ի նշան թէ եկեսցէ ժամանակ, զի Ժողովուրդ իսրայէլի՝ ոչ ևս եղիցի Ժողովուրդ այ, անքաւ մնալով յաւանձին հայրական խնամից անտի, որով միշտ խնամարկեաց զնոսա։ Զկնի այսոցիկ երից զաւակաց կինն անամօթ ոչինչ օգտեալ 'ի նոր խրատուց առն, ապախտ արար զհաւատարմութիւն ամուսնական. և որ նախ քան զամուսնանալ օրինաց մարգարէին՝ էր լոկ պոռնիկ, յետ այնորիկ եղև շուն, հնացեալ առ արամբ իւրով։ Խնացեալ մարգարէին զանհաւատարմութիւն նորա՝ 'ի բաց արար զնա յիւրմէ, տուեալ նմա գիր ապահարզանի ըստ օրինաց։ Այլ զկնի ժամանակաց ասաց նոր ցմարգարէն՝ առնուլ զնա վերստին և մուծանել 'ի տուն իւր. և մոռա-

ցեալ զՀնան՝ սիրել զնա, որպէս այր սիրէ զկին իւր։ Հնազանդեցաւ մարգարէն և այսմ երկրորդ հրամանի ՝ն. առ զնա, և եհատ նմա վարձս, բայց սովին պայմանաւ՝ զի ոչ ևս պոռնկեսցի. այլև յօրինաւոր ամուսնական անկողնոյ 'ի բաց լիցի աւուրս բազումս պահելով ժուժկալութիւն։ Եւ այս յօրինակ, թէ որդիքն իսրայէլի ընդ ժամանակս բազումս եղեցին առանց Թագաւորի, առանց իշխանի, առանց պատարագայ, առանց սեղանոյ, առանց քահանայութեան, և առանց մարգարէի։ Զ.յԵտ այնորիկ դարձցին և միացին ընդ տանն դաւթի, և պաշտեսցեն զՏէր Հնմարտութեամբ և 'ի բարութիւնս նորա վայելեսցեն յաւուրս կատարածի։

Ովսէէ մարգարէացաւ ամն իբրև ութսուն. զի սկսաւ մարգարէանալ յաւուրս ոզիայ արքայի, և Եհաս մինչև ցեզեկիա արքայ. ուստի և մեռաւ իբր հարիւրամեան։ Մարգարէութիւնք նորա են խառն սպառնալեօք մեծամեծ թշուառութեց, և քաջալերութիւնք խոստմանց մեծամեծ բարեաց. առաջինքն յերկեցուցանել, երկրորդքն 'ի միութիւն. անցանելով ուրեք ուրեք ըստ հաստակ սովորութեան մարգարէից 'ի թագաւորաց առ մեսիայն, և 'ի հրէից առ ժողովուրդն քրիստոնէից։ Զ.յսպէս տայր նմա խօսիլ հոգին Ցր 'ի նուաստնել երկիւղիւ զամբարտաւանութիւն, և 'ի բառնալ յուսով զանցուսութիւն։ Արդութիւն եկեաց ովսէէ. յայտ է թէ և սրբութեամբ մեռաւ, բայց թէ որով մահուամբ՝ չէ յայտ. և թաղեցաւ յերկրի իւրում 'ի բեթլամիրի։

Զ.մովս էր հովիւ. զոր առ ՝ն 'ի հօտից խաշանց, և արար զնա մարգարէ. վասն այնորիկ 'ի բանս մարգարէութեանն նորա լի են այլաբանութիւնք առեալք 'ի դաշտական և 'ի հովուական իրաց։ Ակսաւ մարգարէանալ յաւուրս ոզիայ արքայի յուդայ, և յերոբովամայ երկրորդի՝ արքայի իսրայէլի, երկու ամօք յառաջ քան զդեմանաշարժն՝ որ սատանեցոյց զՀրէաստան յաւուրս ոզիայ։ Հազուամբ զայն

գետնաշարժ ասեն լեալ 'ի նմին աւուր և 'ի ժամու՝ յորում ոգիա մեռեցաւ 'ի տաճար ճեն ծիսել խուսկս, և բորոտեցաւ։ Այս կարծիս ժամանակագրական օրինաք ճիշտ քննեալ կաղմնոսի, ցուցանէ թէ բազմաք յառաջ քան զբորոտիլ ոգիայ եղև այն գետնաշարժ։ Արդ՝ ասէ, ոչ դնելով դատարկութիւն թագաւորական ամառոյ 'ի մէջ ամասիայ՝ և որդւոյ նորա ոգիայ, և եղեալ թէ, 'ի մեռանել հօրն՝ յաջորդեաց որդին, որպէս ցուցաւ 'ի նախընթաց գլուխն, առաջին ամ թագաւորութեան ոգիայ արքայի յուզայ՝ գայ անկանի 'ի հնգետասանեերորդ ամն թագաւորելոյ յերոբովամայ 'ի վերայ խոսայելի զկնի մահու հօր իւրոյ. ապա քսաներորդ հինգերորդ ամ ոգիայ, էր քառասներորդ առաջներորդ՝ և վերջին ամ յերոբովամայ. ապա ոգիա որ թագաւորեաց ամս երեսուն և ինն, եկեաց յետ մահու յերոբովամայ ամս չորեքտասան։ Արդ՝ եթէ գետնաշարժն եղև ոչ բազմաք յառաջ քան զմահ ոգիայ՝ եղև գէթ տասն ամաք յետոյ զկնի մեռանելոյ յերոբովամայ. ապա ոչ ճշմարտէր թէ ամավս սկսեալ մնրգարէտնալ երկու ամաք յառաջ քան զգետնաշարժն՝ իսկ մնրգարէացեալ առ կենդանութեամբ ոգիայ և յերոբովամայ։

Հազուստք սեսեալ զայս կնճիռն սնլուծանելի, առ փոքր մի խոտորին 'ի կարծեաց ասի, և ըզգետնաշարժն և զբորոտութիւնն դնեն լեալ 'ի միում ժամանակի. և զբորոտիլ ոգիայ դնեն 'ի քսաներորդ և հինգերորդ ամի թագաւորութեան նորա։ Այլ այնպէս առ 'ի տալ ժամանակ մնրգարէութեանն ոգիայ՝ որ չիցէ հակառակ 'որ գրոց, զպատիժ բորոտութեան յերկարաձգէն ցամս քսան և եօթն։ Այլ և սոքա յայլ ինն ժայռ ընդհարկանին. զի 'ի ժամանակի բորոտութեան ոգիայ, յոլովթամ որդի նորա վարէր զթագաւորական իշխանութիւն, որպէս տեսաք 'ի նախընթաց գլուխն. իսկ յոլովթամ՝ ըստ գրոյն սկսաւ թագաւորել ամաց քսան և հնգից. ապա բարձեալ զամս քսան և եօթն բորոտութեան հօրն, զկետ գայ թէ մնտակարարու-

թէ թագաւորութիւն տուաւ նմա երկու ամաք յառաջ քան զծնանիլ իւր յաշխարհ։

Եւ զիրն զգեստաշարժն և զբորոտութիւն ոչ միացուցանէ 'ի միում ամի. ապա և մեզ չէ պարտ միացուցանել։ Զա՛ զի ունիմք հիմն հաստատուն 'ի նոր զիրս, եթէ բազմաք յառաջ քան զբորոտութիւն ոգիայ եղև զգեստաշարժն այն։ Զասայի մարգարէն 'ի սկզբանէ մարգարէանալոյ ամենայն մինչև ցմահ փակելի և ցառաջին գերութիւնն խորայելի առ թագաւորն փաղասարաւ ասորեստանեայց արքային՝ զնէ ամն վեթասուն և հինգ. որպէս ցուցցուք յիւրում տեղւոջ։ Զ՚ամենս սկսաւ մարգարէանալ երկու ամաք յառաջ քան զգեստաշարժն. ապա այն գեստնաշարժ եղև վեթասուն և երեք ամաք յառաջ քան զմահ փակելի, և քան զառաջին գերութիւնն խորայելի առ թագաւորն փաղասարաւ. այսինքն է յութերորդ կամ յիններորդ ամի թագաւորութեան ոգիայ։ Զորժամ բորոտեցաւ ոգիա, յովաթամ որդի Նորա վարեաց զգործ թագաւորութեան, մինչև ցմահ հօրն. որպէս տեսաք 'ի վերջ անդր։ Զ՚սպա ոգիա եկաց բորոտեալ ոչ աւելի քան զամն չորս յառաջ քան զմահ իւր։ Զ՚ու թագաւորեաց ամն յիսուն և երկու. ապա բորոտեցաւ յամի քառասներորդի ինններորդի թագաւորութեան իւրոյ։ Զ՚այս հաշիւք քաղին 'ի բուն բանից նոր գրոց։ Զ՚դ՚մանրացուք անդրէն 'ի կարգ պատմութեան ամենայն մարգարէին։

Մարգարէութիւնք ամենայն 'ի զանազան ազգս հային, այլ առաւելապէս 'ի տասն ցեղս խորայելի. և 'ի նախագուշակել նորա զիւրաքանչիւր ազգի զիւր կողմանումն՝ առնէ իբրև զհրովարտակ հիմն յայտարարութեան 'ի կողմանէ նոն, ցուցանելով զվնասապարտութիւնս և զյանցանս նոցա. յորում 'ի կիր արկանէ առակաւոր ոճ՝ հիմն խօսից սեպհականն երբայական լեզուի.* 'Ի վերայ երից ամպարշտութեց, և 'ի վերայ չորից ոչ դարձայց։ Եւ իբրև ասել, թէ երից ամպարշտութեանց դամասկոսի, կամ՝ եդոմայ և այլոց ժողովրդոց զորոց խօսի

ասա, ներկ ՝ ՝ ՝ ՝ . իսկ չորրորդին ոչ . ուր նոքա ա-
մենեքեան ոչ եթէ երից կամ չորից և եթէ , այլ
բիւրապատիկ անօրէնութեաց էին պարտաւորք՝ լի
գոլով ամենայն ամպարշտութիւք . այլ զորոշ թիւն
դնէ փոխանակ անորոշ թուոյ բազմութեան . ուստի
տեսութիւն բանին ըստ ՝ ՝ ՝ այս է , թէ չարիք
նոցա բազմացեալ էին , և չափ անօրէնութեաց լցեալ .
արդ եհաս ժամ՝ զի ածիցէ ՝ ՝ ՝ ՝ ՝ ՝ ՝ զար-
ժանահաս պատիժ մեղաց նոցա : Պատճառս այսր
յայտարարութեան՝ գտանեմք ասա ՝ ՝ բանս ամենայն
բազում ծանօթութիւնս պատմականս վասն այնր
ժամանակի , որք յայլ պատմութիւնս ՝ ՝ գրոց չէին
նշանակեալ ՝ ՝ տեղիս իւրեանց : Գտանեմք , զի
բաց յայլոց անգթութենէ՝ զոր գործեաց ազգաչէ
արքայ ասորւոց ՝ ՝ վերայ խսրայէլացւոց բնակչացն
գաղաւադու , կտրեաց զլլիս նոցա սղոցեաւք երկա-
թեաւք . ըստ կանխաւ գուշակելոյ Եղիսէի , մինչ
յայտնեաց նոսա թէ հանգերձեալ է թագաւորել
՝ ՝ վերայ ասորւոց : Գտանեմք , զի փղշտացիք որոց
գլխաւոր քաղաք է գազա , * գերեցին զգերութիւն
սողոմոնի ||. կամ որպէս ընթեռնու երբայեցին՝
* զգերութիւն խաղաղական || . իսկ լատինն՝ * ան-
ցուցին զգերութիւն կատարեալ || .

Որ իցէ հարազատ տեսութիւն այսր բանի ,
դժուարին է գուշակել : Մանաւ հայեցեալ ՝ ՝ զա-
նազան թարգմանութիւնս , և կամեցեալ ՝ ՝ մի տե-
սութիւն միացուցանել զնոսա՝ ըստ ՝ ՝ ՝ ՝ ՝ ՝ ՝ այսպէս
մեկնեն : Դաւիթ ՝ ՝ վերջին ժամանակս իւր մղեաց
մարտ բազում ընդդէմ՝ փղշտացւոց , որք նուա-
ՀՀեալք միանգամ ՝ ՝ նմանէ՝ միշտ զկեանս էին ապրս-
տամբութիւն : Արդ՝ կարի հաւանելի է , թէ յայն
պատերազմունս գերեցան յերկուց կողմանց , որ
սովորական ինչ է պատերազմաց . և սողոմոն , որ
էր հրամանատու գրեթէ ամենայն աղգաց շուրջա-
նակի , ՝ ՝ լինել առ նովաւ հանրական խաղաղութիւն՝
հրամայեալ իցէ փղշտացւոց դարձուցանել զգե-
ութեան ՝ ՝ ժողովրդենէ իւրմէ . և նոքաւ հաւանեալ
իցեն և խոստացեալ . և այնպէս զօրութիւն այնր

համակամ դաշնադրութեան՝ կատարեցաւ և վերջ եղև գերութեան։ Այլ փղշտացիք գուցէ փոխանակ արձակելոյ զնոսա, գաղտաբար վաճառեցին զնոսա եգիպտացեաց. որոց հեռի գոլով 'ի հրեաստանէ, և ունելով զանազան քաղաքս մեկուսի 'ի հասարակաց ճանապարհէ, դիւրաւ պահէին զնոսա՝ զի մի փախիցեն. և ըստ բնաբոյս թշնամուն զոր ունէին առ իսրայէլացիս, իբրև արծաթագին գերիս 'ի դժնդակ աշխատութիւս տառապեցուցանէին զերկելիսն։ Այդ՝ ասի. * գերութեի սողոմոնի՝ զի էին նորա ժողովուրդ և * գերութեի խաղաղական, կամ կատարեալ՝, զի 'ի լինել հաշտութեի՝ բարձաւ թշնամութիւն, և վերջ եղև գերութեան. և թէ՝ անցուցին զգերութիւն յեգիպտոս, զի 'ի գազայ քաղաքէ և յայլոց քաղաքաց իբրեանց վաճառեցին զնոսա եգիպտացեաց։ Այլ թէ այս էր ամենայաշտութիւն գազայ, յայտ է թէ էր անօրէնութեի մեծ։

Այնոյն անօրէնութեի գատանէմք և զծուբացիս, կամ որ նոյն է՝ զտիւբացիս։ Այլ զանազի գուցէ 'ի բազմոպատիկ հարուածոց, զոր ազգէլ և որդիքն ազերայ թագաւորքն ասորւոց գործեցին յերկրին իսրայէլի, բազումք 'ի նոցանէ փախուցեալ 'ի ահմանակից երկիր տիւրացւոց առ 'ի գտանել անձանց դարման կենաց, վաճառեալ իցեն զանձինս 'ի ստրկութեի տիւրացւոց, որ սովորական էր ընդ այն ժամանակս, այսու պայմանաւ՝ զի ծառայեսցեն նոցա մինչ ցդադարիլ պատերազմին ասորւոց. ապա արձակեսցին խաղաղութիւն։ Այդ՝ կարի հաւանելի է, թէ յորժամ խաղաղացաւ 'ի պատերազմաց երկիրն իսրայէլի, որով և լրացաւ ժամանակութիւն ստրկութեն, տիւրացիք ըստ իւրեանց անյագ ագահութեի, փոխանակ արձակելոյ՝ մուծին զնոսա 'ի նաւս, և տարեալ վաճառեցին եգիպտացեաց արանց խստասրտաց. և այնուհետև ոչ ևս արձակեցան։ Այլ թէ այս էր անօրէնութիւնն ծուրայ, մեծ ևս էր քան զանօրէնութեի գազայ. զի ոչ յիշեցին զուխտն մշանջենաւոր եղբայրութեի և բարեկամութեի սողոմոնի ընդ քիրամայ արքայէն ծու-

բայ և ընդ Ժողովրդեան երկոցունց։ Լ.այս է՝ զոր ասէ գիրն. * Վասնանակ զի արգելին զգերութիւն սոդոմանի յերդմամ. և ոչ յիշեցին զուխտ եղբարց ||. ամենայն. ՝՝. 9։

Գտանեմք, զի եդովմայեցիք թէպէտ հարկատու եբրայեցւոց, բայց և 'ի խաղաղութիւն ոչ 'ի բաց արարին 'ի սրտից իւրեանց զհնացեալ ոխս, այլ միշտ և յամենայնի պատճառս յուզէին հալածել և ապականել սրով զնոսա. և այնչափ մեծ էր այս անօրէնութիւն նոցա, որչափ զի ոչ ընդդէմ օտարաց, այլ ընդդէմ եղբարց իւրեանց ժանտանային, գոլով նոցա որդիք երկուց եղբարց Եսաւայ և Յակոբայ։ Գտանեմք, զի ամենայնիք 'ի պատերազմունս զոր առնէին յերկրին գաղաադու, առ ընդարձակելոյ զսահմանս իւրեանց՝ յայն գաղանային կատաղութիւն մխեցան, զի և զդիս գաղաադացւոց հերձուին, որպէս արար և գաղանամիտն ազայէլ։ Գտանեմք, զի մովաբացիք 'ի միում պատերազմի, առեալ զքաղաքս ինչ յեդովմայեցւոց իւրեանց սահմանակցաց, յայն ամպարշտութիւն հասին, մինչ ընդդէմ մեռելոց ևս կատաղել. զի հանեալ 'ի գերեզմանաց զոսկերս թագաւորաց եդովմայեցւոց՝ 'ի հուր այրեցին և 'ի մխիր դարձուցին։ Լ.այլ թէ այք էին այն թագաւորք, և թէ երբ, և յինչ պատճառս եղև այն պատերազմ 'ի մէջ նոցա, բազումք 'ի խնդիր եղեն գտանել, այլ հաւաստի գտին և ոչինչ։

Օ յուդայէ և զիսրայէլէ գտանեմք ինչ ինչ 'ի բանից ամենայն նշանակեալ 'ի գիրս մեծացորդաց և թագաւորաց. զկռապաշտութիւնսն, զյաճախ յանցմունս զօրինօք և զհրամանօք նոն. այլ առաւելապէս ընդդէմ իսրայէլի առնէ ամենայն կշտամբանս ցաւագինս վասն ապերախտութեան նոցա և խստասրտութեան, որք ոչ բարերարութիւնք, և ոչ հարուածովք կասեին 'ի չարեաց, կամ գառնային առ նոր նոճ իւրեանց. յանդիմանէ զանպատկառ և զանսանձ անառակութիւն նոցա. զբռնութիւն և զանիրաւութիւն դատաւորաց նոցա, որք արծաթոյ

վանձառէին զիրաւունս և զարդարութիւն. զհարբս տահարութիւն աղքատաց, զկոփել զնոսա և կոխել ընդ ոտիւք իւրև զհող երկրի։

Այս են՝ ասէ մարգարէն՝ մեղք և անօրէնութիւնք, վասն որոյ կործանեսցին ջնջեսցին այս նշանակեալ քաղաքք, և գաւառք, և թագաւորութիւնք։ Այսմ եղեն նոքա, զի այս յայտարարութիւնք ամենասայ՝ որպէս և այլոց մարգարէից՝ հասանիցեն առ մեզ. զի թէ երբէք անցանիցէ ընդ միտս մեր տրրտունջ զնմանէ, յորժամ յօտար բռնակալութեաց նեղութիւնս և տառապանս կրիցեմք, զիւրաւ կարասցուք 'ի միտ առնուլ զպատճառն, որոյ վասն հարկանիմք և 'ի պարտութիւն մատնիմք։ Այսպա յաւելու ըստ օրինակի այլոց մարգարէից՝ քաղցր բայց աղգողական յորդորակս ոչ միայն առ ժողովուրդ այնր ժամանակի, այլև առ մեզ, և առ յաջորդս մեր մինչև ցկատարած աշխարհի, փոխել զվարս և զգնացս, և ապաշխարել. որպէս զի հաշտեսցի նոքա, և բառնայցէ զթուութեամբ զդաւազանն հարուածոց։

Զմովսէ 'ի մարգարէութիւնս իւր պատմէ և տեսիլս, զոր եցոյց նմա նոքա. որով իբր նիւթական իրաք առաւել տպացուցանէր 'ի միտս ժողովրդեան զմարգարէական պատգամս իւր։ Եցոյց նմա ծրնունդ բազմութեան մարախոյ՝ ուտել և սպառել զխոտ երկրի. և ասաց ցնա թէ այնպէս սպառեսցեն օտարք զերկիր իսրայէլի։ Եցոյց և գործի հաւորսաց որսալ զթռչունս, և ասաց թէ նոյնօրինակ ըմբռնեսցին որդիքն իսրայէլի 'ի ընուլ զչափ ամպարշտութիւն իւրեանց։ Եցոյց և որմնագիր 'ի վերայ պարսպի, որ ունէր 'ի ձեռին իւրում ծեփիչ որմնագրաց. և ասաց ցնա թէ ընկենուցու զծեփիչն 'ի մէջ ժողովրդեան իսրայէլի, և ոչ ևս յաւելուցու նորոգել զկործանեալն նորա. և յարիցէ 'ի վերայ տանն յերոբովամայ սրով։ Եցոյց և զոր նստեալ 'ի վերայ սեզանոյ. և ըստ հրամանի նոր 'ի բաղխել նորա զսեզանն՝ շարժեցան դրանդիք. և ասացաւ նմա թէ 'ի մնտալուտ պատուհասէ 'ի վե-

բայ Ժողովրդեան խորհրդէն՝ ոչ եւս լինելոյ զերծումն։

Ի քարոզել ամենայն զայսոսիկ ի բեթել, ամենայն քուրմ երինջոյն բեթելայ մնալոյ ի կատարզութիւն ընդդէմ նորա. երկուցեալ զի թէ ի քարոզութիւն նորա դառնայցէ Ժողովուրդն առ ճշմարիտն ած, խորտակեսցեն զերինջն, և հատցի ամենայն յոյս շահի իւրոյ, զոր շահէր ի սպասաւորելոյ անկենդան դրօշելոյն։ Այսն որոյ չարայաշաղ մխանօք հետամուտ էր հանապազ բանս ինչ որսալ ի բերանոյ մարգարէին անմիջապէս ընդդէմ անձին արքայի, զի ունիցի ինչ ամբաստանել զնմանէ։ Այլ զի լեզուք մարգարէից էն ի ձեռին ոչ, դնէ ած երբեմն ի բերան նոցա ի հրապարակաւոր քարոզութեան նոցա ճշմարտութիւն ինչ ասել, զոր լոկ ըստ մարդկային խոհեմութեան խորհելով՝ ոչ արդեօք ասէին։ Այսպէս մարգարէն, թէ յայանեաց նմա որ, թէ ի վերայ տանն յերոբովամայ՝ որ յայնժամ թագաւորէր, յարիցէ սրով։ Օ այս բան առեալ ամենայն ի բերանոյ մարգարէին, և յաւելուածս եւս արարեալ ի վերայ՝ որպէս սովորութիւն է զրպարտողաց, առաքեաց վաղվաղակի ի սամարիա առ յերոբովամ արքայ, ասել ցնա, թէ ամենայն գրգռէ զժողովուրդն յապստամբութիւն ընդդէմ քո արքայ. ինքն ապստամբ է, և նասի ի թագաւորութիւն քում, և խօսի բանս զոր ոչ կարէ տանել երկիրս. զի ասէ թէ յերոբովամ սրով վախճանեսցի. և իսրայէլ գերեալով գերեսցի յերկիր օտար։ Այսուհետև էր թէ ասացեալ իցէ ամենայն վասն անձին յերոբովամայ, թէ սրով սպանցի. այլ թէ ի վերայ տան նորա յարիցէ որ սրով. որ և կատարեցաւ ի վերայ զաքարիայ որդւոյ նորա. զոր տեսցուք ստորև սրով խողխողեալ յիւրոց առանց։ Այլ որ չարամտութիւն ամբաստանել, ոչ խնդրէ պատմել զճշմարտութիւն. այլ խնդրէ պատմել զայն, որ ազդողագոյն է ի վառել զբարկութիւն։

Եւ զինչ ներգործութիւն արար ի սիրտ արքայի այս ամբաստանութիւն, չէ յայտ. բայց չէր

դժուարին յերրորդմայ Ճանաչել, թէ յինչ խմբոյ իցեն քուրմք կռոց։ Ասաջուստ ամբաստանութիւնք կորուսանելին յատենի զամենայն հաւատարմութիւն, եթէ ատենակալք արդար դիտողութիւն զնեին զՀանգամանս ամբաստանողաց։ Երբեմ թէ յերրորդամ ոչինչ խոտորեցաւ յամբաստանութիւնն անտի. զի ամենայն իրաք զհետ սնդեալ էր, կամ խոսաւ լռեցուցանել զմարգարէն, և կամ հեռացուցանել զնա անտի, ոչ եցոյց նման հրամանն ինչ իբր յարքայէ առաքեալ. այլ ինքն յիւրմէ տասց ցամենս տեղի տալ անտի, և գնալ յերկիրն յուզայ, և անդ 'ի ձեռն արուեստի մարգարէութիւն գտանել զդարմանն կենաց իւրոց։ Ասէ 'ի բեթել մի ևս յաւելուցու մարգարէանալ. զի այս է ասել տեղի սրբութիւն թագաւորի, ուր գայ արքայ պաշտօն մատուցանել երկնչոյն, որ է պահպանիչ թագաւորութիւն, վասն որոյ և տուն ասպաւէնի թագաւորութիւն իսրայէլի։ Կարծէր ամենայն, թէ և ամենեքեան իցէ մարգարէ նման ինքեան և այլոց կռապարիշտ մարգարէից. որք իբր արհեստ ինչ ունէին զմարգարէութիւնն 'ի գտանել նոցա դարմանն կենաց. զոր վասն այնորիկ հարք որդւոց աւանդէին, ուսուցանելով նոցա ստել անսայթաք, խորամանկութիւն հոմանուն բանս 'ի կիր արկանելով 'ի պատասխանիս, որպէս զի զինչ և դիպեսցի, ունիցին ասել՝ թէ զայն մարգարէացան, այլ լսողք չէն քարեաք խմացեալ զպատգամն իւրեանց։ Ապա պատասխանի նման ամենք, թէ ոչ է ինքն 'ի սակի այնց մարգարէից, որք իբրև զարհեստ ինչ որդի 'ի հօրէ ուսանին զմարգարէանալ. * Ասա ասէ՝ ոչ մարգարէ էի. և ոչ որդի մարգարէի ||. զի 'ի հօրէ ուսանիցիմ զմարգարէանալ. * այլ հովիւ էի, և թութքաղէի. և առ զիս Տէր 'ի հօտից. և ասէ ցիս Տէր, գնա դու և մարգարէաց 'ի վերայ ժողովրդեան իսրայէլի ||։ Ասէ դարձուցեալ զքան իւր առ ամենեսիս՝ ասէ. Ասէ դու ամենեսիս, որ արգելուս զիս չմարգարէանալ 'ի վերայ իսրայէլի, լուր զոր ասեմ յանուն Տեառն Յիսուսի. զինչ քո պոռնիկ

կեսցի, և պոռնկութեան նորա վասանուն արասցէ զտուն քո առաջի ամենայն ժողովրդեան քաղաքիդ. ուստերքդ քո և դստերքդ քո սրով անկցին. և ինչք քո և ստացուածք յափշտակեսցին. և երկիր քո լաւաւաժին բաժանեսցի 'ի մէջ թշնամեաց. և դու մեռցիս յերկրի անթլփատից. և իսրայէլ գերեալով գերեսցի յերկրէ իւրմէ։

Այս գերութեան իսրայէլի կատարեցաւ անվրէպ ըստ բանի մարգարէին. որպէս ունիմք տեսանել զկնի յընթացս պատմութեանցն՝ զոր գրոց։ Մանապէս և մարգարէութիւն որ վասն տանն ամենայնի քրմին հաւաստի է՝ թէ եղ 'ի գլուխս անվրէպ. թէպէտ չիք որոշ նշանակեալ 'ի գիրս։ Զայն զի պատգամք ոչն զհանդերձելոց այնպէս ստոյգ էն, որպէս այն՝ զոր ընթեռնումք զանցելոց իրաց 'ի պատմութիւնս։ Մինչև զմարգարէութիւնս իւր գլխաւորի՝ նախապատմելով զերջանկութեան ժողովրդեան զկնի գալըստեան մեսիային. ուր յայտնի խօսի զհաւատացելոց և կեղեցւոյն քրիստոսի։ Իսկ թէ որով մահուամբ կնքեաց զկեանս իւր՝ չունիմք 'ի գրոց. բայց հին աւանդութիւն է հարց, թէ ընկալեալ նորա մահացու վերս յորդւոյ ամասիայ քրմի, թերևս սակս յայտնի 'ի դէմս նորա գուշակելոյ զթշնամութիւնս որ հանդերձեալ էր հասանել 'ի վերայ տանն նորա, խոյս ետ մարգարէն յերկիրն յուդայ 'ի թեկուա 'ի հայրենի քաղաք իւր բժշկիլ. այլ անբուժելի գոլով վերացն զոր վերաւորեցաւ 'ի բերել վասն փառաց նոն ՝ այ, մեռաւ անդ, ընկալեալ 'ի նոնէ զպատկ մարտիրոսութիւն։

Զաղագս յովելայ որդւոյ բաթուէլի, ինչ ոչ գիտեմք. զի ոչ ինքն խօսի ինչ զանձնէ 'ի մարգարէութիւնս իւր, և ոչ յայլ տեղիս նոր գրոց գտանեմք յիշատակութիւն ինչ զնմանէ։ Մարգարէութիւք նորա ուղղեալ են միայն առ երկու ցեղս բենիամինի և յուդայի. վասն զի կամ մարգարէացաւ յորժամ այլ ցեղք իսրայէլի էին յասորեստան 'ի գերութիւն, և կամ զի ոչ առաքեցաւ առ իսրայէլացիս. և յերկրին յուդայ և եթ քարոզեաց։ Ամ-

վանդակ մարդարէութեան նորա է անընդհատ լինի յորդոր և կոչումն յապաշխարութեան, առ ի ցածուցանել զբարտմտութեան բարկութեան ոգի. որ պատրաստեալ է սրով քաղդէացւոց, և այլովք պէսպէս հարուածովք հասանել ի վերայ, և կորուսանել զնոսա. և թէ ի վերջին աւուր աշխարհի գայցէ ոգի դատել զաշխարհ ի ձորն յոսափատու։ Լրևի թէ իւրով բնական մահուամբ ննջեաց խաղաղութիւն ի ոգի. զի չիք ինչ հաստատուն աւանդութիւն վասն տարազու մահու նորա։

ԳԼ. ԺԳ.

Յովհան մարգարէ։

Յովհան որդի ամենեայ, ծննդեամբ ի գեթայ. ոչ ի գէթ քաղաքէ որ յերկրին փղշտացւոց, այլ՝ որ յերկրին զաբուղոնի գէթ քաղաքայ կոչեցեալ, վասն որոյ և էր ի ցեղէն զաբուղոնի, և ոչ փղշտացի։ Լոյս ծանօթութեան զոր ինքն տայ զանձնէ, միացեալ ընդ այնմ զոր ընդհանրութեամբ գնմանէ ի յորբորդ գիրս Թագաւորաց, ցուցանէ թէ չէ հաւատի կարծիք հրեից, որում զկնոջ չքան և ոմանք ի քրիստոնեայ մատենագրաց, թէ յովհան իցէ որդի կնոջ այրոյ սարեփթացւոյն, զոր յարոյց եղիա. և թէ հայր նորա էր աբդիու հաղարապետ աքաաբու։ Անհաղանութեան անուանց և հայրենեաց, այլև բնական և սովորական հասակ ցուցանեն՝ թէ յովհան և որդի կնոջն սարեփթացւոյ ոչ են նոյն։ Լուազումք բազում ինչ գրեցին յաղագս այսր մարգարէի. այլ չէ յայտ՝ թէ յորոց աղբերաց առին զգրեալսն. նմին իրի զանց արարաք ըզնոքաք։ Լոկ ինքն յովհան կամ լոկ զմարգարէութեան որ վասն նինուէ քաղաքին գրեաց. և կամ՝

եթէ ինչ գրեալ նորա և զայլ բանս, ոչ հասին 'ի յաջորդ դարս ամբողջ ամենայն մարգարէութիւնք նորա։ Լ.աց 'ի գրաւոր մարգարէութիւն ասասի նորա, ունիմք 'ի գիրս յաջորդաց. ծ։ 25. (որպէս կանխաւ նշանակեցաք,) թէ մարգարէացաւ յերոբոամայ երկրորդի յաջողութիւն պաւերազմի, որոյ անդրէն յինքն ընկրկեաց զերկիրն որ 'ի յեմանայ ձգի մինչև 'ի ծովն անապատի, զոր նախնիք նորա կորուսին. յորմէ խմանամք թէ յովնան առ սովին թագաւորաւ էր 'ի հանդէս։ Լ.ու և ս գտանեմք 'ի գիրս տասներիթայ մարգարէացեալ յովնանու զկործանումն նինուէի, ոչ զայն միայն՝ որ էր ընդ պայմանաւ՝ եթէ ոչ ապաշխարեսցէն, այլ յետ այնորիկ նաև զկատարեալ կործանումն նորա, վասն վերստին դառնալոյ նոցա 'ի նախկին ամ. պարշտութիւն իւրեանց. ոոբ. ծ։ 6։

Յոնիան էր մի 'ի նոցանց մարգարէից, այլ քանզի և 'ի նոսա երևին երբեմն ստուերք մարդ կորէն տակուրութիւն, 'ի յոնիան թէպէտ և նա՝ երևեցաւ մնասի իմն պատուասիրութիւն։ Լ.ՆՇ պատուիրեաց նմա երթալ քարոզել 'ի նինուէ թագաւորեալ քաղաք ասորեստանեայց, մեծ, հոյակապ, մարգաշատ, այլ լցեալ պղծութիւն և ամենայն ամպարշտութեամբ։ Լ.սաց նմա 'ի սիրելն քարոզութիւն իւրոյ բազում անգամ կրկնել զայս բան. "Լ.յլ և ս երեք (կամ՝ ըստ այլ թարգմանութեանց քառասուն) աւուրք, և նինուէ կործանեսցի"։ և այնպէս ասվին սահակու սպառնալեաք կոչել յապաշխարութիւն զաշխարհս ժողով բազմութիւն քնակչացն։ Գ.իտեր յոնիան՝ թէ քանի մեծ էն ողորմութիւն նոն, եթէ սրչափ գթած է և ներող՝ յորժամ անկեղծ ապաշխարութիւն խընդրեն թողութիւն 'ի նմանէ. խորհեցաւ 'ի սրտի իւրում, թէ ժողովուրդ նինուէի 'ի լսել զայն զարհուրելի սպառնալիս, դառնայցեն ապաշխարութիւն առ ամ, և ընկալցին 'ի նմանէ զթողութիւն մեղայ, որոյ և մարգարէութիւն իւր 'ի դերև ելանիցէ. և ինքն իբր մնոտիապատիր ընդվայրաբոս երևեալ առաջի նոցա՝ կորուսանիցէ զպատիւ ան.

ձին, կամ զ ուցէ և յերբայեցւոց քարկոծեսցի իբրև սուտ մարգարէ։

Ա.Յս սէր պատուոյ այնչափ զօրացաւ 'ի նմա, մինչև հաստատել 'ի մտի ելանել մեկնիլ յերկրէն խորայելի, և փախչել անկանել յերկիր հեթանոսաց, կարծելով թէ անդ ոչ ևս խօսեսցի ընդ նմա ՏԾ։ Ա.Յսպիսի խորհրդով եկն 'ի յոտպէ՝ մտանել յառաջին նաւն, զոր գտանիցէ 'ի նաւահանգստի անդ երթալ ուր և իցէ՝ միայն թէ ելցէ յերկրէն հրէաստանի և մի հարկեսցի երթալ անտի 'ի նի. նուէ յոր ուներ գնալ ցամաքաւ։ Ա.գիտ անդ նաւ մի պատրաստ երթալ 'ի Թարշիշ. խօսեցաւ ընդ նաւապետին, եւ կանխիկ զվարձս նաւուն, և եմուտ 'ի նա երթալ 'ի Թարշիս։ Ա.յլ ուստայն էն խորհուրդք մարդկան՝ յորժամ խորհին ընդդէմ կամացն ՅՅ. ՏԾ կամէր՝ զի երթիցէ 'ի նինուէ, և ոչ 'ի Թարշիս։ Ա.յն ինչ արձակեցաւ նաւն 'ի նաւահանգստէ անտի, ահա եղ հողմ սաստիկ, և յա ղոյց մրրիկ մեծ 'ի ծովուն, մինչև 'ի յէտին վտանգ խորտակման անկանիլ նաւուն. և թէպէտ ընկեցին 'ի ծով զկարասին որ էր 'ի նաւին, զի թեթևացուսցին, այլ ոչինչ օգտեցան. վասն զի ծովն ևս քան զևս սաստկանայր։ Ա.մենայն նաւավարք 'ի տագնապ առաջիկայ վտանգին ըմբռնեալք՝ փութային զամենայն հնարս 'ի վար արկանել 'ի զերծուցանել զնաւն և զանձինս. և նաւորդք առ հասարակ աղաղակէին՝ ուրուս դնէին առ իւրաքանչիւր աստուածս իւրեանց. մի միայն յոմանս կամ յահէ ծովուն՝ զի մի տեսցէ զամենի ալիս. և կամ 'ի ներքին սոգոտանաց սրտին, թէ արդարև ինքն իցէ պատճառ այն ամենայն թշուառութեց, էջ 'ի խորշ մի նաւին, և 'ի խորին տրտմութի ընկղմեալ՝ ննջէր անդ և խորդայր։ Ցեսեալ զնա նաւապետին, մինչ ասա անդ շրջէր զնոսա՝ մինչ իցէ՞ ուրեք վտանգեալ, զարթոյց յանդիմանելով, թէ ոչ է ժամ ննջելոյ. այլ որպէս այլք, նոյնպէս և նա օգնեսցէ գ՚նոսա աղօթիւք. * զի՞նչ է այդ ասէ՝ զի ննջես և խորդաս. արի կարդա զքո՝ ՏԾ քո,

թերևս ապրեցուսցէ զմեզ ՅԾ և մի կորիցուք ։

Յետ այսր ամենայնի տեսեալ նաւավարոց, զի ալէկոծութիւն այն անցանէր զանցանէր քան զսովորական ընթացս բնութեան, խմացան կամ գէթ կասծակ կալան՝ թէ իցէ 'ի պատիժ ուրուք 'ի նոցանէ որք կան 'ի նաւի անդ։ Ասն այնորիկ միաբանեալ՝ արկին վիճակս զտանել զմեղապարսն։ Ի՞նչ թոյլ տայ երբեմն միամտական գործողութիւն, ևս և հեթանոսական մտապաշտութիւն՝ հասանել վախճանի իւրոյ, անհաս իմաստութիւն իւրով զտխմարութիւն և զմեղս այլոց ծառայեցուցեալ իւրոց կամաց կատարման։ Ի՞նչ վիճակն յոչինանու. յատեան կոչեցին զնա. հարցին և ասեն. պատմեա մեզ, վասն ո՞ր են չարիքս այս մեզ, զի՞նչ արուեստ է քո, ուստի՞ դաս, կամ յո՞ երթաս, յորմէ՞ աշխարհէ ես, կամ յորմէ՞ ժողովրդենէ։ Ի՞նչ պատասխանի մարդ արէն, ծառայ նոցն եմ ես, և զնո՞ր երկնից պաշտեմ, որ արար զծով և զցամաք. և ապա ես առաջի նոցա համար զանձնէ զոր ինչ արար. յորմէ իմացեալ արանցն՝ եթէ յերեսաց նոցն այ իւրոյ փախուցեալ է՝ առ չհնազանդիլ նմա, զահի հարան յոյժ ամենեքեան, թէ զնարդ իշխեաց առնել զայն. զի՞նչ գործեցեր ասեն զայդ։ Ի՞նչ ինքեանք ոչ իշխելով սահմանել ինչ վասն նորա, զնա ինքն կացուցին դատաւոր և վճռատու 'ի վերայ անձին, զի՞նչ արասցուք քեզ ասեն, զի դադարեսցէ ծովս 'ի մէնք։ Ի՞նչ պատասխանի մարդ արէն, և ասէ. գիտեմ ես, եթէ վասն իմ է մրրիկս այս մեծ 'ի վերայ ձեր. արդ՝ առէք և ընկեցէք զիս 'ի ծովդ. և դադարեսցէ 'ի ձէնք ծովդ։

Ի՞նչ նոյն հետայն կորուսանել զայրն՝ որ չէր ինչ նոցա մեղուցեալ, ծանր էր. վասն որոյ յառաջ քան զդործադրութիւն վճռոյն՝ ջանացան զամենայն հնարս հնարել, զի թէ մարթի ինչ իցէ, առանց կորուսանելոյ զայրն՝ ձգեսցեն զնաւն ուրեք յերեսս ծովու 'ի ցամաք։ Ի՞այց 'ի զուր. զի յո՞ր կողմն և ջանային դարձուցանել զնաւն, լեռնայեալ ալիք ջուրցն ընդ առաջ։ Եղեալ՝ յետս կոյս վա-

բէին գնաւն և վանդէին։ Յայնժամ ասա յամենայն մարդկօրէն հնարից հատեալ զյոյս իւրեանց, առին զյոմնան, և ամենաձեալ զձայն յերկինս 'ի վեր՝ աղաղակեցին առ նոր ասելով, մի հմտարեսցիս նոր մեզ 'ի մեղս զմահ առնս այսորիկ. ոչ առնեմք մեք զայս դմա առ ատելութեան, զի չէ ինչ մեղուցեալ մեզ. այլ գու նոր ամենակալ այսպէս կամեցար և արարեր։ Օ այս ասացեալ ընկեցին զմարգարէն. և հաղիւ թէ հասեալ էր նա 'ի ծովն, առ ժամայն դադարեաց հողմ, և խաղաղացաւ ծովն 'ի խռովութէ։ Օ այն տեսեալ նաւավարաց, երկեան երկիւղ մեծ ամենեքեան 'ի նոնէ, և նոյն ժամայն մնտուցին նմա զոհս. և ուխտեցին յետոյ առնել այլ ևս զոհս և ողջակէզս բազումս նոնս ոյ քարձրելոյն։ Ի նմին ժամու՝ յորում ընկեցաւ յոյնան 'ի նաւէ 'ի ծով անդր, առաքեաց նոնս վիշապ ձուկն մի պատրաստական, որոյ բացեալ զհագին ժանիս իւր՝ 'ի մի պատառ եկուլ զնա. ոչ խոցեաց ատամամբք, և ոչ աղնատեաց բնաւոր ջերմութիւն ստոմաքաց. վասն զի նոնս կամէր ըմբռնել զյոմնան կենդանի, և ոչ մեռեալ. կամէր խրատել, և ոչ կորուսանել։

Լուկաց մարգարէն 'ի զարհուրելի բանտի անդ յաղջամղջին խաւարի զերիս տիւս և զերիս գիշերս. և եղև նմա պորտ ձկանն որպէս փայտար լեբանաց տեղի ապաշխարութեան, և տաճար ջերմ մարգարէական աղօթից և խնդրուածոց։ Օ զայր զշարժ մնաւն կենդանի բանտին. որ է՝ զի 'ի վեր ամբառնայր, և է՝ զի յանդունդս իջանէր, մերթ յայսկոյս և մերթ յայնկոյս 'ի լեղ անկեալ թափառէր ընդ հոմատարած ծովն. մինչև հուսկ յետոյ զինի երից աւուրց տունջեան և գիշերոյ եհան ըստ հրամանի նոնս վիշապ ձուկն զաւանդն յանձնեալ նմա 'ի նոնէ 'ի ցամաք ողջ և անարատ։ Լնդ եգիտ նոնս զյոմնան. և նորոգեաց առ նա զպատուէրն զառաջին քարոզել 'ի նինուէ քաղաք մեծ. իսկ մարգարէն այն ինչ ազատեալ յահարկու բանտէն՝ չիշխեաց միւսանգամ խոյս տալ 'ի պատրաստա-

կան հնազանդութիւն։ Գնաց և եմուտ 'ի քաղաքն մեծ. որոյ գլխաւոր փողոցն 'ի միոյ դրանէ մինչև յմիւս դուռն երկայնէր զինուորական գնացս հեռաւակ զօրաց իբր երից աւուրց ճանապարհ. այսինքն քսան և չորս մղոն աշխարհագրական։ Իբր ոչ ուղիղ հեռաւեցուցանէն ոմանք, թէ ուրեմն բոլոր շրջապատ քաղաքին էր վաթսուն և երկու մղոն. զի ոչ զօրէ ասա կանոնն համեմատական 'ի տրամադիրէ առ շրջապատն. որովհետև ոչ գիտեմք թէ մեծ փողոց քաղաքին ծագէ 'ի ծաղ ուղիղ էր արդեօք, եթէ ուրեք ուրեք խոտորնակ, կամ բուլորաձև. նա զի՝ գոլով առընթեր տիգրիս գետոյ, հաւանական էրևի թէ ըստ դրից և ընթացից գետոյն ուրեք ուղիղ, և ուրեք խոտորնակ ձգեալ լցել և քաղաքն, 'ի վայելել զօրուտ գետոյն, և զբաբերչուն օդոյն քաղցրութիւն, և զզուարճուն գետեղերեայ։

Այս քաղաք մեծ եմուտ յոմիսն, և օր մի յառաջ գնացեալ՝ սկսաւ քարոզել ահեղ սպառնալեաք, թէ յետ երից, կամ ըստ այլոց՝ քառասուն աւուրց նինուէ կործանեսցի։ Սպառնալիքն, միանգամայն և համբաւ սքանչելեաց կլանելոյ վիշապ ձկանն զյոնիսն, և յետ երից աւուրց ողջանգամ հանելոյ զնա 'ի ցամաք, զոր պատմեաց նոցա. զոր և բան փրկչին ակնարկէ, յասելն՝ * Որպէս եղև յոնիսն նշան նինուէացւոց ॥ ղուկ. ԺԱ. 30. ազգեցին յոյժ 'ի սիրտս որոց զառաջինն լուան 'ի մարգարէէն. որք և 'ի զեղջ հարեալ՝ եղեն և այլոց քարոզ։ Իսկ մարգարէն յառաջեր քարոզելով. և ըստ բազմանալոյ լսողացն՝ բազմանային և քարոզիչք և յորդորիչք միմեանց յապաշխարութիւն առ 'ի հաշտեցուցանել զնոր յոր հաւատացին։ Այլ այնպէս բորբոք՝ նք ապաշխարութիւն վաղվաղակի սփռեալ ընդ քաղաքն ողջոյն՝ ամենեքեան քուրձ զգեցան 'ի մեծաց ցփոքունս։ Այնպես բան քարոզութիւնն յովսնանու, և ապաշխարուն ժողովրդեան յարքունիս. Թագաւորն ինքնին զհետ երթեալ օրինակի ժողովրդեան, և իւրով օրինակաւ հաստատելով զժո-

զովուրդն, եթէ յանոռոյ իւրմէ, և մերկացեալ զաբ-
քայական պատմուածն իւր՝ զգեցաւ քուրձ, և նրբ-
տաւ 'ի վերայ մխիթրոյ։ Լուս խորհրդով մեծամեծաց
իւրոց հրամայեաց խիստ պահՀ՝ աւուրս երիս մի
ինչ ճաշակել բնաւ, և մի ջուր ըմպել. և ոչ այնչափ
միայն, այլ զի և քրնազգ եաց մինիցին եթէ ամենայն
մարդ մեծ և փոքր, և եթէ ամենայն անասուն,
խաղն և արջառ. յուսալով թէ գթասցի ՆՀ, և
դարձցի 'ի սրտմտութենէ բարկուն իւրոյ, տեսեալ՝
զի զանբան անսառունս իւրեանց՝ ողբ չեն մեղանչա-
կան, կցորդ ապաշխարութեան իւրեանց արարին,
մինչ և 'ի վերայ անասնոց քուրձ ցնցոտի արկա-
նելով. որպէս և առ մեզ սովորութենէ է 'ի վերայ
երիվարաց սեաւ ծածկոյթ արկանել 'ի նշանակ
սգոյ մեծի։

Հաւաստի է, թէ դարձ և ապաշխարութենէ նի-
նուէի եղև ՆՀմարիտ և 'ի կատարեալ սրտէ. զոր
այնպէս քարոզեն ՆՀ հարք, և առաւել փրկիչն
մեր յիւրում աւետարանի. զնոցն գաւանեմք և 'ի
պատմութենէ անդ մարդարէին, եթէ հաւատացին
նինուէացիք 'ի ՆՀմարիտն ՆՀ. ազդեցաւ 'ի նոսա
և յոյս գերբնական յանապհման ողորմութենէ ՆՀ.
ո՞ գիտէ ասեն՝ ապաշաւեսցէ, այսինքն դարձցի ՆՀ
մարդասիրութիւն 'ի բարկուէ սրտմտութենէ իւրոյ, և
մի կորիցուք։ Այնպէս վառեցաւ 'ի նոսա և սէր առ
ՆՀ. զոր ցուցանէ սուգն հասարակաց հանդերձ
խստամիտք ապաշխարութիւն և կսկծանօք սրտի յա-
զագս մեղանչելոյ ընդդէմ նոցա։ Օ՛ի ոչ միայն 'ի
կերակրոյ 'ի բաց հրաժարեցան, այլև 'ի մեղաց.
և ոչ լոկ զՀանդերձս փոխեցին, այլև զվարս։
Լատես ՆՀ (ասէ գիրն) զգործս նոցա, զի դար-
ձան իւրաքանչիւր 'ի ՆՀանապարհաց իւրեանց չա-
բաց։ Ուստի և ՆՀ՝ որ սպառնայ յառաջագոյն
զՀարուած առ 'ի հարկանել, ըստ մերս իմանալոյ
խօսելով դարձաւ 'ի դառնալ նոցա, և ոչ արկ 'ի
գործ զսպառնալիս, որ էր կարգեալ յեղծումն
նինուէի, եթէ ոչ 'ի յամառիլն նոցա 'ի չարիս
իւրեանց։

Ամենեւ անպատմելի պարտ էր լինել ուրախութեան յուշանալու ընդ այն առաքումն իւր, և ցնծալից խնդութիւն օրհնել զանսպառ ողորմութեան նոր, տեսեալ զքաղաքն զայն բազմաժողով լի ամենայն ազգեօք՝ 'ի ձեռն քարոզութեան իւրոյ 'ի սակաւ աւուրս հաւատացեալ յոյժ և սրբեալ 'ի մեղաց։ Ոչ միայն մեծագոյն ուրախութիւն նախանձայոյզ հոգեսէր քարոզչի, քան յորժամ տեսանիցէ պարգևէլ նմա ոչ 'ի վարձ իւրոց վաստակոց ժողովուրդ սրբեալ 'ի մեղաց։ Այլ յոյնսն տակաւին զանձինն խորհելով, քան նախանձախնդիր հոգւոց լինելով, արար իւր պատճառս անբերելի տրտմութեան զայն, զոր այլք մեծի ցնծութեան պատճառս համարէին։ Զանոր թուեցաւ նմա այն հանրական ապաշխարութիւն. ոչ իբր թէ կամէր զի նենուէ յիւրում ամպարշտութիւն մնացեալ, այլ զի խորհէր թէ պատիւ իւր մեծապէս անկանէր, և առաջի մեծի քաղաքին և համօրէն աշխարհի իբրև սուտ մարգարէ երևէր, եթէ զկնի երից կամ քառասուն աւուրց նիւնուէ ոչ կործանեսցի։ Այլ յայնմանէ այնչափ տկարութիւն երևեցոյց յանձին, մինչև տրանջել առաջի ոչ տարապայման ընտանութիւն, և յայտնի խոստովան լինել, թէ վասն այնորիկ առնապարեաց փախչել 'ի Թարշիս, զի մի սահպեսցի երթալ 'ի նենուէ. և թէ այժմ ընտրելի է նմա մահ, զոր և խնդրեաց իսկ 'ի նոնէ, քան զայն անպատիւ կեանս։ Ասէ՝ նոր՝ ասէ, ոչ այս այն բանք են իմ, մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ առնապարեցի փախչել 'ի Թարշիշ, զի գիտէի թէ ողորմած ես դու և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց։ Այլ արդ՝ նոր՝ առ զոգի իմ յինէն, զի լաւ է ինձ մեռանել՝ քան թէ իցեմ կենդանի։ Այս նմա նոր պատասխանի, և ասէ. արդարև յոյժ տրտմեալ իցես. իբր ասել, մնա՛ 'ի ներքս 'ի քեզ, և լաւ ևս խորհեա՛ց, և ծանիցես զի դժպատեհ է տրտմութիդ։ Այլ յորժամ ոք թողլ տայ տիրել անձին կրից իմիք, երթայ այնուհետև յոր վարէ զնա կիրքն. ոչ ևս խոր-

հի ըստ ուղիղ բանի, որում պարտ էր լինել նմա կանոն։

Եւ յոլովեան 'ի քաղաքէն, և սարաբեալ իւր հովանի՝ (թերևս զվերարկուն՝ կամ զայլ ինչ 'ի հանդերձից իւրոց կախեալ զիմաքէ) առ 'ի փոքր մի պատասպարիլ 'ի շողոյ արեգական, նստաւ ընդ նովաւ յանդիման քաղաքին՝ տեսանել զկատարած նորա. որով ցուցանէ թէ տակաւին չէր հաստատեալ 'ի մտի, թէ ոչ կործանեսցի։ Եւ ահա յանկարծակի 'ի նմին գիշերի բուսոյց ՚ած աքանչելեաք բոյս մի առ նովաւ ոստալից և լայնատերև, առ մեզ սնծանօթ, (զոր հօթանասունք դգմենի թարգմանեն, լատինք որպէս և սիմաքոս և այլք՝ բաղեղս,) առ 'ի լաւ և.ս հովանի առնել մարդարէին, և զվայրուցանել զնա 'ի տառապանաց իւրոց. ընդ որ ուրախ եղև յոյժ յոլովեան։ Այլ համառօտ եղև ուրախութիւն նորա. քանզի 'ի յաջորդ գիշերի ըստ անօրինելոյ ՚ան որդն փաստակար կրծեալ զարմատն՝ ցամաքեցաւ բոյսն. և ընդ առաւօտն ետես յոլովեան զի ահա ցամաքեալ էր զդգմենին, և ինքն գտաւ զուրկ 'ի զովացուցիչ հովանւոյ անտի նորա։ Եւ առ առաւել ՚ամիլեցուցանելոյ ՚ան զսիրտ նորա ընդ կորուստ դգմենւոյն, 'ի ծագել արևու՝ յաւել ՚ած 'ի շող նորա և խորշակ հողմ տապախառն. և յոլովեան 'ի կրկնապատկեալ տապոյ անտի շողոյ արեգական, և հրատապ խորշակի կայր նուաղեալ, և քաղէին ոգիք նորա. և առ չհանդուրժելոյ անբերելի տապոյ, վերստին մահ խնդրեր անձին. * Եւ ասէր ինձ ասէ մեռանիլ, քան զայս կեանս իմ՝ ։ Ասէ ցնա ՚ած, թէ արդարև յոյժ տրտմեա՞լ իցես. ասէ յոլովեան. յոյժ տրտմեալ եմ մինչև ցմահ։ Յայտնի՛ համ ՚ած իբրև քաղցրագութիւն վարդապետ, անուշակ՝ բայց միանգամայն ազդու յանդիմանութիւն սարաբ նմա. զու ասէ այդչափ տրտմեցար, մինչև մահ անձինդ խնդրել ընդ կորուստ դգմենւոյդ. յոր չէղեր ինչ աշխատ. ոչ մանկեցեր, ոչ սնուցեր, և ոչ խնամեցեր 'ի գիշերի եկ, և 'ի միւս գիշերի կորեաւ։ Արդ՝ ՚ետե՞ քեզ արժան կամիլ՝ զի ես

կործանեցից զնինուէ քաղաք մեծ, յորում կան աւելի քան հարիւր քսան հազար ոգիք, որք ոչ ծանեան զչարութիւն. այսինքն անմեղ տղայք. և ընդ նոսա անասունն բազում ամենանչականք և անկարօղք գործել ինչ ընդդէմ կամաց իմոց։

Լ. ստ կատարի մարգարէութիւն յոմնանու. ցանկալի էր, եթէ թողեալ էր մեզ գրով, եթէ զինչ տարաղ զգեցաւ նինուէ յետ այսր հանրական ապաշխարուէ։ Այսպէս եթող մեզ ուսումն կարևոր բազոյն քան զայն օրինակաւ անձին՝ 'ի միտ առնուլ թէ յոր վայր հասուցանէ կիրքն զմարդ թէպէտ և բարեպաշտ, յորժամ զՀետ երթայ այնմ։ Լսորշիլ յոմնանու զառաջինն 'ի քարոզելոյ նինուէացւոց՝ 'ի սկզբան անդ էր լուկ մնտի իմն մարդկօրէն մտածութիւն, զոր պատճառէր առաջի ՀՍ՝ իբր որդիական համարձակութիւն տարադէպ վարեալ. այլ զՀետ երթալով այնմ՝ անկաւ յանհընազանդութիւն. ապա 'ի յամառութիւն. անտի յանդգնութիւն. մնտի 'ի յանդգնութիւն. և յետոյ 'ի յուսահատութիւն 'ի մարմնաւոր կենաց։ Լայց հաւատի է թէ յետոյ ուղղեաց զամենայն. և դասեցաւ 'ի կարգ այլոց ՏՐ մարգարէից, զորս տօնէ եկեղեցի քրիստ։ Լսոյզ զի այն ամենայն օրինակաւ անցաներ՝ յօրինակ թաղման փրկչին և յարութիւն, և 'ի տարացոյց մարդասիրութենն ՀՍ 'ի վերայ ապաշխարողաց։

Լ. յլ թէ ոչ էր յայնժամ թագաւոր ասորեստանեայց նոսեալ 'ի նինուէ, չէ մարթի գիտել. վասն զի ոչ գիտեմք որոշ զժամանակն քարոզելոյ յոմնանու 'ի նինուէ. և ոչ նշան ինչ հիմնական ունիմք ուրեք 'ի ՏՐ գիրս, յորմէ մարթի իցէ գուշակել զՀշմարիտ ժամանակն։ Լ. սեբիոս ասէ, թէ էր սարդանապաղոս, որ և կոչի թոնկողերոս. նոյնպէս համարեցան և այլք բազումք. բայց առանց հաւատի հիման։ Լ. ոյնպէս և այն՝ զոր միաբան ասեն արտաքին պատմիչք, թէ վերջին թագաւոր նինուէի և ասորեստանեայց եղև սարդանապաղ, չունի ցուցանել, թէ արդարև

այն սարգանաբաղ էին, որ դարձաւ և ապաշխարեաց, և ապա անդրէն յառաջին ամպարշտութիւնն կործանեցաւ, եթէ այլ ոք. քանզի զկնի ապաշխարութեանն մինչև 'ի կործանումն նորա, և ցբարձումն թագաւորութեան ասորեստանեայց՝ բազում ամք անցին. յորս բազմաց մարթ էր թագաւորել։ Բայլ զայսմանէ ունիմք խօսիլ և զկնի։

ԳԼ. ԺԴ.

Օ. ոտարէա. Մեղրոմ. Մ'անայեմ. Փաքէաս, և Փաքէէ Ռաֆաւորդ էորայէլէ. և Հովանամ արքայ յուդայ։

Յետ մեռանելոյ յերոբովամայ երկրորդի՝ որդւոյ յովասու յամի քսաներորդի և հինգերորդի ոզիայ արքայի յուդայ, 'ի մեծի խռովութեանէ մեաց թագաւորունն իսրայէլի։ Բազմացան գահակալքն հետամուտք աթոռոյ թագաւորութեանէ. յաճախեցին դաւանք, գաղտ դաշնակցութիւնք և երկպառակութիւնք, այնչափ՝ զի հաղիւ յետ երեքտասանամեան աշխատութեանց մարթացաւ զաքարիա որդի նորա՝ և ոչ թոռն՝ նստիլ յաթոռ հօր իւրոյ։ Բայց այնպէս յամին երեսներորդի ութերորդի ոզիայ արքայի յուդայ յաղթեալ սանեայն դիմադրութեանց, թագաւորեաց 'ի վերայ իսրայէլի 'ի սամարիա։ Բայց համառօտ եղև թագաւորութիւն նորա. քանզի սեղզում՝ որդի յաբիսայ որսացեալ գաղտաբար իւր թիկունս արս սիկարեանս՝ նոքօք յարեաւ 'ի վերայ նորա՝ ոչ 'ի ծածուկ, այլ 'ի հրապարակի, և այնպէս հարին զնա յանդիման ժողովրդեանն և սպանին։ Բստի հաղիւ ամիսս վեց թագաւորեաց զաքարիա 'ի վերայ իսրայէլի։ 'Ի նա լրացաւ խոսքն զոր խոստացաւ Տէր յէհուայ, թէ որդիք նո-

բա ցչորրորդ ազգ նստիցին յաթոռ թագաւորութեան իսրայէլի. որք եղէն յովաքազ, յոյաս, յերոբոամ երկրորդ, և զաբարիա վերջին թագաւոր յորդւոց յեհուայ։

Սեղզուամ տիրասպանն առ զթագաւորութիւն նորա. բայց ոչ նոյնհետայն, այլ 'ի յաջորդ ամի երեսնեերորդի ինեերորդի ողնայ աբքայի յուդայ. յորմէ երևի թէ և նա 'ի սկզբան անդ ոչ սակաւ դիմադրութիւս կրեաց առ 'ի ձեռս բերել զթագաւորութիւն։ Այլ որպէս աւազակութիւն յափշտակեաց, նոյնօրինակ աւազակութիւն կորոյս փութանակի. ամիս մի և եթ թագաւորեալ 'ի սամարիա։ Վանզի մանայեամ թերսացի որդի գադդայ եկեալ 'ի սամարիա՝ յարեաւ 'ի վերայ նորա և սպան զնա, և առ զթագաւորութիւն նորա։ Այլ զի բնակիչք թերսայ քաղաքի ոչ կամեցան բանալ առաջի նորա զդուռն քաղաքին, էառ զնա բռնութիւն. և յայն գաղանական կատաղութիւն եհաս, մինչև զամենեսեան որք գտան ոչ միայն 'ի քաղաքի անդ, այլև յամենայն սահմանս նորա շուրջանակի՝ առ հասարակ 'ի սայր սուսերի կոտորել. ոչ խնայելով՝ ոչ 'ի ծերս, ոչ 'ի մանկունս և ոչ 'ի կանայս. մինչ նաև զյղիս պատառել՝ զմայրն ընդ մանկան յարգանտի կոտորելով։ Այլ ապա առ հաստատելոյ զթագաւորութիւն 'ի ձեռին իւրում՝ ետ փուայ արքային ասորեստանեայց հազար տաղանդ արծաթոյ, լինել նմա օգնական։ Այլ փուա և եկն անդաւ կազմ բանակաւ յերկիրն իսրայէլի, և նուաճեաց զժողովուրդն իսրայէլի ընդ հնազանդութիւն նորա։ Այլ յետ կոչելոյ զնա արծաթով, հարկ եղև նոյնպէս արծաթով արձակել։ Օ՜ որք օտար ճորութեաց կամակար նստին յերկրի բարեկամին, ուր պատրուակաւ պաշտպանութիւն՝ զտիրականն վարեն զիշխանութիւն։ Որ խորհի կոչել յերկիր իւր զորս օտարս, պարտ է նմա միանգամայն և զայն խորհել, թէ զիարդ կարիցէ հանել զնոսա։ Մա նայեամ առ զերծանելոյ 'ի զորացն ասորեստանեայց զորս կոչեաց յերկիր իւր, եղ նոր հարկս

վերայ ամենայն մեծամեծաց երկրի իւրոյ յիսուն սիկղ արծաթոյ առ այր մի. և փուա շատացեալ այնու՝ Եհան զզօրս իւր յերկրէն իսրայէլի, և դարձաւ յերկիր իւր։ Ի՝անայեմ Թագաւորեաց ամն տասն և ամիսս ինչ, և մեռաւ. և փոխանակ նորա Թագաւորեաց 'ի վերայ իսրայէլի փակէհ կամ փակէաս որդի նորա յամին յիսնեերորդի ողիայ արքայի յուդայ։

Ա՝ա Թագաւորեաց ամն երկուս, և ոչ աւելի, ըստ եբրայականին, և ՚ի այլոց. բայց մերս ընթերցուած ըստ հին յունականին և ըստ եւսեբեայ ունի ամն տասն։ Ի՝ոպէս և իցէ՝ ոչ յերկար վայելեաց և սա 'ի Թագաւորութիւն. քանզի համանուն իւր սպարապետ զօրու նորին փակէհ որդի ռոմելայ գործակցութիւն արդոբայ, և արիեայ՝ հանդերձ յիսուն արամբք 'ի չորեքհարիւր գաղաադացւոց, յարեաւ 'ի վերայ նորա 'ի սամարիա, և սպան զնա առաջի կամ յաշտարակի՝ տանն արքայի. և ինքն կալաւ զթագաւորութիւն իսրայէլի յամի յիսնեերորդի երկրորդի ողիայ արքայի յուդայ. և Թագաւորեաց 'ի սամարիա ամն քսան։ Ի՝հա զայսօրինակ չարաչար կատարածիւ Թագաւորեցին միմեանց զկնի. չեղև բաւական բազմամեան փորձն, զի օր 'ի նոցանէ փոխեսցէ զսուտ և զամպարիշտ սկիզբն յերոբովամայ որդւոյ Նաբատայ, որ էր անհետ առնել զկրօնն Ճշմարիտ աստուածութիւն 'ի Թագաւորութիւն իւրմէ. ընտրելով այլք բացօք կրել զամենայն չարիս, քան թէ փոխել զայն անօրէն մարդկային խոհեմութիւն։ Ո՝նոյն կրեսցեն միշտ Թագաւորք, յորժամ ժողովուրդ նոցա ոչ առաջնորդեսցի 'ի վարս յուղիղ հաւատոյ։ Պահպանք չեն միշտ բաւական 'ի պաշտպանութիւն. նա՝ բազում անգամ նոքին լինին թշնամիք, յորժամ ոչ խղճիցեն լինել անհաւատարիմ Թագաւորի իւրեանց։

Հ՝ոլաթամ արքայ յուդայ չորիւք ամօք յառաջ քան զմնչ հօր իւրոյ սկսեալ էր վարել զթագաւորական իշխանութիւն, որպէս տեսաք 'ի վեր անդր. բայց առ կենդանութիւն հօրն՝ ոչ անուանեցաւ Թա-

գաւոր. այլ միայն զկնի մանչոյ նորա։ Այլ զի ոգիա թագաւորեաց ամն յիսուն և երկու, և ամիսս ինչ, վասն այնորիկ սկիզբն թագաւորութեանն յոլովթամսոյ անկանի 'ի սկիզբն ամին երկրորդի՝ երկրորդին փակէի արքայի իսրայէլի։ Այլ յոլովթամ ամաց քսան և հնգից 'ի թագաւորել Իւրում. և եղոյց զանձն որդի հարազատ ոգիայ հօր իւրում՝ ոչ միայն ըստ մարմնոյ, այլև որ առաւել գովելի է՝ ըստ բարեպաշտութեան վարուց. յամենայնի գնալով ընդ շաւիղս ուղղութեան հօրն, բաց յայնմանէ զոր ոչ ուղղութեամբ կոխեաց հայրն։ Ոչ միեաց զձեռն յոՀ օտար. ոչ խառնակեաց զթագաւորական իշխանութիւն ընդ քահանայականին. զի ոչ եմուտ 'ի ներքին կողմն տաճարին ծխել խունկս ՀՏՆ, որ քահանայից էր սեպհականեալ։ * Բարր ուղղութիւն առաջի ՀՏՆ՝ ասէ գիրն, ըստ ամենայնի զոր ինչ արար ոգիա հայրն նորա. բայց ոչ եմուտ 'ի տաՀՏարն ‖ Ք. Ճառ. էՀ. 2։ Այլ ինչ է, որ փոքր մի մնայլ արկանէ ՀՏԺպաշտութեան նորա. զի եթող զբարձունսն ուր զոհէր ժողովուրդն, թէպէտ ՀՏՆ ՀՏմարտի, բայց ընդդէմ հրամանի նորա։ Այլ բազումք յայսմ մասին անբասիր առնեն զնա զէթ 'ի ծանր մեղաց. իբր զի դատեաց չունել բաւական զօրութիւն 'ի խափանել զայն հին և արմատացեալ մեղանչական սովորութիւն ժողովրդեան. որպէս և բազումք յիւրոց նախորդաց բարեպաշտ թագաւորքն լռեցին վասն նոյն պատՀՏառի. միանգամայն և առ 'ի չտալ պատՀՏառս ժողովրդեան սովորելոյ զոհել 'ի վերայ բարձանց՝ երթալ զոհել կռոց, 'ի բառնալ զսեղանս կանգնեալս 'ի պատիւ ՀՏՆ։

Յոլովթամ էր կարի իմն յօժարեալ 'ի շինել շինուածս. զի գտեալ գանձ բազում ամբարեալ 'ի հօրէ իւրմէ ընդ ժամանակս բազմամեան թագաւորութեան իւրոյ, զամենայնն ծախեաց 'ի քաջինս։ Շինեաց զարևելեան դուռն տանն ՀՏՆ մեծաշէն և՝ հոյակապ. կանգնեաց բազում շինուածս 'ի վերայ պարսպին երուսաղէմի 'ի կողմն որ կոչէր ոփղայ։ Կառոյց ամրոցս և աշտարակս և զանազան

դաստակերտս 'ի լերինն յուդայ, և յանտառս, առաւել յերիտասարդական ջերմ յօժարութենէ մղեալ, քան թէ վասն հարկաւորութեան։ Զնաս այնչափ մեծամեծ ծախուց յետոյ ծանրացաւ 'ի վերայ որդւոյ իւրոյ աքազու. որ գուցէ ոչ կրեր այնչափ չարիս յօտար թագաւորաց, եթէ զգանձն զայն ունէր 'ի ձեռին՝ ծախել 'ի պէտս կարևորս բազմացուցանելոյ իւր զօրս, զոր հայրն վատնեաց յոչ կարևոր ամբարտակս։ Այլ և այն չեղև առանց տնտեսութեան վերնոյն, որպէս զի որդին օտարացեալ 'ի բարեպաշտութենէ հօրն՝ զրկէսցի և յընչից նորա. և անկցի 'ի նեղութիւն կրել զարդար պատուհաս անօրէնութեաց իւրոց։

Յովաթամ յաջողութեամբ և անվիշտ վարեաց զթագաւորութիւն իւր. * վասն զի՝ ասէ գիրն, պատրաստեաց զՀանապարհս իւր առաջի Տն Աստուծոյ ॥. Բ. Ճաց. իէ. 6։ Զի՝ զեաց պատերազմ միայն ընդ արքային որդւոյ ամմնայ. բայց և այն սակաւատև. զի փութով նուաճեաց. և ընդ ամն երիս՝ ըստ եօթանասնից, կամ երկուս ըստ վուլկադային՝ տային նմա ամմնացիք 'ի միում տարւոջ հարիւր տաղանդ արծաթոյ, և տասն հազար քոռ ցորենոյ, և գարի տասն հազար քոռ։ Թագաւորեաց յովաթամ յերուսաղէմ ամն վեցտասան. և մեռաւ և թաղեցաւ 'ի քաղաքին դաւթի, թողեալ զթագաւորութիւն իւր որդւոյ իւրում աքազու։

ԳԼ. ԺԵ.

Աշաղ արքայ յուդայ։ Փակէէ արքայ իսրայէլի։
Լսայէ մարգարէ։

Յետ մահու յովաթամայ արքայի յուդայ թագաւորեաց յերուսաղէմ 'ի վերայ յուդայ աքազ որդի նորա ամաց քսանից. և զի ամք վեշտասանք թագաւորութէ հօր նորա յովաթամայ չէին լրացեալ, վասն այնորիկ սկիզբն թագաւորութեան աքազու լինի յամին եօթնուտասներորդի փակէի արքայի իսրայէլի։ Աքազ ամպարիշտ գտաւ քան զամենայն թագաւորս յուդայ, ուստի և թշուառական քան զամենեսեսան։ Այնմյոմ յերկիրն յուդայ զկուռս իսրայէլի, և զասորուոցն, և զասորեստանեայց. և ընդ նոսա զամենայն հեթանոսական օրէնս անօրէնս և զպաշտամունս. մինչև ածել զմատաղ որդիս իւր 'ի մեծաւոր ձորն բենոմայ, և անցուցանել 'ի վերայ սեղանակապուտ բոցոյ 'ի նշան մնքրելոյ և նուիրելոյ զնոսա կռոց գարշելեաց։ * Այս (այսինքն աքազ, ասէ գիր) զորդիս իւր անցոյց ընդ հուր ըստ գարշութէ ազգացն, զորս եբարձ ՏԻՐ յերեսաց որդւոց իսրայէլի ॥. Գ. Նագ. ԺԶ. 3։ Որ ասեն ոմանք, չէ՞ մարթ երկուսանալ՝ թէ աքազ ո՛չ միայն 'ի վերայ բոցոյ անցուցեալ եցե զորդիս իւր իբր 'ի սրբել և 'ի նուիրել զնոսա կռոց, այլև զոք յորդւոց իւրոց իրօք ողջակիզեալ 'ի պատիւ կռոց գարշելեաց. որ չարագոյն ևս է յոյժ յոյժ։

Օ երեցունց նախագրեալ ժողովրդոց զկուռս փոխադրեաց աքազ յերկիր իւր, և յերեցունց ևս հարաւ 'ի հարուածս մեծամեծս. մինչ զի եթէ ՏԵՆ ՆՈՅ՝ յորմէ ապստամբեաց, չէր օգնեալ նմա, սպառ սպառ անհետանայր թագաւորուին յուդայ վասն

մնօրէնութեանց նորա։ Ի՛ռաջին սպասաւոր ճշմարտին արդարութեան ընդդէմ աքաղաղ եղև ռասսն արքայ ասորւոց. որ եկն պնդակազմ գնդաւ. և անդրէն յինքն գրաւեալ զդամասկոս, զոր յառաջագոյն առեալ էին Թագաւորք յուդայ, եմուտ պատերազմաւ յերկիր յուդայ. 'ի դիմի հարան երկու ճակատք. հարան և ցրուեցան զորք յուդայ։ Ի՛սորիք աւար հարին զերկիրն, և տարան 'ի դամասկոս բաց 'ի գերեսց և աւար բազում։

'Ի դառնալ անտի արքային ասորւոց, յառաջ խաղաց փակէհ որդի ռովմելայ արքայ իսրայէլի. աքաղ ժողովեալ զցրուեալ զօրս իւր՝ էլ ընդ առաջ նորա. բայց այս մարտ չարագոյն ևս եղև վասն նորա քան զնախընթացն. զի 'ի միում աւուր կորոյս զամենայն բանակ իւր՝ հարիւր և քսան հազար արանց զօրաւորաց անկեալ յասպարիզի անդ մարտին։ Ի՛նդ նոսա մեռան և ամասիա որդի աքայի, և եղբիկամ՝ իշխան տան արքայի, և եղկանա փոխանորդ արքայի. զորս սպան վեբբրի սպառնալեաւ կորովի զօրավարք յուդայոց եփրեմի։ Ի՛ւ բաց 'ի բազմապատիկ աւարէն՝ զոր աւարեցին յերկրէն յուդայ, և տարան 'ի սամարիա, գերեցին երեք հարիւր հազար կանայս, և զուսանեալս և զդստերս։ Ի՛նաց գրեթէ 'ի յեռին ամայութեան երկիրն յուդայ. այլ ճշմարտ՝ որ սովոր է ընդ արդարութեան խառնել և զողորմութիւն, մինչ ամենեին զբազմութիւնն զայն եղկելի գերեսց 'ի սամարիա՝ անօրինեաց ելանել ընդ առաջ յաղթական զօրուն մարգարէի միոյ ովդեդ անուամբ. որ խօսեցաւ առ նոսա յանուն տեառն, և ասէ. Ի՛նչ տո՞ւ եւ ձեզ զյաղթութիւնդ զայդ մեծ 'ի վերայ եղբարց ձերոց, զի մեղան և բարկացուցին զնա. և դուք ստեղ ստանալ զդոսա 'ի ծառայս և յաղախնայս։ Ի՛այլ լուարուք ինձ. դարձուցէք զդոսա անդրէն 'ի տեղիս իւրեանց. ապա թէ ոչ՝ ահաւասիկ վկայեմ ձեզ, զի սրտմտութիւն տեառն լինի 'ի վերայ ձեր։ Ի՛ բանից ասաի մարգարէին իշխանք ոմանք յորդւոց եփրեմի 'ի գուն շարժեալ, խօսեցան առ զօրն.

և նոքա զիջեալ բանից իշխանաց՝ յանձն արարին զգերութիւն և զաւարն 'ի կամս նոցա։ Յայնժամ՝ յարեան ամենայն արք գլխաւորք՝ որք կոչեցան յանուանէ, և խնամարկութիւն արարին գերեաց, զմերկսն զգեցուցին, ագուցին նոցա կօշիկս. զտկարսն օծին իւղով. և կերակրեցին զնոսա լիաւ լիր. և զտկարսն եդեալ 'ի վերայ գրաստուց՝ տարան զամենեսին զնոսա յերիքով քաղաք արմաւենեաց առ եղբարս իւրեանց. և արձակեցին երթալ իւրաքանչիւր 'ի տեղի իւր։ Բ.յս ամենայն գիտասիրութիւն զոր ցուցին 'ի վերայ գերեացն, ոչինչ ծանրացաւ ողորմածացն այնոցիկ. զի ոչ յիւրեանց ընչից, այլ յաւարէ անտի արարին զամենայն։

Երբև մեկնեցան իսրայէլացիք, հասին եղովմայեցիք և փղշտացիք։ Եղովմայեցիքն աւազակեցին 'ի հարաւակողմն երկրին յուդայ, ուր էին հասեալ զորք ասորւոց և իսրայէլացւոց. իսկ փղշտացիք յարձակեցան 'ի դաշտային քաղաքս 'ի հարաւակողմն երկրին յուդայ։ Բ.ստ՝ ուր մերբոն թեանու, էբէնեզէր, 'ի յոյնն ասի 'ի էբէոր կամ յոֆրիոյ յոռդայ, իմա 'ի հարաւոյ կողմանէ. զի լիբիա անկանի ընդ հարաւ երկրին յուդայ։ Բ.ըզ՝ յայն կողմն գիմեալ փղշտացւոց, առին զբեթսամիւս, և զայելոն, և զգադերովթ, և զսոկքով և զգեօղս նորա. և զթամնա և զգեօղս նորա. և զգամզերը և զգեօղս նորա, և բնակեցուցին 'ի նոսա յազգէ իւրեանց։

Այլոր աբազ 'ի տագնապ մեծ՝ տեսեալ, զի յամենայն կողմանց յառնէին թշնամիք, և ինքն ոչ զրամն ունէր և ոչ զօր բաւական։ Յաւ առաւելաւ տագնապ նորա, յորժամ ազգ եղև նեմն, թէ ռասոն արքայ ասորւոց, և փակէէ որդի ռովմելայ արքայ իսրայէլի միաբանեալ խորհին ծանր պատերազմաւ գալ յերուսաղէմ, բառնալ զնա 'ի թագաւորութիւն. և տիրելով երկրին յուդայ՝ կացուցանել 'ի վերայ նորա թագաւոր զոտար ոմն զորդի առն աւրուամն, որ կոչէր տաբէլ։ Բ.յլ 'ի վերջին ծագ

եհաս տագնապ աքաղաղ, յորժամ եհաս առ նա հրեշտակ՝ ասել, թէ դաշնադրութիւն վճարեալ է. և թէ զօրն ասորւոց հասեալ յերկիրն Եփրեմայ՝ մեայ անդ, զի կազմեսցի և զօրն Իսրայէլի։ Յայսպիսի յուսակտուր անձկութիւն եղեալ աքաղաղ յերուսաղէմ՝ Ձեմէր առ ջրմղին, որ կոչէր աւազան ադարակին Թափչի, խորհելով 'ի սրտի իւրում յայն վերջին դիպուած՝ բուռն հարկանել 'ի վերջին դարման՝ կոչել յիւր օգնութիւն զարքայն ասորեստանեայց հանդերձ ամենայն ծանր և դժնդակ պայմանօք։ Այնչ յայսմ խորհրդի էր աքաղ, ահա յեղակարծումն եկն եկայ առաքի նորա Եսայի մարգարէ ընդ որդւոյ իւրում յասուբայ. և ասէ ցնա. Եկի ես արքայ առաքեալ 'ի քոնէ, ասել ցքեզ յանուն նորա. հանդարտեաց 'ի խռովութենէդ, և զդ՚ոյշ լեր 'ի կոչելոյ զարքայն ասորեստանեայց քեզ յօգնութիւն. մի երկնչիր և մի զարհուրեսցի անձն քո՝ 'ի հռասիմայ արքայէն ասորւոց, և 'ի փակէեայ որդւոյ հռովմելայ. երկու խանձողք են նոքա կիսայրեաց փայտից, որք ծխեն ծուխ թանձր, այլ բոց արձակել ոչ կարիցեն։ Խորհեցան 'ի գլուխ այլոյ փոխել զսպակ արքայութիւն քո։ Այլ այսպէս ասէ Տէր զօրութիւնց. * Այն կացցէ խորհուրդն այն, և մի եղիցի. այլ գլուխ արամայ դամասկոս, և գլուխ դամասկոսի հռասիմ. և այլևս վաթսուն և հինգ ամ, և պակասեսցէ թագաւորութիւն Եփրեմի 'ի ժողովրդենէ անտի. և գլուխ Եփրեմայ սամարոնն, և գլուխ սամարոնի որդին ռեմելայ։ Եսայ. է. 8։

Այս բան մարգարէին ըստ Ճառին հայի 'ի վերջին կործանումն թագաւորութիւն իսրայէլի. զոր յառաջագոյն մարգարէացաւ ամենայն առ յերոբովամաւ երկրորդիւ, առանց նշանակելոյ զժամանակն յասելն. * Զի Իսրայէլ գերեալով գերեսցի յերկրէ իւրմէ։ Ամովս. է. 17. ընդ նմին լուեաց ամենայն և զարձումն թագաւորութիւն ասորւոց։ Այլ եսայի 'ի մէջ բերէ զայն, առ 'ի ցուցանել զմեծաւորութիւն գերութեան և զաւարումն դամասկոսի, և սամարիայ,

և զմնՀ Հռասիմայ, և փակէէայ։ Լրբ ասել. այն զոր քեզ սպառնան երկրքին սոքա քո Թշնամիք՝ տեսցես զի ընդ Հուպ 'ի գլուխս նոցա Հասցէ. զի և դամասկոս Թագաւորեալ քաղաք ասորւոց՝ գերեսցի և աւար Հարցի. և Հռասիմ Թագաւոր նորա սպանցի. և սամարիա մայրաքաղաք իսրայէլի ամայասցի, և փակէէ որդի ռոմմելայ Թագաւորնորա մեռցի։ Լաւ Թէ յայս միտ խմնալի է այս բան՝ յայտ անտի է, զի կամք մարգարէին էին քաջալերել զաքաղ Թէ նոքա փոխԹով կործանեսցին, և ինքն ազատեսցի յամենայն երկիւղէ նոցա։ Վասն այսորիկ ասաց ցնա մարգարէն, եԹէ ոչ Հաւատաս բանից իմոց Թէ որ խօսեցաւ զայն, անդ դու քեզէն ինդրեա՛ քեզ նշան 'ի ՀոնէՀ այ քումմէ 'ի խորուԹէ կամ 'ի բարձրուէ, յերկրէ կամ յերկնից՝ սրպէս և կամիցես. և ցուցցէ քեզ Հոր՝ Թէ նա ինքն է որ խօսի։ Լայլ աքաղ անդարձ պնտեալ յամառեալ էր 'ի չար կամն իւր. մինչ նաև յայնմ վերջին անձկուԹէ իւրում ոչ կամէր ընդունել շնորհս յայ. զի մի լինիցի երախտապարտ առնաս. զի այնչափ էր խստասրտուԹի նորա, մինչ զի և յայանի սքանչելիս ոչ կամէր տեսանել. զի մի 'ի սքանչելեաց անտի դառնայցէ առ Հոր Հած իւր։ Լայց առ երեսս պատրուակ առեալ՝ Թէ երկնչի փորձել զՀոր, ետ պատասխանի և ասէ. ոչ երբէք խնդրեցից տեսանել սքանչելիս, զի մի փորձեցից զՀոր։

Յայնժամ բարձրացուցեալ մարգարէին զբարբառս իւր, ասէ. արդ լուր դու, լուիցեն և խորհրդականք քո, և ամենեքեան որք են յարքունիս քո. փոքր ինչ Թուիցի ձեզ արհամարհել զբան մարգկան. արդ խնդրիցէք և զբան Հոն արհամարհել։ Վիտեմ, զի սիրտ ձեր և գիտակցուի մտաց վկայէն, եԹէ մեծ են անօրէնուԹիք ձեր և բազում. յայնմանէ ոչ կարէք Հաւատալ՝ Թէ կամիցի Հած օգնել ձեզ։ Վասն այնորիկ առ 'ի խելամուտ առնել ձեզ, Թէ՝ կամի փրկել զձեզ յերկուց Թշնամեաց ասի 'ի Հռասիմայ, և 'ի փակէէայ ոչ Հայեցեալ յամպարշտուԹիս ձեր, ահա ինքնին Հոր տայ

ձեզ նշան, յայտնելով զարերարութիւն մի մեծ և հրաշալի, որ ըստ ժամանակին եղիցի ամենայն աշխարհի, թէպէտ և լի իցէ աշխարհս՝ ամենայն չարեօք։ Այլոյցէ ժամանակ, զի կոյս մի անեղծ և անապական կուսութիւն յղասցի և ծնցի որդի. և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, այսինքն է՝ ընդ մեզ ած. զի ած գոլով լինիցի և ճշմարիտ մարդ. և կերիցէ որպէս այլ տղայ մանկունք՝ իւղ և մեղր։ Զի՝ որովհետև ած պարտաւորել զանձն առնել մարդկան անարժանից և ապախտաւորաց այսպիսի ածահրաշ բարուէ, ապա և դու կարես աներկմիտ հաւատալ, թէ և քեզ՝ թէպէտ և անարժան իցես, արասցէ զշնորհս՝ յանսահմանս փոքր քան զայն, ապատելով 'ի թշնամեացդ քոց։ Զի զի մի կարծիցէք թէ ունիք ընդ երկար սպասել այնմ, զիտասջիք զի վաղագոյն քան զայնչափ ժամանակ յորում մանուկն սկսանի ընտրել զչարն կամ զչարն, այս է՝ յառաջ քան զանցանել երից ամաց՝ մնասցէ երկիրդ յորմէ դուդ կասկածես անտերունչ յերկուց թագաւորաց։

Յաւել ասել մարդարէն. բայց զիտասջիր և զայս, զի յետ այսչափ ամպարշտութեց քոց և ժողովրդեան քոյ՝ ածցէ ած պատիժ մեծ 'ի վերայ երկրիս այսորիկ։ Զի մի ձայն նորա շարժեսցին 'ի միոյ կողմանէ եգիպտացիք իբրև զձանձն. և 'ի միւս կողմանէ ասորեստանեայք իբրև զձիաստացս լցցեն զերկիրդ յուդայ. և յուզեսցեն զամենայն գաղանիս, սիռեսցին 'ի ձորս, և 'ի ծերպս վիմաց, և յայրս և յամենայն փապարս և յանտառս. և ըստ օրինակի վարսավիրաց գերծցին և քերեսցին զամենայն, և մինչև ցմորթ հասուսցին։ Զի ժողովուրդ երկրիդ այնպէս նուազեսցի, զի անասունք առաւել մնասցին, և խոտ վայրի 'ի ճարակ նոցա. մինչ զի երինջ մի յարջառոց, և երկու մաքի շատ լինիցին առատ կաթամբ իւրեանց 'ի դարման տան միոյ։ Զի առ 'ի չգոյէ այլ ինչ կերակրոյ, զի անգործ կացցէ մնասցէ երկիրն առ պակասութիւն մշակաց, կերիցեն զայն սակաւ իւղն՝ զոր գործեսցին

ձեռաք իւրեանց, որպէս և զմեղն՝ զոր մեղուք
ամբարեսցեն 'ի խոռոչս ծառոց. * Օ՛ի ուր չիցեն
մարդիկ (ասէ գէորգ մեկնիչ), անդ շատ բնակեն
մեղուք. զի շատ դատանեն ծաղիկ ॥ Օ՛ի ամենայն
տեղի ուր այժմ իցէ հազար որթ խաղողոց, որ
պտղաբերէ հազար կշռոց սկեղ, խոպանասցի և 'ի
փուշ դարձցի. և նետօղք և աղեղնաւորք մտանիցեն
անդր յորս երկոց։ Այլ ամենայն լեառն և
բլուր այժմ արօրադիր և ակօսաբեկ՝ 'ի խոպանէն
և 'ի փշոյ, եղեցի արօտ խաշին և կոխան եզին։
Օ՛այս ամենայն խօսեցաւ Եսայի առ աքաղ արքայ,
այլ նա ոչինչ շահեցաւ 'ի բանից աստի մարգարէին.
այլ տակաւին սպնդեալ յամառեալ էր 'ի միտս իւր
դիմել առ արքայն ասորեստանեայց։

Յայնժամ կամեցաւ ՅԾ տալ և զայլ ինն վկայութիւն ոչ բանիւ լոկով, այլ գրով և արտաքին նշանաւ յաղագս վերահաս թշուառութեանց դամասկոսի և սամարիայ։ Ա՛սաց ցմարգարէն առնուլ տոմն մի նոր մեծ, և գրել 'ի նմա առաջի երկուց հաւատարիմ վկայից գրչաւ առն ճարտարի, այս է՝ որոշ և բացայայտ. ոչ փակագրիւ, և ոչ առակաւ և այլաբանութիւն, որպէս զի դիւրին իցէ ամենեցուն ընթեռնուլ՝ զայս բան. Ա՛բաղ արագ զաւար հարկանել. և վաղվաղակի զապուռն ժողովել ॥։ Ա՛բար մարգարէն ըստ բանի նոն. կացոյց երկուս վկայս արս հաւատարիմս ընտրեալս 'ի բազմաց, զուրիա քահանայ, կամ քահանայապետ, և զզաքարիա որդի բարաքեայ. ոչ զզաքարիա՝ որ է մի յերկոտասան փոքր մարգարէից, զի նա չէ էր եկեալ յաշխարհ. այլ զայլ օմն համանուն այր մեծարու և արժանաւորաւ՝ գուցէ 'ի նախնեաց զաքարիայ մարգարէին. և գրեաց առաջի աչաց նոցա զվերոյգրեալ բանն, զի մի ասիցի թէ յետ ելից իրացն գրեաց։ Յետ այնորիկ մերձեցաւ մարգարէն առ կին իւր որ և նա մարգարէ էր. և պարգևեաց ՅԾ նմա յղանալ և ծնանել որդի. և ասաց կոչել զանուն նորա ըստ գրուածոյն՝ * արագ արագ կապտեսջիր, և վաղվաղակի աւար հարկանիջիր, քանզի մինչև

ծանուցեալ ի՝ մանկանն կոչել զՀայր կամ զմայր, առցէ զզօրութիւն դամասկոսի, և զաւար սամարիայ յանդիման Թագաւորին ասորեստանեայց ։ Եսայ. Ը. 3. 4։ Իբր ասել, յառաջ քան զզօրել նորածին մանկանն հայրակոչ կամ մայրակոչ լինել, այսինքն յառաջ քան զլինել միամեան, Թագաւորութիւն դամասկոսի և սամարիայ եղիցին աւար հարեալ և կողոպտեալ։

Լ. Այս բան, որպէս և այն՝ Թէ "Մինչեւ ինչ ի՝ ծանուցեալ նորա (մանկան), կամ սխորժեալ յառաջագոյն զչարութիւն՝ ընտրեսցէ զբարին ։ այլովք հանդերձ, ըստ Ճառին՝ հային 'ի մանուկն, որ ծնանելոցն էր մարգարէին 'ի նշան վերահաս Թշուառութեան ասորւոց և իսրայէլացւոց. զոր յայտ առնել անուն նորա. որ և կատարեցաւ անվրէպ. որպէս զկնի սակաւուց՝ ունիմք տեսանել։ Իսկ խորհրդաբար՝ ըստ գերագոյն տեսութեան ակնարկեն զՀմարիտ Էմմանուէլն զՀՅ։ ՎՅ։ որ հանդերձեալ էր կործանել և աւար առնուլ զթագաւորութիւն սատանայի։ Լն որք ասեն, Թէ վերոգրեալ գործողութիւք Եսայեայ, ՅՅ զրուի 'ի տոմսի առաջի երկուց վկայից, յղանալ և ծնանել կնոջ մարգարէին՝ եղեն լոկ մտաւոր տեսութիւք 'ի միտս մարգարէին յօրինակ մանկանն Էմմանուէլի։ Լայց հասարակաց կարծիք հարց և մեկնչաց միաբան հաստատեն, Թէ իրօք և ՀմարտուՅ և գործով եղեն. զոր և ՝որ գիրն այնպէս բացայայտ պատմէ, մինչ զի չէ մարթ այլազգ իմանալ, եԹէ ոչ տարապայման բռնաբարելով զգրեանն։ Լ. ստ զօրէ հասարակաց կանոնն, Թէ զանծաչունչ գիրն պարտ է իմանալ ըստ Ճառին և ըստ գիւրիմաց և բնական տեսութեան, յորժամ չկայցէ անտեղութիւն կամ բանաւոր պատՃառ և հարկաւորութիւն խոտորելոյ. իսկ աստ չիք և ոչ մի ինչ անտեղութիւն կամ հարկ խոտորելոյ 'ի գրոյն։ Լ. Դ՝ դարձցուք անդրէն առաքաչ արքայ։

Սա Թագաւորեաց 'ի վերայ յուդայ յամին տասներորդի եՕԹնեերորդի փակէեայ արքայի իսրայէլի.

իսկ փակէ Թագաւորեաց ամն քսան. որում զՀետ գայ, Թէ աքաղ յառաջ քան զմեռանել փակէաց՝ Թագաւորեաց ամն երիս և ԷԹ, և ամիսս ինչ։ Յառաջնում ամի Թագաւորութեանն իւրոյ կրեաց զարշաւանս և զասպատակութիւն ասորւոց, ապա զիսրայէլացւոցն. յետոյ զփղշտացւոցն, և զեդոմայեցւոցն, զրպէս տեսանք վերագոյնդ։ Յ ձմերայնի երկրորդ ամի Թագաւորութեանն իւրոյ՝ միաբանեցան ասորիք և իսրայէլացիք ընդդէմ նորա. և 'ի սկիզբն գաբնան եկին ասորիք յերկիրն Եփրեմայ։ Յ նմին ժամանակի խօսեցաւ Եսայի մարգարէն ընդ աքազու. և տեսեալ զի բանիւ բերանոյ ինչ ոչ շահեցաւ, էանց ըստ հրամանի տն 'ի գրութիւն մարգարէական։ Յ 'ի մուտս ամարայնոյ յառաջ խաղացին միաբանեալքն 'ի պաշարումն Երուսաղէմի. իսկ Եսայի անձանձրոյթ յորդորէր և քաջալերէր զարքայն, և զխորհրդականս նորա, և զժողովուրդն չերկնչել յերկիւղէ նոցա, այլ յոյժ ապաւինիլ, և չդիմել առ արքայն ասորեստանեայց։ Ա կայեաց բազում անգամ, Թէ միաբանութիւն երկուց Թագաւորաց չէ բաւական կործանել զերուսաղէմ. նա՝ Թէ առցեն ընդ ինքեանս և զայլ Թագաւորս և դարձեալ զօրանայցեն, սակայն և այնպէս դարձեալ 'ի պարտութիւն մատնեսցին. և զխորհուրդ նոցա զոր և խորհեսցին, ցրուեսցէ տէր։ Ա ասն որոյ չէք ինչ երկիւղ 'ի նոցանէ. այլ երկնչել՝ պարտ է 'ի սրամտութիւն բարկութեանն տն։

Ի. քաղ և խորհրդականք նորա աչօք տեսանէին և ձեռօք շօշափէին զՀմարտութիւն բանից մարգարէին. վասն զի երկու Թագաւորք Թէպէտ սկզբեցին զպաշարումն, Թէպէտ զօրացուցին զդրոհ և զյարձակումն, սակայն ոչինչ կարացին առնել. Գ. Բաց. ԺԷ. 5։ Յ յամին երրորդի աքազու 'ի վերայ հասեալ ձմերայնոյն, դարձան 'ի տեղիս իւրեանց լի ամօթով, զի ինչ ոչ զօրեցին առնել. բայց եդին 'ի մտի 'ի հասանել զ արնայնոյ անդրէն նորոգել զպաշարումն և սասստկագոյն։ Ի. քաղ յայսչափ վտանգս ոչ երբեք խոնարհեցաւ առաջի ոչ՝ զի.

մել և ապաւինիլ 'ի նա սրտի մտոք. այլ ընդհանրական՝ 'ի նոյն իսկ 'ի տառապանս իւր ելից զերուսաղէմ դրօշելովք աստուածոց ազգացն յարուցելոց 'ի վերայ նորա. և ոչ ևս ժուժելով առաքեաց հրեշտակս առ արքայն ասորեստանեայց այսպիսի նուաստ և խոնարհ պատգամաւ. * Զառաջ քո և որդի քո եմ ես, ել և փրկեա զիս 'ի ձեռաց արքային ասորւոց և 'ի ձեռաց արքային իսրայէլի յարուցելոց 'ի վերայ իմ ։ Եւ ժողովեալ զամենայն արծաթ և զոսկի որչափ ինչ գտաւ 'ի տան Տն, և 'ի տան Թագաւորին, և 'ի տունս իշխանաց, առաքեաց առ նա՝ 'ի ձգել զնա յիւր կողմն 'ի ձեռն պարգևաց։ Զնաւ ըստ ժամանակին որդին Եսայեայ, զորմէ խօսեցաք 'ի վերոյ. և ըստ հրամանի Տն եդաւ նմա անուն գրեալ յառաջ քան զյղութիւն, * Բրադ արագ կապտեսջիր, և վաղվաղակի աւար հարկանիջիր ։ և կատարեցաւ մարգարէութիւն, Թէ մինչև գիտասցէ մանուկն ասել ցծնողսն՝ հայր և մայր, երկու Թագաւորութիւք ասորւոց և իսրայէլի աւար հարցին և գերեսցին։

Յայնմ ժամանակի Թագաւորէր յասորեստան Թագղաթփաղասար. որ Թէպէտ չէր ինչ հաճ առնել քարէկամութիւն ընդ աքազու, բայց հաճեալ էր ելանել պատերազմաւ 'ի վերայ հռաստնի, և փակէեայ։ Զատն որոյ 'ի Ահազ առեալ զայս դիպողութիւն 'ի կատարումն իւրոց կամաց, իբրև բացան դրունք գարնանոյ, խաղաց բազմագունդ զօրաք 'ի վերայ իսրայէլի. և իբրև զՀեղեղս յորդախաղաց ջուրց անցեալ ընդ ցեղն զաբուղղնի, և նեփթալիմայ, և ռուբինի, և ընդ գալիլեա ընդ երկայն՝ առ ծովակաւ նորա, առ յափշտակեաց աւար բազմագանձ, և զընակիչս նոցա 'ի գերութիւն վարեալ յասորեստան, տարաւ բնակեցոյց 'ի քաղաս, և 'ի քաղաքսն առ գետեղերքն գոզանայ. ա. Թագ. Ե. 26։ Զնտի դարձ արար 'ի դամասկոս. Եւ պատերազմ ընդ հռասիմայ արքային ասորւոց. սպան զնա. Եւ զդամասկոս, կողոպտեաց զնա. և զընակիչս

նորա զերեալ՝ տարաւ 'ի կիւրէն ասորեստանեայց.
Բ. Խագ. ԺԷ. 9։ Օ զայնու ժամանակաւ սպանաւ
և փակէն արքայ իսրայէլի. էին ամք իբրև երեք՝
զի ոմսէ որդի ելայ դարան գործէր նմա սպանա-
նել զնա, այլ թերևս չունելով բաւական կուսա-
կիցս՝ չկարաց 'ի գլուխ զխորհուրդ իւր հանել
յառաջ քան զայս դիպողութիւն. սակայն և յայն-
ժամ ոչ յաջողեցաւ նմա թագաւորել փոխանակ
փակէեայ, եթէ ոչ զկնի եօթն ամաց. այսինքն
յամի երկոտասաներորդի աքազու արքայի։

Այս արագութիւն և յաջողութիւն որով արքայն
ասորեստանեայց աղատեաց զաքազ յերկուց ստի-
դառնավիշտ թշնամեաց, երևի թէ ունէր ընուլ
ցնծալից ուրախութիւն զբովանդակ երուսաղէմ, և
զամենայն թագաւորութիւնն յուղայ։ Այլ փոխա-
նակ ուրախութենն եղեր ողբս և արտասուս. վասն
զի թագաւորութիւնսար յետ վճարելոյ զիրս երկուց
թագաւորութեց՝ եմուտ բանակաւ իւրով յերկիրն
յուդայ իբրև բարեկամ և օգնական, տալ անդ
հանգիստ միանգամայն և լիալիր դարման զօրաց
իւրոց որչափ և նստիցին անդ. արկ և հարկս ծա-
նուցս 'ի վերայ երկրին. և այնպէս բարեկամու-
թիւ կերպարանաւ՝ կողոպտեաց և զայն, որ մնա-
ցեալ էր յառաջնոց ասպատակութեցն թշնամեաց.
և գնաց 'ի տեղի իւր։ Այս է, զոր ասէ դիրն.
« Այս ոչ էր օգնականութիւն ինչ նոցա. այլ նեղել
զնոսա ». Բ. Դ. Դաց. ԺԷ. 21։

Յետ տիրելոյ թագաւորութեանսարայ դամասկոսի,
երթեալ էր աքազ անդ ընդառաջ նորա առ 'ի պա-
տիւ, և 'ի ցոյց երախտապարտութիւն իւրոյ առնս.
գուցէ և առ 'ի խափանել զնա թէ հնար իցէ՝
չգալ յերուսաղէմ։ Այլ տեսեալ աքազու անդ զսե-
զան կռոցն դամասկոսի, առ զչափ, զձև, և զնմա-
նութիւն նորա ըստ ամենայն գործուածոյն. և առա-
քեաց յերուսաղէմ առ ուրիա քահանայապետ՝ շի-
նել ըստ այնմ օրինակի նոր սեղան 'ի տան տն։
Այսպէս ուրիա ըստ ամենայն բանից արքային. զի
զպղնձի սեղանն հանգոնեալ 'ի սողոմոնէ ընդ

արևելս՝ փոխեաց 'ի տեղւոջէն, և եդ ընդ հիւսիս
յանկեան միւմ 'ի գաւթի քահանայից. և անդ
առ նովաւ շինեաց զայն նոր սեղան պղծուելեան։
Իբրև դարձաւ արքայ 'ի դամասկոսէ, և եսես
զսեղանն, հաճեցաւ ընդ նա. և նախ ինքն մա-
տեաւ արար 'ի վերայ նորա զողջակէզս իւր՝ և
զզոհս, և նուիրեաց զնուէրս իւր. և եհեղ զնովաւ
զարիւն խաղաղականաց իւրոց. և պատուիրեաց
ուրիայ քահանայապետի այնուհետև 'ի վերայ
այնր սեղանոյ մատուցանել զզոհս և զողջակէզս,
և զամենայն նուէրս արքայի և ժողովրդեան. և
զամենայն արիւն ողջակիզաց և զոհից 'ի վերայ նո-
րա հեղուլ։ Իսկ զարար զամենայն սպաս տանն
Տեառն, և խորտակեաց զնոսա. եբարձ զերկոտասան
ցուլս պղնձիս զպատուանդանս մեծի աւազանին,
որ կոչէր ծով. և եդ զնա 'ի վերայ քարեղէն
խարսխի. անհետ արար զվարագոյրն և զպատուան-
դան աթոռոյն շինեալ 'ի տան Տեառն, ուր թագաւորք
յուդայ 'ի շաբաթս և 'ի տօնս նստէին 'ի ժամու
մատուցմանն զոհից, և կային յաղօթս առանձինն.
և զմուտս կամ զանցս ընդ որ թագաւորք յարքու-
նեաց անմիջապէս մտանէին 'ի տեղի անդր, փա-
կեաց. և զտեղին ընդ տանն Տեառն կամ ընդ գաւթի
քահանայից միացոյց։

Հուսկ յետոյ խսպառ օտարացեալ 'ի Տէնէ Տ՚ոյ
իւրմէ, փակեաց և զդրունս տաճարի նորա. և
արար իւր սեղանս յԻսմ անկիւնսն երուսաղէմի. և
'ի նմանէ ուսեալ ժողովրդեան՝ յամենայն քաղաքսն
յուդայ արարին սեղանս 'ի վերայ բարձանց ծխել
խունկս աստուածոց օտարաց։ Իսկ ասաց 'ի սրտի
իւրում, խնդրեցից զաստուածս դամասկոսի որք
հարին զիս. զի աստուածք ասորեստանեայց նոքա
են զօրաւորք, նոցա այսուհետև զոհեցից. և օգ-
նեսցեն ինձ. Բ. Հայ. Է. 23։ Իսկ զնոսա զամենայն
առ 'ի գտանել շնորհս առաջի ասորեստանեայց
արքայի՝ զաստուածս նորա պաշտելով. այլ կորոյս
զՀմարիսն ոչ զաբերարսն իւր. և յոր յուսացեալն
էր՝ ինչ ոչ օգտեցաւ 'ի նմանէ։ Այլ և այնպէս

երկայնամիտ մրն տարաւ նմա ընդ ամն վերջանա-
սան, զի նոյնչափ ամս թագաւորեաց կարի ամ-
պարշտութիւն քան զամենայն թագաւորս որք յառաջ
քան զնա նստան յայն աթոռ։ Մեռաւ 'ի սկիզբն
3448 ամի արարչութեան աշխարհի. և թաղեցաւ 'ի
քաղաքի դաւթի. այլ ոչ 'ի գերեզմանս թագաւո-
րաց. որպէս թէ ամաչել նախորդաց նորա մերձ
իւրեանց ընդունիլ զդի նորա, որ այնչափ չարեօք
պղծեաց զաթոռ թագաւորութեան իւրեանց։

ԳԼ. ԺԱ.

Ամէնէ Ռագաւոր էսրայէլ։ Գ.էրոբոամ էսրայէլ առ-
աղմանասարա. եկէնիա արքայ յոտպայ. էսայի մար-
գարէ։

Ամենէ որդի Եղայ սպանեալ զփակէնէ որդի ռո-
մելայ, և աւազակութիւն յափշտակեալ զթագաւո-
րութիւնն իսրայէլի, որ ոչ անկանէր նմա, թագաւ-
որեաց 'ի սամարիա յամի երկոտասաներորդի ազա-
զու արքայի յուդայ, ընդ ամս ինն։ Այս թէպէտ
ոչ զօրացոյց զկռապաշտութիւնն յերկրին իսրայէլի,
որպէս արարին թագաւորք որ յառաջ քան զնոսա,
բայց և ոչ իսկ նուազեցոյց. այլ կալաւ և ինքն
զնոցին ամպարշտութեան ճանապարհ։ Դ.ժամանակս
մի երկիրն և թագաւորութիւնն իսրայէլի 'ի վերա-
ջին ծագ ամպարշութիւն էր հասեալ. կրապաշտու-
թիւն, զրկողութիւն վարձուց վարձկանաց, յափշտա-
կութիւն, հարստահարութիւն որբոց և այրեաց,
անառակութիւն, կաշառակրծութիւն, վաճառումն
արդարութեան և իրաւանց, և այլ սոցին սակի անօ-
րէնութիւք գրեթէ ոչ էս 'ի մէջ էին համարեալ
առ նոսա, հաստատեալք իբրև քաղաքական սովո-
րութիւն՝ օրինակաւ զնացից իշխանաց և գլխաւո-

բաց երկրին։ Իսկ հմայք և դիւթութիք, և զուս-
տերս և զդաստերս իւրեանց ընդ հուր անցուցանել
'ի պատիւ բահաղու, որպէս գործք բարեպաշտու-
թեան էին առ նոսա։ Զ. ընդ ժամանակս ժամա-
նակս առաքեաց նոցա մարգարէս և քարոզիչս.
այլ նոքա ծիծաղէին զանիւք նոցա և հալածէին
զնոսա։

Սա՛ զիրն աստանօր յեօթնեւտասներորդ գլուխ
գրոց յորրորդ թագաւորաց կամեցեալ պատմել
զվերջին կործանումն թագաւորութեան իսրայէլի,
առնէ իբր յայտարարութիւն ինն դատաստանական,
առաջի դնելով զանօրէնութիւնս որդւոց իսրայէլի 'ի
սկզբանէ ելանելոյ նոցա յերկրէն եգիպտոսի մինչև
ցայն ժամանակս։ Որպէս և զսպառնալիսն՝ զոր
արար նոցա 'ի ձեռն իւրոց մարգարէից, եթէ
ոչ դառնայցեն 'ի չանապարհաց իւրեանց չարաց։
Իսկ նոքա ոչ թէ միայն ոչ դարձան, այլև՝ զի ըստ
ոճոյ գրոյն ասացից՝ խստացուցին զողն իւրեանց
քան զողն հարց իւրեանց և ոչ հաւատացին, այլ
ընկեցին 'ի բաց զդաշինսն՝ զոր կռեաց նոցա ընդ
հարս նոցա. և զվկայութիւնս նորա զոր ուխտեաց
նոցա՝ ոչ պահեցին։ Այլ և այնպէս երկայնմտու-
թիւն տարաւ նոցա ընդ ժամանակս բա-
զումս. այլ զի մի՛ կարծիցեն՝ թէ խոպառ ունի
լռել, կամեցաւ յայս նուագ ցուցանել, զի թէ
երբեմն վասն զթութիւն ողորմութեան իւրոյ լռէ
ընդ երկար, բայց միշտ պատրաստ ունի զվերնարանն
իւր; և զսուր արդարութիւն իւրոյ սրեալ, և հար-
կանէ հատանէ՝ յորժամ ոչ կարծեն մարդիկ։ Պաղ-
մնասար արքայ ասորեստանեայց, որ թագաւո-
րեաց զկնի թագաւորափաղսարայ, յորմէ զայդ ընդ
թագաւորութեան Ժառանգեաց և զթշնամութիւն
ընդդէմ հրէից, ելեալ էր զօրու ծանու 'ի վերայ
նոցա. և էր դարձեալ յետս սովին դաշնադրութի՛ն՝
զի հարկատու լիցի նմա այնուհետև ոմանէ արքայ
իսրայէլի։ Մարդիկ յորժամ 'ի նեղ անկանին՝
արագ են 'ի խոստումն. բայց 'ի դադարել հարկա-
ւորութեն՝ յամր են 'ի կատարումն։ Զանոր էր

ոմսէեայ կրեալ զայն լուծ, զոր առ Հարկի առ յանձն. այլ ինքնին Թեոմպիլ 'ի բաց չէր կա-
ցող։ Լ.ռաքեաց հրեշտակս առ ոմսս արքայ ե-
գիպտացւոց նոր դաշնադրութիւն ձգել զնա յիւր
օգնութիւն. և 'ի տարւոջն յայնմիկ ոչ եւս ասորեա-
տանեայց զՀարկն, յուսացեալ յօգնութենն եգիպ-
տացւոց։ Լ.յլ մինչև էր վէճարեալ դաշնադրուն-
'ի մէջ նոցա, սաղմնասաւ աճապարեաց Եհաս
բաղմագունդ 'ի սամարիա, և պաշարեաց զնա։
Լ.ու թէպէտ զօրքն իսրայէլի՝ որք էին 'ի ներքս,
ունելով առընթեր զթագաւոր իւրեանց՝ մեծաւ
քաջութիւն դիմամարտեալ 'ի ներքուստ անտի պա-
հեցին զքաղաքն ընդ ամս երիս, այլ չունելով ար-
տաքուստ օգնութիւն՝ ոչ յեգիպտոսէ, ըստ որում
ակնուսնէին, և ոչ յայլմէ 'ի շրջակայ թագաւորու-
թեց, յաւարտ երրորդ ամի պաշարմանն, որ էր
ինն երրորդ ամ թագաւորութենն ոմսէեայ, 'ի վեցե-
րորդ ամի եզեկիայ արքայի յուդայ՝ առաւ աշխա-
րեալն քաղաքն սամարիա. և ոմսէէ արքայ կապանօք
գերի վարեցաւ. և ժողովուրդն 'ի սամարիայ և
յամենայն քաղաքաց իսրայէլի վարեցաւ յասորեա-
տան։ Այս գերութիւն սաղմնասաւ բնակեցոյց
'ի քաղաքսն, որք առնուին զանուն յալաթ և յա-
բովք գետոց. որք մնանեն 'ի գետն զովշանայ.
յորմէ շրջակայ գաւառք առնուն զանուն, առ լե-
բամբէն մարաց. ուր յառաջագոյն բնակեցոյց
թագաւորն փաղսար զառ յիւրմէ գերեալսն։ Լ.ու զն-
մի անշէն մնասցէ մնացեալ երկիրն իսրայէլի ա-
մայի 'ի բնակչաց 'ի հնաս արքունի եկամտից, ամ-
սաղմնասաւ 'ի բաբելոնէ, և 'ի քութայ, և յայայ
և յեմաթայ, և 'ի սեփարուիմայ նոր գաղթականս
բնակել անդ, և մշակել զերկիրն զայն ընդ ա-
ձակ։

Լ.հա այսպէս թագաւորութենն իսրայէլի՝ ըստ
հաշուին կաղենոսի սկսեալ յամի արարչութեանն
աշխարհի 3196. յետ պէտսպէս արիածից, անիշ-
խանութեց, մնանութեց, սպանութեց՝ անցեալ
'ի տասն ցեղս, և վարեալ բիւր շփոթութեամբ

յիննեւտասն , կամ 'ի քսան թագաւորաց , յամի արարչութեան աշխարհի 3452. 'ի վերջ եհաս. և ժողովուրդն մեծ փառաւոր և սնուանի ընդ ամենայն կողմանսն յայնոսիկ՝ վասն մեղայ իւրոց մատնեալ 'ի ձեռս թշնամեաց , և յերկրէ յիւրմէ վտարեալ յերկիր օտար , եղև բազմաժողով խումբ եղկելի գերեաց։ Այս թագաւորութիւն ըստ հաշուի նորին կաղենոսի եկաց մնաց ընդ ամն երկերիւր և յիսուն և եօթն. ժամանակ ապաքէն հաստատ ըստ մարդկային փառասիրութեան , բայց կարի երկար ըստ ամենարշտուն նորա. զի սկիզբն նորա չար , մէջն չարագոյն , և վերջ նորա և՛ս չարագոյն։

Որ գաղթականք՝ որք յերկրէն մարաց և 'ի բաբելոնէ անցին յերկիրն իսրայէլի , տարան ընդ ինքեանց և զկուռս երկրի իւրեանց. և ոչ գոյր այնուհետև որ յայնմ հարուածեալ երկրի՝ որ ճանաչէր զՏիրամն։ Այլ փութով արար ՝ուծ զի ծանիցեն զնա. զի առաքեաց 'ի նոսա առիւծս կոտորել զնոսա. մինչև՝ ոչ կարէին անվտանգ ելանել արտաքս 'ի պարսպապատ քաղաքաց. վասն զի յամենայն գլուխս ճանապարհաց ընդ առաջ ելանէր նոցա առիւծ. արդէն մնացորդք ոսկերաց բազմաց կոտորելոց յամէնի գազանաց անտի՝ ցանեալ ցրուեալ կային յերեսս դաշտաց։ Որբև եհաս լուր այսր արկածից յասորեստան , ոմանք յիսրայէլացւոց որք էին անդ յարքունիս՝ ծանուցին սաղմանասարայ արքայի , թէ յարձակումն առիւծուց 'ի սամարիա ոչ է բնական դիպուած , այլ պատիժ առաքեալ յոյ 'ի վերայ այնր նոր ժողովրդեան. որք ոչ ճանաչելով զնա , և ոչ գիտելով զօրէնս նորա , պաշտեն զաստուածս օտարս անդ , որ էր իբրև սեպհական տեղի այն իսրայէլի։ Այնժամ հրաման եւ թագաւորն տանել անդ զմի ոք 'ի քահանայից երբայեցւոց 'ի գերեալոց անտի՝ բնակել ընդ նոսա , և ուսուցանել նոցա զկրօնս այ երկրին։ Եկն քահանայն և նստաւ 'ի բեթէլ , և լուսաւորէր զնոսա. եմոյծ 'ի մէջ նոցա զանազան բարի բարի սո-

վորութիւն Հշմարիտ ծածպաշտութիւն. բայց զկռապաշտութիւնն տարագրել ոչ կարաց. քանզի նոքա թէպէտ ծանեան զնոր անկատար իմն ծանօթութիւն, և երկնչէին 'ի նմանէ, այլ պահէին և զկուռս իւրեանց, և նոցա պաշտօն տանէին։ Իսկ ոչ ոք առ ժամն շատ համարեցաւ, զի արկցին 'ի նոսա դէթ սերմանք Հշմարիտ ծածպաշտութիւն, եթարձ յերկրէն զառիւծս. և մնացին այնուհետև 'ի խաղաղութիւն։ Լ՚ուդ՝ մատիցուք 'ի կարգ պատմութիւն թագաւորութենն յուդայ։

ԳԼ. ԺԱ.

Լ՚ԵԶԵԿԻԱ ԱՐՔԱՅ ՅՈՒԴԱՅ։ Հիւանդութիւն նորա և առողջութիւն ապանչելիօք։ Լ՚սայի մարգարէ։

Զկնի աքազու ամպարիշտ թագաւորի յուդայ թագաւորեաց եզեկիա բարեպաշտ որդի նորա՝ յամի երրորդի ովսեէայ որդւոյ ելայ արքայի իսրայէլի. և էր յայնժամ եզեկիա ամաց քսան և հնգից։ 'Ի թուոյ ութն ամաց եզեկիայ հաստատի, թէ աքազ հայր նորա սկսեալ է թագաւորել ընդ հարբ չորս ամաւք յառաջ քան զմեռանել յովաթամայ հօր իւրոյ. վասն զի 'ի թագաւորել իւրում էր ամաց քսանից, և վեշտասան ամն թագաւորեաց. արդ՝ վեշտասանն յաւելեալ 'ի վերայ քսանից, լինի երեսուն և վեց. յորմէ հանեալ զքսան և հինգ ամն եզեկիայ, և զմնացեալն ժամանակ արգանտի, աքազ ծնեալ էր որդի 'ի տասնամեան հասակի իւրում։ Լ՚ւ եղեալ թէ արտաքոյ սովորական օրինաց ընութիւն կարօղ էր նա յայնմ մանկական հասակի ծնանել որդի, սակայն չէ հաւանելի թէ յայն

հասակ տուեալ իցեն նմա կին. որով հետև չկայր ինչ հարկ. զի կին նորա ոչ էր դուստր օտար թագաւորի, որպէս զի 'ի սակս քաղաքական օգտի կանխեսցեն զամուսնութիւն. որպէս լինի երբեմն 'ի մէջ թագաւորաց, առ 'ի խնամութիւն կապակցել երկուց թագաւորութեց ընդ միմեանս. այլ էր դուստր միոյ յիշխանաց անտի երուսաղէմի։ Լու զի իբր հասարակ սովորութիւն էր թագաւորացն յուղայ առ կենդանութիւն իւրեանց անուանել զոք յորդւոց իւրեանց թագաւոր, ապա ասել՝ թէ աքազ անուանեցաւ թագաւոր ընդ հարբ, և թէ էր յայնժամ ամաց քսանից, է ամենայն իրօք հմտաձայն սովորութիւն այնր թագաւորութեան, և ոչ՝ խօսից գրոյն։ Լու զի իրաւունք են 'ի յերկրայականս դիմել 'ի սովորականն, քան 'ի գիպուածս օտարոտիս, որ հազիւ երբեք դէպ լինի յաշխարհի. ապա հարկաւ դնելի են ամք չորք թագաւորութեան աքազու ընդ հարբ։ Լու այսպէս 'ի քսան ամն յաւելեալ ամն չորս յորս աքազ թագաւորեաց ընդ հարբ, և վեշտասան ամն յորս թագաւորեաց ղէնէ հօրն, մեռանել նորա լինի 'ի հասակի ամաց քառասնից և իբրև միոյ. և 'ի մէջ հնգետասան և վեշտասանամեան հասակի իւրոյ ծնանի նմա որդի։ Լու այսու անհետ լինին ամենայն կարծեցեալ դժուարութիւնք։

Լզեկիա իբրև եկաց 'ի թագաւորութեան իւրում, առաջին փոյթ և ամենայն ձիգն նորա եղև ընդդէմն նորոգել և յառաջին պայծառութեան ածել զկրօնն ճշմարիտ ուծպաշտութեան յամենայն թագաւորութեան իւրում։ Ա աղվաղակի հրաման ետ բանալ և կալմել զդրունս տաճարի նոր. ժողովեաց զքահանայս և զղևտացիս, և լի ուծային նախանձու քաջալերեալ և իրախուսեալ զնոսա 'ի փոյթ դարձոց իւրեանց պաշտաման, հրամայեաց նոցա սրբել զանձինս, և սրբել զտուն տան։ Լուրս վեշտասան աշխատ եղեն, և մաքրեցին և սրբեցին զորբութիւնն, զդաւթեան, զսրահն. և զաղտեղութիւնն հանին ընկեցին 'ի հեղեղատն կեդրոնի։

Օ՛ սեղանն ողջակիզաց եղին յառաջին տեղւոջ իւրում· և զսպասն նորա, որպէս և զսպասն սեղանոյ առաջադրութեան, և զամենայն կահն զոր պղծեաց աքաղ Թագաւոր յապստամբիլ իւրում յոյ խորայէլ, սրբեցին։ ԼՀ՛ ապա կանխեաց եղեկիա արքայ և ժողովեալ զիշխանս քաղաքին, 'ի ձայն սաղմոսաց փողոցք և ազգի ազգի նուագարանաց մատուցին զոհս և ողջակէզս բազումս։ ԼՀ՛որոգեաց զամենայն կարգս սրբազան պաշտամանց ըստ մովսիսական օրինաց, և ըստ կարգելոյ դաւթի արքայի, և գադայ և նաթանայ մարգարէից 'ի հրամանէ տէր։ ԼՀ՛առաքեաց քարոզս ոչ միայն ընդ ամենայն երկիր Թագաւորութեան իւրոյ, այլև 'ի սահմանակից երկիրս խորայէլի 'ի բերսաբէէ մինչև 'ի դան· հրաւիրեաց զամենասեան գալ ժողովիլ յերուսաղէմ, առնել զպասէք տէն տոյ խորայէլի։ Ոչ զեղև անարդիւն վաստակ քաւ ըղջացն· Թէպէտ ուրեք ուրեք ոմանք մեացորդք յապականեալ խմբոյ անտի խորայէլի ծաղր իմն առնէին զնոսա, և արհամարհանօք ասէին զանս նոցա· բայց սակայն 'ի ցեղից ասերայ, մանասէի, զաբուղոնի, և եփրէմի բազումք դարձան եկին յերուսաղէմ, և յարեցան 'ի յուդա, և արարին ընդ նոսա զպասէք տէն· և խորտակեցին զամենայն կուռս իւրեանց, կոտորեցին զանտառսն, փշրեցին զարձանսն, և բարձին զարձրաւանդակսն յամենայն հրէաստանի, և 'ի բենիամինի· և յեփրէմի, և 'ի մանասէի մինչև խպառ։

Լսկ յերուսաղէմ ետ եղեկիա քակել զամենայն սեղանս, և կործանել զամենայն տեղիս, ուր ծըխէին խունկս ստութեցն, զոր կանգնեալ էր աքաղ հայր նորա, և զաւերակս նոցին ետ ընկենուլ 'ի հեղեղատն կեդրոնի· և միանգամայն ասել՝ ետ բառնալ և անհետ առնել զամենայն ինչ յորս հեաթ ինչ աւելորդապաշտութեան երևէին։ Լչարձ եղեկիա և զարձունս, յորս զոհէր ժողովուրդ յուդայ 'ի բարձրելոյ, բայց ընդդէմ հրամանի նորա, որ արդ ել արտաքոյ տաճարին մատուցանել նմա զոհս։

Զայս իմանամք 'ի բանից անտի ուսիսակայ, զոր ասաց ցՏրեշտակն եղեկիայ. որպէս տեսցուք ստուրև։ Զայլ որ առաւել է քան զայս ամենայն, խորտակեաց եղեկիա և զօձն պղնձի՝ զոր արար Մովսէս յանապատին. զոր 'ի սկզբանն պահէին իբր առ յիշատակէ բարեբարութեան, զոր նովաւ արար նոցա հաճ. և ապա կարգեցին և զնա 'ի դասս կռոց, և զոհէին նմա. զայն օձ խորտակեաց եղեկիա, և որպէս զի և անունն ևս ջնջեսցի, զկոտորակս նորա ետ կոչել Նեհեսթան, կամ ըստ Եբրայականին՝ Նեխուսթան, որ Թարգմանի բեկոր կամ կոտորակ պղնձոյ։ Զտ եղեկիա նորոգել և ընդարձակել զշտեմարանս և զՀամբարանոցս 'ի տանն Տն, ժողովել 'ի նոսա զպտուղ ցորենոյ և գինւոյ, և ձիթոյ, և մեղու, և ամենայն արմտեաց անդաստանաց. զոր յօժարամիտ բերէին ոչ միայն ժողովուրդն յուդայ, այլև որդիքն իսրայելի ըստ հրամանի օրինաց իբրև իրաւունս քահանայից և ղևտացւոց՝ ունել նոցա լնով զպէտս իւրեանց, և այնպէս յորդորամիտ վարել զպաշտամունս իւրեանց։

Յամենայն իրս առաջին մնոածուԹիւն հաճասէր արքային էր փառք և պատիւ նմա, և ըստ վկայելոյ գրոյն. * Յետ նորա նման նմա ոչ եղև յամենայն Թագաւորս յուդայ. և յեղեալսն յառաջագոյն քան զնա. յարեցաւ 'ի հոր, և ոչ մեկնեցաւ 'ի գնացից նորա ‖. Գ. Թագ. ԺԸ։ Ոչ մեկնեցաւ յոյ. և հաճ միշտ ընդ նմա եղև։ Խորհեցաւ զոյ, և հաճ խորհեցաւ զնմանել. և յաջողեաց զգինուորութիւն նորա, և օրհնեաց զգործս նորա։ Յետ բարեկարգելոյ զամենայն ինչ՝ որ առ պաշտօն տան Տրէր, ձեռն էարկ տնօրինել և զիրս զինուորութիւն։ Զօրաժողովեաց զլուծ ասորեստանեայց արքայի, ոչ ևս հարկմուրելով նմա հարկս. զոր Թագաւորաթափաղսար եդեալ էր 'ի վերայ աքաղաղ հօր իւրոյ յանիրաւի. և ունէր զնա իբրև ստրուկ ընդ ձեռամբ։ Զտ և ընդդէմ փղշտացւոց ծանր պատերազմաւ. և եհան վանեաց զնոսա յամենայն քաղաքաց և յամենայն տեղեացն յուդայ, զոր առեալ էին նոքա 'ի ժամա-

նակս հօր իւրոյ. և ոչ այսչափ միայն, այլ եմուտ և յերկիր նոցա, աւար եհար զնա. քանդեաց զաւ-մուր սմուր տեղիս նոցա. կործանեաց զպարիսպս, եբաց զքաղաքս, և եհար զնոսա 'ի հարուածս չա-բաչարս. զի մի ևս կարիցեն գլուխ ամբառնալ։

Լ։ յամի չորեքտասաներորդի կամք եղեն ՅՈՒ տառապանաց իմոց փորձել զՀաստատութիւնի սիրոյ աբ-քային։ Վենեքերիմ արքայ ասորեստանեսցոյ թա-գաւորեալ զկնի սաղմանասարայ հօր իւրոյ, խորհ-եցաւ ընդ իւրև նուաճել զյուդա. որպէս արար հայր նորա ընդ իսրայէլ։ Լ։ զօրու ծանու, և կամոնաւոր գնացիւք յառաջ խաղացեալ՝ սկսաւ պաշարել և առնուլ զամուր սմուր քաղաքս, որք էին 'ի սահմանագլուխս երկրին յուդայ։ Յանեաւ եզեկիա՝ եթէ աչք նորա են 'ի վերայ երուսաղէ-մի. իսկ պատաղիլ նորա առ այլովք քաղաքօք և առնուլ զնոսա՝ ոչ առ այլ ինչ էր, եթէ ոչ զի բանայցէ ինքեան Ճանապարհ ապահով մինչև յեր-ուսաղէմ։ Վասն այնորիկ վաղվաղակի ձեռն 'ի գործ արար շինել զամենայն պարիսպս զկործա-նեալս և զաշտարակս, և ամրացուցանել զնոսա. նորոգեաց և զարտաքին պարիսպս, և զօրացոյց զպատուարան քաղաքին դաւթի. բազմացոյց զշտե-մարանս և զՀամբարանոցս, լցեալ 'ի նոսա պա-ղինս. կազմեաց և զինս բազում, եդեալ 'ի մոի չտալ թշնամւոյն և ոչ թզաչափ մի տեղի առանց պատերազմի։

Լ։բար և զայլ գործ ծանր և բազմաչխատ, բայց կարևոր առ 'ի դժուարացուցանել թշնամւոյն զպաշարումն։ Լ։րուսաղէմ քաղաքն յարևելեան կողմն չէր դժուարամատոյց. և ջուրք նորա էին յայն կողմն. որք իջեալ յաղբերացն ռադուէլայ և սելոամայ, և ապա միացեալ 'ի մի գետակ, իջա-նէին 'ի հեղեղատն կեդրոնի։ Յայս գործ պարա-պեցոյց եզեկիա զանհամար բազմութիւն գործաւո-րաց. և որպէս ունիմք 'ի գիրս Բ. Նափ. Ի. 20. և Բ. Ճառ. Լբ. և սիրաչ. Խգ. ետ բրել գուբա բազումն, և արար ջրշիղջ կամ ծովակ հաւաքիչ ջուրց. առ

բար և ջրմուղս 'ի բաժանել զջուրն 'ի զանազան կողմանս քաղաքին։ Լիսից և զելս կամ զանցս ջրոց, որք ելանէին արտաքս 'ի քաղաքէն. և զի զջուր մշտահոս չէ մնալթ այնպէս արգելուլ՝ զի մի զեղանիցի զոփամբք, եւ հատանել մրձաք զժայռ մի մեծ, և զյաւելեալ ջուրս ընդ այն դարձոյց յարևմտեան կողմն քաղաքին դաւթի. և այնպէս հատեալ զջուրն 'ի թնամեցն՝ ապահովացոյց յայնմ կարևոր մասին զքաղաքն։

Լոգև եգեկիայի ժամանակ բաւական առ 'ի գլուխ տանել զայս ամենայն մեծագործութիւն 'ի պատսպարութիւն թագաւորեալ քաղաքի իւրում։ Ամանգի յամենայն սահմանագլուխ քաղաքս եգիպտ սենեքերիմ դիմամարտութիւն հզօր մինչև 'ի նուաճել զնոսա. յոյր սակս ոչ կարաց յառաջ խաղալ 'ի պաշարումն երուսաղէմի, եթէ ոչ՝ յերբորդ ամի. բայց և ոչ յայնժամ եհաս հանդերձ բանական առ պարսպօք երուսաղէմի, այլ միայն պատգամաւորս յղեաց մեծամեծ սպառնալեօք։ Յառաջնումն յայսց երից ամաց, որ էր չորեքտասաներորդ ամ թագաւորութեան եզեկիայ, (որպէս երևի 'ի գրոյն, ուր ընթեռնումք, թէ զկնի հիւանդութենն եկեաց այլևս ամս հնգետասան. և ընդ ամենայն թագաւորեաց ամս քսան և ինն,) հիւանդացաւ եզեկիա առ 'ի մահ. զպատճառ հիւանդութեանն նորա չունիմք 'ի գրոյն, գուցէ 'ի հոգոց և 'ի տառապանաց 'ի տեսանել անդ զթագաւորութենն 'ի վտանգի յերեսաց բուռն զօրութեան ասորեստանեայց։ Լաստ յայտնի տեսանի, թէ քանի կարևոր է մեծամեծաց ունել զոք հաւատարիմ՝ որ իշխիցէ յուշ առնել նոցա և զտրտմնական բան փրկարար, ազդ առնելով զվտանգ կենաց։ Եզեկիա ոչ կարծէր մոռանել յայնժամ. և յայնչափ իշխանաց միջի և 'ի պաշտօնէից՝ որ կային առ նովաւ, ոչ գոյր ոք որ իշխէր յայտնել նմա զվտանգն։ Լինն եսայի մարգարէն, և յայտնի անպատրուակ ասաց ցնա։ Լայսպէս ասէ տէր, հրամանն տուր, և արա կարգաւորութիւն վասն տան քո և վասն թագաւորութեդ, զի մեռանիս 'ի հիւան-

գութէդ այտի, և ոչ ապրեսցիս։ Որեծ է սէր կենաց. եթէ դատն սէրք՝ որ կաթոդին ցանկացան մահու, դատն և յոգունք՝ որ ըղձանային և ևս ապրիլ։ Եթէ իցէ ժամանակ, յորում՝ բնապէս ծանր թուիցի մեռանել, է այն՝ յորժամ թէ ոք տանուցեր իցէ՝ թողու զտուն իւր, կամ թագաւոր զթագաւորութիւն իւր՝ 'ի յոռի վիճակի, յորոյ 'ի դարման կարեւոր տեսանէ զանձն։

Ով՝ յայտ՝ թէ մինչև ցայսժամ եղէն արդեօք որդիք եղեկիայ. գիտեմք զի մանասէ, որ թագաւորեաց զկնի նորա, երեք ամաք յետոյ ծնաւ զկնի հիւանդութեան նորա։ Ոչ՝ ամենի էր նմա թողուլ ըզտուն իւր անժառանգ. և զժողովուրդն զոր սիրէր իբրև զորդիս, 'ի ժանիս գազանացեալ թշնամւոյն։ Մին իրի 'ի լսել զդոյժ մահուն՝ առ ցաւոց սրտին։ Էլոց (ասէ զիրն) լալիւն մեծ։ Դայց և յայնմ մեծի վշտին ոչ մոռացաւ զանձն իւր։ Որեղք նորա միշտ թեթև եղեն. բայց և այնպէս նոյնհետայն եմուտ 'ի քննութիւն ամենայն կենաց իւրոց. և լուաց զյանցուածս իւր թեթևս դառն զղջմամբ և արտասուօք։ Դարձաւ 'ի կողմն մի, և զերեսս դարձոյց յորմն անդր 'ի տաճարն կոյս. և հաստատելով զսիրտ իւր բովանդակ 'ի տէր՝ 'ի նա ապաւինեցաւ. և ջերմ պաղատանօք 'ի ձեռս նորա արար ապաստան զկեանս և զմահ։ Որ ոք տեսանէր զտառապանս նորա, տեսանէր զմեռանել մարդոյ. այլ որ լսէր զպաղատանս նորա, տեսանէր զմեռանել սրբոյ։ Զողթք նորա արարին զոր արուեստ բժշկաց չէր կարող առնել, ոչ զօրէին նորա ազատել զնա 'ի մահուանէ. իսկ աղօթք նորա խնդրեցին և ընկալան նմա կեանս։ Օ՜ի նա ինքն ասայի՝ որ ետ նմա զդոյժ տրամութեան, եղև աւետաբեր ուրախարար, ասելով ցնա. Դասպէս ասէ տէր ամ դաւթի հօր քոյ, լուայ աղօթից քոց, և տեսի զարտասուս քո, ահա ես բժշկեցից զքեզ, և յաւելից յաւուրս քո ամս հնգետասան. և դու յաւուրն երրորդի ելցես 'ի տուն տէն մատուցանել նմա ցրնծութիւնք զգոհացողական օրհնութեան։ Դու առ աՀա

ւելուլ զուրախութիւն նորա՝ յաւել ասել նմա յա-
նուն նոյն, թէ և 'ի մեռաց արքային ասորեստան-
եայց ապրեցուցից զքեզ և զերուսաղէմ քաղաք-
քս, և վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ։ Լաւ
զի գիտասցէ եղեկիա՝ թէ քանք մարգարէին էին
պատգամք նոցն, առաջի արար նմա Եսայի նշան մի
հրաշալեան. որ էր արագել ընթացից արեգական
քան զսահմանեալն 'ի ընէ. որով և ստուերք ցու-
ցակի ժամացուցին տանն արքայի նոյնհետայն ան-
ցանելոյ, զտանն աստիճանօք կամ գծիւք։ Յայն
ժամ ասէ եղեկիա, դիւրին է ստուերքն յառաջ
ընթանալ զտանն աստիճանօք. այլ դարձցի՝ ստուերքն
զտանն աստիճանօք անդրէն յետս։ Օ այս ընտրեաց
զի առաւել աքանչելի և արտաքոյ բնութեան թուե-
ցաւ նմա. և եղև այնպէս, զի դարձաւ արեգակն
յետս ժամն հինգ. իսկ ստուերք ցուցակին դարձաւ
ընդ տանն գիծս. զի 'ի միջոցի իւրաքանչիւր ժա-
մացոյց գծի գոյր և այլ փոքրագոյն գիծ նշանա-
կիչ կիսաժամու։ Լաւ ասա ուսոյց մարգարէն կազ-
մել սպեղանի 'ի թզոյ, և դնել 'ի վերայ վիրին՝
զոր ունէր արքայ. և այնպէս հրամանաւ նոցն, և
զօրութեամբ սպեղանւոյն ազդելոյ 'ի նոսնէ մարգարէին,
յաւուր երրորդի կատարեալ ողջացաւ արքայ և
եալ 'ի տաճարն նոցն։

Լազումք յայն միտս էն, թէ յայս դիպուած
ընթացք արեգական ոչինչ քնաւ այլայլեցաւ, այլ
լոկ ստուերք ցուցակին փոխանակ յառաջանալոյ՝
յետս դարձաւ, ոչ խուսելով յարեգակնէ, այլ
ընդ առաջ երթալով նմա։ Հիմունք կարծեաց նո-
ցա էն. նախ՝ զի նոքա գիրն խօսի զստուերքն ցուցա-
կին միայն 'ի ժամացուցի տանն արքայի, կամ ժա-
մացուցին աքաղաղ. յորմէ իմանամք թէ աքաղ ար-
քայ եւ գծել զայն ժամացոյց յորմէն արքունի ա-
պարանից. ոչ խօսի ասէն ոչ զարեգակնէ, և ոչ
զստուերքն այլոց ժամացուցից։ Երկրորդ՝ զի քաղ-
դէացիք եկեալք 'ի բաբելոնէ հարցին վասն նշա-
նացն որ եղեն 'ի վերայ երկրի. և ոչինչ խօսեցան
վասն նշանաց երկնից կամ արեգական։ Լաւ եր-

բորդ՝ չէր անդ հարկ այնչափ աբանչելեաց առ՝ի հաւատարմացուցանել արքայի զնշմարտութիւն մարգարէութեն։ Լ.այս պատճառաւ ապաքէն զօրեին, եթէ չունէաք յայտնի՝ ի նոսա դիրս զհակառակն։ Վասնզի՝ ի գիրս եսայեայ յերեսուն և ութ գլուխ, ուր մերս ունի՝ * Լ.ու եկ շաղն զատանեքումքք աստիւանաւք, ընդ որ ելջեալ էր ||, լասիոն ընթեռնու, * Լ.ու գարձաւ արեգակն զատանեքումքք աստիւանաւք ||։ Լ.ու՝ ի քառասուն և ութ գլուխ սիրաքայ ասի. * Լ.ու յաւուրսն յայնոսիկ յետս գարձաւ արեգակն ||։ Լ.հա ասա յայտնի զարեգակնն ասէ, և ոչ լոկ զտուեալ ցուցակի։ Լսկ թէ քաղդէացիք կոչեցին զայն նշան եղեալ՝ ի վերայ երկրի, ոչ տկարացուցանէ զբանն, այլ առաւել հաստատէ. վասն զի նոքա խօսեցան զշարժմանէ ստուերին, զոր տեսին յարեգակնային ժամացոյցս իւրեանց. ուստի քաջայայտ է, զի այլայլութիւն եղև՝ ի շարժման արեգական, և ոչ լոկ՝ ի ստուերս ցուցակի ժամացուցին արքունեաց. զի և՝ ի բաբելոն տեսաւ այլայլութիւն ստուերի յարեգակնային ժամացոյցս։ Լսկ այն՝ թէ ոչ գոյր անդ հարկ այնչափ աբանչելեաց, չ՚ ինչ. զի ածի կամեցաւ առնել առաւել՝ քան զառ՝ի մէնջ կարծեցեալ հարկաւորն. և չ՚ մեր քննել զնորհուրդ նորա՝ թէ առ ինչ արար այնպէս։

Լ.ԱՒԵ յայն միտս էն, թէ արեգակն դարձաւ յետս ընդ տասն աստիւանս, և ընդ նոյնչափ աստիւանս արար յետոյ զիւր կանոնաւոր սովորական ընթացս. և ըստ այսմ տիւն այն երկայնեալ լինէր քան զայլ աւուրս ժամն քան։ Լայց յայտնի ապացուցանի, թէ այս կարծիքն չունի բնաւ տեղի։ ||Արգաբէն եթոզ՝ ի կամն թագաւորին ընտրել զմին յերկուց աստի՝ յառաջել կամ դառնալ ստուերին զտասն աստիւանաւք. ապա յայտ է թէ ստուերս ցուցակին յայնժամ էր հասեալ՝ ի վերայ տասնեւերորդ գծին։ Լ.ոդ՝ եթէ իւրաքանչիւր գիծ ցուցեալ էր մի ժամ, զհետ գայր թէ այն ժամացոյց ցուցանէր գէթ քսան ժամն. այսինքն ունէր քսան ժամական գիծս. և ըստ այսմ դնելի էր հորիզո-

նական լինել՝ յայնպիսի գիրս զետեղեալ, զի ընդ տիւն ողջոյն ունիցի զլոյս արեգական. որ չէ հաւանելի. այլ երևի թէ էր գագաթահայեաց գծագրեալ յորմն, եթէ արքայն 'ի մահճաց կարէր տեսանել, որպէս ցուցանէ գիրն. արդ հաւաստի է՝ թէ յերուսաղէմ արեգակն ոչ ժամանէ կալ 'ի վերոյ քան զՀորիզոնն կամ զեզերս աւելի քան ժամս 14. բոպէ 4. ուրեմն չէր մարթ 'ի ժամացոյցն յայն լինել թուոյ գծից աւելի քան զոյն, որ ցուցանիցէ զչորեքտասան ժամս արեգակնայինս։ Այլ հարկ է ասել, թէ 'ի մէջ ժամու և ժամու գոյր անդ և զիծ ցուցակ կիսաժամու. ուստի տասն աստիճանք ցուցանէին ժամն հինգ և եթ։ Այս չէ հարկ ասել թէ արեգակն կանոնաւոր ընթացիւք դարձաւ յետս, և նովին կանոնաւոր շարժմամբ կալաւ վերստին զսովորական ընթացս. զի առաւել հաւանելի թուի՝ թէ յերկոսին կամ երագեաց յընթացս քան զսովորականն, և անց ընդ աստիճանսն առանց ամբողջ ժամուց միջոց տալոյ։ Այսիցես, եթէ արդարև արեգակն յետս դարձաւ. ապա յամենայն արեգակնային ժամացոյցս հարկ էր ստուերին երթալ յետս ընդ աստիճանսն. ապա ընդէր մարգարէն ամիսոփեաց զայն նշան միայն 'ի ժամացոյցն արքունեաց. նա՝ զի գուցէ և յարքունիս անդ կային և այլ ժամացոյցք։ Պատասխանեմ. վասն զի միայն այն ժամացոյց երևէր 'ի մահճաց անտի հիւանդին. վասն այնորիկ և մարգարէն զայն ետ նշան 'ի հաստատութիւն բանից իւրոց. յորում հիւանդն աչք ետես զդառնալ ստուերին յետս զտասն աստիճանաց. թող զի՝ և 'ի բաբելոն անդամ ծանուցաւ նշանն սքանչելի։ Այս այսպէս ողջացեալ արքայն 'ի հիւանդութենէ անտի, մարթացաւ այնուհետև միտ դնել պատերազմական իրաց։

Յետին անցեալ բազում ժամանակք, զի քաղդէացիք թօթափեցին զլուծ ասորեստանեայց, և նշկահեալ զսենեքերիմ արքայ՝ կացուցին իւրեանց թագաւոր 'ի բաբելոն զմարուդաք բաղդան զորդի բաղդանայ։ Այս փոյթ մեծ առնէր սերտ բարեկա-

մութեան ունել ընդ Թագաւորսն յուղայ, կարևոր յոյժ վարկանելով իւրում Թագաւորութեան զի Թագաւորք յուղայ կացցեն ինասցեն միշտ Թշնամութեաբ ընդ ասորեստանեայց հասարակաց Թշնամւոյ։ Իրրև լու եղև 'ի բաբելոն վտանգաւոր հիւանդութեի եզեկիայ արքայի, և դառնալ նորա յառաջին առողջութեի, առաքեաց հրեշտակս առ նա բազում ընծայիւք և հրովարտակաւ. ուր Թէպէտ առաջին խորհուրդ նորա յայն հրեշտակութեի՝ էր ձգել զեզեկիա 'ի բարեկամութեի, բայց արտաքին երևոյթն էր իբր 'ի խնդակցութեի ընդ վերադարձ առողջութեի նորա։ Այց միանգամայն պատուէր ետ իւրոց հրեշտակաց տեղեկանալ և վասն սքանչելի նշանին, զոր գրեթէ ամենայն երկիր կարէր տեսանել։ Յրոդոտոս ըստ սովորութեի իւրում խառնելով ընդ բազում խառնակութիս ժամանակաց և անձանց և ստութեց՝ երբեմն և նշոյլ իմն ճշմարտութեի, գրեաց թէ տեսաւ արեգակն ծագել յարևմտից. որ յարևելեան կողմանս երուսաղէմի եղև ճշմարիտ, յորժամ արեգակն յետս դարձաւ։ Հաբելացւոց արքայի եղև արդէն առնուլ ծանօթութեի յիսրայելացւոց անտի, որ էին 'ի բաբելոն, այլև 'ի թղթոց յերկրէն հրեաստանի՝ թէ այն սքանչելիք եղեն 'ի շնորհս եզեկիայ արքայի. այլ կամէր 'ի նմանէ առնուլ ճշգրիտ տեղեկութեի յաղագս այնր նոր հրաշալի դիպուածոյ հանդերձ ամենայն պարագայիւք։

Յեզեկիա ուրախ եղև ընդ այն շքեղ հրեշտակութեի օտար թագաւորի. այլ ուրախութեի նորա յետոյ դարձաւ նմա 'ի տրտմութեի. զի անձնահաճութեաբ իմն ընկալաւ զնոսա պատուասիրաբար. և առ 'ի տալացուցանել 'ի նոսա զմեծ ինչ զանձնի՝ անխոհեմ մնասարծութեաբ եցոյց նոցա զամենայն գանձս իւր, մինչև չմնալոյ իմիք 'ի տան իւրում, զոր ոչ տեսին.* Յս բարձրացաւ սիրտ նորա॥. ասէ գիրն։ Հանցանքն թէպէտ ներելի էր, բայց 'ի նմանէ որ լուսաւորեալ էր յոյժ. և այնչափ գթովք խնամարկեալ 'ի նմանէ, արժանի եղև խիստ կշտամբաց.

նաց և պատժոց։ Իբրև մեկնեցան 'ի նմանէ հրեշտակքն, եմուտ Եսայի մարգարէ, Եհարց ցարքայ, թէ ուստի՞ եկին նոքա, և զի՞նչ խօսեցան, և զի՞նչ տեսին 'ի տան նորա. և Եզեկիա պատմեաց նմա զամենայնն պարզուելոյ սրտի և ուրախութեան։ Յայնժամ պատասխանի ետ մարգարէն, և ասէ. արդ լուր զպատգամն հոն զորս թեց. ահա եկեսցեն աւուրք, և առնուցուն զամենայն որ 'ի տան քում է, և տարցին 'ի բաբելոն, և մի ինչ ամենևին թողուցուն. և ոչ այս միայն՝ այլև որդիք քո առցին և եղիցին ներքինիք 'ի տան թագաւորին բաբելացւոց։ Լուր սպառնալեացս խոնարհեցաւ արքայ, խոստովան եղև բեկեալ սրտիւ՝ եթէ պակասեցաւ. և կամակար նուիրեաց զանձն 'ի հնազանդութիւն կամաց հոն յամենայնի։ Այս արագ զեղջ արքայի հաճոյ եղև նմա. վասն որոյ ասաց ոչ առնել զայն առ նորին կենդանութեան, այլ յաւուրս որդւոց նորա։

ԳԼ. ԺԲ.

Փրկուելոյ սպանելեաց եղեկիայ և երուսաղէմ յաղագս 'ի յեռաց սենեքերիմայ ասորեստանեայց արքայի։ Մահ եղեկիայ։

Այս իբր գործեցին յերուսաղէմ, մինչ սենեքերիմ արքայ առ սակաւ տիրեալ բազմաց սահմանագլուխս քաղաքաց՝ եկեալ զտեղն առեալ էր համբրէն բանակաւ իւրով 'ի ներքոյ լաքիս քաղաքի, առ 'ի սկսանիլ զպաշարումն երուսաղէմի։ Այս քաղաքս 'ի ծը գրոց. ուր ասի, թէ Եզեկիա առ ծողոպրելոյ զանձն 'ի պատերազմէն յարուցելոյ 'ի վերայ նորա (յամին՝ յորում հիւանդացաւ, որպէս տեսաք 'ի վերոյ,) առաքեաց 'ի բանակն ասո-

բեստանեայց 'ի լաքիս հրեշտակս առ սենեքերիմ արքայ, խնդրելով առնել խաղաղութիւն ընդ նմա դաշնադրութիւն իւիք, որ իցէ տանելի։ Սենեքերիմ եդ 'ի վերայ նորա երեքհարիւր տաղանդ արծաթոյ, և երեսուն տաղանդ ոսկւոյ. այսինքն երեսուն և եօթն հազար և չինգհարիւր լիտր արծաթ, և երեք հազար եօթն հարիւր և յիսուն լիտր ոսկի։ Զեզեկիա եդ 'ի մտի՝ թէ անկեղծ մտօք արար նա զդաշնադրութիւնն, վասն որոյ փութացաւ առաքել զպահանջեալն. այլ առ 'ի կուտել զայնչափ ոսկի և արծաթ՝ ստիպեցաւ դատարկել ըզգանձն իւր, մինչև ձեռն արկանել և 'ի գանձ տանն տաճն. այլև կոտորել զոսկին 'ի դրանց տանն տաճն և 'ի սեմից, զորս ինքն պատեալ էր ոսկւով։ Յայսմանէ յայտնի երևի, թէ հրեշտակք բաբելոնի եկին յառաջ քան զայս կողոպուտս գանձուց. ապա թէ ոչ՝ չունէր եզեկիա ինչ, յոյր վերայ կարելոյ պարծիլ առաջի նոցա։ Զի և՝ զի թէ զկնի պատերազմին եկեալ էին, խնդակից լինէին նմա ոչ միայն վասն առողջութեան, այլև յաղագս ազատելոյ նորա հրաշիւք 'ի ձեռաց ասորեստանեայց. իսկ զայսմանէ չեղև բնաւ զրոյց։

Սենեքերիմ ստեաց դաշնադրունն, առ զգանձն, և 'ի պատերազմն ոչ կոստեցաւ։ Բառաքեաց 'ի լաքիսայ երիս պատգամաւորս զթարթան, զռաբսարիս, և զռափսակ յերուսաղէմ, կոչել զեզեկիա 'ի հնազանդութիւն՝ մինչև իցէ պաշարեալ զքաղաքն, և 'ի յետին թշուառութիւն ածեալ։ Ռափսակ էր գլխաւոր 'ի պատգամաւորս. որոց եկեալ մերձեցան յերուսաղէմ, և կացեալ 'ի վերայ ջրմղին վերնոյ, որ էր առ ճանապարհաւ ագարակին թափչաց յարևելեան կողմն երուսաղէմի մերձ 'ի ձորն կեդրոնի, խնդրեցին խօսիլ ընդ արքայի։ Զեզեկիա անպատեհ համարելով անձին ելանել առ նոսա և ինքնին անմիջապէս խօսել ընդ նոսա, առաքեաց և ինքն զերիս 'ի պաշտօնեից իւրոց՝ լսել զառաջարկութիւն նոցա։ Զի առաքեալքն էին՝ եղիակիմ որդի քեղկեայ հազարապետ. ուր երբայեցին ըն-

թեռնու, որ 'ի վերայ պանն. լատինն և ասորին՝ վերակացու պանն. և զի տունն 'ի նոր գիրս առանց յատկացուցչի սովորաբար ցուցանել զտաճարն, յայնմանէ բազումք համարին զնա քահանայապետ։ Այրկ որդն էր սոմինաս արքունի դպրապետ. 'ի վերայ սորա խնդիր է, թէ արդեօք սա իցէ սոմինասն, որ 'ի գիրս եսայեայ կոչի հանդերձապետ. առ որ սա տիկ կշտամբանօք և սպառնալեօք առաքեցաւ եսայի. գլ. ԼԲ. 15. զոր թողումք 'ի քննուն մեկնչաց։ Այսկ երրորդն էր յովաք որդի ասափայ որ 'ի վերայ յիշատակաց։

Այրդ՝ իբրև եկին երեքեան սորա, ռափսակ եդ առաջի նոցա զպատուէր զոր ունէր 'ի ձեռն իւրմէ՝ ասել ցեզեկիա, զի խաղաղութիւն լիցի անձնատուր հանդերձ թագաւորեալ քաղաքաւ իւրով՝ սենեքերիմայ ասորեստանեայց արքայի. և զայս երիւք ջանայր պնդել։ Այս՝ որպէս թէ եզեկիա չունի այնչափ զօրութիւն, զի կարիցէ պաշտպանել զքաղաք իւր յերեսաց ահեղ զօրութեան ասորեստանեայց։ Այրկրորդ՝ թէ փարաւոն արքայ եգիպտացւոց, յոր կարծէր յուսացեալ զեզեկիա, անզօր է որպէս զգուպն եղեգնեայ, յոր թէ ոք յենուցու՝ կործան անկանի։ Այս երրորդ՝ թէ մի վստահ լիցի ասպաւնիել յանծ իւր, իբր զի եբարձ զբարձունս և քակեաց զսեղանս որ էին 'ի նոսա, և պատուէր ետ հրեաստանի և երուսաղէմի՝ առաջի սեղանոյն միայն որ 'ի տաճարն երկիրպագանել. ուստի առաւել երկնչիլ ունի 'ի նմանէ՝ քան յուսալ 'ի նա։ Ռափսակ երբայեցերէն խոսէր և մեծաձայն. որ չէր հաճոյ հրեշտակացն եզեկիայ. զի լսէին զնուորքն որ կային 'ի վերայ պարսպաց 'ի պահպանութիւն. աղաչէցին զնա խոսիլ ընդ նոսա ասորերէն. զի իմանամք մեք ասէն. և մի խոսիր հրեաերէն 'ի լուր ժողովրդեանդ որ կան 'ի պարսպիդ։ Այսկ ռափսակ, որոյ կամք էին ահ արկանել ժողովրդեան, որպէս զի ինքնին անձնատուր լինիցին, և առաւել բարձրացոյց զբարբառ իւր 'ի լեզու երբայական, և ժայթքեաց հայհոյութիւնս անբերե-

լիս. մի լսէք սակ եղեկիայ, զի խաբէ զձեզ, և սակ թէ որ փրկեսցէ զմեզ. միթէ փրկելո՞վ փրկեցին աստուածք ազգացն զաշխարհ իւրեանց, զի փրկեսցէ որ զերուսաղէմ'ի ձեռաց իմոց։ Լրկունքեր յոյժ եղեակիմ, թէ գուցէ կամ լսօղքն պղտոր եսցին 'ի բանից անօրինին, և կամ զինուորք պարբասին՝ ոչ հանդուրժելով տանել այնպիսի հայհոյութեաց՝ ոչ միայն խօսիցին ինչ ծանր, այլև աղերսամբ և նեփիւք տայցեն պատասխանի՝ ընդդէմ ազգային իրաւանց։ Լայց եղեկիա յառաջագոյն կանխատես խոհեմութեամբ՝ խստիւ պատուիրեալ էր ամենեցուն, զի մի ոք խօսեսցի ինչ բնաւ կամ շարժեսցի։ Լու նոքին իսկ երեքին հրեշտակքն պատուէր ունէին 'ի նմանէ մի ինչ որոշել կամ պատասխանել, այլ միայն լսել զառաջարկութիւնն, և գալ պատմել նմա։

Դարձան հրեշտակքն և մտին առ արքայ պատուեալ զհանդերձս յահէ սպառնալեաց, և պատմեցին նմա զպատգամն ռափսակայ։ Լոստ կարէր եղեկիա 'ի միտ առնուլ, թէ քանի՞ մեստ բերին թագաւորութիւն ունել բազում ամրոցս. վասն զի նախկեալ նորա բաժանել զզօրս իւր 'ի պահպանութիւն այնչափ ամրոցաց՝ չունէր յայնժամ առ իւր զօրս բաւական առ իշխել ձակատիւ ընդդէմ թշնամւոյն. և մի միայն երուսաղէմ քաղաքն ընդարձակ այնչափ բազմապատկեալ պարսպօք, և պատուարօք, և մարտկոցօք՝ կարօտ էր ամբողջ բանակի 'ի պահպանութի՛ իւր։ Լամմանագլուխ քաղաքք և ամրոցք մի առ մի առան. զօրքն որք կային 'ի նոսա 'ի պահպանութի՛ կորեան. և այնպէս եթէ արքայն մնայր փակեալ յերուսաղէմ, չունելով արտաքոյ զօրս, զի նոքա արտաքուստ, և սոքա 'ի ներքուստ պատերազմեսցին, հարկ էր նմա 'ի պարտութի՛ մատնիլ, և լինել անձնատուր գազանացեալ թշնամւոյն։

Լայր ՝որ արքայն 'ի մեծի տագնապի, բայց և այնպէս ոչ խոպառ լքաւ, յուսացեալ թէ աղօթք զօրաւորագոյն են քան զբազում գունդս զօրաց.

պատառեաց զՀանդերձս, և զգեցեալ քուրձ ապաշ-
խարութեան՝ եմուտ 'ի տաճար ՅԵՍՈՒ առնել աղօթս
առ Յոր։ Եւ առաքեաց զերիսակիմ քեղկեայ, և
զծերս 'ի քահանայից քրձազգածս առ Եսայի՝ աղա-
չել, զի և նա իւրով ընդունական աղօթիւք օգնա-
կան լիցի մնացորդաց Ժողովրդեան Իսրայելի։ Եվ՝ ինչ
այս իրք լինէին յերուսաղէմ, հասին առ Եզեկիա
և այլ հրեշտակք հրովարտակաւ սենեքերիմայ. որ
լի էր սաստկագոյն սպառնալեօք, և մեծամեծ հայ-
հոյութիւք առ Ած։ Եւ ուր առեալ էր սենեքերիմ
Ճշմարիտ կամ սուտ, եթէ թարակ արքայ Եթով-
պացւոց գայ զօրօք յօգնութիւն Երրայեցւոց. զայն
համբաւ ՝ի արպիսի և իցէ՝ լուեալ սենեքերիմայ, խա-
զացոյց զանակ իւր 'ի լաբիսայ 'ի ղօնս իրր 'ի
յանկագոյն տեղի Ճակատելոյ ընդդէմ Եթովպաց-
ւոց։ Եւ զի փոյթ նորա էր երագել զառուն
Երուսաղէմի, մինչև իցեն հասեալ Եթովպացիք,
այլ քանզի չկարէր յայնժամ գրոհ տալ զինուք 'ի
վերայ քաղաքին, ՝ջանայր սպառնալեօք զարհուրե-
ցուցանել։ Եւ զեզեկիա ընթերցեալ զՀրովարտակն՝
դարձաւ 'ի տաճար անդր հանդերձ հրովարտա-
կաւն, և տարածեաց զայն առաջի տապանակի ՅԵՍՈՒ.
իրր ասել առ Ած, զի նա ինքն պաշտպան լիցի յառա-
ջիկայս դատի՝ ոչ այնչափ Ժողովրդեան, քանզի
իւրումն Ածպետական մեծվայելչութիւն. միանգա-
մայն և եկաց յաղօթս ՝ջերմ և ցաւագին խանդա-
դատանօք։ Եւ գուցէ մինչև էր աւարտեալ եզե-
կիայ զաղօթս, ահա եհաս առ նա պատասխանի
առ 'ի Յեսայեայ՝ այսպէս. մի՝ ինչ երկիցես, զի այս-
պէս ասէ Յոր զօրութեաց Ած Իսրայելի վասն սենե-
քերիմայ, մի մոցէ նա 'ի քաղաքդ յայդ. և մի մեր-
ձեսցի այնչափ՝ զի կարիցէ նետս հասուցանել 'ի
դա. և մի պատեսցէ վահանաւ, և մի կանգնեսցէ
զդոլաւ հողակոյտ պատնէշ. այլ ընդ Ճանապարհ
ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի, և սպանցի յիւրում
թագաւորեալ քաղաքի։ Եւ 'ի գիշերին յայնմիկ եկ
հրեշտակ Ածն, և սատակեաց գրեթէ զամենայն
բանակն ասորեստանեայց. զի ընդ առաւօտն կան-

թեալ սենեքերիմ Հետեւ զանակ իւր կորուսեալ. զի էին հարիւր և ութսուն և հինգ հազար գիակունք սիռեալք 'ի դաշտի։ Այլ ինքն ամենապարտ և նախատալից փախուցեալ գնաց անկաւ 'ի նինուէ թագաւորական քաղաք իւր. ուր զկնի սուղ ժամանակի մինչդեռ զոհս մատուցանէր նասրաքայ կռոց իւրոց, որդիք նորա ադրամելէք և սարասար սպանին զնա անդ առ ոտս սեղանոյն. առին զկենաս նորա, այլ ոչ զթագաւորութիւն. քանզի սոսկացեալ ժողովրդեան ընդ եղեռնական հայրասպանութիւն՝ յարեան 'ի վերայ նոցա. իսկ նոքա փախստական գնացին անկան 'ի հայս. և թագաւորեաց ասորդան եղբայր նոցա։ Այս եղև կատարած ահեղ պատրաստութիւն պատերազմի և կենաց սենեքերիմայ ամբարտաւան արքայի ասորեստանեայց. զոր բազում ամաք յառաջ մարգարեացաւ Եսայի. որպէս գրեալ կայ 'ի տասներորդ գլուխ մարգարէութեց նորա։

Հերոսոս և Երոդոտոս ասեն, թէ սենեքերիմ գնաց յեգիպտոս, և պաշարեաց զքեղքէս քաղաք՝ որ 'ի բերան նեղոսի. և թէ արքայն եգիպտոսի դիմեաց առ աստուած իւր. ուստի արքայն եթովպացւոց եկ առ 'ի հասանել յօգնութիւն եգիպտացւոց. այլ 'ի միում գիշերի հասեալ անհամար բազմութիւն մկանց 'ի բանակն ասորւոց, կրծեցին զաղեղունս, զնետս, զվահանս, և զսանձս ձիոց. և ընդ առաւօտն տեսեալ սենեքերիմայ անզէն զբանակ զօրաց իւրոց, բռնադատեցաւ մեկնիլ 'ի պաշարմանէ անտի։ Հարեկամք երոդոտոսի՝ ասէ կաղենոս, գուցէ դժուարուն կրիցեն հաւանիլ՝ մկանց այնչափ վնասս գործել այնպիսի լուութիւն, զի 'ի բազմութիւն անտի զինուորաց չիցէ ոք զգացեալ։ Այլ ես ասէ՝ մեծագոյն դժուարութիւն կրեմ հաւանել, թէ սենեքերիմ իցէ պաշարեալ զքեղքէս քաղաք յեգիպտոս, որովհետեւ եթէ գիրք յայտնի ասեն, պաշարել նորա զքաղաքս 'ի հրեաստան։ Այլ պայծառ տեսանեմ 'ի վրիպակ լրոյ գրեալ նորա զայն մեծ պատերազմ մկանց. և մեծագոյն վրիպակ

զանենքերիմ արքայ ասորեստանեայց ասել թագաւոր արաբացւոց։ Յաւելու բերոսոս թէ 'ի դառնալ սենեքերիմայ յեգիպտոսէ, եգիտ զի 'ի միւմ գիշերի էին մեռեալ 'ի ժանտախտէ հարիւր և ութսուն և հինգ հազար 'ի զօրաց անտի, որք ընդ առաջնորդութիւն ռափսակայ պաշարեալ էին զերուսաղէմ. այն զի՝ հաւաստի է 'ի նախագրեալ բանից եսայեայ, եթէ երուսաղէմ ոչ պաշարեցաւ։ Այլ չատ է մեզ, զի և արտաքին մատենագիրք գմնէ աղօտ իմն ունէին ծանօթութիւն զիրացս աներկբայ եղելոց առ մեզ ըստ որ գրոց։

Յետ այսց զանազան անցից կեցեալ եղեկիայ այլևս ամն ոչ սակաւ յանդորրու միշտ բարեպաշտ, միշտ փառաւոր, և միշտ երջանիկ՝ թագաւորեալ ընդ ամենայն ամն քսան և ինն, մեռաւ խաղաղութիւն. թողեալ զերկրաւոր թագաւորութիւն որդւոյ իւրում մանասէի. և ինքն վերաչուեաց 'ի ժառանգութիւն թագաւորութեան արդարոց. և մարմին նորա թաղեցաւ 'ի բարձրագոյն տեղւոջ գերեզմանաց որդւոցն դաւթի. և փառս և պատիւ ետուն նմա 'ի մնջուն նորա ամենայն յուդա և բնակիչք երուսաղէմի. Ի. ՇԱՅ. ԼԲ. 33։

ԳԼ. ԺԹ.

Մանասէ, և Ամն նգաքաւորդ յուդայ։

Իբրև մեռաւ եղեկիա, թագաւորեաց մանասէ որդի նորա ընդ նորա՝ մանուկ ամաց երկոտասանից։ Կարծիք բազմաց այն է՝ թէ եղեկիա կացուցեալ էր զեղբակիմ քեղկեայ զայր Ճշմարիտ ուծապաշտ, իմաստուն խորհրդական, ըստ ոմանց և քահանայապետ, 'ի դատաւորակ որդւոյ իւրում մանասէի, միանգամայն և իբր խորհրդական և մա-

տակարար թագաւորութիւն 'ի մանկութիւն նորա, որպէս յովիդայէ առ ոզիա. ըստ որում օրէն իսկ է և յամենայն բարեկարգեալ թագաւորութիւն։ Հիմն կարծեացս հաստատեալ է 'ի բանն Եսայեայ. ԳԼ. ԷԷ. ուր 'ի կշտամբել մարգարէին զսովմնաս, և 'ի մարգարէանալ զչարաչար կատարած նորա յերկիր օտար, ցուցանել զնա լինել քահանայապետ. (թերևս 'ի ժամանակին աքազու զկնի ուրիայ կռապաշտեալ քահանայապետի սա էր անցեալ 'ի տեղի նորա, յորժամ ամենայն կարգք և օրէնք տաճարին էին խանգարեալ.) զի խօսի անդ զքահանայապետական զարդուց և զիշխանութեանց, որք ասէ բարձցին 'ի նմանէ, և տացին Եղիակիմայ. այսպէս ունելով բանին. * Եւ եղիցի յաւուր յայնմիկ կոչեցից զծառայ իմ զԵղիակիմ քեղկեայ. և զգեցուցից նմա զպատմուճանդ քո. և տաց նմա զպսակդ քո ձոխութիւն. և տաց 'ի ձեռս նորա զհաղարապետութիւնդ քո։ Յայս վայր խօսի զքահանայապետական զարդուց և զիշխանութեանէ. ապա յարէ. * Եւ եղիցի երբև հայր բնակչացդ Երուսաղէմի, և բնակչացդ յուդայ. և տաց զփականս դաւթի նմա, իշխեսցէ, և ոչ ոք իցէ որ նմա ընդդէմ դառնայցէ։ Եւ կացուցից զնա իշխան 'ի հաւատարիմ տեղւոջ. և նստցի յաթոռ փառաց տան հօր իւրոյ. և եղիցին 'ի նա յուսացեալք ամենայն փառաւորք տան հօր իւրոյ 'ի փոքրկանց մինչև 'ի մեծամեծս ... և եղիցին կախեալ զնմանէ։

Զստ յայտնի ասէ, թէ Եղիակիմ Եղիցի երբև հայր Երուսաղէմի և ամենայն թագաւորութեան. և թէ տացին նմա փականք, այսինքն կատարեալ իշխանութիւն 'ի վերայ տանն դաւթի. որում ոչ ոք իշխեսցէ ընդդէմ դառնալ։ Որ յայտ է թէ ոչ խօսի զքահանայական գործոց և է թէ, կամ լոկ զհոգևորական իշխանութիւն, այլև զմտաւորաբարութիւն թագաւորութեան, և զքաղաքական իշխանութիւն։ Եւ ապա յաւելու մարգարէն. * Յաւուր յայնմիկ այսպէս ասէ Տէր զօրութեան, շարժեսցի մարդ հաստատուն 'ի հաւատարիմ տեղւոջէ, անկցի և կործանեսցի։

Լ.յս է, նոյն ինքն Եղիսկիմ զոր 'ի վերոյ իշխան ասաց, և ասա մարդ հաստատուն, կամ իւրով բնական օրհասիւ բարձցի, և կամ մանասէ յաձել հաւնակաւ՝ մերժեսցէ զնա յիւրմէ, իբր ոչ ևս պէտս ունիլ առաջնորդի. ուստի և ինքն մանասէ խոպառ * անկցի և կործանեսցի ‖ յամենայն ամպարշտութիւն. * և բարձցին փառք նորա 'ի նմանէ ‖. զի գերի վարեսցի։ Որ լատինն ընթեռնու, * Լնկցի և կորիցէ, որ կախեալ կայր զնմանէ ‖. այսինքն մանասէ՝ որ կախեալ կայր զեղիսկիմայ։ Յայսմ ամենայնէ յայտ է թէ զայս իշխանութեան վարեաց Եղիսկիմ 'ի մանկութենէ մանասէի, և ոչ որպէս ոմանք կարծեցին՝ 'ի ժամանակի գերութենէ նորա. ապա թէ ոչ՝ վերջին մասն մարգարէութենն, թէ 'ի շարժիլ մարդոյ հաստատնոյ 'ի հաւատարիմ տեղւոջէ՝ անկցի և կործանեսցի, ոչ Հնմարտէր. քանզի մանասէ յետ գերութենն ոչ եթէ անկաւ, այլ որ անկեալն էր և կործանեալ՝ յարեաւ և բարձրացաւ և հաստատեցաւ 'ի թագաւորութենէ իւրում. որպէս տեսցուք փոքր մի ստորև։

Յայսմանէ ունիմք իմանալ, թէ ցորչափ ժամանակս եկաց մանասէ ընդ առաջնորդութիւն եղիսկիմայ, բարի էր. կամ գոնէ չէր յայտնի չարագործ. և մտաբերութիւն թագաւորութենն բարեկարգեալ. և ծածկաւորութիւնն ծաղկեալ յերկրին յուդայ, որպէս յաւուրս եզեկիայ հօր նորա. և ժողովուրդն 'ի խաղաղութենէ։ Լ.յլ իբրև բարձաւ 'ի նմանէ իմաստուն առաջնորդն, անկաւ սուզեցաւ մանասէ յանդունդս ամպարշտութեաց. անօրինեցաւ, և եղ անօրինիլ և ժողովրդեան։ Հ ինեաց զբարձրաւանդակս կուռց, զոր կործանեաց եզեկիա հայր նորա. կանգնեաց զարձանս բահաղիմայ. և արար անտառս. և երկիրպագ ամենայն մոլորական աստեղաց երկնից՝ որոց թագաւոր և թագուհի ասին արեգակն և լուսին։ Լ.յլ որ առաւել զարհուրելի է, շինեաց սեղան յերկոսեան սրահս տանն տն՝ 'ի սրահ քահանայից և 'ի սրահ ժողովրդեան. և կանգնեաց 'ի նոսա կուռս երկնային լուսաւորաց. և

զորդիս իւր անցոյց ընդ հուր 'ի ձորն բէնոմայ, իմա՛ 'ի մասին ձորոյն կեդրոնի, ուր կայր կանգնեալ կուռքն մնղոքայ, զոմանս ողջակիզելով, և զոմանս 'ի վերայ բոցոյ անցուցանելով 'ի մաքրել և 'ի նուիրել զնոսա մնղոքայ կռոց։ Ընդ ամենայն երկիրն յուդայ յաճախեաց վշուկս և թողիչս. և ինքն գլխովին մնղեալ 'ի հմայութիւն և 'ի դիւթութիւն, փոխանակ առ մարգարէս դիմելոյ՝ դիւթէր և հաւահարց լինէր։ Այլ զի միանգամայն ասացից, անցոյց ամպարշտութիւն ոչ միայն քան զամենայն ամպարիշտ թագաւորս յուդայ և իսրայէլի՝ որ յառաջ քան զինքն, այլև քան զամենայն հեթանոս ազգսն, զորս վասն կռապաշտութիւն երարձ ՝ի յերեսաց իսրայէլի։ Այլ որ մեծագոյն է՝ զայն ամենայն առնէր 'ի դժոխային իմն կատաղութիւն լոկ 'ի բարկացուցանել զնոսա զարարիչ իւր։ Արձրաւցուցանէին մարգարէք զբարբառ իւրեանց, աղաղակէին ընդդէմ այնչափ անլուր անօրէնութեանց. այլ նա փոխանակ կասելոյ 'ի չարեաց՝ և առաւել ժանտանայր ընդդէմ նոցա. և առ լուծցուցանելոյ զլեզու նոցա, տայր կոտորել զնոսա. և երկոց զերուսաղէմ անպարտ արեանց ՝Նապաղեօք. * Թող (ասէ դիրն) զմեղս իւր, որով մեղոյց զյուդայ առնել չար առաջի նոցա։ 'Ի նմին կատաղութեան եւ կենդանւոյն ընդ մէջ սղոցել և զմեծն Եսայիաս զկոյծակնամաքուր մարգարէն. Թերևս զի նա խստագոյն և կշտամբէր զանօրէնութիւնս նոցա։

Լիոյլ եւ ՝Ն՝ զի իսրայէլեան ազգն համարէն տեսցէ 'ի մեծեղեռն գայթակղեցուցիչ թագաւորն իւր զերկրպագելի երկայնմտութիւն ՝Ն՝, որպէս զի յետոյ ամենայն աշխարհ և ամենայն ապագայ դարք տեսցեն յապաշխարող արքայն զիւր ՝Ն՝ոյին զանչափ և զանսահման ողորմութիւն։ ՝Նձկութիւնք և տառապանք եղեն ՝Նարտար բժիշկք վիրահատք անողջանալի խոցուածոց մանասէի։ 'Ի շղթայս և 'ի խաւարին բանտի արգելական՝ դարձաւ 'ի միտս, ծանեաւ զզառանցանս իւր, տաղտկացաւ 'ի նոցա

նէ, և էկն յողջմտութիւն։ Եւ էին ասորեստանեայք 'ի վերայ նորա. այլ ըստ որում էրեւի 'ի գրոյն, ոչ բանակաւ բաղմութիւն զօրաց, և ոչ պատերազմաւ. "Եւ ած ոգի (ասէ գիրն) 'ի վերայ նորա զնչխանս զօրու արքային ասորեստանեայց, կալան զնա, և կապեցին կապանօք. և տարան 'ի բաբէլոն॥. Բ. Նեռ. Լ. 11։ Զայս եղանակ խօսիլ, յուցանէ թէ չէղև այնչափ շառաչիւն զինուորական, այլ առաւել լռելեայն հնարիւք եկէն զօրապետք ոմանք մանաւոր գնդաւ զօրաց՝ լոկ զանձն մանաւէի ըզբռամբ ածել. զոր և ըմբռնեցին։ Եւ պատմէ ասա գիրն ոչ դիմադրութիւն, ոչ պաշարումն, և ոչ այլ ինչ մեծագոյն շարժումն կամ ամբոխումն. և այս տայ կարի հաւանելի կարծիս, թէ այն գալուստ ասորեստանեայց չիցէ լեալ ինքնաշարժ, այլ ծածուկ խորհրդակցութիւն և հրաւիրմամբ գլխաւորաց եբրայեցւոց, առ ազատելոյ զերուսաղէմ յարիւնարուշտ բռնակալէն. և ինքեանք ձեռօք իւրեանց տուեալ իցեն զնա 'ի ձեռս ասորեստանեայց։ Զայս գաւոր ասորեստանեայց ըստ հաշուին կաղինսոսի էր յայնժամ Նաբուքոդոնոսորն յուդիթայ, կամ որդի նորա։

Զայս գերութիւն մանասէի՝ որպէս երևի 'ի բազում իրաց կրօնի, և քաղաքական տնտեսութիւն զոր արար զկնի դարձի իւրոյ 'ի գերութէ, թուի լեալ իբրև 'ի կէսն ժամանակի թագաւորութիւն իւրոյ. որով և ժամանակն 'ի դէպ գայ աւուրց որդւոյ Նաբուքոդոնոսորայ։ Զայլ թէ զիարդ ասորեստանեայք տարան զնա 'ի բաբէլոն թագաւորական քաղաք քաղդէացւոց, որք արդէն 'ի բաց թօթափեալ էին զլուծ ասորեստանեայց, զայսմանէ չուսնիմք ինչ լոյս 'ի նոր գրոց։ Կարէ լինել ասէ կաղինոս, թէ երբայեցիք զայս բան հաստատեցին գաղտաբար ընդ արքային բաբէլոնի, որ բաբելկամութիւն էր ընդ տանն յուդայ. և թէ արքայն բաբէլոնի ինդրեալ իցէ յարքայէն ասորեստանեայց փոքր գունդ ինչ զօրաց բաւական առ այն գործ, որք արդէն անդ առ սահմանօք երկրին յուդայ էին.

ուստի և դիւրին երնոցա անշռինչ մեղմով յառաջ խաղալ յերուսաղէմ։

Եւ զիարդ և իցէ հաւաստի է թէ զմանասէ տարան գերի 'ի բաբելոն. ուր վարեցան ընդ նմա ոչ իբր ընդ թագաւորի, այլ իբրև ընդ մեղապարտ գերւոյ. արկին զնա 'ի բանտ. եղին զոտս յոտնակապս, և զձեռս 'ի շղթայս. և 'ի պարանոցն աւնուր երկաթի ծանրաբեռն՝ այնչափ, զի ինքնին խոստովան լինի յաղօթս իւր (թէպէտ չէ 'ի կարգս կանոնական ՝ծածուցեալ գրոց, բայց 'ի յարգի է յեկեղեցւոջ), թէ կորացեալ է և ոչ կարէ ուղղել 'ի վեր զանձն 'ի բռնութէ կապանաց երկաթից, մինչև դժուարանալ զտուր և առ ընչոյ առնել. * ոչ գոյ ինձ հանգիստ ||. ասէ։ Եւ թէ ցորչափ ժամանակ երկարեցան այս տառապանքն նորա, լռեն գիրք. բայց երևի թէ չիցէ յոյժ երկարեալ. զի ասէ գիրն. * Եւ իբրև վատնգեցաւ, ինդրեաց զերեսս տէր ՝ծոյ իւրոյ. և խոնարհեցաւ յոյժ յերեսաց ՝ծոյ հարցն իւրոց։ Յաղօթս եկաց առ նա, և լուաւ գոչման նորա, և դարձոյց զնա յերուսաղէմ 'ի թագաւորութիւն իւր. և ծանեաւ մանասէ՝ եթէ տէր նա է ՝ծած ||. Բ. Մաց. Լ Գ. 12։

Եւ այս եղանակ խօսիլ ցուցանէ, թէ 'ի սակաւ ժամանակս վճարեցաւ ամենայն ինչս Հանզի քաղցրացոյց ՝ծած զսիրտ արքային բաբելոնի, որոյ տեսեալ զգերին իւր 'ի զեղջ և յապաշաւ խոնարհեալ՝ արձակեաց զնա 'ի կապանաց, և դարձոյց անդրէն յաթոռ թագաւորութէ նորա։ Որ յայտնի երևի զի արքայն բաբելոնի ՝ոմ ոք և էր՝ զամենայնն գործեաց 'ի սիրոյ և բարեմտութէ, ՝ոչ ոգւով վրէժխնդրութէ, կամ շահասիրութէ աղագաւ. զի ոչ գտանեմք թէ փրկանս ինչ ընդ անձին պահանջեալ իցէ 'ի նմանէ. և ոչ հարկատու կացուցեալ զնա ինքեան. նա՝ տեսանեմք, զի զբազում քաղաքս իսրայելի եթող ընդ նորա տրութէ։ Զ ասն այսոբիկ ասէ կաղինոս՝ հաւանեալ եմ ես, և ծամանակն իսկ 'ի գէպ գայ, զի թէ մարմնաւոր բաղդն ոչ ևս թագաւորէր 'ի բաբելոն, գէթ որդի նորա իցէ

յայնժամ թագաւորեալ. և զարեկամութիւն ընդ Եբրայեցիս՝ զոր տեսաք 'ի վերոյ հաստատեալ ընդ Եզեկիայ, պահեալ իցէ։ Իսպէս և նոյն իսկ ասել դրոյն՝ թէ մնասցէ թագաւորեաց ամն յիսուն և հինգ, առանց որոշելոյ զնախընթաց ամն 'ի յաջորդ ամաց որ զմնի դերութիւն, ցուցանել թէ կարի համառօտ եղև ընդհատութիւն։

Օ Եղջ և ապաշաւ մնասցի ոչ եղև՝ որպէս դէպ լինի բաղում անգամ, վաղանցուկ երևոյթ ինն ապաշաւանաց՝ յաւուրս կապանաց Եւթն, այլ հաստատուն և անփոփոխ տևական զամենայն աւուրս կենաց իւրոց։ Իբրև դարձաւ յանթոռ իւր, ետ յայտնի հրապարակել գործով զամենայն վկայութիւն կատարեալ դարձի իւրոյ և զդաստութիւն։ Ռաջին փոյթ նորա եղև բառնալ և ջնջել 'ի միջոյ զամենայն կուռս և զամենայն գարշութիւս, զոր ինքնին եմոյծ յերուսաղէմ. խորտակեաց զսրձանս. քակեաց զամենայն սեղանս նոցա, զոր շինեաց յերուսաղէմ և արտաքոյ, և 'ի տանն Տն. և սրբեաց զտաճարն. ուղղեաց զսեղան Տն. և զոհեաց 'ի վերայ նորա զոհս փրկութիւն և օրհնութիւն. և պատուիրեաց ժողովրդեան Ծառայել Տն այ իսրայէլի. միայն զսեղանս որ արտաքոյ Երուսաղէմի 'ի վերայ բլրոց բարձանց կային կանգնեալ, ոչ յաջողեցաւ նմա բառնալ, յորս տակաւին զոհէր ժողովուրդն՝ ոչ կուռս, այլ այ բարձրելոյ։ Հարկ է ասել թէ գործ կարի դժուարին էր այն. զոր և ոչ նախանձայոյզ բարեպաշտ թագաւորք որ յառաջ քան զնա՝ կարող եղեն բառնալ, բաց յեզեկիայ. սակայն և զայն 'ի բանից և Եթ ռափսակայ գուշակելով ասացաք. զոր որ դիրն 'ի կարգի այլոց ածպաշտութիւն գործոց նորա ոչ պատմէ։

Հանգոյց ածմնասէ և յարտաքին պատերազմաց. բայց նա ոչ անփոյթ արար զզինուորական պատրաստութիւնքն, որպէս անկ է արթուն և յառաջատես թագաւորի. զի թէպէտ և չունէր պատերազմ յայնժամ, այլ ոչ կամեցաւ մնալ՝ առ դուրս տեսանել զթշնամին, և յայնժամ ձեռն արկանել

'ի պատրաստութեի զինուց և զօրաց։ Լ.ուտաքոյ քա-
ղաքին դաւթի կառոյց պարիսպ հզօր և երկայն
զոր և բարձրացոյց յոյժ յարևմտից ընդ հարաւա-
կողմն 'ի հեղեղատին գեհենի. որ երկայնեալ ձգէր
'ի դրանէն՝ որ կոչէր դուռն ձկանց, մինչև ցաշտա-
բակն յոփղայ՝ որ էր հանդէպ արևելեան դրան տա-
ճարին։ Լաբ զայն արար առ 'ի պահել ըստ կարի
'ի ժամանակի պաշարման զհաղորդութի երուսա-
զէմ քաղաքի ընդ հարաւային մասին երկրին յու-
դայ. միանգամայն և 'ի դժուարացուցանել թշնամ-
ւոյն յայնմ կողմանէ յարձակիլ 'ի վերայ քաղա-
քին։ Լաբ այնպէս այն կողմն լմներ փակեալ ընդ-
գէմ թշնամւոյն, և բացեալ առաջի քաղաքին առ
'ի ընդունիլ զգնութի արտաքուստ։ Լդ 'ի կար-
գի և զղինուորս. հրամայեաց զօրապետաց երթալ
նատիլ յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, և խնամ
ունել զնդի իւրեանց. և յամենայն քաղաքս յուդայ
պարսպաւորս՝ կարգեաց հրամանատարս քաջս և
խոհականս։ Լաբ այսպէս կատարելով 'ի գլուխս զա-
մենայն 'ի բոլոր մասունս որ ինչ յանկաւոր էր խո-
հական և բարեպաշտ թագաւորի, կնքեաց զկնիս
իւր ճծպաշտութիւն 'ի վաթանեերորդ եօթներորդ-
ամի կենաց իւրոց. և թագեցաւ ոչ 'ի գերեզմանս
թագաւորաց, որպէս կարծի առ խենալհութեան
իւրոյ, այլ 'ի պարտիզին արքունեաց, որ կոչէր
պարտէզ ոզայ. թերևս զի անդ մեռաւ ոզա 'ի
հպիլ նորա ձեռամբ 'ի տապանակն տն. Բ. Թ-Գ. Ը. 7։
Լ.ուաջին կնանք մանասէի զարհուրեցուցանն
և զմեղսասէրս, եթէ հային 'ի մոլեգին զառաջա-
նութիս նորա. իսկ վերջին կնանք նորա շատ են
'ի գութ 'ի գորով շարժել նաև զանմեղս, որոց
չիցէ երբէք մեղուցեալ ծանր մեղս։ Ա՝անասէ խրա-
խոյս է և քաջալերէ վհատեալ և յուսակտուր ան-
ձանց առ 'ի դարձ, տեսեալ 'ի նմա եթէ սրպէս
պատրաստ է ճծային անսպառ ողորմութին ընդու-
նել զնոսա, որք կատարեալ ապաշխարութիւն ար-
կանեն զանձինս 'ի գիրկս զթութեան նորա։

Յետ մանասէի թագաւորեաց որդի նորա

ամն, որ և ամենս կոչի, ամաց քսան և երկուց։ Օ՝ սմանէ չունիմք այլ ինչ 'ի նոր գիրս. բայց միայն զի ամենայն մասամբք նմանեցաւ ամենաբշտու թեց հօր իւրոյ մանասէի. զկուռս զոր եբարձ հայր նոր՝ անդրէն կանգնեաց յերուսաղէմ, և երկիրք ե պագ և ծառայեաց նոցա։ ԼՀԹէ եդեալ էր 'ի մոի թագաւորել ընդ երկայն՝ որպէս զհայր իւր, և այն պէս ունել ժամանակ դառնալոյ և ապաշխարելոյ, խաբեցաւ մեծապէս։ Ա՝ ասն զի հաղիւ սմն երկուս թագաւորեաց. քանզի ոմանք 'ի պաշտօնէից ան տի արքունեաց գաղտ միաբանեալ՝ յարեան 'ի վե բայ նորա, և սպանին զնա անդ յապարանս իւր. բայց և ինքեանք կորեան. զի ժողովուրդ երկրին եհար և կոտորեաց զնոսա։ Լ՝ մանասէ եւ ոճ քաջալերս որոց մեղան՝ առ 'ի դառնալ. 'ի յամն արկ երկիւղ որոց խորհին մեղանչել, զի մի մեղի ցեն։ ԼՀրկայնամտեաց բազումս առաջնոյն. այլ ոչ կամեցաւ նոյնպէս երկայնամտել երկրորդին. զի մի տացին մարդկան պատճառք յաճախել զմեղս, ակնկալութիւն ապաշաւելոյ 'ի ծերութիւն՝ յորժամ առ տկարութիւն ոչ կարիցեն ապաշխարել։ ԼՀսեբիոս վկայէ, թէ ըստ երբայականին ամն թագաւորեաց ամն երկու, այլ ըստ եօթանասնից՝ ամն երկոտասան, ըստ այսմ և 'ի գրչագիր օրինակս ոճաշնչին մերոյ տեսանեմք, զի ոմանք ամն ՇԲ. դնեն, և ոմանք ԺԲ։

ԳԼՈՒԽ Ի.

Յովսէփ արքայ յոտքայ։ Ոչդրան կին մարգարէ։ Մահ յովսէփայ։ Այրեցեալ մարգարէ։

Զ

Զկնի ամենայն թագաւորեաց 'ի վերայ յուդայ յովսիա որդի նորա՝ մանուկ ամաց ութից. և մինչև ցվերջատասանեւորդ ամ հասակի իւրոյ եղև ընդ դաստիարակութիւն առն խոհականի և ճշմարիտ ուղղապաշտի. որ միանգամայն եղև մատակարար և ուղղիչ ամենայն իրաց թագաւորութեանն։ Յայնմ հասակի ելով թէպէտ չև ևս էր առեալ 'ի ձեռին բովանդակապէս զտնտեսութիւն թագաւորութեանն, սակայն սկսաւ հրամայել և կարգել զիրս պատշաճեալս առ փառս և 'ի պատիւ ոյ։ Զայս ակնարկէ գիրն յասելն. Այս յութերորդ ամի թագաւորութեան, ինքն էր տակաւին ևս մանուկ (այսինքն անբաւական ինքնին վարելոյ զգործս թագաւորութեան), սկսաւ խնդրել զնոր ուծ դաւթի հօր իւրոյ։ Բ. Ռեգ. ԺԲ. 3։ Այս 'ի հասակի քսան ամաց, որ էր երկոտասանեւորդ ամ թագաւորութեան, յարեաւ և շրջեցաւ անձամբ ընդ երկիր թագաւորութեան իւրոյ։ Այս ետ կործանել և փշրել զամենայն կուռս և զամենայն դրօշեալս աստուածոց օտարաց, և զսեղանս բահաղիմայց քակել յանդիմանն աչաց իւրոց. և զանտառսն կոտորել և արմատաբի խլել, զի մի ևս բուսցին։ Կոտորեաց և զբովմարիմսն, այսինքն զքուրմս, զորս ամենն հայր նորա սփռեալ էր 'ի լերինս և յանտառս, և յամենայն քաղաքսն յուդայ, և շուրջ զերուսաղէմաւ արկանել խունկս արեգական, և լուսնի, և աստեղաց, և ամենայն զօրութեաց երկնից։ Բնդ նոսին կորոյս և զձիսն, և այրեաց զկառսն նուիրեալս արեգական։ Բ. Բովմարիմ՝ բառդ

Եբրայական՝ նշանակէ սեաղգեաց, այլև աղաղակող. այսպէս կոչեցան քուրմք լուսաւորաց երկնից. քանզի յորժամ պակասէր լուսինն 'ի լուսոյ արեգական, որսվ և իբրև 'ի սուգ մտեալ երևէր. և ինքեանք սեաւս զգենուին։ Կոչեցան և աղաղակող, զի 'ի զոհագործութիւս իւրեանց սովոր էին Եբրեայն Եբրեայն զաղաղակ բառնալ. որպէս արարին առ Եղիայիւ պաշտօնեայք բահաղու 'ի կարմելոս լերին։ Այրարձ և զտուն կադեսիմացն, այսինքն զնոսրանս պղծագործ արուագիտաց՝ կանգնեալս 'ի սրբազան տեղւոջ տաճարի նոն 'ի սրահ ժողովրդեան. ուր կանայք բնակեալք 'ի տաճարին, գործէին գնիւթ պիղծ խորանացն. կամ ըստ տառի և արարացի թարգմանութեան՝ զպատմուճանս, կամ զվարագոյրս կուսաց անտառացն։

Պղծեաց և զտեղին, որ էր 'ի ձորն Ենոմայ կամ Ենոնայ անուանեալ Ռոփոթ. որ գուցէ ծագեալ իցէ 'ի Ռոփ Եբրայական բառէն, որ նշանակէ թմբուկ. յայս անուն կոչեցեալ 'ի ձայնէ թմբկաց, զոր հարկանէին 'ի ձենձերեին զմանկունս 'ի գրկի պղնձածոյլ հրացեալ դրօշելոյն մոլորեալ. զի ձիչք եղկելի մանկանցն մի լիցին լսելի։ Ինքեաց և զսեղանս կանգնեալս 'ի վերայ բարձանց, ուր զոհէին ՝ի ձմարտի, բայց ընդդէմ պատուիրանի նորա. զորս ոչ ոք 'ի բարենախանձ բարեպաշտ թագաւորաց որ յառաջ քան զնա՝ կարող եղեն բառնալ. և քահանայք որք զոհեալ էին 'ի վերայ նոցա՝ արգելան 'ի քահանայագործութէ, մի և ես երբէք ելանել և զոհել 'ի սեղան նոն ՝՝՝ որ յերուսաղէմ։ Այլ զի բարձին ամենայն պատճառք դառնալոյ նոցա անդրէն 'ի նոյն մեղս, յեկամտից տաճարին տային նոցա զդարմանն կենաց. ըստ պատուիրելոյ օրինայ, որ յարգելու բնական արաւտաւորաց մերձենալ 'ի սեղան նոն՝ հրամայէ յեկամտից տաճարին ուտել նոցա. * Ամենայն այր, յորում իցէ արատ 'ի զաւակէ ահարոնի քահանայի, մի մերձեսցի մատուցանել զոհս ՝՝՝ . . . . 'ի սրբութէց անտի կերիցէ ||. Ղև. գ. 21. Յորմանեաց

և զսեղանն որ 'ի բեթել, զոր շինեաց յերոբովամ որդի Նաբատայ, և զքարինս նորա խորտակեաց և մանրեաց 'ի փոշի. և ետ հանել 'ի դերեզմանաց զոսկերս քրմացն բեթելայ, և այրել զնոսա 'ի վերայ այնր սեղանոյ՝ ուր նոքա զոհեցին զոհս բահաղու. միայն զոսկերս սուտ մարգարէին որ խաբեաց զայրն ՅԻՍ եկեալ 'ի յուդայէ՝ եթող 'ի տեղի իւր, առ չկարելոյ որոշել զնոսա յոսկերաց առն ՅԻՍ. զի երկոքին էին 'ի միասին 'ի միում տապանի ամփոփեալ։ Բ. յս այն այր ՅԻՍ է՝ որ մարգարէացեալ էր բաղում ամաւք յառաջ զայս ամենայն 'ի վերայ սեղանոյն բեթելայ յանդիմանն յերոբովամայ արքայի։ Պղծեաց և խորշելի կացոյց ամենեցուն զամենայն տեղիս, ուր ուրեք երբէք պաշտեցան կուռք, այրելով և սփռելով 'ի նոսա զոսկերս մեռելոց խաւն ընդ մանրուածոց խորտակեալ դրօշելոց և քարանց պիղծ սեղանոց. թո՛ղ զայնոսիկ զորս ետ լսել, և զիշի նոցա բնկենուլ 'ի հեղեղատս. զի մի երևեսցին բնաւ հետք նոցա։

Բ. ստանօր ասէ գիրն. Գ. Թագ. Իգ. 12. թէ զնոյն արար յովսիաս և ընդ սեղանն, զոր արար մանասէ 'ի սրահս տանն տն՝ն, և ընդ կռատունս զոր շինեաց սողոմոն յերուսաղէմ ընդ աջմէ լերին մասաթայ, այսինքն գայթակղութեան կամ կործանման։ Բ. յս բանք երևի թէ յերկայս արկանեն զդարձ և զսպաշաւ մանասէի և սողոմոնի։ Բ. յլ վասն մանասէի յայտնի ունիմք 'ի նոր գիրս, թէ նա ինքն յետ դերուլեթն եբարձ զդրօշեալս և զսեղանս զոր արար 'ի տանն տն՝ն. ուստի սեղանն զոր եբարձ յովսիա, յայտ է թէ՝ ոչ էր այն առաջին սեղանն շինեալ 'ի մանասէէ, այլ զոր յետոյ շինեաց ամոն որդի նորա՝ 'ի նմին տեղւոջ և նոյին չափով և ձևով. և առ յարդի ընծայեցուցանելոյ կոչեաց զնա յանուն մանասէի։ Զինակ իմն. սրահ տաճարին՝ ուր շրջէր յս, կոչէր սրահ սողոմոնի. ըստ այնմ, * Լ՝ս շրջէր յս 'ի տաճարին 'ի սրահին սողոմոնի ॥. յովհ. Ժ. 23։ Լ՝ս ահա յայտ է, զի սրահն այն ոչ էր շինեալ 'ի սողոմոնէ, զի

այն վաղու ևս աւելեալ էր 'ի քաղդէացւոց. սա-
կայն տակաւին յանուն նորա կոչի, վասն զի յետ
ժամանակաց 'ի նմին տեղւոջ և նովին ձևով շի-
նեցաւ։ Զ՝նոյն ունիմք ասել և վասն կռատանց
սողոմանի որ յերուսաղէմ 'ի մոսաթայ լերին. վասն
զի եթէ յուշ ածցուք զնախանձ և զիսյեթեռանդն
ջանս որով ռոբովամ՝, ոզիա, յովաս, յովսափատ,
եզեկիա և այլ թագաւորք յուդայ զՀետ սկսե-
ցան ջնջել զկուռս և բառնալ զամենայն հետս
կռապաշտութեան լերկրին յուդայ, անկարելի երևի
թէ նոքա ամենեքին թողեալ իցեն կանգուն ան-
ձեռամերձ զկուռսն աստարտայ դարշելւոյ սիդո-
նացւոց. և քամոսայ զաղտուտոյ մովաբայ, և մեղ-
քոմայ դարշելւոյ ամմնայեցոց՝ անդ յերուսաղէմ 'ի
թագաւորեալ քաղաքի 'ի գայթակղութեան ամենայն
ժողովրդեան։

Զ՝սպա յառաջ քան զյովսիաս այն կուռք և սե-
զանք էին բարձեալ. և ոչ գտանելով՝ ասէ կաղի-
նոս՝ թէ յումմի՛, այլ առաւել գտանելով զսողոման
ապաշաւեալ, ունիմք իրաւունս ասել՝ թէ 'ի նոյն
իսկ 'ի սողոմանէ բարձան, 'ի ցուցանել գործով
զդարձ իւր, և 'ի բառնալ զմերձաւոր պատճառս
գայթակղութեան։ Զ՝ոդ յովսիաս եկեալ զկնի այ-
լոց, և թերևս տեսեալ զի 'ի կռապաշտել ուրուք
'ի թագաւորաց՝ ժողովուրդն նոյնհետայն գիմէր
'ի լեառն, և պաշտէր անդ զմնացորդս խորտակեալ
կռոց, վասն որոյ առ բառնալոյ զայն անկարգուն՝
պղծեաց զտեղին, արկեալ 'ի նա ոսկերս մեռե-
լոց, և զբեկորս դրօշելոյ մնացեալ 'ի փոշի ցըր-
ուեաց յանոք տեղիս. զի մի՛ հետք ինչ կռոց մնաս-
ցեն 'ի լերին անդ։ Յովհաննէս մենոքիոս երևելի
մեկնիչ՝ նոր գրոց՝ զասացեալքս հաստատէ այսու
օրինակաւ. " Զ՝արմանք են՝ ասէ, զի տակաւին
կային կուռք սողոմանի զկնի եղեկիայ՝ որ եբարձ
զայնսոսիկ լերկրէն յուդայ. որպէս եբարձ մանասէ
ապաշաւեալ ընդ ամպարշտութի՛ իւր։ Զ՝ուրևի թէ
ասել պարտ իցէ, եթէ յամպարիշտ թագաւորաց
շինեցան մեհեանք և կանգնեցան կուռք համանմանք

այնոցիկ, զորս կանգնեաց սողոմոն յայն տեղիս. և վասն այնորիկ սողոմոնի ընծային իբրև առաջնոյ հնարողի ॥. 'ի Դեն. գ. Խագ. 23։

Լ. Ծպաշտութիւն նախանձն յովսիայ ձգեցաւ ոչ միայն 'ի յուդա և 'ի բենիամին, այլև 'ի քաղաքս Եփրեմի, և Մանասէի, և շմաւոնի, և նեփթաղիմայ, և յայն ամենայն տեղիս թագաւորութենն սամարիայ, որք յայնժամ էին ընդ նորա իշխանութիւն։ Լ. Յև թէ որպէս այն քաղաքք զորս առեալ էին ասորեստանեայք 'ի թագաւորաց իսրայէլի 'ի ձեռէ նոցա զսամարիա, անկան 'ի ձեռս թագաւորացն յուդայ, ոչ պատմէ նոր գիրն. բայց ստուգապէս ընդ ձեռամբ լինելոյն նոցա հաւատի երևի 'ի կատարեալ իշխանութենէն, զոր եղեկիա, և յովսիաս, և այլ թագաւորք յուդայ վարեցին 'ի վերայ նոցա. և որպէս 'ի պատմութենն յուդիթայ ուսնիմք տեսանել, յովակիմ քահանայապետ որ էր մնացեալ թագաւորութեան յուդայ՝ առաքէր պատուէրս յերուսաղէմ 'ի քաղաքսն յայնոսիկ այնպէս՝ որպէս առաքէր 'ի քաղաքսն յուդայ։ Լ. Մենայն իրօք հաւանելի երևի, թէ եղեկիա տիրեաց նոցա յորժամ հրեշտակ տն կոտորեաց զբանակ ասորեստանեայց հարիւր և ութսուն և հինգ հազար արանց սպառազինաց, մինչ զի սենեքերիմ արքայ նոցա՝ փախստեամբ մարդապուր զերծաւ, և նոս ևս յիւրում թագաւորեալ քաղաքի խողխողեցաւ յորդւոց իւրոց։ Լչ. ասորդանայ որ թագաւորեաց զկնի նորա, չեղև ժամանակ բաւական զօրաժողով լինել, և անդրէն յառաջին չափն կանգնել զշինուորական զօրութիւն ասորեստանեայց։ Լսկ նաբուքոդոնոսոր թէպէտ զօրացեալ էր յոյժ, բայց նախ պատաղեցաւ 'ի մարտ ընդդէմ մարաց. ապա յաղթեալ և նուաճեալ զնոսա՝ դարձոյց զզէնս իւր անդրէն 'ի վերայ թագաւորութենն սամարիայ կամ իսրայէլի. այլ ընդհացք նորա նահանջեցան առ բերտիղուս քաղաքաւ։ Լ. պա աւերեցաւ նիներ քաղաք. և ասորեստանեայք նուաճեցան ընդ ձեռամբ մարաց, և այնուհետև ոչ ևս կարացին խորհել

ինչ վասն իսրայելացւոց։ Եւ թագաւորք բաբելոնի, որք մինչև ցյովսիաս և ընդ բովանդակ ժամանակս թագաւորութեան նորա չև էին թշնամացեալ ընդ Եբրայեցիս, երևին ներել գերելոց, և այլոց որք 'ի ժամանակի պատերազմաց ցրուեալ էին յայլ և յայլ տեղիս երկրին այլազգեաց, դառնալ և անդրէն պատսպարիլ 'ի հրեաստան 'ի հայրենի երկիր իւրեանց, մինչև ապա եկ նաբուքոդոնոսոր։

Եւ այսպէս եհաս յովսիաս յութաստանեարորդ ամ թագաւորութեան իւրոյ, և 'ի քսանեարորդ վեցերորդ ամ կենաց իւրոց. և յետ մաքրելոյ և սրբելոյ 'ի դարշութեց կռապաշտութեան զերկիրն, և զտուն թագաւորութեան իւրոյ, ձեռնամուխ եղև 'ի նորոգութեան տաճարի տան։ Եւ մեծակառոյց հոյակապ շինուած կարօտ էր ընդ ժամանակս ժամանակս նորոգութեան. և մանաւանդ զկնի թագաւորելոյ ամպարիշտ թագաւորաց, որք կամ իրօք խանգարեին զնա յիմիք մասին, և կամ բոլորովին 'ի բաց լքանէին թողեալ անխնամ. նոյն իսկ տապանակն տան բաղում անգամ փոխեցաւ 'ի տեղւոյն սրբութեան սրբութեց. և քահանայք նախանձայոյզք ոչ հանգուրժելով տեսանել առաջի աչաց գործել զայնչափ դարշութիս, հեռանային 'ի տաճարէն։ Յովսիաս ետ նորոգել զամենայն, և զտապանակն հաստատել 'ի տեղւոջ իւրում՝ զոր շինեաց սողոմոն, զի մի ևս բնաւ շարժեսցի անտի։ 'Ի յուզել և 'ի խառնել զիրս տաճարին, եգիտ քեղկիա քահանայապետ զընդարիր մատեան երկրորդ օրինաց, զգրեալն մատամբք մովսիսի մարգարէի. զոր իբրև գտնէ անդէն առաքեաց առաքաչ. և ետ արքայ սափանայ դպրապետի ընթեռնուլ առաջի իւր։ 'Ի լսել արքայի զմեծամեծ սպառնալիս ընդդէմ յանցաւորաց ՅԾային օրինաց զգրեալսն 'ի մատեանի անդ, և գիտելով զի յառաջ քան զայն՝ ժողովուրդն իւր բազում անգամ յանցուցեալ էր յօրէնսն յայնոսիկ, զարհուրեցաւ յանձն իւր, պատառեաց զհանդերձս, և առա-

քեաց վաղվաղակի պատուէր քահանայից փոյթ տանել աղօթիւք և խնդրուածովք ցածուցանել զբորբոքեալ բարկութիւն ՝ի նմանէ և ՝ի ժողովրդենէ։

Լ՝ մատենին յայնմիկ չկայր ինչ նոր. և ինքն իսկ՝ որ յամենայնի զգուշաւոր էր ՝ի պահպանութիւն օրինաց գրոցն այնորիկ, զպատճէնն նորա ուսնելով առ իւր՝ ընթեռնոյր։ Լ՝այց ՝ի լսել զնոցն բանսն ընթեռնուլ ՝ի մատենի գրելոյ ձեռամբ նորին իսկ օրէնսդրի, նոր ինն երկիւղ հարաւ ՝ի սիրտ նորա՝ թէ չարիք մեծամեծք գալոց են ՝ի վերայ ժողովրդեան։ Լ՝ նմին ժամանակի բնակէր յերուսաղէմ՝ի մասենեաւ, որ էր տեղի ՝ի մէջ երկրորդ շրջապատ պարսպի քաղաքին, կին մի երևելի մարգարէ՝ կոչեցեալ ողդան. երևելի էր յայնժամ և երեմիա մարգարէ, որ յերեքտասանեորդամի թագաւորութենն յովսիայ սկսաւ մարգարէանալ. բայց յանանթովթ բնակեալ էր. վասն այնորիկ քեզկիա քահանայապետ և աքիկամ և այլք առաքեալք յարքայէ՝ առ վաղագոյն ունելոյ պատասխանի ինչ, թողեալ զերեմիա՝ գնացին առ ողդան։ Լ՝ուն լուսաւորեալ ՝ի նոնէ՝ դարձոյց զհրեշտակս առ արքայ այսպիսի պատասխանեաւ, թէ չարիքն սպառնացեալք ՝ի մատենին յայնմիկ՝ զոր ընթերցաւ արքայ, անշուշտ հանդերձեալ են գալ ՝ի վերայ երուսաղէմի, և ՝ի վերայ բնակչաց նորա մեղուցելոց. բայց արքայն զի պատկառեցաւ երկեաւ յերեսաց նոնն, պատառեալ զհանդերձս ելաց առաջի նորա, ոչ տեսցէ. զի յառաջ քան զհասանել չարեացն, մեռցի և ամիոփեսցի ՝ի տեղւոջ իւրում յերուսաղէմ խաղաղութիւն։

Լ՝այս մարգարէութիւն ևս առաւել վառեալ բորբոքեաց զեռանդն ածպաշտութիւնն ՝ի սիրտ արքայի։ Լ՝ռաքեալ ժողովեաց զամենայն իշխանսն յուդայ և երուսաղէմի, և զքահանայս և զղևտացիս, և զամենայն ժողովուրդն ՝ի մեծէ մինչև ՝ի փոքր. և ընթերցաւ ՝ի լուր նոցա ամենեցուն զամենայն բանս մատենին գտեալ ՝ի տանն նոնն։ Լ՝և ապա

երեալ 'ի վերայ սեանն՝ ուր յաղօթս եկաց երբեմն սողոմոն, եդ ուխտ առաջի նոցն՝ երթալ զհետ նոցն, և պահել զպատուիրանս նորա և զվկայուսն 'ի բոլոր սրտէ և 'ի բոլոր անձնէ։ Զնոյն ուխտ եւ առնել և որդւոց բենիամինի, որք գտան յայնժամ յերուսաղէմ 'ի տանն ՅՀՍ հաբցն իւրեանց։ Լուա ապա արար զպասեքն նոցա իւրոյ մեծահռչակ հանդիսիւ 'ի յորեքտասանեերորդ աւուր ամսոյն առաջնոյ, ժողովեալ յերուսաղէմ զամենայն զթագաւորութիւն՝ առնել զտօն պասեքին ամենեցուն 'ի միասին։ Լուիւրեաց նոցա, և եւ քաշեալ աղքատաց ժողովրդեան գումարեալոյ յերուսաղէմ, բաց 'ի գառանց և յուլուց՝ երեսուն հազար խոյս և նոխազս, և երեք հազար զուարակս՝ յիւրոց ստացուածոց. թագ զոր իշխանքն ետուն։ Վասն եղկիաս քահանայ և այլք 'ի գլխաւոր քահանայից՝ ետուն խոյս և որոջս և նոխազս երկու հազար և վեց հարիւր, և զուարակս երեք հարիւր. և քանանիաս և բանեաս և այլ իշխանք զևտացւոց ետուն ցղեւտացիսն խոյս հինգ հազար, և զուարակս հինգ հարիւր։ Լուա այնպէս արարին որդիքն իսրայէլի զպասեքն նոցա զեօթն օր մեծավայելուչ շքեղ և առատ հանդիսիւ՝ նուագարանօք և երգօք օրհնութիւն։ Լուստ նոր գիրն 'ի պատմել զհանդէս այնր տօնտխմբութեան խօսելով ըստ իւրումն սովորական ոճոյ, ասէ թէ այսպիսի պասեք ոչ երբեք եղև յիսրայէլի յաւուրց սամուէլի մարգարէի. և նոցին ոճով ասէ և վասն յոսիայ, թէ նման նմա ոչ եղև յառաջ քան զնա թագաւոր որ դարձաւ առ Տէր ՅՀՍ 'ի բոլոր սրտէ. և յետ նորա ոչ ոք յարեաւ նման նմա։ Որ է ասել, թէ այն պասեք և տօնախմբութիւն եղև մի 'ի մեծագոյն տօնախմբութեանց որք եղեն յիսրայէլի։ Լոյնպէս՝ թէ յոսիա գտաւ մի 'ի ջերմագոյն և 'ի տգր թագաւորաց. որ ոչ երբեք թուլացոյց զնախանձ ՅՀՍ պաշտաւութեան. մինչ զի ինքն և ժողովուրդ նորա միշտ հաւատարիմ գտան առ ՅՀՍ զամենայն աւուրս կենաց նորա։

'Ի մեծի խաղաղութիւն վայելելը թագաւորութի

նորա, և ոչ ոք արդեօք յարուցեալ էր 'ի վերայ նորա 'ի խառնել զնա՝ կամ զերկիր նորա, եթէ չէր ինքնագրաւ միջամուխ լեալ անխոհեմութիւն 'ի մարտ օտարին՝ 'ի տարւոջն, որ եղև վերջին ամ կենաց և թագաւորութեան նորա։ Փարաւոն նեքաւսով արքայ եգիպտոսի էլ բազմաձեռն զօրօք հարկանել զարքայն ասորեստանեայց առ գետովն Եփրատայ։ Այս թագաւոր ասորեստանեայց ի հաշուին կաղինոսի էր հայրն ասարսոյէրայ կամ արշաւրայ. (գԼ. Ի. 1.) ըստ ոմանց կիւաքսար կոչեցեալն առ արտաքին մատենագիրս։ Այս նախ թագաւոր մարաց ապա և ասորեստանեայց՝ նուաճեալ զնոսա ընդ իւրև, անյագ էր առ ընդարձակել զսահմանս տերութեան իւրոյ. որ թէպէտև զկնի հարաւ և 'ի պարտութիւն մատնեցաւ, սակայն և այնպէս եթող արշաւրայ որդւոյ իւրում հարիւր և քսան և հինգ գաւառս։ Այս կամէր նուաճել և զքաղաքն Եփրատ. և վասն այնորիկ ած զբանակ իւր առ Եփրատ գետով առնուլ զքաղաքն. և նախ առեալ զքարքամիս քաղաք որ առ նովին գետով արար վնաս իւր քաղաք զինուց, առ 'ի անտի անցանել 'ի բաբելոն։ Այս իրք ոչ պատմին յայտնի 'ի Գրոց. այլ զօրութիւն հաւաքին յայլ և այլ բանից 'ի Գրոց, և 'ի ժամանակէն, և 'ի դրից տեղեացն։

Յորժամ առին ասորեստանեայք զքարքամիս, յուսալով անտի յառաջ խաղալ զերկիրն քաղդէացւոց՝ ասէր թագաւոր նոցա. * Ոչ առի զաշխարհն՝ որ 'ի վեր է քան զբաբելոն և զքաղաքն։ Եսայ. Ի. 9. իրք ասել՝ առի քաղաքս հզօրագոյնս, ապա և առաւել առից զբաբելոն և զքաղաքն։ Կամ ըստ լատին թարգմանութեան. * Ո՞ւթէ ոչ որպէս քարքամիս, այնպէս և քաղաքն։ այսինքն նովին գետ։ Բուեթէ որով առի զայս քարքամիս քաղաք, առից և զքաղաքն. որ և այն էր առ Եփրատ գետով։ Յայնժամ արքայն քաղդէացւոց՝ կարծեցեալն հայր մեծին նաբուքոդոնոսորայ, տեսեալ զի չունի բաւական զօրութիւն առ դիմադրաւ լինել այնչափ բաղ-

մուԹԵ զօրաց ասորեստանեայց, Թերևս կոչեաց յիւր օգնուԹի զփարաւոն նեքաւով արքայ եգիպտոսի։ Եւ նեքաւով զօրու ծանուս. զոր լուեալ յոսիայ արքայի, և ոչ գիտելով զպատճառս մարտի նորա, գուցէ կասկածէր ԹԷ 'ի հրեաստան խորհիդաւ։ Ասողովեաց և ինքն զգօրս իւր, և եկ երԹալ ընդդէմ նորա։ Եւ նեքաւով առաքեաց առ նա հրեշտակս՝ ասել ցնա նստիլ անհոգ, զի զինք եգիպտոսի չեն ուղղեալ 'ի վերայ նորա, այլ ընդդէմ այլուսմ. և չունի յոսիայս օգուտ ինչ քաղել 'ի խառնելոյ զանձն յոտարին պատերազմ, այլ մանաւանդ մեծաս։ Եւ նստիցի հանդարտեալ, ոչ ոք նեղեսցէ զնա. ապա ԹԷ կամիցի մխել 'ի մարտ, զդՀՀ լիցի գուցէ ջարի հանդիպեսցի։ Եւ գիտելով նեքաւովայ՝ զի ընդ երկիւղած ածապաշտ Թագաւորի խօսի, Ջանացաւ՝՝ այ անուամբ ևս կասեցուցանել զնա 'ի խորհրդոյն. Եդ 'ի բերան իւրոց հրեշտակաց՝ ցուցանել նմա, ԹԷ այն շարժումն արքայի իւրեանց յՀՀ հրամայեալ է նմա. ուստի յայն գործ ՝՝ած ընդ նմա է։ Եւ ապա գիտասցէ յոսիայս. զի հակառակ կալ նմա՝ է՝՝ այ կամացն հակառակիլ. և զդՀՀ լիցի՝ գուցէ ՝՝ած ապականիցէ, կամ սպանցէ զնա։

Լսեսցեան հրեշտակքն զամենայն զոր ինչ պատուիրեաց նոցա նեքաւով, այլ շահեցան և ոչինչ. քանզի յոսիայս ոչ դարձաւ 'ի կամսոյ իւրոց։ Եւ այլ ԹԷ այն հրաման՝ զոր ասաց նեքաւով ունիլ յՀՀ, իցէ՞ հաղորդեալ նմա 'ի ձեռն Ճշմարիտ մարգարէի, ԹԷ ինքն յիւրմէ հնարեաց առ երկեցուցանելոյ զբարեպաշտ արքայն, չէ յայտ։ Զանգի ոՀ ասից ՝՝՝

բապար , այլ նաև 'ի ձեռն երեմիայ մարգարէի ազդեալ առ յովսիա . բայց նա երևի առեալ զայն բան իբր լոկ խորհուրդ և խրատ , և ոչ պատգամ։ Զնաց յովսիաս իւրով բանակաւ ընդդէմ Նեքաւովայ . և 'ի դաշտին մակեդոնացոյ 'ի դիմի հարան միմեանց երկոքին ձակատք. ոչ գտանեմք թէ յայնմ պատերազմի մեծ ինչ կոտորած եղեալ իցէ 'ի միոյ կամ 'ի միւս կողմանէ . բայց երբայեցիք կորուստ մեծ արարին անդ . կորուսանելով զմբ թագաւոր իւրեանց . որոյ հարեալ 'ի նետից աղեղնաւորացն եգիպտացւոց , թէպէտ առժամայն ոչ մեռաւ , այլ վտանգեցաւ յոյժ . և ըստ հրամանի նորա հանին զնա ծառայք նորա 'ի կառաց իւրոց , և եդեալ յերկրորդ կառն նորա՝ տարան յերուսաղէմ , և անդ մեռաւ։ Զաքէն վիրաւորեալ էր 'ի նետից թշնամեաց , սակայն և այնպէս մարթ է ՀՀմարտուիլ թէ ասել թէ մեռաւ խաղաղութիւն . վասն զի ոչ զսրովք և իցէ մահուամբ մեռանիցին՝ միշտ խաղաղ և անդորր մեռանին . և թաղեցաւ ընդ հարս իւր 'ի շիրմի իւրում . ըստ մարգարէութեանն ողջմնայ , որ ասաց ցՀրեշտակս նորա 'ի դիմաց նոյ . * Զ. հա յաւելից զքեզ առ հարս քո , և դիցեն զքեզ 'ի շիրմի քում խաղաղութիւն ։ Ի. ճայ. ԺԵ. 28։ Յայնմ ժամ երևեցաւ ջերմագութ սիրտ ժողովրդեան առնա 'ի սուգն մեծ , զոր առ ամենայն ժողովուրդն 'ի վերայ նորա։ Հրեմիա մարգարէ յառաւելութիւն ցաւոց սրտին յօրինեաց 'ի վերայ նորա ողբս ցաւագինս , զոր ամենայն իշխանք և կանայք առին 'ի բերան . և ետուն զայն՝ ասէ դիրն * իբրև հրամանաւ 'ի մէջ խրայէլի ։ իսմ , 'ի սահմանեալ ժամանակս , կամ յորժամ 'ի վերայ ձախող ինչ դիպուածոյ կամիցին օգաւոր երգս առնուլ , զայն ողբ որ 'ի վերայ յովսիայ՝ առցեն 'ի բերան . որ երևի թէ 'ի հնուէն կցեալ էր ընդ մատեանն ողբոց երեմիայի . եթէ իցէ որիշ 'ի նմանէ ։ Այլ դիրն այսչափ ինչ ասէ . * Լ. ու տա զրեալ են 'ի Ճառս ողբոցն ։ Ա՝ահն յովսիայ եղև յամի արարչութեանն աշխարհի 3565 . 'ի լրանալ երեսնեերորդ առաջնեերորդ ամի

թագաւորութեան նորա, և 'ի քառասնեքորդ ամի կենաց նորա։ Ի մեռանել նորա անկաւ կործանեցաւ նեցուկ թագաւորութեան յուրայ. և այնուհետև իբրև երբայեցւոց վերը 'ի վայր տապալեցան։

Լուրդ՝ մատիցուք անդրէն 'ի պատմութիւն նեքաւովայ։ Փարաւոն նեքաւով յաղթեալ երբայեցւոյ՝ զարձոյց զվէնս իւր 'ի վերայ ասորւոց. և յաջողութիւն նուաճեալ զնոսա՝ խաղաց անտի ցեփլատգետ. և առ 'ի ձեռաց ասորեստանեայց զքարքամիս քաղաք։ Լչ. մինչ կայր 'ի պաշարումն այնր քաղաքի, երեմիա մարգարէանայր զթշուառութիւնս՝ որք զկնի սուղ ժամանակի հանդերձեալ էին աւերել զեգիպտոս. (որպէս է տեսանել Երեմ. գլ. խշ.) որ և հինգ ամաք յետոյ կատարեցաւ 'ի ձեռն բաբելացւոց արքայի։ Ի նեքաւով տարապայմանն ընդարձակեալ էր զսահմանս հրութեան իւրոյ. ընդ իւրև ունէր զիսմայէլացիս, և զեդոմացիս, և հարկատու զկիլիկիստան. նուաճեալ էր և զասորիս, և հանեալ էր զմարս 'ի միոյ մասնէ քաղդէական ասորեստանեայց։ Լայլ երևի թէ ոչ սահման, զբոլով եթէ երբեմն կարի իմն անցանիցեն, յետ ժամանակի ինչ տոյ անդրէն յետս դառնալ հանդերձ ինասուք իւրեանց։ Զունիմք ծանօթութիւն թէ զինչ բանք և գաշինք եղեն 'ի մէջ երկուց թագաւորաց բաբելոնի և եգիպտոսի։ Ամենևս արքայն եգիպտոսի դիտէր ևևս ստանալ երկիր վասն իւր, և ոչ թէ օգնել քաղդէացւոյն. կամ արքայն բաբելոնի 'ի նեղ գոլով յայնժամ՝ եթող զամենայն եգիպտացւոց արքայի. որպէս զի յետոյ առցէ զամենայն, յորժամ ըստ բաւականին եցէ զօրացեալ, չունելով ինչ կարօտութիւն օգնուէ։ Ի անսի դաշնադրութիւնք սովորաբար կանոնաւորին 'ի հարկաւորութիւն. իսկ գործադրութիւնք կանոնաւորին 'ի հզօրագոյն կարողութիւն։ Լուսատ է յոյժ 'ի խոստանալ, որ ակնուսի լինել հզօրագոյն առ 'ի չպահել զխոստումն։ Պատրաստ է և արագ 'ի ստանալ իբր

գաշնակից, որ յուսայ լինել յեռոյ զօրաւոր և կա-
բօղ 'ի պահել զստացեալն իբրև որ։ Այսուքան-
դմնասոր արքայ բաբելոնի դաշնակցեալ ընդ եգիպ-
տացւոց ընդդէմ մարաց արքայի որ տիրէր պարսից
և ասորեստանեայց, յետ ամաց հնգից՝ յամի չոր-
բորդի յովակիմայ արքայի յուդայ՝ միաբանեցաւ
ընդ արքայի մարաց ընդդէմ եգիպտացւոց. և հար-
կանելով զեղիպտացիս՝ հալածեաց զնոսա մինչև 'ի
սահմանս նեղոսին իւրեանց. ուր աւար հարեալ և
կողոպտեալ եթող զնոսա. և սմնուհետև ընտրե-
ցին եգիպտացիք նստիլ ընդ երկար հանդարտեալ
'ի խնդրելոյ ընդարձակել զսահմանս իշխանութե-
իւրեանց։ Այս է՝ զոր ասէ երեմիա վասն փարա-
ւոնի եգիպտացւոց արքայի. "Այս յետ այնորիկ բը-
նակեսցէ իբրև զառաջինն". Երեմ. Խ. 26. այսինքն
յետ հարուածելոյն շատացի իւրով եգիպտոսիս,
որպէս յառաջագոյն։

Երեմիա մարգարէ էր մի 'ի քահանայից անտի,
որք բնակեալ էին յանաթովթ յերկրին բենիամի-
նի. յարգանտի մօրն սրբեաց զնա ոճ. և 'ի ման-
կութենէ որոշեաց 'ի պաշտօն մարգարէութեան և քա-
րոզութեան։ Այս զի հրաժարէր նա 'ի պաշտամանէ
անտի պատճառելով զթոթովուն լեզուին և զմանն-
կութի հասակին, մերձեցոյց ոճ զձեռն իւր 'ի բե-
բան նորա, և համարձակեցոյց զլեզուն 'ի խօսս.
ահա ետու ասէ զբանս իմ 'ի բերան քո։ Այս սկսաւ
այնուհետև զմանուկ մարգարէն վարժել 'ի յայտ-
նութիս. եցոյց նմա գաւազան ընդուզի՝ ունելով 'ի
գաղաթան իբր աչս բացեալս. (ուստի լատինն ըն-
թեռնու, "գաւազան արթուն կամ հսկող".)
այլև կատաղ յեռանդան, և երեսք նորա յերեսաց
հիւսիսոյ։ Սովին երկոքուսիքք նշանաք տուսցոյց 'ի
միտս նորա ընդ հանրապէս զպատիժս, որք 'ի ձեռն
հիւսիսական ազգաց հանդերձեալ էին հարուա-
ծել, և այրել զՀրէայս։ Այնխաւ ազգ արար նմա
ոճ սնդել զմէջս, արիանալ և պատրաստ կալ տա-
նիլ ծանր ծանր նեղութեց, և խստագոյն հակա-
ռակուեց. բայց զոյգ ընդ նմին քաջալերեաց զնա

ՀԵՐԿՆՍԻԼ. խոստանալով լինել միշտ ընդ նմա 'ի փրկել զնա յամենայն չարէ։

Հնազանդեցաւ Երեմիա ՅԱԾԱՅԻՆ Հրամանաց, և յամին երեքտասաներորդի Թագաւորութեան յովսիայ սկսաւ 'ի վար արկանել զպաշտօնն յանձնեալ նմա յոյժ։ Վարոզեաց մեծաւ ջերմութիւն զխստութիւս սարսափելիս խառն ընդ ախտակցութեան և զոբովական զթոյ։ Ախտապատմեաց զառաջին գալուստ քաղդէացւոց յերուսաղէմ. զոր յետոյ տեսցուք 'ի գլուխս տարեալ 'ի Նաբուքոդոնոսորայ. և մանր ստորագրեաց զմեծամեծ չարիս, զոր հանդերձեալ էր առնել յերկրին յուդայ. ազգ ասէ եկեալ 'ի հեռաստանէ անծանօթ երբայեցւոց, որոյ ոչ իմանայցեն զլեզու և զխօսս նորա. ուստի և ոչ կարիցեն աղերս արկանել նմա ոչ գիտելով զբարբառ նորա, առ 'ի մեղմել գէթ փոքր ինչ զխստութիւն սրտմտութեան նոցա։ Ստորագրեաց զերկրորդ գալուստ նոցա, և զժանտութիւնն և զչարիս զոր առնելոց էին՝ մինչև հանել 'ի գերեզմանաց զոսկերս թագաւորաց, և ընկենուլ 'ի դաշտս. և այլ բազում ինչ մարգարէացաւ և քարոզեաց. յորոց ինչ ինչ ունիմք 'ի մէջ բերել յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Յորչափ եկեաց յովսիաս, երջանիկ էր Երեմիա. զի անարգել քարոզէր և մարգարէանայր՝ չունելով դիմադրութիւն ինչ 'ի նմանէ. զի Տէր գիտէն գեղեցիկ միաբանիլ ընդ միմեանս 'ի բարին. քայց յետ այնորիկ առ այլովք թագաւորօք վարձք մարգարէութեան և քարոզութեան նորա եղեն հալածանք, բանտք, և հարուածք՝ որպէս տեսցուք 'ի յաջորդ պատմութիւնս։ Ա. առ այժմ աստ տացուք համառօտ ծանօթութիւնս ինչ և զայլոց մնացելոց ուրեմն փոքր մարգարէից. յորոց ոմանք փոքր մի յառաջ, և ոմանք փոքր մի յետոյ քան զայսոսիկ ժամանակս ծաղկեցան։

ԳԼ. ԻԸ.

Մեսիա. Յովել. Աբդիա. Նաում. Աքիակում.
Սոփոնիա. Անգէոս. Զաքարիա. Մաղաքիա։

Աքիաս մարգարէն՝ ի ցեղէն յուդայ, կամ մարաթացի՝ ի ցեղէն եփրեմի, մարգարէացաւ՝ ի ժամանակս երից թագաւորաց յուդայ՝ յովաթամայ, աքազու, և եզեկիայ։ Լախագուշակեաց զյարձակումն քաղդէացւոց՝ ի սամարիա՝ ի վերայ իսրայէլի, և զգերութիւն նոցա. և ապա՝ ի վերայ յուդայ, և զգերութիւն նոցա՝ վասն անբերելի մեղաց երկոցունցն. և մինաւանդ վասն մեղաց կուապաշտութիւն, անիրաւութեաց և բռնութեաց՝ ի յայիշատակել՝ ի միմեանց զայր և զտուն նորա և զժառանգութիւն. և՝ ի քերթել զմերթ՝ ի նոցանէ, և զմարմին նոցա յոսկերաց իւրեանց, զոր առնէին անպատիժ, զի չեր ոք վրէժխնդիր իրաւանց և արդարութեան։ Խօսի զերջանկութիւն եկեղեցւոյն յետ գալստեանն քրիստի։ Աշտամբէ զմեծ ապերախտութիւն հրէից. և դառնայ սպառնալ զկործանումն նոցա և զկորուստ։ Աղաչայ ընդ անպտղութիւն քարոզութիւն իւրոյ. ոչ տեսանելով՝ ի ժողովրդեան գործարժանի ապաշխարութիւն, ոչ դարձ՝ ի մեղաց, և ոչ ուղղութիւն վարուց։ Խոնարհի՝ ի լուսափայլ օրինակ ամենայն քարոզչաց՝ անձին ընծայելով զխրատութիւն այլոց՝ ի մեզ իւրեանց։ Լու յարէ, թէ որովհետև այլոց ոչ կարէ առնել բարութիւն, գոնէ ինքն կացցէ միացեալ ընդ ՆՅ. և ակնկալեալ սպասեսցէ ՆՅ փրկչի իւրոյ, կամակար հպատակութիւն արկանելով զանձն՝ ի նէրքոյ հարուածոց նորա։ Լու ապա մարգարէանայ, թէ փոփոխեսցին վիճակք. և բաբելոն նուաճեսցի ընդ ձեռամբ այլոց. և ժողովուրդ ՆՈՆ դարձցի յազատութիւն։ Զ.ՍԼ ԵՍ ասէ՝ ՆՈՆ ակնկալայց. սպասեցից ՆՅ փրկչի ի-

մոյ . . . . բարկութեան ոտն համբերիցս , զի մեղայ նմա. մինչև արդարացուսցէ զդատաստան իմ ։ Լաւ զարձուցեալ զքան իւր առ բաբելոն՝ ասէ . « Պաղաքք քո եկեսցեն 'ի պաշարումն և յաւար ասորեստանեայց . և քաղաքք քո ամուրք 'ի բաժինս . . . Դարձցի (տէր) և գթասցի 'ի մեզ , և ընկղմեսցէ զմեղս մեր . . . . Տացէ ճշմարտութեան յակոբայ , ողորմութեան աբրահամու , որպէս երդուաւ հարց մերոց ։ Դտ . Է . 7 . 8 . 12 ։ Մեկն նշանակէ և զծնունդ քոյ փրկչին մերոյ լինելոյ 'ի բեթղեհեմ յուդայ . (Մատթ . Ա . 5 ։) որպէս և զվերնակ եկեղեցւոյ նորա . Դտ . Է . Ե . ։ Զն որք համարին զսա նոյն ընդ միւս միքիայ մարգարէի , որ յաւուրս աքսաքու , այլ տարապայման յերկարաձգէն զկեանս նորա յայն պիսուամ ժամանակի՝ յորում որպէս այժմ՝ ուր ուրեմն լինէր անցանել զհարիւրամեանիւք . և սակայն այլևս բազում ամք պիտին առ 'ի լինել երկոցուն սոցա մի ։ Բայց հին աւանդութեամբ զոր ունի եկեղեցին՝ այս միքիա նահատակութիւն կնքեալ պսակեաց զկեանս իւր ։

Յովել մարգարէ որդի բաթուէլի ։ Ամն ժամանակի սորա ինչ ոչ գիտեմք . քանզի ոչ՝ ինքն 'ի մարգարէութիւս իւր խօսի ինչ զանձնէ , և ոչ յայլ տեղիս ոչ գրոց գոյ յիշատակութիւն ինչ զնմանէ ։ Մենոքիոս մեկնիչ գնէ զնա ժամանակիցս ովսիայ մարգարէի յաւուրս ողիայ , յովաթամայ , աքազու , և եզեկիայ թագաւորաց յուդայ . այլ ոչ ցուցանէ թէ յինչ հին ինն ինչ հաստատեալ այս իւր կարծիք ։ Մարգարէութիւն յովելեայ և քարոզութիւն են ուղղեալ միայն առ երկու ցեղս յուդայի և բենիամինի . յորմէ երևի՝ թէ ոչ առաքեցաւ նա յերկիրն իսրայելի , այլ յերկրին յուդայ և ևթ քարոզեաց ։ Քարոզք նորա են իբր անընդհատ յորդորք և սահմանք յապաշխարութիւն առ 'ի դարձուցանել զարկութիւն տն , որ արագ հասանելոց է 'ի վերայ երկրին յուդայ 'ի ձեռն քաղդէական զինու . զոր օրինակ 'ի թրթուր , 'ի մարախ և 'ի ջրեակ ։ Լիակատար զարհուրս և զսարսափումն՝ որ լինելոց է

յառու�երուսաղէմի։ Այս քաջալերեալ խոստմամբ մեծամեծ բարութեաց, զոր հանդերձեալ է տալ առնել ոչ միայն հրէից, այլև հեթանոսաց յառաջին գալստեանն քսի. ուր խոստանայ և զառաքումն հոգւոյն սրբոյ. որ կատարեցաւ յաւուր պէնտէկոստէի յերուսաղէմ 'ի նոր վերնատունն։ Նշանակէ զհարկու նշանս, որք յառաջընթաց լինիցին երկրորդ գալստեանն քսի 'ի դատել զամենայն աշխարհ։ Այս ինքն մեռաւ խաղաղութիւն, և թաղեցաւ յերկրի իւրում 'ի բեթոր։

Արդիւս կամ աբդիաս մարգարէ. զսա ոմանք՝ հիմնեալ ըստ մենոքիոսի 'ի հրէական աւանդութենս՝ ասեն լինել աբդիու, որ էր հազարապետ աքսաբու։ Այն երոնիմոս դնէ զսա 'ի ժամանակս յոսիաթամու, աքազու, և եղեկիայ ժամանակակից յովսիայ մարգարէի. բայց այլք ոմանք՝ ընդ որս և կաղինոս՝ յետոյ ուրեմն դնեն, այսինքն յետ առնելոյ քաղդէացւոց զերուսաղէմ. վասն զի ասէն, յանդիմանն հարկանել եդովմայեցւոց զդժնդակութիւն և զանդթութիւն զոր արարին յայնժամ։ Արդարութիւն նորա բովանդակ ուղղեալ է 'ի վերայ եդովմայեցւոց որդւոց եսաւայ որդւոյ սահակայ։ Անակութիւն նոցա էր 'ի լեռնային յապառաժուտ երկրի, որք վստահացեալ 'ի բարձրաբերձ լերինս, և 'ի բազմապատիկ քարանձաւս անմատոյց ժայռաւոր լերանց, անպարտելի համարէին զնոսա. վասն որոյ և էին յանդուգն, խրոխտ, ամբարտաւան և յանձնապատան. և անբերելի վիշտս հասուցանէին երբայեցւոց յետ թողթափելոյ զլուծ նոցա, և զլանալոյ զհարկս։ Հպարտութիւն սրտի քո (ասէ մարգարէն) բարձրացոյց զքեզ բնակել 'ի ծակս վիմոյ. բարձրացուցանել զընակութիւն քո, և ասել 'ի սրտի, ո՞վ իջուսցէ զիս յերկիր։ Որ-ժամ քաղդէացիք պաշարեցին զերուսաղէմ, եդովմայեցիք փոխանակ զօրավիգն լինելոյ երբայեցւոց եղբարց իւրեանց, միաբանեցան ընդ քաղդէացւոց. և իբրև առին նոքա զքաղաքն՝ և սոքա զոյգ ընդ նոսա աւար հարկանէին զնա. և 'ի բաժանել նոցա

վիճակաւ զաւարն՝ և սոքա բաժանորդ եղեն։ Այլ որ չարագոյն է, փութային երթալ առնուլ զկիրճն Ճանապարհաց, ընդ որս փախչէին երբայեցիք. և պարարեալ զամենայն վայրս՝ յարձակէին 'ի վերայ փախստականաց, և զապրեալսն 'ի նոցանէ սատակէին։

Այդիւս ասէ զանձնէ առաքեալ 'ի ձեռնէ ազգ առնել եղովմայեցւոց զպատուհասն վասն սպանման և ամպարշտութեանն զոր ամպարշտեցան յեղբարս իւրեանց յորդիս յակոբայ։ Զինեսցին ասէ և ըմբռնեսցին ծածուկ քարանձաւք նոցա. իջուսցին 'ի բարձրութիւն լերանց. զի ածցէ ոք ընդդէմ նոցա պատերազմողս զբաղդեցիս, ընդ որս միաբանեալ ուխտագիր էին, և նոքա եղծանիցեն և 'ի գերութիւն վարեսցեն զնոսա արտաքոյ սահմանաց իւրեանց։ Այլ թողուցուն յերկրին եղովմայ՝ որչափ ինչ թողուն գողք կամ աւազակք դիշերոյ 'ի մտանել 'ի տուն ուրուք յետ յաւիշտակելոյ զբաւականն իւրեանց. կամ որչափ կթողք այգեաց սոքոր են թողուլ ձիւս ընդ տերեւովք։ Այլ և սոքա տեսցեն զաւեր եղեալս իւրեանց խարայելացւոց, և ոչ ոմնհար լիցին կորստեան նոցա. այլ հաշտեսցին և հաշտեսցին 'ի նախանձաւոր, տեսանելով զնոսա զառնալ ուրախութիւն 'ի գերութիւն քաղդէացւոց։ Տեսցեն նախանձալից աչքք անդրին բազմանալ բնակչաց երուսաղէմի, և շինել զսիոն. և նագեթացիք որդիք յուդայ բնակեալք 'ի հարաւակողմն՝ ժառանգեսցեն զլեառն եսաւայ. և սեփալեցիք բնակեալքն 'ի դիւրի՝ տիրեսցեն փղշտացւոց. և անդրին առցեն զամենայն գաւառս եփրեմայ և սամարիայ, բենիամինի և գաղաադու։ Այլ գերիք խարայելի առցեն զամենայն երկիր քանանացւոց. և գերիք յուդայ ժառանգեսցին զքաղաքս նագեթայ, այս է՝ հարաւայ. որով խմանայ զերդոմ։ Այլ այսպէս ժողովուրդ եբրայեցւոց յետ գերութեանն բաբելացւոց՝ դարձցի և եղիցի ժողովուրդ և թագաւորութիւն ՏՈՆ. և ելցեն 'ի լեռնէն սիոնի առնուլ զվրէժ 'ի լեռնէն եսաւայ, որ ոչ էս երբեք յարիցէ։ Այսպէս մարգարէն արդիւ 'ի տանջանս եղովմայեցւոց՝ նկա-

բազդէ առաջի աչաց նոցա զկործանումն նոցա. և զյաջողութիւն երբայեցւոց՝ մանաւանդ 'ի խորհուրդ նորոյս իսրայէլի. զի տեսութիւն յաջողուէ օտարի, և սառաւել թշնամւոյ՝ առաւել տանջէ, քան թէ իւր իսկ կործանումն։

Լաւումմ մարգարէ եղկեսացի. և զսորայս ըզ-ժամանակ մարգարէանալոյ չունիմք յայտնի 'ի գրս. բայց հաւատի երևի, թէ էր յառաջ քան զգալուստ սենեքերիմայ 'ի պաշարումն երուսաղէմ. վասն զի զայն գալուստ և զմահ նորա նախապատմէ 'ի մարգարէութիւնս իւր։ Ի սկիզբն մարգարէութեաց իւրոց յանդիմանն առնէ զնածային սրգարութիւն սպառազինեալ 'ի վրէժխնդրութիւն ամպարշտաց, զի մի յանդգնեսցին մարդիկ մեղանչել և բարկացուցանել զնած թիւր յուսով թէ քաղցրութիւն ողորմութիւն նորա անչափ է և անսպառ։ Դուշակէ զկործանումն նինուէի. զոր այնպէս ճշգրիտ նկարագրէ, մինչ զի թուի նկարագրել զանցեալ ինչ պատահար աչօք տեսեալ. ուր նա ստորագրէ զայն, ըստ որում տեսանէր 'ի միտս 'ի յայտնութիւն ոն։ Լսէ թէ ջրհեղեղաւ կործանեսցի զնա. * Լու հեղեղաւ Ճանապարհաց արասցի վախճան ||. ՝. 8. ուր լսելիոն ընթեռնու, * հեղեղաւ անցաւորաւ ||. զոր բազումք իմանան յայլաբանական միտս. իբր թէ հեղեղանման բազմութիւն զորաց մարդոց և քաղդէացւոց կործանեսցի զնինուէ։ Բայց էն որք ըստ Ճառին ընթեռնուն զբան զբոյն, ընդ որս և կաղենոս. զի ասէ, չիք ասա և ոչ մի ինչ հարկ դիմել յայլաբանութիւնս, որովհետև թէ զիրք տեղւոյ քաղաքին որ էր առ տիգրիս գետով, և թէ արտաքին պատմութիւնք զնոյն ցուցանեն մեզ։

Ա՛յ է նոր ինչ և անլուր, թէ գետ յորդաջուր և սրընթաց՝ որպիսի է տիգրիս, աՃեցեալ և զայրացեալ յուխտնահոս անձրևաց՝ ուժգին ընդհարեալ ընդ պարիսպ քաղաքին, և զմասն ինչ նորա կործանեալ, մոռեալ իցէ և հեղեղեալ զքաղաքն, և այն՝ 'ի գիշերի յառաւել երկիւղ և յամբոխումն

բնակչաց։ Եւ այնպէս ջուր և խաւար կործանեցին հարին զԹշնամիս նոսա. որպէս ասէ մարգարէն.* Եւ զԹշնամիս նորա խաւար հալածեսցէ ||. զոր ունիմք և յարտաքին պատմութեանց։ Պատմէ դիոդորոս սիկիլեացի, թէ գուշակութիւն ելեալ յածէր առ նինուէացիս, թէ քաղաք իւրեանց ոչ երբեք առցի 'ի թշնամեաց, եթէ ոչ՝ յորժամ գետն 'ի թշնամութիւն դարձցի ընդ նմա. վասն որոյ թէպէտև ընդ ամս երկուս եկաց պաշարեալ, բայց խաղաղութիւն բնակչացն ոչ վրդովեցաւ. զի վստահացեալ էին յամրութիւն պարսպաց և աշտարակաց քաղաքին։ Եւ պա յամին երրորդի ահարկու ածումն ելն գետոյն 'ի պատճառս անընդհատ յորդահեղ անձրևաց կործանեաց քսան ասպարիզաւ չափ 'ի պարսպաց. և թշնամիք ընդ այն խրամ զոյդ ընդ ջրոյն մտին 'ի քաղաքն։ Եւ յսպէս պատմէ դիոդորոս յերրորդ գիրս իւր՝ համանձայն մարգարէութեանն նաւումայ։

Եւ տես նաւում կանխաւ և զանազանոյն խորհուրդ սենեքերիմայ թագաւորին նինուէի, որ խորհէր նուաճել ընդ լծով զյուդա, զորօրինակ նախորդք նորա սաղմանասար և թակղաթփալասար նուաճեցին զիսրայէլ։ Եւ մարգարէանայ՝ թէ ածինքեան պահեալ է զոյն. և ոչ տայցէ 'ի ձեռս հպարտութեան սենեքերիմայ զկատարումն գերութեան ժողովրդեան իւրոյ։ Թագաւորք ասորեստանեայց էտուն նեղութեան միանգամ 'ի գերութեան վարելով զիսրայէլ. այլ ոչ կարասցեն տալ և զերկրորդ նեղութիւնն գերելով և զյուդա։ Եւ ցցէ սենեքերիմ արքայ 'ի նինուէէ խորհրդով պատերազմ տալոյ և ընդ ոյ. և կարծեսցէ լինել անպարտելի յաղագս բազմութեան զօրաց իւրոց, և խորհեսցի ածել 'ի կապաշտութիւն զժողովուրդն յուդայ. այլ բազմութիւն զօրաց նորա 'ի կորուստ եղիցի։ Եւ յորժամ կեսցէ ոչ զգաւազանն, որով գայցէ սենեքերիմ հարկանել զերկիրն յուդայ. և յետ տալոյ նեղութեան ժողովրդեանն յուդայ 'ի տեսանել նոցա եկեալ 'ի վերայ ինքեանց զասորեստանեայս,* ոչ խնդրեսցէ կրկին զնոյն վրէժխնդրութեան 'ի նեղութեան ||. կամ որպէս

լատինն ընթեռնու, * ոչ յարիցէ կրկին նեղութիւն։ այսինքն ոչ թողցէ ՝ի նոցա ՝ի պարտութիւն մատնել, և այնպէս կրկնապատկիլ նեղութիւնն։ Լուսապա մարգարէանայ թէ յետ այնորիկ և զկապանս այսինքն զիշխանութիւն սենեքերիմայ՝ որով խորհէր կապել զյուդա, խլեսցէ ՝ի ՝ի նոցանէ։ և ոչ ևս տայցէ սենեքերիմ սերմանել զաւարակս իւր ՝ի պէտս արքունի շտեմարանաց։ Լուսի ևս մարգարէանայ, թէ կործանեսցին ջնջեսցին գրոշեալք և ձուլածոյք նինուէի։ և սենեքերիմ ոչ միայն օգնութիւն ինչ ոչ ունելցի յիւրոց աստուածոց, այլ տուն նոցա եղիցի նմա գերեզման։ ուր լատինն յաւելու։ * զի անպատուեցար։ այսինքն անարգեալ սպանցի ՝ի տան կռոց իւրոց։ որ և ըստ գրոյն անվրէպ կատարեցաւ։ որպէս տեսաք ՝ի վերս անդր։ Զայս ամենայն այնպէս ստուգութիւն մարգարէանայ, որպէս մատամբ ցուցանել զընթացս սուրհանդակաց երագել ՝ի վերայ լերանց բենեիամինի, գալ հասանել և տալ յերուսաղէմ աւետիս խաղաղութիւն, ազդ առնելով, եթէ վախճան եղև պատերազմին։ խրախուսել զժողովուրդն յուդայ առնել տօն ցընծութեան, և հատուցանել զուխտս իւրեանց։ զի մաշեցան բարձան անհետ եղեն թշնամիք նոցա։

Լոպա անցանէ նաւում ՝ի նկարագրել զանակ զօրաց քաղդէացւոց, որք հանդերձեալ էին աւար հարկանել և կործանել զնինուէ և զտերութիւնն ասորեստանեայց։ Լուաքի դնէ զահարկու զօրութիւն նոցա, որք գիտէն խաղալ ընդ հրոյ։ և զրազմութիւն գերանդազէն կառաց, որոց ոչ բաւեսցեն լայնարձակ ճանապարհք և ընդարձակատարք հրապարակք, այլ խռնեսցին ընդ միմեանս և խառնեսցին։ Լու ՝ի սպառազինութիւն անդ զօրաց հեծելոց և կառաց եղիցի այնչափ շոշոշուն, զի թուիցին իբրև զրոցաձաձանչ ցոլմունս հրոյ արձակել, և իբրև զփայլակս յոյսկոյս յայնկոյս փայլատակել։ և երևեսցին եկեալ յաւետ իբրև ՝ի հանդէս և առ ՝ի ցոյց շքոյ և փառաց, քան թէ ՝ի մղտա պատերազմի։ Լոքայն ասորեստանեայց յիշեսցէ յայն-

ժամ զզօրավարս իւր, զորս 'ի լոյծ մեղկութեան իւրում թուէր մոռացեալ. և կոչեսցէ զնոսա 'ի խորհուրդ, յորժամ ոչ ևս կարիցեն օգնել նմա։ Դրունք քաղաքաց, կամ որպէս ունի լաւինն՝ դրունք գետոց բացցին, և խրամատեսցին զզաբիսպս, և փութասցին քաղդէացիք 'ի պարիսպս. և պատրաստեսցեն զյառաջապահս։ Բազուկք կոծանեսցին, և ստացուածք յայտնեսցին, և պահապանք նորա անպատսպար գերեսցին. և կանայք գնայցեն յոգւոց ելանելով և մնչելով իբրև զաղաւնիս 'ի սրտից իւրեանց առ 'ի չկարելոյ յերկիւղ թշնամեաց Ձիչ բառնալ և ողբս 'ի բերան առնուլ։ Որմնաշինք օգտեսցէ աղաղակել զորապետաց ցղմնուորս կալ 'ի տեղիս և մարտնչիլ քաջութիւն, զի ոչ ոք ելիցէ, և ոչ ոք հայիցի։ Վանդի բովանդակ քաղաքն եղիցի յամբոխումն, 'ի շուարումն, և 'ի սոսկումն սրտի, և 'ի լքումն ծնգաց. և երեսք ամենեցուն յահագին զարհուրանաց սևացեալ իբրև զայրեցած պուտան։ Այ 'ի կողմն նորա եղիցի հեղեղեալ 'ի ջուրց, և միւս կողմն 'ի յափշտակութիւն. զի ամենայն ստացուածք և գանձք ամբարեալք 'ի յայտ եկեսցեն, և զօրք քաղդէացւոց յաւար ձեպեսցեն, յափշտակեսցեն ոսկի և արծաթ, և սպասս ցանկալիս որչափ և ախորժեսցեն. զի ոչ գոյ անդ չափ հարստութեան։

Բայսպէս խոնարհեսցի անկցի ինքնակալութիւն այն, որ առաւել անցագ էր քան զմնատակ առիւծ, յափշտակէր զաշխարհ ամենայն 'ի լցուցանել ըմբոյրիս իւր՝ զնինուէ քաղաք յորս կորեանց իւրոց. և ոչ ոք էր որ իշխէր ընդդէմ կալ նմա։ Այլ ևս արձակեսցէ պատուիրակս առ արտաքին թագաւորս իշխանաբար հրամայելով, և հարկապահանջս 'ի պահանջումն հարկաց։ Այրկիր թագաւորութիւն նորա եղիցի ասպարէզ վիրաւորաց, և գերեզման բազմութիւն կոտորելոց 'ի սրոյ. և ինքն որ գեղապանծն էր, և հզօր քան զամենայն թագաւորութիւս, և ահարկու ամենեցուն, անկցի, խայտառակեսցի, և եղիցի յանարգանս և 'ի նախատինս ա-

մենայն աշխարհի։ Բերել յօրինակ կործանման նի-
նուէի զկործանումն այլոց մեծանուն բազմաժողով
և բազմազանձ քաղաքի. զոր Եօթանասունք յորոց
և մերս կոչեն Վիճակ Մնայ. Եբրայեցին՝ Լօ-Մ.
ՄՅ. լատինն, և քաղդէացին Ղեւսանդրիա. յայտ է
թէ ոչ այն զոր շինեաց մեծն աղեքսանդր, զի կոր-
ծանումն նինուէի յառաջ է քան զշինութիւն նորա.
իսկ մարգարէն խօսի զվաղեմի քաղաքէ արդէն կոր-
ծանելոյ. ապա երևի թէ գոյր անդ քաղաք հին
յայլ անուն կոչեցեալ. զի ստորագրութիւնն զոր
տայ մարգարէն՝ 'ի դէպ գայ աղեքսանդրիոյ եգիպ-
տոսի. քանզի ասէ, * Որ բնակեալ է 'ի մէջ գե-
տոց, և ջուրք շուրջ զնովաւ. որոյ սկիզբն (ըստ
լատ. հարստութիւն) ծով. և ջուրք պարիսպ նո-
րա ‖ Գ. 8. զի է 'ի մէջ նեղոսի, և մարդոտեան
ծովակի առ միջերկրական ծովու։ Արդ՝ այն քա-
ղաք ասէ՝ որ հզօր էր ըստ գրոց տեղւոյն, ըստ
ամրակուռ պարսպաց, և ըստ ջուրց որք պատեն
զնովաւ, հարուստ ծովային վաճառականութամբ.
պաշտպանեալ եռապատիկ դաշնակցութիւն եգիպ-
տացւոց. Եթովպացւոց և Լիբէացւոց, սակայն և
այնպէս քանդեցաւ 'ի քաղդէացւոց. պատուականք
նորա վիճակաւ բաժանեցան 'ի գերութիւն. իշխանք
'ի շղթայս արկան. տղայք նորա զբարի հարան 'ի
զլուխս ամենայն փողոցաց։ Եւ ապա հետևեցու-
ցանէ, թէ և նինուէ զնոյն անցս ունի կրել, զի
չէ լաւագոյն քան զնա. արքայք զգաժակ բարկու-
թիւն տան, և յիմարեսցի 'ի մնաց. խնդրեսցի օգ-
նութիւն 'ի թշնամեաց իւրոց, զորս երբեմն ընդ-
ծտիւք կոխեր, և ոչ գացէ. և ամրութիւք պարիս-
պաց նորա եղիցին իբրև զթուզ հասեալ, որ 'ի
ցնցիլ ծառոյն, անկանի 'ի բերան կերողաց։ Եւ
զինուորք նորա եղիցին իբրև զկանայս անզօր.
թակղ ամրացուսցէ զդարիսպս ընդդէմ պաշարման,
թակղ կոխեսցէ կաւ և արասցէ աղիւս, զամենայնն
սպառեսցէ հուր. ժողովեսցէ օգնականս զիարանի-
ճաղանճն, այլ լինիցին նորա իբրև զմարախս մա-
ծեալս զցանկով յաւուր ցրտոյ, որք 'ի ծագել ա-

բեռս, այսինքն 'ի հասանել քաղաքացւոց՝ փախ-
ցեն, և ոչ երևեսցի տեղի նոցա. և ասորեստան-
եայք իբրև զՀօտ անհովիւ և անտերունչ, մատ-
նեսցին առամանց քաղաքացւոց։ Այս ամենայն
որ ցայս վայր ասացաւ յայսպառնի ժամանակ, եթէ
ընթերնուցումք մեք յանցեալ ժամանակ, ունի-
ցիմք զնշոյլս պատմութեան կործանման նինուէի.
զորոյ զպատճառս համառօտ բանիւ նշանակէ մար-
գարէն 'ի վերջին համար իւրոյ մարգարէութեան։
Ու եղև ամենեցուն գոյժ կործանման նինուէի,
վասն զի և մեղք նորա յայտնի և հրապարակեալ
եղեն առ ամենեսին. գայթակղութիւն չարութեան
իւրոյ եղև պատճառ կորստեան նորա. "Վասնզի
յՀՃՂ վերայ ոչ չոգաւ չարութիւն քո հանապազ", ասէ
մարգարէն. որով և կնքէ զմարգարէութիւնս իւր։
Ամբակում. բազումք ասեն՝ թէ սա է ամբա-
կում մարգարէն, զոր հրեշտակ ետն ածէ 'ի բաբելոն
բերել կերակուր դանիելի 'ի գուբն առիւծուց.
բայց ոչ զք հաւատի ինչ նշանաւ ցուցանէ։ Այս
մարգարէ մարգարէացաւ նախ քան զգերութիւնն
բաբելոնի. այլ թէ սրբոյն ժամանակաւ յառաջ՝
չէ յայտ. նոյնպէս չէ յայտ թէ ո՞վ թագաւորեր 'ի
բաբելոն, յորժամ դանիել արկաւ 'ի գուբ, և ընկ-
կալաւ կերակուր յամբակումայ։ Այս թէպետ մի-
տեալ եմ ասէ, կաղինոս 'ի հաւանութիւն վասն նա-
քուքոդոնոսորայ, բայց չէն բաւական զօրաւոր՝
պատճառք իմ առ 'ի հաստատել։ Ժամանակք երե-
կոցունց չէն այնչափ հեռի, զի սոիպէսցէն ըզ-
մեզ դնել երկուս ամբակումս. և ոչ այնչափ մօտ,
զի մի միայն հաստատեսցուք։ Այլ որովհետև չու-
նիմք հին ինչ 'ի գիրս, աւելորդ համարիմք պլնդ-
դել ինչ յանստոյգս։
Երդ՝ ամբակում մի 'ի փոքր մարգարէից, զոր-
մէ աստ խօսիմք, տեսեալ զմեծամեծ անօրէնութիւս
ժողովրդեան իւրոյ, և մանաւանդ զյափշտակութիւս
և զզրկողութիւս մեծամեծաց, զհարստահարութիւն
աղքատաց, զկաշառառուն դատաւորաց, զզրկումն
վարձուց վարձկանաց, զսանհարութիւն իրաւանց և

արդարութեան, առ ցաւոց սրտին ողբայր առաջի նոյ, թէ որպէս տեսանէ, զայն ամենայն և երկայնամիտ լինի։ Այսու պատճառաւ յայտնէ նմա ած զպատիժն, զոր պատրաստեալ էր ածել 'ի վերայ երուսաղէմի 'ի ձեռն զինու քաղդէացւոց, և թագաւորի նոցա նաբուքոդոնոսորայ։ Զայն լուեալ մարգարէին՝ դառնայ և աղաչէ զնոր խրատել զմոգուբդիւրբ իբրև զորդիս գաւազանաւ, և մի իբրև զթշնամիս սրով սատակել և կորուսանել։ Ցոյ նմա ած պատասխանի, թէ՝ և քաղդէացւոց պատրաստեալ կայ պատուհաս, փոխանակ զի առաւել քան զարժանն ժանտանայցեն. և նաբուքոդոնոսոր հպարտացեալ դիցէ 'ի մտի թէ անձին զօրութիւն առնիցէ զյաղթութիւս. վասն այնորիկ և պատիժ նորա դժնդակ ևս լինիցի. և զայս հրամայէ մարգարէին զրել 'ի տախտակս յայտնի, զի ամենեքեան կարիցեն համարձակ ընթեռնուլ։ Զմին իրի մարգարէն յերգս առնու զնաբուքոդոնոսոր. կրկնէ և չորեքկին զվայն նմա, զանազան նմանութիւք և այլաբանութիւք յիշեցուցեալ զանօրէնութիւս նորա։ Զպա 'ի մեթիթարութիւն ցաւալից մարգարէին՝ նոր բոգ՝ ած առնա զնոստու�յայտնելոյ իւրոյ մարմնով 'ի մէջ մարդկան։ Զի մարգարէին լցեալ ցնծութիւք ընդ այն յոյս ածահրաշ, երգով գոհաբանութիւն յայտնի, զմեծ ափափաք ըղձումն սրտի իւրոյ առ այն մեծ ակնկալութիւն։ Այս է զոր զիտեմք վասն ամբակումայ։

Սոփոնիա որդի քուսեայ, որդւոյ գոդոդիայ, որդւոյ ամարեայ, որդւոյ եզեկիայ մարգարէացաւ յաւուրս յոսիայի արքայի յուդայ։ Մարգարէութիւք նորա ըստ նմին օրինակի են 'ի վերայ անօրէնութեան և հանդերձեալ թշուառութեան երուսաղէմի։ Զմի զկնի որոտալոյ մարգարէական սպառնալեօք ընդդէմ հրէաստանի, բարձրացուցանէ զսպառնալիս բարբառ իւր և ընդդէմ փղշտացւոց, ընդդէմ ասորւոց, և ամենացւոց, մովաբացւոց և եթիոպացւոց, և ընդդէմ նինուէի։ Զպարէն մեծ է ողորմութիւն նոցա, զի յառաջ քան զհարուածել զամենայն

գաղանամիտ ազգս՝ ցուցանէ զգաւազանն բարկութեան, զի թերևս գէթ առ փոքր մի կասեսցին 'ի չարեաց։ Եւ վասն սորա այսչափ ինչ ունիմք 'ի օրս գիրս։

Ընդ կամ անգէտս մարդարէ մարդարէացաւ 'ի ժամանակս գարեհի վշտասպեայ յետ գարձի 'ի գերութեան. որ և յայտ անտի է, զի կշտամբէ զժողովուրդ իւր յերուսաղէմ, իբր զի 'ի բաց թողեալ զշինութեան տաճարին՝ այր իւրաքանչիւր փութայ նորոգել և մեծածախս յարդարել զապարանս իւր։ Մերժէ զպատճառանս, զոր բերէին՝ թէ չեռևս է հասեալ ժամանակ շինելոյ զտունն նոն. և այնմ դրոմելի անհոգութեան և զանցառութեան 'ի կատարել զշինութեան տանն նոն՝ ընծայէ զերաշտութեան և զանպտղութեան երկրին, որով պատժեաց նոցա։ Եւ ոչ միայն երկեզուս արկանէ, այլև քաջալերէ, խրախուսէ, և խոստանայ՝ թէ երկրորդ տաճարն հրաշափառագոյն եղիցի քան զառաջինն. քանզի անդ եկեսցէ նոցա մարդացեալ։ Յորդորէ և վառէ զզօրաբաբել սաղաթիէլեան զառաջնորդ գործոյն, և զմեծ քահանայն զյեսու յոսեդեկեան 'ի փոյթ շինութեան տաճարին. զի ընդ ձեզ է նոր ասէ օգնել և յաջողել։ Մի խօսից նորա պարզ է և բացայայտ. և սորա յորդորանաց և եռանդուն քարոզութեան է պտուղ՝ ջերմ և արագ կատարումն շինութեան տաճարին։

Օգաբերիա որդի բարաքեայ եղև երկրորդ խրախուսիչ և յառաջացուցիչ շինութեան տաճարին, որպէս ունիմք 'ի գիրս եզրասայ. յորմէ յայտ է թէ մարգարէացաւ նա 'ի ժամանակս անցեայ առ տեր ութեամբ գարեհի պարսից արքայի, որ կոչի որդի վշտասպեայ։ Մակայն չէ պարտ անտի հետևեցուցանել, թէ չիցէ նա սկսեալ բարձք յառաջ մարգարէանալ, այսինքն 'ի ժամանակս մեր գարեհի յաջորդին բաղտասարայ արքայի քաղդէացւոց, զոր ունիմք հաւաքել 'ի յայտնի նշանաց ինչ՝ որք գտանին 'ի մարգարէութիւնս նորա։ Ասասի յասել նորա 'ի սկիզբն գրոց մարգարէութեց իւրոց, թէ եղև

բան նոն առ նա յամենեանն ուԹերորդի յամի երկ-
րորդի դարեհի արքայի, ըստ կաղինոսի՝ էր նա
դարեհ մար. առ որով սկիզբն եղև այլ և յառա-
ջացումն մարգարէութեան իւրոյ։ Բ.ստ գրելոյն յա-
ռաջին գլուխ մարգարէութեան նորա՝ ասէ հրեշտակն
ցնոր ամենակալ. * Մինչև ցերբ ոչ ողորմեսցես 'ի
վերայ երուսաղէմի և քաղաքացն յուդայ, զորս անե-
տես արարեր՝ այս եօԹանասնեերորդ ամ։ Լ.օԹա-
նասնեերորդ ամ գերութեն եղև երկրորդ ամ մար
դարեհի. զի 'ի յաջորդ ամի կիւրոս արձակեաց
զերբայեցիս 'ի գերութէ։ Բ.ստ մարգարէութեան
նորա ոչ սկսաւ յամի դարեհի վշտասպեայ. որով-
հետև երբայեցիք առ նովաւ արգէն էին ազատեալ
'ի գերութէ։ Բ.ն նոյն գլուխ. հաւոր 16. ասէ ՇԾ,
* Դարձայց առ երուսաղէմ գԹութիւն։ ապա ցայն
վայր չէր տակաւին դարձեալ, կամ դարձուցեալ
զգերութեն։ Չերկրորդ գլուխ. հաւոր 1. ետես
մարգարէն 'ի տեսլեան զայր մի՝ որ ունէր 'ի ձե-
ռին լար երկրաչափ, և Եհարց ցնա Թէ յո՞ երԹայ.
ետ պատասխանի այրն՝ Թէ երԹայ չափել զերու-
սաղէմ. ապա ոչ էր յերուսաղէմ։ Լ.ս ևս ասի
անդ. * Բ.ն սիոն դիմեալ ապրեցարուք բնակիչք
դստեր բաբելոնի։ հաւոր. 8. ուր լսատինն ըն-
Թեռնու, * Ո՞ սիոն փախիր որ բնակեալդ ես առ
դստեր բաբելոնի։ Լ.զև առ նա և այլ տեսիլ առ
գետով եփրատայ. և չէ հարկ ասել Թէ հոգւով
կամ մտօք գնաց անդ։ Բ.յս ամենայն բանք մար-
գարէին բնապէս և ըստ ձառին մեկնին, եԹէ
զսկիզբն մարգարէանալոյ նորա գիցուք յերկրորդ
ամի մար դարեհի Թագաւորելոյ 'ի բաբելոն։ Բ.յլ
եԹէ ձգեսցի ցերկրորդ ամ դարեհի վշտասպեայ,
ասացեալն մարգարէին Թէ * այս եօԹանասնեերորդ
ամ է։, դժուարաւ մեկնի։ Լ.ս համառօտ միջոց
ժամանակի (իմա՛ իբր քսան ամաց) որ անց 'ի մէջ
մար դարեհի, և դարեհի վշտասպեան՝ ոչ արդելու
ասել, Թէ մարգարէն ծնեալ 'ի բաբելոն՝ էր յու-
ժի և ժիր առ երկրաչափեալ Թագաւորաց։ Օ.այսո-
սիկ ասացաք ըստ կաղինոսի. ապա Թէ ոչ՝ այլք

զմի և զնոյն գարեհ պարսիկ իմանան 'ի բանս զաքարիայ, և ըստ նմին մեկնեն զամենայն ասացուածս յետևառաջութիւն իւիք մարգարէական տեսութեանց։

Յայտնեցան զաքարիայ մարգարէի զանազան նշանաւք և նմանութիւնք փոփոխութիւնք և արկածք բազում թագաւորութեանց. բայց առաւել պայծառ և լուսափայլ խօսեցաւ վասն Մեսիի փրկչին մերոյ, և վասն եկեղեցւոյ նորա զկնի ծաւալելոյ աւետարանին։ Հաղորդք համարին՝ թէ սա է զաքարիայն, զորմէ խօսի քս յաւետարանի Մատթ. ԻԳ. 35. * Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն արելի արդարոյ՝ մինչև ցարիւնն զաքարիայ որդւոյ բարաքեայ. զոր սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ ॥։ Այլ էն և այլք, որք զասանն քսի իմանան վասն զաքարիայ հօր յովհաննու մկրտչի։ Մանաւ և վասն զաքարիայ որդւոյ յովիդայեայ, որ հրամանաւ յովասու սպանաւ ընդ մէջ տաճարին. որպէս տեսաք յիւրում տեղւոջ։ Իւրաքանչիւրն յերից կարծեացս ունի պաշտպանս երևելիս, և պատճառս յաւէտ և նուազ հաւանականս. զորս կարդ քանիս մերոյ ոչ ներէ առնուլ 'ի քննութիւն։

Մարգարէք՝ որ վերջին կարծի 'ի նշանաւոր մարգարէից, 'ի մարգարէսն իւր կշտամբէ և յանդիման հարկանէ ժողովրդեան Իսրայէլի զմեղս նոցա։ Յօսի զվերջին դատաստանէ, և զառաջին և զերկրորդ գալստեանէ մեսիային։ Աբրիք եբրայեցւոց շփոթեն զնա ընդ եզրի. բայց կարի տկար են պատճառք նոցա, և անբաւական 'ի հաստատել։ Զի յայտ՝ թէ եբրայեցաւ. հասարակաց կարծիք դնէ զնա յետ գերութեան՝ 'ի լրանալ չինուածոյ տաճարին. և ասէն զնմանէ մեռեալ մանկահասակ։

ԳԼ. ԻԲ.

Մատաւորք յոտքայ՝ որք Խաչաւորելոցն զինն յովսէայ մինչև ցգերեզմանն։ Յրեմիա մարգարէ։

Յովսիա 'ի մեռանել իւրում եթող չորս որդիս։ Զանդրանիկ նորա կոչէր յովանան. (որ 'ի մեզ յովաքազ գրի. ա. հայ. գ. 15.) այլ նա կամ մեռաւ յառաջ քան զմեռանել հօր իւրոյ. կամ ոչ արար ինչ արժանի պատմութեան. զի բաց յանուանէն չէք այլ ինչ յիշատակ զնմանէ 'ի հնգ գիրս։ Յրկրորդն է եղիակիմ, որոյ անուն փոխեցաւ յետոյ 'ի յովակիմ։ Յրրորդն յովաքազ. որ յետոյ կոչեցաւ սեդեկիա. երեմ. իբ. 11. կամ սեդրովմ. անդ. լբ. 7. (կամ աղում. ա. հայ. գ. 15)։ Խակ չորրորդն մնաթանիա, որ ապա կոչեցաւ սեդեկիա։ Յորև մեռաւ յովսիա առանց կացուցանելոյ զոք յորդւոց իւրոց իւր յաջորդ, ժողովուրդն թագաւորեցոյց զյովաքազ զերրորդ որդի նորա. գուցէ զնա յարմարագոյն քան զայլս դատեցան։ Յր յովաքազ 'ի թագաւորել իւրում ամաց քսան և երից, հօր բարեպաշտի՝ որդի ամպարիշտ։ Խոկ զինչ արար, և որպէս իւիք դրգռեաց զարքայն եգիպտացւոց ընդդէմ իւր, չէ յայտ. բայց այս հաւաստի է՝ զի փաբաւուն նեքաւով ոչ հաճեցաւ ընդ թագաւորել նորա։ Յրկն 'ի վերայ նորա, որ հազիւ ամիս երիս թագաւորեալ էր, և կապեալ տարաւ զնա ընդ իւր 'ի դերզաթա յերկիրն եմաթայ յաշխարհին ասորւոց. և ապա անտի փոխեաց զնա ընդ իւր յեգիպտոս, և անդ 'ի գերութեան մեռաւ յովաքազ։

Յայ ինքն նեքաւով՝ որ երարձ զթագ արքայութեան 'ի գլխոյն յովաքազու, եւ զայն, կամ թէ ասել՝ վաճառեաց եղիակիմայ երկրորդ որդւոյ

յովսիայ. և 'ի նշան իշխանութեանն իւրոյ 'ի վերայ նորա՝ փոխեաց զանուն նորա, և կոչեաց զնա յովակիմ. և արկ 'ի վերայ երկրին հարկ հաքիւր տաղանդ արծաթոյ, և տաղանդ մի ոսկւոյ. զոր վճարեաց ժողովուրդն՝ այլ իւրաքանչիւր տալով ըստ իւրում կարի։ Այր եղեալակիմ ամսոյ քսան և հնգից 'ի թագաւորել իւրում. նմանեալ ոչ հօրն, այլ ամենարիշտ եղբարց իւրոց, զի չբաւ ընդ մեղրաշաւիղ գնացս նոցա։ Այրև փոխեցաւ վիճակ Նեբաւովայ, քանզի առ արքայն բաբելոնի 'ի հեղեզատէն եգիպտոսի մինչև ցդէտն Եփրատ զամենայն ինչ որ էր արքային եգիպտացւոց. և վարեաց զնա 'ի Ճահիճն սահմանաց իւրումն եգիպտոսի, յովակիմ արքայ յուդայ փոխեաց զշլիահարն որ իւր. այլ ոչ ազատեցաւ։ Զանգի նաբուքոդոնոսոր արքայ քաղդէացւոց յաղթեալ եգիպտացւոց թագաւորին, առ ընդ իւրև և զՅերուսաղեմ, և հարկատու կացոյց զնա։ Հատոյց յովակիմ ընդ ամն երիս հաւատարմութիւն զհարկս. այլ ապա ժխտեալ երդմանն՝ զոր արարեալ էր յանուն ոյ իւրոյ, վտրանջեաց 'ի նմանէ՝ ոչ ևս հարկանելով զսովորականն հարկն։ Այլ նաբուքոդոնոսոր 'ի վերայ նորա, և կապեալ զնա պղնձի կապանօք՝ տարաւ 'ի բաբելոն. ընդ նմին տարաւ և զմասն ինչ 'ի սպասուց տանն տաճ. բայց փութով արձակեցաւ յովակիմ նոր խոստմամբ և նոր երդմամբ՝ զոր երդուաւ նմա։ Բ. պա իբրև դարձեալ երկրորդ անգամ ապստամբեցաւ, արար զնա ծած նշաւակ և խաղալիկ ամենայն ազգաց որ շուրջ զնովաւ. զի արձակեաց զմեկնակալէնսն քաղդէացւոց, ասորեաց, մովաբացւոց, և որդւոցն ամմնայ, և սամարիայ, արշաւել աւար հարկանել և ապականել զերկիր նորա։ Այս ինքն յովակիմ այնչափ ատելի եղև ժողովրդեան իւրում, զի յետ մեռանելոյ նորա հանեալ զդի նորա 'ի գերեզմանէն, ուր թերևս 'ի ձեռն առն ուրուք գթասիրի թաղեցաւ յերուսաղեմ ընդ հարս իւր, ընկեցին արտաքոյ դրանն երուսաղէմի 'ի դաշտի, 'ի տուէ 'ի տօթի, և զի-

շերի 'ի ցուրտ թողեալ 'ի կեր թռչնոց և շանց իբրև զնեխեալ դի ինչ. ըստ որում մարգարէացաւ Երեմիա վասն նորա, թէ՝ Զ Թաղումն իշոյ թաղեսցի ॥. ԷԷ. 19. Ա ԿԸ. 30։

Զ. Ուր ժամանակաւ յովակիմայ բազում և մեծամեծ տառապանս կրեաց Երեմիա մարգարէ վասն ազատաղէմ և արձակաբերան քարոզելոյ զՀամբոտութիւնս յայտնեալս և պատուիրեալս նմա տալ յոյժ։ Զուշակութիւք թշուառութեաց ծանր էն և դժուարահաճ՝ լսելեաց մարդկան, և՛ առաւել թագաւորաց. և այսպէս ինն երևի անմտաց, որպէս թէ որ գուշակէն՝ ցանկանայցէ զի գայցէն թշուառութիւքն և կամիցի զնիսաս այլոց. թէ ոչ վասն այլ ինչ խմիք, զէթ առ մնոտի փառաց, զի ինքն Հշմարտախօս երևեսցի։ Զ սկզբան թագաւորութեան յովակիմայ՝ զնաց Երեմիա ըստ հրամանին Աստուծոյ քարոզել սովորական սպառնալեաւք 'ի սրահ տանն Տեառն. և այն ինչ դադարեաց 'ի խօսից զոր ետ նմա Տէր հրամանս խօսիլ, յարեան 'ի վերայ նորա այն ամենայն բազմութիւն ունկնդրաց, քահանայք և ժողովուրդք, և սուտ մարգարէքն որ կային անդ, կալան զնա, և կամէին սպանանել։ Զուեալ իշխանաց՝ որք էին յարքունիս առ թագաւորն զխռովութիւնն զայն, եկին տեսանել թէ զինչ իբրև իցէն, և լսել զպատճառն։ Զ մթաստանութեանէ քահանայից և սուտ մարգարէից, որք 'ի մահ խնդրէին զԵրեմիա՝ վկայ էր այն անհամար բազմութիւնն. և ինքն իսկ Երեմիա ոչ ուրանայր զասացեալսն իւր, այլ միայն իրաւամբք արդարացուցանէր զանձն՝ վկայելով առաջի նոցա, թէ այնպէս խօսեցայ, քանզի այնպէս պատուիրեաց նմա Տէր խօսել. և ինքն Ը օրինի ջերմ և նախանձայոյզ քարոզչի նաև 'ի կապանս իւրում խրատէր և յորդորէր զամենեսեան յապաշխարութիւն. զի և Տէր մեղմասցի 'ի չարեացն, զոր խօսեցաւ վասն նոցա.

Զտաւ անդ ընդ ծերս այր մի ողջամիտ և երկիւղած աբիկամ անուանեալ օգնական Երեմիայի, զի մի մատնեսցի 'ի ձեռս խուժանին սպանանել

զնա։ Եւ զի անցեալ գիսլուածք սովորաբար գիւ-
բապատրաստ են 'ի բերանս ծերոց, և ազգաւ յա-
կանջս գատաւորաց, յիշեցոյց աբիկամ զօրինակ
միքիայ մարգարէին, որ յաւուրս եզեկիայ մարգա-
բէացաւ, և ասաց՝ թէ սիոն իբրև զգարակ արօ-
բադիր լիցի. սակայն ոչ վասն այսորիկ սպան զնա
եզեկիա։ Արդարեք ունէին 'ի ձեռն ազատութիւն
բազում. և իմաստունք ոչ երբէք խոցին զբերանս
նոցա, այլ զահի հարան 'ի բանից նոցա, զդաստա-
ցան և խնդրեցին զնոր. և դարձոյց ոչ զչարիս 'ի
նոցանէ։ Եւ այսպէս արձակեցաւ երեմիա անվնաս.
զի ցուցաւ թէ ճշմարտապէս 'ի բերանոյ ոչ խօ-
սեցաւ։ Այլ ոչ նոյնպէս այլ ոմն մարգարէ կոչ-
եցեալ ուրիա որդի սամեայ 'ի կարիաթարիմայ, որ
և նա ըստ ամենայն բանից երեմիայ մարգարէա-
նայր 'ի վերայ երուսաղէմի և երկրին յուդայ. զի
լուեալ յովակիմայ արքայի և իշխանաց նորա,
խնդրէին սպանանել զնա. իսկ նա առ ոչինչ՝ փա-
խեաւ գնաց յեգիպտոս. և արքայ առաքեաց զկնի
նորա զեղնաթան զօրապետ որդի աքովբորայ սա-
կաւաթիւ արամբք. կալան զնա և ածին յերուսա-
զէմ, և ետ յովակիմ սրով սպանանել զնա. և
զմարմին նորա ընկենուլ 'ի հասարակաց գերեզ-
մանս. ոչ տալով նմա առանձին շիրիմ, որուն
արժան իսկ էր իբրև որ մարգարէ ոչն. Երեմ. Կ։

Այս անիրաւ մահ ոչինչ թուլացոյց զերեմիա,
այլ ևս առաւել վառեալ բորբոքեաց զարիւն նո-
րա։ Սուր և հուր ոչ զարհուրեցուցանէն զսուրբս,
զի սպառնալիք մահու՝ խոստումն է նոցա պսակի
ցանկացեալ նահատակութիւն։ Երեմիա առ առա-
ւել տպացուցանելոյ 'ի միտս ժողովրդեան զմար-
դարէութիւն իւր՝ յաւել 'ի բանս և զգալի նշանակս
ըստ պատուիրելոյ նմա ոչն։ Կրեաց առ ժամանակ
մի զմիջով սփածանելի կտաւի. և ապա գնաց ձա-
նապարհ յերկար մինչև ցեփրատ գետ, և անդ 'ի
ծակ վիմի թաքոյց զսփածանելին. և դարձաւ յե-
րուսաղէմ։ Յետոյ դարձեալ առաքեաց զնա ոչ
անդ, որպէս յառաջնումն լոկ 'ի թաքուցանել՝

նոյնպէս և յերկրորդումն միայն 'ի տեսանել զնա. զոր և եգիտ փտեալ և ապականեալ՝ ոչինչ իմիք պիտանացու. ԺԳ. 1։ Այլ այն եղև 'ի բերան նոր բա կենդանի ինն օրինակ նկարագրել 'ի հրապա բակախօս վարդապետութեանէ իւրում զիտութիւն տիտից և մոլութեաց՝ յորում թաղեալ կայր երկիրն յուզայ։ Պատուիրեաց որ երեմիայի ջառնուլ կին, զի մի ծնցին նմա ուստերք և դստերք. ԺԶ. 1։ Այլ չմտանել 'ի տուն խրախութեաց՝ նստել ընդ այլոց ուտել և ըմպել. և յայտնեաց ժողովրդեան, թէ այնու գուշակէ զսուգն, զողբու�և զաշխար հարց և մարց վասն ուստերաց և դստերաց իւրեանց՝ որք ծնանիցին նոցա անդ յերուսաղէմ. ԺՁ. 8։ Այցոյց նմա ոճ զօրինակ ծայրագոյն ոորութեան իւրոյ 'ի վերայ մարդկան, պատուիրելով նմա մտանել 'ի գործատուն բրտի, տեսանել թէ անօթք պատուականք և անարգք քանի հեշտեաւ գործին, և եղծանին ըստ կամի արհեստաւորին։ Այլ ասաց ցնա առնուլ սափոր մի գործեալ 'ի կաւոյ, և ածեալ ընդ իւր զաւագմուեին 'ի ծերոց ժողովրդեան և 'ի ծերոց քահանայից՝ ելանել 'ի ձորն տափեեայ, որ կոչի և գերեզման որդւոցն ենոմմայ. և անդ խորտակել զսափորն առաջի այն ամենայն բաղմութեն. զոր արարեալ՝ մեկնեաց օրինակաւն այսուիկ զնախագուշակեալ խորտակումն ժողովրդեան և երուսաղէմ։

Ընտի դարձաւ յերուսաղէմ, և 'ի սրահի տաճարին կրկնեաց անդրէն զնախասացեալ սպառնալիս. ԺԹ. 1. 10. 14։ Ընդ յայտնեցին անօրէն քահանայք զխորհուրդ իւրեանց, զոր յառաջնմէ իսկ երկնչեին՝ ըմբռնել զնա և սպանանել. ասելով 'ի միտս իւրեանց, թէ 'ի բռնիլ երեմիայի, ոչ պակասեսցին քահանայք ուսուցանել զօրէնս. և ոչ իմաստունք տալ խորհուրդս բարիս, և ոչ մարգարէ քարոզել զբան նոր։ Այսոքոյ բաղումք որք անդն կային, միաբանեալ սրեցին զլեզուս իւրեանց ընդդէմ նորա, և մինչ տակաւին խօսէր երեմիա, բարձրացուցին զաբբառ կշտամբել զնա

իրրև ստախօս, և այնպէս լուեցուցանել 'ի խօսից։ Այս է՝ զոր ասէ մարգարէն 'ի բերանոյ նոցա. Ակայք խորհեսցուք խորհուրդ 'ի վերայ երեմիայ. զի ոչ կորնչին օրէնք 'ի քահանայէ, և խորհուրդ յիմաստնոյ, և բան 'ի մարգարէէ. եկայք հարցուք զնա լեզուաւ, և ոչ լուիցուք զբանս նորա։ Ժ. 18։ Պասքոր որդի Եմմերայ յանդուգն և խրոխտ քան զայլս, այն՝ որում անկ էր լինել հմուտ զգաստ և զգուշաւոր քան զամենեսին՝ վասն գոլոյն իշխան քահանայից և հրամանատար տանն նոր, ոչ շատացաւ լեզուաւ հարկանել զմարգարէն, այլ ելհար զնա և բանցի կամ գաւազանաւ, և եդ զնա 'ի կալանս 'ի վերնատունն՝ որ էր 'ի գաւթի անդ տաճարին առ դրանն բենիամինի։ Այս 'ի վաղիւ անդր հանեալ զնա յարգելանաց անտի, ետ ածել յատեան առաջի իւր 'ի քննել զնա։ Յայնմ ատենի ետ երեմիա նիւթ բաղում դպրապետին 'ի գրել, բայց ամենայն բանք նորա եղեն մարգարէութիւք ընդդէմ անօրէնն դատաւորին. քանզի անեղկիւղ ասաց առ նա. Ոչ ապաքէն Պասքոր կոչես դու, այլ ՝որ փոխեաց զանուն քո, և կոչեաց զքեզ գերի թափառական. զի մատնեսցէ զքեզ և զամենայն բարեկամս քո 'ի գերութիւն. և անկցին ամենեքին 'ի սուր թշնամեաց առաջի աչաց քոց, և ամենայն յուդա անցցէ 'ի ձեռս թագաւորին բաբելացւոց. և իշխանք նոցա կոտորեսցին սրով, և ամենայն ՀՈՒՐԻՔ և գանձք երկրիս յափշտակեսցին և տարցին 'ի բաբելոն։ Այս դու պասքոր, և ամենայն տուն քո ընդ քեզ վարեսցիք անդր 'ի գերութիւն. անդ 'ի բաբելոն մեռանիցիք, և անդ թաղեսջիք. նոյն եղիցի և բարեկամաց քոց, զորս խաբեցեր սուտ մարգարէութիւքդ։

Իրրև զայս ամենայն առաջի եդ պասքորայ, և ետես զնա ծփեալ 'ի խորհուրդս, խօսեցաւ մարգարէն վասն իւր՝ եդեալ սկիզբն ջատագովութիւն անձին, թէ զայլ ինչ ոչ մարգարէանայր, բայց զոր հրամայէր նմա ՀԱԾ. ուստի եթէ մարգարէու-

թէք իւր սուտ լինէին, ապա լինէր ՝ոյ խաբել զնա։ Լցցոյց առաջի առնելով նոցա զՀալածանս և զտառապանս զոր կրեաց և կրէր, և զՀաստատութիւն իւր 'ի տանիլ ամենայն դառնութիւնս. որպէս զի 'ի միտ առցեն և ձեռաք շօշափեսցեն, թէ մարդ որ կարօղ էր 'ի սէր և 'ի բարեկամութիւն իւր ձգել զիշխանս և զմեծամեծս փաղաքշելով և ըստ հաճոյս նոցա խօսելով իբրև զայլսն, ոչ արդեաք հաւանարակէր շարժել զնոսա 'ի թշնամութիւն՝ և 'ի բիւր տառապանս արկանել զանձն, եթէ չէր նպաստաւորեալ և զօրացուցեալ 'ի ՝ոնէ։ Լչ զայս խօսեցաւ առակաբ և աղդու ձևով բանից՝ ըստ աղդեցութիւն ներգործական հոգւոյ մարդաբէութիւն. ասէ. Գ՝ու պանքոլը, խուովիչ ժողովրդեան կոչէս զիս։ Լչ անդէն բացադարձութիւն ձևով դառնայ և խօսի առ ՝ոն. ապա դու ՝որ խաբեցեր զիս, և խաբեցայ. և 'ի խուսել իմ ըստ մարդկօրէն տկարութեաս առ 'ի չանկանիլ յայսչափ վիշտս և 'ի տառապանս, յաղթահարեցեր զդիմադրութիւն իմ, և ձգեցեր զիս յայս շփոթս։ Լազում ժամանակք են, զի խօսիմ ընդդէմ անօրէնութեանց, և բարձրաձայն քարոզեմ զՀանդերձեալ ապականութիւն. և բան ՝ոն որ փառաւոր առնէ զայլ մարդարէս, ինձ դառնայ 'ի դառնութիւն և 'ի նախատինս. զի յելանել 'ի բերանոյ իմմէ՝ լսի կատականօք զօրհնանապաղ։ Լազում անգամ անց ընդ խորհուրդս իմ ՝ոչ ևս խօսիլ յանուն ՝ոն, իբրև մարդ որ մոռացեալ իցէ անուանել զնա, կամ զպատուէր նորա. բայց 'ի խորհել իմում զայս՝ եղև 'ի սրտի իմում սարսափ սոսկալի, մինչ թուէր ինձ վառիլ մեծաբոց հրոյ ընդ ոսկերս իմ։ Լ՝ հակառակել վերին մասին հոգւոյս, որ կամէր հնազանդիլ ՝ոյ, և ստորին մասին որ յոյժ հակամիտէր առ 'ի խոյս տալ, լքայ և նուաղեցայ։ Լ՝ուայ զպարսաւանս 'ի բազմաց. եղէն առ իս և սպառնալիք զարհուրելիք յորոց շուրջ զինև միահամուռ ժողովելոյ, որք ազազակէին, արիք և յարիցուք 'ի վերայ նորա, թերևս խաբեսցի, և յաղթեսցուք նմա և խնդրեա-

ցուք զվրէժ մեր 'ի նմանէ. և զայս լուայ 'ի նոցա-
նէ որք բաբէկամք և պաշտպանք ինձ ձեւանային ։
Լ.այլ ոչ փարատեաց յինէն զնուաղումն և զլքումն,
զի եղև ընդ իս իբրև պատերազմող հզօր ։ Ա՝ան
այնորիկ որք հալածեն զիս՝ անկցին և յամօթ լի-
ցին յոյժ, և անարգանք նոցա յաւիտենից մի՛ մո-
ռասցին ։ Ոչ ոչ՝ զօրութեաց որ կշռեաս զիրաւունս,
և քննեաս զսիրտս և զերիկամունս, արասցես զի
տեսից առ 'ի քէն զպատիժ 'ի վերայ նոցա, ոչ առ
իմ վրէժխնդրութեան, այլ առ 'ի յայտնութիւն փա-
ռաց քոց որ արդ ուրեմն հարկաւոր է ։ Կամ ես
առաջի դատաւորաց իմոց թշնամեաց. այլ առ քեզ
յանձն առնեմ զաղերս իմ և զդատաստան ։ Լ.ս
այնչափ վստահ եմ, եթէ դու փրկեսցես զիս 'ի
ձեռաց անօրինացս, զի իբր վասն արդէն եղելոց
իրաց հրաւիրեմ զամենայն աշխարհ գոհանալ զքէն
և երգել զօրհնութիւն և զդովութիւն քո. * Օրհնե-
ցէք զՏէր, դովեցէք զնա. զի փրկեաց զանձն տնան-
կի 'ի ձեռաց չարաց ։ Լ.թէ խաբեցիմ յայսմ, կա-
ցեմ համարձակ կոչել անիծեալ զօրն յորում ծնայ.
և ունիմ ասել, անիծեալ լիցի մարդն, որ ետ աւե-
տիս ուրախութեան հօր իմոյ, թէ ծնաւ քեզ արու
մանուկ. որովհետև ծնունդն իմ լինելոց էր պատ-
ճառ այսչափ ցաւոց մեծամեծաց. լաւ ևս էր վասն
իմ յարգանդի անդ մնր իմոյ մեռանել, և լինէր
ինձ մայրն իմ գերեզման ։ Ա՝ի լիցի քեզ պակաքովք՝
արհամարհել զիմ առ ՏԾ հաւատարմութիւն, և
դնել 'ի մտի՝ թէ ՏԾ բերեալ իցէ զիս յաշխարհ
լոկ առ 'ի կրել ցաւս և տառապանս, և 'ի հանապա-
զորդ վաստակս և 'ի ծուփս անցուցանել զաւուրս
իմ։ Լ.դ զիս յաշխարհ, զի հնազանդեցայց կամաց
նորա, և յայտնեցից ժողովրդեանս այսմիկ որ ինչ
հանդերձեալ են հասանել 'ի վերայ նոցա ։ Ա՝ բա-
նից աստի մարդարէին ամենապարտեալ պասքով-
բայ, և չունելով ինչ դնել ընդդէմ՝ արձակեաց
զնա ։

Լ.զև առ Երեմիա և այլ խստագոյն պատուէր
'ի Տէնէ. որ բաւական էր զաշխարհ ամենայն յա-

բուցանել ընդդէմ նորա։ Բ.սաց նմա ՝ճծ առնուլ բազում շղթայս և անուրս, և արկանել ընդ պարանոց իւր, և այնպէս ելանել ՝ի հրապարակ. ապա ՝ի բաց առեալ՝ պահել առ իւր. յետոյ ըստ բերելոյ դիպողութեան՝ առաքել զմի ՝ի կապանաց անտի առ այլ և այլ թագաւորս եղովմայեցւոց, մովաբացւոց, ամմնացւոց, տիւրացւոց և սիդոնացւոց՝ ՝ի ձեռն հրեշտակաց նոցա, որք գային երբեմն յերուսաղէմ առ թագաւորս յուդայ ՝ի պէտս քաղաքական ինչ իրաց։ Զայս պատուէր ընկալաւ մարգարէն ՝ի սկզբան թագաւորութեան յովակիմայ. և յետ այնորիկ յայլ և այլ ժամանակս եղև առ նա հրաման ՝ի ՝ճոնէ առաքել իրօք. վերջին առաքումն եղև յաւուրս սեդեկիայ արքայի յուդայ առ թագաւորն տիւրոսի, և առ թագաւորն սիդոնի ՝ի ձեռն հրեշտակաց նոցա ՝ի դառնալ նոցա յերուսաղէմ առ թագաւորս իւրեանց, տալով ընդ շղթայից տանել և զպատգամ գերութեան նոցա, ազդ առնել ամենեցուն, թէ արքայն բաբելոնի և որդիք նորա, և որդիք որդւոց նորա լինելոց են իշխան և ՝ճր ՝ի վերայ նոցա. մինչև եկեսցէ ժամանակ բարկութեան և երկրին բաբելոնի (զորմէ հանդերձեալ եմք խօսել յիւրում տեղւոջ)։ Յաւել մարգարէն ըստ իւրումն սովորութեան և ասաց զգուշացուցանել զամենեսին՝ մի լսել և մի հաւատալ սուտ մարգարէից և ըղձութեանց և կախարդաց, որք զհակառակն քարոզեն։ Այս ամենայն ազգք որք կամովին անձնատուր լինիցին արքային բաբելոնի, և կայցեն նմա ՝ի հարկի, անեղբայր և ապահով լինիցին. զի մնացեն անվնաս յերկրի իւրեանց, և գործեսցեն զնա, և բնակեսցեն ՝ի նմա։ Բ.այլ եթէ ընդդէմ դառնայցեն, կորուսցէ զնոսա ՝ճծ սրով, և սովով, և մահուամբ. երեմ. ԻԷ։

Արկնեաց երեմիա զայս մարգարէութիւն և ՝ի սկզբան չորրորդ ամի յովակիմայ արքայի յուդայ, յորժամ չև էր լացեալ առաջին ամ՝ թագաւորութեանն նաբուքոդոնոսորայ. որ յերրորդ ամի թա-

գաւորութեան յովակիմայ սկսաւ թագաւորել 'ի բաբելոն։ Եւ ընդ այլաբանութիւն բաժակի անապակ գինւոյ զօրաւորի ազգ արար յանուն նոր, թէ 'ի բաժակէ՝ անտի հանդերձեալ են ըմպել ամենայն ազգք յիշատակելոյ անդէն։ Կայց այս անգամ քաղցրացոյց առ փոքր մի զմարդարէութիւն իւր առ երբայեցիս, խոստանալով թէ յետ ամսոց եօթանասնից լինիցի նոցա ազատութիւն. գլ. ԺԵ։

Զոքաւ երեմիա ըստ հրամանի նոր քարոզել և յարքունիս անդր յովակիմայ, և մարգարէացաւ վասն աշխարհի օրհասի նորա. և դարձուցեալ զբանս իւր առ յեքոնիա որդի նորա, և առ տիկին մայր յեքոնիայ, ասաց պարզ և յայտնի. թէ վաղեսցին գերի 'ի բաբելոն. և մի ակնուսիցի յեքոնիա՝ թէ դարձցի և նստիցի յաթոռ թագաւորութեան ինքն, կամ ոք 'ի բազում որդւոց իւրոց. ԺԷ. 19։

Այս անսպատրուակ ձևք բանից անթիւ վիշտս հասուցին երեմիայի. դարձեալ արկաւ 'ի բանտ, բայց ոչ կամեցաւ՝ զի և 'ի բանտէ անտի լսելի արասցէ նա յարքունիս զպատգամս իւր։ Այսաց նմա գրել 'ի մատեանի զամենայն մարգարէութիւն իւր յօրէ յօրմէ հետէ խօսեցաւ նոր ընդ նմա։ Այրար մարգարէն՝ որպէս հրամայեաց նմա նոր. կոչեաց զբարուք որդի Ներեայ, և եւ նմա գրել 'ի քարտիսի 'ի բերանոյ իւրմէ զամենայն զբանս նոր. և ասաց ցնա երթալ ընթեռնուլ 'ի տան նոր 'ի լուր ամենեցուն։ Որոնց բարուք հասանելոյ աւուր մեծի՝ յորում լինէր խուռն բազմութիւն ժողովել 'ի տաճարն. և այնպէս յամենան ինեներորդի յամին հինգերորդի յովակիմայ արքայի ընթերցաւ զմատեանն յականջս ամենայն ժողովրդեանն։ Ընդունկնդիրս գտաւ այր ոմն միքիա կոչեցեալ, ոչ մարգարէն, այլ՝ այլ ոմն որդի գամարեայ թոռն սափանեայ. սա գնաց յարքունիս 'ի տուն դիւանադպրին, ուր նստէին իշխանք, և պատմեաց նոցա զամենայն զբանս մատեանին. կամեցան և նոքա լսել. առաքեցին զմի ոմն 'ի խմբէ անտի իւրեանց՝

յուդի անուն որդի նաթանայ՝ կոչել զաբուք։ Այլն և ընթերցաւ յականջս նոցա. զայի հարան ամենեքեան. և առաւել ևս զարհուրեցան՝ յորժամ լուան 'ի բարուքայ թէ 'ի բերանոյ երեմիայի գրեաց. նա պատմեաց ինձ առ զամենայն զբանս զայսոսիկ, և ես գրեցի 'ի մատենիդ սեւակաւ։ Այլևս թէ իշխանքն այնոքիկ 'ի լաւաց անտի էին և 'ի նախանձաւորաց հասարակաց օգտի. որոց կարևոր թուեցաւ, զի և արքայն լսիցէ զընթերցուածն զայն. ակնուանելով թէ բաղումս ազդեսցէ 'ի սիրտ նորա, և օգտեսցի յոյժ։ Այլ միանգամայն և կասկածէին՝ թէ մատեանն այն վտանգիցէ առթեսցէ գրողին, և մանաւանդ թելադրողին. վասն որոյ խրատ ետուն բարուքայ, և երեմիայի՝ որ արձակ էր յայնժամ 'ի կալանաց, թաքցիլ ուրեք 'ի ծածուկ, զի մի ոք գիտասցէ թէ ո՛ւր իցեն։

Այլ ապա արձակեալ զբարուք, և զմատեանն թողեալ անդէն 'ի տան Եղիմասայ գպրատեսի, չոքան մտին առ արքայ. և պատմեցին նմա՝ զամենայն զբանսն մատենին, ցուցանելով նմա՝ թէ բաբի է, զի և արքայ լսիցէ։ Այ.սաց յոյակիմ ցյուդի բերել զմատեանն և ընթեռնուլ առաջի իւր 'ի լուր ամենայն բազմութեան իշխանաց, որք կային շուրջ զնովաւ։ Այ.յլ իբրև ընթերցաւ յուդի երիս կամ չորս էջս կամ գլուխս բանից, եղև ծանրասրտիլ արքայի ընդ բանսն և փոխանակ պատասխանելոյ զհանդերձս ինքն և իշխանք որ զնովաւ, և խնդարհելոյ առաջի նոցն, առ արքայ զմիմեանս դպրի, և կարեաց զմատեանն. և զի նստէր 'ի ձմերաստանն, և կրակարան առաջի նորա, քան զի ցուրտ էր, (զոլով ինքնաբորդ եկեղեցական ամիս նոցա, որ համեմատի գեկտեմբերի հոլովմայեցւոց,) ընկէց զայն 'ի կրակն, մինչև խոպառ այրեցաւ. և թէպէտ երեք յիշխանաց անտի՝ եղանաթան, և գաղեա, և գամարիա խօսեցան նմա չայրել զքարտէզն, այլ շահեցան և ոչինչ. զի ոչ անսաց նոցա։ Այ.ւ այնու ոչ շատացեալ՝ հրաման ետ յերեմիելի

որդւոյ Իւրում և այլոց ոմանց՝ ուստել զբարուք և զերեմիա և արկանել 'ի շղթայս. այլ նորա կային 'ի Թաքստի. և ոչ եթող ոք զատանել զնոսա, թէ. պէտ բազումն յուզախնդիր եղեն։ Ի՝ատեանն այրեցաւ, այլ ոչ կորեաւ. Թագաւորք առ ոչինչ էին ձեռնհաս, յորժամ ընդ ոյ կամին 'ի պայքար մտանել։ Հրամայեաց ոճծ մարգարէին՝ գրել վերոտին զամենայն զբանսն, որ էին յառաջնում քարտիսի զոր այրեաց յովակիմ. գրեաց մարգարէն, և այնպէս մատեանն ատելի յարքունիս, յարուցեալ 'ի մխրոյ՝ դարձեալ ընթերցաւ 'ի հրապարակի 'ի լուր ամենեցուն, բայց ձնխագոյն քան զառաջինն. յորում յաւելան և այլ նոր սպառնալիք առ յովակիմ. զոր 'ի վերջ անդր տեսցաք անվրէպ կատարեալ 'ի նա. երէմ. ԼԶ։

Ի՝եռաւ յովակիմ արքայ, և Թագաւորեաց յովակիմ որ և յեքոնիա որդի նորա ընդ նորա։ Ի՝.ՍԼ ոչ վասն այնորիկ վրիպեցաւ բանն երեմիայ, որ մարգարէացեալ էր Թէ ոչ ոք յորդւոց յովակիմայ նստցի յաթոռն դաւթի. քանզի սա Թագաւորեաց ամիս երիս և աւուրս տասն, և ոչ աւելի. ուստի եղև այն մանաւանդ ելանել քանզի նստցի յաթոռ Թագաւորութեան։ Սա էս ասէ դիրն՝ * Ի՝.բար չար առաջի տն ||, ոչինչ ընդհատ 'ի հօրէն. բայց երևի Թէ 'ի գերութեան իւրում ելցէ խոնարհեալ։ Ի՝նդդէմ սորա առաքեաց նաբուքոդոնոսոր զունդ մեծ զօրաց, որք կանգնեցին պատնէշ շուրջ զերուսաղէմս. և սկիզբն պարին պաշարման. ապա եկն անձամբ և նա ինքն նաբուքոդոնոսոր։ Յեքոնիա տեսեալ՝ զի չունի բաւական զօրութիւն ընդերկար պահել զքաղաքն 'ի պաշարման, միանգամայն և 'ի մարգարէութեաց երեմիայ յորդորեալ, եղև պատերազմական օրինօք անձնատուր նաբուքոդոնոսորայ հանդերձ մարբ, և կանամբք և համօրէն արքունեօք, և հանդերձ ողջոյն երուսաղէմ քաղաքաւ։ Ի՝ւ նաբուքոդոնոսոր տարաւ զնա, և զմայր նորա և զկանայս և զնեբրքինիս նորա գերի 'ի բաբելոն. այլ ոչինչ անպիտութիւն կամ ամարդութիւն եցոյց

ընդդէմ անձանց նոցա, այլ մանաւանդ ըստ բա-
նից երեմիայի որ միշտ խոստանայր բարի ընդու-
նելութիւն, որոց ինքնակամ մտանիցեն 'ի ծառայու-
թիւն, երևի թէ պատուով պահեալ լիցէ զնոսա անդ
'ի բաբելոն։

Սակայն և այնպէս չէ՛ մարթ ասել՝ թէ ինքն
յեքոնիա չիցէ լեալ անդ 'ի մեծի նեղութիւն. զի
զինչ մեծագոյն նեղութիւն և տոչորումն սրտի առն
թագաւորի՝ քան լինել արտաքոյ իւրոյ թագաւո-
րութիւն արդեալկան ուրեք ընդ ձեռամբ բռնագո-
նի. թէպէտև այլ ամենայն քարեաք լցեալ զե-
ղեալ լիցէ. ապարանք մեծամեծք անձուկ են նմա,
յորժամ տեսանէ զամենայն սահմանս ինքնակա-
լութիւն իւրոյ 'ի մի կամ յերկու ապարանս ամփո-
փեալ։ Ընդ յեքոնիայ արքայի ածան 'ի բաբելոն
տասն հազար զինուորք, և այլևս եօթն հազար զօ-
րաւորք, որք կային 'ի պահպանութիւն քաղաքին
հանդերձ իւրեանց զօրավարօք։ Ընդ նոսա վարե-
ցան իբրև գերեալք 'ի պատերազմի՝ արհեստա-
ւորք, հիւսն, դարբին, ճարտարապետ, ընդ ամե-
նայն հազար այր։ Եւ քաղաքն աւար հարաւ.
գանձք տաճարին և տանն արքայի, և համօրէն մե-
ծամեծաց քաղաքին կողոպտեցան. և տարեալ
եղեն 'ի բաբելոն։

ԳԼ. ԻԳ.

Սեդեկիա արքայ յոտքայ։ Պաշարումն Երուսաղէմի 'ի Բաղդէտացւոյ։ Լրբեմիա մարգարէ։

Տարեալ նաբուքոդոնոսորայ զյեքոնիա 'ի բաբելոն գերի, և կողոպտեալ զերուսաղէմ 'ի գանձուց, 'ի զբաց, 'ի զբաղաղեստաց, և յամենայն արհեստաւորաց կարևորաց 'ի պատրաստութիւն պատերազմական գործեաց, թագաւորեցոյց յերուսաղէմ փոխանակ յեքոնիայ զմեթթանիա կամ զմատթանիա զեզբայր յովակիմայ, հօրեղբայր յեքոնիայ։ Արանզի եղեալ էր 'ի մոռ, թէ նա ոչ երբեք գլուխս ամբարձցէ, թէ ոչ 'ի Հնորհս երթսուեաց՝ զոր արար նմա կացուցանելով զնա թագաւոր, գէթ առ անկարութիւն, գոլով մերկացեալ 'ի գանձուց և յառեղնայն զինուորական զօրութեց. և այնպէս կացցէ մնացէ միշտ հաւատարիմ հարկատու նմա, և հպատակ հրամանաց նորա։ Այլ առառաւել ապահովութիւն՝ առ 'ի բերանոյ նորա երդումն հանդիսական յանուն այ բարձրելոյ։ Յետ այնորիկ նաբուքոդոնոսոր 'ի նշան իշխանութիւն իւրոյ 'ի վերայ նորա՝ փոխեաց զանուն նորա՝, և կոչեաց զնա Սեդեկիա. որ և յետ այնորիկ միշտ այնպէս կոչեցաւ։

Այր յայնժամ սեդեկիա քսան և մի ամաց. և գտաւ ամպարիշտ յաստուծոյնս ըստ հօրեղբօր իւրոյ յեքոնիայ. անարի, բայց և անգութ. եթէ յիրս ինչ ոչ երևեցեալ անգթութիւն, ոչ էր 'ի սրտի, այլ յանկարութիւն 'ի գործադրութիւն։ Ունէր ապաքէն իւր առընթեր զերեմիա ճշմարտեալ մարգարէ առաջնորդ և ուղղիչ. զոր և ոչ երբեք դատապարտեաց յաղագս անպատրուակ և անաչառ կշտամբելոյն զինքն. բայց և ոչ երբեք ունկն մատոյց խորհրդոց նորա, և ոչ օգտեցաւ ինչ երբեք 'ի խրա-

տուց նորա։ Եւ ձգեաց զձեռն իւր երբէք՝ 'ի մար-
գարէն, այլ սակայն եթող զնա 'ի ձեռս չարադու-
նից՝ իւրոց անօրէն պաշտօնէից. զի նոցա խորհր-
դոյն վարէր յամենայնի։ Չթէ կամեցեալ էր երե-
միա նստիլ 'ի խաղաղութեան հանդարտեալ յամե-
նայն արտաքին աղմկաց, շատ էր նմա կամ ընդ այ-
լոց անցանել 'ի բաբելոն. և կամ խոյս տալ յանա-
թովթ 'ի հայրենի քաղաք իւր. և լուել անդ առան-
ձին։ Այլ ահ կամէր զի նստիցի յերուսաղէմ,
և խօսեսցի և քարոզեսցէ բանս ծանուցս և դժուա-
բահաձն արքային և մեծամեծաց։ Այլ առաւել
ատելի առնէր զնա յերուսաղէմ այն, զի առ երու-
սաղէմացիս երևէր խօսիլ միշտ սպառնալեօք մե-
ծամեծ չարեաց, իսկ առ գերեալսն 'ի բաբելոն
գրէր քաջալերս և բանս մխիթարութեան։

Յառաքել սեղեկիայ արքայի հրեշտակս 'ի բա-
բելոն առ նաբուքոդոնոսոր, եւ և երեմիա նոցա
թուղթ տանել առ գերեալսն, ուր յորդորէր զնո-
սա և քաջալերէր կեալ խաղաղութիւն անդ 'ի բա-
բելոն. և աղօթս առնել վասն տերանց իւրեանց
զի 'ի դոցա խաղաղութեան ասէ՝ եղիցի և ձեզ խա-
ղաղութի։ Այլ և՝ շինել տունս, և առնուլ կանայս,
և ծնանել ուստերս և դստերս, և բազմանալ անդ.
զի խոստանայ, թէ 'ի լրանալ եօթանասուն ամաց՝
դարձցին յերուսաղէմ, ասելով 'ի դիմաց նց.
* Յորժամ մերձ իցէ ընուլ բաբելոնի եօթանասուն
ամ՝, այց արարիցս ձեզ. և հաստատեցից 'ի վերայ
ձեր զբանս իմ, դարձուցանել զձեզ 'ի տեղիս
յայս ॥. ԵՌ. 7. 10։ Զգուշացուցանել զնոսա չհա-
ւատալ սուտ մարգարէից, որք անդ 'ի բաբելոն
քարոզէին ստութիւն 'ի մեծի երջանկութեան վայե-
լել նոցա, որք մնացին յերուսաղէմ։ Անդ հակա-
ռակին՝ ասէ, եղիցի 'ի վերայ նոցա սուր, և սով,
և մահ. ուր և յանուանէ նշանակէ զոմանս 'ի սուտ
մարգարէից անտի բաբելոնի, զաքիաբ որդի ուղ-
կեայ, և զսեդեկիա որդի մասայայ. և մարգարէա-
նայ վասն նոցա զայն՝ որ և կատարեցաւ, թէ
ըմբռնեսցին 'ի շնութիւն. և տացէ նաբուքոդոնոսոր

կենդանւոյն տապակել զնոսա 'ի հուր հրապարակաւ առաջի ազգաց նոցա։ Զնուանեաց և զերբորդն տամա՛ս ելիմացի. որ գրեալով 'ի բաբելոնէ յերուսաղէմ սուտ պատգամն, խառնէր զերուսաղէմացիս. զորմէ ասաց Երեմիա, թէ վաղահաս օրհասիւ մեռցի, և շինիցի տուն նորա։ Գրեաց Երեմիա ըստ պատուիրելոյ նոցն՝ և այլ թուղթս մխիթարութեան. խոստանալով թէ անդրէն շինեսցի երուսաղէմ և տաճար նոցն, և մարդարէանալով վասն այլոց յաջողութեանց բազմոց, որք հանդերձեալ էին լինել 'ի գալստեանն քսի նոցոյ։

Զդէպ յերուսաղէմ հրապարակաւ հակաճառուէն անանիայ որդւոյ ազգվրայ սուտ մարգարէի 'ի գաբաւոնէ ընդ Երեմիայ մարգարէի՝ 'ի տան նոցն ա՛ռաջի բազմութեան քահանայից և յոգնախուռն ժողովրդեան. գլ. ԵԸ։ Զնանիա սնոդէր, թէ յետ երկուց ամաց խորտակեսցի լուծ բաբելացւոց, և ամենեքեան արձակեսցին յազատութեան. և դարձուցցին անդրէն 'ի տաճար անդր ամենայն պատուակսն սպասք նորա, և յեկոնիա դարձցի յաթոռ թագաւորութեան իւրոյ, և ամենայն գերեալքն դարձցին յերկիր իւրեանց 'ի հրեաստան։ Զայս պատասխանի Երեմիա և ասէ. արդարև ըղձալի էր այդ, եթէ հաստատիմն լինէր. այլ այդպիսի քանք ըղձութիւնք են և փաղաքշանք սուտ մարգարէից. որոց չէ՛ մարթ հաւատալ, եթէ ոչ նախ արդիւնասցի դուշակութեան նոցա։ Ունէր Երեմիա 'ի պարանոց իւր անուրս փայտեղէնս. զորս առեալ անանիայ 'ի պարանոցէ նորա խորտակեաց, և ասաց իբրև 'ի յայտնութեան թէ, թէ յետ երկուց ամաց այսպէս խորտակեսցի լուծ բաբելացւոց 'ի պարանոցէ ա՛մենայն ազգաց։ Զյլ Երեմիա ըստ հրամանի նոցն մերժելով գնա՝ վերջ արար վիճին, ասելով ցնա։ Զու խորտակեցեր զանուրս փայտեղէնս, ես արարիցի փոխանակ անուրս երկաթիս. և դիցին 'ի պարանոցս ամենայն ազգացդ շուրջանակի. և ամենեքեան հարկեսցին նաբուքոդոնոսորայ արքայի, և ծառայեսցեն նմա։ Զու դու անանիա՝ որ խաբես

զԺողովուրդդ կեղծելով մարգարէութիւնս, զի չէս առաքեալ 'ի նոսէ, ահա բարձցէ զքեզ Տէր յերկրէ 'ի սմին իսկ տարւոջ։ Եւ ահա յետ երկուց ամսոց կատարեցաւ մարգարէութիւն Երեմիայ. զի 'ի հինգերորդ ամսեան եղև վիճն, և յամսեանն եօթներորդի մեռաւ անանիա։

Այս ամենայայտ ապացոյց շատ էր ինքնին և եթէ հաւանեցուցանել զարքայն սեդեկիա, թէ Երեմիա խօսի հոգւովն Աստուծոյ։ Այլ ծանր էր նմա լսել՝ թէ պարտ է կալ 'ի հնազանդութիւն Նաբուքոդոնոսորայ. զիտէր՝ զի չունի բաւական զօրութիւն դիմակալ լինել նմա պատերազմաւ. զիտէր զերդումն իւր արարեալ յանուն Տեառն բարձրելոյ։ Այսպէս և այնպէս ընդդէմ գիտակցութիւն մտաց իւրոց ջանասէր լինէր 'ի ձեռն դաշնակցութեան ընդ այլսմ՝ նշկահել զնաբուքոդոնոսոր։ Այսուամենայնիւ՝ ասէր ցնա Երեմիա, 'ի զուր է ապաւինիլ յեգիպտացիս. բայց նա ոչինչ անսալով նմա՝ գաղտնի հնարիւք դաշնադիր եղև ընդ փարաւոնի Եգիպտացւոց արքայի։ Եւ այնպէս կամեցեալ սեդեկիայ խորտակել զփայտեղէն թեթև անուր՝ արկ 'ի պարանոց իւր զծանրաբեռն անուր երկաթի։

Զփոխաց Նաբուքոդոնոսոր զմիաբանութիւն նոցա. ամենապարեաց Եհան 'ի վերայ ուխտադրուժ արքայի բուռն զօրութիւն։ Օրք մնաց միաբանելոց յաւելան 'ի բանակ քաղդէացւոց. և կանոնաւոր ընթացիւք յառաջադէմ խաղացեալ, հարին զՃանապարհային զամրոցս խորայէլի ասա անդ կառուցեալս 'ի պատսպարութիւն երուսաղէմի թագաւորեալ քաղաքի։ Սեդեկիա քանզի ճանաչէր զերեմիա այր ճշմարտաշաւ՝ նոր և սիրելի նոսն, առաքեաց առ նա երկու 'ի քահանայից՝ խնդրել աղօթս առնել առ Տէր վասն իւր և վասն քաղաքին. միանգամայն և գիտել 'ի նմանէ, թէ զինչ պատգամ ունիցի 'ի նոսէ 'ի վերայ թշնամեաց։ Պատասխանին եղև անաչառ, ուստի և անախորժ. երթայք ասէ և ասասջիք ցարքայն որ առաքեացն զձեզ, այս է բան նոսա. անդործ արասցէ զքէնս յուդայ. հարցէ 'ի բաղուկ

հզօր զբաղաքդ և զընակիչս դորա. և մինչև լցեն սատակեալ 'ի ձեռաց թշնամեաց իւրեանց, բազումք մեռցին մահուամբ, և բազումք սովով. և սեզեկիա հանդերձ մնացելովք 'ի քաղաքիդ՝ մատնեսցի 'ի ձեռս նաբուքոդոնոսորայ. և հարկանիցէ զնոսա, և ոչ ողորմեսցի նոցա. նոքա միայն որք կամովին ելանիցեն առ քաղդէացիս՝ փրկեսցեն զկեանս իւրեանց և կեցցեն. գլ. Լ։

Մինչ այս իրք լինէին յերուսաղէմ, բանակ քաղդէացւոց և օգնականք նոցա յաջողութիւն յառաջ խաղացեալ՝ հասին առ դուրս երուսաղէմի. և սփռեալ շուրջ զնովաւ՝ ձեռն արկին կանգնել պատնէշ կամ պատուար հողոյ շուրջանակի, և պատեցին զամենայն քաղաքն։ Այլ մինչև էին սկիզբն արարեալ մնարտի, ազդ եղև 'ի բանակ անդր նոցա՝ եթէ արքայն եգիպտացւոց գայ զօրու ծանուցեալ թշնամի երբայեցւոց. յայնժամ խորհեցաւ նաբուքոդոնոսոր, զի եթէ մնասցի՝ զի եգիպտացիք անդ 'ի պատնիշն հասանիցեն 'ի վերայ նորա, 'ի նմին ժամանակի և երբայեցիք ամենայն զօրութիւն իւրեանց յարձակեսցին 'ի քաղաքէն արտաքս. և այնպէս նոքա յետուստ, սոքա յառաջոյ 'ի մէջ առնուցուն զբանակ իւր. և ոչ կարելով հանել յընդարձակ վայր զզօրս իւր, և ըստ օրինի կարգել զնոսա 'ի ճակատ, 'ի վտանգ մեծ անկանիցի. և թէև յաղթեսցէ, բայց ոչ առանց մեծաց վնասուց իւրոցն։ Զայն այսորիկ հաստատեաց զմիտս առ ժամն հեռացուցանել զպաշարումն 'ի քաղաքէն, և խաղալ ընդառաջ եգիպտացւոց մինչև ցդաշտ ինչ լայնարձակ. զոր և արար իսկ. իբրև տեսին պաշարեալքն զմեկնիլ պաշարողաց, լցաւ ցնծութիւն քաղաքն երուսաղէմ բովանդակ։ Այլ երեմիա ըստ խնդրոյ սեդեկիայ արքայի հարցեալ 'ի ներսէ, ընկալաւ պատասխանի, թէ զօրն եգիպտոսի՝ որ գայ ձեզ յօգնութիւն, դարձցի անդրէն յեգիպտոս. և քաղդէացիք դարձ արասցեն այսրէն, և առցեն զքաղաքդ, և այրեսցեն զդա հրով։

Այս եղանակ խօսից երեմիայի յանձխեալ և 'ի

հրապարակի, և ասելն նորա անդադար, թէ որ
ոք կամի ապրեցուցանել զանձն 'ի հասեալ թշուա-
ռութեց սատի՝ չունի այլ հնար, բայց անցանել
առ քաղդէացիս, կասկածելի արար զնա լինել
խորհրդակից ընդ քաղդէացիս։ Այս առաւելաւ կաս-
կածն, յորժամ 'ի հեռանալ քաղդէացւոց 'ի պա-
շարմանէ անտի, խնդրեաց երեմիա ելանել յերու-
սաղէմ, և երթալ յերկիր բենիամինի առ 'ի բա-
ժանել զկալուածս իւր 'ի մերձաւորս իւր, կամ
որոշել նշանաւք զսահմանս իւրոց կալուածոց։ Ի
հասանել նորա 'ի դուռն քաղաքին՝ որ հսանէր յեր-
կիր բենիամինի, սարու որդի սեմէլեայ՝ որ կայր
անդ 'ի պահպանութիւն, կալաւ զնա իբրև փախստա-
կան առ քաղդէացիս, և ած առ զօրապետս. որք
դան հարեալ զնա՝ արկին 'ի բանտ դժնդակ։ Յետ
աւուրց բազմաց ետ սեղեկիա արքայ զաղտաբար
հանել զնա անտի, զի կամէր 'ի ծածուկ լսել 'ի
նմանէ՝ թէ զինչ պատգամք կայցեն վասն իւր 'ի
հոնէ։ Այլ պատասխանի երեմիայի ծածուկ և յայտ-
նի հանապազ այն էր թէ երուսաղէմ առցի, և
սեղեկիա մատնեսցի 'ի ձեռս թագաւորին բաբէ-
լացւոց։ Սակայն 'ի ծածուկ խօսակցութիւն անտի
փոքր մի դիւրութիւն եգիտ մարգարէն. զի խընդ-
րեաց և ընկալաւ յարքայէ չդարձուցանել զնա անդ-
րէն 'ի նոյն անձուկ և ժահահոտ բանտ. և թոյլ
ետուն նմա նստիլ 'ի սրահի անդ բանտին. բայց
և յայնժամ ոչ փոխեաց երեմիա զլեզուն իւր,
ոչինչ երկուցեալ թէ անդրէն 'ի ժանտահոտ խա-
ւարին բանտ անդր դարձուսցի. գլ. Լէ։

Յայնմ վայրի եղև և դիպուած ինչ, որ զօրա-
յոյց զկասկած չարամտաց, վասն համախոհ լինելոյ
երեմիայի ընդ քաղդէացիս։ Այն առ նա յայտե-
լութիւն անամնչել որդի հօրեղբօր իւրոյ, որ կամէր
վաճառել զագարակ իւր՝ որ էր յանաթովթ. և զի
ըստ օրինաց մերձաւորութիւն՝ երեմիայի անկ էր ա-
ռաջնութիւն 'ի ստացումն, յայն ստակ նմա առաջար-
կեցաւ։ Ի հրամայեաց նմա ստանալ զագարակն։
Վատարեցաւ ստացումն հրապարակաւ ըստ օրինաց,

մուրհակաւ, և կնքով, և ստորագրութիւն վկայից. և մուրհակն երկու գաղափար արարաւ. և տուաւ արծաթն անամայելի գին ագարակին։ Ոչ ժուարին ինն էր լսելեաց հասու լինել, թէ զիարդ նա, որոյ 'ի բերան էր յարաժամ մահ, կործանումն, աւերք և գերութիւն թագաւորութիւն ազգին իւրոյ, և փոխագրութիւն ընտիրացն յայլ երկիր, գնել կալուածս հաստատունս 'ի տեղւոջն՝ ուր զայն ամենայն թշուառութիւս գուշակէր։ Այն զի՝ և նա ինքն իսկ մարգարէն մեղմով ինն գանգատ կարաւ առ ոչ վասն այնր բանի։ Այլ ոչ լուսաւորեաց զնա իմանալ, թէ դաշնադրութիւնն այն էր նշանակ և ապացոյց, թէ վերջ լոյսի երբեմն դերութիւնն բարեբացւոց, և որդիք իսրայէլի անդրէն ժառանգեսցեն զերուսաղէմ, և բազմասցին 'ի նմա։ Օ՛այս իբրև ծանեաւ երեմիա, եւ ցաւուք զերկու պատճէնս մուրհակի ստացուածոյն, զմին կնքեաւ, իսկ զերկրորդն արձակ. պատուիրելով նմա դնել զերկոսին 'ի խեցեղէն ամանի. զի պահեսցին ընդերկար ժամանակս. և եղեցին 'ի նշան, թէ դարձեալ ստասցին տունս, և ագարակս, և այգիս յերկրիս յայսմիկ. գլ. լբ։

Այլ ամենայն արտաքին երևոյթք համախոհութիւն երեմիայի ընդ քաղդէացիս՝ չէին այնպիսի, որ ոչ յայտնապէս ստեսցին 'ի լուսափայլ սրբութիւն, և յանմեղ յանարատ և յանստգիւտ վարուց նորա։ Ոչ առնէր ժողովս գաղտնիս. ոչ պատրուակէր և ոչ թաքուցանէր զխորհուրդս մտաց իւրոց. ոչ երևէր 'ի նմա ստուեր ինչ փառասիրութիւն, և ոչ շահախնդրութիւն։ Ցանէր անխորտակելի արիութիւն՝ հալածանաց, գանից, բանտից և ամենայն խիստ և դառն նեղութեաց 'ի պատճառս իւրոց մարգարէութեաց. սակայն և այնպէս միշտ միօրինակ խօսէր։ Ցեսանէին միշտ ձիգ ստեալ զոր ինչ մարգարէանայր. և այն էր նշան հաւատի, թէ այնպէս խօսի՝ վասն զի ոչ այնպէս տայր նմա խօսել։ Վերդեկիա արքայ առ ահի վերահաս թշուառութեան՝ խնդրէր դարման ինչ գտանել, բայց ոչ երբեք մեր-

ձենայը յայն մի միայն դարմանն՝ որ էր ապաշխարութիւն հաշտեցուցանել զԱծ, և փոխել զանկարգ և զգայթակղական գնացս իւրոց վարուց. մի միայն թեթև նշանակ երևեցոյց հնազանդութիւն Ածային օրինաց, իբր զի յորժամ գնացին քաղդէացիք ընդդէմ եգիպտացւոց, էր ամն շաբաթական. յորում տարւոջ երբայեցիք յԱծային օրինաց էին պարտաւորեալ՝ յազատութիւն արձակել զամենեսին զնոսա, որք յազգէ իւրեանց կամ վասն պարտուց, կամ վասն աղքատութիւն, և կամ վասն այլ ինչ թշուառութիւն վաճառէին զանձինս ումեք 'ի ծառայութիւն. զի յետ ամն վեց ծառայելոյ առաջի կայր նոցա ազատիլ։ Ի.յս արձակուրդ չէր ինչ ծանր արքային, զի ոչ հայէր 'ի նա. վասն որոյ և անդիմադարձ յանձն էառ պատուիրել, զի 'ի գործ դիցի։

Յողովեցան իշխանք և մեծամեծք 'ի տաճարն. և մատուցին ՝ն զորթ մի ողջակէզ. ապա կտրեալ զնա ընդ մէջ, զկէս նորա եդին յաջմէ, և զմիւս կէսն 'ի ձախմէ. և անց նախ ինքն արքայն ընդ մէջ յօշուածոյն, զկնի նորա իշխանք և ամենայն մեծամեծք։ Ի.յս անցք ընդ յօշուածոյն ողջակիզի՝ էր տեսակ իմն հանդիսաւոր երդմանն ուխտի. ուր 'ի վկայութիւն բերին զԱծային ամենազօր կարողութիւն. իբր ասելով՝ թէ որ ոք ոչ կացցէ յուխտին յայնմիկ, այնպէս արասցէ նմա ՝ն, որպէս արաբաւ որթուն այնմիկ։ Ի.յսպիսի հանդիսաւոր սաստիկ երդմամբ ամենեքին պարտաւորեցին զանձինս արձակել զերբայեցի ծառայս և զաղախնեայս իւրեանց։ Ի.յլ յետոյ ստրջացեալ՝ հնարս հնարեցին 'ի դերև հանել զայն սարսափելի ուխտ. զի յետ տալոյ առ փոքր ինչ ժամն ազատութիւն ծառայից իւրեանց, և ապա վաղվաղակի բռնութիւն անդրէն յառաջին ծառայութիւն իւրեանց մուծին զնոսա։ Ի.ստ առաւել քան յայլ ամենայն ժամանակս բարձրացոյց երեմիա զբարբառ իւր ըստ հրամանի ՝ն. խօսեցաւ սատիկս, և ասաց 'ի դիմաց ՝ն, թէ ա մենեքին նոքա, որք անցին ընդ մէջ յօշուածոյ որթուն, և ապա ստեցին ուխտին, այնպէս եղիցին

որպէս եղև որթն այն. նա՝ առաւել ևս. զի դիակունք նոցա արկցին կերակուր թռչնոց երկնից, և գազանաց երկրի։ Լաւ սեղեկիա որ ոչ բռնադատեաց զնոսա յանթերի կատարումն ուխտին, անկցի 'ի ձեռս արքային բաբելոնի. և մի ինչ յապահովեսցի՝ թէ բարձաւ պաշարումն, քանզի ընդհուպ տեսցէ զքաղաքացիս անդրէն առ իւրովք պարըսպօք։

Լ. Յս տարազ խօսից՝ որ մինչև ցայն վայր տրուեալ էր երեմիայի վիշտս և տառապանս անբաւս կրել, այժմ զկեանս նորա գլխովին արկ 'ի վերջին վտանգ. ՇԼ. ԼԲ։ Վանգի գլխաւոր իշխանք, կամ զօրապետք խնդրեցին յարքայէ սպանանել զերեմիա իբրև զայր խռովարար և ապրստամբեցուցիչ ժողովրդեան. որ լուծանէ ասէն զձեռս արանց պատերազմողաց, և լքուցանէ զսիրտս ժողովրդեան, և գրգռէ զամենեսին անցանել առ թշնամիս։ Սեդեկիա ոչ իշխեաց չլսել իւրոց զօրապետաց, և տրտմեցուցանել զնոսա. այլ մնանեաց զարդարն յանօրէն կամս նոցա. * ահաւասիկ կայ ասէ՝ 'ի ձեռս ձեր։ Լ. ռ գրամբ բանտին գոյր գուբ մի խորին 'ի հաւաքուն ջուրց և ամենայն աղտեղութեաց, որ կոչէր գուբ մելքեայ. և էր յայնժամ անջուր, այլ յատակ նորա բոված գակ լի ժահահոտ տղմով և ամենայն գարշելի աղտեղութիւն. անդ պարանօքք իջուցին զմարգարէն. զի յանսուաղութէ, և 'ի գարշահոտ ժանտ շոգեաց տեղւոյն առ սակաւ սակաւ դառն և երկար տանջանօքք ընչասպառ մեռցի. այս էր կամք անօրինացն։ Լ. յլ այր մի եթովպացի ներքինի աբդ խմելէք կոչեցեալ, որ էր յապարանս թագաւորին, և սիրելի յաչս նորա, լուեալ զայն՝ ընթացաւ վազվազակի առ արքայ, որ ելեալ 'ի զննուն պարսպայ և գընդից զինուորաց կարգելոց 'ի պահպանուն, նստէր յայնժամ առ դրան որ հանէր 'ի կողմն բենիամինի. խօսեցաւ առ արքայ, և ասէ. չարիս գործեցին արքն այնոքիկ, զի արկին զմարգարէն 'ի գուբն և անդ մեռանի 'ի ներքս. չարիս գործեաց և արբ-

քայ մնանել զնա 'ի ձեռս նոցա, և սպանանել զայրն ոչ յայսմ ժամանակի սուղայս. զի ոչ գտանի հաց 'ի քաղաքիս։ Լուաւ արքայ ներքինւոյ իւրում և հրաման ետ հանել զնա. Գլ. ԼԵ։

Լսոսի և յայլ գործոց յայտ եղև՝ եթէ սեդեկիա փոյթ ստրջանայր ընդ չարիսն, յորոց ոչ կասէր. և էր 'ի սակի այնց իշխանաց, որք լսեն սմենայն չարախօսի, և առ չարտմեցուցանելոյ զոք երբեք՝ զաշխարհ տարտմեցուցանեն։ Արդասիրութիւն և քաղցրութիւն համարին զայն, որ է վրիպակ անարի ոգւոյ, ոչ գիտել երբեք ասել՝ ոչ. և ոչ իմանան թէ այո ասել իւրաքանչիւրոց, այնպէս է՝ որպէս թէ ոչ ասել այլոց ամենեցուն։ Ոչն սոքա հրամանատուք յանթառոյ, այլ հողմացոյց դրօշակք յաշտարակաց, որք ըստ ամենայն հողմոց փոխին։ Արդարութիւն և իրաւունք և կարգք՝ գոհ և շատացեալ պահեն զժողովուրդն, և ոչ կոյր ստորագրութիւն ամենայն աղերսարկուաց։ Փառք են իշխանին դարձուցանել և փոխել զվիճն, յորժամ ճանաչէ եթէ սխալեալ է. դարձուցանելով և փոխելով ոչ լինի արհամարհ յաչս ժողովրդեան, այլ սուաւել գովի և զարմանալի երևի. զի այն՝ որ սխալեացն իբրև մարդ, զգաստացեալ ուղղեաց զանձն իբրև իշխան։ Այլ ոչ երբէք փառք են իշխանին ունել կամ փոխել զկարգաւորութիւն ինչ իւր լոկ 'ի հնորհս սիրելւոյ ումեք։ Ոչէր պարտ սեդեկիայ թողուլ զարդարն յանագորոյն ձեռս անօրինաց. և զկնի թողլոյն՝ տեսեալ թէ սխալեցաւ, ինքնին պարտ էր դարձուցանել զվիճն իւր. զի այնպէս պատուիրեն արդարութի և ճշմարտին օրէնք, և ոչ զի իւր սիրելի ներքինին խնդրեաց։ Վասկայն յայս դիպուած պարտապան էր արքայ ոչ փոքր հնորհս ունել իւրումն սիրելւոյ, զի արդել զնա յաւիտեան անիրաւութիւն։

Հնորհեաց սեդեկիա զնոդիր աբդիմելեքայ ներքինւոյ իւրոյ. և ասաց առնուլ ընդ իւր արս երեսուն, որպէս զի մի ոք արդել ինչ դիցէ, և հանել զմարգարէն 'ի գրոյ անտի զի մի մեռցի անդ։

Գնաց նեբբինէ՝, և առեալ յարքունի հանդերձանոցէ կապերտս հինս և ցնցոտիս, և բուրդս, և պարանս հինս, ընկէց 'ի գուբն առ մարգարէն, աղդ առնելով նմա կցոտել զպարանսն և թանձրացուցանել զնա՝, և զկապերտս և զբուրդս դնել ընդ անթովք 'ի նեբբոյ պարանաց. և այսպէս ձգեալ զնա պարանօքն 'ի վեր՝ հանին 'ի գբոյ անտի. և նստաւ Երեմիա 'ի սրահ բանտին։

ԳԼ. ԻԳ.

Լուղէիէլ մարգարէ։

Տագնապ և անձկութիւն սեդեկիայ արքայի ևս քան զևս առաւելոյր՝ 'ի լսել նորա, թէ զոր ինչ մարգարէանայր Երեմիա յերուսաղէմ, զնոսն ամենեին և գրեթէ նովին բառիւք մարգարէանայ և այլ ոմն մարգարէ 'ի բաբելոն։ Այս ինքն էր եղեկիել զևտացի 'ի կարգէ քահանայից՝ գերի գնացեալ 'ի բաբելոն, յորժամ գերեցաւ յեքոնիա յերուսաղէմէ ընդ այլոց գլխաւորս իշխանաց թագաւորութիւն յուդայ։ Յամին հինգերորդի գերութիւնն յեքոնիայ, որ և էր ամ հինգերորդ թագաւորութիւն սեդեկիայ յերուսաղէմ, գոլով յայնժամ եղեկիել ամաց երեսնից՝ սկսաւ մարգարէանալ. եղեալ թէ զամն երեսներորդ նշանակեալ 'ի նմանէ 'ի սկիզբն իւրոյ մարգարէութեաց՝ ոչ առնուցու նա ըստ որում կարի հաւանելի է՝ յամէ անտի, յորում ասորեստանեայք նուաճեցան ընդ ձեռամբ քաղդէացւոց. և զի եղև այն յամի ութուտասներորդի յովսիայ արքայի յուդայ, 'ի գեպ գայ անտի սկսանիլ շայս հաշիւ, ասէ կաղինոս։

'Ի մարգարէութիւնս եղեկիէլի առաւել քան յայլ ամենայն մարգարէս երևեցաւ խոշորութիւն և

թանձրութիւն երբայական ժողովրդեան։ Լսել մարգարէք սովորաբար բանիւ մարգարէանային, և երբեմն նաև գործով. բայց այն գործք չէին այնչափ ծանուցեալ, կամ գէթ ոչ այնչափ նեղացուցիչք և երկարատեւք։ Եզեկիել մարգարէացաւ բանիւ, և ծանր ծանր գործովք. արար և իրս իրս ինչ ըստ պատուիրելոյ նոցն, զոր բազումք թէ չէին հաստատ խորհրդոյն, և չգնէին միտ խոհեմութեամբ և զգաստութեամբ և սրբութեամբ նորա, կարէին համարել գործ յիմարական։ Եզեկիել նախագուշակեաց զկործանումն ամենացւոց, մովաբացւոց, տիւրացւոց, եգիպտացւոց, և այլոց թագաւորութեց, որք խնդային ընդ թշուառուին երբայեցւոց։ Մարգարէացաւ և զաւերումն բաբելացւոց, և քաղդէացւոց՝ ընդ առակաւոր անուամբ գողգայ և մագողգայ. զի թուի թէ հարկաւոր էր մեթէն խօսել վասն նոցա՝ առ 'ի չզայրացուցանել յայտնի ստառնալեօք գնոսա, ընդ որոց ձեռամբ էին յայնժամ երբայեցիքք. այլ տեսիլք նորա և մարգարէութիւնք առաւելապէս էին 'ի վերայ կործանման երուսաղէմի, զոր սկսպէս նշանակօք և նմանութիւն ցուցանէր նմա ՅԾ։

Ի սկզբան մարգարէանալոյ նորա եղև առ նա տեսիլ ահաւոր և գժուարիմաց. բայց ընդհանրապէս երևեցուցիչ ՅԾայնն բարկութեան։ Այր եզեկիել ընդ այլոց ոմանց 'ի ժողովրդենէ իւրմէ առքովքար գետով, որ էր բազուկ մի մեծ և շատաջուր եփրատ գետոյ։ Յաւ ահա յանկարծակի ետես, զի հողմ մրրկեալ, և ամպ, և հուր, և փայլատակումն գայր 'ի հիւսիսոյ։ Լոյն ամպ անօսրաւ գոյն 'ի ծայրս՝ երևէր ունէր շուրջանակի իբր լուսեղէն վերջաւորս կամ քղանցս. իսկ 'ի մէջն վառումն գողորշեաց իբրև հուր շառագոյն Ճառագայթեալ, և բերէր զնմանութիւն բազմագունի ական։ Ի մէջ հրոյն երևէին կերպարանք չորից կենդանեաց, որք թուէին իբր բազկացութեամբ հրեշաւորս։ Զև իւրաքանչիւրոց առ հասարակ՝ էր ըստ կազմութեան մարմնոյ մարդոյ. այլ ոտք նոցա կՃղակա-

բաշխ՝ նման ոտից որթուց. և կայծակունք Թա-
թափէին 'ի նոցանէ իբրև 'ի հրացեալ պղնձոյ։
Իւրաքանչիւր 'ի նոցանէ ունէր չորս թեւս, յորոց
երկուքն տարածեալ 'ի վերուստ իբրև հանդերձք
ծածկէին զմարմինս իւրեանց, և երկուքն էին բա-
ցեալ և սաւառնեալ՝ իբր 'ի թռիչս պատրաստեալ։
'Ի ներքուստ թեւոց նոցա ելանէր երկու ձեռն
մարդոյ. և զի անցնիւր 'ի հրէշից անտի էին 'ի չո-
րեսին անկիւնս մեծի կառաց, վասն այնորիկ յա-
մենայն անկիւնս կառաց երևէին երկու ձեռք մար-
դոյ։ 'Ի կրծոց մարդոյն ելանէր պարանոց. և 'ի
վերայ նորա գլուխ մարդոյ, առ որով 'ի վերայ
աջոյ թիկան էր դէմք առիւծոյ. և 'ի վերայ ձա-
խոյ թիկան դէմք եղկին. և 'ի վերայ գլխոյ մարդոյն
ցցուեալ կայր և իբր թէ անտի ելեալ՝ գլուխ արծ-
ուոյ։ Այս չորք դէմք միացեալ հայէին միաբան 'ի
մի կողմն. և 'ի շարժիլ իւրեանց ոչ դարձուցա-
նէին յետս զերեսս, այլ իւրաքանչիւր հանդէպ
երեսաց իւրեանց գնային ուղիղ առ մի կէտ, ոչ
յաջ և յահեակ խոտորեալ. յոր կողմն հրամայէր
նոցա ոգի երաւոս ընթանային, և թեթեւս դառ-
նային. բայց միշտ ընդ գիծ ուղիղ հանդէպ երե-
սաց իւրեանց։ Հողմ էր նոցա առաջնորդ և ուղ-
ղիչ. ընդ որ կոյս նայէր՝ ընդ այն վարէր զնոսա.
և յընթացից նոցա թռուէր կայծականց թափիլ,
և փայլատականց հատանիլ։

Այն ինչ հայէր եղեկիել հիացմամբ 'ի հրէշս
յայտնսիկ, ետես զհետ նոցա կառս քառանիւ.
այլ նորա ոչ ձգէին զնա, և ոչ ընթանային յառա-
ջոյ իբրև լծեալ 'ի նա, բայց միայն զի իւրաքան-
չիւր գազան էր մծտ առ մի անիւ։ Արձունք էին
անիւքն, և կերպարանք նոցա և գործուած նման մի-
մեանց՝ որպէս թէ 'ի մի գաղափար գործեալ։ Այս
'ի գնալ իւրեանց այնպէս զուգահետ ընթանային,
զի 'ի մէջ ոչ թեքէին արտաքոյ գծի, և իբր մի
միայն անիւ երևէին։ Այս շարժումն նոցա ոչ էր
կոյր ընթացք, քանզի լի էին աչօք շրջանակք նո-
ցա. և այնպէս ինն երևէին, որպէս թէ տեսանել

զմանապարհ ընթացից իւրեանց։ Այլ թէպէտ ոչ շարժէին 'ի ձգելոյ գազանացն, բայց այնպէս կշռէին զգնացս իւրեանց ընդ գնացից գազանաց, զի զոյգ ընդ նոսա գնային, ընդ նոսա վերանային, և ընդ նոսա զտեղի առնուին ըստ վարելոյ հոգ. մոյն և ամպոյն. և երևէր ոգի կենդանութեան լինել յանիւսն։ Հաստատուին կամ երկինք այնր հրաշատեսիլ կառաց, որ տարածեալ ձգէր 'ի վերայ անուոց և 'ի վերայ գլխոյ գազանաց՝ բերէր զտեսիլ ական վանուոյ՝ որ զօրէն հայելւոյ երևեցուցանէր փայլակնացայտ կայծակունս, և ցոլմունս հրոյ. որով և տեսիլ հաստատութենն ահաւոր ինն երևէր։ Զոյն անուոց նման էր ականց թարշշի, կամ որպէս ընթեռնու լատինն՝ ծովագոյն. և շարժումն նոցա իբրև մրրիկ ինչ՝ որպէս թէ շրջիցի անիւ 'ի մէջ անուոյ։ Թևք նոցա 'ի սաւառնելն հնչէին իբրև զձայն ջուրց բազմաց. այլ յորժամ բաղնէին զթևս 'ի թռիչս, հնչէին իբրև զձայն պատերազմող բանակի, իբր շաչիւն զինուց, շառաչիւն կառաց, փոնչիւն երիվարաց, հնչիւն փողոց, գոչիւն զօրաց, և ոտնաձայն բազմութեան. որ և էր իբր երրորդ ինն ձայն և ահարկու ամբոխումն։ Ի վերայ հաստատութեան որ 'ի վերայ կառացն՝ գոյր աթոռ իբրև զտեսիլ ական շափիղայ, և 'ի վերայ աթոռոյն նմանութեն կերպարանաց մարդոյ. որոյ ստորին մասն միջովք շափ 'ի խոնարհ նմանութեն հրոյ. իսկ վերին մասն իբրև զտեսիլ ական բազմագունի. և յաչացն երևէր բոց հրոյ ցոլանալ շուրջանակի. և շուրջ զաթոռոնն տարածէր նմանութեն աղեղան կամ ծիածանի, որ ձևանայ յերկինս, յորժամ ձառագայթ արեգական հարկանի 'ի հանդիպակաց ամպ ցոլագին։

Օ այս հրաշալի տեսիլ բազումք բաղմօրինակ մեկնեն. և առաւել՝ խորհրդաբար. մեք նշանակեսցուք ասատանօր զմեկնութենն ըստ ձառին, զոր տայ կաղենոս իբր առաւել բնական և համաձայն պարագայից ժամանակին։ Յայսմ տեսլեան ասէ Եզեկ

ոճ Եզեկիելի զնշան վերահաս կործանման երու-
սաղէմի։ Հրէշն քառադէմ և քառապատկեալ 'ի
չորեսին անկիւնս կառաց էր նաբուքոդոնոսոր. որ
հանդերձեալ էր ունել յազգատոհմի իւրում
զփառս չորիցս անգամ գերելոյ զԹագաւորս յու-
դայ. առաջին անգամ 'ի հաւն իւր՝ որ գերեաց
զմանասէ արքայ յուդայ. երկրորդ անգամ՝ յանձն
իւր, գերելով զյովակիմ. երրորդ անգամ գե-
րութիւն յեքոնիայ. իսկ չորրորդն որ մնայր՝ եղև
գերութիւն սեդեկիայ. և այս երեք փառք յանձն
նորա ևԵթ հայ'ին։ Վերպարանք մարդոյ որ էր
գլխաւոր 'ի հրէշն յայն, որ և յինքն ունէր պա-
տուաստեալ զայլ հրէշս, էր նա ինքն նաբուքոդո-
նոսոր. զի 'ի կործանումն երուսաղէմի ինքն հան-
դերձեալ էր լինել գլխաւոր. առիւծն՝ Թագաւո-
րութիւն պարսից. եզն՝ Թագաւորութիւն ասորես-
տանեայց. որ արդէն էր նուաճեալ ընդ լծով
քաղդէացւոց. իսկ արծուին որ ամբարձեալ ունէր
զգլուխն 'ի վերայ այլոց, էր Թագաւորութիւն մա-
դայ. որ յայնմ միաբանութեանն նաբուքոդոնոսո-
րայ մարզէր 'ի հրահանգս մարտի և զօրանայր. զի
հանդերձեալ էր եղանել 'ի վերայ այլոց. որ եղև առ-
սարաշիսիւ, և առ որդւով նորա դարեհիւ. որ էր
իւրև նուաճեաց զպարսս, զասորեստանեայս, և
զքաղդէացիս զմիաբանեալսն այժմ ընդդէմ էր-
բայեցւոց։ Միաւորութիւն երեսայ չորից հրէշից՝
ուղղեալ 'ի մի կողմն, և յառաջախաղաց հանդէպ
երեսայ իւրեանց, յուցանէր զանձուկ միաբանութիւն
երից Թագաւորացն այնոցիկ 'ի ձնշումն երբայեցւոց։ Կնձակ որթ ու յոտս՝ էր նշանակ այլոց փոքրա-
գոյն իշխանութեանց՝ փղշտայեցւոց, եդոմիայեցւոց,
ամմոնայեցւոց, որոց եղջերաբ անզօր էին 'ի հարկա-
նել. բայց և այնպէս արկին և նոքա զկնձակս իւր-
եանց գործակցելով 'ի կործանումն երուսաղէմի։
Մազ էին նշանակ արագութիւն, բոցք և փայլատա-
կունք՝ դժնդակ խստութիւն. ձեռն մարդոյ 'ի չորե-
սին անկիւնս՝ նշան հանրական սարարութիւն և
յափշտակութիւն, զոր հանդերձեալ էին առնել՝

յամենայն ինչ միեալով զձեռս։ Լ.Նիւքն լինաչք, և զուգընթաց 'ի գնացս ընդ գազանաց՝ օրինակէին զքինուորս և զարագութիւն նոցա 'ի գործադրութիւն ամենայնի՝ ըստ առաջնորդելոյ իւրեանց գլխաւորաց. միանգամայն ցուցակ էին արթնութեան և զգաստութիւն նոցա 'ի պահպանութիւն, առ 'ի չտալ տեղի փախստեան հարուածեալ եբրայեցւոց։ Լ.Ս ծովագոյն տեսիլ անուանցն ցուցանէր զանհամար բազմութիւն զօրուն տարածելոյ իբրև ջրով համատարած։ Պաղանք որք 'ի սկզբան տեսլեանն յառաջադէմ գնային, և զերեսս իւրեանց 'ի գնալն յետս ընդդէմ ոչ դարձուցանէին, ցուցանէին զՀեծելազօրն որք չէին դառնալոց յերկիր իւրեանց, մինչև ոչ կործանիցեն զերուսաղէմ։ Լ.Ս յերկրորդում՝ տեսլեանն՝ զի երևէին գնալ և դառնալ, ցուցանէին զգնալ հեծելազօրուն 'ի պաշարմանէ երուսաղէմի առ 'ի հարկանել զեգիպտացիս, որք գալոց էին յօգնութիւն սեդեկիայի. և զդառնալ նոցա անդրէն 'ի նոյն պաշարումն երուսաղէմի, զկնի վանելոյ զեգիպտացիս յերկիր իւրեանց։ Լ.Թոռն որ էր 'ի վերայ հաստատութեան կառացն, և մարդն նստեալ 'ի նա, ցուցանէր զմեծ. ըստ որոյ ակնարկութիւն լինելոց էր ամենայն։ Լ.Զեղն կամ ծիածանն որ կայր շուրջ զաթոռովն ցուցանէր՝ թէ մեծ յետոյ հաշտեսցի, և ժողովուրդն եբրայեցւոց անդրէն նորոգեսցի։

Լ.Յայսիսի նշանակութիւն տեսլեանս երևի հաստատիլ և 'ի բանից անտի նորին եզեկիէլի, որ այլուր գլ. Եզ. 3. ասէ՝ թէ յայնժամ եցոյց նմա մեծ զայս տեսիլ, յորժամ կամէր հարկանել զերուսաղէմ. * Լ.Ս տեսիլն՝ ասէ, զոր տեսանէի, էր ըստ տեսլեանն՝ զոր տեսի 'ի ժամանակի, իբրև եմուտ ցրուել զքաղաքն ‖։ ըստ լատին թարգմանութեան։ Կամ ըստ մերումն և ըստ եօթանասնից, * իբրև մտանէի օծանել զքաղաքն ‖. այսինքն տեսանել զգրոշիլ Հակատու արանցն ապրելոց 'ի կոտորածէ։ Լ.Այսմ համաձայնին և այլ պատմութիւք նոր զրոց, և մարգարէք՝ 'ի յիշատակել նոցա զթագաւորուն

միաբանեալս, և զեղանակ միաբանութեան նոցա 'ի կործանումն յայն։

Զորիցս յայտնեցաւ այս տեսիլ եղեկիելի. երբեք անգամ՝ յորժամ կամեցաւ ոմն ցուցանել զբարկութիւն իւր. իսկ չորրորդն եղև յետ լրանալոյ ամենայնի. և մնայր միայն՝ զի և նշանակութիւնն ծիածանին լուսցի, այսինքն հաշտութիւն ոչ. զոր չորրորդ տեսլեամբն եցոյց ոմն. և 'ի հաստատել՝ թէ այն ամենայն կործանումունք և հարուածք եղեն 'ի փառաւորութիւն իւրումն ոմն պատուական մեծվայելչութեան, արար՝ զի տեսցէ մարդարէն զիւր փառսն նովին կառոյ՝ զոր ետես առ քովքար գետով, մտանել 'ի տաճարն ընդ Ճանապարհ արևելեան դրանն. գլ. խգ։ Յառաջ քան զայս եղև դարձեալ առ նա այսպիսի յայտնութիւն, ոչ տեսլեամբ, այլ լսելով. զի լուաւ զձայն թևոց գազանացն սաւառնելոց ընդ միմեանս, և զշառաչիւն անուոց, և զձայն շարժման. որպէս պատմէ 'ի գլ. ՃԻ. ՃԻ. և 'ի շարժման անդ լուաւ զձայն մեծի բազմութեան՝ զի ասէին, * օրհնեալ են փառք ոն 'ի տեղւոջէ իւրմէ ։ Այն ձայն ցուցանէր, թէ միաբանութիւն թագաւորութեանցն այնոցիկ ոչ եղիցի մշտնջենաւոր. և թէ միաբանեալքն՝ յետոյ յարիցեն 'ի վերայ միմեանց. որ կատարեցաւ 'ի յարտաշէս մամ, որ նուաճեաց զպարսիկս. և 'ի դարէ՛ հ որդի նորա՝ որ յետոյ նուաճեաց զքաղդէացիս. և 'ի կիւրոս, որ զամենեսեան առ նուաճեաց ընդ իւրով իշխանութիւն։

Օ կնի նախագրեալ առաջին տեսլեան ազդ ա-բար ոմն մարգարէին՝ կալ պատրաստ առ ամենայն բան իւր, զոր խօսիցի նմա. և հրամայեաց լինել քարոզ տանն իսրայէլի։ Այլ զի գիտասցէ՝ թէ զինչ ունիցի քարոզել, եցոյց նմա հրաշական ձեռամբ մատեան մի գրեալ ներքոյ և արտաքոյ. և բանք գրոյն բովանդակ էին աղէտալի գուշակութիւնք, ողբք, վայք, և աշխար. և ասաց առնուլ զայն և ուտել, և ջամբեաց նմա զմատեանն։ Այլ որպէս զի յօժարագոյն ընկալցի մարգարէն զայն ծանրակիր պաշտօն, արար զի այն ջամբ հրաշա-

կան՝ լեցի բովանդակ իբրև զքաղցրութիւն մեղու 'ի բերան նորա։ Այս այնպէս որովայն մարդարէին լցեալ ողբով, և վայիւ, և եղերական տաղիւք, այնուհետև և բանք բերանոյ նորա էին միշտ գուշակութիւնք աղէտից և սպառնալեաց։

Յետ այնորիկ փոփոխեցան նշանքն. և հարկ եղև մարգարէին կրել բազումս առ անթերի կատարումն հրամանաց նոցն։ Հրամայեաց նմա նոսիլ արգելական 'ի տան իւրում, և անդ պնդիլ յոտնակապս, զի մի կարիցէ ելանել արտաքս։ Մեկուսացաւ մարգարէն ըստ բանի նոցն 'ի տան իւրում. զոր տեսեալ իւրոցն այլ ընդ այլոց իբրև ապշեալ և իբրև արտաքոյ մտաց, կարծեցին թէ խելագարեալ իցէ, վասն որոյ և կապեցին զնա։ Այն կապանք էին նշանակ շղթայից, որով կապեցաւ յետոյ սեղեկիա յառնուլ քաղդէացւոց գերուսաղէմ։ Այս որպէս թէ սակաւ ինչ էին կապանք ոտիցն, յաւել որ կապել և զլեզու նորա 'ի քիմն, զի մի կարիցէ խօսել. և արար զնա համր, ոչինչ ասելով՝ թէ ցմրչափ ժամանակս ունիցի կալ այնպէս. բայց յորժամ՝ ասէ ես խօսիցիմ ընդ քեզ, բացից զբերան քո. և դու խօսեացես զայն զոր ես տաց 'ի բերան քո. որ կամիցի լսել քեզ՝ լսիցէ. և որ ոչն կամիցի լսել՝ եղիցի 'ի փնաս նորա. գլ. ԺԳ։

Մինչ նոսէր մարգարէն համր և կապեալ 'ի տան իւրում, ետ նմա ոմն այլ իմն խորհրդաւոր գործ։ Հրամայեաց նմա առնուլ աղիւս մի քառակուսի, և նկարել 'ի նմա զերուսաղէմ քաղաք. և շուրջ զնովաւ գծագրել պաշարումն, նկարելով պատնէշս, մնրտկոցս, նետակալս, և բանակս։ Այս ապա առնուլ 'ի ձեռին տապակ երկաթի, և կանգնել զնա իբրև պարիսպ երկաթի 'ի մէջ իւր, և 'ի մէջ նկարեալ քաղաքին, և յետ կոյս տապակին պահել զերեսս իւր։ Այս ապա ցուցանել զայն նկար որդւոցն Իսրայէլի. որ եղիցի նշան՝ յորմէ ծանիցեն զմերձակայ թշուառութիւնս երուսաղէմի։ Իբրև կատարեցաւ նկարն, ասաց ոմն ցմարգարէն՝ դնել զնա 'ի ձախակողմն մահճոյ իւրոց. և դու ընկող-

մանեսջիր ասէ 'ի մահՃի անդ 'ի ձախակողմն քո՝ աւուրս երեք հարիւր և ինն սուն, (որպէս ունի լատինն, ասորին, և քաղդէացին ընդ երբայականին) և կամ հարիւր և ինն սուն (որպէս է 'ի յոյնն և յարաբացին և 'ի մերումն)։ Այս պատուիրեաց ՅԾ մարգարէին՝ կամելով, զի տարցի յանձն իւր զանօրէնութիւն իսրայէլի այնչափ աւուրս, որչափ ամն տարաւ ՅԾ նոցա։ Այս հրաման ետ, զի ընկողմնեսցի և յաջակողմն իւր աւուրս քառասուն. այնչափ աւուրս, որչափ ամն տարաւ ՅԾ մեղայ ասեն յուդայ. օր ընդ տարւոյ ասէ ետուս քեզ։ Այս յորժամ գայցեն առ նա յայցելութիւն, դարձուսցէ զերեսս իւր 'ի նկարեալ քաղաքն երուսաղէմ, և տարածեսցէ զազուկ իւր առ այն, և մարգարէասցի։

Մանք զայս ամենայն համարին եղեալ 'ի մտաւոր տեսութիւն մարգարէին. զի գԺուարին՝ մանաւանդ թէ անհնարին համարին, թէ մարդ ոք աւուրս երեք հարիւր և ինն սուն կարասցէ կողմնել հանապազ 'ի մի կողմն, և ոչ նեխեսցի մարմին նորա, կամ ոչ մեռցի յանտանելի նեղուէ։ Այլ այլք բազումք պնդեն, թէ իրօք եղև այն ամենայն. մի՝ զի ընթերցուած գրոյն ըստ ՃառԻն զայն յուցանէ. երկրորդ՝ զի ՅԾ ետ զայն իբրև արտաքին և տեսանելի նշան. զի յազագս գԺուարութեն և նորութեէ առաւել ծաւալեսցի 'ի լեզուս, և հրատարակեսցի, և զբազմութիւնն ձգեսցէ 'ի տես։ Այլ ՅԾ՝ որ ետ մարգարէին զայն պատուէր, յայտ է թէ ետ նմա և տեւականութիւն, և առողջութիւն, և զօրութիւն՝ զի կարիցէ կատարել։ Այս թէ ոչ՝ այն ամենայն երևելի նշանակք չունէին առաւել ինչ ազդել 'ի թանձրամիտ ունկնդիրս, քան որչափ ազդէին բանք բերանոյ։ Ինչ թերեթև քան զայն խիստ անկողմն՝ եղև և կերպակուրն, զոր սահմանեաց նմա ՅԾ ընդ այնչափ ժամանակս։ Զի սատ ցնոս յառաջ քան զընկողմանել՝ առնուլ խառնուրդ ինն ալեր, ցորենոյ, գարւոյ, ոսպան, ոլեռան, կորեկի, և հնձարոյ, և զայն ամենայն

զանգելով 'ի մի զանգուած՝ առնել երեք հարիւր ինսուն նկանակս, ըստ թուոյ աւուրց զոր կողմնեսցի 'ի մի կողմն։ և կշիռ իւրաքանչիւր նկանակի լեցի տասն ունկի։ և մի մի յայնցանէ կերիցէ 'ի սահմանեալ ժամու աւուրն։ և զայն ասաց եփել 'ի կրակ աղբոյ մարդոյ առաջի ժողովրդեան։ այլ 'ի խորշել մարդարէին յայնչափ պղծութեէ, ասելով՝ «Վաւ լեցի որ ած խորտել, եթէ պղծեալ իցէ երբեք անձն իմ 'ի պղծութիս», զիրաւ նմա ած եփել 'ի քարոր արջառոյ՝ փոխանակ աղբոյ մարդոյ։ Սահմանեաց նմա և զչափ ջրոյ՝ զոր ըմպելոց էր իբրև եօթն կամ ութ ունկի ջուր յաւուրն, և ոչ աւելի։ Այս ամենայն կարգեցաւ իբրև նախանկար յետին սովոյ, յորմէ ստիպելոց էր ժողովուրդն ճշտագոյն կշռով ուտել զհաց, և չափով ըմպել զջուր։ և յայն անձկութի հասանել ունէին, մինչև ոչ միայն զամենայն պղծալիս ուտել, այլև յորմէ քնութիւն իսկ զարհուրի՝ հարց ուտել զմիս որդւոց, և որդւոց զմարմին ծնողաց իւրեանց՝ յերկարել անդ պաշարման աշխարելի երուսաղէմ քաղաքի։

Երեք հարիւր ինսուն աւուրք կողմանելոյ մարգարէին 'ի մի կողմն իւր, ըստ կարծեաց կաղինոսի նշանակեն զնոյնչափ աւուրս անընդհատ պաշարման յառաջ քան զդարձուցանել նաբուքոդոնոսորայ զզէնս իւր ընդդէմ եգիպտացւոց։ և թողուլ առ փոքր մի ոգի առնուլ երուսաղէմի։ Իսկ քառասուն աւուրք 'ի միւս կողմն ենդելոյ՝ ըստ նորին կաղինոսի նշանակեն, թէ յետ դառնալոյ նաբուքոդոնոսորայ յաղթանակաւ անդրէն 'ի պաշարումն երուսաղէմի, փութով էառ զայն 'ի միջոցի աւուրց քառասնից։ զի քաղաքն յայնմ միջոցի յորում հեռացան քաղդեացիք, ոչ կարաց պաշար պատրաստել, զի տակաւին մնացին անդ 'ի զօրաց քաղդեացւոց։ թող զի շրջակայ երկիրն իսպառ աւերեալ էր։ Լինի ոք ասել, թէ զի՞նչ ապա կամիր ած նշանակել յասել անդ ցեղեկիել, թէ երեք հարիւր ինսուն աւուրքն կողմանելոյ նորա ցուցանեն զնոյնչափ ամն՝ յորս տարաւ ած անօրէնութեաց

իսրայէլի. և քառասուն աւուրքն ընկողմանելոյ 'ի միւս կողմն՝ զքառասուն ամն տանելոյ ՝ի զանօրէնութիւնս տանն յուդայ, զի * օր ընդ տարւոյ ասէ եղի քեզ ։ Լ.ու այս պարտ է խոստովան լինել, թէ մթին իմն է բանս. զորմէ պէսպէս մեկնութիւնք են՝ առ ոմանս այսպէս, և առ այլս այնպէս։

Իսկ կաղինոս ասէ ըստ հաշուի իւրում, թէ 'ի ժամանակէ անտի՝ զի տասն ցեղք բաժանեցան 'ի ռոբովամայ արքայէ յուդայ՝ յամի արարչութեանէ աշխարհի, ըստ հաշուին նորա 3196. մինչև ցթագաւորել սեդեկիայ, որ սկսաւ յամի աշխարհի 3577. անցին ամք երեք հարիւր և ութսուն և երկու. յոր յաւելեալ ամն ութ թագաւորութեանէ սեդեկիայ՝ (զի յիննեերորդ ամի նորա սկիզբն եղև պաշարման երուսաղէմի), լինին ամք երեք հարիւր իննսուն։ Լ)ակէտ տասն ցեղք իսրայէլի բաղմաց յառաջ քան զայս վարեցան 'ի գերութիւն 'ի սաղմանասարայ. սակայն բաղումք 'ի ցեղից անտի իսրայէլի մնացին 'ի հրէաստան ազատ 'ի գերութիւն ընդ թագաւորութիւն յուդայի. ոմանք առ ժամանակաւ թագաւորայ իսրայէլի խոյս ետուն յերկիրն յուդայ. կամաք փախուցեալ անդ եղեն ազատաստան 'ի ժամանակի արշաւանաց սաղմանասարայ. բազումք և յասորդանայ դարձուցան յերկիր իւրեանց։ Լ.ու ունիմք տեսանել 'ի պաշարման անդ բեթիղուայ բազմութիւն յոյժ յիսրայէլացւոց 'ի սամարիա ընդ հնազանդութիւն թագաւորութեան յուդայ։ Լ.ու առ սոսա՝ այսինքն առ իսրայէլացիս, որք էին 'ի թագաւորութենն յուդայ, հայէր մարգարէութիւն եզեկիէլի. զորս միացուցանելով ընդ նախնեաց նոցա՝ յիրաւի ասայ ՝ած, թէ ընդ ամն երեք հարիւր իննսուն տարաւ անօրէնութեանց նոցա. զի այնչափ ամք էին անցեալ, և հանդերձեալ էին անցանել 'ի սկզբնաւորութիւն թագաւորութեան իսրայէլի, մինչ ցսկիզբն պաշարման երուսաղէմի։

Իսկ զքառասուն ամն յուդայի սկսանի կաղինոս 'ի ժամանակէ անտի զի սկսաւ անօրինիլ մանասէ,

յորժամ՝ ասաց ՝ած ՝ինքեալ և զյուդա վասն անօրէ-
նութեան մանասէի։ Եւ՝ այս ամէն ընդ միջեցան ապաշ-
խարութիւն մանասէի, և բարեպաշտութիւն յովսիայ.
ապա անդրէն նորոգեցան ՝ի ձեռն անօրէնութեան
ամմնայ, յովակիմայ, յեքոնիայ, և սեդեկիայ։ Եւ
ըստ այսմ կաղէնոս՝ նախ քան զպաշարումն տայ
սեդեկիայ ամն ութ. առնու և զամն յովակիմայ
մետասան. (՝ի բաց թողեալ զերիս ամիսս յեքո-
նիայ) դնէ և զերկու ամն ամմնայ, որով լինին
քսան և մի։ Եւ՝ նենադրէ՝ թէ մանասէ յառաջ քան
զապաշխարել անօրինեցաւ ընդ ամն տասն և ինն։
Եւ ահա ասէ՝ այս են քառասուն ամք, յորս ՝ած
տարաւ յետին անօրէնութեանն յուդայ։

Յետ նախաձառեալ նորատեսիլ նշանի եղելոյ
առ եղեկիել մարգարէ՝ ՝ի բաբելոն, և հրատարակե-
լոյ յերուսաղէմ, որ շատ էր՝ սրտաթափ առնել
զսեդեկիա արքայ, և զամենայն իշխանս նորա, յա-
ւելաւ և այլ նշան։ Հրամայեաց ՝ած եղեկիելի, զի
կտրեսցէ զվարսս գլխոյն և զմօրուս իւր, կշռեսցէ
զնոսա ՝ճիշտ և անվրէ՛պ կշռով. և ապա բաժանեսս-
ցէ ՝ի չորս մասունս. զմի մասն այրեսցէ ՝ի մէջ քա-
ղաքին յիւրմէ նկարելոյ և պաշարելոյ. և զայն ա-
բասցէ վաղվաղակի ՝ի լրանալ աւուրց արգելանին
իւրոյ՝ յորս նախագուշակեաց զաւուրսն ՝ի պաշար-
մանն։ Զայլ չորիր մասն հատցէ ածելեաւ մանր.
զայլ չորիր մասն հոսեսցէ հողմոյ. և ՝ի մասնէ, ան-
տի հոսելոյ հողմով՝ առեալ սակաւ մի ծրարեսցէ
և կապեսցէ ՝ի ծայր մեկնոցի իւրոյ, և առեալ ան-
տի փոքր ինչ՝ դարձեալ և զայն ընկեսցէ ՝ի հուր։
Եւ՝ ապա մեկնելով զնշանակութիւն այսց գործոց, ասաց
ցնա ՝ած քարոզել զթշուառութիւս, որ հասանելոց
են ՝ի վերայ երրայեցւոց. չորիր մասն նոցա սովով
վախճանեսցի ՝ի մէջ երուսաղէմ քաղաքի. չորիր
մասն ընդ ամենայն հողմն ցրուեսցի. և չորիր մասն
շուրջ զերուսաղէմսն ՝ի սուր անկցի, և փախուցե-
լոց նոյնօրինակ սուր զկնի հասանիցէ։ Եւ այնու-
հետև ՝ի բերանոյ մարգարէին այլ ինչ ոչ ելանէր,
քան թէ պատերազմ, սով, մահ, և յափշտակու-

թիւն առ հաստատակ ընդ ամենայն հրէաստան, և այն՝ ընդ հուպ. գլ. Է։

Յամին վեցերորդի յամենեանն հինգերորդի թագաւորութեան սեղեկիայ՝ դարձեալ ցուցաւ մարդապետին 'ի տան իւրում, ուր նստէին առ նովաւ ծերք յուզայ, այն ահաւոր տեսիլ՝ զոր յառաջ ետես առ քովքաւ գետով. և ապա նմանութի ձեռին մարդոյ երևեալ՝ կալաւ զվարսից գլխոյն, և վերացոյց ոգւով, և տարեալ զնս յերուսաղէմ, կացոյց 'ի նախագուռն տաճարին՝ տեսանել զպղծութիս և զանօրէնութիս զոր անդ գործէին. գլ. Ը. Եւ։ Յետոյ ետես, զի արք վեց ըստ հրամանի նոն յարձակեցան 'ի քաղաք անդր, իւրաքանչիւր ունելով տապար 'ի ձեռին իւրում։ Այլ 'ի մէջ նոցա երևեցաւ այր մի զգեցեալ պճղնաւոր, և կամար ականակապ յականց շափիղայ ընդ մէջ իւր. և պատուիրեցաւ նմա մտանել 'ի քաղաք անդր, և դնել նշան 'ի ճակատ արանց որ հեծէն 'ի վերայ անօրէնութեանց գործելոց յայլոց 'ի քաղաքի անդ. և արանցն վեցից ասացաւ երթալ զհետ նորա, և կոտորել անխնայ զամենեսին զծեր և զտղայ, յորս ոչ տեսանիցեն զնշանն, սկսանելով 'ի տաճարէն 'ի քահանայից և 'ի ծերոց։ Յետ վճարելոյ կոտորածին՝ եկն այրն որ զգեցեալ էր զպճղնաւորն, և ետ պատասխանի, թէ արար և կատարեաց, որպէս հրամայեցաւ նմա։ Ապա ըստ նոր հրամանին զոր յայնժամ ընկալաւ այրն, մատեաւ յանխիւսն խորհրդաւոր կառացն, և լցեալ զագուռս իւր կայծակամէջ հրոյ 'ի միջոյ անուոցն, և 'ի միջոյ քրովբէից, ցանեաց 'ի վերայ երուսաղէմ քաղաքի. գլ. Թ. Ժ։

Այսպէս եղէկիել անդ՝ ուր տարեալ եղև հոգւով, և այլ զանազան տեսիլս. և ապա նոյնպէս հոգւով դարձուցաւ 'ի տեղի իւր. այսինքն եկն 'ի միտս իւր, և պատմեաց երբայեցւոց եղելոց անդ 'ի բաբելոն զամենայն։ Այլ չու կամ պանդխտութի նորա՝ որ յետ այնորիկ հրամայեցաւ նմա, ոչ եղև լոկ մտաւոր կամ յերևակայութի, այլ իրօք։ Զի ըստ պատուիրելոյ նմա նոն՝ զգեցաւ 'ի

ցերեկի հանդերձ գերութեան կամ Ճանապարհորդութեան. և ընդ երեկս ծակեաց ձեռամբ իւրով զորմն տան իւրոյ առաջի աչաց ժողովրդեան. և ընդ այն ծերպ ելեալ արտաքս առաջի նոցա իբր գաղտագողի՝ ծածկեալ ունելով զգլուխն՝ երթայր կորակոր 'ի մէջ բաբելոնի։ Մենայն քաղաքն զարմանայր ընդ այն նորատեսիլ գործ մարգարէին. մանաւանդ զի ըստ լատին բնագրին՝ ունէր բարձեալ 'ի թիկունս և ծրար հանդերձից, իբր այն թէ յայլ տեղի փոխադրէ զընակութիւն իւր։ Յետ մենեցուն որք հարցանէին՝ տայր պատասխանի, այս է նշանակ և պատկեր այնմ, որ գալոց է 'ի վերայ թագաւորին և բնակչաց Երուսաղէմի. * Յս նշանակ արարից ասէ 'ի մէջ դորա (Երուսաղէմի). որպէս արարիդ՝ այնպէս եղիցի դմա‖. գլ. ԺԷ։ Յետ վասն սեդեկիայ յայտնի ասաց, թէ կորակոր վարեսցի 'ի բանակն քաղդէացւոց. և թէ հատցեն զորմն, և հանցեն զնա 'ի Թաքստեանէ իւրմէ. և զերեսս ծածկեալ գնասցէ, զի մի տեսցէ թէ ուր տանին զնա։ Սպա տարցին զնա 'ի բաբելոն. բայց ոչ տեսցէ զնա, և անդ մեռցի։ Յետ ամենայն օգնականաց և պաշտպանաց նորա՝ 'ի մերձենալ քաղդէացւոց՝ լքցեն զնա, և փախուցեալ ցրուեսցին. բայց սուր և զկնի նոցա հասանիցէ. սակաւք ապրեսցին 'ի սովոյ, 'ի սրոյ և 'ի մահուանէ. և սորա կեցցեն՝ զի պատմեսցեն ազգացն, առ որս խընդրեսցեն պատսպարիլ, զանօրէնութիւնս ժողովրդեան, և զարդարութի և զզօրութի նոցա։

Դարձեալ և այլ սէսպէս օրինակաց և առակաց մարգարէացաւ եղեկիել զկործանումն Երուսաղէմի, և զգերութի և զթշուառութիւնս սեդեկիայ. 'ի գլ. ԺԵ. ԺԶ. ԺՇ. Խ։ Յրբեմն առակաւ օրթոյ հատելոյ, և 'ի հուր արկելոյ. երբեմն արծուոյ մեծացելոյ և տպա փետրաթափ եղելոյ. երբեմն մատակ առիւծոյ ըմբռնելոյ յորսողաց և 'ի գառագղի փակելոյ. երբեմն սայրասուր վաղակաւորի 'ի պատենից մերկացելոյ. և երբեմն երկուց քերց պոռնը-

կաց՝ ողջա և ողջիբա կոչեցելոց, որք յետոյ յիւբ-
եանց հոմանեաց սպանան։ Լոյս զի այս ամենայն
մարգարէութիւք հայէին 'ի սեղեկիա, և 'ի յուդա
և յիսրայէլացիս՝ որք էին 'ի հրէաստան ընդ հնա-
զանդութիւն նորին արքայի յուդայ, վասն այնորիկ
ոչ՝ այնպէս տնօրինէր, զի հասանիցեն յերուսա-
ղէմ 'ի ձեռն երթևեկելոց, կամ թղթոց գրելոց։

ԳԼ. ԻԼ.

Ալ էրկին հրաշանուն երուսաղէմ և պատճառի դն։

Արդ՝ լուեալ սեղեկիայ արքայի զայսոսիկ
մարգարէութիւս եզեկիելի, և տեսեալ զի ամենայն
իրաք էին համաձայն մարգարէութեաց զոր երեմիա
մարգարէանայր յերուսաղէմ, երկեաւ յանձն իւր.
և կամեցեալ 'ի բերանոյ նորին իսկ երեմիայի զիրսն
ստուգել, պատճառանաք իմն գնաց 'ի տաճարն, և
ետ ածել 'ի բանտէ զերեմիա անդ առ ինքն. ուր
'ի ծածուկ սենեկի միւսմ որ էր առ երրորդ դրան
տանն նոն, գաղտ խօսեցաւ ընդ նմա։ Խնդրեաց
յայտնել նմա անկեղծութիւն զշնմարտութիւնն. երդ-
ուեալ 'ի նոր, թէ զինչ և տացէ պատասխանի, ոչ
սպանցէ զնա. և ոչ մատնեսցէ 'ի ձեռս արանցն,
որ խնդրեն զանձն նորա։ Յերեմիա յայտ արար նմա
ստուգութիւն, զի թէ ինքնին անձնատուր լինիցի
արքայինն բաբելացւոց, փրկեսցէ զանձն և զտուն
իւր. և զերուսաղէմ քաղաք ազատեսցէ 'ի հրակիզ-
մանէ։ Լ՝ապա թէ ոչ՝ գիտասցէ, զի քաղաքն անվը-
ասպ մատնեսցի 'ի ձեռս քաղդէացւոց, և այրեսա-
ցի հրով. և ինքն արքայն ոչ ազատեսցի 'ի ձեռաց
նոցա։

Ալ եմակն՝ յոր հասեալ կայր յայնժամ երուսա-
ղէմ, բացայայտ ցուցանէր զշնմարտութիւն մարգա-

բէութեն. և արքայն իսկ չասաց նմա՝ թէ ոչ հաւատամ. այլ զայն պատճառեր՝ թէ երկնչի, գուցէ տացի 'ի ձեռս հրէիցն, որք յայնժամ փախուցեալ 'ի քաղաքէն՝ անձնատուր եղեն քաղդէացւոց, և կային 'ի բանակ անդր նոցա. և նոքա այպանեալ ձաղէսցին զնա։ Լսեսեցաւ Երեմիա զամենայն զոր մարթի էր խօսել՝ 'ի հաւանեցուցանել զարքայն լինել անձնատուր. ապահովացոյց զնա, թէ ոչ մատնեսցի 'ի ձեռս հրէից վտարանջելոց, և ոչ այպանեսցի 'ի նոցանէ։ Լցոյց նմա՝ թէ խաբեն զնա նորին խորհրդականք, մինչև սուտ շոգմոգութեամբ արկցեն զոտս նորա 'ի գայթակղութիւն, և ինքեանք հեռացին 'ի նմանէ։ Ա կայեաց յանուն նոյն՝ թէ չիք այլ հնար ապրեցուցանելոյ զանձն, և զկանայս և զորդիս իւր. վասն որոյ աղաչեաց և թախանձեաց զնա անսալ բանից նոյն. բայց 'ի զուր։ Ա երբ ինն պատասխանի արքային եղև զգուշացուցանել զմարգարէն ընդ գլխապարտութիւն չայտնել սուտք բնաւ որ ինչ բանք եղեն նոցա ընդ միմեանս։ Լսեաքանչի դժուարին էր թագուն մնալ յիշխանաց և 'ի զօրապետաց այնմ առանձնախօսութեն նոցա, պատուիրեաց արքայ ցերեմիա, զի թէ հարցանիցեն ինչ ցնա, ասիցէ. արկի գութս առաջի արքայի, զի մի դարձուցցէ զիս 'ի խիստ բանտ անդր յոմնայ թանայ մեռանել ինձ անդ։ Լասկած արքայի հաւատեցաւ, զի գիտացին նոքա զխօսել նոցա, և եկեալ առ Երեմիա՝ հարցին զնա. իսկ նա ետ նոցա պատասխանի, որպէս հրամայն ընկալաւ յարքայէ. և այնպէս ոչ էլ 'ի վեր բանն. և Երեմիա դարձուցաւ անդրէն՝ ոչ 'ի բանտն, այլ 'ի սրահ բանտին. և նստաւ անդ մինչև առաւ երուսաղէմ։

Լնդ այն ժամանակս վճարեալ նաբուքոդոնոսորայ զերս իւր ընդ փարաւոնի արքայի եգիպտացւոց՝ 'ի փախուստ դարձուցանելով զնա յԵգիպտոս առանց երկար պատերազմի, ինքն դարձոյց զզօրս իւր անդրէն առ պարսպաբ երուսաղէմի. ամրացոյց յամենայն կողմանց զմարտակոցս. սաստկացոյց զպարձակումն, և խրամատեաց զպարիսպս. 'ի նմին ժա-

մանակի զօրացեալ էր յոյժ և սոքա 'ի քաղաքին, և ոչ գտանէր հաց ուտելոյ ժողովրդեան. և պաշտպանք նորա անկարող էին և ևս պաշտպանել զխրամատս պարսպաց։ Սակայն որք 'ի ներքս անդ էին՝ այնպէս սկսեալ յամառեալ կային յանձինս, զի և յայն վերջին վտանգ՝ ոչ խոնարհեցան խօսիլ 'ի խաղաղութիւն։ Պաղդէացիք բուռն յարձակմամբ գրոհ ետուն 'ի պարիսպն. և ութ 'ի զօրավարաց նոցա մտին կալան զդուռն կոչեցեալ միջին, և նստան անդ. և բացին ընդ այն Ճանապարհ անարգել՝ և այլոց զօրավարաց և իշխանաց։

Օ՛այն տեսեալ սեղեկիայ՝ ձեռն էարկ 'ի հնարս, զոր որպէս թուի՝ ունէր միշտ 'ի մտի իւրում զամենայն ժամանակս պաշարման առ ապրեցուցանելոյ զանձն և զիւրսն։ Պ՛ոյր ստորերկրեայ Ճանապարհ ընդ մէջ երկուց պարսպաց՝ անծանօթ 'ի ժողովրդենէ քաղաքին, որ ելանէր արտաքոյ երուսաղէմ քաղաքին. ընդ որ թագաւորք կարէին երբ և իցէ ելանել 'ի քաղաքէն առանց երևելոյ ումեք. և հանէր 'ի հին բուրաստան անդր սողոմոնի լի բանան անուանեալ. ուր էին և արքունի ապարանք 'ի պէտս սթափութեան. յորմէ և տեղին կոչէր բուրաստան արքունի։ Յայն գետնափոր Ճանապարհ փութացաւ եմուտ սեղեկիա, յորժամ ետես զթշնամին տիրել միոյ 'ի դրանց քաղաքին. ածեալ ընդ իւր զզօրավարս և զամենայն արս պատերազմող, զորս յայնմ անձկութեան ժամանակի մարթացաւ հաւաքել։ Պ՛այս Ճանապարհ հանէր անդր քան զպատնէշ թշնամւոյն. վասն որոյ յուսայր սեղեկիա անտես 'ի շրջապատ պահնակաց թշնամւոյն՝ զերծուցանել զանձն առ ժամն 'ի միում 'ի մեծաւորս անտառաց և անապատից. և ապա անտի անցանել այլուր խնդրել իւր տեղի պատսպարութեան։ Օ՛այս գաղտագողի Ճանապարհ նշանակեալ 'ի ՝՝՝

կի զբաղը քաղաքն։ * Լ,ա Ելին 'ի քաղաքէ անտի (ասէ երեմիա. ԺԷ. 7.) 'ի գիլերի ընդ Ճանապարհ դրանն ընդ պարիսպ և ընդ պատուհան՝ ընդ կողմն պարտիզին արքունի. և քաղդէացիքն շուրջ զքաղաքաւն էին. և գնացին ընդ Ճանապարհս արաբացւոց ‖. զոր լատինն յայտնի և ընթեռնու. * Լ,ա Ելին .... ընդ Ճանապարհ դրանն, որ է ընդ մէջ երկուց պարսպաց, և հանէ 'ի պարտէզն արքունի, պաշարեալ ունելով քաղդէացւոց զքաղաքն շուրջանակի. և գնացին ընդ Ճանապարհ, որ հանէ յանապատ ‖։ Լ,թէ այն Ճանապարհ էր 'ի վերայ գետնոյ յայտնի, կանխաւ իսկ ունէին զայն քաղդէացիք՝ որք շուրջ պատեալ էին զքաղաքն, և չթողուին ընդ այն ունել քաղաքին հաղորդութիւն ընդ դաշտաց. ապա էր Ճանապարհ գաղտնի ստորերկրեայ։ Սակայն սուտ է այն, զոր ասաքիք եբրայեցւոց առասպելեն, թէ եղջերու մի փախուցեալ յորսորդաց ընդ գիծ Ճանապարհի՝ ընդ որ սեդեկիա գետնափոր Ճանապարհաւ փախչէր, ած զքաղդէացիս՝ որ զհետ սնդեալ էին նմա, 'ի բերան այնր ստորերկրեայ Ճանապարհի՝ ընդ որ ելանէր սեդեկիա. որպէս թէ յայնմ բորբոքման, յորում քաղդէացիքն ամենայն կատաղութիւն յարձակեալ էին 'ի վերայ քաղաքին, գտեալ իցեն պարսպ սնդիլ զհետ որսոյ եղջերուի, թողեալ ըզմարտ ընդ քաղաքին։ Հնմարիսն այն է, զի 'ի յայտնիլ յայնժամ Ճանապարհին, որ ցայն վայր էր անծանօթ, թէրևս որ 'ի քաղաքացւոց. կամ մանաւանդ ոմն 'ի փախուցելոց անտի ընդ սեդեկիայ՝ առաւել փոյթ տանելով անձին, քան փախստական թագաւորին, իցէ վասրանջեալ 'ի նմանէ. և առ գտանելոյ ընորհս առաջի թշնամեաց, ցուցեալ իցէ զՃանապարհն ընդ որ փախեաւ արքայ։ Հաւաստի է՝ զի քաղդէացիք գտին զնա յանապատն երիքովն. ուր թողին զնա ամենայն արք որք էին ընդ նմա, և ցրուեցան 'ի նմանէ. և ինքն մնաց 'ի ձեռս քաղդէացւոց։ Լ,յլ թէ զնարդ ապա Հնմարտեցաւ մարդաբարութիւնն եղեկիելի, թէ

* հատցեն զորմն, և հանցեն զնա։ մարթ է պատասխանել. մարգարէն ոչ ասէ թէ սեղեկիա հանցի ընդ խրամատ որմոյ կամ պարսպի, այլ թէ խրամատեսցեն զպարիսպս առ 'ի հանել արտաքս զսեղեկիա, և ինքեանք տիրեսցեն քաղաքին։ Զորդ՝ պարիսպն հատաւ, և խրամատք բացան. այլ զի արքայն ոչ ևս էր յերուսաղէմ, ոչ հանաւ ընդ ծակ խրամատից։ Լոյս ևս մարթ է, թէ սեղեկիա յանապատի անդ երիքովն՝ յահէ թշնամեաց իցէ ղօղեալ 'ի միում յաշտարակաց անտի, որք յաձախ կային յայն անապատն՝ կառուցեալ 'ի պատսպարութիւն հովուաց յերեսաց ասպատակող թշնամեաց. և քաղդէացիքն հատեալ իցեն զորմն, և հանեալ ընդ այն զսեղեկիա։ Զի հարկաւոր, առ 'ի լինել մեզ հաւատի, գտանել զլուսնդակ պատմութիւն գրեալ 'ի գիրս թագաւորաց կամ մնացորդաց. շատ է զի գտանեմք 'ի մարգարէութիւն։ Զրպէս ահա ոչ ընթեռնումք 'ի պատմութեան, թէ սեղեկիա տարեալ եղև գիշերայն ծածկեալ երեսօք. սակայն առ 'ի ասել թէ այնպէս եղև, շատ է մեզ գտանել զայդ 'ի մարգարէութիւն եղեկիէլի։

Յորժամ ըմբռնեցաւ սեղեկիա, նաբուքոդոնոսոր էր 'ի դերղաթա 'ի գաւառին եմաթայ 'ի մասին ասորւոց. անդ ածին զսեղեկիա առաջի նորա շղթայակապ պղնձի շղթայիւք։ Լոյս նաբուքոդոնոսոր ընկալաւ զնա զառաջեաւ իւրով՝ որպէս գատաւոր ընդունի զյանցաւորն. ոչ եցոյց կարեկցութիւն ընդ թշուառութիւն նորա, ոչ պատիւ իշխանութիւն նորա, և ոչ խնամարկութիւն ինչ անձին նորա։ Զինեաց զնա և եգիտ պարտաւոր տպերախտութիւն, ապստամբութիւն, ստերգմնութիւն, անհաւատարմութիւն առ մարդ, և առ Ած. վասն որոյ և գատապարտեաց զնա՝ նախ աչօք տեսանել զմահ որդւոց իւրոց, որք առաջի աչաց նորա կոտորեցան. ապա տեսանել զմահ իշխանաց և մեծամեծաց յուզայ ամենեցուն, որք անկան 'ի ձեռս նորա։ Յետ այնորիկ կուրացոյց զաչս սեղեկիայ. և շղթայակապ տարաւ զնա ընդ իւր 'ի բաբելոն. և

եդ 'ի տուն աղօրեաց 'ի քանտի մինչև ցօր մահ-
ուան նորա։ Յուսաւ նմա ժամանակ զգաստանա-
լոյ և ապաշխարելոյ, եթէ արդարև գիտաց բա-
բիոք 'ի կիր արկանել զայն վերջին թշուառութիս
իւր։ Վերաւ խաղաղութիւն՝ իւրովք բնական օրհ-
սիւ. և արարաւ նմա յուշարկաւորութիւն պատուով
որպէս թագաւորի. ըստ որում մարդարէացեալ
էր նմա միշտ հաւատարիմն առ նա, այլ անագան
ուրեմն ծանուցեալն 'ի նմանէ՝ երեմիա մարդարէ։

Պաշարումն երուսաղէմի սկսաւ յամենանն տաս-
ներորդի, (որ ըստ հաշուին կաղենոսի, էր սկիզ-
բքն յուլիս ամսոյ հռովմայեցւոց) յամին ինեներոր-
դի թագաւորութեան սեդեկիայ. երկարեցաւ ընդ
ամիսս եօթնեւտասն. և կատարեցաւ յինեներորդ
աւուր ամսոյն չորրորդի. (որ ըստ կարծեաց նո-
բին կաղենոսի էր յունվարն հռովմայեցւոց,) յո-
րում աւուր առաւ երուսաղէմ։ Յայս միջոց ժա-
մանակի յետ երեքհարիւր ինեսուն աւուրց խորհրդ-
դաւոր ընկողմանելոյ եղեկիելի՝ որպէս տեսաք 'ի
վերոյ, էլ մեծ մասն քաղդէական զօրուն երթալ
ընդդէմ եգիպտացւոց. որ եղև յամենանն օգոս-
տոսի 'ի տասներորդ ամի սեդեկիայ։ Ընդ երթ քաղ-
դէացւոց ընդդէմ եգիպտացւոց, և ընդ դարձեալ
ցա անդրէն 'ի պաշարումն երուսաղէմի՝ անցին
ամիսք երեք, և փոքր ինչ առաւել. և 'ի վախճան
նոյեմբեր ամսոյ մատասանեներորդ ամի սեդեկիայ,
մարտ եդին քաղդէացիք ընդդէմ քաղաքին աւուրս
քառասուն անընդհատ, և 'ի սկիզբն յունվարի
առաւ աշխարելի քաղաքն։ Յաւ ընդ աւուրս երե-
սուն և հինգ մատնեցաւ յաւար յաղթանակողաց,
որք ոչ թողին թագուն տեղի, զոր ոչ յուզեցին.
ճրագաբ և լապտերաբ քննեցին զամենայն խորշ և
զքունձս, և զամենայն մթին գաղտնածածուկ
թաքստեան տեղիս առ 'ի կողոպտել և յափշտակել
զամենայն գանձս, որ գոյր 'ի քաղաքի անդ։

Յաւ յեօթնեներորդ աւուր ամենանն էլ 'ի դերզա-
թայ նաբուզարդան մեծ սպարապետն քաղդէացւոց,
և 'ի տասն ամսոյն եկն յերուսաղէմ 'ի վերջ

հասուցանել զքաղաքն։ Որչափ ոսկի, և արծաթի, և պղնձի սպասք, և անօթք, և այլ գործածք ձեռաց գտան 'ի տաճարն, զամենայնն եւ տանել 'ի բաբելոն. իսկ մնացուածք տաճարին, և տանն արքայի, և ամենայն քաղաքին զոր չեղև հնար բառնալ և տանել, հրոյ ճարակ եղեն, յամենայն կողմանց մեծի մայրաքաղաքին հուր հարեալ զնովաւ։ Եւ զոր բռնութեամբ հրոյն ոչ զօրեաց աճիւնացուցանել, զայն ամենայն կործանեցին քաղդէացիք մանգղինօք, և երկաթի մրնօք, և փայտատաշ, որպէս՝ զպարիսպս քաղաքին և զմեծամեծ ապարանսն. զորմուանս տաճարին հարթայատակ արարին, և զՀիմանս նորա ոչ թողին անձեռամերձ, այլ իսպառ քակեցին, զի մի այլ ևս նոր շինուած 'ի վերայ իւրեանց բառնայցեն։ Աղաղաքն վերին և ստորին սպասուսպուռ քանդեցան։ Անակիւք նոցա արք և կանայք, մեծ և փոքր 'ի գերութեամբ վարեցան, բաժանեալ 'ի մէջ միաբանեալ յաղթանակողաց. ուստի մնան ինչ անց 'ի բաբելոն. մնան ինչ 'ի պարսիկս, և մնան ինչ 'ի մարս։ Որիայն նոքա որք ամենեքին աղքատք էին, որոց ոչինչ գոյր զի կորուսանիցեն, գտան բարեբախտ. զի նոքա եթողան 'ի հրէաստան, և նոցա յանձնեցան այգիք և ագարակք գործել և մշակել զնոսա։

Այսչափ կոտորածս և 'ի կործանմունս սակաւք ոմանք անվնաս պահեցան 'ի յաղթանակողաց։ Ի սակաւուց անտի մին էր աբդիմելեք ներբքնի եթովպացի, այն՝ որ 'ի գութ հարեալ քնդ երեմիա, եւ հանել զնա 'ի կոբստական քանտէն. որպէս տեսաք 'ի վերս անդր. արդ 'ի վարձ և 'ի հատուցումն ողորմութեանն զոր արար երեմիայի, անվնաս պահեցաւ 'ի կործանմանն երուսաղէմի. զոր յառաջագոյն մարգարէացաւ նմա նա ինքն երեմիա. գլ. ԽԹ. 15։ Այսպէս անվնաս պահեցան և ռաքաբիմք, որք էին տուն կամ գերդաստան նշանաւոր 'ի մէջ իսրայելի իջեալ 'ի ռեքեբայ. որք ըստ պատուիրանի յոնադաբայ նախահաւրն իւրեանց, զոր ունէին աւանդութիւն 'ի հարց՝ ոչ

քնակէին 'ի քաղաքս, և ոչ 'ի տունս, այլ 'ի բացի վրանօք. և զինի քնաւ ոչ ըմպէին։ Օ սոսա 'ի ժամանակի յովակիմայ արքայի յուդայ կացոյց ՝ած օրինակ 'ի յանդիմանութիւն և 'ի կշտամբանս անհնազանդութիւն ապառաւմ ժողովրդեան իւրոյ։ Օ ի ըստ հրամանի ՝ան կոչեաց զնոսա երեմիա 'ի տուն ՝ան 'ի մի 'ի սրահիցն անտի. և եդեալ առաջի նոցա գինի և բաժակ, ասաց նոցա ըմպել. իսկ նոքա ամենեքեան բացէ 'ի բաց հրաժարեցան՝ միայն վասն այսորիկ, զի մի անցանիցեն զպատուիրանաւ նախահաւու իւրեանց։ Այոքա յայսմ վերջին պաս տերազմի ստիպեցան խոյս տալ յերուսաղէմ, այլ ՝ած 'ի վարձ միամիտ որդիական հնազանդութիւն նոցա՝ յայնչափ չարեաց միջի պահեաց զնոսա անվիշտ և անվնասանգ։ Օ այս ևս կանխաւ մարգարէացեալ էր վասն նոցա երեմիա. գլ. Լ։

Այաջ ՝անաչէր նաբուքոդոնոսոր զերեմիա. իրաղէկ էր և գիտէր յերբայեցւոց անտի փախուցելոց առ նա, և յիւրոց իսկ լրտեսաց՝ թէ որչափ ինչ խօսեցաւ, և արար, և կրեաց 'ի յորդոր քաղաքին՝ լինել անՀնազանդաւոր նմա։ Այսն այնորիկ սիրէր զնա իբրև իւր մտերիմ, և բազում ջերմութիւն սպարապետի ունել զնա պատուով, ակն ածել 'ի վերայ նորա որպէս բարեկամի, ինամել և թողուլ զնա յամենայնի 'ի կամս նորա՝ երթալ և նստիլ ուր և կամիցի, և առնել զինչ և հաճոյ իցէ առաջի նորա։ Այաբուզարդան և այլ մեծամեծք արքային բաբելոնի առին զնա 'ի սրահէ անտի քանտին, և յանձնեցին 'ի ձեռս գոդոլիայ որդւոյ ահիկամայ, որ կացուցաւ 'ի հրեաստան ոստիկան իբրև փոխարքայ։ Իսկ ջերմայն և եռանդնասէր մարգարէն այնչափ ազատութիւն ընկալեալ, փոխանակ վայելելոյ 'ի նմին՝ զնացեմուտ և խառնեցաւ 'ի խումբս զերեաց, զորս ժողովէին 'ի հաւատս, զի անտի տպա առաքեսցին 'ի բաբելոն. և զինուորք որք ոչ ՝անաչէին զնա, կապեցին և զնա։

Իսկ նաբուզարդան հանդէս արարեալ անդ 'ի հրամա դերեայն, և տեսեալ զերեմիա 'ի խուսիս նուցա կապեալ ձեռակապօք, զարմացաւ, զի առաւել ընտրեր նա զդերութիւն՝ քան զազատութիւն։ Հրամայեաց վաղվաղակի արձակել, և կոչեալ զնա առ ինքն, ասէ ցնա. * Որ ածէ բարբառեցաւ զչարիսդ զայդ 'ի վերայ տեղւոյս այսորիկ. և ածէ և արար ամ՝ որպէս և խօսեցաւ. զի մեղայք ՝ն... Այլ արդ ահա այժմ լուծի զքեզ այսօր 'ի ձեռաց կապանացդ. եթէ բարւոք թուի առաջի քո գալ ընդ իս 'ի բաբելոն՝ եկ. և ածիցէ ակն 'ի վերայ քո ॥. գլ. Խ։ Սակայն խորհուրդ ետ և յորդորեաց մնալ անդ 'ի հրէաստան 'ի մէջ ժողովրդեան իւրոյ առ գոդոլիայ փոխանորդի արքայի։ Նկալաւ երեմիա զխորհուրդն. ընդ նմին և պաշար կերակրոյ, և այլ պարգևս սիրոյ յառատամիտ սպարապետէն. և գնաց՝ ոչ յերուսաղէմ, զի ոչ ևս կայր 'ի վերայ երկրի երուսաղէմ քաղաք, այլ 'ի մասերսա, ուր եղեալ էր գոդոլիա զաթոռ իւր. անդ նստաւ և մարգարէն 'ի մէջ ժողովրդեան երկրին մնացելոց։

Այն՝ որք համարին թէ յայսմ ժամանակի ելցէ թաքուցեալ երեմիա զխորանն վկայութիւն, և զտապանակն կտակարանաց, և զսկի սեղան խնկոց. զոր ունիմք յերկրորդ գիրս մակաբայեցւոց. գլ. Բ. 7։ 'Ի սոյն միտս էր զառաջինն և կաղինոս, որպէս ինքնին խոստովանի. այլ յետոյ մանր և Ճշտագոյն ևս քննեալ զպարագայս ժամանակին, դարձոյց զայն առաջին կարծիս իւր. և ընդ այլոց բազմաց հաստատէ, թէ յառաջ քան զպաշարումն երուսաղէմի, յառաջ քան զկոխեալ զօրաց քաղդէացւոց յերկիրն յուդայ, երեմիա յԾծային յայտնութիւն ուսեալ, օգնականութիւն այլոց պաշտօնասէր քահանայից՝ առ զայնոսիկ և թաքոյց յայրի միումբ'ի նոմբա անտառախիտ լերին, զի մի անկցին 'ի ձեռս քաղդէացւոց. քանզի արդարև դժուարին թուի՝ մանաւանդ թէ և անհնարին, թէ 'ի ժամանակի պաշարման, կամ յետ առմանն երու-

տաղէմի, գտեալ իցէ մարգարէն դիպողութիւն՝ առնել զայն փոխադրութի մինչև յայնկոյս յորդանանու։

ԳԼ. Լ.Օ.

Գոդողիա ոսպէնն ի՛մ փոխարէայ 'ի հրէաստան։ Լսմայել գաւառաձան։ Գոսպերբ սերբէիայ։ Ենդանել հնացորդաց երբայեցոց յեթիոպոս։ Նրբեդա մարգարէ։

Նրևէր թէ լուան եղև համբէն աղէտից 'ի հրէաստան, զի զոբք քաղդէացւոց, որպէս և զոբք պարսից և մարսց մեկնեցան անտի. և նաբուքոդոնոսոր դարձաւ 'ի բաբելոն, կացուցեալ անդ ոստիկան իբր փոխարքայ ընդհանուր հրամանատար երկրին զգոդողիա զորդի աբիկամայ զայրն արժանաւոր. որոյ՝ ըստ ամենայն բարեբաւութեանց իւրոց, ոչ գոյր զուդական. և նմա յանձն արար զարս և զկանայս, և զամենայն ինացորդ ժողովրդեան երկրին, զորս ոչ խաղացոյց 'ի բաբելոն։ Գոդողիա ամ և վարեաց զայն պաշտօն իբրև հայր գոբովական 'ի խնամել զորդիս, քան թէ իբրև իշխան հրամանատար սարկաց սրով գերելոց։ Հեռի էր 'ի նմանէ ամենայն ամբարտաւանութիւն. զամենեսին քաղցրութիւն ընդունէր. առ ամենեսին մարդասիրէր. ամենեցուն ձեռն օգնութիւն կարկառէր 'ի յաջողումն գործոց նոցա 'ի բարի, ջան 'ի մտի եդեալ ամենայն զօրութիւն իւրով 'ի խաղաղութիւն և յանդորրու պահել զնոսա, 'ի քաղցրացուցանել զդառնութիւն թշուառութիւն նոցա։ Տաղտկալի էր նմա ամենայն ագահութիւն, և առանձնական շահախնդրութիւն. ոչ սիրէր պարարիլ ընչիւք ժողովրդեան. գիտէլով զի ոչ երբէք բերեն պտուղ բարի՝ տունկք ոռոգեալք արտասուօք ժողովրդեան,

կեղեքելոյ, և որպէս թէ քանցելոյ 'ի մսոյ։ Հրաւմանն Եհան ամենեցուն ունել զայդիս իւրեանց և զագարակս, և ժողովել զգինի, և զմիրգ, և զիւղ յամենս իւրեանց. և չերկնչել յերեսաց քաղդէացւոց, զի ինքն նստի անդ 'ի մէջ նոցա տալ պատասխանի ամենայն բանից, որք գայցեն 'ի բաբելոնէ. և ոչ 'ի հարստանալ տրովք, և քրտամբք վաստակոց նոցա։

Լ. պաքէն 'ի կարգս մեծամեծ աքանչելեաց արժան էր գրել զայսպիսի հայրական խնամոզութիւն 'ի յոստիկան ոք՝ մնաւանդ յերկրի ստացեալ զինուք. ուր սովորաբար երևի թէ հրամանատարքն տակաւին հային 'ի ժողովուրդն իբր 'ի թշնամի։ Վասն այնորիկ զկողոպտելն զնոսա ոչ այնչափ իբր բռնութիւն անիրաւ յափշտակութիւն համարին, քան թէ նեղողութիւն 'ի թշնամական աւարառութիւն։ Լ. ն պաշտօնք ինչ և իշխանութիւք՝ համարեալք որպէս վարձ. ոչ զի փառաւոր են, այլ զի շահաբեր են. և ոգին շահասիրութիւն միշտ ունելով զայն իբր թոշակ վաստակոց բնասպէս և իրաւամբ կապակցեալ ընդ իշխանութիւնն, տարածէ զձեռն բռնական անդր և ս քան զարժանն. որպէս թէ այն միայն էր Ճշմարիտ վարձ 'ի թագաւորէ իւրմէ վասն իւրոց անցեալ վաստակոց։ Լ. ս այսպէս քաջզում անգամ հրովարտակ ինչ իշխանութիւն տուեալ ումեք, լինի այն նմա իբրև օրինաւոր ազատութիւն կարող լինել առնուլ զօտարինն առանց գողութիւն, և յափշտակել առանց մեղայ անիրաւութիւն։ Հեռի էր այս անարդ ոգի զօշաքաղութիւն 'ի գոդոզլիայէ. զի նա ոչ տիրական, այլ հայրական աչք հայէր 'ի ժողովուրդն յայնչափ պատերազմից հարուածեալ և թշուառացեալ. և իբրև հայր գորովագութիւն աղէկիզեալ ընդ տառապանս որդւոց՝ գուն գործէր, որչափ ինչ կարող էր միխիթարել զնոսա, և օգնել նոցա յամենայնի. և անդրէն յոտին կացուցանել զնոսա։

Յամենայն շրջակայ երկիրս այլազգեաց մովաբացւոց, ամմնացւոց, եդոմմայեցւոց, և յայլ տե-

ղես որ շուրջ զՀրէաստանաւ՝ լի էին Եբրայեցիք, որք յառաջ քան զպատերազմ և 'ի Ժամանակս պատերազմին փախուցեալ աստ և անդ ցրուեալ էին գտանել անձանց պատսպարութիւն։ Որքա իբրև լուան զմարդասիրուն և զքաղցր մատակարարուն երկրին, ամենեքեան՝ աղնուականք և ռամիկք, զօրավարք, և սոսկական զինուորք յիւրաքանչիւր տեղեաց եկին յերկիրն յուդայ առ գոդողիա։ Յորմ նա քաղցրութիւն ընկալաւ զամենեսին, երդմամբ չափ վստահացուցեալ զնոսա ոչինչ չար կրել այնուհետև 'ի քաղդէացւոց. և ասաց երթալ ունել իւրաքանչիւր զաղարակ իւր և զկալուածս. միայն հաւատարիմ լինին արքային բաբէլացւոց, և զգուշացին չյուզել նոր խռովութիւս ինչ։ Յորմ ինչ կային յայսպիսի մեծի խաղաղութիւն, մինչև չիմանալ թէ տերութիւն իւրեանց փոխեալ իցէ, այլ մանաւանդ տեսանել զանձինս առաւել անդորրացեալ, ահա նենգաւոր դաւաճան ոմն թշնամի հայրենեաց և ազգին, և իւրոյ իսկ անձին, գարձեալ նոր հրդեհ խռովութիւն բորբոքեաց։ Որ էր իսմայէլ որդի նաթանայ մի 'ի սպարապետաց զօրուն սեղեկիայ, որ 'ի Ժամանակս պատերազմին ապստամբեալ 'ի նմանէ՝ հանդերձ քաղմօք 'ի զինուորաց որ ընդ ձեռամբ նորա, գնաց անկաւ առ ամմնայիս. և այժմ 'ի դառնալ նորա իւրովքն հանդերձ՝ ոչինչ ընդդիմատ յայլոց ընկալեալ էր 'ի գոդողիայ քաղցրութիւն, և արձակեալ աղատ՝ երթալ 'ի տեղի իւր, և վայելել յամենայն հայրենի ստացուածս իւր։ Իսկ անօրէն նենգաւորն 'ի հրապոյրս չարի 'ի կիր արկեալ զաղատութիւն իւր, փոխանակ հանդարտելոյ 'ի տեղի իւր՝ եկ 'ի զինն երկրին. և տեսեալ զի զօրք քաղդէացւոց թողեալք անդ 'ի պահպանութիւն՝ կարի սակաւք էին, բանս եդ ընդ բայաելի թագաւորին ամմնայեցոյ սպանանել զգոդողիա. և զամենայն մնացորդս ազգին իւրոյ որք թողան անդ յերկրի իւրեանց՝ վարել 'ի գերութիւն առ ամմնայիս. ակն ունելով թերևս մեծութիւն իմիք հասանել նովաւ 'ի թագաւորէն։

Լ.յամ անօրէն խորհրդոյ իրազէկ եղև յոմանս որդի կարէի, և այլք ոմանք 'ի հաւատարիմ զօրապետաց երբայեցւոց, աճապարեցին եկին անձամբ 'ի մասեփա առ գողողիա, և պատմեցին զգարսանն զոր գործէ նմա իսմայէլ միաբանութիւն ընդ թագաւորին որդւոց ամենայ. և զգուշացուցին զնա յիսմայէլէ։ Լ.յլ գողողիա արդարամիտ և աննենգ՝ ոչ հաւատաց նոցա. վկայ ունելով անմեղութիւն անձին զնիղձ մնաց իւրոց, եթէ ոչ ումեք արար չար և ոչ պատճառս ինչ թշնամութիւն էտ ումեք՝ եւս առաւել իսմայէլի։ Լ.ւ ոչ իսկ կարէր հաւատալ թէ նա ազգաւ երբայեցի՝ յայդ եղեռն ձեռնարկիցէ, մինչև մատնել զազգ իւր 'ի գերութիւն օտար թագաւորի, որ 'ի սկզբանէ և միշտ թշնամի էր երբայական ազգին. այն զի ինքն գոլով ազնուական՝ կարող էր պատուով բնակել 'ի մէջ ժողովրդեան իւրոյ, և չունէր պատճառս ինչ իբրև յուսահատ՝ յայդպիսի իրս մտաբերել։ Սակայն յոմանս որ հաւաստեաւ տեղեկացեալ գիտէր զդարանս իսմայէլի, և նախատես էր չարեացն որք հանդերձեալ էին գալ 'ի վերայ ժողովրդեան ազգին իւրոյ, եթէ անօրէն խորհուրդ իսմայէլի 'ի գլուխ ելանիցէ, ոչ հանգարտեցաւ 'ի բան նորա. այլ խնդրեաց 'ի գողողիայէ թոյլ տալ նմա, զի էս ասէ երթայց սպանից զիսմայէլ 'ի ծածուկ, և մի ոք գիտասցէ. այլ գողողիա ոչ ետ նմա հրաման առնել զայն, ոչ հաւատալով բանից նորա. զի սուտ խօսեցար դու ասէ՝ զիսմայէլէ։

Լ.պաքէն գովելի էր գողողիա յայնմ մասին, զի առանց օրինաւոր քննութիւն չէ օրէն 'ի մահ դատապարտել զմարդ. չէ բաւական լոկ ամբաստանութիւն՝ առ 'ի դատել զոք առժամայն յանցաւոր. զի երեսք զրպարտութիւն երբեմն այնպիսի ձարտարութիւն են գունագեղեալ, մինչև ամենայն իրօք զգոյն և զպատկեր դիմաց ճշմարտութեան երևեցուցանել։ Լինել գիւրապատրաստ 'ի հաւատալ՝ ոչ երբեք գովութիւն է իշխանին։ Սակայն վրէպ ելցաւ գողողիա՝ երբ ընտրեաց այնպէս բացէ 'ի

բաց մերժել զամբասանութիւն, մինչև ամենևին անփոյթ լինել լաւ և ս տեղեկանալ. և առաւել զբիպեցաւ, զի չարաբար զգուշութիւն անձին յետ լսելոյ թէ դարան զործի կենաց նորա։ Լինն իսմայէլ 'ի մտսեփա յամենանն եօթներորդի, (որ ԸՀ հաշուին կաղենոսի՝ համեմատի ասլրիլ ամսոյ հուվմայելցոց,) երեք ամսովք զկնի կործանելոյ երուսաղէմի, և տաճարի նոն։ Լինն նա և տասնեքինն արք նորա ընդ նմա. և բաղումք 'ի թագաւորական տոհմէ։ Սակ գոդոզիա, որ ըստ ուսուցանելոյ խոհեմութիւն՝ պարտ էր գոնէ կասկած ինչ առնուլ ընդ այն գալուստ իսմայէլի հանդերձ այնչափ արամբք, տակաւին ըստ իւրումն անկեղծ և անխարդախ մտաց կշռելով և զիսմայէլ, ոչ միայն կասկած ինչ չունէր զնմանէ, այլև այնչափ վստահացեալ էր 'ի հաւատարմութիւն նորա, զի հրաւիրեաց զնա և զարս նորա՝ ճաշել 'ի միասին ընդ նմա. և ոչ գոնէ յայնժամ փոյթ կալաւ զգուշանալ անձին՝ կարգելով յիւրոց անտի պահապանս զիւրև։ Լու ահա այն ինչ երևեին զուարթացեալ, յանկարծ յարեաւ անօրէնն իսմայէլ հանդերձ տասնեքումբք արամբք իւրովք, և եհար զգոգոզիա անդրէն 'ի սեղանի իւրում և խողխողեաց զնա։ Լու այսպէս տարապայման բարեմտութիւն նորա, որ ոչ թողոյր նմա խորհել չար զումբէ, չարաչար կորոյս զնա. որով և եթող ուսումն կարևոր ամենեցուն, բայց առաւել իշխանաց, թէ արդարև չէ պարտ առ ժամայն հաւատալ ամենայնի. բայց և ոչ անփոյթ առնել զհետ պնդիլ առ 'ի տեղեկանալ զիրսն ճշմարտութիւն։

Յետ այնր անօրէն դաւաճանութեան 'ի դուրս յարձակեալ իսմայէլի նուիրն գաղտնական կատարութիւն՝ եհար կատորեաց զքաղդէացիս և զերբայեցիս, որք 'ի քաղաքի անդ կարօղ էին զդիմ ունել նորա. և զայն՝ այնչափ արագութիւն արար, զի չեղև նոցա փոքր ինչ պարապ գտանել 'ի միասին գալ առ 'ի պաշտպանութիւն անձանց։ Լոյս գործ թաքուն մնաց զայն օր ողջոյն, նաև 'ի յաջորդ

աւուր արտաքոյ քաղաքին, որ էր ինչ դժուարին. քանզի յայսպիսի ժամանակս փակին դրունք և չտան ումեք թողել ելանել կամ մտանել։ Այլ թէ որչափ էր թիւ ապստամբաց, չունիմք 'ի գրոյն. բայց որովհետև եկին ընդ խմայէլի բաց յիւրոց ծառայից և բազումք 'ի թագաւորական զարմէ, չէն ինչ զարմանք ունել նոցա իւրաքանչիւր ծառայս, զի կարացին տիրել քաղաքին, և պահել զդրունս։ Այ վաղիւ անդր ետես խմայել խուսափ մի արանց ուղթանից զի գային 'ի սիւբէմայ, 'ի սաղեմայ, և 'ի սամարիայ՝ գերծեալ զմօրուս, և պատառեալ զհանդերձս՝ կոծելով ընդ կործանումն տաճարի տան և երուսաղէմի, և մանանա և կնդրուկ 'ի ձեռս նոցա մատուցանել տան 'ի մասեփա, ուր լուան եթէ ժողովեալ են երբայեցիք, և կանգնեալ սեղան տան։ Յայնժամ ինքն ևս կերդեալ զանձն ցաւագին՝ սուտ ողբումն ցուցանելով յերեսս, եկ ընդառաջ նոցա, և կոչեաց զնոսա մուծանել 'ի քաղաքն առ գոդողիա՝ զի միթերեսցին 'ի նմանէ։ Այրեալ հասին 'ի մէջ քաղաքին առ մեծի ջրհորով, (զոր լատինն լիՀ ընթերանու, որ ըստ մեկնչաց՝ էր խրամ խորայատակ,) զոր փորեաց ասա արքայ յուդայ 'ի ժամանակս պատերազմին բաասայ արքայի իսրայէլի՝ ընդ նմա, անդ կոտորեաց զնոսա, և 'ի ջրհոր անդր ամայ զմարմինս նոցա, ուր ընկեցան և դիակունք սպանելոց 'ի քաղաքի անդ 'ի նախընթաց աւուր. տան ևեթ արք յուղթանից անտի ապրեցուցին զանձինս խոստանալով նմա գանձ, ցորեան, և գարի, մեղր, և իւղ, զոր ունէին թաքուցեալ 'ի գեօղս իւրեանց։

Յետ զայս ամենայն ալեբերական ոՀիրս գործելոյ, կապեաց զամենայն զայր և զկին որք էին մնացեալ 'ի քաղաքի անդ. և կարաւան կազմեալ եՀան զնոսա 'ի Հանապարհ յերկիր որդւոցն ամմնայ 'ի գերութիւն. ոչ ակնածեաց գոնէ գստերաց սեղեկիայ արքայի, յորս խնայեալ էր նա ինքն իսկ նաբուքոդոնոսոր, յանձն արարեալ զնոսա իւրում ոստիկանի գոդոզիայ ակնածել 'ի վերայ նոցա.

այլ գնոսա ևս արկ 'ի կապանս ընդ այլոց սինլիքո-
բաց ժողովրդեան վարել 'ի գերութիւն։ Բայց ոչ
կարաց անօրէնն 'ի գլուխ հանել զնորհուրդ չա-
րութիւն իւրոյ. քանզի երբև լուաւ յոմնան որդի կա-
րէի, և այլ զօրավարքն երբայեցւոց զչարիսն զոր
գործեաց իսմայէլ, վաղվաղակի ժողովեալ զամե-
նայն զօրականն իւրեանց՝ պնդեցան զհետ նորա,
և հասեալ նմա մերձ 'ի գաբաւոն, եռուն պատե-
բազմ ընդ նմա 'ի վերայ ջուրցն գաբաւոնի. և նա
ուրթ արամբք և եթ փախստեամբ ապրեցուցեալ
զանձն՝ գնաց անկաւ առ որդիսն ամմոնայ. և ժո-
ղովուրդն ամենայն զոր վարէր 'ի գերութիւն, բա-
զում ուրախութիւն եկին առ յոմնան. այլ ուրա-
խութիւն նոցա կարի համառօտ եղև։

Բանզի յոմնան և ընկերք նորա՝ որք թափե-
ցին զժողովուրդն 'ի ձեռաց իսմայէլի, երկիւղ
մեծ ունէին 'ի սիրտս իւրեանց, թէ նաբուքոդոնո-
սոր զօրու ծանու հասանիցէ 'ի մասեփտ, և 'ի
սուր և 'ի հուր կորուսանիցէ զքաղաքն ողջոյն 'ի
վրէժխնդրութիւն անիրաւ սպանութեան ոսոփկանին
առ յիւրմէ կացուցելոյ։ Յանցաւորքն սպանութիւն
կէս մի կորեան յայսմ՝ վերջին պատերազմի. և կէս
մի փախստական անկան 'ի սահմանս այլոց տերու-
թեաց. ուստի և երկնչէին, թէ պատուհասն արա-
ժանի յանցաւորաց՝ անկանիցի 'ի վերայ անմեղաց։
Մի միայն դարման այսմ չարի համարեցան զայս,
թողուլ լքանել լինքնակամ զհայրենի երկիր իւր-
եանց, և փութալ յառաջ քան զժամանել քինա-
խնդիր զօրուն քաղդէացւոց՝ անցանել յերկիրն
եգիպտացւոց ընդ պաշտպանութիւն թագաւորի նո-
ցա։ Երկիւղն նոցա ունէր տեղի. քանզի բազում
անգամ պատահէ յանդգնութիւն կամ անխոհեմու-
թիւն միոյն՝ առթել կործանումն ողջոյն հասարա-
կութիւն. և մինչ յանցաւորն ըստ ժամանակին զեր-
ծուցեալ զանձն՝ հայի 'ի հեռուստ և տեսանել
զբոցն՝ առանց զգալոյ զկիզումն, անմեղք 'ի բոց
անդր ձենձերին և սպառին։ Այլ սակայն յանչափս
երկնչելով 'ի մարդոյ՝ իսպառ մոռացան զերկիւղն

ՅՍ. և յետ միանգամ դիմելոյ առ նա՝ խոպառ 'ի բաց դարձան 'ի նմանէ։ Բ. Անգիր յոգիան որդի կա-
րէի, և այլ զօրավարք զօրաց, և ամենայն ժողո-
վուրդն ընդ նոսա 'ի փոքուէ մինչև ցմեծամեծս՝
մատեան առ Երեմիա, և աղաչեցին զնա ազօթս
առնել վասն նոցա առ Ած, և հարցանել 'ի նոսա՝
թէ զինչ արասցէն, և ընդ որ Աստուածարհ գնաս-
ցեն. խոստանալով երդմամբ, թէ զինչ և ասիցէ
Ամ 'ի ձեռն մարգարէին, զայն արասցեն. * Զայ-
նի նոսա՝ Ամ՝ մերում առ որ առաքեմք զքեզ՝ լուիցուք,
(ասէն) զի բարի եղիցի մեզ։

Պատասխանեաց մարգարէն զաղաչանս նոցա. և յետ
տասն աւուրց եւ նոցա պատասխանի յանուն Ամ,
թէ մի բնաւ երանիցեն յերկրին յուդայ, այլ ամե-
նեքին նստիցին անդ. և ինքն Ամ խնամ ունիցի 'ի
վերայ նոցա, և պաշտպանեսցէ նոցա, և չար և ոչ
մի հասանիցէ նոցա յարքայէն բաբելացւոց 'ի պատ-
ճառս մահուն գողոզիայ. բայց յեգիպտոս մի իջա-
նիցեն մի ամենևին, ապա թէ ոչ՝ 'ի բաց լքանէ
զնոսա 'ի խնամից իւրոց. և անդ կոծիցեն սրով,
սովով և մահուամբ՝ յորոց կասկածինն։ Սակայն
նոքա յառաջ քան զառնուլ պատասխանի 'ի մարգա-
րէէն՝ հաստատեալ էին 'ի միտս իւրեանց անցանել
յեգիպտոս. այլ կամեցեալ ցուցանել 'ի վերին
երեսս պատկառանս ինն առ Ած, ասէին. ոչ կա-
րեմք հաւատալ թէ Ած իցէ խօսեցեալ ընդ մար-
գարէին. յաւելին զբպարտեալ և ս, որպէս թէ 'ի
բարուրայ իցէ խրատեալ երեմիա այնպէս պատաս-
խանի տալ նոցա. * Այուտ խօսիս դու՝ ասէն, ոչ ա-
ռաքեաց զքեզ Ամ առ մեզ ասել, թէ մի մտա-
նէք յեգիպտոս բնակել անդ. այլ բարուք որդի ներ-
եայ զրգռէ զքեզ ընդ մեզ. զի տացես զմեզ 'ի
ձեռս քաղդէացւոց կոտորել։ Բ. Արուք եր հաւա-
տարիմ և մտերիմ ընկեր երեմիայի և գրիչ նորա,
և ամենայն գազանեաց նորա խորհրդակից, և կա-
խեալ յամենայնի զխորհրդոց երեմիայի, և հաւա-
տարիմ գործադիր հրամանաց նորա. մինչ զի և 'ի
գերել քաղդէացւոց զժողովուրդն յուդայ՝ բարուք

'ի հնորհս Երեմիայի Թագաւ յաղաղութիւն։ Լ.ուրդ սմա ընծայէին զարդելու։ն իւրեանց անցանել յեգիպտոս։ «ոչ իբր թէ Ճշմարտութիւն այնպէս հաւատային, այլ զի ինքեանք անդարձ կամաք 'ի նոյն պընդեալ յամառեալ կային, զայն առին պատրուակ իւրեանց անլսողութեան։

Լ.ու այնպէս զօրավարքն և զօրք, աշնուականք և ռամիկք, արք և կանայք առ հասարակ որք մնացեալ էին 'ի նաբուզարդանայ, և որք յետոյ ժողովեցան անդր, և նոքին իսկ դստերքն սեղեկիայ արքային գնացին յեգիպտոս։ առեալ ընդ ինքեանս և զերեմիա։ զի և ինքն իսկ ոչ հանդուրժեաց Թագուլ զժողովուրդ իւր ամենևին անտերունչ և զուրկ յամենայն օգնականութենէ՝ յանձն առեալ կրել անդ ընդ նոսա զամենայն սպառնացեալ թշուառութիւնս։ ապա թէ ոչ՝ կարօղ էր անցանել 'ի բաբելոն, և զմնացորդ կենաց իւրոց անդ անցուցանել խաղաղութիւն և պատուով ի հովանաւորութիւն նաբուքոդոնոսորայ արքայի։

Իբրև հասին 'ի տափնաս, առ երեմիա ըստ հրամանին ՅՀ՝ որ խօսեցաւ անդ ընդ նոսա, քարինս մեծամեծս, և առաջի աչաց ժողովրդեան իւրոց Թաղեաց զնոսա 'ի գեմանափոր ծածուկ խոռոչ մի, որ էր 'ի մուտս ապարանիցն փարաւոնի։ և մարգարէացաւ և ասաց լու'իլու նոցա, Թէ 'ի վերայ քարանցս այսոցիկ՝ առաջի այդր դրան՝ արկցէ նաբուքոդոնոսոր զաթոռ իւր։ և հարցէ զերկիր եգիպտացւոց, զոր 'ի մահ՝ 'ի մահ, և զոր 'ի գերութիւն՝ 'ի գերութիւն, և զոր 'ի սուր՝ 'ի սուր։ Կրկնեաց ապա վերստին և երեքկնեաց զմարգարէական սպառնալիս իւր առ 'ի ահ արկանել ժողովրդեան իւրում և հեռացուցանել 'ի պաշտելոյ զաստուածս եգիպտացւոց։ յիշեցուցանելով նոցա զամենայն զոր ինչ արար ՅԱԾ երուսաղէմի, և ամենայն քաղաքացն Յրէաստանի վասն մեղաց կռապաշտութեան հարց նոցա։ Լ.ՅԼ ամենայն քարոզութիւնք և վաստակք մարգարէին վասն նոցա զուր տարապարտուց եղեն։ զի ոչ ինչ ազդեցին 'ի սալացեալ սիրտս նոցա։ Երէմ. գլ. Խ. Զ՚նալ՝ 'է Խ։

Ղունիմք 'ի նոր գրոց՝ թէ զիարդ կնքեաց երեմիա զբաղմանիշտ կեանս իւր. բայց ունիմք 'ի հաստատուն աւանդութիւն թէ ժողովուրդն իւր ոչ կարելով տանել յանդիմանութեց զոր յանդիմանէր զնոսա յաղագս կռապաշտութեան, քարկոծ արարին զնա անդ յեգիպտոս։ Եւ այնպէս զՀանապազորդ նահատակութիւն իւր՝ կարմրափայլ պսակաւ մարտիրոսութեան պսակեաց։

ԳԼ. ԻԷ.

Տիւրոս, և ապա եպիսկոպոս Նոտաձի 'ի Նաբուսոդոնոսորայ։
Ինդիանել մարգարէ։

Տուեալ Նաբուքոդոնոսորայ առ ժամանակ մի դուլ և դադար զօրուն իւրոյ, ձեռն էարկ ապա յայլ ինն ծանր դժուարին և բազմնչխատ պատերազմ ընդդէմ տիւրոսի։ Տիւրոս էր քաղաք հռչակաւոր ամրակառոյց 'ի վերայ քարաժայռ լերին 'ի կղզի մի՝ անձուկ նեղուցաւ անջատեալ 'ի ցամաքէ. բազմահարուստ և մեծագանձ, զի էր վաճառատեղի ամենատեսակ աղեամանղիից վաճառաց, և նաւահանգիստ տուրեւառիկ շահավաճառութեան ամենայն ազգաց։ Ամուէր անառիկ 'ի ծովէ. քանզի էր մարթ նաւուց մերձենալ 'ի նա. նոյնգունակ և 'ի ցամաքէ անմատնելի, գոլով պատսպարեալ ամենի ալեօք իւրոյ նեղուցին։ Ամէ ո՛էր յայնժամ թագաւոր նորա, և զինչ անուն նորա, չունիմք 'ի նոր գրոց. բայց զայս ունիմք՝ զի էր այր 'ի վերջին ծագ բարձրամտուն ամբարձեալ 'ի սրտի իւրում։ Ընդստին 'ի մանկութէ սահմանեցաւ 'ի հօրէ իւրմէ թագաւոր. և պատրաստեցաւ նմա պսակ ոսկի գեղահրաշ ազգի ազգի գոհար ակամբք պատուականօք ընդելուզեալ և յերիւրեալ 'ի տղայութէ

կրեալ զայն 'ի գլուխն։ Խանձարուրք նորա և օրոր
ոչանազարդ. մինչ նաև յատակ տանն՝ ուր
հանդերձեալ էր կոխել զառաջինն յարձակիլ ոտից
նորա 'ի քայլս՝ համակ ականակուռ 'ի գոնձամ,
մեղեսիկ, ոսկեքար, բիւրեղ, եղեգնաքար և յայլ
ականց։ Լկեաց ընդ երկար 'ի վայելս ամենապա-
տիկ երջանկութեան. տուն բնակուն նորա լի փափ-
կութիւնք և հեշտալեօք, որ թուէր դրախտ երկրա-
ւոր. և օտարք դիմէին ընդ նորայն հովանաւորու-
թիւն, որպէս թէ էր քերովբէ դրախտին։ Լաջ-
առողջ էր մարմնով, զեղեցկադիտակ և բարե-
համբոյր հասակաւ, և տեսլեամբ. և մտօք հանճա-
րեղ, և ամենայն մասամբք շքեղ և պատնալի այն-
չափ՝ զի թուէր թէ սոքիմքք բնաձիր զեղոյք կա-
մեցեալ ելցէ ուր զկնիք իւրոյ ուծային նմանութեան
տպագուցանել 'ի նմա, որչափ ինչ հնար էր տանիլ
մարդոյ հողեղինի (յօրինակ արուսեկի առաջին
հրեշտակի՝ կոչծանելոյ յերկնից)։

Լայլ նա այսմ ամենայնի ապաշնորհ գտաւ. զի
փոխանակ՝ ըստ առաւելութեան բարուոյ զոր արար
նմա ուր, առաւել ձանձրանալոյ զնա, սիրելոյ, և
ծառայելոյ նմա, զամենայն ձիրս բնութեան արար
իւր պատճառս ամբարտաւանութեան։ Լրհամարհէր
զամենայն մարդ՝ դեր'իվերոյ զանձն ունելով. և
յորժամ լսէր խօսել վասն մեծի իմաստութեան դա-
նիելի որ էր ծանուցեալ այր իմաստուն քան զամե-
նայն իմաստունս բաբելոնի, ունչս առնէր զնովաւ,
իբր առ իւրև հաղիւ յաշակերտաց սակի լինել. և
միանգամայն ասէ՝ ինքնահաւան բարձրամտութեամբ
նորա յայն եհաս, մինչև հաւասարել զանձն ոյ.
աստուած եմ ասէր. յաթոռ ոյ նստայ 'ի սիրտ ծո-
վու. զլեառն յոյր վերոյ կայր տիւրոս քաղաք իւր,
առդնելով որպէս պատուանդան իւրոյ ուծապետա-
կան աթոռոյ. * զբնակութիւն ոյ բնակեցի ‖ ասէր.
կամ ըստ լատ. * յաթոռ ոյ նստայ 'ի սիրտ ծովու ‖,
որպէս աստուած ծովու։ Լայց 'ի նմին իսկ ժամու՝
յորում ուծակերպ օրինակ բարձրանայր 'ի սրտի
իւրում, սկսաւ 'ի խորս անդնդոց սուզանիլ (որպէս

զբեալսար)։ զի առ 'ի խորտակել ՝ն զվարս ամ-
բարտաւանութիւն նորա՝ եհան 'ի վերայ նորա զզօրս
քաղդէացւոց։ Ա՝արդ արիութիւնք եղեկիելի՝ որք
մանրապատում գուշակին զկործանումն նորայն մե-
ծագանձ արքայանիստ տիւրոսի, և զընթերակայ սի-
դոն քաղաքի, խրախուսեցին զնաբուքոդոնոսոր
յայն գժուարակռիւ մարտ ձեռնարկել։ Ա՝ղաղքք
և աւանք որք 'ի ցամաքի էին՝ ոչ ընդերկար յամե-
ցուցին զզէնս քաղդէացւոց, զի թեթև աշխատու-
թիւն նուաճեցան։ այլ պաշարումն տիւրոսի երկար
եղև՝ բազմաչխատ և տարժանելի։ Ն՝աբուքոդոնոս-
որ չուներ նաւատորմիղ 'ի ծովու։ զի հրութիւն
նորա ոչ էր ծովագերեալ, այլ պարփակեալ 'ի ցամա-
քի։ և չէր իսկ յայնմ մարտի միաբանեալ ընդ ու-
մեք 'ի ծովագերեալ հրութեան, որոց էին գուսմար-
տակք նաւուց 'ի միջերկրական ծովու։ Ն՝ոքին իբրև
հարկեցաւ զկղզին տիւրոսի փոխել 'ի ցամաքակըղ-
զի, զի հեծեալք իւր և կառք և հեռաւակազօրք
կարիցեն ընդ ցամաք մնանել 'ի նա։ Ն՝ստ հատա-
նել անտառս, և ընուլ անհամար քուրձս աւազով,
և կապեալ 'ի միասին զծառս և զաւազալից քուրձս՝
յաւելեալ և մեծամեծ հատորս քարանց, ետ ար-
կանել զայն ամենայն 'ի նեղուց անդր, որ էր անջըր-
պետ ընդ կղզին և ընդ ցամաքն։ Ն՝ս ոչ ոք կամէր
կործանել զտիւրոս սովին Ճանապարհաւ, սանձէր
զբռնութիւն հողմոց և ալեաց ծովու, զի մի ցրուեսս-
ցեն զգործ նոցա, և մի 'ի դերև հանցեն զվաստակ
նոցա։ և այնպէս առ սակաւ սակաւ յառաջ տար-
եալ զայն գործ գժնդակ, հարթայատակ Ճանա-
պարհ կազմեցին 'ի նեղուց անդր։ Ա՝յլ անհնա-
րինս տաժանեցան յերկար և յանբերելի աշխատուն
'ի բառնալ և 'ի կուտել նիւթ բաւական առ այն
գործ։ մինչև զի հերք գլխոց զօրուն թօթափեցան,
և մրթք ուսոց նոցա իբր դերծեալ մնացեան։ որ-
պէս ցուցանէ գիրն՝ յասել ՝ն՝ այ ցմարգարէն։ * Ա՝ր-
դի մարդդ։ նաբուքոդոնոսոր արքայ բաբելացւոց
աշխատեցոյց զզօրս իւր աշխատութեամբ մեծաւ
'ի վերայ տիւրոսի։ ամենայն ՝գլուխք կնդա-

ցեալք, և ամենայն ուսք գերծեալք ॥· Էբ· 18։

Բայց չեղեն ընդ վայր այնչափ երկար և դժընդակ աշխատուիք նոցա. քանզի տիւրոս ՝ի լեսմեաց կղզի. զի ծովն անջրպետ նորա՝ դարձաւ ՝ի ցամաք երկիր. և ընդ այն մտին քաղդէացիք անհամար բազմութիւն կառաք և երիվարաք և գունդագունդ հեծելովք. և սկիզբն արարին պաշարման, փոս փորեցին և պատնէշ կանգնեցին գնուսաւ. զոր յայտնի նշանակէ եղեկիել՝ յասելն. * Բայց էս ասէ ադոնայի Տէր. ահաւադիկ ես ածից ՝ի վերայ քո տիւրոս՝ գնաբուքդոնոսոր արքայ բաբելացւոց ՝ի հիւսիսոյ, որ է արքայ արքայից, կառաք և երիվարաք, և գունդագունդ հեծելովք ազգայ բազմայոյժ ... և շուրջ զքեզ պակ դիցէ, և փոս փորեսցէ. և պատնէշ կանգնեսցէ ... Բայց ՝ի բազմութիւն հեծելոց նորա ծածկեսցէ զքեզ փոշի նոցա. և ՝ի ձայնէ հեծելոց՝ և յանուագ կառաց նոցա շարժեսցին պարիսպք քո՝ ՝ի մտանելն նորա ՝ի դրունս քո, որպէս որ մտանիցէ ՝ի դաշտէ ՝ի քաղաք. սմբակաք երիվարաց իւրեանց կոխեսցեն զհրապարակս քո ॥· Եզ· 5· 8· 10։ Բ.զքայն տիւրոսի տեսեալ զնեզուց ծովուն արահետ ճանապարհ, և զզօրս քաղդէացւոց առ պարսպաքն իւրումն արքայանիստ աթոռոյ, զոր անմատոյց համարէր՝ ունելով զիւրև ՝ի պաշտպանուն զամենի ալիս ծովու, զարհուրեցաւ յանձն իւր. սակայն և այնպէս չեղև յուսակտուր, այլ փութացաւ ամենայն զօրութիւն ՝ի պաշտպանութիւն քաղաքին. դատարկեաց գնուսաւ, որք էին ՝ի նաւահանգստի անդ. և զամենայն նաւավարս և գնուսպետս, ընդ որս և զխստնիճաղանճ ժողովուրդ իւր կարգեաց ՝ի վերայ պարսպաց և աշտարակաց նետաձիգ լինել ՝ի թշնամիս, և պահել զքաղաքն. որպէս նշանակէ դիրն. * Բ.ս իջցեն ՝ի նաւաց իւրեանց ամենայն նաւավարքք քո և նաւամուտք քո առաջապահք նաւաց յափն ծովու (կամ ըստ լատ. յերկրի կացցեն)॥· Էբ· 29։

Բայց քաղդէացիք յամենայն կողմանց սաստկութիւն պատեալ պաշարեալ զքաղաքն, և վահանաք

պաշտպանեալ զգլուխս իւրեանց 'ի նեռից և 'ի քա-
ղանց, մանգլենօք և խոյովք խրամատեցին զպա-
րիսպս, եւ ելին 'ի վերայ պարսպաց, և յամենայն կող-
մանց միանգամայն յարձակեալ գազանաբար՝ առին
զքաղաքն, և զամենայն ընչաւոր 'ի սայր սուսերի
կոտորեցին. և զամենայն ինչս նոցա աւար հարին.
զթագաւորն կենդանւոյն ձերբակալ արարին և չա-
թատանք սպանին։ Եւ յետ սպառասպուռ կողոպտե-
լոյ յամենայն զանձուց և 'ի հարստութենէ զաշխա-
րեալի քաղաքն, հուր հարին զնովաւ և այրեցին
զնա. և զպարիսպս և զաշտարակս նորա և զտուներս
և զայլ ամենայն շինուածս որ 'ի հրոյ ոչ ծախեցան,
քանդեալ կործանեցին. և զաւերակս նոցա բովանդակ
'ի ծով ընկեցին, մինչև մնալ անդ և հետոց
քաղաքի։ Եւ այնպէս լեառն այն. որ փոքր մի յա-
ւաղ հոյակապ մեծակառոյց շինուածովք, անբաւ
զանձուց հարստութիւն, և յոգնաժողով բնակչաց
յամենայն լեզուաց և յամենայն ազգաց երևէր բո-
վանդակումն ինն ամենայն աշխարհի, մնաց լոկ
ծայր մերկ յամենայնէ, ուր ձկնորք սփռէին զուռ-
կանս իւրեանց 'ի ցամաքեցուցանել յարևու. զայս
և նշանակ եղեկիել. * Եւ աւար առցէ (նաբու-
քոդոնոսոր) զզօրութիւնս քո. և կողոպտեսցէ զինչս
քո. և կործանեսցէ զպարիսպս քո և զցանկալի
ապարանս քո տապալեսցէ. և զքարինս և զփայտս
և զհողն 'ի ծովն ամսսցէ. և քակտեսցէ զբազմու-
թիւն արուեստականացս քոց ... Եւ արարից զքեզ
յապառաժ. և եղիցին 'ի ձգանս ուռկանաց։ Եզ.
12. 13. 14։ Զ.այս եղև կատարած հուշակաւոր
բազմագանձ քաղաքին տիւրոսի. զոր 'ի գլուխս
մարգարէութեանց եզեկիելի. Եզ. Է Ը. Ե Է. ընթեռ-
նուսմք ձևոն և առատ բանիւք։

Յետ եօթանասուն ամաց վերստին շինեցաւ
տիւրոս քաղաք. որպէս ունիմք 'ի մարգարէութիս
եսայեայ. Գլ. Է Ի. 15. ուր ասի. * Լքեալ լիցի տիւ-
րոս ամս եօթանասուն ... Եւ եղիցի յետ ամանցն
եօթանասնից այց արասցէ Տէր տիւրոսի. և մերձ ան-
գամ անդրէն 'ի նոյն յառաջին կարգն հաստատես-

ցի։ Զնոյն իմանամք և 'ի գրոց նեեմեայ. գլ. ԺԳ. 16. ուր ասի. "Եւ նստէին 'ի տեղի վաճառուցն, որք բերէին զձուկնն։ ուր լատինն ընթեռնու. "Եւ տիւրացիք բնակէին 'ի նա. որք բերէին զձուկնն։ յորմէ երևի թէ կայր յայնժամ տիւրոս քաղաք։ Այլ չուենիմք ոչ 'ի ՝՝՝ գրոց, և ոչ յարտաքին պատմութեանց՝ թէ յումմէ՞ շինեցաւ վերստին. կաղինոս համարի՝ թէ յետ դարձի խաբայելացւոց 'ի գերութէ, և մուսանդամ ծաղկելոյ և բարգաւաճելոյ հրեաստանի, վաճառականք իսրայելացւոց և այլոց ազգաց սկսեալ իցեն նաւել 'ի նաւահանգիստ անդր տիւրոսի, և 'ի դիւրութի իւրեանց շինեալ իցեն անդ տունս ինչ և շուկս բանս վաճառաց։ Այս 'ի յաճախել անդ և այլոց իբր 'ի պատեհագոյն նաւահանգիստ, և քաջագէպ վաճառատեղի աշխարհաց բազմաց օրքան զոր բազմացեալ իցեն անդ շինուածք, մինչև ձևանալ տեղւոյն քաղաք կատարեալ. բայց ոչ ևս փառաւոր և բարգաւաճ, որպէս էր յառաջագոյն. և ոչ իսկ եթէ կարասցեն. վասն զի զկնի ոչ բազում ժամանակաց վերստին քանդեցաւ յաղէքսանդրէ մակեդոնացւոյ. որպէս մարգարէացաւ Եզեկիել յասելն. "Եւ մի ևս շինեսցիս։ այսինքն հաստատուն և տևողական և ըստ առաջնին պայծառութեան։ Այլ թէ զնմանէ աղէքսանդր մակեդոնացի եգիտ զտիւրոս՝ կղզի, ըստ պատմելոյ կուրտիոսի կուրտիոսի, եթէ նաբուքոդոնոսոր արար զնա ցամաք կղզի՝ կցելով ի ցամաքի, ոչինչ տարբադէպ թուի ասել սմանց, թէ ալիք ծովու զկնի ժամանակաց քակեալ ցրուեալ իցեն զայն գործ քաղաքացւոց. որ չէ ինչ նոր և անլուր։

Այսմանեաց ՝՝՝ եզեկիելի, թէ նաբուքոդոնոսոր և զօրք նորա յայն գործ տիւրոսի բարւոք ծառայեցին իւրումն ՝՝՝ծայնին կամաց. և թէ աշխատութի նոցա և վաստակ այնչափ մեծ եղև, որում լոկ աւարն տիւրոսի ոչ է բաւական վարձ. "Նաբուքոդոնոսոր աշխատեցոյց (ասէ ՝՝՝) զզօրս իւր աշխատութիւն մեծաւ 'ի վերայ տիւրոսի ... և վարձք նմա և զօրաց նորա ոչ եղեն առ 'ի տիւրոսէ ծա-

ռայութեան՝ զոր ծառայեցին ինձ 'ի նմա. ԺԵ. 18։
Ա։ ասն այնորիկ չարժեաց ՅԾ զնաքուքդոնոսոր ան-
ցանել և յեգիպտոս. որում սակաւ աշխատութեամբ
տիրեսցէ, և առցէ զաւար նորա, և կողոպտեսցէ
զկայսուտ նորա. և նոմաւ լցցի թերին վարձուց
նորա՝ և զօրաց նորա. փոխանակ ծառայութեանն
զոր ծառայեցին նմա 'ի տիւրոս։ Ա։ ասն որոյ պատ-
գամք մարգարէութեաց եղեկիէլի այնուհետև դարձան
'ի վերայ եգիպտոսի. որպէս յառաջագոյն էին մար-
գարէացեալ և եսայի և երեմիա, և այլ մարգարէք։
Փուրշիշ ամբաստանութեանն արքային եգիպտոսի
սկզբնաբար յերկու գլուխս բովանդակի. մի՝ 'ի
հպարտութեան, որով զամենայն մեծութեան և զզօրու-
թեան հոմարեր յանձնէ իւրմէ ունել, և ոչինչ առ
յոյ. երկրորդ՝ 'ի գայթակղութեան, որով հեռացոյց
զորդիս իսրայէլի՝ 'ի յուսոյ առ ՅԾ. առնելով զն
զամենայն յոյս իւրեանց դնիցեն 'ի նա, և 'ի նորայն
հզօր կարողութեան և եթ լինիցին ապաստան. որ-
պէս և 'ի ձգել զնոսա 'ի պաշտօն դիցն եգիպտաց-
ւոց։ "Այսն իրի և ՅԾ 'ի խորտակել զեղջիւր ամ-
բարտաւանութեան նորա, և բառնալ զգայթակղութեան
յորդւոյ իսրայէլի, ասաց թէ ցամքեսցին և յա-
նապատ դարձցին գետք նորա յոս պարծէր. և
լցցին արեան ճապաղեօք քաղաքք նորա. և նեար-
դապատ և ամառապատ բաղուկք փարաւոնի խոր-
տակեսցին, և ընկեսցի սուրն 'ի ձեռանէ նորա. և
ՅԾ ցացորդք ժողովրդեան նորա 'ի սրոյ, 'ի սովէ, և
'ի մահուանէ ցրուեսցին ընդ ազգս, և հոսեսցին
ընդ գաւառս։ Այլ եղիցի եգիպտոս անապատ ան-
մարդի ընդ ամն քառասուն. և յետ ամաց քառաս-
նից բարձցի ՅՐ զՀարուածն. և դարձեալ ժողո-
վեսցին ցրուեալքն յամենայն տեղեաց և յազգաց
ուր ցրուեցան։ Այլ թագաւորութեան նորա ոչ եր-
բեք դարձցի 'ի նախկին պայծառութեան իւր. և ոչ
ևս եղիցի այնպիսի, զի որդիքն իսրայէլի խնդրեսս-
ցեն զօգնականութեան նորա, և յուսասցին 'ի զօրու-
թեան նորա առ 'ի անօրինիլ առ ՅԾս. * Այլ եղիցի
անդ (յեգիպտոս ասէ զիրն) իշխանութեան տառա-

սեաւ քան զամենայն իշխանութիւն։ Եւ Եղեկի խո-
նարհագոյն, և մի և ս բարձրասցի 'ի վերայ ազգաց...
և մի և ս Եղեկին տանն Իսրայէլի յոյս յիշատակի
անօրէնութեան՝ երթալ զհետ սրտից նոցա։ Եզ. 14.
15. 16։ Եւ մենայն զոր մարգարեացաւ Եղեկիել՝
կատարեցաւ. և ամենայն կողոպուտ եգիպտոսի անց
'ի բաբելոն՝ առ և և ս մեծանալոյ թագաւորին բա-
բելացւոց։

Եւ զեկիել մարգարէացաւ և այլ բազում ինչ. 'ի
սկզբան քարոզութեան նորա նախազուշակութիւնք նո-
րա արդարև դառն եղեն որդւոց Իսրայէլի, բայց
'ի վերջին ամն իւր մխիթարեաց զնոսա մեծապէս,
զուշակելով թէ հանդերձեալ են յառնել որպէս
զմեռեալս 'ի գերեզմանաց, ելանելով 'ի գերութիւն
և դառնալով 'ի հայրենի երկիր իւրեանց, և լինե-
լով ժողովուրդ ոն։ Օ ի տարեալ եղև հոգւոյն ոն
'ի դաշտ մի մեծ, որ լի էր ոսկերօք մարդկան. և
'ի ձայն ոն շարժեցան այն ամենայն ոսկերք ցամա-
քեալք, և մերձեցան ոսկր առ ոսկր առ իւրաքան-
չիւր յօդս, և պատեցան զնոքօք ջիլք և միս և մորթ.
և եմուտ 'ի նոսա շունչ կենդանի. և կանգնեցան
և կացին 'ի վերայ ոտից իւրեանց. և դաշտն՝ որ
էր գերեզման մեռելոց, դարձաւ և եղև ասպա-
րէզ կամ հրապարակ բազմութեան կենդանեաց.
գլ. Լ։ Դարձեալ յափշտակեցաւ Եղեկիել 'ի տես-
լեան, և ածաւ հոգւոյն յերկիրն Իսրայէլի. և
կացուցեալ 'ի վերայ լերին միոյ բարձրաբոյժ՝ տե-
սանէր, զի հրեշտակն ունելով 'ի ձեռին ձող չա-
փոյ 'ի վեց կանգնոյ և թագաւ, չափեր զշինուած
տաճարին, նշանակելով զվերսին շինութիւն նորա.
զոր և մանր ստորագրէ ըստ համեմատութեանց ամե-
նայն մասանց նորա և զարդուց. որպէս արդէն
կառուցեալ. գլ. խա. խբ։ Եւ այլ տակաւին ոչ դա-
դարեաց Եղեկիել 'ի յանդիմանելոյ և 'ի կշտամ-
բելոյ զմեղս խստասիրտ ժողովրդեան իւրոյ 'ի գե-
րութիւն անդ՝ մինչև 'ի վախճան կենաց իւրոց, ըստ
որում ասացեալ էր նմա ոն՝ եթէ դէտ կացուցի
զքեզ 'ի վերայ ժողովրդեան զգուշացուցանել զնո-

սա 'ի մեղաց։ Եւ թէպէտ չունիմք 'ի ՝Ոբ գրոց՝ թէ որով մահուամբ եւ 'ի կենաց ասի, սակայն հաստատ աւանդութեան եկեղեցւոյ ուսուցանէ, թէ 'ի յանդիմանել նորա զիրաւարարուն որդւոցն դանայ և գադայ՝ սպանաւ յառաջնորդէ ցեղին դանայ, կապեալ յագի ձիոյ. և այսպէս մարտիրոսութիւն պակեաց զաղմամիշտ կեանս իւր անդ 'ի բաբելոն. և թաղեցաւ պատուով 'ի տեղին՝ որ համանրեալ էր շիրիմ նախնեացն աբրահամու 'ի մէջ քաղդէացւոց։

ԳԼ. ԻԸ.

Յորմամ ժամանակի սկսանին եօթանասուն ամ գերութեան որդւոց Իսրայէլի 'ի Բաբելոն։

Խնդիր մեծ յուզի 'ի վերայ այսորիկ առ մեկնիչս և առ ժամանակագիրս 'Ոբ գրոց։ Պաղումք սկսանէին զամսն զայնոսիկ 'ի գերութիւն յովակիմայ աբքայի. հիմնեալք 'ի բանս արտաքին պատմագրաց. և 'ի կեղակարծ զննուիս խաւարմանց արեգական և լուսնի։ Այլք բաղումք՝ ընդ օրս և եւսեբի, զհետ երթեալ կարծեաց յովսեպոսի երբայեցւոյ՝ սկսանին 'ի գերութիւն սեդեկիայ։ Իսկ այլք՝ 'ի գերութիւն նախընթացին նորա, այսինքն յեքոնիայ։ Օ այս վերջին կարծիս ունի և կաղինոս, իբր լաւ ևս քան զայլ կարծիս հիմնեալ 'ի 'Ոբ գիրս. զոր և ցուցանէ ըստ առաջիկայ օրինակիդ։

Հաւատի է առ ամենեսին, թէ կատարած գերութիւն ժողովրդեան իսրայէլի եղև յառաջնումամ, յորում կիւրոս թագաւոր պարսից սկսաւ թագաւորել 'ի բաբելոն և արտաքոյ նորա. զի զայդ բացայայտ ընթերցումք յառաջնորդ գլուխ երկրորդ գրոցն եզրի։ Եւ թէ թագաւորեաց կիւրոս ՃԼ ամ եօթանասուն՝ նոյնպէս յայտնի երևի 'ի բաղում՝ բաջայայտ տեղեաց 'Ոբ գրոց՝ մեացորդաց, եզրի, երեմիայ, և զաքարիայ մարգարէից. յորոց զամենս 'ի կարգի յաջորդ բանիցս ունիմք 'ի մէջ

բերել։ Խնդրելին է այն, թէ երբ սկսան այն
եօթանասուն ամք. և պատճառ տարակուսութիւն
է, վասն զի չիք 'ի որ գիրս որոշ նշանակեալ՝ թէ
քանի ամս թագաւորեաց Նաբուքոդոնոսոր. և
քանի ամս յաջորդք նորա յառաջ քան զկիւրոս.
իսկ արտաքին պատմաբանք ասէ կաղենոս՝ 'ի խո-
սիլ իւրեանց յաղագս նախնի թագաւորաց՝ այնչափ
ներհակաբանք են, և մթին, և կեղակարծք, զի
չունի լուսոյ իմիք ակնունել 'ի նոցանէ, որ խնդրելոյն
զճշմարտութիւն։ Այս առաւելս տարակոյս. զի առ-
քադէացի նաբուքոդոնոսորաւ երեք գերութիւնք
եղեն։ 'Այս գերի տարաւ նա 'ի բաբելոն զյովա-
կիմ արքայ. և ընդ նմա զբազումս 'ի մեծամեծաց
և յերևելեաց հրէից. և յարձակել զյովակիմ յա-
զատութիւն, բազումք 'ի մեծամեծաց անտի մնացին
'ի բաբելոն իբր 'ի պատանդս։ Երկրորդ՝ զկնի
եօթն ամաց գերի վարեցաւ 'ի բաբելոն յեքոնիա
որդի յովակիմայ, և ընդ նմա հազարաւորք 'ի հրէից
գերեցան 'ի բաբելոն։ Այս երրորդ՝ մեռաւսան ամքք
զկնի նա ինքն նաբուքոդոնոսոր գերեաց զսեդե-
կիա. այրեաց զտաճարն, և կործանեաց զերուսա-
ղէմ. և տարաւ 'ի մնացելոց անտի յառաջին գե-
րութեց ժողովուրդ բազում յոյժ գերի 'ի բաբե-
լոն։ Արդ՝ խնդրի, թէ յորոց երից գերութեց
աստի պարտ իցէ սկսանել զեօթանասուն ամսն։
Ասել զի գտան եւս ոմանք, որք առ առաւել խստ-
նակուն խնդրոյն՝ սկսանին յերեքտասանեերորդ
ամէ թագաւորութենն յովսիայ. իբր ոչ եթէ զի
յայնժամ գերեցաւ ոք 'ի յուդայէ, այլ զի 'ի ժա-
մանակէ անտի մնրդարէք նախագուշակէին զգե-
րութի նոցա։ Այսպէս եթէ մանր զննեսցուք զոր
գիրն, գտանեմք անդ զլուծումն դժուարութեդ
առաջարկելոյ։

'Այս գտանեմք՝ թէ այն եօթանասուն ամք ոչ
սկսան 'ի գերութէ յովակիմայ արքայի. եւ առա-
ւել և ոչ յերեքտասանեերորդ ամէ յովսիայ արբ-
քայի։ Այլ պարզեն 'ի գառնալ յովակիմայ յամի չոր-
րորդի իւրոյ թագաւորութե 'ի գերութէ բաբելո-

նի յերուսաղէմ յանձնս թագաւորութիւն իւրոյ, ելեալ միա մարդաբէ պատմեաց ժողովրդեան զնծայնն յայտնութիւնն, և ասաց, թէ անդստին յերեքտասանեարորդ ամի յովսիայ արքայի խօսեցայ Հանապազ և ասացի, զոր պատուիրեաց ինձ Տէր ասել ցձեզ, զի դադարեսջիք 'ի քարկոծուցանելոյ զՏէր զործովք ձեռաց ձերոց. և դուք ոչ լուայք ձայնի Տն. Երեմ. իե. 3։ Լ.ոդ փոխանակ զի ոչ մատուցիք ունկն բանից իմոց, այսպէս ասէ Տէր. ես զնկեցից ընդդէմ ձեր զթագաւորս օտարս, և զնաբուքոդոնոսոր արքայ բաբելացւոյ. և տաց յապականութիւն զերկիրդ զայդ. և ամենայն ազգդ ծառայեսցէ արքային բաբելոնի զեօթանասուն ամ. Երեմ. իե. 8. 11. ԵՒ զէնն։ Լ.այս մարգարէութիւն եղև յամին չորրորդի յովակիմայ արքայի, և զկնի ազատութիւն նորա. և է գուշակութիւն զապագայ իրաց. ապա ոչ խօսի զայնմանէ որ էր անցեալ յամին երրորդի յովակիմայ. ևս առաւել ոչ խօսի զանցելոց քան ամք յառաջ, յերեքտասանեարորդ ամի յովսիայ։ Լ.ոդ եթէ խօսի զապագայն, ապա եօթանասուն ամքն չէին սկսեալ յառաջագոյն. և չիք գտանել թէ յառաջ քան զայս խօսեցեալ իցէ ուրեք մարգարէն զայսմանէ. բայց յետոյ դառնայ և խօսի վերբստին. գլ. ծԲ. 10։ Լ.այս եօթանասուն ամք են սպառնալիք 'ի պատիժ սակս չլսելոյ և չհաւատալոյ ինչ ժողովրդեան 'ի քարոզութեաց երեմիայի և այլոց մարգարէից մինչ ցայս յայտնութիւն, որ եղև 'ի չորրորդ ամի յովակիմայ։ Լ.ապա այս պատիժ և այս եօթանասուն ամք հարկաւ սկսանին ոչ յառաջ՝ այլ զկնի չորրորդ ամի յովակիմայ. ապա պարտին սկսանիլ կամ 'ի գերութենէ յեքոնիայ, կամ սեդեկիայ։

Իսկ թէ յորմէ՞ յերկուց աստի դերութեց սկսեալ իցեն եօթանասուն ամքն, եղև տարակոյս և զայնու ժամանակաւ առ ժողովուրդն, մանաւանդ թէ և առ մարգարէս ժամանակին. այլ նոյն իսկ տարակոյս նոցա բառնայ 'ի մէջ զերկբայութիւն. յայտնի ցուցանելով, թէ այն ամք սկսեալ են 'ի գե-

բութիւն յեբոնիայ, և ոչ 'ի վերջին դերութիւն սեդեկիայ։ Յամին երկրորդի դարեհի արքայի (զոր կաղինոս ենթադրէ լինել մար դարեհ) զաքարիա մարգարէ ուսաւ՝ թէ այն էր եօթանասներորդ ամն, զի լուաւ ասել հրեշտակին ցոր. * Մինչև ցերբ ոչ ողորմեսցիս 'ի վերայ երուսաղէմի, և քաղաքացն յուդայ, զորս անտես արարեր՝ այս եօթանասներորդ ամ ॥. գլ. Ա. 12։ Այսպա մխիթարէ ըզմարգարէն խոստմամբ մնուաւոր ազատութիւն 'ի գերութիւն։ Յառաջնում ամի նորին դարեհի՝ յառաջ քան զայլ մարգարէս՝ դանիէլ առեալ էր զայս ծանօթութիւն. * Այս դանիէլ՝ ասէ, խելամուտ եղէ 'ի գրոց թուոյ ամացն.... 'ի կատարումն աւերածոյն երուսաղէմի յամն եօթանասուն (կամ ըստ լատամբ եօթանասուն) ॥. դան. Թ. 1. 2։ Այս տեսեալ զի հանդերձեալ էին լրանալ 'ի յաջորդ ամի, սկսաւ քաջում ջերմութիւն կալ յաղօթս առ Ամ ժողովրդեան իւրոյ. ուր քաջ դիտեա, զի ոչ ասէ՝ ընթերցայ, այլ խելամուտ եղէ, այսինքն իմացայ։ Այլ գիտէր նա զհաւակեալ մարգարէութիւն եօթանասուն ամաց, բայց յայնժամ ևս եթէ յայտնեաց նմա Ամ զամն սկզբնաւորութիւն և զամն կատարման։ Այնպէս յառաջին և յերկրորդ ամի դարեհի ոչ խորհէին հրէայք՝ թէ իցէ այն ամ եօթանասներորդ, և եթէ նոքին իսկ մարգարէք յերկայսէին, մինչև էին լուսաւորեալ առ յոյ, էր յայտնի նշան՝ թէ դոյր ժամանակ իմն առաւել անագան, յորմէ համարէին թէ կարիցեն չափել զամսն. և այն էր գերութիւն սեդեկիայ։ Այլ յորժամ Ամ յայտնեաց մարգարէից և ժողովրդեան, թէ եօթանասուն ամք կատարին յառաջ քան զանկանելութիւն նոցա, ցուցանէ թէ սկսան յառաջ քան զգերութիւն սեդեկիայ՝ ոչ յերեքտասաներորդ ամի յոսիայի, և ոչ 'ի գերութիւն յոյակիմայ, որպէս ցուցաւ, ապա 'ի գերութիւն յեքոնիայ, մեռասան ամաք յառաջ քան զգերութիւն սեդեկիայ։

Մինչք ընդդէմ դնեն այսմ, ասելով նախ՝ թէ դարեհ զաքարիայի՝ է վերատասպ դարեհ, որ չունի

ինչ ընդ գերութեան։ Պատասխանի. զաքարիա մար-
գարէցաւ նախ առ մար դարեհիւ, և ապա առ
վշտասպ դարեհիւ. որպէս ասացաք ըստ կարծեաց
կաղենոսի 'ի խօսիլ մեր վասն զաքարիայ մարգա-
բէի. և նոյն նախայիշատակեալ բանն ցուցանէ,
թէ այն յայտնութիւն եղև նմա 'ի ժամանակս մար
դարեհի։ Լ՝օթանասուն ամք գերութիւնն կատարե-
ցան, յորժամ կիւրոս արձակեաց զնոսա յառաջ-
նումն ամն թագաւորելոյ իւրոյ 'ի բաբելոն։ Լ՝ապա
ամն եօթանասներորդ եղև առ մար դարեհիւ նա-
խորդիւն կիւրոսի. և ոչ առ դարեհիւ վշտաս-
պեայ. որ եղև երրորդ թագաւոր 'ի բաբելոն զկնի
կիւրոսի։ Լ՝ապա յորժամ ասաց հրեշտակն թէ՝ այս
եօթանասներորդ ամ է՝, թագաւորիւր մար դա-
բեհ. և ոչ վշտասպ դարեհ։

Լ՝ընդդէմ դնեն երկրորդ. Լ՝բեմիա ոչ ասաց՝
թէ որդիքն իսրայէլի կացցեն 'ի գերութեան ամն
եօթանասուն, այլ թէ ամենայն ազգք շուրջանա-
կի. ուստի շատ էր առ Ճշմարտութիւն մարգարէու-
թեանն, թէ ոմանք յազգաց անտի կացեալ իցեն
անդ 'ի ծառայութիւն զայն ամենայն ժամանակս։ Լ՝ա-
հաստատի. զի 'ի չորրորդ գիրս եզրի, ամք աւերա-
ծոյն երուսաղէմի գնին երեսուն, և ոչ աւելի.
յոր յաւելեալ զմեծասան ամն սեղեկիայ, լինին
քառասուն և եթ։ Հաստատի դարձեալ. Լ՝արու-
քոդոնոսոր թագաւորեաց ամն քառասուն և հինգ.
և բաղտասար յաջորդ նորա ամն երիս. յորս եթէ
յաւելցին երկու ամք մար դարեհի, լինին յիսուն.
ապա 'ի գերութիւն յեբոնիայ մինչև 'ի կիւրոս ոչ
լինին ամք եօթանասուն։ Հաստատի և ևս. Լ՝Թէ
այն գերութիւն էր երկարաձգեալ ընդ ամն եօթա-
նասուն՝ սկսեալ 'ի գերութէն յեբոնիայ, դանիէլ
մարգարէ լեալ էր դարձեալ ինանամեան 'ի ժամա-
նակս մար դարեհի. վասն որոյ և անկարօղ 'ի տա-
նել զբեռն իշխանութիւն զոր եդ 'ի վերայ նորա դա-
բեհ արքայ՝ կարդելով զնա ընդհանուր իշխան 'ի
վերայ այլոց հրամանատար իշխանաց։

Պատասխանի. հայեցեալ միայն 'ի բանն երե-

միայ՝ մարթ էր ընդունել զտուեալ մեկնութիւն. բայց բաղում վկայութիւնք ՝սը գրոց ոչ տան տեղի այդմ մեկնութեան. որք զեօթանասուն ամն գերութիւն տան որդւոց իսրայէլի։ Ի գիրս երկրորդ մնացորդաց ԺԷ. 20. 21. ասի. * Այլ գերեաց զմնացորդսն (՝ի սրոյ) ՝ի բաբելոն, և էին անդ նոսա և որդւոց նորա ՝ի ծառայութիւն մինչև ՝ի թագաւորութիւն մարաց... մինչև ընկալաւ երկիրն զշաբաթս իւր.... շաբաթացաւ ՝ի կատարումն ամացն եօթանասնից։ Յայսմանէ է և բանն այն. * Մինչև յԵրբ ոչ ողորմեացիս ՝ի վերայ երուսաղէմի և քաղաքացն յուդայ, զորս սնատես արարեր այս եօթանասնամեայորդ ամ։ Լ. յսպէս ասաց Հրեշտակն ՝ի լուր զաքարիայ մարգարէի։ Ինդդէմ այսոցիկ ոչ ՝ի դէպ է դնել զչորրորդ գիրս Եզրի. որ է արտաքոյ կանոնական ՝սը գրոց. ուստի և ոչ բռնադատէ ՝ի հաւանութիւն իբր անսխալ Հմտարտութիւն։ Այլ և անդ չիք յայտնի զրոյց թէ յաւերածոյ երուսաղէմի մինչև ցաստուածիւն ՝ի գերութիւն՝ անցեալ իցեն լոկ երեսուն ամք։ Զ. Խտեմ՝ ասէ կաղինոս, զի նախագրեալ վկայութիւնք իբր առարկութիւնք ընդդէմ մեր, բերին ՝ի վկայութիւն և յումեմնէ մեծարու անձնէ. բայց երբեմն և արք մեծամեծք առ կարի Հեալընթաց լինելոյ ՝ի գրուածս՝ վստահին ՝ի յիշողութիւն իւրեանց, կամ ՝ի գրուածս այլոց՝ առանց ինքնին յակնարկելոյ ՝ի բնագիրն, և համեմատելոյ զայն ընդ այլոց տեղեաց գրոյն։

Լ. հաւասիկ ՝ի յիշատակեալ վկայութեան անդ չորրորդ գրոց Եզրի. գլ. Ճ. 1. ասէ Եզրաս. * Յաւ մին երեսներորդի աւերածոյ քաղաքին էի ՝ի բաբելոն. և խռովեցայ յանկողնի իմում... ապրստամբս բաղումս ետես անձն իմ յայս երեսներորդ ամ։ Զայս և Եթ ասէ անդ Եզրա. յորմէ չգիտեմ թէ արդեօք մարթ իցէ հետևեցուցանել, եթէ երեսներորդ ամ աւերածոյ երուսաղէմի՝ Եղև վերջին ամ գերութեան։ Լ. ՝ի գլ. Թ. 40. ասէ Եզրա, թէ տեսի ՝ի տեղեան կին մի, որ ասէր ցիս. * Լ. մուլ Եղէ ես աղախին քո, և ոչ ծնայ զերեսուն

ամ կեցեալ ընդ առն խմում. և ես հանապազ՝ օր և ժամ յերեսուն յամն յայն խնդրեի 'ի բարձրելոյն 'ի տուէ և 'ի գիշերի։ Եւ եղև յետ երեսուն ամի՝ լուաւ ձայն աղաչանաց քում։ Եւ ասա պատմէ թէ ետ նմա որ որդի, որ յաւուր հարսանեաց իւրոց յանկարծ անկաւ և մեռաւ. ապա խօսի կինն և այլ բազում ինչ, որք չունին ինչ ընդ երեսուն ամսն աւելացեալ երուսաղէմի։ Յետ այսորիկ թըուեցաւ եղբի տեսանել հոգւոյն զերուսաղէմ քաղաք շինեալ։ Եւ թէ այս թիւք ամաց ոչ հային յամն գերութեան, յայտնի տեսանի 'ի տասներորդ գլուխ չորրորդ գրոց Նորին եղբի, ուր 'ի քառասներորդ համարոյ սկսանի հրեշտակն մեկնել զանցեալ տեսիլն։ * Եւ զի ասաց քեզ, թէ ամուլ եղև զամն երեսուն. վասն զի էին ամք երեսունք, յորժամ ոչ էին 'ի Նմա ('ի սիոն) գերեալս մատուցեալ պատարագք։ Եւ եղև յետ ամաց երեսնից՝ շինեաց սողոմոն զքաղաքն, և մատոյց պատարագս. յայն ժամ եղև մինչ ծնաւ ամուլն որդի։ Եւ զի ասաց ցքեզ, թէ որդին իմ իբրև եմուտ յառագաստ՝ մերաւ. և պատահեցաւ Նմա դիպուած. այն էր, զի եղև կործանումն երուսաղէմի։ Եւ ահա տեսեր զնմանութիւն նորա (և առաւել 'ի վեր) քան և այժմ տեսցես իբր զքաղաք շինեալ։ Յայս ամենայն ընդարձակ պատմութեանէ կնոջն երևելոյ, և 'ի մանրամասն մեկնութեանէ հրեշտակին ոչ գտանեմք և ոչ բառ մի՝ որ խոստանայցէ մեզ լինել ազատութեան։ Լսէ, թէ որպէս ետես եղբն հոգւով, նոյնպէս և այժմ դարձեալ տեսցէ ոչ չաղաչ շինեալ, այլ էրեմ չաղաչ շինեալ. այսինքն դարձեալ տեսցէ հոգւով զնմանութիւն իմն շինեալ երուսաղէմի. որով հաստատէ, թէ վերստին շինեսցի աւերեալ քաղաքն. այլ ոչ ցուցանէ զժամանակն թէ երբ։

Լսէ առ երկրորդ հաստատութիւն ասելն է։ Զիւր 'ի՞նչ գիրս՝ թէ նաբուքոդոնոսոր իցէ թագաւորեալ ամս քառասուն և հինգ. և թէ բաղտասար թագաւորեալ իցէ ամս երիս և ութ. և ոչ

թէ այլք չիցեն յայնմ միջոցի թագաւորեալ։ Լ.ՍԼ զայսմանէ ասացուք 'ի խօսիլ մեր զյաջորդութիւն թագաւորացն քաղդէացւոց։

Ի վախճանի՝ առ երրորդ հաստատութիւնն որ վասն հասակին դանիէլի՝ ասեմք. «Զ ապաքէն և 'ի մերումս ժամանակի տեսանեմք պատկառելի ծերունիս զգօնս և խոհականս հանդերձ բաւական ժրութիւն։ Դանիէլ արդէն 'ի ժամանակաց անտի նաբուքոդոնոսորայ իշխան եր 'ի բաբելոն. և յարգոյ և մեծարու առաջի նորա և նորին յաջորդաց. և 'ի մանկութիւն միշտ լի հոգւովն ոյ. և մեծամեծ խորհրդոց նորա խորհրդազգած։ Լ.ու յայտ է թէ նաև 'ի խորին ծերութեան նորա անմեկնելի եր 'ի նմանէ հոգի նոն, և միտք նորա անցնդելի, մինչև կարօղ լինել վարել զիշխանութիւնն լաւ և քան զառաջս հասակաւ։

Լ.այս են փաստք, զոր բերէ կաղինոս 'ի նոր գրոց 'ի հաստատութիւն կարծեացն, որ զսկիզբն եօթանասնամեան գերութեան որդւոցն իսրայէլի առնու 'ի գերութիւն յեբրնիայ. ունելով յայտմ իւր յառաջընթաց զկայեսանոս, զդէնեբրարդոս, զաղորիոս, զսկաղիդեր և զայլս յիշատակեալս առ 'ի նոցանէ։ Լ.ՍԼ ոչինչ կարի հեռի է 'ի սմանէ և զրութիւնն եւսեբեան՝ նոյնպէս հիմնեալ 'ի նոր գիրս, թէ 'ի գերութիւն սեղեկիայ ի՛ցէ հաշուելի սկիզբն եօթանասնամեայ գերութեան։

Լ.ՍԼ մեզ ժամ է կնքել զայս հատոր տեսութեանս, և 'ի սկիզբն յաջորդին դառնալ յետս՝ ըստ ժամանակի, և 'ի մէջ բերել զպատմութիւնս յուդիթայ, և տոբիթայ. զորովք զանց արարաք 'ի կարգի ժամանակաց իւրեանց՝ առ չընդհատելոյ զկարգ պատմութիւն թագաւորութեանց որդւոցն իսրայէլի։ Լ.ու յետ եսթերայ դարձ առնել 'ի դանիէլ, և դեգերիլ 'ի մակաբայեցիս մինչև 'ի քո։

Վ.Ի.Խ.Ա.Ն.

ԵՐԲՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

ՅԱՆԿ ԳԻՔՈՅ

Գ· ՀԱՏՈՐՈՅ

ԳԻՐՔ· Ժ·

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՅՆ

ԵՐԲՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Գլ· Էջ·

ԺԱ· Սողոմոն արքայ յաջորդէ յաստուս հօր իւրոյ դատ-
ռի։ Ամսոյ արքունեայ, յովաբայ և սէմեայ. և գա-
բաւգրուն սիրելեաբայ 'ի գահանայապետունն։ 3
Ի· Սիրելի ժամանակս ռեգաւորելոյ սողոմոն առ էնդ-
գանուելն գաւռի։ Վրանի ամսոյ էր՝ յորժամ սկսաւ
ռեգաւորել։ Այս յորոմամ հասակի ծնաւ ղանդրա-
նեմի՝ իւր ղորդի։ 9
Ի· Սողոմոն ինամանուն առնէ ընդ փարաւոնի արքայի
եգիպտացւոց։ Խնդրէ և ընդունի յայ ղնիշլամն
գիսուունեան։ Ղարաջին հանդէս իմասուան դարաս-
գանի նորա յեբիսուս զրանիկ ֆանայս գաղաքաղաքս. և
'ի գնդեսաքան ֆարգ գան իւրոյ, և 'ի գէրս իւր։ 15
Ի· Հիմնարկուն, և շինուն, և սարգաբերուն
գերակուշակ գաձարին 'ի սողոմոնէ ֆանուսդելոյ։ 26
Ի· Ամոյ ռանդը 'ի նշան գառաց գն ընս գաձարն։
Նուր հրաշալեան ինչեալ յերինեց՝ ծախէ զղշանիէզս։
Ազ՛յլ շինուածք սողոմոնի։ 37
Ի· Լոր երևուն այ սողոմոնի։ Հասպասուն բա-
բեիամուն նորա ընդ արքային գիրոսի։ Հարբա-
գուն նորա և սարբեիան եկամուտ։ Գալաստ
գիրոնն սաբայ յերուսաղէմ։ 43
Ի· Պեղ սողոմոնի. և վէշտ որ յեգոյ հասին նմա։ 53

Ղ. Խնդիր վասն ապաշխարութեան սողոմանի։ 64

ԼԹ. Յովհաննէս Բագաւորութ 'ի վերայ յոտքայ. և Յերոբոամ 'ի վերայ իսրայելի։ 70

Ա. Յերոբոամայ կանգնեալ երկուս երինջս ոսկւոյ 'ի պաշտօն։ Եւ զոմանէ նորա զհոս երինջոյ՝ պատարաւ սեղանն զոմին բանիւ մարգարէին։ Եւ ոսկի մարգարէն խաբեալ 'ի բեթելացի ծերոյն՝ անցանէ զպատուիրանսն, և սպանանի յառիւծոյ։ 78

ԺԵ. Ամ աբիայ անդրանիկ որդւոյ յերոբոամայ։ Զբնութիւն Յովհաննայ արքայի յոտքայ։ Պարտուելն նորա 'ի ասուսաէլեայ եթիոպացւոյ արքայէ. և մահ նորա։ 87

ԺԶ. Ասայ թագաւոր յոտքայ։ Յաղթեսցէ նորա ընդդէմ յերոբոամայ արքայի իսրայելի. և մահ նորա։ Ասա բարեպաշտ արքայ յոտքայ։ 94

ԺԷ. Ամ յերոբոամայ։ Նադաբ, և Բաասա թագաւորք իսրայելի։ Ասա արքայ յոտքայ խորտակէ զելեհովդացիս, և զբաասա՝ որ էլ մարդիս 'ի վերայ նորա։ Ամ ասայի։ Զամբրի թագաւորք իսրայելի, Զիմրի, Օմամբրի, Ամբրի, Զամրի։ 99

ԺԸ. Յոսափատ արքայ յոտքայ։ Ասաբ արքայ իսրայելի, և ելեն նորա յելաբել։ Զաղիա մարգարէ։ 111

ԺԹ. Ասաբ երկրորդ հարկանէ զասորիս 'ի հարուածս սասպիս։ Ասրեցուցանէ զբրբին արեւոյ զլնափառ նոցա ընդդէմ հրամանին աստուծոյ, որ գուսա նմա 'ի յեռն մարգարէին։ 126

Ի. Ամ նաբովղայ. և յաքշարիսն այգոյ նորա։ Զաղիա. և Զաղիսէ։ 136

ԻԱ. Ասաբ առեալ իւր յօգնութիւն զՅոսափատ արքայ յոտքայ՝ յարչէն 'ի մարդ ընդդէմ ասորւոց. որ հնարանի ասաբ. և յոսափատ մաղապուր զերծանի։ 143

ԻԲ. Հրաշալի յաղթութիւն յոսափատայ 'ի վերայ բուսամբրու այլազգեաց։ Խորտակումն նաասոյ՝ զոր արար ընկերացուցութիւն ոսուշայ արքայի իսրայելի։ 151

ԳԻՐՔ ԺԷ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԶՈՐԲՈՐԴ ԹԱԴԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ԽԱ. Պապքամ եղէսայ մարգարէի առ ոչոչիա արքայ իսրայէլի։ Ալեքսանդրն եղէսայի. որոմ յանդիսն եղէսէ մարգարէ։ 157

ԽԲ. Յովրամ թագաւոր իսրայէլի, և Նէղսքաքէիդայ դուքս յովսափատ արքայ յուդայ, և արքայն եդոմայ հարքանէն պնդուքն, և աւերքն ղերքիր դուքս։ 163

ԽԳ. Յովրամ որդի յովսափատու թագաւոր յուդայ։ Ի մոտարշրանուն և լարախատվատ մահ դուքս։ 169

ԽՂ. Ոչոնիէլիչ ղոր արար ՅԾ 'ի յեռն եղէսէն մարգարէի յերքրին իսրայէլի առ ծամանակս յովրամայ արքայի իսրայէլի։ 174

ԽԿ. Սով սամարիայ։ Հրաշալագործումն եղէսէի։ Պարբուրէան որդուոյն ապերայ արքային ասորոց ոչոնիէլիչոյ ՅՆ։ 182

ԽԼ. Ինծիչումն նեբեմանայ 'ի բորդուումն՝ լուսայմամբ 'ի յորդանան ըստ բանին եղէսէի։ Ինորդումն գեղեղեայ։ 194

ԽԷ. Ամ ոչոնիէայ արքայի յուդայ, և Յովրամայ արքայի իսրայէլի, և Յեղեմբելայ. ղրա սպան Յեռն թագաւոր իսրայէլի։ 203

ԽԸ. Ամաղեալ գործս յեռայ, և մահ դուքս։ Զարիս, և լարալար մահ Գոդոդիայ՝ ինոջ յովրամայ արքայի յուդայ։ Յովիդայն չանանայաղեա թագաւորեցուցանէ զՅովաս մանուկ 'ի վերայ յուդայ։ 217

ԽԹ. Յովաս արքայ յուդայ, և մահ դուքս։ 227

Ի. Ամասիա արքայ յուդայ։ Յովաս արքայ իսրայէլի։ Ամ եղէսէի մարգարէի։ 233

ԺԱ. Յերոբոամ երկրորդն՝ արքայ իսրայէլի։ Ազէս, որ և Ազարիա արքայ յուդայ։ Լասայի մարգարէ։ 241

ԺԲ. Ոզէսէ. Ամոս. Յովել՝ յերկրապատան մարգարէից, որ փոքր մարգարէ կոչին՝ յաշտարակ սակաւումն մարգարէական գրոց դուցա, առ համեմատումն լոցէց մեծ մարգարէից գրաւորաց։ 252

ԺԳ. Յոնէան մարգարէ։ 264

ԺԳ. Օ՚ատարիա. Սեղբոսա. Մանասէ. Փաղէսա, և Փաղէսէ Ամբակումայ խորայէլի. և Յովսեփա արքայ յուդայ։ 423

ԺԵ. Ա՚սայ արքայ յուդայ։ Փաղէսէ արքայ խորայէլի։ Լասայի մարգարէ։ 274

ԺԶ. Ահազ արքայ յուդայ։ Պեքահ խորայէլի։ Գեդոնի խորայէլի սա սաղմանասարա. եղեկիա արքայ յուդայ. եսայի մարգարէ։ 279

ԺԷ. Լեղեկիա արքայ յուդայ։ Հիսանդրուն Դանիա և առաղնուն սանեղէլեօր։ Լասայի մարգարէ։ 291

ԺԸ. Փրկումն սանեղէլեօր եղեկիայ և երուսաղէմ փաղատ 'ի յԵռուսա սենեքերիմայ ասորեսանեայց արքայէ։ Մահ եղեկիայ։ 295

ԺԹ. Մանասէ, և Ամոն թագաւորք յուդայ։ 306

Ի. Յոսիա արքայ յուդայ։ Ողբան նին մարգարէ։ Մահ յովսիայ։ Երեմիա մարգարէ։ 312

ԻԱ. Մեսիա. Յովել. Ամբակում. Սոփոնիա. Ամբակում. Սոփոնիա. Ն՚ահում. Օ՚ատարիա. Մաղաքիա։ 321

ԻԲ. Լուսաւորք յուդայ՝ որ թագաւորեցին ընդ յովսիայ մինչև գերեալն։ Երեմիա մարգարէ։ 335

ԻԳ. Սեդեկիա արքայ յուդայ։ Պաշարումն երուսաղեմի 'ի հաղթեցումն։ Երեմիա մարգարէ։ 349

ԻԴ. Երեմիա մարգարէ։ 362

ԻԵ. Եզեկիել մարգարէ։ 372

ԻԶ. Ամենայն հրաշքումն երուսաղեմի և գաճարի նոր։ 386

ԻԷ. Գոդոլիա ոսոխիան կամ գոխարայ 'ի հրեաստան։ Իսմայել դատաճան։ Գոսորի սեղեկիայ։ Ա՚նդա նել հնացորդայ երբայեցոյ յեգիպտոս։ Երեմիա մարգարէ։ 395

ԻԸ. Տիրոս, և ապա եգիպտոս նուաճի 'ի Նաբուքոդոնոսորայ։ Եզեկիել մարգարէ։ 404

ԻԹ. Յորամ ժամանակի սխալանն Եղեմեանսան ամ գերեալն որդոյ խորայէլի 'ի Բաբելոն։ 412

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библ. ОТЕРА
ՀՍՍՀ-СССР
ԱՆ. Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ